



«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՄԱՏԵՆԱՇԱՐ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ Ա

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. ՊԱՐԳԵԻԻ

ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱԶՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ

Հրատարակում է Հիւսիսային
Ամերիկայի եւ Կանադայի
Կիլիկեան Թեմի կողմից,
արդեամբ եւ ծախիւք
Տիար Ռասըլ Կիլամերեանի

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Այս գիրքը իր ամբողջութեան մէջ քարոզգիրք չէ եւ մշակուած չէ իբրեւ քարոզգիրք: Այստեղ քարոզների հետ ամփոփուած են նաեւ մեր մտքերն ու դատողութիւնները, գաղափարներն ու հասկացողութիւնները, երբեմն եւ ապրումները՝ յօդուածների ձեւով, որ օգտակար են համարուել հեղինակի կողմից՝ ի մի գումարել իբրեւ ամբողջութիւն եւ մատուցանել մեր նորահաս քահանաներին եւ վարդապետներին, եւ որպէս օժանդակ եւ առաջնորդ իրենց քարոզչութեան մէջ:

Ընթերցողը ինքնին նկատել կարող է, որ կարգաւորեալ մտքերի յաջորդական զուգորդութեամբ գրած չէ՝ միանգամից գրուած, այլ մեր կեանքի ընթացքում քարոզչական եւ հովուական պաշտօնների կամ եկեղեցական հրապարակախօսութեան եւ ատենախօսութեան հետ կապուած քարոզներ եւ գրութիւններ՝ տարբեր վայրերում եւ ժամանակներում եւ տարբեր առիթներով գրուած կամ խօսուած: Նրանք դասաւորուած չեն, բացի առաջին մասերից, նոյնիսկ եկեղեցական տօների հետեւողութեամբ, թէպէտ այդ դժուար չէ քարոզչի կողմից լրացնել եւ օգտագործել՝ հատուածների բովանդակութիւնն ի նկատի ունենալով: Բայց բոլորը զետեղել ենք «ԴԷՊԻ ԼՈՅՍ ԵՒ ԿԵԱՆՔ» մի ընդհանուր վերնագրի տակ՝ ընթերցողի սիրտը եւ հոգու աչքերը կամենալով այդ նպատակին ուղղել: Մեր հայեացքն է, թէ ամենայն մի խօսք կամ գրութիւն դաստիարակելու նպատակ ունի, պէտք է հիմնուած լինի ուղղամտութեան, ճշմարտութեան եւ ներքին համոզման կամ հաւատի վերայ, որ ուղին է դէպի լոյս եւ կեանք մատնանշելու: Օգտակար կը լինի՞ այս գիրքը այս տեսակետով, մենք չէ, որ պիտի որոշենք, բայց այսպիսի բարի ցանկութեամբ եւ մտադրութեամբ է, որ ի մի ենք բերել այս ամէնը եւ տալիս ենք յատկապէս մեր նորահաս քահանայ եւ վարդապետ քարոզիչների ձեռքը որպէս օժանդակ միջոց՝ նրանց էլ մի քանի խրատական խօսք ուղղելով՝ մեր երկարատեւ փորձառութեան վերայ հիմնուած:

* * *

Սկզբնական շրջաններում քարոզները միշտ պէտք է գրաւոր պատրաստել, սերտել գրածը եւ մինչեւ իսկ արտասանել նախապէս՝

որպէս թէ ժողովրդի առաջ: Տարիներ յետոյ կարելի է միայն ծրագիր կամ համառոտագրութիւն պատրաստելով գոհանալ, եւ երբ երկարամեայ փորձառութիւնից յետոյ մտքերի պաշար եւ հմտութիւն ձեռք կը բերուի, բաւական կը լինի միայն խօսելիք միութիւնը ի մտի ունենալ: Այդպիսի շրջանում երբեմն չգրուած, բայց ինքնաբերուի քարոզը կամ ատենախօսութիւնը կարող է սպասածից աւելի տպաւորիչ լինել եւ գեղեցիկ: Բայց ցանկալի չէ, որ քարոզիչը կամ ատենախօսն իրեն այդպիսի փորձութեան ենթարկէ յաճախ. այդ մասամբ ընդունակութեան խնդիր է, մտքերի թոփշքով եւ յուզականութեամբ օժտուած խառնուածքի գործ:

Հնետորութիւնը, որքան եւ արուեստ է, ուրեմն եւ՝ մասամբ աստուածատուր շնորհք, բայց ոչ պակաս եւ՝ վարժութեան գործ: Վարժութեամբ է, որ լեզուն կը դառնայ սահուն, ոճը՝ գեղեցիկ, մտքերը կը կցուին դիրութեամբ՝ առանց կապը կորցնելու կամ շփոթութեան ենթարկուելու: Նոյնիսկ եթէ կակազ ունի կամ այլ արտաքին պակասութիւններ, կը վերացուին յարատեւ եւ կարգաւորեալ աշխատութեամբ: Հին աշխարհի մեծ ճարտասան Դեմոսթենէսը կակազ էր սկզբում եւ վարժութեամբ յաղթեց այդ պակասութեան: Էջմիածնի գիտուն, ընդունակ, հմտութեամբ բարձր վարդապետներից մէկը սկզբում կակազ էր, երբեմն՝ մինչեւ իսկ տպաւորութիւնը կորցնելու չափ. վարժութեամբ հարթեց այդ թերութիւնը հետզհետէ:

Քարոզի լաութիւնը կախուած է ոչ միայն տրամաբանական զարգացումից, զգացմունքով արտասանութիւնից, այլեւ՝ արտաքին պայմաններից, ինչպէս՝ ունկնդիրների կազմն է, միութիւն մատչելիութիւնն է, երկար եւ կարճ լինելու հանգամանքն է, յուզականութեան մէջ չափի պահպանութիւնն է եւ նման ուրիշ խնդիրներ, որ ի մկատի պիտի ունենայ քարոզիչը: Լաւագոյն, մշակուած քարոզն իսկ կը կորցնէ իր տպաւորութիւնը, մինչեւ իսկ կը ձանձրացնէ ունկնդիրներին, եթէ նա չափից աւելի երկար է: Երբ մտքերը պարզ են, յստակ, աւելի դիրքին կը լինի լաւ ձեւակերպել եւ նոյնիսկ համառոտութեան մէջ տպաւորիչ եւ հասկանալի դարձնել:

* * *

Քարոզչի յաջողութեան ամենակարեւոր պայմանը Սուրբ Գրքի լաւ ծանօթութիւնն է. այնտեղ է մեր հաւատոյ, մեր կրօնական-

բարոյական գաղափարների անսպառ աղբիւրը, հոգեւոր սնունդի անհատնում շտեմարանը, յատկապէս նորա որոշ մասերը՝ Ծննդոց գիրքը, Մարգարեութիւններն ու Սաղմոսները, Յովքի սքանչելի գիրքը, Նոր Կտակարանը: Տիրոջ քարոզներն ու առակները Իւր օրհնեալ Անձի հետ, որ մկարուած է աւետարանական պատմութեան մէջ, լուսաւոր ճանապարհ կը հարթեն դէպի կրօնի բարձր ըմբռնումը եւ մարդկային հոգու բարձր գնահատութիւնը:

Սուրբ Գրքի ծանօթութիւնն ու ուսումնասիրութիւնը որքան եւ անհրաժեշտ է քորոզչի համար, բայց միայն Սուրբ Գրքով չենք կարող բաւականանալ, եթէ չենք կամենում մեր մտքերի մէջ միակողմանի մնալ եւ աւանդական շրջանից դուրս չը գալ: Քրիստոնէական գլխաւոր գաղափարներն, անշուշտ, միշտ առաջնորդող պիտի մնան քարոզչութեան ժամանակ, բայց այդ գաղափարները մատչելի պիտի դարձնել, լուսաբանել նոր պահանջների եւ հասկացութիւնների լուսոյ մէջ: Հին գիւնն նոր տիկի մէջ պէտք է պահուի, որպէսզի տիկը չը պատռուի եւ կենդանարար հեղուկը իզուր թափուի: Քարոզչի համար անհրաժեշտ է ազգային եւ ընդհանուր պատմութեան, ազգային եւ ընդհանուր գրականութեան, ազգային եւ ընդհանուր արուեստների պատմութեան ծանօթութիւն: Պատմութիւնը ոչ այլ ինչ է, բայց եթէ մարդկային հոգու եւ փորձառութեան վերլուծութիւն եւ հասկացութիւն՝ իր բազմազան եւ բազմակերպ իրողութիւններով, որ մեզ շատ օրինակներ եւ միտք տալ կարող է եւ ներկան հասկանալու, նորան ուղղութիւն տալու ցուցումներ: Մեծ բանաստեղծների եւ գրողների, արուեստագետների գործերի ծանօթութիւնը մեր մտքերին նրբութիւն կը տայ, հոգեբանական վերլուծութիւններին՝ թանձրացեալ եւ պայծառ օրինակներ, մարդկային հոգու ելեւէջների մէջ թափանցելու, ներքին աշխարհի մէջ յատաջ եկած կամ գալիք երեւոյթները հասկանալու հմտութիւն, որպէսզի դորանով իր խօսքը դարձնէ բովանդակալից, ազդեցիկ, զօրաւոր:

Քարոզչի ձեռք բերած ծանօթութիւնների մէջ կարեւոր տեղ պիտի բռնէ եւ բնական գիտութիւնը եւ նորանից բխած աշխարհայեացքը: Նախ պէտք է յայտնենք, որ բոլոր բնագետներն ու տիեզերաբանները չեն յանգում միտքապաշտական հակակրօնական բացասական եզրակացութեան, ինչպէս կարծում են շատերը: Ծատ նշանաւոր բնագետներ կամ տիեզերաբաններ, խորանալով իրենց մասնագիտութեան մէջ, սքանչացել են կենդանական աշխարհի եւ

տիեզերքի հրաշալի կարգաւորութեամբ, խորհրդաւորութեամբ եւ գեղեցկութեամբ՝ աստուածապաշտ մնալով: Իսկ սքանչացումը մարդկային հոգին դէպի խորհրդաւորը, դէպի մեծ անձանօթն ու Աստուած տանող զգացումն է, ինչպէս շատ բարեպաշտների համար: «Որպէ՛ս մեծ են գործք Քո, Տէ՛ր», կամ՝ «Երկինք եւ երկիր պատմեն զփառս Աստուծոյ» խօսքերը Աստուծոյ մեծութեան առաջ սքանչացումներ են: Բնութիւնն էլ մի այլ տեսակի Սուրբ Գիրք է, եթէ մենք նորա վերայ բարեպաշտի աչքով նայինք: Մեզ համար պարզ պիտի լինի, թէ գիտութիւն եւ կրօն կամ արուեստ եւ կրօն միմեանց հակառակ չեն իրենց խորքում, այլ՝ իրար լրացնող եւ իրար օժանդակող հոգեկան երեւոյթներ: Հեռու պէտք է մնալ նաեւ կրօնի միակողմանի հասկացողութիւնից, որ դէպի մոլեռանդութիւն կը տանի: Իսկ ամե՛նայն տեսակ մոլեռանդութիւն կամ չափազանցութիւն, ինչ մարզում էլ լինի, հիւանդութիւն է կամ սխալներ գործելու առիթ:

Քարոզիչը խորը պիտի գիտակցէ, թէ ինչպիսի ծանր եւ պատասխանատու պարտաւորութիւն ունի դէպի իւր ունկնդիրները: Հարիրաւոր եւ հազարաւոր հոգիներ սպասում են մի բան սովորել, շատերը նրանցից՝ իրենց վշտերի մէջ մխիթարութեան եւ նեղութիւնների մէջ՝ հանգուցիչ մի խօսք լսել, ճշմարտութիւն կամ լոյս ստանալ կեանքի հետ կապուած կամ կեանքը յուզող խնդիրների եւ երեւոյթների մասին: Քարոզչական ամբիոնը սուրբ է եւ դաստիարակչական դպրոց եւ միջոց մեծերի համար՝ հոգիներին ուղղութիւն տալու, սրբազան յոյզեր յառաջ բերելու ոչ միայն զգայուն եւ բարեպաշտ անձանց, այլեւ՝ փորձելու նոյնիսկ անտարբերների մէջ: Համոզումով, զգացումով եւ տրամաբանօրէն մշակուած եւ արտասանուած խօսքը բարոյական մեծ ոյժ է, որ երբեմն հոգիների խորքը կարող է թափանցել: Սաղոսի Պօղոս դառնալու հոգեփոխութեան կամ դարձի մէջ Ստեփանոս Նախավկայի «Հոգով Սրբով» արտասանուած ճառը իւր հաւատոյ պաշտպանութեան համար՝ կարեւորագոյն մշանակութիւն է ունեցել նորա համար: Պատմութիւնից գիտենք, թէ Միլանի եպիսկոպոս Ամբրոսիոսի քարոզը ինչպիսի ազդեցութիւն է ունեցել Հռովմէական Եկեղեցու ամենամեծ հայրերից Օգոստինոսի վերայ, երբ նա աշխարհիկ կեանքով ապրող մի երիտասարդ էր դեռեւս:

Այս բոլորի եզրակացութիւնն է, թէ քարոզիչը յաւիտենական ուսանող պիտի մնայ, միշտ կարդայ, պաշար հաւաքէ, իւր նկա-

տողութեան տեսրակի մէջ գեղեցիկ մտքեր, պատկերաւոր արտայայտութիւններ, գաղափարներ արձանագրէ, որպէսզի հետզհետէ իւր սեպհականը դարձնէ այն եւ օգտագործէ հարկաւոր դէպքում:

* * *

Մեր խօսքը մինչեւ այժմ ուղղուած էր քարոզիչներին, բայց կը ցանկայինք, որ այս գիրքը օգտակար լինէր ոչ միայն նրանց, այլեւ՝ կիրակնօրեայ դպրոցների ուսուցիչներին: Իհարկէ, նա դասագիրք չէ, ուրեմն եւ ոչ անմիջական նիւթ՝ աշակերտներին աւանդելու, բայց ոչ անօգուտ՝ կրօնական-եկեղեցական խնդիրների լուսաբանութեան մէջ:

Գ. Կ.

25 յունիս, 1947, Անթիլիաս



ԱՆՑԱԻՈՐԻ ՄԷՋ ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆԸ ԵՒ ՄԵՔԵՆԱԿԱՆԻ ՄԷՋ ԿԵՆԴԱՆԻ ՀՈԳԻՆ

Ժամանակի թափալու տարիները կեանքի եւ անցաւորութեան սւփորական յայտարարն են, բայց ոչ միայն տարին, այլ վայրկեանն իսկ իւր մէջ նոյն իմաստն ունի: Այս օրուայ եղածը վաղը չկայ. ինչ այսօր չկայ, վաղը պիտի գայ՝ հետեւեալ օրն իսկ չքանալու համար: Այսպէս է տեսանելի աշխարհի արտաքին երեւոյթը՝ ամէն ինչ երեւում է անցաւոր, անիմաստ՝ իբրեւ արտաքին երեւոյթ:

Գեղեցիկ է ծաղիկը, նուրբ, անուշահոտ, երփներանգ, բայց վաղը պիտի չորանայ եւ փոշիանայ: Գեղեցիկ են դալարագեղ եւ ակնապարար դաշտերը, բայց վաղը պիտի մերկանան իրենց գեղեցկութիւնից. հաճելի են սաղարթախիտ ծառերը, բայց աշնանը նրանց տերեւները ամենաթեթեւ հողմից պիտի վայր թափուին՝ փթելու եւ հող դառնալու: Աննման է մարդը իբրեւ գեղեցկութիւն իւր մարմնով՝ զօրաւոր եւ ազդող, նուրբ եւ նագելի՝ սեռերի համեմատ, բայց վաղը պիտի անշնչանայ եւ ծածկուի մի բուռ հողի տակ գուցէ հէնց ծաղիկ հասակում: Այսօրուայ հօր, հարուստ եւ ամէն բանի մէջ յառաջադէմ ազգերը, որ իրենց արդար կամ անարդար կամքն են թելադրում կամ հարուածում մանաւանդ իրենցից թոյլերին եւ ձգտում են իրենց շահերի համեմատ ընթացք տալ կեանքին, չգիտենք՝ վաղը գոյութիւն պիտի ունենա՞ն, թէ՞ ոչ: Ո՞ւր են Հին եգիպտացիք, ասորեստանցիք, Հին յոյները կամ աշխարհի տէր հռոմայեցիք: Չկան: Եւ այսպէս անցաւոր է ամենայն ինչ, անցաւոր է սովորական աչքով դիտուած կեանքը, նոյնիսկ յուսահատական ըստ երեւոյթին:

Բայց այս չէ միայն, որ կեանքը յուսահատական կարող է դարձնել: Գիտութեան ակնոցներով դիտելով կեանքը յետիւտեղը՝ տեսնում ենք ենթարկուած մեքենական որոշ օրէնքների, որոնց ներգործութիւնը փոխել մեր ուժից վեր է: Եւ քիչ չեն գիտնականներ կամ գիտութեան անունով խօսողներ, որոնք կեանքի եւ տիեզերքի հասկացողութեան միակ ուղին բնագիտական տեսութիւններից կամ նրանց յայտնաբերած մեքենական օրէնքներից դուրս ոչինչ չեն տեսնում: Նոքա ժխտում են կրօնքի եւ հոգեկան ուրիշ գիտութիւնների բերած հասկացողութիւններն ու թելադրութիւնները կեանքի եւ երեւոյթների մասին, մեքենական կամ մատեմատիքական օրէնքներից դուրս ամէն ինչ, որ «հոգեկան» է կոչւում:

Բայց, բարեբախտաբար, գրքի մի երեսն է այդ. պէտք է կարգալ

եւ միւս երեսը: Արտաքին երեւութեանի իրողութեան հետ մարդու հոգու մէջ գոյութիւն ունի եւ մի ուրիշ հակոտնեայ զգացում, անյագ ծարաւ դէպի գաղափարական աշխարհը, դէպի յաւիտենական անծանօթը, որ երեւան է գալիս զանազան ձեւակերպութեամբ եւ հանդերձութեամբ: Կեանքի էութիւնը արտաքին իրականութիւնը չէ, այլ՝ ներքինը. եթէ երեւութեանը տեսանելի անցաւորի յայտարարն է, ներքինը դրա հակառակ՝ յաւիտենականութեան: Անշո՛ւշտ, բնութեան որոշ, յատկապէս արտաքին երեւոյթները ենթարկուած են ֆիզիքական, քիմիական վերլուծութեան կամ մատեմատիքական հաշուի, ինչպէս նիւթն է կամ աստղերի շարժումն ու ընթացքը. բայց կեանքը, մարդկային հոգին, գիտակցութիւնը իւր բովանդակ ծաւալով նոյն օրէնքներին ենթարկել եւ հասկանալ անկարելի է: Որքան «բնական» է է արտաքին երեւոյթը իւր օրէնքներով, նոյնչափ «բնական» է հոգեկանը, որ չի ենթարկուած կամ չի լուսաբանուած նոյն օրէնքներով, բայց որի գոյութիւնը ուրանալ չենք կարող: Մեր գիտակցութիւնը, օրինակ, նիւթ չէ կամ շարժում, որ վերլուծութեան ենթարկուի ըստ ամենայնի կամ թուաբանական հաշուի: Մեր հոգու մէջ երեւան եկած բարձրագոյն շարժումներն ու ապրումները, յղացումներն ու ստեղծագործութիւնները ծածկուած են անգիտութեան եւ խորհրդաւորութեան սրբազան քողի տակ, որ դէպի յաւիտենական անծանօթն է տանում:

Ո՞ր գիտութիւնը կարող է բացատրել այն իմաստուն կարգաւորութիւնը եւ նպատակայարմարութիւնը, որ նկատելի է ոչ միայն տիեզերական երեւոյթների, այլեւ՝ ամենահասարակ բոյսի կամ կենդանու կեանքի մէջ: Որչա՛փ գիտնականներ, եւ նրանց թւում՝ ոչ քիչ բնագիտներ կամ աստղագետներ, զբաղուել են երկնային մարմինների եւ նրանց ընթացքի քննութեամբ, սքանչացման խորին զգացմունքով եւ ծուկ են խոնարհել տիեզերքի այս իմաստուն կարգաւորութեան եւ ծուկ են խորհրդաւորութեան առաջ, որ կրօնի եւ հաւատոյ սահմանն է:

Գիտութեան, կ'աւելցնենք, եւ արուեստի հետ կրօնը կարող է եւ պէտք է դաշնակից լինի մինչեւ մի որոշ տեղ. գիտութեան եւ արուեստի բոլոր տուեալները, որոնք նպաստել կարող են մարդկային արտաքին եւ ներքին կեանքի ազնուացման եւ դաստիարակութեան, ընդունում ենք որպէս համագործակցութիւն եւ Աստուծոյ օրհնութիւն: Կեանքի արտաքին բարօրութեան եւ արտաքին յառաջադիմութեան մէջ էլ կրօնը շօշափելի մաս չունենալով, եթէ նրանք հակասութիւն կամ ժխտում չեն բարոյական եւ մարդասիրական մեր հայեացքներին՝ ողջունում ենք ի բոլոր սրտէ:

Բայց կայ մի սահման, որից այն կողմը գիտութիւնը չպէտք է

անցնի, որ առարկայական քննութիւն է, փաստերի եւ իրողութիւնների հաստատութիւնը, որովհետեւ այդ սահմանից այն կողմը գիտութիւն չէ, այլ հիւպոթէզ՝ ենթադրական տեսութիւն: Զուտ հոգեկան երեւոյթների եւ ապրումների իրողութիւնները չեն ենթարկուում նոյն չափանիշին, ինչ որ գիտութեանն է: Այստեղ ուրիշ հանգամանքներ իրենց խօսքն ունին ասելու. այդ մարդկային հոգու տենչն է դէպի գաղափարականը եւ ձգտումը՝ արտաքին իրերի եւ նրանց կարգաւորութեան մէջ որոնել եւ գտնել նրանց պատճառն ու նպատակը, որ տանում է դէպի Աստուածութեան գաղափարը:

Գիտութիւնը որչափ եւ լուսաւորէ մեր միտքը, ընդարձակէ մեր ծանօթութիւնները, բարձրացնէ մեր կարողութիւնը՝ օգտագործելու բնութեան ուժերը, անկարող է բաւարարել եւ յագուրդ տալ մեր ներքին ծարաւին եւ պահանջներին, թափանցել իրերի եւ երեւոյթների էութեան մէջ, գտնել նրանց եւ մեր գոյութեան նպատակը: Առ Աստուած հաւատն է միայն, որ լրացնում է այդ պակասը, ինչ որ գիտութիւնը տալ չէ կարող, որով մեր կեանքն իմաստ եւ բովանդակութիւն է ստանում, մեքենական օրէնքների մէջ Աստուծոյ Հոգին երեւում, իսկ անցաւոր ժամանակի մէջ՝ յաւիտենականութեան ճանապարհը, որով դէպի բարոյական կատարելութիւնն ենք ընթանում:

«Պայքար», 30 դեկտեմբեր, 1938

«Եւ ի՞նչ պարտ է գործել գործու Այնորիկ, որ առաքեացն գիւ, մինչ ատուր կայ, գայ գիշեր, յորժամ ոչ որ կարէ գործել» (Թովհ. Թ 4):

Մարդիկ սովորաբար ուրախ դէմքերով դիմում են միմեանց՝ «Շնորհաւոր Նոր տարի» մաղթելով: Այդ ուրախութիւնը իւր արտաքին կողմերով յաճախ չափազանցութեան է հասնում՝ կեր ու խում, աղաղակ փողոցների վերայ, մինչեւ իսկ անկարգութիւններ, որ բարոյական աչքի եւ ականջի համար անախորժ լինել կարող է:

Բայց այսպէս չէ այն մարդկանց համար, որոնք կեանքի վերայ լրջութեամբ են նայում, որոնց ուսերի վերայ սրբազան եւ վեհ կոչում է ծանրանում՝ ծառայելու ժողովրդին, ծառայելու յաւիտենական քաղաքացի գաղափարին: Նոր տարուայ օրը զուարճութեան եւ ուրախութեան օր չէ, այլ՝ մի սրբազան եւ նուիրական վայրկեան, երբ, մեր հոգու բոլոր զօրութիւնները լարած, պիտի բաժնուինք Հին տարուց եւ նորի մէջ մտնենք: Քրիստոնեայի համար Նոր տարուան օրը եւ հոգեւոր հաշուետուութեան օր է՝ Աստուծոյ եւ խղճի առաջ: Տարեվերջին հաստատութիւնները փակում են իրենց տոմարները եւ հաշիւ տալիս աւելի բարձր հաստատութիւններին: Այսպէս պէտք է լինի անհատը. նա հաշիւ պէտք է տայ Աստուծոյ եւ իւր խղճի առաջ, թէ ինչ է ձեռք բերել անցած տարուայ մէջ, որ մնայուն է, որ տեւական է եւ ոչ այնպէս անցաւոր, ինչպէս Հին տարին էր: Նոր տարուայ շնորհաւորութիւնը յիշեցնում է մեզ, որ Հինը անցաւ անդառնալի կերպով, ուստի եւ պարտաւոր ենք խորասուզուիլ այդ անցեալի մէջ, որոնք մեր կեանքի, մեր գործի դրական կողմերը, գտնել թերին՝ ապագայում ուղղելու համար: Մենք իրաւունք ունինք ուրախանալու միայն այն դէպքում, երբ մեր հոգու հաշուեմատեանները ուղիղ են, երբ անցաւոր ժամանակի մէջ այնպիսի բարիք ենք ձեռք բերել, որ մեզ համար եւ մեր ժողովրդի կամ Եկեղեցու համար տեւական նշանակութիւն ունի: Այս մտքով իրաւունք ունինք Նոր տարուայ տօնախմբութեան վերայ աւելի բարձր սրբազան տեսակէտով նայել, քան լոկ արտաքին զուարճութեան եւ ուրախութեան, որ, տարաբախտաբար, ընդհանրացած է թէ՛ մեր եւ թէ՛ ուրիշ հասարակութիւնների մէջ: Մենք երբէք մտայլ կեանքի քարոզող չենք, բայց կեանքը չպէտք է իւր լրջութիւնը կորսնցնէ այսպիսի նուիրական վայրկեաններին, որ մեր ապագայի համար ծանրակշիռ նշանակութիւն ունին: Արդ,

ի՞նչ է տեւական, ի՞նչ է մնայուն, որ անցնող ժամանակի մէջ ձեռք բերել կարելի է: Այս հարցի պատասխանը Փրկիչն է տալիս. «Ինձ պարտ է գործել զգործս Այնորիկ, որ առաքեացն զիս, մինչ առևր կայ, դայ գիշեր, յորժամ ոչ ոք կարէ գործել»: Ժամանակը շահեցնելու միջոցը գործն է: Անցնող ժամանակի մէջ դրականը աշխատանքով ձեռք բերուած հոգեւոր բարիքն է: Նիւթական բարիք ձեռք բերելու համար մեծամեծ ջանքեր են հարկաւոր, որքան եւս առաւել՝ հոգեւոր հարստութեան, տեւական բարիքի համար: Ժամանակը անցնում է արագ, երկիրը կատարում է իւր ընթացքը տիեզերքի Տիրոջ կարգադրութեան համաձայն: Մեզ մնում է միայն օգտուել. «Մինչ առևր կայ, դայ գիշեր, յորժամ ոչ ոք կարէ գործել»:

Քրիստոնէութեան համար աշխատանքը նուիրական գաղափար է, եւ ծուլութիւնը՝ մահացու մեղքերից մէկը: Քրիստոնեայ մարդու կեանքի սկզբունքներից մէկը պէտք է լինի աշխատանքի գաղափարը: Գործն է կեանքի եւ շարժման նշանը: Բայց ոչ ամենայն գործ, որ շարժում է, կեանք է: Կան գործեր, որ ոչ թէ յաւիտեանական բարիք, այլ չարիք են ծնում. Փրկչի պահանջած գործերը հոգեւոր կեանքի՝ լուսոյ գաղափարի յաղթութեան գործերն են, որոնք, միմեանց յաջորդելով, մարդկային կեանքի մէջ հոգեւոր նոր տարիներ եւ շրջաններ են յառաջ բերում, այսինքն՝ Աստուծոյ հաճելի գործ. «զգործս Այնորիկ, որ առաքեացն զիս»: Մեր անցած տարուայ գործերի քննութեան չափը պէտք է լինի այն տեսակէտը, թէ որքան մենք մեր գործերով նպաստել ենք մեր անձի փրկութեան, թէ որքան նպաստել ենք հայ ժողովրդի կրօնական-բարոյական, հոգեւոր-քաղաքակրթական կեանքի զարգացման: Իւրաքանչիւր ոք պարտաւոր է աշխատել իւր չափով, իւր հոգու բոլոր կարողութեամբ, բայց՝ միշտ այն գիտակցութեամբ, թէ նորա կատարած գործը մի կաթիլ է ովկիանոսի մէջ, «թէ ծառայք անպիտան եմք, գոր ինչ պարտն էաք առնել, արարաք»: Այսպէս պէտք է մտածէ եւ գործէ Հայաստանեայց Եկեղեցու իւրաքանչիւր հարազատը՝ լինի քահանայ, վարդապետ, թէ աշխարհական անձ:

Աղմուկ հանել, թմբուկներ զարնել առանց դրական բան կատարելու՝ չնչին մարդկանց յատկութիւն է: Ամենայն ինչ հոգեւորականներից սպասել, սակայն ոչ մի ջանք չխնայել՝ աններելի միջոցներով նոցա գործունէութիւնը ջլատելու, հայոց ազգի ամենայն չարեաց թշուառութեան պատճառ հոգեւորականներին համարել եւ անխոհեմ գործերով նորա անկման խորխորատը փորել, ծանր բեռներ դնել հոգեւորականութեան վերայ՝ առանց մատի չափ նորա հոգեւոր վերակենդանութեան եւ զարգացման նպաստելու՝ նշանակում է կեանք

ըը, պատմութիւնը իւր երեւոյթներով չըմբռնել: Իհարկէ, մենք անտեղեակ չենք մեր թերութիւններին, շատ աւելի խորն ենք ըմբռնում, թէ որտեղ է չարեաց արմատը. բայց ո՞ւր է դիւթական այն գաւազանը, որով աշխարհը միանգամից կերպարանափոխ կարելի է անել: Մի ժողովուրդ, որ ամենայն տեսակ լուսանքներ, զրպարտութիւններ առանց յուզուելու կարողաւ եւ մինչեւ իսկ խրախուսել կարող է. մի ժողովուրդ, որի մէջ մամուլի դրօշակի շուրջը խմբուած շատ անձնաւորութիւններ գիտակցաբար ստել, հակառակորդներին անվայել կերպով ցնխոտել կարող են՝ առանց խղճի փոքրիկ խայթ զգալու. մի ժողովուրդ, որ անտարբեր նայել կարող է, թէ ինչպէս նախնեաց թողած սրբազան ավանդութիւնները իւր իսկ տհաս ու անհաւատարիմ գաւակների ձեռքով քանդուում են, բնական է, որ իւր ամենամեծ հարստութիւնների մէջ եւս մեծ թերութիւններ երեւան հանէ:

Մենք չենք ուրանում մեր թերութիւնները, գիտենք, որ մեր առաջնորդութիւններն ու յաջորդութիւնները թափուր են, որ մեր քահանայութիւնը ընդհանուր առմամբ տգէտ է, որ մեր վանքերն իրենց կոչման ծառայել չեն կարողանում, որ մենք կենդանի խօսքի քարոզիչներ չունինք, որ մեր հոգեւոր երգեցողութիւնը բարեփոխութեան կարօտ է, որ մենք աղքատների խնամատարութիւն չունինք՝ Աւետարանի եւ Եկեղեցու պատմութեան ցոյց տուած պահանջների համեմատ, որ մենք քրիստոնէական որբանոցներ, հիւանդանոցներ, անկեղանոցներ չունինք մեր նախնեաց նման: Բայց եւ այն գիտենք, որ հոգեւոր կեանքն էլ իւր աճման եւ զարգացման պայմաններն ունի, որ բարձրագոյ աղաղակներն ու ճոճացող բառերը ոչ մի ազգի տուն չեն շինել, այլ լուրջ, երկարատեւ եւ անձնուէր գործունէութիւն է պէտք. ահա՛ ժամանակը շահեցնելու միջոցը եւ Փրկչի ցոյց տուած ճանապարհը*:

Թող գան ու անցնին տարիները, մենք լուռ ու մուռջ կը բաժանուինք նրանցից: Բայց մենք նկատենք ցանկալի կրօնական-հոգեւոր կեանքի արշալոյսի նշանները. այն ժամանակ միայն կ'զգանք, որ ժամանակը իզուր չենք կորցրել եւ ցնծութեան աղաղակներով կը գոչենք. «Շնորհաւոր՝ Նոր տարի»:

ԳԱՐԵԳԻՆ Վ. ՅՈՎՍԵՓԵԱՆ
«Արարատ», յունուար, եր. 5-7, 1899

* Նախընթաց պարբերութիւնները գրուած են ժամանակի անարդար յարձակումների տպատրութեան տակ:

ՓՐԿՉԻ ԾՆՈՒՆԴԸ

«Մնա այսօր Փրկիչ» [Ղուկ. Բ 11]:
«Աւետի՛ս մեծ Խորհրդոյ, Խորհրդոյ
ծածկեալ մեզ յայտնեցաւ»:
Գ. Նարեկացի

Ա

Երկու տօն տարուայ մէջ քրիստոնեայ աշխարհի համար բացառիկ նշանակութիւն են ստացել՝ Ծննդեան եւ Յարութեան տօները: Ըստ երեւոյթին, նոքա բոլորովին տարբեր յիշողութիւններ են, բայց ոչ՝ ըստ էութեան: Թէ՛ առաջինը եւ թէ՛ երկրորդը մեզ համար նշանակութիւն են ստացել Յիսուսի փրկչական գործունէութեամբ. մէկը կապուած է Նորա ապագայի, միւսը՝ անցեալի հետ: Յարութեան տօնի մէջ աւելի գաղափարական շեշտ կայ, եւ առաքելական քարոզութեան ժամանակ աւելի կարեւորութիւն է ստացել, բայց Ծնունդն էլ յետագայ դարերում դարձել է աւելի սիրելի եւ ժողովրդական: Նա մի ուրախութեան եւ ընտանեկան տօն է արեւելեան եւ արեւմտեան քրիստոնեայ ազգերի համար հաւասարապէս եւ կապուած ժողովրդական ծէսերի եւ աւանդութիւնների հետ: Նա ուրախութիւն է բերում ոչ միայն մանուկներին, այլեւ ոգեւորութիւն եւ վերածնութեան յոյս ներշնչում հասակաւորներին: Յուսոյ գաղափարը ապագայի ծոցում թաքնուած պայծառ պատկերների արտացոլումն է մարդկային հոգու մէջ: Այդ տեսակէտով՝ Յիսուս Մանկան ծնունդը մի արշալոյս էր, որ յայտարար պիտի հանդիսանար նոր Արեգակի ծագման: Իզուր չէ այդ իրողութիւնը այնքան սիրելի նիւթ դարձել քրիստոնէական արուեստի համար: Դասական ամենամեծ նկարիչները իրենց տաղանդը գործադրել են՝ ծննդեան տեսարանը իւր յաւիտենական գաղափարով թանձրացնելու. այդ պատկերների մէջ խորհրդաւորութեան եւ սքանչացման հետ արտացոլում է նաեւ ուրախութեան եւ աւետեաց գաղափարը. նոքա եւս իրենց ստեղծած հովիւների եւ մոզերի նման ծունկ են չոքել հոգևով նորածին Մանկան առաջ եւ հրեշտակների հետ աւետել մարդկութեան. «Ծնաւ ձեզ այսօր Փրկիչ»:

Աւետարանական աւանդութիւնների համաձայն՝ Յիսուսի Ծնունդը աստուածային էր եւ գերբնական: Այդ մի ճշմարտութիւն է՝ ըստ էութեան: Քննութեան ենթարկել նորա մանրամասնութիւնները բանականութեան օրէնքներով, փոխանակ Նորա անձնաւորութեան կենսատու ճառագայթների առաջ բանալու մեր սրտի եւ հոգու

լուսամուտները՝ նշանակում է արուեստի չքնաղ, հրաշակերտ ստեղծագործութիւնը կոպիտ եւ տգէտ դարբնի ձեռքը տալ, որ նա իւր մուրճով թերութիւններն ուղղէ: Այսօր գիտական վերլուծութեամբ չենք զբաղուած, այլ Ծննդեան իրողութեան նշանակութիւնն ենք կամենում շեշտել մեր հոգեւոր կեանքի համար: Յիսուս հաւատով եւ յոյսով մեռած մարդկանց Փրկիչը չէ, այլ՝ կենդանիների. իսկ այդպիսիների համար գերբնական նշանակութիւն ունեցողը Նորա Ծննդեան մանրամասնութիւնները չեն: Աստուածային է Նորա աճաւորութիւնը, Նորա հաւատը դէպի երկնաւոր Հայրը, Նորա սէ՛րը դէպի մերձաւորը, Նորա ամբողջ յայտնութիւնը: Հանճարեղ մարդիկ պատմութեան մէջ շատ կան, բայց ո՞վ է Յիսուս Քրիստոսի նման: Նոքա ամէնքը մարդ են՝ նկատելի եւ շօշափելի իրենց ստուերներով եւ սահմանաւոր կատարելութիւններով, բայց այստեղ Աստուածայինը իւր մաքրութեամբ մարմին է ստացել մարդկային կերպարանքով: Աւետարանական խօսքի համաձայն՝ Բանը մարմին է դարձել:

Պատմութեան հերոսներից, խորիմաստ փիլիսոփաներից ու արուեստագէտներից իւրաքաչիւրը մի աստղ է, որ զարդարում է մարդկային հոգու զարգացման երկինքը: Բայց ի՞նչ են նրանք Յիսուս Քրիստոսի անձնաւորութեան արեգակի առաջ: Արարատեան անհուն դաշտի հորիզոնում բարձրանում է ամպածրար եւ երկնամերձ գագաթով Մասիսը. ի՞նչ են նորա առաջ հասարակ բլուրները: Այսպէս է Յիսուսի անձնաւորութեան համեմատութիւնը պատմութեան բոլոր հերոսների նկատմամբ: Գիտութիւնը աշխատել է լուսաբանել Նորա ծագման պատմութիւնը ժամանակակից փիլիսոփայութեան եւ կրօնական հոսանքների առնչութեամբ, բայց Նա մնացել է դարձեալ աստուածային, չքնաղ մի Խորհուրդ՝ անհունութեան հորիզոնի վերայ աստուածային, չքնաղ մի Խորհուրդ՝ անհունութեան հորիզոնի վերայ ձգուած նուրբ եւ պայծառ շամանդաղի նման ակնապարար, առանց թանձրացեալ ըմբռնողութիւն դառնալու ըստ ամենայնի պատմական իրողութիւնների օղակների մէջ: Եւ առհասարակ, մի՞թէ ըմբռնելի է պատմութեան ամէն մի երեւոյթ, անձնաւորութիւն. ինչպէս խորհուրդ է մարդկային հոգին իւր շատ կողմերով, եւս առաւել խորհուրդ են աստուածամերձ անձնաւորութիւնները: Ո՛չ, Յիսուսի ծագումը սովորական չէ, որովհետեւ Աստուծոյ, անարատ Սիրոյ, Լուսոյ եւ ճշմարտութեան մասին մեկին գաղափար ենք ստանում միայն Նորա անձնաւորութեամբ: Պատմութեան ամենապսեմ խորհուրդն է այս ծնունդը, որի առաջ միայն պէտք է լուր բանականութիւնն ու մարդկային տկար իմաստութիւնը, եւ նրա սրտից պէտք է միայն որպէս կնդրուկը անուշ բուրմունք դէպի երկինք բարձրանայ անհուն

Բ

Արդարեւ, այսօրուայ օտնը մի մեծ մարդու ծննդեան յիշատակ էջ, այլ՝ աւելի: Բեթղեհէմի մսուրքի իրողութիւնը մարդկային պատմութեան օրհնութեան աղբիւրը դարձաւ: Հրեշտակի աւետիսը՝ «Մնաւ ձեզ այսօր Փրկիչ», միլիոնաւոր մարդկանց սրտի մէջ արձագանք գտաւ դարերի ընթացքում եւ նրանց դասակից արաւ հրեշտակների հետ՝ օրհնելու Աստուծոյ անունը. «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ»: Իւրաքանչիւր պարզեւ երախտագիտութեան զգացմունք է յառաջ բերում ստացողի մէջ, իսկ այսօր մարդկութեան առաջ է դրուած Բարձրեալի ամենամեծ նուէրը՝ մանուկ Յիսուսի ծննդեամբ: Խաւարի ստուերների մէջ խորխորակ մարդկութեան համար Բեթղեհէմի մսուրքից փրկութեան եւ լուսոյ մի նոր աստղ է ծագել. հանդէս է եկել Աստուծոյ Հոգին՝ երկրաւոր նոյնհի կերպարանքով: Բարձրագոյն Բարին, Գեղեցիկն ու Ճշմարիտը երկնային եթերներից իջել է այսօր երկրի վերայ: Աստուած մարմնացել է մարդու մէջ, որպէսզի մարդն էլ Աստուածութեան համար: Այսպէս են ձեւակերպել Եկեղեցու հայրերը Քրիստոսի Մենդեան բարոյական խորհուրդը եւ շատ գեղեցիկ կերպով: Մարդկութեան Փրկիչն է ծնուել այսօր, նորա հոգու Առաջնորդը: «Մտան ի պողոյ իւրմէ՛ ճանաչի», քրիստոնէութեան Հիմնադիրն էլ՝ Իւր ներգործութեամբ դարերի ընթացքում:

Ձի կարելի է հին ազգերի կեանքի վերջալուսին եւ նոր ազգերի ծագման եւ զարգացման ամբողջ շրջանում հոգեւոր, բարոյական, քաղաքակրթական, մարդասիրական որեւէ վսեմ շարժում ցոյց տալ, որ չկրէր Քրիստոսի Հոգու ներգործութիւնը: Կարելի է Նորան պատմութեան հնոցը՝ կիզիչ կէտը համարել. Նորա մէջ են ամփոփուած հին քաղաքակրթութեան ամենից ազնիւ գծերը, եւ այնտեղից էլ աւելի պայծառ կերպով բղխել են նոր ազգերի կեանքի ճառագայթները: Եւրոպական ներկայ նշանաւոր ազգերի քաղաքակրթութեան, գրի եւ գրականութեան ծագումը կապուած է քրիստոնէութեան հետ: Պէտք է համեմատել քրիստոնեայ ազգերի քաղաքակրթութիւնը արեւելեան հին կրօնների ազգեցութեան հետ, որպէսզի միանգամից պարզ լինեն մեր կրօնի եւ նորա Հիմնադրի լուսաւոր առաւելութիւնները: Արեւելեան կրօնների ենթարկուած ազգերը ներհում են խորին թմրութեան մէջ եւ իսկապէս պատմութիւն չունին, որովհետեւ իրենց կրօնների ազգեցութեամբ զուրկ են մնացել զարգացման ունակութիւնից, այնինչ քրիստոնէութիւնը իւր Հիմնադրի օրհնեալ բերանով մարդկութեան առաջ անսահման կատարելութեան նպատակն է դրել: Մահմեդականութիւնը հրով ու սրով էր տարածում իւր

ազգեցութիւնը՝ նման լաւայի, որ մեռցնում է իւր հոսանքի տակ ընկած ամէն բուսականութիւն եւ կենդանութիւն. այնինչ քրիստոնէութիւնը երկնային ցօղ է դարձել իւր ազգեցութեան ենթարկուած բոլոր ազգերի մտաւոր անդաստանների համար. այն իւրացրել է հին ազգերի քաղաքակրթութիւնը եւ աւանդել նոր ազգերին, նրանց համար գիր ու դպրութիւն, արուեստ է ստեղծել եւ կանգնեցրել նրանց գիտակցական շաւղի վերայ:

Քրիստոնէութեան շատ գաղափարները լիովին չեն իրագործուած, եւ նրանք իբրեւ իդէալ անիրագործելի են բովանդակ կատարելութեամբ, բայց հէնց այդպիսի գերական է, որ կեանքի բարոյական զարգացման աղբիւրն է դարձել: Մարդկութեան զարգացման լաւ ծանօթ անձանց համար կասկածի ոչ մի տեղիք չկայ, թէ դարերն ու ժամանակները անհետեւանք չեն անցել: Գիտութեան, արուեստի, քաղաքակրթութեան յառաջադիմութիւնը, վայրենի եւ կոշտ բարքերի աստիճանաբար մեղմացումն ու փոփոխութիւնը, բարոյական հայեացքների խորութիւնն ու հրամայական արժէք ստանալը քրիստոնէութեան բարեբար ազգեցութեան արդիւնքն են եւ դէպի կատարելութիւն տանող մի ունակութիւն: Կինը քրիստոնեայ ազգերի մէջ բարոյապէս հաւասար է մարդուն, նորա լծակիցն է կեանքի մէջ եւ ընկերը, բայց ոչ միայն հաճոյքի առարկայ, հարեմի գարդ՝ զրկուած Աստուծոյ շնորհած արեւից ու լոյսից, ինչպէս մահմեդականութեան եւ արեւելեան կրօնների ենթարկուած ազգերի մէջ: Մարդկութեան անարգանք ստրկութիւնը մեղմացաւ եւ ի վերջոյ ոչնչացաւ նոյնիսկ ոչ շատ քրիստոնեայ ազգերի մէջ՝ քրիստոնէութեան կարեկցութեան եւ մարդասիրութեան ազգեցութեան շնորհիւ: Բարեգործական ամէն տեսակ հաստատութիւնները, հիւանդանոցներն ու անկեղանոցները, որբանոցներն ու արհեստանոցները, աղքատանոցներն ու դպրոցները՝ նոյնիսկ մարմնապէս եւ հոգեպէս պակասաւորների համար՝ բոլորը ծագել են եւ ծաղկել քրիստոնէութեան կենսատու արեւի ճառագայթների տակ: Քրիստոնէութիւնը ձեռք է մեկնել բարոյապէս ընկածին, օգնութեան է հասել նիւթապէս կարօտին եւ մխիթարել է սգաւորին, մաքառել է մարդկային ամէն տեսակ ախտերի՝ անբարոյականութեան, արեցութեան, վաշխառութեան դէմ, խրախուսել է ազնիւ աշխատանքը, մաքուր կեանքը... Այնտեղից է ծագել եւ Աւետարանի լուսոյ եւ ջերմութեան մէջ զարգացել մարդասիրութեան գաղափարը իւր պէս-պէս երեւոյթներով, որ արդի քաղաքակրթութեան զարդն է եւ մարդկութեան բարոյական յառաջադիմութեան լաւագոյն ապացոյցը:

Այսօր եւս քրիստոնէութիւնը աւետարանական լուսոյ եւ քաղա-

քակրթութեան բարի սերմերը տարածում է Աֆրիկայի եւ Ասիայի կիսավայրենի կամ թմրութեան ենթարկուած ցեղերի եւ ազգերի մէջ. հազարաւոր միսիոնարներ գործում են այնտեղ Քրիստոսի աշակերտին վայել անձնաւորութեամբ եւ զրկանքներով... Բայց բաւական է. կարելի է համարել ծովի ափին կուտակուած աւազը, բայց ոչ՝ չափել ու կշռել այն շօշափելի բարիքն ու օրհնութիւնը, որ բոլորն է Բեթղեհէմի մտուրքի իրողութիւնից: Եւ դեռ երկար դարերի համար անսպառելի բարոյական դրամագլուխը կը լինի այն մարդկային հոգու զարգացման պատմութեան մէջ:

Գ

Այսօրուայ հոգեւոր երգերն ու սրբազան ընթերցուածները մեզ դէպի մտուրք են հրաւիրում՝ ծուկն խոնարհելու այն երկնային Մանկան առաջ, որ մեր Փրկիչը հանդիսացաւ. «Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ»: Մեզ առաջնորդող աստղը բանականութիւնը է, այլ՝ պարզ հովիւների եւ իմաստուն մոգերի անկեղծ բարեպաշտութիւնը, սքանչացման եւ հիացմունքի զգացմունքը նուիրականի, վսեմի, աստուածայինի առաջ: Թող լռէ՝ ամէն մի քննութիւն, եւ յարուցիւն առնէ խղճի մաքուր ձայնը: Լսենք պատմութեան խորին խորհուրդների սուսափիւնը մեր ականջին, որ հրեշտակի աւետման կրկնութիւնն է. «Մնաւ ձեզ այսօր Փրկիչ»:

Բայց Մննդեան տօնը միայն մեր Փրկչի յայտնութեան յիշատակը է, այլեւ մի քարոզ՝ վերածնութեան համար: Եթէ մեր յարգանքն ու երախտագիտութիւնը արտաքին տօնակատարութեամբ եւ ծէսերով պէտք է արտայայտուի, կը դատապարտուի նոյնիսկ Փրկչի խօսքերով: Նորա բողոքն ու քննադատութիւնը ուղղուած էր հէնց հրէութեան այդ թերութիւնների, յատկապէս արտաքին ծիսակատարութեանց ներկայացուցիչ ու պաշտպան փարիսեցիութեան դէմ: Մեր հոգեւոր երգերն ու ընթերցուածները կը լինեն անհամապատասխան այն Անձնաւորութեան յիշատակին, որ կեանք էր եւ սէր եւ ոչ՝ ղօղանջող պղինձ: Իզուր կը լինեն տօնի հետ կապուած արտաքին փառաւորութիւնները, եռաձայն եւ քառաձայն երգեցողութիւնները, հարիւրաւոր մոմերի եւ ջահերի արձակած ճառագայթները, եթէ մեր հոգու խաւարը չի փարատուած Քրիստոսից բոլորս սիրոյ նշոյլներով: Եկեղեցու արտաքին փառաւորութիւնը, նորա պայծառութիւնն ու գեղարուեստական զարդարանքը գնահատալի է դաստիարակչական որոշ տեսակէտով, բայց երբէք չպէտք է մոռանանք, որ նա մի շէնք է միայն՝ թող լինի կոփածոյ քարերից, նոյնիսկ մարմարիոնից կերտուած, եթէ սիրոյ հոգին չի սաւառնում նորա կամարների տակ:

Կրօնը արտաքին պաշտամունք է, այլ՝ կեանքի զօրութիւն եւ նպատակ: Տէրը Իւր աշակերտների զգացմունքների, նիստ ու կացի, գործունէութեան մէջ է թանձրանում եւ պատկեր ստանում: Նա չի եկել Դաւթի նիւթական աթոռի վերայ բազմելու՝ շին Կտակարանի բարեպաշտների իղձերի համաձայն, այլ՝ Իւր հաւատացեալների հոգու եւ սրտի մէջ: Նա չի եկել՝ հրէից թագաւորութիւնը նորոգելու եւ հռոմէացւոց իշխանութիւնը խորտակելու, այլ՝ մեր հոգիները փրկելու չարի, սատանայի, մեղքի իշխանութիւնից: Ի՞նչ է մարմնաւոր ստրկութիւնը հոգեւոր ստրկութեան առաջ: «Զի՞նչ օգուտ է մարդոյ, եթէ զաշխարհ ամենայն շահեցի եւ զանձն իւր տուծեացէ»: Նա եկել է՝ մի աւելի բարձր, ազատ, վսեմ եւ աստուածային թագաւորութիւն ստեղծելու մարդկանց հոգիների մէջ. «արքայութիւնն ի ներքս ի ձեզ է» [Ղուկ. ԺԷ 21]. Իւր սիրոյ ջերմութեամբ հալեցնելու մեր սրտի եսականութեան սառնամանիքները, բաղխելու նորա փակուած դռները, որպէսզի բացուին մեզ շրջապատող թշուառութեան առաջ: Աւա՛ղ, մարդկային հոգու աչքերը շատ կարճատես են: Ի՞նչ բազմատեսակ թշուառութիւններ կան, որոնք վրիպում են մեր տեսութիւնից, եթէ Քրիստոսի սիրոյ եւ կարեկցութեան ճառագայթները չեն թափանցել մեր հոգին: Հարիւրաւոր, հազարաւոր մարդիկ իրենց վերջին շունչն են փչում աղքատութեան, տգիտութեան եւ անբարոյական ախտերի ճիրաններում, եւ մենք Կայէնի նման չքմեղ ենք ձեւանում Աստուծոյ եւ մեր քարացած խղճի առաջ: Հարիւրաւոր, հազարաւոր երեխաներ՝ մերկ, բոկոտն, քաղցած, իրենց հայեացքը մեզ են ուղղել Տաճկահայաստանում եւ այստեղ, որոնք կը կամենային Մննդեան տօներին նոյնպէս հաճնուել, վայելել իրենց ծնողների փայփայանքն ու սէրը: Մի ամբողջ ժողովուրդ տառապում է նիւթական եւ հոգեւոր աղքատութեան, ստրկութեան, խաւարի եւ մոլորութեան մէջ: Դարերի արհաւիրքներից ճողոպրած ազգային եկեղեցին արիւնաքամ ընկած է Երիքովի ճանապարհին եւ իւր որդոց օգնութեանն է սպասում, որ Սամարացու նման սպեղանի դնեն վէրքերին...* :

Տեսնո՞ւմ ենք այս բոլորը, լսո՞ւմ ենք նրանց հառաչանքի եւ հեծութեան ձայները: Եթէ այո, Բեթղեհէմի պատղը ծագել է եւ մեզ համար, հրեշտակի աւետիքը հովիւների հետ եւ մեզ է ուղղուած, թէ՛ «Մնաւ ձեզ այսօր փրկիչ»:

ԳԱՐԵԳԻՆ Վ. ՅՈՎՍԵՓԵԱՆ
«Արարատ», յունուար, 1908

* Ի Ակատի Է առնուած ժամանակի վիճակը:

ԾՆՆԴԵԱՆ ԾՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՐՈՋ

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԱՌԱՋՆՈՐԴ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ, ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ, ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԵՒ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ, ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԵՒ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐԻՆ, ԴՊՐԱՑ ԴԱՍԵՐԻՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ, ՈՒՍՏԵՐՑ ՈՒ ԴՍՏԵՐՑ, ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԵՒ ՄԵՐ ԲՈԼՈՐ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐԻՆ, ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ, ԾԵՐՈՑ ԵՒ ՏՂԱՅՈՑ՝ ԾՆՈՐՀՔ, ՍԷՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ԵՒ ՓՐԿՉԻՆ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Տիրոջ հրաշափառ Ծննդեան եւ Յայտնութեան տօնի առթիւ կը կամենայինք լինել մեր հօտին պատկանող բոլոր Եկեղեցիներում, ձեզ հետ միասին փառաւորել Նորա սուրբ անուշը, անձն ու գործը՝ Մկրտութեան, Զորահնաց սրբազան հանդիսի եւ արարողութեան կատարմամբ, բայց այդ անհնարին է մարմնաւորապէս: Ուստի հարկաւոր համարեցինք հովուական այս թուղթն ուղարկել, որպէսզի սովորական քարոզի փոխարէն կարդացուի այն մեր Եկեղեցիների բնմբից ի լուր ժողովրդի՝ որպէս իրենց հոգեւոր հօր եւ առաջնորդի կենդանի եւ պարզ խօսքը՝ ուղղուած իւր հաւատացեալ հօտին եւ դաւակներին, եւ որպէս նշան նորա հոգեւոր ներկայութեան:

Ծննդեան տօնը ուրախութեան տօն է բոլոր քրիստոնեայ Եկեղեցիների, նոյնպէս եւ Հայաստանեայց Եկեղեցու համար, որ բարեպաշտական կեանքի առանցքն է կազմում՝ դառնալով եւ ժողովրդական տօն մեծի եւ փոքրի համար: Զարդարւում են փողոցները, խանութներն ու հրապարակները, հասարակաց պարտէզները, մասնաւոր բնակարանների ընդունարաններն ու բակերը տօնածառերով, գոյնգոյն լապտերներով: Երեխաները նուէրներ են ստանում ծնողներից, բարեկամները՝ ողջոյնի խօսքեր ու նուէրներ փոխանակում իրար հետ: Եկեղեցիները յատուկ պայծառութիւն եւ շքեղութիւն են ստանում դրսից-ներսից, ճրագալոյցներով, ջահերի լուցմամբ եւ այլն: Այս բոլորը ուրախութեան արտայայտութիւն է՝ կապուած Քրիստոսի Ծննդեան եւ Յայտնութեան հետ՝ տարաբախտաբար, աւելի կենցաղական, արտաքին բնաւորութեամբ, քան հոգեւոր, որի նշանակութիւնը կը կամենայինք բացատրել ձեզ այսօր ըստ կարելոյն ամենքին հասկանալի լեզուով:

Սիրելի՛ք, ամենայն գործ ու երեւոյթ յայտարարն է գործողի, հետեւանքը, արդիւնքը պատճառի: Ինչպէս ծառը ճանաչուում է իւր

պտղից, այնպէս էլ անձը՝ իւր գործից եւ նորա յառաջ բերած արդիւնքից: Փշից խաղող չի քաղուի, ինչպէս եւ տատասկից՝ թուզ: Մօտաւորապէս երկու հազար տարի է՝ Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքի մօտ մի հասարակ քարայրի մէջ, որ փարախ էր ծառայում անասունների համար ձմեռուայ օրերին, ծնուեց մի մանուկ. հայրը՝ մի հիւսն, մայրը, ըստ երեւոյթին, հասարակ դասակարգի մի աղջիկ: Ինչպէ՞ս կարելի էր սպասել, որ այդ Մանուկը մարդկութեան հոգեւոր իշխանը պիտի դառնայ, մարդկային հոգիների մեծ Առաջնորդն ու Փրկիչը, ազգերին խաւարից դէպի լոյս, անգիտութիւնից դէպի պայծառ, հոգեւոր գիտութիւն պիտի առաջնորդի: Արդարեւ, «Խորհուրդ մեծ եւ սքանչելի», ինչպէս երգել են մեր բարեպաշտ հայրերը:

Աշխարհը, պատմութիւնը տեսել է մեծ եւ հզօր աշխարհակալ արքաներ, յաղթող զօրապետներ, որոնց ձիերի սմբակների տակ փոշիացել են երկիրներ, եւ սրերի առաջ ոչնչացել ազգեր: Բայց նրանց իշխանութիւնն ու փառքը եղել են անցաւոր, յօդս ցնդել իրենց յարուցած փոշիների նման՝ քրուելով ժամանակի բերած հողմերից: Իսկ Բեթղեհէմի այրի մէջ ծնած եւ մսուրքի մէջ ապաստան գտած աղքատ այս Նորածինը, առանց զէնքի եւ զօրութեան, առանց աշխարհը սասանեցնող պատերազմների, բազմաթիւ ազգերի եւ միլիոնաւոր մարդկանց հոգիների առաջնորդը, հզօր տէրն է Հանդիսացել՝ աւելի հզօր, քան մեծ արքաները, որոնք իրենց թագազարդ գլուխը խոնարհել են եւ ծունկ չոքել Նորա առաջ: Իսկապէս, «Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ»:

Անշուշտ, աշխարհը եւ պատմութիւնը տեսել է շատ մեծ մտածողներ, փիլիսոփաներ, բանաստեղծներ եւ գիտնականներ, բայց նրանցից ո՞րը կարող է համեմատուել Յիսուս Նազովրեցու հետ, որ փիլիսոփայական դպրոց չէր անցել, գիտնականների չէր աշակերտել, բայց Որի գործը, ցանած սերմերը պտղաբեր Հանդիսացան հանուր մարդկութեան հոգեւոր անդաստանների մէջ այնպիսի խորութեամբ եւ ըստարձակութեամբ, որի հետ ոչինչ կարող է չափուել: Մարդկութիւնը մեծ բարեբարներ է ունեցել, որոնք իրենց Հանճարով երախտապարտ են կացուցել յետագայ սերունդներին: Բայց Յիսուս Նազովրեցին է միայն, որ ոչ թէ յարգանքի, այլ պաշտաման առարկայ է դարձել իւր անուան նուիրուած հազարաւոր, հարիւր հազարաւոր հոյակապ տաճարների մէջ՝ իբրեւ տիպ եւ օրինակ մարմնացեալ սիրոյ եւ եղբայրութեան:

Հազարաւոր տարիների ընթացքում գրուել են բանաստեղծական, փիլիսոփայական, գիտական հաստատիր գրքեր, որոնք սնունդ են

մատակարարել յետագայ սերունդներին, ուսումնասիրություններ են կատարուել նրանց շուրջ՝ մատենադարաններ կազմելու չափ. Շեքսպիրի, Գեոթէի եւ նման Հանճարների գրուածքների հետ կապուած ամբողջ գրականութիւն է ստեղծուել: Իսկ մեր Տէրը չի գրել եւ ոչ մի տող, բայց ապրել է Իւր աշակերտների շրջանում իբրեւ կենդանի Գիրք եւ Իւր վարդապետութեամբ այնպիսի լոյս սփռել նրանց հոգիների մէջ եւ այնպիսի դրոշմ դրել նրանց սրտերի վերայ, որ անջնջելի պիտի մնար: Այդպիսի տպաւորութեան եւ յիշողութեան արդիւնքն է մեր փոքրիկ Աւետարանը Առաքելական թղթերի հետ՝ Նոր Կտակարան կոչուած, որ միլիոնաւոր մարդկանց կեանքի աղբիւրը Հանդիսացաւ Հազարաւոր տարիների ընթացքում եւ ուսումնասիրութեան ու նոր գրականութեան նիւթ այնպիսի չափերով, որ ոչ մի գիրք չէ ունեցել:

Մարդկութեան մտաւոր զարգացման ամենակարեւոր գործիքը գիրն է, դպրութիւնը: Ուսումնասիրեցէ՛ք Առաջաւոր Ասիայի եւ Եւրոպական ազգերի քաղաքականութեան, գրի եւ դպրութեան ծագումն ու զարգացումը եւ կը տեսնէք, թէ ինչպէս քրիստոնէութեան հովանաւորութեամբ, Եկեղեցու սպասաւորների ձեռքով Հայն ու վրացին, սլաւոնական ազգերը գիր են ստացել եւ գրականութիւն, դասական սքանչելի լեզու, ինչպէս եւ գերմանացու, անգլիացու դպրութեան սկզբնաւորութիւնը կապուած է Սուրբ Գրքի թարգմանութեան կամ քրիստոնէական քարոզչութեան հետ:

Մարդկութիւնն ու քաղաքակրթութիւնը պարծննում են աստուածահաճոյ եւ բարեսիրական բազմատեսակ Հաստատութիւններով, որբանոցներով, հիւանդանոցներով, ասպնջանոցներով եւ անկելանոցներով... Ի՞նչն է եղել նրանց ծագման եւ զարգացման զարկ տուող շարժառիթը, պատճառն ու աղբիւրը, բայց եթէ՝ Բեթղեհէմի մտուրքի մէջ ծնած Մանուկը, որ Իւր փրկչական գործունէութեամբ գթութեան եւ կարեկցութեան զգացմունքն ու գործը, աստուածանմանութեան ուղին վարդապետեց. «Եղերո՛ւք գթածք, որպէս եւ երկնաւոր Հայրն ձեր գթած է»:

Ճանապարհորդեցէ՛ք ամբողջ քրիստոնէական աշխարհը, մտէ՛ք մեծ մայրաքաղաքների թանգարանները, դիտեցէ՛ք բոլոր նշանաւոր վարդապետների գործերը, դիտեցէ՛ք ճարտարապետական ամենամեծ կոթողները, արքայական շքեղ պալատները... եւ Համեմատեցէ՛ք Բեթղեհէմի մտուրքի Մանկան անուան եւ կեանքի հետ կապուած նկարչական եւ ճարտարապետական հոյակապ ստեղծագործութիւնների հետ եւ կը տեսնէք, որ այստեղ է իսկապէս բարձր սքանչացման

արժանի արուեստը, ուր նիւթը հոգի է ստացել, կենդանի լեզու՝ մարդկային ներքին աշխարհի ամենանուրբ թելերի հետ խօսող: Որտե՞ղ է երաժշտութիւնն այնպէս հոգեթով երանգ ստացել, մարդկային հոգին վերացնելու չափ, բայց եթէ՝ Եկեղեցական եւ կրօնական հին եւ նոր երաժշտութեան մէջ, ինչպէս պատարագներն են, հոգեւոր շարականներն ու երգերը հին Եկեղեցիների, բայց նաեւ՝ Հենդելի «Մեսիասի», Բախի «Մատթէոս Պատիոնի», Վագների «Պարսիֆալի»... «Ծառն ի պտղոյ իւրմէ ճանաչի». ահա՛ պտուղները այն ծառի, որ քրիստոնէութիւն է կոչուում՝ Բեթղեհէմի Մանկան բերած օրհնութիւնները:

Այսօր գիտութիւնը հրաշքներ է գործում, նրանց ծաղկման եւ ուսուցման օրօրանները դպրոցներն են, համալսարանները, գիտական բազմատեսակ կաճառները: Ուսումնասիրեցէ՛ք Եւրոպական բոլոր հին Համալսարանների ծագման եւ զարգացման պատմութիւնները եւ կը տեսնէք, թէ նոքա երեւան են եկել քրիստոնէութեան բարերար ազդեցութեան եւ հովանաւորութեան տակ, մինչեւ աճել են, զարգացել, իրենց ոտքի վերայ կանգնել անկախօրէն: Նոյնը կարող ենք ասել եւ հոգեկան այլ երեւոյթների մասին՝ գրականութեան եւ արուեստի: Մենք ընդունում ենք գիտութեան մեծ արժէքը եւ ցանկացող ենք նորա բոլոր իրական յառաջադիմութեան, դրանց մէջ նաեւ՝ բնական գիտութիւնների ծաղկման: Ըշմարիտ եւ բարձրագոյն մտքով Հասկացուած կրօնը երկիւղ չունի գիտութիւնից եւ ո՛չ իսկ բնական գիտութիւններից, ինչպէս կարծում են ոմանք: Թո՛ղ ընդարձակուին եւ խորանան տիեզերքի եւ բնութեան Հասկացողութեան շրջանները. տիեզերքի խորհրդաւորութեան երեւոյթը սորանով չի վերանայ, որի հետ կապուած է կրօնի ծագման եւ տիեզերքի ընդհանուր Հասկացութիւնը: Մեր չգիտցածը միշտ աւելի կը լինի, քան գիտցածը, որքան եւ ընդարձակուի մեր գիտական ծանօթութիւնը տիեզերքի մեծութեան եւ իմաստուն կարգաւորութեան մասին, որ տեսչացող եւ ղէպի բարձրագոյն Հասկացողութիւնը ձգտող, արտաքին երեւոյթների մէջ ներքին էութիւնը որոնող հոգիների համար սքանչացման աղբիւրն է՝ ստեղծեալից ղէպի Ստեղծողը, արդիւնքից ղէպի Պատճառը տանող, որ Աստուծոյ զաղափարն է:

Թո՛ղ բազմանան օգտակար գիւտերը՝ Հեռագիրն ու Հեռախօսը, ռադիոն, շոգենաւն ու օդապարիկը... եւ օգնեն նիւթական կեանքի պահանջների լրացման՝ միայն առանց բացասական նպատակների Հասնելու միջոց դառնալու: Բայց մի է բարձրագոյն Գիւտարարը, մի Տէր, մի Յիսուս Քրիստոս, որ ամենաթանկագին գիւտն է արել՝

«Եւ ահաւասիկ Ես ընդ ձեզ եմ միմչեա ի կատարած աշխարհի» [Մատթ. ԻԸ 20]:

մարդկային Հոգու անսահման արժէքի գիւտը, սրտացաւ, աստուածային Հովուի եւ Առաջնորդի գիւտը առողջ եւ կորուսեալ Հոգիների Համար: Մարդկային անձը, ներքին աշխարհն է այն գանձը, անգին մարգարիտը, որի առաջ երկրորդական են դառնում ամէն տեսակ արժէքներ՝ լուսաւորուած եւ տեսանելի դարձած առ Աստուած եւ առ ընկերը մաքուր սիրով, որի կենդանի օրինակը Հանդիսացաւ մեր Տէրը Իւր անձով եւ վարդապետութեամբ եւ Իւր տիեզերական ներգործութեամբ պատմութեան մէջ. «Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ»:

Այսպէս, սիրելի՛ք, մենք չկամեցանք աստուածաբանական վերլուծութիւնների մէջ մտնել՝ մեր Տիրոջ մարդեղութեան խորհուրդը ձեզ բացատրելու Համար, որ, Աթանաս Մեծի խօսքով, Աստուծոյ մարդացումն էր՝ մարդկանց Աստուածութեան բարձրացնելու Համար: Այլ միշտ սովորական եւ պատմական Հողի վերայ կանգնած՝ երեւոյթների Համեմատական ճանապարհով, կամեցանք պարզել մեր Տէր Յիսուս Քրիստոսի անձնաւորութեան չնաշխարհիկ մեծութիւնը՝ Իւր փրկչական գործունէութեամբ քաղաքակիրթ աշխարհի պատմութեան մէջ: Եւ եթէ կամենանք պարզագոյն կերպով մատնանշել Նորա մեծութեան աղբիւրը Իւր փրկչական գործունէութեամբ, պիտի աւելացնենք, թէ այդ Նորա կրօնն էր, Հաւատը դէպի երկնաւոր Հայրը, մարդկանց եղբայրակցութեան գաղափարը՝ որպէս երկնաւոր Հօր որդիքը Հաւասարապէս, որոնց վերայ ծագում է Իւր արդարութեան արեգակը եւ ուղարկում կենդանարար անձրեւն անխտիր:

Նորա տիեզերապարփակ սիրոյ մի ճառագայթն էլ բաժին է Հասել եւ ձեզ՝ Հայ ժողովրդին՝ Հայաստանեայց Եկեղեցու աստուածաշնորհ պարգեւով: Գնահատենք այդ մեծ պարգեւը, Հասկանանք նորա մեծ արժէքը, պահպանենք նորա բարոյական ոյժն ու միութիւնը, որ Նոյեան փրկութեան տապանն է մեր ալեծուփ կեանքի ծովերի մէջ:

Օրհնեալ լինի Քո Մնունդը, օրհնեալ՝ Քո Յայտնութիւնը, օրհնեալ եւ պտղաբեր՝ Քո ցանած սերմերը սիրոյ, եղբայրութեան, փոխադարձ կարեկցութեան եւ գնահատութեան, որ Հիմքն է անհատների, ազգերի եւ մարդկութեան խաղաղութեան եւ Հաճութեան, որ քարոզուեցաւ Հրեշտակների բերանով Քո Մննդեան առթիւ:

«Հայաստանեայց Եկեղեցի», 1 յունուար, 1940
Նիւ Եորք

Քրիստոսի ներկայութիւնը Իւր Հաւատացեալների մէջ աւետարանական քարոզութեան էական գաղափարներից մէկն է. «Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն Իմ, անդ եմ եւ Ես՝ ի մէջ նոցա»: Բաժանման ըոպէին եւ Իւր աշակերտներին վերջին պատուէրը տալով Հեթանոսների մէջ քարոզելու՝ աւելացնում է. «Եւ ահա Ես ընդ ձեզ եմ մինչեւ ի կատարած աշխարհի»: Նման մտքեր եւ խօսքեր կրկնուած են ոչ միայն Համատեսների, այլեւ Յովհաննու Աւետարանի մէջ շատ յաճախ: Քրիստոսի ներկայութիւնը Աստուծոյ ներկայութիւնն է, Սուրբ Հոգու կենդանի ներգործութիւնն է, որովհետեւ մենք անձնաւորեալ Աստուծոն ուրիշ կերպ ըմբռնել չենք կարող, քան մեր մտքի եւ Հոգու Համար շօշափելի եւ մեր Հոգու աչքերի առաջ տեսանելի Տէր Յիսուս Քրիստոսի անձնաւորութեամբ եւ վարդապետութեամբ: Քրիստոնէական Եկեղեցու ծագումն ու Հաստատութիւնը պայմանաւորուած էր Սուրբ Հոգու գալստեամբ: Հրեղէն լեզուների ընդունելութեամբ է, որ ստեղծւում է սիրոյ, տիեզերական լեզուի Հասկացողութիւնը տարբեր ազգերի մէջ:

Եկեղեցի առանց Յիսուսի ներկայութեան չկայ. կայ քար, կիր, փայտ, կայ յատակ, պատ, լուսամուտներ, առաստաղ, այսինքն՝ նիւթական շէնք, որ ինքնըստինքեան ոչինչ է Հոգեւոր տեսակէտով. թող լինի այն շքեղ, փառաւոր, ոսկով եւ արծաթով զարդարուած, բարձրաբերձ կամարներով եւ գմբէթներով դէպի երկինք սլացած: Որովհետեւ եկեղեցի բառի սկզբնական նշանակութիւնը շէնքը չէ, այլ՝ ժողովը, բազմութիւնը կենդանի մարդկանց՝ յանուն Աստուծոյ կամ Քրիստոսի Հաւաքում: Եկեղեցի Հայերէն տառադարձութիւնն է յունարէն էկլեզիա բառի, որ Հաւատացեալների ժողով է նշանակում վերոյիշեալ մտքով եւ յետագայում միայն անդրադարձել է այն շէնքին, ուր Հաւատացեալներն են Հաւաքում:

Բայց Քրիստոս չկայ, կան ասողներ: Չկայ ոչ միայն այն մտքով, որ 2000 տարի է անցել Նորա մահուանից յետոյ, այլեւ կան ժխտողներ Նորա պատմական գոյութեան: Անշուշտ, պատմա-գիտական տեսակէտով խախուտ են այդպիսի պնդումները. մեզ Համար Հասկանալի չէ, երբ ստուգեան եւ կեղծիքի վերայ է Հիմնուած ներքին ճշմարտութիւնը, աշխարհը նուաճող բարոյական շարժումը, ձգտումը դէպի

սիրոյ եւ եղբայրութեան գաղափարը, որ քրիստոնէութեան էութիւնն է: «Մառն ի պտղոյ իւրմէ՛ ճանաչի»։ փշից խաղող չի քաղուել, եւ ոչ տատասկից՝ թուզ, այսպէս էլ ստուծիւնից՝ ճշմարտութեան պտուղ: Որքան էլ ճարպիկ, մտքի ճկունութեան եւ մարզանքի վերայ հիմնուին ժխտողական այդ տեսութիւնները, նրանք անարժէք են, եթէ կայ Հաւատը մեր մէջ դէպի Նորա բարձրագոյն նպատակը, որ մարդն է եւ մարդկային հոգու անսահման արժէքը, կորուսեալ հոգիների փրկութիւնը Նորա ձեռքով եւ Նորա շնորհիւ:

Քանի՛-քանի՛ միլիոններ ապրել, գործել, ստեղծել, փրկուել եւ փրկել են Նորա անունով եւ Նորա միջնորդութեամբ Հասարակաց Հօր՝ Աստուծոյ եւ եղբայրութեան Համար: Քանի՛-քանի՛ միլիոններ նահատակուել են Նորա անունով, եւ քանի՛-քանի՛ միլիոնների Համար կեանքի առաջնորդող սկզբունք են եղել «Եւ չիք այլով իւրք փրկու-թիւն, զի եւ ոչ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ, որով արժանի իցէ կեալ» խօսքերը, որ մարմնաւորումն են, խտացումը նախկին Հաւատացեալների բարձրագոյն Հասկացողութեան, կեանքի էութեան եւ նորա նպատակի Համար: Հաւատոյ աշխարհն է բարձրագոյն գաղափարականի եւ բարոյական գեղեցկութեան աշխարհը, որ Հակադրութիւնն է եսի, շահախնդրութեան, բռնակալութեան եւ փառամոլութեան աշխարհի:

Առանց Հաւատոյ եւ նորա Հետ միացած բարոյական գաղափարի ոչինչ կայ մնայուն անհատական, ազգային եւ մարդկութեան կեանքի մէջ: Հաւատն ու բարոյական Հասկացութիւնը, ապրումը ցօղն են կենդանարար անմահական կեանքի, ստեղծագործութեան եւ յարատեւութեան, իսկ բարոյական զօրութեան խորտակումը, անկումն ու յուսալքութիւնը՝ կարապետը մահուան: Ապագան եւ արդարութեան կշիռը Աստուծոյ ձեռքն է, եւ նա չէ իրագործուած առանց Հաւատոյ եւ յուսոյ դէպի Նորա գթութիւնն ու ճշմարիտ դատաստանը: Մի ազգ կարող է նուաճել միւսին, ողողել նորա երկիրը իւր զօրքերով, բայց այդ դեռ բաւական չէ՝ նորան տիրապետելու Համար: Քրի՞ստոս պատմութեան մէջ օրինակներ, որ տիրողները տկարացել են կամ փոշիացել նուաճուածների բարոյական եւ բարձր քաղաքակրթութեան զօրութեան առաջ: Ինչպէս ճշակոտոր եւ կարկտահար ծառի արմատներից նոր ճիւղեր կարող են բուսնել՝ աւելի գեղեցիկ, զուարթ, պտուղներով ուռճացած, այդպէս էլ՝ արտաքուստ եւ ժամանակաւորապէս ընկած ժողովուրդը, եթէ նա բարոյական կենսունակութիւն ունի եւ Հաւատ դէպի իւր լուսաւոր ապագան, եթէ խմբուած է նա կենդանարար մի գաղափարի շուրջ: Հարկաւոր Համարեցինք շեշտել

այս խօսքերը, որովհետեւ մենք էլ մի ազգ ենք՝ ճշակոտոր եւ հողմացրիւ եղած անարդարութեան եւ մասամբ մեր Հաւատոյ եւ բարոյական զգացման թուլութեան երեսից: Զէնքի ուժով չէ, որ պիտի մարդկանց միջից վերանայ քաղաքական եւ նիւթական շահերի տիրապետութեան ձգտումն ու Հասկացողութիւնը, որ չարիքների արմատն է, այլ՝ Հաւատոյ եւ սիրոյ, արդարութեան հոգու վերազարթ-նումի եւ մեռելութիւնից յարութեան: Նիւթի զօրութիւնը միջոց պիտի լինի միայն բարձրագոյն նպատակների Հաստատութեան, հոգեւոր եւ ճշմարիտ ազատութեան, որ Քրիստոսի եւ Աստուծոյ Հոգու ներկայու-թեամբ է պայմանաւորուած. «Ուր Հոգի Տեսուն է, անդ ազատութիւն է»:

Այսօր մարդկային կեանքը, անձն ու ստեղծագործութիւնը, հոգեւոր ժառանգութիւնն ու բարիքը այլեւս կարծես գին չունեն: Մարդիկ գազանացած խողխողում են իրար, ոչնչանում են քաղաքներ եւ աւաններ. նիւթական եւ մշակութային ահաւոր ստացուածք: Ինչի՞ Համար: Ո՞վ կարող է ասել, թէ կորցրածը յետ պիտի բերուի: Ո՞վ կարող է ասել, թէ միլիոնաւոր մարդկանց կորստից, չէն երկիրների եւ քաղաքների աւերումից յետոյ աշխարհի երեսին արդարութեան, եւ քաղաքների աւերումից յետոյ աշխարհի երեսին արդարութեան, սիրոյ, փոխադարձ յարգանքի եւ գնահատութեան գաղափարը պիտի թաքաւորէ: Նախընթաց պատերազմը բերե՞ց այդ սպասելիքը, վերաց-րե՞ց անարդարութիւնը Հաւասարապէս: Ուր փոթորիկն է ու ամպրոպը, շարժն ու հուրը, այնտեղ Աստուծոյ ազատարար Հոգին չէ երեւում [Գ Թագ. ԺԹ 11-12], այլ՝ մեղմ գեփիււրի մէջ միայն: Եթէ Քրիստոսի Հոգին թագաւորէր պատերազմը որոշողների եւ ղեկավարողների մէջ, ուրիշ ձեւ ու կերպարանք ստացած կը լինէր կռուող ազգերի հոգեբա-նութիւնը, քան վճիռն ու երգումը՝ իրար ոչնչացնելու մինչեւ յետին մարդը:

Բայց այս տեսութիւնն ու լուսաբանութիւնը չի վերաբերում միայն օտար եւ մեծ ազգերին, այլեւ՝ մեր ժողովուրդին ու Եկեղեցուն: Մեր գլխին եկած չարիքները աւելի թեթեւ կը լինէին, եւ Հետեւանք-ները՝ աւելի մեղմ, եթէ Քրիստոսի Հոգին աւելի կենդանի եւ ներգործող լինէր մեր ժողովուրդի եւ Եկեղեցու մէջ: Երբէք չենք կարող մոռանալ Տփլիսում Օրմանեանցի եւ ուրիշների կաթողիկոսական թեկնածու-թեան առթիւ գումարած ժողովրդական մի Հաւաքոյթի մէջ նորա Հակառակորդ կուսակցական հետտորսներից մէկի խօսքը, թէ՛ «Մենք Եկեղեցի ենք ուզում առանց Աստուծոյ»: Այս խօսքը նոյնութեամբ չի ասոււմ այժմ, բայց, աւա՜ղ, հեռու չէ ոմանց կողմից նման մտքերով Հասկացողութիւնը Եկեղեցու մասին: Պատարագի ժամանակ միշտ

երգում ենք՝ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, որ էնն Աստուած աստ բազմեցաւ, խաղաղութեան ճայն Հնչեցաւ, սուրբ ողջունիս Հրաման տուաւ», իսկ տասնեակ տարիների ընթացքում տիրակալութեան Հոգին ենք կամենում թագաւորեցնել Համայնական եւ վարչական կեանքի մէջ:

Ա՛խ, ե՞րբ պէտք է Հասկանանք պարզ ճշմարտութիւնը, թէ առանց Քրիստոսի Եկեղեցի չկայ, եւ առանց Նորա Հոգու ներկայութեան՝ սիրոյ եւ եղբայրութեան շինարար գործ:

« Հայաստանեայց Եկեղեցի », օգոստոս, 1940

« Երբէ աղմ աճաճի, ի՞նչ յաղիցի » [Մատթ. Ե 13]:

Ա

Ընտրուած բնաբանը Տիրոջ պարզ խօսքերից մէկն է Լեւրան քարոզի մէջ՝ Հասկանալի ամենքի Համար: Կերակուրը՝ պատրաստուած խոհարարական արուեստի բոլոր առաւելութիւններով, նիւթերն ընտիր եւ ազնիւ, բայց եթէ նորա մէջ աղ չկայ, անհամ կը լինի, անդուրեկան եւ մինչեւ իսկ պատճառ Հիւանդութեան, եթէ տեւէ այդ Հանգամանքը: Աղն է, որ համ է տալիս կերակրին, առողջարար եւ սննդարար դարձնում եւ պահում նորան ապականութիւնից: Առօրեայ կեանքից առնուած այս օրինակով Տէրը կամենում է բացատրել քրիստոնէութեան եւ քրիստոնեայ մարդու արժէքը երկրի մէջ, այսինքն՝ պատմութեան մէջ: Առանց քրիստոնէութեան եւ իրական քրիստոնեայ մարդու՝ կեանքը կը դառնայ անհամ, անհաճոյ եւ անառողջ. այսպէս է քարոզել Տէրը, եւ այսպէս են Հասկացել առաջին քրիստոնեաները իրենց կոչումը պատմութեան մէջ՝ որպէս խորին Համոզում եւ Հաւատ:

Ի՞նչ էր Հեթանոսական աշխարհը քրիստոնէութեան ծագման եւ տարածման առաջին շրջաններում. կրօնի կատարեալ անկում եւ դորա հետ նաեւ՝ բարոյական զգացման նուազում կամ իսպառ անհետացում: Դորա հետեւանքն էր յունա-Հռոմէական՝ ժամանակի ամենաքաղաքակիրթ Համարուած ազգերի զեղխութեան եւ ապականութեան տիրապետութիւնը մեծագոյն չափերով: Յունաստանի մայրաքաղաք Աթէնքը, ուր Պերիկլեան ոսկեդարն էր ծաղկել մի ժամանակ՝ գրականութեան, արուեստի, ճարտարապետութեան, փիլիսոփայութեան, նաեւ՝ ճշմարիտ Հայրենասիրութեան եւ առաքինութեան ոսկեդարը յունական կեանքի, դարձել էր երկպառակութեան, ոճրագործութեան, եսականութեան, բարոյական եւ ազատասիրական զգացմունքից զուրկ ժողովրդի մայրաքաղաքը: Հռոմէական կայսրութիւնը, որ պետական գործութեան զազաթնակէտին էր Հասել, աշխարհի տէրը դարձել, կրօնի անկմամբ եւ անհաւատութեան զօրացումով դարձել էր նաեւ զեկավարը զեղխութեան եւ բարոյական ապականութեան մրցութեան մէջ: Անհաւատութեան Հողի վերայ առաքինութեան շուշաններ չեն ծաղկում առհասարակ:



Բ

Քրիստոնէութիւնը բարոյապէս մեռնող մարդկութեան վերածնունդը եղաւ՝ կրօնական-բարոյական նոր կեանքով եւ հասկացողութեամբ: Նա բերեց նոր կրօն, որ սիրոյ եւ եղբայրութեան, անձնուիրութեան եւ հանրութեան օգտին նուիրուած կրօնն էր: Շահասիրութիւնն ու եսամոլութիւնը, անձնական-զգայական վայելքն ու զեղխութիւնը, որ տիրապետող էին ժամանակակից կեանքի մէջ, տեղի տուեցին զգաստութեան եւ մաքրութեան՝ նոր կրօնի ազդեցութեամբ: Ապականուել էր օդը խեղդամահ լինելու չափ, ապականուել էր յունահռոմէական կեանքն ու քաղաքակրթութիւնը՝ չունենալով այլեւս ներշնչման կենդանի աղբիւր, որ կրօնն է եւ հաւատը դէպի Աստուած: Առանց կրօնի եւ բարոյական գաղափարների չկայ եւ բարձր, կենսունակ եւ յառաջադէմ քաղաքակրթութիւն: Ինչպէս աղը համ է տալիս կերակրին, պահում նորան ապականութիւնից, այնպէս էլ կրօնն ու հաւատը, բարոյական կենդանի զգացումը աղն է քաղաքակրթութեան եւ աղբիւրը բարձր ստեղծագործութեան եւ կեանքի վայելչութեան:

Լիճը կամ աւազանը, եթէ զրկուած է իւր մէջ աղբիւրների եւ վտակների ջրերն ընդունելու հնարաւորութիւնից, ճահճանում է, ապականուում կամ իսպառ չորանում: Այսպէս է եւ մարդկային կեանքը՝ ազգերի պատմութեան տուած անհերքելի փաստերով: Այդպէս էր ոչ միայն յոյների եւ հռոմայեցիների մէջ, այլեւ՝ եգիպտացիների, որոնց բարձր ստեղծագործութիւնները, արուեստի եւ քաղաքակրթութեան մնացորդները, ճարտարապետական հրաշալիքները, նկարչութեան բարձր զարգացումը անհասկանալի են առանց նրանց կրօնի: Նոյնը կարող ենք ասել Արեւելքի շատ ազգերի մասին, որ չենք յիշում տեղի սղութեան պատճառով: Նոքա ամէնքը կենդանի են, ստեղծագործող, միշտ քաղաքակրթութեան եւ յառաջադիմութեան գազաթը բարձրանալու ճանապարհին, երբ նրանք կենդանի կրօնն ունին, հաւատը դէպի գաղափարականը: Կրօնը միայն պաշտամունքը չէ, ծէսերն ու արարողութիւնները, այլ առաւել եւս՝ հոգեւոր եւ ներքին ապրումը, որտեղից եւ բղխում է արտաքինը եւ կերպաւորում բազմապիսի ձեւերով եւ բովանդակութեամբ:

Եւ այս հասկանալի է պարզ մտածողութեամբ իսկ. արտաքին մեր ընթացքը, գործողութիւնները հետեւանքն են կամ մարմնաւորումը մեր մտքի, մեր ներքին յղացման: Փշից խաղող չի քաղուիլ, եւ ոչ տատասկից՝ թուզ: Եթէ հոգու մէջ յղացուած չէ կառուցուելիք շէնքի նախագաղափարը, անկարելի կը լինի շէնք կանգնել: Բայց նոյնիսկ ներքին յղացումը բաւական չէ գործի կատարելութեան համար, այլ՝ շարժառիթն ու որակը: Եթէ ակը պղտոր է, ցեխ կամ ճահճիճ, այնտեղից

հոսող ջուրը չի կարող մաքուր լինել եւ կենդանարար: Կրօնը մեր ներքին աշխարհը մաքրող, զտող բարոյական գործութիւնն է, սիրոյ, զոհաբերութեան, գեղեցկի, բարւոյ եւ ճշմարտութեան աղբիւրը:

Գ

Միայլ չհասկանանք. կեանքն էլ միայն կրօնականը չէ: Նա շատ աւելի բազմակողմանի է եւ տարբեր բովանդակութիւններ եւս ունի: Գիտութիւնն ու արուեստը իրենց բոլոր ճիւղերով մարդկային հոգու ներգործութեան տարբեր դաշտեր են, տարբեր մեթոդներ եւ ուղիներ ունին զարգացման, բայց նրանք տարբեր չպիտի լինին իրենց բարձրագոյն էութեամբ եւ նպատակներով, որ կեանքի արտաքին բարօրութեան հետ ի վերջոյ աւելի հոգեկան դաստիարակութիւնն է, ազնուացումը:

Ներկայ քաղաքակրթութիւնն, անշուշտ, շատ բարձր է, քան յունահռոմէականը. գիտութիւնը, փիլիսոփայութիւնը, արուեստը, տեխնիկան յառաջադիմութեան հրաշալիքներ են կատարել, աներեւակայելի թոփշներ դէպի կատարելութիւնը, բայց դորա հետ նրանք էլ ազատ չեն անկման վտանգներից եւ սայթաքումներից, որ դէպի խորխորատ կարող են տանել, եթէ հոգեւոր մի նոր վերածնունդ, շարժում չսկսուի հոգիների մէջ: Ինչպէս հնում, Հեթանոսութեան անկման օրերին, քրիստոնէութիւնը եւ քրիստոնեաները աղը հանդիսացան ազգերի ապականութեան դէմ եւ նոր կեանք բերին նրանց, նոյն դերն ունին կատարելու եւ այժմ: Պատմութիւնից քաղած դասերը ուղեցոյց են եւ ճշմարտութիւն նաեւ ներկայ մարդկութեան համար: Քրիստոնէութեան բերած հոգեւոր դրամազուխը ոչ միայն չէ սպառուած, այլ շատ քիչ չափով է գործադրուած: Եւրոպայի եւ մարդկութեան վերածնունդը կախումն ունի ոչ միայն զէնքի յաղթութիւնից, այլեւ կենդանի հաւատի վերածնունդից: Մեր աղօթքն է, որ այս պատերազմը «բարւոյ պատերազմի» փոխարկուի ըստ ամենայնի եւ առիթ դառնայ մարդկութեան զգաստութեան եւ իւր որդեգրած ուղիների վերաքննութեան: Արդարութիւնն է եւ հաւատն այն ժայռը, որի վերայ շինուած տունը անսասան է փոթորիկներից եւ հեղեղներից:

«Եթէ աղն անհամի, ի՞նչ յաղիցի». ահա՛ քրիստոնեայ աշխարհի մտածելու խնդիրը այս ահաւոր պատերազմի ընթացքում եւ նորա վերանալուց յետոյ:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
«Հայաստանեայ Եկեղեցի», յունիս, 1943

ԳԵՂԵՑԿԻՑ ԳԵՂԵՑԿԱԳՈՅՆԸ

«Այնպէ՛ս ընթացարուք, զի հասանիցեք» (Ա կորնթ. Թ 24):

Գեղեցիկը կը սիրենք մենք եւ կը խօսինք նորա մասին. բայց ի՞նչ է գեղեցիկը:

Աղբիւրի նման վճիտ, ծովի նման խոր աչքե՞րը: Արեգակի նման բոցավառ փա՞յլը նրանց:

Նրանց հայեա՞ցքը՝ նուաճող, անձնուէր, սիրազեղ, ինքնամփոփ, արտասուալից...

«Աչքն՝ ծով ի ծով, ծիծաղախիտ, ծաւալանայր յառաւօտուն երկու փայլակնաճեւ արեգական նման», - ինչպէս երգել է մեր Նարեկացին:

Շրթունքներին ծաղկած ժպի՞տը, որ երբեմն ամբողջ հոգու արտայայտութիւնն է՝ աւելի բովանդակալից, քան մի գիրք:

Ժպի՞տը սիրոյ, ժպի՞տը քաղցր հեգնութեան, ժպի՞տը չարտասանուած խօսքի, ժպի՞տը իմաստութեան եւ զուսպ կամքի, ինչպէս Լէոնարդո դա Վինչիի Ջիակոնդայի շրթունքներին:

Ժպի՞տը համեստ մանուշակի՞ կանաչ թփերի միջից հազիւ գլուխը բարձրացած, ամօթխած եւ նազելի դէմքով:

Գլխի, աչքի, ձեռքի, մարմնի շարժո՞ւմն է այն՝ արուեստագէտի, հոնտորի կամ դերասանի կողմից, թէ՞ հանդարտ, խաղաղ քունը մանկան, անուշաբոյր շնչառութիւնը նորա: Ինչպէ՛ս գեղեցիկ է վարդի թերթին իջած անապական ցօղի կաթիլը, բայց պակա՞ս գեղեցիկ են անմեղ մանկան աչքերից թափած արտասուքի կաթիլները մարգարտանման՝ մօր հրճուալից աչքերով դիտուած:

Բարձունքներից դիտուած ահաւոր ձորերն ու կիրճե՞րն են գեղեցիկ՝ խորքում վազող, փրփրալից գետակներով, թէ՞ երկինքը եզերող լեռները՝ սպիտակափառ, ձիւնապատ գագաթներով, խօլական ժայռերով, կանաչապատ լանջերով եւ սաղարթախիտ անտառներով, դէպի անհունութիւնը տանող հեռանկարով:

Գեղեցիկ չէ՞ երկնքի՞ հոգիդ շոյող կապուտակու՞թիւնը՝ արեւի մեղմիկ լուսաւորութեամբ:

Գեղեցիկ չէ՞ աշնան գիշերն աստղալից՝ խորհրդաւոր, անհունութեան սահմաններից եկած ճառագայթներով՝ ուղղուած սրտիդ խորքը, յայտարարը արարչութեան մեծ խորհրդի եւ աղբիւրը բարձրա-

գոյն սքանչացման:

Գեղեցիկ չէ՞ առաւօտեան արշալոյսը, արեգակի ծագումը մթութեան եւ խաւարի ծոցից, գիշերային գերեզմանից, ըստ Հերդերի՝ քառսից դէպի լոյս եւ կարգապահութիւն:

Պակա՞ս գեղեցիկ է արեւի մուտքը, վերջալոյսի երփներանգ, նուրբ եւ կախարդական ծիրանին՝ փուռած լեռների գագաթներից մինչեւ նրանց կանաչազարդ կողերը, բայց եւ հոգուդ խորքը թափանցող ճառագայթներով՝ խաղաղութեան եւ սքանչացման մի նոր աշխարհ՝ երազի նման քաղցր աշխարհ ստեղծելով այնտեղ:

Գեղեցիկ չէ՞ արեգակի ծագման աւետարներ արտոյտի ճուռղիւնը, գիշերուայ լուռութեան մէջ սոխակի դայլայլիկը քաղցրիկ, մեղունների տզոցը ցերեկուայ ժամին, անտառների սօսափիւնն ու երգը՝ զեփիւռի քնարի լարերի ձայնակցութեամբ, եւ տերեւների պարը՝ լուսոյ եւ ստուերի փոփոխակի համբոյրներով, աղբիւրի կամ առուակի խոխոջն ու կարկաչը, գետերի վշտոցը խոր եւ անտառապատ ձորերում կամ նրանց խաղաղ, հեգասահ ընթացքը լայնածաւալ հովիտներում՝ շրջանակուած կանաչազարդ այգիների, պարտէզների, արտերի շրջանակներով:

Սակա ջրվէժնե՞րը, մեծ գետերի գահավէժ անկումը երկիրը սասանեցնող ահաւորութեամբ, ինչպէս Իմատրան՝ Ֆինլանդիայում, Նիակարան՝ Ամերիկայում, բայց եւ աւելի փոքր գետակներինը՝ մանրամաղ փոշիների ենթարկուած, քողի նման տատանուող հովի տարուբերումներով, ծիածանի ակնապարար գոյներով արեւի ճառագայթների տակ, ինչպէս Իոսամիթիի ջրվէժները:

* * *

Անսահման եւ բազմատեսակ են բնութեան եւ արտաքին գեղեցկութիւնները, բայց ի՞նչ են նրանք խուլ եւ կոյր մարդու համար: Ի՞նչ է բնութիւնը եւ արտաքին աշխարհը առհասարակ՝ առանց ներքին տեսութեան, իմացական լուսաւորութեան. չոր մեքենականութիւն՝ անխօս եւ անիմաստ: Բայց ամէն ինչ, ինչպէս եւ վերել թուած երեւոյթները, դառնում են իրական գեղեցկութիւններ, խորհուրդ եւ սքանչելիք՝ հոգու աչքերով դիտուած, եւ բարձր երաժշտութիւն՝ հոգու ականջով լսուած՝ իբրեւ մասը տիեզերական ամբողջութեան: Դորանով է, որ երկինքը եւ երկիրը թուում են մեզ կենդանի՝ իբրեւ մի մեծ ամբողջութիւն՝ ներդաշնակ եւ իմաստուն կարգաւորութեամբ, որի մի մասն ենք իբրեւ անհատ, իբրեւ ազգ եւ մարդկութիւն, մեր հոգին էլ՝ ոչ պակաս մեծութեամբ մի երկինք՝ մեր մտքով, մեր զգացմունքով, մեր երեւակայութեամբ, մեր յիշողութեամբ,

մեր տենչերով եւ հոգեկան բազմատեսակ ապրումներով, որ նորա աստղերն են:

Այստեղ է աղբիւրը այս արտաքին եւ անցաւոր երեւոյթների եւ գեղեցկութիւնների մէջ յաւիտենականը գտնելու ուղին: Յաւիտենական է գեղեցկութիւնը, յաւիտենական է բարին ու ճշմարիտը. բայց նոքա ծաղիկներն են մի արմատի եւ բոյսի, որ մարդկային հոգի է կոչուում: Կեանքը թոււմ է անցաւոր. բայց յաւէտ կենդանի է, գեղեցիկ՝ հաւատով եւ սիրով ապրուած կեանքը: Այս մտքի գեղարուեստական արտայայտութիւնն է թոռմած վարդի պատկերաւորութիւնը մեր տաղանդաւոր նկարիչ Փուշմանի գործերում, որ խորհրդաւորութեան եւ յաւիտենականի իմաստ է տալիս նորա ստեղծագործութեան:

* * *

Կեանքն ու պատմութիւնը, եթէ կամենաք, պայքարն է գեղեցկութեան համար, յաւիտենական բարիի եւ ճշմարտութեան համար: Մարդկային հոգու այդպիսի պայքարի մարմնաւորումներն են հին յունաց բանաստեղծների՝ Եւրիպիդեսի, Սոֆոկլի եւ Էսքիլեսի ստեղծագործութիւնները, Ֆիդիասի եւ Պրաքսիտէլեսի կերտած արձանները՝ յաւէտ գեղեցկի եւ վեմմի մարմնաւորումը մարմարինի մէջ աստուածների եւ աստուածուհիների բարձր տեսլապատկերներով, մարդկային մարմնի համաչափութեան գեղարուեստական կենդանի զգացմամբ:

Քրիստոնէութիւնը փոխում է կեանքի էութեան եւ նպատակի հասկացողութիւնը, մարդկային հոգին եւ նրա անձնուէր սէրը առ Աստուած եւ առ ընկեր, դառնում է չափ ու կշիռ երեւոյթների եւ գործողութիւնների. Ֆիդիասի եւ Պրաքսիտէլեսի կերտած արձանները՝ հնում գեղեցկութեան, համաչափութեան եւ գեղազիտական հասկացողութեան, փոխարինում են հոգեկան գեղեցկութիւնները եւ տենչերը դէպի աստուածայինը: Կեանքը բարւոյ պատերազմ է, իսկ բարւոյ կատարելատիպը Աստուած է, Որին պիտի նուիրուին հոգեւոր գեղեցկութիւններն ու մրցութիւնները: Այդպիսի հասկացողութեան արդիւնք է մեր Նարեկացին, որ իւր հոգու ոսկի բուրվառի մէջ իւր զգացմունքների անուշահոտ կնդրուկն է ծխում՝ իբրեւ «ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ», մեր Ծնորհային, որ իւր հոգու դէմքը միշտ դէպի լոյսը, դէպի արեգակն է ուղղում արեւածաղկի նման. «Առաւօտ լուսոյ, առ իս լոյս ծագեալ»:

Այդպէս եւ քրիստոնէական ճարտարագիտութեան մէջ. բոլորաձեւ եւ երկնանման կամարներով եւ գմբէթներով՝ Արեւ լքում, բարձր եւ սրածայր աշտարակներով՝ ուռմանական եւ գոթական արուեստները

մէջ, նոյն զգացմունքներն են երկնասլաց, նոյն հոգեկան ապրումները նուիրման: Վերածնութեան շրջանի մեծ արուեստագէտները տարուած են փրկութեան եւ հոգեկան աշարհի երկնային գեղեցկութեան գեղարուեստական քարոզութեամբ՝ առանց կորցնելու եւ արտաքին համաչափութեան, ձեւի եւ շարժման ներդաշնակութեան զգացումը: Դանտէն իւր «Աստուածային կատակերգութեամբ», Լէոնարդո դա Վինչին իւր «Նորհրդաւոր ընթրիքով», Միքէլ Անջելոն իւր Սիքիստինեան մատուռի որմնանկարչութեամբ, Մեդիչիների դամբարանի արձանագործութեամբ, Ռաֆայէլը իւր մադոնաների աստուածային եւ ոգիացած գեղեցկութեամբ՝ ապացոյցներն են այս մտքերի:

* * *

Բայց մարդկային հոգին միշտ գեղեցիկ չէ. Նա կարող է եւ չարութեան, ոճիրքի եւ տգեղութեան աղբիւր լինել: Լաւ հունձք ունենալու համար պարարտ հող է հարկաւոր եւ առողջ սերմ, բարձրագոյն ստեղծագործութեան կամ գեղեցկութեան համար՝ նորան համապատասխան մթնոլորտ, պայմաններ: Պղտոր, ցեխոտ, ապականուած ակից վճիտ եւ կենդանարար ջուր չի բղխում, եւ ոչ՝ բարոյական տգեղութեան մէջ իսկական գեղեցկութեան ծաղկում: Ստեղծագործման, ներշնչման բոլոր սուրբ է մարդկային հոգու մէջ: Արուեստագէտը քարից, մետաղից, ներկերով գեղեցկութեան պէսպիսութիւններ է կերտում, կեանք եւ հոգի դնում նիւթի եւ երեւոյթների մէջ. բայց հոգեւորի եւ կրօնականի խոր ապրումն է, Աստուծոյ թափանցումը հոգիների եւ սրտերի մէջ, որով անձնաւորութիւն է ստեղծուում՝ բարձրագոյն գեղեցկութիւնը, բնակարանը յաւիտենական տենչերի եւ գաղափարների: Գեղեցիկ է արուեստի ստեղծագործութիւնը, բայց գեղացկագոյն է կենդանի մարդը՝ նորա հոգին, նորա անձը, մարդը՝ ուղղամիտ եւ անյողողող, մարդը՝ ձուլուած բրոնզէ արձանի նման, յստակ եւ մաքուր բիւրեղի նման, հաստատ եւ երկնասլաց կոթողի նման՝ իւր պարտքի գիտակցութեան եւ կատարման մէջ, աչքերը՝ միշտ դէպի հեռուն, բարոյական կատարելութեան փարոսը եւ գեղեցկութեան նաւահանգիստը: Մազլցել սիրոյ, զոհողութեան, եղբայրութեան բարձունքները՝ բարձրագոյն գեղեցկութեան ասպարէզն է եւ ուղին մարդկութեան համար:

«Այնպէ՛ս ընթացարուք, զի հասանիցէք»:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
«Պալքար», 28 դեկտեմբեր, 1939, Նիւ Եորք

ԿԵԱՆՔԻ ԾԱՆԱՊԱՐՀԸ

«Ես եմ Մանգապարհ, Ըշմարտութիւն եւ
Կեանք» [Թովհ. ԺՊ 6]:

Բոյսերն ու կենդանիներն էլ ունին իրենց կեանքը, բայց ոչ՝
իմացական կեանքը եւ նորա ճանապարհը: Նոքա նախապէս ծրագիր
չեն կազմում, որոշ ճանապարհ չեն ընտրում՝ իրենց նպատակին
հասնելու համար: Նոքա առաջադրեալ նպատակ էլ չունին, որ նորան
հասնելու համար ծրագիր եւ ճանապարհ ընտրեն: Բնազդն է նրանց
կեանքի եւ գոյութեան ղեկավարը:

Բայց կենդանիներն էլ բոլորովին զուրկ չեն իմացական, նոյնիսկ
«Հոգեւոր» կեանքից. նոքա էլ ունին իրար պաշտպանելու, իրար
սիրելու, նրանցից ոմանց մէջ մինչեւ իսկ կայ ուրիշի փոքրիկներին
խնայելու եւ խնամելու բնազդը: Հաւը սիրում է եւ պաշտպանում
իւր ձագերին յափշտակիչ բազէի դէմ, բայց նաեւ՝ բազի կամ Հնդկա-
հաւի անմայր փոքրիկներին, եթէ նրանց խառնել են իւրայինների
հետ: Գտած կուտը ինքն ուտելու տեղ կանչում է եւ ձագերին
հրամցնում, թէեւ «ինքնավար» դարձնելուց յետոյ իսպառ մոռանում
է նրանց: Հիացմամբ դիտել ենք վանդակի մէջ բռնուած երկու՝ արու
եւ էգ թռչունների կեանքը. նոքա փոխադարձ օգնութեամբ նախ
իրենց բոյնը շինեցին, ապա, երբ էգը նստած էր հաւկիթների վերայ
եւ պէտք է իւր մարմնի տաքութեամբ պտղաբերէր նրանց, արուն էր
հոգում նրա սնունդը, նոյնիսկ ջուրը, կտցով: Երբ հաւկիթներից
դուրս էին եկել թոյլ, մերկ եւ անպաշտպան ձագուկները, եւ մայրը
պիտի պաշտպանէր նրանց դեռեւս իւր թեւերի տակ, արուն էր
հոգացողը ոչ միայն նորա, այլեւ նորա միջոցով՝ ձագուկների սնունդը,
որպէսզի նա էլ, թրջելով իւր բերանի մէջ, հերթով կերակրէր փոքրիկ-
ներին: Կովը ոչ միայն սիրով կաթ է տալիս իւր հորթին, այլեւ
սիրում է նորան, լիզում, մաքրում մայրական գթով: Զարմանալի է
չների եւ կատունների խաղը իրենց ձագուկների հետ: Կենդանիների
«իմացականութեան» մէջ էլ տարբերութիւններ կան ոչ միայն տեսակը
տեսակի համեմատութեամբ, այլեւ տեսակների հատերի մէջ: Այդ
տարբերութիւնը նկատում է եւ ուրիշ կողմից. շան եւ ձիւ «իմացա-
կանութիւնն» ու «իմաստութիւնը» աւելի բարձր է, քան ընտանի
միւս կենդանիներինը. նրանք ենթակայ են մինչեւ իսկ դաստիարակու-
թեան: Դաստիարակուած շունն ինքը չի յափշտակում կերակուրը,
այլ խնդրում է, որ իրեն էլ բաժին տան: Այսպիսով, կենդանիների

տեսակների մէջ էլ աստիճանաւորութիւն կայ. նրանց մէջ կայ վատը
եւ կայ լաւը, լաւից էլ լաւը:

* * *

Բայց եթէ կայ տարբերութիւն կենդանիների մէջ, այդ տարբերու-
թիւնը անհամեմատ մեծ է կենդանիների եւ մարդու մէջ: Սա էլ, թէեւ
կենդանի է, բայց՝ բանաւոր եւ Հոգեւոր կենդանի: Մարդկանց մէջ
եւս կայ նոյն տարբերութիւնը եւ աստիճանաւորութիւնը: Մարդկային
կեանքի զարգացման ուղին նիւթականից դէպի վերացականն է գնում,
կենդանականից՝ դէպի իմացականն ու Հոգեւորը: Աւա՛ղ, կան մարդիկ,
որոնք միայն բարձր կենդանիներ են, իրենց իմացականութիւնն ու
բարձր հասկացողութիւնները գործադրում են առաւելապէս կենդանա-
կան, անձնական, քսական կամ շահագրիտական նպատակների համար:
Դրանից դուրս ուրիշ աշխարհ չեն ուզում ճանաչել. ուտել, խմել,
վայելուչ հագնուել եւ նիւթական վայելք ունենալ՝ նրանց կեանքի
բովանդակութիւնն է կազմում: Նրանց ընտրած ճանապարհը իսկական
կեանքի ճանապարհը չէ:

Նորհրդակցութեան նիւթ ընտրած մեր բնաբանը մի կարճ նախա-
դասութիւն է միայն, բայց բովանդակութեամբ՝ մարդկային բարձ-
րագոյն կեանքի անթերի մի ծրագիր: Առաջին բառն իսկ մեր մտքին
որոշ հասկացողութիւն եւ ուղղութիւն է տալիս. որոշ տեղ գնալու
համար ճանապարհ պիտի ընտրել: Գտե՛՛ղ ես ճանապարհը, պիտի
առանց աջ ու յախ թեքուելու առաջ գնաս, մինչեւ մտադրուած
տեղը հասնիս: Այդ տեղը ճշմարտութիւն է կոչուած՝ ներքին ճշմար-
տութիւն, Հոգով ապրած ճշմարտութիւն, որին գտնելու համար պիտի
ընթանալ նրա համար սահմանուած ճանապարհով, պիտի աշխատել,
ձգտել, որոնել, բաղխել, որպէսզի ի վերջոյ այն դռները բացուին, որ
դէպի իսկական գաղափարական եւ Հոգեւոր կեանք են տանում:

Ճշմարտութիւնը դժուարագիւտ բան է՝ ոչ ամենքին տեսանելի
միանգամից, ոչ ամենքին մատչելի եւ հասկանալի: Պիղատոսները
միշտ պատրաստ ունին իրենց հեգնական հարցումը. «զի՞նչ է ճշմար-
տութիւնը»: Նա մարգարիտ է, որ միայն ծովի յատակում կարող ես
որոնել եւ գտնել, ուրեմն եւ ծովի հատակը սուզուելու ունակութեան
մէջ պիտի վարժուիս. նա թանկագին քար է՝ աղաժամող, որ հանքերի
խորքում կարող ես գտնել, այն էլ՝ հազուադէպ, երկար որոնումից
յետոյ:

Նեշտ է դատել, ցուցումներ տալ տեսականապէս, բայց դժուար՝

տեսլականի, գաղափարականի իրականացումը: Գաղափարականի հետ պիտի համընթաց լինի իրականը, գործնականը, եթէ կամենում ենք դիւրացնել նորա ըմբռնումը: Մարդկային հոգու կարողութիւնները մէկն է նմանելու ունակութիւնը. օրինակը, գործնականը ամենամեծ չափով մատչելի են դարձնում այն: Մտողների, ուսուցիչների, մեծերի խօսքն ու խրատը փոքրերի համար գործնական քիչ արժէք եւ արդիւնք ունի, եթէ նրանց ընթացքը հակառակ է եւ անհամապատասխան խօսուած խրատին: Քրիստոնէական կրօնի առաւելութիւնն այն է, որ նա տեսութիւն չէ. միայն կամ վարդապետութիւն, այլ նորա մարմնաւորումն ունինք Յիսուս Քրիստոսի անձնաւորութեան մէջ: Մեր Տիրոջ համար ասուած է. «Նախ առնէր եւ ապա ուսուցանէր»: Դորանով էր, որ նորա խօսքի ազդեցութիւնը մեծ էր եւ հզօր. «Իշխանութեամբ ուսուցանէր եւ ոչ՝ որպէս դպիրքն եւ փարիսեցիք»: Նա ապրեց մարդկային կեանքով եւ ապրեց՝ Իւր աշակերտներին եւ հետեւողներին կենդանի օրինակ լինելու համար:

* * *

Այսպիսի մտքի մարմնաւորումն է եւ մեր բնաբանի խօսքը՝ «Ես եմ ծանապարհ, ճշմարտութիւն եւ կեանք»: Յովհաննու Աւետարանը, միւս համատես երեք Աւետարանների համեմատութեամբ պատմական լինելուց աւելի, տպաւորութիւնն է քրիստոնէութեան բերած ազդեցութեան՝ հաւատացեալների առաջին սերնդի վերայ: Հաւատացեալների հոգու մէջ նկարուած էր Քրիստոս, որ ծանապարհն է, ճշմարտութիւնը եւ կեանքը: Նորան պիտի հետեւել՝ ակնարկուած թանկագին մարգարտին տիրանալու համար: Նորա լուսաւոր անձնաւորութիւնն է փրկութեան Փարոսը, հասնելու իմացական Նաւահանգիստը: Մի է ծանապարհը, մի է ճշմարտութիւնը, եւ մի է կեանքը, որ է Յիսուս Քրիստոս: Նա է հաւատացող եւ հոգեւոր կեանքի բարձրունքներին ձգտող մարդու գերակայ գաղափարը:

«Իսկ ո՞վ կարող է ապրել», - կ'անցնի շատերի մտքով: «Բաղ-խեցէ՛ք, եւ բացցի ձեզ, խնդրեցէ՛ք, եւ տացի ձեզ». ահա՛ նոյն Տիրոջ խօսքը մեզ իբրեւ խրատոյս: Ո՞վ աւելի խորն է զգում մարդկային հոգու թուլութիւնը, քան նորա մեծագոյն առաքեալը՝ Պօղոս: Մեղքի գիտակցութիւնն ու զօրութիւնը շղթայում էր նորա հոգու թռիչքը: Այն անձը, որ իւր կեանքը նուիրել էր հազարաւորների փրկութեան, տարել էր ամենայն վիշտ, հալածանք, նեղութիւն՝ իւր կոչման, առաքելական պարտքի կատարման համար, զգում է իրեն թոյլ բացասական հակումների, մեղքի կապանքների առաջ: Բայց գիտէր

նաեւ, թէ խորտակուել կարող են այդ կապանքները հաւատով եւ վստահութեամբ դէպի աստուածային շնորհն ու գթութիւնը [Հռոմ. է, Ը]:

Յիչենք անառակ որդու առակը: Մենք Հայր ունինք երկնքում՝ գթութեան, սիրոյ եւ նեղութեան Հայրը: Լսենք նորա Որդու խօսքը. «Ես եմ ծանապարհ, ճշմարտութիւն եւ կեանք»: Հետեւենք նորան եւ հաւատանք, թէ Նա մեր տկարութեան ժամանակ օգնութեան ձեռք կը մեկնէ մեզ, ինչպէս խեղդուող Պետրոսին:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

«Հայաստանեայց Եկեղեցի», օգոստոս, 1941



Սասանեանների դէմ: Քրիստոնէութեան ընդունելութեամբ այդ թշնամութիւնն աւելի է զօրանում, եւ ստեղծուում է մօտաւորապէս երկու հարիւր տարուայ մի պայքար՝ կեանքի եւ մահուան պայքար քաղաքական եւ կրօնական շարժառիթներով: Սասանեանների քաղաքական հզօրութիւնը մատնանշելու համար բաւական է յիշել, որ Հէնց Արտաշիր Պապականի որդու՝ Շապուհ Ա-ի ժամանակ, 242 թուին, նուաճուեցաւ ոչ միայն Անտիոքը, այլեւ 260 թ. Վալերիան կայսրը իւր ամբողջ բանակով գերի ընկաւ պարսից ձեռքը՝ զօրացնելով ազգային հպարտութեան զգացումը նրանց մէջ, որ նիւթ դարձաւ նաեւ քանդակագործութեան. Շապուհ Բ Երկարակեացը (309-380) Հռոմէական պետութեան ամենամեծ ախոյեանն էր, որ 359 թուին գրաւեց Ամիթը (ներկայ Տիգրանակերտը), իսկ Յուլիանոս Ուրացոյի սպանուելուց յետոյ պարտութեան մատնեց նորա յաջորդ Յովիանին՝ ստիպելով ստորացուցիչ դաշինք կուել՝ արեւելեան Միջագետքը, Մծբինը յանձնելով պարսիկներին:

Այս յաջողութիւններից յետոյ նորա ուշքը կենտրոնացած էր Հայաստանի վերայ: Յայտնի է Արշակ Բ-ի պայքարն ու անկումը, ապա՝ Շապուհի յաջորդի ժամանակ Հայաստանի բաժանումը երկուսի՝ մեծագոյն մասը պարսից գերիշխանութեան տակ, իսկ Վռամ Ե-ի ժամանակ՝ իսպառ անհետացումը Հայ Արշակունեաց պետութեան 428 թուին: Քաղաքական այս ձգտումներին եւ գործողութիւններին համընթաց էր կրօնական հալածանքը եւ աշխատանքը՝ քրիստոնէութիւնը արմատախիլ անել եւ հաստատել զբաղաւորական կրօնը: Մեհհրուտան Արծրունու եւ Վահան Մամիկոնեանի՝ Սամուէլի հօր դաւաճանական ընթացքը յայտնի է եւ ժողովրդականացած Բաֆֆիի «Սամուէլ» վէպով: Պարսից նպատակն էր քաղաքականապէս եւ կրօնապէս բեկանել Հայ ժողովրդի հաստատութեան նեցուկները:

Բայց Հայ ժողովուրդը, թէեւ թուով փոքր եւ քաղաքականապէս թոյլ իւր դրացու համեմատութեամբ, շնորհիւ Գրիգոր Լուսաւորչի, Ներսէս Մեծի, Վռամշապուհ բարեսէր թագաւորի, Սահակ Պարթեւի, ս. Մեսրոպի եւ սրանց աշխատակիցների հսկայական ջանքերի կրօնական եւ ազգային հոգեւոր վերածնութեան ասպարիզում՝ նոր եռանդ, նոր ուղղութիւն եւ հոգեւոր կեանքի բովանդակութիւն էր ստացել: Կազմակերպուած Հաստատութիւն էր դարձած Հայաստանեայց Եկեղեցին, Հայը իւր գիրն ու դպրութիւնն ունէր, իւր ազգային լեզուն, իւր դպրոցները, այսինքն՝ ազգային դէմքին առանձնայատուկ բոլոր կողմերը: Թօթափել էր ոչ միայն պարսից լեզուի եւ քաղաքակրթութեան, այլեւ՝ յոյն եւ ասորի լեզուների տիրապետութեան ծանր,

դժուարին լուծը: Հայը իւր մայրենի լեզուով կարող էր ըմպել քրիստոնէութեան գովարար աղբիւրից եւ յագեցնել իւր հոգեւոր ծարաւը եւ ստեղծագործել իւր անհատական ներշնչումներով: Այս վիճակին հասնելու համար ամբողջ մէկ եւ կէս դար նախապատրաստական աշխատանք էր թափուած. քրիստոնէութեան հաստատութեամբ Հայ երիտասարդների մի մեծ հոսանք էր սկսուած դէպի ասորական եւ յունական դպրոցները՝ իւրացնելու հելլենական քաղաքակրթութիւնը: Բարսեղ Կեսարացին եւ Գրիգոր Աստուածաբան իրենց ճառերի մէջ յիշում են բազմաթիւ Հայ ուսանողների ներկայութիւնը յունական բարձր դպրոցներում: Մեր մեծ Հայրապետները՝ Գրիգոր Լուսաւորիչ, Ներսէս Մեծ, Սահակ Պարթեւ, յունական կրթութիւն էին ստացած, ինչպէս եւ իրենց թարգմանիչ աշակերտները՝ Յովհան Եկեղեցացի, Եղիշէ Կողբացի, Յովսէփ Պաղնացի եւ այլն: Հայ արուեստի նորագոյն եզրիկ Կողբացի, Յովսէփ Պաղնացի եւ այլն: Հայ արարելու Հայաստանում միջագետական-հելլենական արուեստի մեծ հոսանք կար, որ իւր արդիւնքն է թողել այդ շրջանի ճարտարապետութեան իւրացկադործութեան մէջ: Արեւմտեան ազգերի քաղաքակրթութեան, ազգային գիտական կեանքի մեծ շէնքը: Քաղաքականապէս թոյլ եւ նոյնիսկ նախարարական տներով երկպառակուած ժողովրդից ստեղծուած էր ազգային եւ հոգեւոր զէնքերով օժտուած մի ժողովուրդ, որ պարսից հզօր արքաների՝ յակերտների սուրբ պիտի բթանար եւ անկարող լինէր փշրել նորա բարոյական երկաթեայ կամքը:

Չլինէր ս. Սահակի եւ ս. Մեսրոպի եւ նրանց երանաշնորհ աշակերտների մտածուած եւ դէպի ապագան ուղղուած ստեղծագործական գործունէութիւնը, անհասկանալի կը մնար Վարդանանց դիմադրութիւնը՝ հոգեւոր ազատութեան հետ կապուած ամենամեծ արժէքների պաշտպանութեան անունով, որ քրիստոնէական կրօնն ու Հայաստանեայց Եկեղեցին էր, Հայ լեզուն ու դպրութիւնը, ազգային հոգեւոր կեանքի անկախութիւնը: Բարեւոյ պատերազմն էր այդ՝ սկսուած հոգեւոր Հայրերի կողմից եւ պաշտպանուած նաեւ զէնքի զօրութեամբ յետագայ սերունդների կողմից, որոնց ներկայացուցիչներն են Վարդանանք եւ Վահանանք: Բաւական է յիշել, որ Վարդան ս. Սահակի թոռն էր դստեր կողմից:

Վարդանանց պատերազմը, ըստ երեւոյթին, մեծ բան չէր. մի բռուն Հայր՝ մեծ մասով գիւղացի կամաւորներից կազմուած, պառակտուած նաեւ քաղաքական տարբեր հասկացողութեան հոսանքներով, ընդհարուեցան Աւարայրի դաշտում եւ առաջին հարուածին

«Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է ար-
քայրութիւն երկնից» (Մատթ. Դ 17):

Ա

Մարդկութեան հոգեւոր բոլոր նշանաւոր առաջնորդներն ու
մարգարէները ապաշխարութեան քարոզով են սկսել իրենց գործը:
Ապաշխարութեան են ենթարկուել նախ իրենք անապատի եւ առանձ-
նութեան մէջ, խորասուզուել են իրենց հոգու խորին խորանները,
նութեան մէջ, խորասուզուել են իրենց Աստուծն եւ Նորա պարգեւած
սրբութիւն սրբոցը, գտել են իրենց Աստուծն եւ Նորա պարգեւած
ձշմարտութիւնը եւ ապա, վերածնուած եւ մկրտուած, Հանդէս եկել
պատմութեան մէջ՝ իրենց սրբազան առաքելութիւնը կատարելու:
Այս ամենից յետոյ միայն Նա Հանդէս
ոչնչացրել նրա գորութիւնը: Այս ամենից յետոյ միայն Նա Հանդէս
է գալիս՝ սկսելու իւր փրկչական գործունէութիւնն ու աւետարանական
քարոզութիւնը, եւ առաջին խօսքը, որ դուրս է գալիս Նորա սուրբ
եւ օրհնութեամբ լի բերանից, ապաշխարութեան խօսքն էր:

Քրիստոնէական բոլոր Հին եւ նոր Եկեղեցիները, Փրկչի կենդանի
օրինակին եւ քարոզութեան հետեւելով, ապաշխարութեան գաղափարը
հոգեւոր փրկութեան էական պայման են ընդունել եւ որոշ օրեր
նշանակել այդ նպատակի համար: Արեւելեան Հին Եկեղեցիների հետ
Հայոց Եկեղեցին եւս քառասնորդական պահոց օրերը յատկացրել է
ապաշխարութեան: Եկեղեցին իւր սրտաշարժ հոգեւոր երգերով, ըն-
թրողութեամբ, արարողութիւններով հօտին ապաշխարութեան է
հրաւիրում իհարկէ ոչ այն մտքով, որ տարուայ մնացած ժամանակը
մեզ ազատ համարենք ամէն տեսակ մեղքեր եւ անիրաւութիւններ
գործելու, այն յուսով, թէ ապաշխարութեան օրերին կը յիշենք եւ
թողութիւն կ'ստանանք: Քրիստոնէի կեանքը մշտական ապաշխար-
ութիւն պիտի լինի իսկապէս: Ապաշխարութիւնը, որպէս հոգեկան,
ներքին գործողութիւն, բոլորովն է զղջացողի սրտից, ուրեմն եւ որոշ
ժամանակ չի կարելի նշանակել եւ պահանջել, որ ապաշխարես:
Ժամանակ կարելի է նշանակել արտաքին գործողութեան համար,
բայց ոչ՝ ներքին աշխարհի: Բայց եւ այնպէս, մի խորիմաստ կարգա-
դրութիւն է մեր Հայրերի կողմից, որ Մեծի պահոց օրերը ապաշ-
խարութեան են նուիրել: Անօրհայ կեանքը իւր բազմաբովանդակ

իսկ թշնամու կողմից, մանաւանդ սպարապետի՝ Վարդան Մամիկոն-
նեանի անկմամբ, ցրուեցան այլեւայլ կողմեր: Բայց ճիւղերի կտրա-
տումն ու վնասը վախճանը չէր հայ ազգի կենդանութեան ծառի, որի
արմատներն ու բունը առողջ էին ու կենդանի նախընթաց սերունդների
եւ հայրերի աշխատութեամբ: Պայքարը շարունակուեցաւ մինչեւ դարի
վերջին քառորդը՝ Վահան Մամիկոնեանի եւ իւրայինների ղեկա-
վարութեամբ, որ բարոյական յաղթութեամբ վերջացաւ: Վարդանանց
երեւոյթը հասկանալու համար պէտք է կարդալ Ղազար Փարպեցին,
ալախօսիկ Եղիշէն՝ տեսնելու համար, թէ ի՞նչ հոգի, բարոյական
ինչպիսի՜ հզօր կամք եւ ինքնապաշտպանութեան գիտակցական ոյժ
էր ծառացել պարսից դէմ: Հայ հոգեւորականութիւնը, Հայ գինուո-
րական եւ իշխանական դասը, Հայ կիրնը եւ գիւղացին շնչուած են նոյն
հոգեւոր ազատութեան գաղափարով. «Ո՞վ կարէ մեկնել գմեղ ի սիրոյն
Քրիստոսի»:

Այսօր էլ նոյն պատերազմն ունինք՝ ոչ զէնքի, ոչ հալածանքի
դէմ ծառանալու, այլ՝ մի ուրիշ տեսակի ահաւոր թշնամու, որ անտար-
բերութեան հոգի է կոչուում դէպի համազգային ժառանգութիւնները,
երկպառակութեան յամառ հոգի, որ սպառնում է երկրորդականը
կարեւորից, սխալն ու ճշմարիտը իրարից զանազանելու կարողութեան:
Մեզ վիճակուած է մի ծանր դրութիւն, որ Սփիւռքի հայութեան մահ
է սպառնում՝ ցրուած բազմաթիւ եւ բազմատեսակ ազգերի եւ պետու-
թիւնների մէջ, եւ մոռանում ենք, որ մեզ հաւաքող եւ միացնող մի
Հաստատութիւն ունինք, որի պաշտպանութեան համար ծառացել էին
Վարդանանք, եւ այդ Հայաստանեայց Եկեղեցին էր իւր քրիստո-
նէական եւ ազգային բովանդակութեամբ:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
«Հայաստանեայց Եկեղեցի», 1 փետրուար, 1940

«Երանի՛ այնցիկ, որ սուրբ եմ սրտիս, զի
նոցա զԱստուած տեսցեմ» [Մատթ. Ե 8]:

Ա

Սիրտը մարդկային մարմնի առաջին գործարանն է: Ամենից
առաջ սիրտն է ստեղծւում ձոր արգանդում եւ ամենից երկար սիրտն
ապրում մարդու բոլոր գործարաններից: Մեռաւ սիրտը, մեռնում է
մարդը, ամբողջ մարմինը: Բայց Տիրոջ խօսքը այս մսի կտորի մասին
չէ, այլ այն հոգեւոր գործարանի, որ բարոյական կեանքի համար
նոյնչափ նշանակութիւն ունի, որչափ սիրտը մարմնաւոր կեանքի
համար: Սիրտ ասելով՝ Քրիստոս մեր ներքին աշխարհը, եսը, անձնա-
ւորութիւնն է հասկանում իւր ամբողջութեամբ, մեր հոգեկան երեք
կարողութիւնների՝ մտքի, զգացման եւ կամքի յարաբերականը, որ
գունաւորում եւ ձեւակերպութիւն է տալիս մեր անձնաւորութեան:

Սակայն սիրտ գաղափարը, ինչպէս Հնում, այնպէս եւ այժմ, մի
տեսակ Հոմանիչ է զգացմունքի, եւ ամենեւին պատահական չէ, որ
մեր Տէրը այսքան կարեւոր նշանակութիւն է տալիս նորա սրբութեան՝
երանելիութեան եւ Աստուծոյ տեսութեան պայման համարելով նորա
մաքրութիւնը: Մեր հոգեկան կարողութիւններից ոչ մէկը այնքան
մեծ դեր չէ կատարում կրօնական-բարոյական խնդիրներում, ինչպէս
սիրտը կամ զգացմունքը: Բանականութիւնը մեզ տալիս է սկզբունք-
ներ, որոշում է լաւը վատից, բայց այսչափը դեռ բաւական չէ, որ
գուած կամքը նոյնպէս մի նեցուկ է մեզ համար, բայց նա զօրաւոր
է եւ արդիւնաւոր, երբ բովանդակութիւնն է մղումն է ստանում մեր
էնքանից զգացմունքից ու ոգեւորութիւնից: Զգացմունքն է, որ մար-
նեքի զգացմունքից ու ոգեւորութիւնից: Զգացմունքն է մղում, զուս
դուն դէպի անձնուիրութիւն ու բարոյական հերոսութիւն է մղում,
եւ ոչ՝ սառը բանականութիւնը: Պատերազմի մէջ այն զինուորն է
հերոս, որ իւր անձը նուիրում է՝ հայրենիքի փրկութեան սիրոյ
զգացմունքից դրդուած, առանց լսելու մտքի եւ բանականութեան
դատողութիւնները: Յարգանքի արժանի բոլոր սխրագործութիւնները
պատմութեան եւ կեանքի մէջ անարատ սիրոյ եւ զգացմունքի շար-
ժառիթներով են բացատրւում. ինչ տեսակ առաքինութիւններ էլ
վերլուծելու լինենք՝ քաջութիւն, հայրենասիրութիւն, ծնողասիրու-
թիւն, եղբայրասիրութիւն... բոլորի աղբիւրը նոյնն է՝ մաքուր սիրտը
կամ զգացմունքը:

Մի նշանաւոր քարոզիչ Հետեւեալ միտքն է արտայայտում այդ
մասին. եթէ Աստուած երեւար ինձ եւ ասէր՝ «Կը կամենա՞ս փոխեմ
ես մարդկային բնութիւնդ եւ հրեշտականման դարձնեմ, անմեղ»,
կ'ասէի. «Ո՛չ, Տէ՛ր, թո՛ղ ինձ իմ մարդկային յատկութիւններով, միայն
մէջս չմեռնի սայթաքումներից եւ անկումներից գիտակցութեան գալու
զգացումը եւ բարձրանալու ձգտումն ու տենչը»:

Ուրացող Պետրոսը չզրկուեցաւ իւր առաքելական պատուից,
երբ երիցս ուրացաւ իւր Տիրոջ. աքաղաղի ձայնը սթափեցրեց նորան,
եւ իրեն նայող Տիրոջ աչքերի մէջ տեսաւ թախծութեամբ լի յանդիմա-
նութիւնը, բայց եւ՝ ներողամտութեան եւ թողութեան նշանները.
«Եւ ելաց դառնապէս», - աւելացնում է աւետարանիչը: Գիտակցու-
թեան գալու եւ զղջման արտասուքն էր առաքեալի հոգեւոր մկրտու-
թեան աւագանը:

Մարդս բոլորովին անզօր չէ մեղքի եւ վատ հակումների զօրու-
թեան առաջ: Մեր մէջ կայ նոյնպէս մի այլ հակադիր զօրութիւն՝
բարոյ զգացում եւ խղճի ձայն: Մենք զգում ենք, թէ որն է
բարոյապէս գեղեցիկն ու ճշմարիտը, մեր խղճի ձայնը անկաշառ եւ
անողոք կերպով ազդարարում է մեր սխալներն ու յանցանքները.
պէտք է միայն նորան լսել եւ Հնազանդել սովորենք:

Բարոյ զգացումն ու խղճի ձայնը դատապարտութեան են
ենթարկում եւ նողկանք ներշնչում դէպի մեր եսականութիւնը եւ
նորա հետ կապուած բոլոր մեղաւոր գործողութիւնները, մենք զգում
ենք մեր տկարութիւնը եւ ապաւէն ենք որոնում բարոյապէս աւելի
բարձր հեղինակութիւնների մէջ: Այս զգացումն էր, որ մեղաւոր
կնոջը Յիսուսի ոտքերը ձգեց, որ կեղեքող Զակէոսին բարեգործ
դարձրեց, որ, ուրիշ խօսքով, նրանց ապաշխարող դարձրեց: Մենք
եւս Նորան պիտի դիմենք՝ մեր բարի նաւապետին, կեանքի ալեկո-
ծութեան ժամանակ, ինչպէս ծովում խեղդուող Պետրոսը:

ԳԱՐԵԳԻՆ Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ
«Արարատ», մարտ, 1907

Բայց զգացմունքն է նոյնպէս մարդկանց դէպի անդունդ գլորողը, եթէ նորա աղբիւրը պղտոր է, եսական: Եւհասիրութիւն, նախանձ, ատելութիւն, փառասիրութիւն եւ ամէն տեսակ զգուելի մոլորութիւններ ծագում են նոյն աղբիւրից, ինչպէս եւ առաքինութիւնները: Մարդկային հոգու յատկութիւնն է, որ չարն ու բարին, ազնիւն ու վատթարը, ստոր կրքերն ու կոպիտ եսականութիւնը նոյնպէս տեղ ունին մեր սրտում, ինչպէս անձնուիրութիւնն ու վսեմ ձգտումները: Երբեմն մէկն է իշխում մեր հոգու մէջ, երբեմն՝ միւսը: Եւ ահա Յիսուս, իբրեւ ճշմարիտ եւ սրտացաւ բժիշկ, կամենում է չարիքը արմատից կտրել՝ մատնացոյց անելով բարոյական հիւանդութիւնների իսկական պատճառի վերայ: Մեր ամբողջ նիստ ու կացով, խօսքով, ձգտումներով ու գործերով միայն ներքին շարժման արտայայտութիւնն ենք, նորա գործիքը: Մաքու՞ր են մեր ներքին շարժումներն ու զգացումները, անպայման մաքուր կը լինին եւ նոցա համապատասխան գործերը: Մաքու՞ր է աղբիւրի ակը, մաքուր կը լինի եւ այստեղից բղխած ջուրը:

Բ

Սովորաբար մարդիկ դատում են արտաքին երեւոյթներով, բայց արտաքին երեւոյթն ինքնըստինքեան բաւական չէ՝ որոշելու գործի բարոյական որակը, որովհետեւ արտաքուստ ազնիւ եւ բարի երեւացող մի գործ կարող է բղխել ներքին եսական եւ կեղտոտ շարժառիթներից: Բարեգործութիւնը յաճախ կարող է ի ցոյցս մարդկան կատարուել՝ աւելի մեծ շահերի, փառասիրութեան եւ ուրիշ շատ ծածկուած եսական նպատակների համար: Ամենայն գործ պիտի գնահատուի բարոյապէս՝ ներքին շարժառիթների տեսակէտով, ապա թէ ոչ, փարիսեցիներն ու կեղծաւորները, ճարպիկ խաբեբաները մարդկութեան զարդերը պիտի կազմէին: Յիսուս, որ եկել էր հոգեւոր մի նոր կեանք, փրկութեան մի նոր ճանապարհ քարոզելու՝ հին ազգերի ծիսակատարութիւններով եւ արտաքին օրէնքներով խճողուած կրօնների փխարէն, միշտ ներքին մաքրութիւնն է շեշտում: Նորա աչքում հրեաներից անարգուած եւ մեղաւոր համարուած մաքսաւորի աղօթքն աւելի գնահատելի է, քան արտաքուստ արդար եւ օրինապահ փարիսեցունը, այրի կնոջ սրտից բղխած լուծման՝ աւելի թանկ, քան մեծատունների տուած առատ նուէրները: Ո՛չ ծէս, ո՛չ լուացումներ, ո՛չ ծոմապահութիւններ, որոնք միանգամայն աւելորդ են, եթէ համապատասխան ներքին զգացումները պակասում են, այլ սրտի սրբութիւն, անարատ զգացումներ ու կեանք դարձած բարեպաշտութիւնն է նորա Աւետարանի բովանդակութիւնը: Անշուշտ, վատթարագոյն փարիսեցիութիւնն է նոյնպէս

հերքել ծէսերն ու խորհուրդները յանուն ներքին սրբութեան, եթէ գոյութիւն չունի մեր սրտում:

Նորա բերած կրօնը ներքին զգացումների համապատասխան մի կեանք էր, բարձրագոյն եւ սրբազան մի գեղարուեստ, որ թանձրանում է ոչ մարմարիոնի կտորի մէջ կամ կտաւի վերայ, այլ՝ կենդանի, բանական, մտածող եւ զգացող արարածի մէջ, եթէ աստուածային կայծն ընկել է նորա սիրտը:

Կեանքի բոլոր երեւոյթներից նրբագոյնը կրօնականն է, որ կեղծիք տանել չէ կարող, ինչպէս մաքուր, սպիտակ զգեստը՝ սեւ բծեր. այդ պատճառով էլ կրօնի անունով եղած կեղծիքը ամենից զգուելին է: Սրտի մաքրութիւնը ճշմարտութեան գերիշխանութիւնն է մեր խղճի եւ հոգու մէջ, որ ազնուացնում է մեր զգացումները եւ ջերմացնում մեր հոգին բարւոյ, գեղեցիկ եւ ճշմարտութեան գաղափարների համար: Հոգու այսպիսի վիճակն է, որ Յիսուս երանելի է համարում եւ Աստուծոյ տեսութեան պայման:

Գ

Քրիստոնէական կրօնի մէջ Աստուած մի անտեսանելի եւ անըմբռնելի էակ է: Հասկանալի է, որ այստեղ եւս խօսքը նիւթական տեսութեան մասին չէ: Աստուծոյ գոյութիւնը զգալի է եւ տեսանելի միայն մաքուր հոգիների համար: Ինչպէս ցօղի բիւրեղանման փոքրիկ կաթիլի մէջ անդրադառնում է արեգակի պատկերը, այնպէս էլ անարատ եւ մաքուր սրտի մէջ՝ Աստուծոյ պատկերը, որ նորան կեանք ու անանց երջանկութիւն է տալիս: «Երանի՛ աշնոցիկ, որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցին»:

ԳԱՐԵԳԻՆ Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ
«Արարատ», փետրուար, 1907

ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ԾԱՆԱՊԱՐՀԸ

«Եղերո՛ւք կատարեալք, որպէս եւ երկճատր
Հայրն ձեր կատարեալ է» (Մատթ. Ե 48):

Ա

Կատարելութեան ձգտումը աստուածային օրէնքներից գերա-
գոյնն է եւ յատուկ մարդկային բնութեան: Այն օրուանից, երբ մարդը
ինքնագիտակցութեան է հասել, նկատելի է դորա հետ եւ նորա
կատարելութեան ձգտումը: Պատմութիւնը կարելի է սահմանել որպէս
մարդկային կատարելութեան ձգտման նկարագրութիւն, եւ նորա
իսկական հերոսներն են այն անձնաւորութիւնները, որ կարապետ եւ
մարգարէ են հանդիսացել բարձրագոյն ձգտումների եւ նպատակների
համար: Մեր Տէրն էլ, որ պատմութեան մէջ այդպիսի անձնա-
ւորութիւններից կատարելագոյնն է, անսահման կատարելութեան
ուղին է գծում Իւր հետեւողների համար՝ «Եղերո՛ւք կատարեալք,
որպէս Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» խօսքերով: Փորձենք այս
լուրջ խնդիրը խորհրդածութեան նիւթ դարձնել, որի ըմբռնումն ու
գործադրութիւնը քրիստոնեայի կեանքի հուսկունն ու նպատակը պիտի
կազմեն:

Կեանքի նպատակ... Շատ ազնիւ հոգիներ գլուխ են կոտրել,
արիւն-քրտինք մտել՝ կեանքի նպատակը հասկանալու եւ ուրիշներին
հասկացնելու համար: Կեանքի ամենամեծ հանելուկն է այդ, որ դրուած
է մեր առաջ, եւ որին պիտի նուիրուին մեր ամենաթանկ ընկերները:
Ում համար պարզ է կատարելիք գործի ծրագիրն ու նպատակը, աւելի
հեշտութեամբ էլ գլուխ կը բերէ յանձն առած պարտաւորութիւնը:
Եթէ ճարտարապետը գծագրել է մակարդակը, այլեւս որմնադրի եւ
քարտաշի համար դժուար չէ հոյակապ շինութիւններ կանգնել:
Գիտակցութիւն ունենալ, թէ ինչ է կեանքի նպատակը՝ մարդկային
կատարելութեան յաջողութեան կէսն է: Տարաբախտաբար, շատ չեն
այնպիսի մարդիկ, որոնք առաքեալի նման ասել կարող են. «Արդ, ես
այնպէս ընթանամ՝ ոչ որպէս յանրեւոյթս, այնպէս մրցեմ՝ որպէս ոչ
թէ գհողմս ինչ կոծելով»: Մարդկութեան դժբախտութիւնն հէնց այն
է, որ մեզնից շատերս հողմերի դէմ ենք կուռւմ, խարխափում ենք
խաւարի մէջ՝ առանց գիտակցութիւն ունենալու մեր գոյութեան
հուսկունն եւ նպատակի մասին: Սակայն եթէ ապրում ենք, անհրաժեշտ
է, որ մեզ համար պարզ լինի՝ ինչու ենք ապրում եւ ուր ընթանում:

Կեանքի նպատակը պարզելու համար նախ պէտք է որոշ լինի,
թէ ինչ է կեանքը: Ահա մի հարց, որի լուծման համար շատ տարբեր
հասկացողութիւններ կան, եւ այդ տարբեր հասկացողութիւնների
հետ էլ կապուած են վերոյիշեալ հարցի տարբեր պատասխանները:
Սակայն այդ տարբերութիւնների մէջ ճշմարտագոյնն այն է, որ
ամենից հինն է եւ պատմութեան ընթացքում հոգեւոր կեանքի մէջ
հանդէս է եկել այլեւայլ ձեւակերպութիւններով՝ ըստ հուսկունն միշտ
նոյն մնալով. այսինքն՝ կեանքն ըմբռնել որպէս հոգեւորի եւ մարմնա-
ւորի պատերազմ: Բնախօսական տեսակէտով որքան էլ ճշմարիտ լինին
մարմնի եւ հոգու փոխադարձ ազդեցութիւնն ու նոցա սերտ առնչու-
թիւնը, բայց եւ այնպէս, անուրանալի են եւ նոցա տարբեր յատկու-
թիւնները: Մարդը միայն այն չէ, ինչ որ ուտում է, ինչպէս պնդում
էին մի ժամանակ նիւթապաշտական ուղղութեան հետեւող գիտնա-
կանները. այսինքն՝ միայն մարմին չէ, այլեւ՝ հոգի: Մարդու մարմինը
կարելի է վերլուծել քիմիական տարրերի, բայց նոյն տարրերի միու-
թիւնից մտածող, զգացող եւ կամքի տէր անձնաւորութիւն չի ստեղ-
ծուիլ: Ոչ մի բնագէտ չէ կարող պնդել, թէ գիտակցութիւնը նիւթ է
եւ ճիշտ այն օրէնքներին է ենթարկուած, ինչպէս նիւթը: Ուրիշ է
հոգին, եւ ուրիշ՝ մարմինը: Մենք յաճախ մեր ներքին աշխարհում
զգում ենք այդ երկուսի մաքառումը: Ուրիշ բան է կամենում մարմինը,
եւ ուրիշ՝ հոգին: Մարմնի ցանկութիւնը յաճախ հոգու կորուստն է,
կամ ինչպէս առաքեալն է գեղեցիկ կերպով ձեւակերպում՝ «խորհուրդ
մարմնոյ մահ է, եւ խորհուրդ հոգւոյ՝ կեանք եւ խաղաղութիւն»: Կրկնում ենք,
որ այս իրողութիւնը անժխտելի է մեր հոգեւոր աշխար-
հում, եւ հէնց այս երկու աշխարհների մաքառումն էլ պատմութեան
հուսկունն է կազմում: Կեանքը պատերազմ է, աւելի պարզելու համար
կ'ասենք՝ կեանքը հոգեւորի եւ մարմնաւորի պատերազմն է: Զգտում
յաղթելու չարը, ձգտում բարւոյ դրօշակակիրը դառնալու՝ կատարե-
լութեան ճանապարհն է, որ դէպի վերջնական նպատակը՝ յաւիտեանա-
կանութիւնն է տանում:

Բ

Այս իրողութիւնն ամենահին ժամանակներից յայտնի է մարդ-
կութեան, ուստի եւ նորա լաւագոյն անդամները՝ կրօնական հան-
ճարներն ու փիլիսոփաները, երկնաթռիչ արուեստագէտներն ու բանա-
ստեղծները, այլեւայլ միջոցներ են առաջարկել եւ գործադրել՝ հոգու
յաղթութիւնը ապահովելու համար: Բաւական է հին ազգերից յիշել
միայն յոյների եւ հռոմայեցիների փիլիսոփայութիւնը, որ աւելի սերտ
առնչութիւն ունի մեր քաղաքակրթութեան հետ: Քրիստոնեայ լինե-

լով՝ երախտագիտութեամբ պիտի յիշենք Սոկրատէսի, Պղատոնի, ստոյիկեանն եւ եպիկուրեանն փիլիսոփայութիւնների Հիմնադիրների անունները: Նոքա էլ մի-մի ազնիւ ճառագայթ են եղել՝ քրիստոնէական Հնոցը զօրացնելու համար: Ամենայն մի ձգտում դէպի վսեմն ու կատարեալը յարգելի պիտի լինի քրիստոնեայի համար. «Ուր Հոգի Տեառն է, անդ ազատութիւն է»: Եթէ մի անգամ ըմբռնել ենք մեր կրօնի էութիւնը, եթէ պատկերացրել ենք մեր Հոգու առաջ նորա Հիմնադրի անարատ եւ լուսաւոր Անձնաւորութիւնը, այլեւս երկիւղ չունինք համեմատութեան դնելու մարդկութեան մեծ բարերարների եւ հանճարների անձնաւորութեան եւ վարդապետութեան հետ: Ընդհակառակը՝ այդ համեմատութիւնը միայն մի բան կարող է պարզել՝ թէ մենք իրաւունք ունինք օրհնութեամբ յիշել մեր Տիրոջ անունը, որ բոլոր հանճարների, բոլոր բարերարների եւ մարգարէների մէջ բացառիկ եւ գերազանց է հանդիսանում:

Պղատոնը Հոգեւորի յաղթութեան միջոցը նիւթի ոչնչացումն էր ընդունում. Հոգին պէտք է ազատուի մարմնի կապանքներից, եւ դորա միջոցը բանականութիւնն է, փիլիսոփայական միտքը: Պէտք է նախ ազատուել այդ կապանքներից՝ մեր ձգտումների վերջնական նպատակի՝ բարութեան գաղափարին հասնելու համար: Անկատարից դէպի կատարեալը բարձրանալու համար պէտք է ոչնչացնել զգայականը եւ նմանել Աստուածութեան, որ ազատ է չարութեան եւ վատութեան յատկութիւններից: Հոգին պէտք է ամփոփուի ինքն իւր մէջ, մտածուած գիտակցութեան խաղաղութեան մէջ՝ ազատ անցաւորից եւ անկատարից, եւ միանայ ճշմարիտ եւ յաւիտենական էութեան հետ, իսկ դորա միջոցը, ինչպէս յիշուեցաւ, բանականութիւնն է եւ փիլիսոփայութիւնը: Բայց Պղատոնի բարոյական կատարելութեան գաղափարը որքան եւ վսեմ, նոյնքան եւ անիրագործելի էր. այդ մի վերացական գաղափար է, որ միայն նորա գլխում գոյութիւն ունէր: Մարդկութեան անբաժանելի եթէ նոյնիսկ պղատոններից կազմուած լինէին, անկարելի կը լինէր այդպիսի զուտ վերացական գաղափարների համեմատ իրական կեանք ստեղծել. փիլիսոփան ինքն էլ երեւի չի մտածել՝ թանձրացնել կեանքի մէջ իւր բարոյական կատարելութեան գաղափարը:

Նորա աշակերտը եւ հին աշխարհի ամենամեծ փիլիսոփան՝ Արիստոտէլը, թէպէտեւ բոլորովին տարբեր ճանապարհով, բայց դարձեալ մարդկութեան երջանկութիւնը բարոյական կատարելութեան մէջ է տեսնում: Բայց այդ կատարելութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ բնական աճողութեան կանոնաւոր զարգացումը, բնականի ոգիացումը:

Նա չի ընդունում Հոգու եւ մարմնի այն երկուութիւնը, որ յատուկ էր իւր ուսուցչին: Մարդը երջանիկ կարող է լինել իրեն յատուկ բնական գործունէութեամբ, իսկ մարդու էական յատկութիւնը բանականութիւնն է: Նա կամքի վարժութեամբ կամ, աւելի ճիշտն ասած, ինքնիշխանութեան վարժութեամբ պիտի կարողանայ հետեւել բանականութեան թելադրութեան՝ հակառակ ցանկութիւնների: Որպէս միջոցներ առաջարկում է գեղարուեստն ու ճանաչողութիւնը կամ գիտութիւնը. առաջինը մաքրում է Հոգին յոյգերից, իսկ երկրորդը՝ առաջնորդում դէպի բարձրագոյն եւ մաքուր բանականութիւնը: Այսպիսի տեսական բանականութեան թելադրութեամբ եղած գործունէութիւնն է, որ մեզ դէպի երջանկութիւն եւ կատարելութիւն է տանում, այսինքն՝ դէպի բարոյական, գործնական կեանքը: Բայց աւելի բարձրագոյն երջանկութիւնը հայեցողական է. ճանաչողութեամբ կամ գիտակցութեամբ մարդը մասնակից է դառնում մաքուր բանականութեան, որ Աստուծոյ էութիւնն է եւ իսկական եւ յաւիտենական երջանկութիւնը եւ կատարելութիւնը:

Ինչ որ ասացինք Պղատոնի համար, նոյնը կրկնել կարող ենք եւ Արիստոտէլի համար: Ծանաչողութիւնը կամ վերացական գիտութիւնն անշուշտ Հոգեւոր բարիք է, բայց ոչ միայն՝ շատ քչերի մատչելի, այլեւ՝ կտրուած գործնական կեանքից: Արիստոտէլի կատարելութեան նպատակը նոյնիսկ աւելի տեսական բնաւորութիւն ունէր. հանճարեղ փիլիսոփայի մտքի սաւառնումն էր այդ բանականութեան վերացական եթերներում, որ երբ գործնական վարդապետութիւն դարձաւ ստոյիկեանների փիլիսոփայութեան մէջ, ցոյց տուեց իւր պակասաւոր կողմերը:

Գ

Այս երկու Հանճարներին հետեւող փիլիսոփայական դպրոցներից յիշելի են ստոյիկեաններն ու եպիկուրեանները: Երկուսն էլ որոշ չափով իրենց հետքերն են թողել մարդկային Հոգու զարգացման պատմութեան մէջ, երկուսն էլ մասամբ դեռեւս նշանակութիւն ունին կրթուած Հասարակութեան որոշ խաւերում:

Առաջինն, իսկապէս, գործնական կեանքի փիլիսոփայութիւն էր, որով պէտք է ընթանար իրենց հասկացողութեան համեմատ բարոյական կեանքը: Նա այնպիսի տեսական բնաւորութիւն չունէր, ինչպէս Պղատոնի եւ Արիստոտէլի փիլիսոփայութիւնն էր: Գիտութիւնը նոցա համար միայն միջոց էր առաքինի գործողութեան համար: Միակ բարիքը առաքինութիւնն էր, եւ չարիքը՝ մոլութիւն. ըստ այսմ էլ

բաժանւում էին մարդիկ եւ շրջապատող իրերը՝ գոնէ այս վարդապետութեան սկզբնական ժամանակներում: Հաճոյքն ու ստացուածքը արգելք էին համարուում առաքինութեան, ինչպէս եւ յոյգերը, երկիւղն ու ցանկութիւնը, կիրքն ու զգացմունքը, եթէ սոքա իշխէն բանակապետութեան վրայ: Նոքա թէեւ բարոյագիտութեան համակարգութիւն չունէին, բայց իրենց բարոյական կատարելութեան գաղափարը պատկերացնում էին իմաստունի գերակայի մէջ: Իսկ այդ իղէալը կամ գերական կապուած էր իրենց տիեզերական հայեացքների հետ: Ստոյիկեանները հին աշխարհի հանրաստուածականներն էին. աստուածութիւնը բնութեան մէջ էին որոնում եւ ոչ՝ նրանից դուրս: Տիեզերքը Աստուծոյ մարմինն է, եւ Աստուած՝ տիեզերքի հոգին: Այստեղից էր ծագում եւ նրանց ամբողջ բարոյագիտութիւնը՝ մարդու ձգտումների եւ կատարելութեան ճանապարհն է ապրել բնութեան ընդհանուր օրէնքների համեմատ, ներդաշնակութիւն կազմել բնութեան հետ. եւ այս ձգտումը մարմնացած էին համարում իմաստունի գերակայի մէջ: Իմաստունն ազատ է արտաքին աշխարհից եւ երջանկութիւնն ինքն իւր մէջ է գտնում՝ ինքնաբաւականութեան հպարտ գիտակցութեամբ: Նա աշխարհի հետ գործ չունի, եւ այնտեղից ստացած սպաւորութիւններն ու յոյգերը չեն խանգարում նորա ներքին խաղաղութիւնը: Նա օրէնքից եւ սովորութիւններից բարձր է. կարող է ինքնասպան լինել, ստախոս, գործել վատթարն ու գարշելին առաքինութեան զգացումով: Մի խօսքով, իմաստունին պատկերացնում էին իբրեւ մի Աստուած, «որ հպարտանալ կարող էր իւր կեանքով, ինչպէս Զեսար»:

Բայց այդպիսի մէկը ոչ միայն չկար երկրիս վրայ, ոչ միայն վերացական ենթակայական ստեղծագործութեան արդիւնք էր, այլ եթէ իրօք գոյութիւն ունենար, մեր համակրանքը վայելել չէր կարող. նորա հպարտութիւնն ու ինքնաբաւականութիւնը կ'ստիպէին մեզ հեռու փախչել նրանից: Ստոյիկեանների ստեղծած բարձրագոյն կատարելութեան տիպը երեւակայական էր. եւ իրենք հէնց՝ ստոյիկեանները, որքան եւ յարգելի իրենց շատ կողմերով, հակասութեան մէջ ընկան իրենց գաղափարների վերաբերութեամբ: Յայտնի է, թէ նոցա լաւագոյն ներկայացուցիչներից մէկը՝ Սենեկան, ինչպէս ընչասէր էր եւ համակերպւում էր իւր սանի՝ Ներոն կայսեր զգուելի եւ անբարոյական քմահաճոյքներին: Իսկ նրանց հպարտութիւնը, ինքնաստուածացումը, եթէ կարելի է այդպէս ասել, եւ արհամարհանքը դէպի ոչ փիլիսոփան, ոչ առաքինին, դէպի ամբողջ այնպիսի խաւար ստուերներ են, որ բարոյական կատարելութեան հետ հաշտեցնել չի

կարելի: Իրենց արտաքինով իսկ՝ փիլիսոփայական վերարկուով, մտքերի մէջ խորասուզուած դէմքով, պէտք է փողոցում տարբերուէին այդ աստուածները խեղճ, տգէտ, ուրեմն եւ ոչ առաքինի ամբոխից: Կատարեալ մարդը ստոյիկեանն էր, իսկ միւսները՝ յիմարներ եւ մեղաւորներ:

Եպիկուրեան փիլիսոփայութեան նպատակը նոյնպէս գործնական էր՝ մարդկանց դէպի երջանկութիւն առաջնորդել: Բարձրագոյն բարիքը, որին պէտք է ձգտի մարդս, երջանկութիւնն է, իսկ այդ երջանկութեան հասնելու լաւագոյն միջոցը՝ հաճոյքը, զուարճութիւնը: Սակայն այդ հաճոյքը ըրպէսկանը չէ, այլ՝ տեւականը, որին պիտի ձգտի մարդս իւր բանականութեան ընտրութեամբ: Հաճոյքներից ընտրելի են աւելի հոգեւորները, որոնք տեւական եւ խաղաղ բաւակապետութիւն են պատճառում, այնինչ մարմնականները կրքոտ են, փոթորկալից եւ ըրպէսկան: Հաճոյքը երջանկութեան էական տարր ընդունելով հանդերձ՝ չափաւորութիւն եւ սակաւապետութիւն է քարոզում Եպիկուրը. չուայլութիւնն ու զեղխութիւնը բարձրագոյն բարիք չեն: Պէտք է վայելել կեանքը, ամենայն բարիք, որ հաճոյք եւ զուարճութիւն է պատճառում, բայց՝ առանց վնասի, զրգիռների եւ հոգու խաղաղութիւնը կորցնելու: Այսպիսով, հաճոյքը, զուարճութիւնն ու առաքինութիւնը միութիւն էին կազմում այս վարդապետութեան մէջ, եւ նոքա բարձրագոյն, հոգեւոր զուարճութիւնը որոնում էին կեանքի էսթետիկ նրբութեան, հոգելից եւ նրբամիտ բարեկամական շրջանների մէջ: Բարեկամութիւնը, կարեկցութիւնն ու մարդասիրական գաղափարը այս վարդապետութեան համակրելի կողմերն էին:

Սակայն հաճոյքը կատարելութեան էական տարր ընդունելով՝ բարոյականութիւնն ինքնըստինքեան տեղի էր տալիս անհատական երջանկութեան առաջ: Քաղաքակիրթ մարդու նրբաճաշակ եւ զեղասիրական վայելքը բարոյական կեանքի նպատակ էր ընդունուած: Վայելքի միջոցները որքան եւ նրբացած լինէին քաղաքակրթութեան յաւաքողիմութեամբ եւ բարիքներով, ըստ էութեան՝ այդ ձգտումն ու կեանքը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ՝ բարոյական պարտքի զգացումից զուրկ եսականութիւն: Եսի ինքնաբաւականութեան պաշտամունքն էր այդ նուրբ ձեւերի տակ: Եպիկուրեան վարդապետութիւնը մենք նկարագրեցինք իւր մաքուր գաղափարականութեան մէջ, բայց հէնց այդ վիճակում ոչ միայն եսական է այն, այլեւ՝ անիրազործելի, եթէ ընդունենք իսկ, որ մարդիկ ընդունակ են հաճոյքների մէջ (որից դուրս չեն եւ մարմնականները) չափաւորութիւն պահել: Տուէ՛ք այն հասարակութիւնը, որ ճաշակի, վայելչութեան, սիրալիրութեան հաւա-

սար նրբագագածութիւնն ունենար, եւ նոցա փոխադարձ յարաբերութիւնից միայն հաճոյք բղխէր: Գործնական կեանքի մէջ այդ վարդապետութիւնը ցոյց տուեց իւր սնանկութիւնը. եպիկուրեան ասելով՝ հասկացուած է զգայական զուարճութեան հետամուտ, ուտող, խմող, աշխարհը վայելող մի անձնաւորութիւն, որ, անշուշտ, առաքինութեան տիպար լինելուց շատ հեռու է: Եւ այդ շատ հասկանալի է միանգամայն. որ եթէ զուարճութիւնն ու հաճոյքը երջանկութեան եւ կատարելութեան տարր էին ընդունուած, անկման եւ սայթաքման բոլոր պայմանները պատրաստ էին:

Մենք փոքր-ինչ աւելի կանգ առանք այս խնդրի վերայ, որովհետեւ զուրկ չէ այժմէութիւնից: Եւրոպական հասարակութիւնների մէջ, նրանց հետեւողութեամբ եւ մեր մէջ հազուադէպ չեն այնպիսի անձնաւորութիւններ, որոնց ամբողջ ձգտումն է վայելուց հազնուել, նիստ ու կաց ունենալ, վայելել կեանքի եւ քաղաքակրթութեան հոգեւոր եւ մարմնաւոր բարիքները: Ըստ երեւոյթին, մինչեւ իսկ ոչ ոքի վնաս չեն տալիս, ազնիւ են, բայց եւ այնպէս, եպիկուրեան նրբութիւններից աւելի չեն բարձրանում: Կենդանարար Հոգին չէ նրանց զեկավարող զօրութիւնը, այլ՝ նրբացած եսամոլութիւնը, որ միշտ էլ չարեաց արմատ կը մնայ, բայց ոչ երբէք՝ բարձրագոյն առաքինութեան:

Դ

Կատարելութեան ճանապարհ է քարոզում եւ մեր Տէրը. «Եղբոր՝ ք կատարեալք, որպէս եւ երկնաւոր Հայրն ձեր կատարեալ է»: Այս խօսքերից արդէն նկատուում է, թէ Տիրոջ քարոզած կատարելութեան ճանապարհը տարբեր է մինչեւ այժմ նկարագրածներից: Բնական չէ այս ճանապարհը, որովհետեւ կատարելութեան Նախատիպը գերբնական է: Այնտեղ բանականութիւնն էր իւր թելադրութիւններով գործօնը, այստեղ, ինչպէս կը տեսնենք, հաւատը՝ մարդկային հոգու սրբազան զգացմունքներից մէկը:

Բայց ի՞նչ է նշանակում բնական, եւ ի՞նչ՝ գերբնական: Պէտք է երկու խօսքով գոնէ լուսաբանենք այս հասկացողութիւնները՝ մեր մտքերի ընթացքը պարզելու համար: Տիեզերքի մէջ բնականի եւ գերբնականի բաժանում չկայ իսկապէս. մեր մարդկային միտքն ու լեզուն է այդ բաժանումը դրել: Այն, ինչ որ բնական ենք համարում, նոյնչափ գերբնական է, ինչպէս եւ գերբնականը՝ բնական: Երկուսն էլ հաւասարապէս երեւոյթներ են բնութեան մէջ, մէկը միայն ենթարկուած է մանրամասն քննութեան, եւ այդ քննութիւններից որոշ

օրէնքներ ենք հանում, իսկ միւսը նման քննութեան եւ օրէնքի չի ենթարկուում: Արտաքին բնութեան երեւոյթները ենթարկուում են մեքենայական օրէնքների, իսկ հոգեւոր, կրօնական-բարոյական կեանքի երեւոյթները այդպիսի մեքենայականութեան չեն ենթարկուում: Գերբնականի գաղափարը մենք այս մտքով ենք հասկանում եւ ոչ՝ բնական, մեքենայական օրէնքների մէջ արտաքին ոյժի միջամտութիւն. այս տեսակէտով՝ երկուսն էլ բնութեան երեւոյթներ են, եւ նոցա գոյութիւնը հաւասարապէս ուրանալ չենք կարող: Եւ զարմանալին այն է, որ ինչ վսեմ է, սուրբ, աստուածային, այն եւս գերբնական է: Գերբնական է եւ այն ճանապարհն ու նպատակը, որ մեզ բարձրագոյն, բարոյական կատարելութեան է տանում, իսկ այդ կատարելութեան նախատիպը Աստուած է:

Նորա գոյութիւնն, իհարկէ, բնական օրէնքներով եւ շօշափելի փաստերով ապացուցանել չենք կարող, եւ այն աստուածը, որի գոյութիւնը սառը մտքի, բանականութեան տեսութիւններով պիտի հաստատենք, կենդանի աստուած չէ: Մեզ պէտք է սրտի եւ հոգու ղեկավար եւ տնօրէն հանդիսացող Աստուած, որ ապրէր մեր սրտում եւ կեանք ու նպատակ տար մեր բարոյական գոյութեան: Այդպիսի Աստուծոյ գոյութիւնը մեր ներքին աշխարհում պիտի որոնենք, իսկ նորանից դուրս՝ պատմութեան, հոգեւոր եւ բարոյական կեանքի առաջնորդների եւ մարգարէների մէջ, որոնք աւելի զօրեղ եւ պայծառ կերպով զգացել են Նորա գոյութիւնը եւ հաղորդել իրենց շրջապատին: Եւ այս զգացմունքն է, իսկապէս, նոցա մեծութեան, բարոյական կատարելութեան միակ գաղտնիքը: Մեր Տիրոջ գերազանցութեան եւ աննման բարձրութեան խորհուրդը եւս այն է, որ ոչ ոք կրօնի հիմնադիրներից, մարդկութեան մեծ բարերարներից Աստուծոյ մերձաւորութիւնն այնպէս խիստ չէ զգացել եւ իւր կեանքի ընթացքը՝ այնպէս Նորանից կախուած, ինչպէս Նա: Որդիական մաքուր, անձնուէր սիրոյ եւ Հօր կամքի առաջ հպատակութեան զգացմունքն է, որ Նորան ղէպի խաչ է առաջնորդել եւ սիրոյ ու կարեկցութեան կապերով միացրել մարդկանց հետ: Այս ներքին փորձառութեան արդիւնքն է ամփոփուած «Եղբոր՝ ք կատարեալք, որպէս երկնաւոր Հայրն ձեր կատարեալ է» խօսքերի մէջ:

Ե

Քրիստոնէութիւնն, ուրեմն, կատարելութեան բոլորովին մի տարբեր ճանապարհ է քարոզում. այստեղ գլխաւոր գործօնը մարդկային միտքն ու կամքը չէ, այլ՝ առ Աստուած հաւատը, վստա-

Ա

Ինչո՞ւ ենք այստեղ՝ այս երիտասարդների խմբի մէջ, որոնք իրենց հանդիսի երկրորդ տարեդարձն են տօնում: Ընտանեկան կեանքի մէջ ուրախութիւն է որդու, դստեր ծնունդը, ապա՝ նրանց բախտաւորութիւնը եւ թոռնիկների լոյս աշխարհ գալը: Այնուհետեւ տատիկն ու պապիկը դառնում են թոռնիկի կամ թոռնիկների ամենամտերիմ բարեկամները, խնամքի եւ գուրգուրանքի աղբիւրը, նրանց զբօսանքների, զբաղման, մանկական դաստիարակութեան առաջնորդն ու ընկերը:

Ի՞նչ է այս երեւոյթի հոգեբանական հիմունքը. սերունդի շարունակութեան մէջ իրենց անմահութեան գաղափարը տեսնել, որ միայն մարմնականը չէ, այլ առաւել եւս՝ հոգեկանը: Եթէ ժողովրդի վերայ նայելու լինինք ինչպէս մի ամբողջութեան, ազգային միութեան վերայ, այստեղ էլ նոյն օրէնքն ու հասկացողութիւնն է իշխում, ինչ որ անհատական կեանքի մէջ. ազգը կամենում է իւր նոր սերունդի մէջ տեսնել իւր յարատեւութեան եւ անմահութեան երաշխիքը:

Ահա մենք էլ, իբրեւ մի հոգեւոր հայր եւ մէկը Հին սերնդի ներկայացուցիչներից, որի կեանքի արեւը դէպի արեւմուտք է թեքուել եւ մի օր հորիզոնի յետեւը պիտի անցնի, եկել ենք ուրախանալու, մեր որդւոց եւ թոռնիկների ազգութեան անմահութեան բերած բաժինը տեսնելու եւ ողջունելու:

Այսօր մեր մամուլի եւ հասարակական բնոյթ կրող հաւաքոյթների եւ բանախօսութիւնների մէջ շատ է յորջորջւում «ազգապահպանութիւն» խօսքը: Եկեղեցին, բարեգործականը, մամուլը, կուսակցական կազմակերպութիւններն ու հայրենակցականները մտահոգուած են ազգապահպանութեան խնդրով՝ իւրաքանչիւրը իւր որդեգրած գծով եւ իւր հասկացողութեան համեմատ: Ազգապահպանութիւնը սերունդների յաջորդականութեան գաղափարն է՝ ոչ մարմնականը միայն, այլ մարմնականն էլ՝ որպէս հոգեւոր անմահութիւն ձեռք բերելու մի միջոց եւ գործիք:

Բ

Հոսանուտ է արտաքինը, եւ մնայուն ու յաւիտենական՝ հոգեկան ստեղծագործութիւնը: Եւ այդ հոգեկան ստեղծագործութիւնն ու արժէքն է կեանքի բարիքը, որի գումարն ու էութիւնը անմահութիւն է կոչւում: Առաքեալի խօսքը՝ «Սերմանի մարմին չնչաւոր, եւ յառնէ մարմին հոգեւոր», կարող ենք յարմարեցնել անհատական-կրօնական անմահութեան մտքի հետ նաեւ ազգային յաւիտենական կեանքի եւ անմահութեան գաղափարին:

Քի՞չ ազգեր կան, որոնք մեռած եւ անյայտացած են մարմնով, բայց ապրում են եւ պիտի ապրեն հոգւով: Ո՞ւր են Հին եգիպտացիք, ասորեստանցիք, Հին յոյներն ու հռոմայեցիք: Նրանք չկան մարմնով իբրեւ ազգ, բայց նրանց տաղանդի, հանճարի ստեղծագործութիւնները յարութիւն են առել գերեզմաններից գիտնականների պեղումներով, հնագիտական գիւտերով, անհասկանալի համարուած նշանների եւ գրերի ընթերցանութեամբ եւ խօսում են այժմ տուեալ ազգերի անցեալ կեանքի, տենչերի եւ յոյգերի մասին: Աւերակը, քանդակը, արձանը, որմնանկարը, պապիրուսը կամ մագաղաթը գրուած՝ այլեւս քարի կտոր չէ, ներկ կամ անշունչ նիւթ, այլ՝ խօսուն հրաշալի եւ յուզիչ լեզուով, յաճախ՝ երգ ու նուագ սրտի ամենանուրբ լարերի վերայ, իհարկէ, հասկացողների համար: Այժմ մենք եգիպտացիների, ասորեստանցիների մասին աւելի գիտենք, քան շատ կիսակիրթ կամ երկրորդական ազգերի մասին, որոնց հոգիները չեն ճախրել վսեմի, գեղեցկի եւ ճշմարտի, ուրիշ խօսքով՝ յաւիտենականի եւ անմահութեան հորիզոնների վերայ: Այսօր էժիպտոլոջին, ասիւրոլոջին, հետիտոլոջին դարձել են համայնարաններում դասախօսութիւնների եւ մեծ գիտնականների ուսումնասիրութեան առարկայ՝ մարմնով անհետացած, բայց հոգւով, իրենց ստեղծագործութիւնների շնորհիւ գերեզմաններից յարութիւն առած ազգերի մասին:

Այդ անմահութեան աղբիւրը մարդկային հոգին է, անհատական եւ ազգային հոգին, ուր յղացւում, օրօրում եւ կեանք են ստանում կրօնը, արուեստը, գիտութիւնը, յաւիտենական արժէքները՝ այնտեղ տիրող գաղափարականի համեմատ: Գաղափարն է աղբիւրն ու սկիզբը ամենայն ստեղծագործութեան: Եթէ հոգու մէջ յղացուած չէ պատկերը, ձեւակերպուած՝ ճարտարապետական կոթողի գծերը ընդհանուր կերպով, եթէ չկան բարձրագոյն տենչերի եւ տեսլան, յոյգերի ելեւէջներն ու ապրումները հոգու խորքում, յափշտակութիւնը դէպի մի վերացական եւ լուսաւոր աշխարհ, իզուր են ջանքերը թանձրացեալ գեղեցկութեան փորձերի, բանաստեղծութեան եւ արուեստի որեւէ

* Խօսուած «նոր գիրի» տարեդարձի հանդէսին, բայց ուղղուած մեր բոլոր գաղութների մտաւորական նոր սերունդին:

ճիւղի մէջ: Գաղափարն է յարատեւ կեանքի եւ յառաջադէմ շարժման աղբիւրը: Եթէ չկայ հեռանկարը կեանքի առաջ, եթէ լուսոյ աստղ չունի կարաւանը արշալոյսին հասնելու, յաւիտեանական հոգեւոր աղջամուղջն է նորա բաժինն ու գերեզմանը: Գաղափարի հետ անշուշտ միանում են զգացմունքն ու երեւակայութիւնը, եւ յղացուած միտքը խմորուում է, ձեւ ու կերպարանք ստանում ներքին մղումով՝ ըստ տուեալ ունակութեան եւ տաղանդի: Յղացման ըստ էն սուրբ է, նուիրական եւ օրհնեալ: Այդպիսի ըստ էն երումն է, որ ոչ միայն գաղափարն է ծնւում, այլեւ կմախք, միս, արիւն եւ շունչ է ստանում այն: Ամէնքը բանաստեղծ չեն, արուեստագէտ, հոգեւոր կեանքի առաջնորդ կամ ղեկավար, սակայն ամէնքը իրենց մասնակցութիւնն ու բաժինը ունին այն հողն ու տրամադրութիւնը ստեղծելու, ուր աճում է կեանքը եւ պտղաւորում նման ծառի, որ անպտուղ կը մնայ, զուրկ՝ կենդանի ծառ լինելու յատկանիշներից, եթէ արմատներ չունենայ՝ հողի մէջ տարածուած, բուն, ճիւղեր, կանաչ տերեւներ, որ ժողովրդի ամբողջութիւնն է՝ Եկեղեցին, մամուլի աշխատակրները, հասարակական գործիչները...

Գ

Մեր ազգը մեռած չէ, բարեբախտաբար, բայց փոքրացած, ճղակոտոր եղած՝ անագորոյն բախտի հարուածների տակ, մնացածն էլ իւր երկու երրորդ մասով հայրենիքից դուրս՝ հարեւան Վրաստանից ու Աքրբէյճանից սկսած մինչեւ Ռուսաստանի խորքերը եւ մի կարեւոր մասով էլ արտասահմանի բազմաթիւ ազգերի ու պետութիւնների մէջ հողմացրիւ եղած: Հայի բեկորներ կը գտնենք ամէնուրեք՝ Մանչուրիայի սահմաններից Հնդկաստանի եւ Պարսկաստանի վերայով մինչեւ Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկայի արեւմտեան ափերը՝ ձուլման եւ անհետացման մեծ վտանգին ենթարկուած: Մեր կեանքի եւ պատմութեան մի նոր շրջան է սկսւում մեզ համար անծառնօթ պայմանների մէջ: Գաղթական հատուածներ Հայաստանը շատ է տուել ամենահին ժամանակներից, բայց՝ հայրենիքից ոչ շատ հեռու, բոլորովին քանդուած կամուրջներով, ինչպէս այժմ՝ տարածութեան տեսակէտով:

Բիւզանդական պետութեան արեւելեան եւ միջին նահանգներում այնքան բազմաթիւ էին հայ գաղթական հատուածները, այն էլ՝ իշխանական տների եւ եկեղեցական նուիրապետութեան անմիջական ղեկավարութեան տակ, որ ոչ միայն դժուար չէր իրենց գոյութիւնը պահել, այլեւ հնարաւոր՝ հետզհետէ միանալու, մի նոր հայրենիք եւ

պետութիւն ստեղծելու Կիլիկիայի բարձունքների վերայ: Այնուհետեւ հայերը մահմետական իշխանութիւնների տակ ձուլման մեծ վտանգից համեմատաբար ազատ էին իրենց տարբեր կրօնով եւ տարբեր քաղաքակրթութեամբ՝ թէպէտ զրկուած ազատ օդի եւ հոգեւորապէս աճման շատ ազդակներից: Այդպիսի պայմաններում էր, որ Եկեղեցին իւր հոգեւոր դրամագլուխը ծախսեց եւ պահեց հայ շունչն ու հոգին մինչեւ մեր օրերը: Փա՛ռք այդ Եկեղեցուն, պատի՛ւ այն կազմակերպութեան, որ մահմետական տարբեր կրօնի եւ քաղաքակրթութեան համատարած ծովի մէջ կարողացաւ պահել իւր ժողովրդի հոգին, դորա հետ եւ մարմինը, ազգային դէմքը: Որպիսի՛ երախտագիտական զգացմունքով պիտի կապուինք նորա հետ...

Դ

Տարբեր է այժմ մեր ներկայ վիճակը: Մեր ձեռքն է միայն մեր պատմական հայրենիքի մի փոքր մասը՝ աւելի քան մի միլիոն հայ բնակչութեամբ, հայրենի աւերակներով, աւանդութիւններով եւ յիշատակներով, որ մեր կեանքի գոյութեան խարխիւր պիտի մնայ այսուհետեւ եւս: Բայց մեր ժողովրդի մեծագոյն մասը հայրենագուրկ է եւ ցրուած: Վտանգը միայն այդ չէ սակայն: Մտահոգութեան առարկայ է յատկապէս, որ գաղթական հայութիւնը մեծագոյն մասով ցրուած է այժմ քրիստոնեայ, իրենից աւելի քաղաքակիրթ եւ հզօր ազգերի մէջ, որոնց թւումն է եւ խորհրդային մեծ Ռուսաստանը: Չկայ այլեւս կրօնի եւ քաղաքակրթութեան այն մեծ տարբերութիւնը, որ մեզնից հարիւրապատիկ աւելի զօրեղ զանգուածների մէջ մեզ պահել կարողանայ ձուլման ահաւոր գործողութիւնից: Լեզուի կորուստը, խառն ամուսնութիւնները, անտարբերութիւնը դէպի մայրենի, դարաւոր Եկեղեցին եւ անցեալը միացեալ թշնամիներն են հետզհետէ ուժացման եւ կորստեան ճանապարհների վերայ:

Հայրենագուրկ եւ գաղափարագուրկ կեանքով ապրել չենք կարող: Ազգային տեսակէտով ապաբախտ այս նոր պայմանների մէջ պէտք է զօրանայ եւ ուճանայ հայրենիքի եւ հոգեւոր միութեան գաղափարը՝ աւելի լայն եւ աւելի խորը, լուսաւոր հասկացողութեամբ: Թանկ է մեր պատմական հայրենիքը, բայց հայրենիքի գաղափարը միայն հողն ու ջուրը չէ, լեռն ու դաշտը: Հայրենիքի գաղափարը հոգեւոր է, աւելի լայն, քան նիւթական հայրենիքի հասկացողութիւնն է. այդ ժողովրդի ոգին է, հանճարը, տենչերը, պատմութիւնը, ստեղծագործութիւնը, արուեստն ու գրականութիւնը, լեզուն, կրօնքն ու Եկեղեցին: Հայրենիքն էլ այդ իմաստով է, որ արժէք եւ յաւիտե-

նականութեան երաշխիք ունի, մեր կենդանութեան ծառի արմատն ու բունը Հայրենի հողում, աւելի ճիշտ՝ այնտեղ Հաստատուած ժողովրդի մէջ: Հայ ազգը այդպիսի Հասկացողութեամբ ոչ միայն երեք միլիոնից բաղկացած ժողովուրդ է միայն, այլ մեր ամբողջութեան կարեւորագոյն մասն են մեր նախահարց միլիոնաւոր հոգիները դարէ ի դար, որոնց հետ մենք հոգեւոր, սերտ հաղորդակցութեան մէջ ենք: Նրանց աշխատութեամբ եւ նահատակութեամբ ստեղծուած է հոգեւոր Հայրենիքի աւելի ընդարձակ գաղափարը, որով եւ Սփիւռքի Հայութիւնը ապրել կարող է առանց նիւթական Հայրենիքի մէջ լինելու բախտին, մի պայմանով միայն, որ մեր կապերը լինին կենդանի, եւ ապրենք այն հոգեւոր շնչով, որով պատմական Հայրենիքի վերայ ապրող ժողովուրդն է շնչել եւ շարունակում է շնչել:

Մի տաս տարի առաջ ազգային այսպիսի զգացմունքով եւ անցեալի սրբազան յուշերով ապրող սերունդը մտահոգուած էր, թէ մեր երկրում Հաստատուած նոր իրաւակարգը չպիտի՞ ոչնչացնէ կրօնի հետ եւ ազգային զգացմունքը, գիտակցութիւնը: Մտալնորից ազատ չեն յեղափոխական մեծ շարժումները: Բայց նոքա յաւիտենական բացասական եւ պղտոր դիրք չեն պահում անցեալի նկատմամբ: Այսօր մեր Հայրենիքում նկատուում են նշաններ եւ դրական շօշափելի ապացոյցներ, որ Հայ անցեալի գնահատութեան մի նոր շրջան է սկսուում՝ մի նոր կեանքի կերտման՝ պատուաստելով Հնի շատ տարրերի հետ: Դորա հետ յարութիւն է առնում եւ Հայրենասիրական բնական զգացմունքը նոր թափով, որ ազգային ստեղծագործական կեանքի մեծ հիմունքներից մէկն է: Խորհրդային Հայաստանի արուեստի եւ գրականութեան, յատկապէս բանաստեղծական գրականութեան մէջ Յովհաննէս Երրագի եւ նմանների երեւան գալը, ժողովրդական դիւցազներգութեան հազարամեակի կատարումը եւ նորա շուրջը ստեղծուած գրականութիւնն ու արուեստը եւ ուրիշ շատ երեւոյթներ, որ այստեղ մի առ մի թուել չենք կարող, գալիք ապագայի լուսաւոր նշաններ են:

Ե

Այսօրուայ Հանդէսը, այս լուսոյ տակ, ուխտի մի հանդէս է, ուխտի՝ ոչ միայն պահելու մեր լեզուն, մեր հոգեւոր դէմքը, այլեւ զարգացնելու այն նոր պայմանների համաձայն՝ կառչելով մեր ազգի յաւիտենական պահպանութեան եւ յարատեւութեան գաղափարին:

Մենք՝ Հին սերունդի ներկայացուցիչներս, աշխատել ենք մերովստան այդ անմահութեան գաղափարի անունով. այժմ եկել ենք՝ մեր

նոր սերունդի աշխատանքն օրհնելու: Պէտք է մաղթենք եւ աշխատենք, որ նման շարժում սկսուի եկեղեցական կեանքի, անցեալի ուսումնասիրութեան, մամուլի եւ Հասարակական գործունէութեան այլեւայլ շրջաններում, որոնց գումարը կը լինի մեր հոգեւոր կեանքի եւ ստեղծագործութեան վերածնութիւնը:

Պատմութիւնը կեանքի լինելութեան եւ զարգացման ըմբռնողութիւնն է, կապակցեալ օղակներով, լուսոյ թելերով երեւոյթների կենդանի միութիւնը: Այս գիտակցութեամբ է, որ պիտի կերտուի հոգեւոր Հայրենիքի, մեր յարատեւ գոյութեան գաղափարը ցրուած Հայութեան մէջ՝ արեւածաղկի նման աչքներս ուղղուած դէպի լուսոյ եւ ջերմութեան աղբիւրը, որ մեր ստացած ժառանգութիւններն են, մեր եկեղեցին է, մեր գիրն ու գրականութիւնը, մեր պատմական Հայրենիքը՝ այնտեղ ապրող ժողովրդով, մեր նիւթական եւ բարոյական սրբազան հողի պահպան հրեշտակը:

Այս հեռաւոր ափերի վերայ եւս նոր սերունդը ոչ միայն պիտի սովորի սիրել իւր նոր Հայրենիքը, ուր վիճակուել է բարի հիւրընկալութիւն գտնել, այլեւ՝ Հին սերունդի նման ջերմ սիրով եւ հաւատով պաշտել եւ օրհնել «գլխատուած հարցն մերոց», եթէ ապրել ենք կամենում իբրեւ Հայ՝ մեր ազգային, հոգեւոր դէմքի պահպանութեամբ:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
«Հայաստանեայց Եկեղեցի», յունուար, 1941

ՊԱՐՏՔԻ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐԱ ԿԱՏԱՐՈՒՄԸ

«Մառալք անպիտան եմք, գոր ինչ պարտք
էր առնել, արարաք» [Ղուկ. ԺԷ 10]:

Ա

Գերմանացի նշանաւոր փիլիսոփայ Կանտը տիեզերքի մէջ երկու բարձրագոյն գեղեցկութիւն էր տեսնում՝ աստեղագարդ երկինքը եւ մարդկային հոգու մէջ պարտքի զգացումն ու գիտակցութիւնը:

Իրաւունք ունէր մեծ մտածողը: Ի՞նչ աւելի գեղեցիկ բան, հմայիչ, խորհրդաւոր, քան աստեղագարդ երկինքը իւր բազմաթիւ փայլուն աստղերով՝ ցրուած պայծառ եւ կապոյտ երկնակամարի վերայ: Այդ գեղեցկութիւնը շատ աւելի խորանում, շատ աւելի հրաշալի է դառնում, եթէ գիտութեան բերած նորանոր փաստերով եւ իրողութիւններով աւելի ընդարձակոււմ է մեր ծանօթութիւնը աստղերի թուի, խմբակցութիւնների եւ անսահման հեռաւորութեան մասին:

Սովորական աչքի համար մի քանի հազարից աւելի չեն երեւացող աստղերը, բայց գիտական հետազոտութիւնների հետեւանքով գիտենք, որ նրանց թիւը միլիոնաւոր է, աւելի ճիշտ՝ անհամար, եւ մեզանից միլիոն մղոններով հեռու եւ անսահման տարածութեան վերայ իրենց յաւիտենական եւ կանոնաւոր ընթացքն են կատարում: Սովորական մեր հասկացողութեամբ՝ երկնքում միայն մի արեգակ կայ երկնային որոշ մարմինների խմբակցութեամբ, որոնցից մէկն է մեր երկիրը, լուսինը եւ մի քանի այլ մոլորակներ, բայց որչա՛փ արեգակնային միութիւններ եւ համաստեղութիւններ կան, որոնց մասին մենք հասկացողութիւն եւ գաղափար չունինք, այլ մասնագէտներին միայն մասամբ ծանօթ են եւ կռահելի: Արդարեւ, գեղեցիկ է, անսահման մեծ ու խորհրդաւոր աստեղագարդ երկինքը եւ շօշափելի յայտարարը բարեպաշտի համար Աստուծոյ մեծութեան. «Երկինք եւ երկիր պատմեն զփառս Աստուծոյ»:

Բայց հոգեւոր եւ բանական մարդկանց համար կայ մի երկրորդ երկինք, որ մարդկային հոգին է իւր իմացականութեամբ, իւր զգացմունքով, իւր երեւակայութեամբ, իւր յիշողութեամբ, կամքով: Սոքա էլ պակաս խորհրդաւոր չեն, պակաս հրաշալի եւ գեղեցիկ՝ մեր ներքին աշխարհի երկնակամարի աստղերը: Արտաքին տիեզերքը տեսնում, վայելում ենք նորա գեղեցկութիւնը եւ սքանչանում մեր ներքին

աշխարհի իմացականութեամբ, ուրեմն եւ՝ կարեւորագոյնը մեր հասողութեան նկատմամբ: Այդ ներքին տիեզերքի երկնակամարի ամենափայլուն աստղերից մէկը պարտքի գիտակցութիւնն է եւ նորա կոտորումը, որովհետեւ մեր կենդանութեան ծաղիկն ու պտուղն է այն, ընթացքը, բովանդակութիւնը եւ նպատակը մեր գոյութեան, մեր հոգեւոր գոյութեան:

Բ

Բայց մեծ փիլիսոփայից շատ դարեր առաջ Պաղեստինում Հանդէս էր եկել Յիսուս Նազովրեցին, որ փիլիսոփայական դպրոց չէր անցել եւ ոչ էլ էմմանուէլ Կանտի նման Հանդէս եկել իբրեւ մեծ մտածող, տրամաբան, քննադատ մարդկային բանականութեան: Բայց բիւրեղացած էր Նա՛ զտուած աստուածային սիրոյ եւ ճշմարտութեան բովի մէջ, իւր պարզ քարոզութեամբ եւ կենդանի օրինակով պատկերն էր տուել հոգու բարձրագոյն գեղեցկութեան՝ իւր աշակերտների եւ հետեւողների սրտի տախտակի վերայ իրական կեանքի ուղին, բովանդակութիւնն ու նպատակը դրոշմելով. «Մառալք անպիտան եմք, գոր ինչ պարտն էր առնել, արարաք»:

Այս պարզ նախադասութեան մէջ էր ամփոփուած մարդկային հոգու գեղեցկութեան էութիւնը, պարտքի կատարման լուսաւոր ճշմարտութիւնը: Աէր, զթութիւն, ճշմարիտ իմացականութիւն՝ հաւատոյ ջահով պայծառացած, իրար լրացնող մտքերն են այն ներքին իրականութեան, որ պարտքի կատարումն է կոչոււմ: Դրանք իրար հետ շաղկապուած, իրարից բղխած եւ իրար ամբողջացնող յատկանիշներն են լուսաւոր հոգիների, որ ծարաւ ունին դէպի կենդանութեան աղբիւրը յստակ՝ եղջերունների նման: Պարտքի գիտակցութեամբ եւ կատարմամբ է մեր կեանքը դառնում բովանդակալից, մեր անձը՝՝ եղբայրասէր, մեր աշխատանքը՝՝ մաքուր, մեր գոյութիւնը՝՝ յաւերժական նպատակների միջոց եւ գործիք՝՝ զձուծ եւ նեղ Հաշիւների, եսականութեան շնչահեղձ աշխարհից դէպի երկնային կեանքի ոլորտները բարձրացնելով:

Խնդիրը տեսութիւնը չէ, փիլիսոփայական եւ մանուածապատ բացատրութիւնները՝ բանականութեան հիմունքներով, այն էլ՝ շատ քչերին մատչելի, այլ՝ ապրումը ներքին, հաւատով ապրումը պարտքի գիտակցութեան, որ գործ եւ իրականութիւն է դարձնում այն: Պարտքի գիտակցութեամբ եւ կատարմամբ մենք Աստուծոյ գործակիցներն ենք հառնում, նորա անսահման սիրոյ եւ նախախնամութեան պաշտօնեաները: Պարտքի կատարումը գործնական քրիստոնէութիւնն է, իւրա-

ցումը աւետարանական քարոզութեան:

Գ

Հասկանալի է, որ նորա կատարումը զանազան անձանց մէջ զանազան ձեւ եւ կերպարանք, ուղղութիւն է ստանում՝ համեմատ իւրաքանչիւր անհատի կոչման, պաշտօնի, գործի, պատրաստութեան եւ ունակութեան: Աղքատ եւ գրչի տէր մարդուց չպէտք է սպասել, որ հարիւրաւոր կամ հազարաւոր դուարների զոհաբերութիւն անէ, եւ ոչ էլ հասարակ արհեստաւորից պիտի սպասենք, որ նա գրքեր գրէ, թերթ հրատարակէ, մտքերի լուսաւորութեան առաջնորդ դառնայ: Բայց եթէ ամէն մէկը իւր դիրքի եւ իւր նիւթական եւ բարոյական կարողութեան համապատասխան իւր պարտքը կատարէ, նպաստած կը լինի մարդկութեան, ազգի, Եկեղեցու եւ ընտանեկան աշխարհի կատարելութեան կառուցման մեծ գործին: Հին փիլիսոփայի խօսքի համեմատ՝ «մարդը հասարակական կենդանի է», իսկ հասարակական կեանքի հիմքն ու զարգացումը կախուած է պարտքի գիտակցութիւնից եւ կատարումից: Յաճախ գանգատի խօսքեր ենք լսում, թէ մեր հարուստները, ունեւորները իրենց պարտքը չեն կատարում դէպի Եկեղեցին, դէպի դպրոցը, ազգային կարիքները: Զլացողների մէջ գանգատը, մինչեւ իսկ պարսաւը, տեղին է երբեմն: Բայց մոռանում ենք, որ մենք էլ պարտք ունինք կատարելու, որքան եւ փոքր լինի այն. դորա կատարումն ու զանցառութիւնը նոյնչափ գնահատելի է կամ պարսաւելի, ինչպէս մեծերի նկատմամբ: Զրբերի մեծ հոսանքները կաթիլներից են բաղկացած, աղբիւրներից, վտակներից. եթէ սովորենք եւ կատարենք մեր կաթիլ պարտքերը, հանրութեան դաշտերը ոռոգող ջրերի պակասութիւն չենք զգայ: Մեղադրում ենք ժողովրդի անտարբերութիւնն ու անփութութիւնը իւր պարտքի կատարման մէջ, բայց աւելի մեծ յանցանք են գործում առաջնորդները՝ հասարակական իրենց դիրքը, միտքն ու գրիչը գործադրելով կեղծիքի եւ մոլորութեան հաստատութեան համար, անձնական կամ նեղ կուսակցական եւ «թայֆայական» հաշիւներով: Ուրիշների աչքի մէջ «չիւղ» չպիտի որոնենք՝ մեր սեպհական պակասութիւնները մոռանալով: Լաւագոյն կանոնն է՝ նախ ինքն իրեն հաշիւ տալ՝ ուրիշներին անցնելուց առաջ:

Դ

Գեղեցիկ է եւ իմաստալից աւետարանական խօսքը. «Որ ի փոքուն հաւատարիմ է, ի վերայ բազմաց կացուցից»: Կեանքը կազմուած է փոքր երեւոյթներից եւ իրողութիւններից: Նրանց կատարումից է կախուած մեծ արժէքների յաջողութիւնը: Մոզայիկ պատկերի բաղկացուցիչ մասերը գոյնզգոյն քարի կտորներ են, բայց նրանց

դասաւորութիւնը տալիս է կենդանի տեսարան կամ նկար: Որքա՞ն փոքր է մայրական աշխատանքը ըստ երեւոյթին. երեխային ժամանակին լուանալ, սնունդ տալ, քնեցնել, խօսել, քայլել սովորեցնել, նորա հետ խաղալ, զբաղեցնել... Ամէնօրեայ փոքր, չնչին գործողութիւններն են, բայց որոնց հետ է կապուած թանկագին էակի կեանքի պահպանութիւնը, առողջութիւնը, մարմնական եւ հոգեկան աճեցողութիւնը: Զարմանում ենք գիտնականների ընդարձակ ծանօթութեան եւ հմտութեան վերայ, բայց այդ գիտութիւնն ու իմաստութիւնը միանգամից չէ հաստատուած նորանց գլխի մէջ, այլ երկարատեւ եւ կարգաւորեալ աշխատանքի, մտքերի եւ ծանօթութիւնների հետզհետէ իւրացման արդիւնքն է տանեալ տարիների ընթացքում: Տունը միանգամից չի շինուում, այլ նախ տեղն է հարթուում, հիմքը փորուում, ապա հետզհետէ պատերն են բարձրանում, տանիքը ծածկուում, դռսից եւ ներսից յարդարուում՝ բնակարան դարձնելու համար: Այսպէս է եւ պարտքի կատարումը ընտանեկան, համայնական, եկեղեցական-ազգային եւ համամարդկային շրջաններում:

Ե

Սովորենք ճշտապահ լինել մեր պարտքի կատարման մէջ՝ սկսած երեխայութեան, պատանեկութեան օրերից, սովորութիւն եւ կանոն դարձնելով այն մեր ամբողջ կեանքի ընթացքում: Դաստիարակչական մեծ եւ ճշմարիտ ուղղութիւնն է այդ, որին պիտի ենթարկուին ամէն հասակի, կարգի եւ կոչման տէր մարդիկ, եթէ կամենում ենք անսայթաք լինի, գոն՝ պակաս անսայթաք լինի մեր անհատական եւ հասարակական կեանքը: Գիտակցական հասկացողութեան նպաստում է նաեւ մեքենական սովորութիւնը: Մենք առանց դժուարութեան զարթնում ենք որոշ ժամին, երբ սովորութիւն ենք դարձրել այդ ժամին զարթնելը: Սովորենք լինել ճշտապահ մեր խօսքի, մեր գործի, մեր ընթացքի մէջ. դորանով կը դիւրանայ եւ մեր պարտքի կատարումը, որ կեանքի յաջողութեան եւ բարոյական կատարելութեան ուղին է:

Աստուած օգնէ մեզ պարտքի գիտակցութեան եւ կատարման նուիրական գործի մէջ, որպէսզի մի օր, Նորան Հաշիւ տալիս, ասել կարողանանք. «Մառայք անպիտան եմք, զոր ինչ պարտն էր առնել, արարաք»:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
«Հայաստանեայց Եկեղեցի», մարտ, 1940

«ՄԻ՛ ԵՐԿԵՂԻՐ, ԲԱՅՑ ՄԻԱՅՆ ՀԱԻԱՏԱ՛»

(Թարգմանչաց տօնի առթիւ)

Ա

Այս խօսքերն ուղղեց Տէրը ժողովրդապետ Յայրոսին [Մարկ. Ե 36], որ եկել էր՝ խնդրելու Նորան իւր տունը գնալ եւ մահամերձ դստերը բժշկել: Միջանկեալ դէպքեր ուշացրել էին երթը, եւ ահա մարդիկ են գալիս տնից՝ յայտնելու, թէ աղջիկը մեռաւ, այլեւս պէտք չկայ Վարդապետին նեղութիւն տալու: Յիսուս ուղղում է նորան վերոյիշեալ խօսքերը եւ գնում է բժշկելու:

Հաւատոյ զօրութեան այս միտքը կրկնուած է Աւետարանների մէջ եւ այլ առիթներով՝ տեւատես կնոջ [Մատթ. Թ 22], երկու կոյրերի [Մատթ. Թ 29], քանանացի կնոջ դստեր [Մատթ. ԺԵ 28] բժշկութեան առիթներով: Հաւատոյ զօրութիւնը մեծ է՝ լեռներն իսկ շարժելու չափ [Մատթ. ԺԷ 19], հաւատով կատարուած աղօթքը լսելի է ըստ ամենայնի [Մատթ. ԻԱ 22], երկմտութիւնը, թերահաւատութիւնը՝ բացասական, ինչպէս Պետրոսի ընկղմիլը ծովի մէջ [Մատթ. ԺԴ 31]:

Մենք մեր հաւատացեալներին, մտաւորականներին եւ նոյնիսկ «անհաւատներին» կ'առաջնորդէինք կարգաւ այդ հատուածները, կարգաւ ոչ արտաքին բառերի հասկացողութեամբ, այլ՝ մտքի, հոլութեան: Մարդկային հոգին բարդ է, բազմակողմանի՝ նորա ըմբռնումների, պարումների ձեւերն ու կերպերը, նոցանից իւրաքանչիւրը իւր արտայայտութեան լեզուն եւ առանձնայատկութիւններն ունի: Այլ է բանաստղծութեան լեզուն եւ այլ՝ փիլիսոփայութեան, այլ են նկարչութեան միջոցներն ու արտայայտութեան ձեւերը եւ այլ՝ ճարտարապետութեան, երաժշտութեան: Օրինակով խօսենք. բանաստեղծը կնոջ աչքերը նմանեցնում է ծովի խորութեան, երկնքի մաքրութեան, կապոյտին, որ իրապէս սխալ է եւ անհամապատասխան իրականութեան: Մեր հայրերը հայ տաճարների գմբէթները անուանել են «երկնանման խորան», գոթական ճարտարապետութեան աշտարակները արուեստագէտի աչքում հոգիների թռիչքն են, սլացումը դէպի երկնայինը, վերացականն ու բնագանցականը, որ իրապէս ոչ միայն ճիշտ չէ, այլեւ անհեթեթ է: Ով երաժշտութիւնից հասկացողութիւն չունի, նորա մէջ ո՛չ լուսնի ծագումը կը տեսնի, ո՛չ ծովի ալիքների ծփանքը խաղաղ: Նուրբ, չինական անօթին, որ դողում է կարծես, երբ ձեռք ես տալիս, եւ հնչում զանգակի նման, եթէ կամենանք դարբնի մուրճով ցանկացած ձեւը տալ, կը փշրուի, կը փոշիանայ:

Այսպէս էլ կրօնական պարումները, որ բարձրագոյնն են ու նշանակալիցը, նուրբը հոգեկան պարումների մէջ, իրենց արտայայտութեան ուրոյն լեզուն ու եղանակն ունին՝ հրաշապատում, պատկերաւոր, ըստ երեւոյթին՝ ոչ իրական, բայց ըստ հոլութեան՝ ամենամեծ ճշմարտութիւններ: Ո՛հ, մի՛ մօտենաք նորան դարբնի կոշտութեամբ՝ այդ ազնիւ եւ նուրբ անօթին, որ հաւատ է կոչւում:

Բ

Առանց հաւատոյ չկայ բժշկութիւն, բարոյական բժշկութիւն ո՛չ հիւանդ անհատի, ո՛չ հիւանդ ազգի եւ ո՛չ հիւանդ մարդկութեան համար: Այս ահաւոր տիեզերակործան պատերազմը մարդկութեան հիւանդութեան հետեւանք կարելի է համարել՝ Աստուծոյ պաշտաման փոխարէն նիւթի պաշտաման անցած: Առանց հաւատի կեանքը դատարկութիւն է, յուսահատութիւն եւ մահ: Նա ծակ կարաս է՝ առանց կարող լինելու բովանդակութիւն պահել: Ինչո՞ւ են պարում. այս հարցին միայն հաւատոյ լեզուով կարելի է պատասխանել՝ հաւատոյ տարբեր, բայց ըստ հոլութեան միակ լեզուով: Ապրելու համար պէտք է հաւատանք կեանքի հոլութեան եւ նորա նպատակին: Նա մեր ձգտումն է, մեր տենչը դէպի բարձրագոյնը, մեր համոզումն է, թէ իզուր չենք պարում, թէ չպիտի կէս ճանապարհին մնանք, այլ պիտի հասնենք լուսոյ փարոսին՝ նոյնիսկ մեր ալեկոծ կեանքի փոթորիկներից յետոյ: Հաւատը անհատին, ազգութեան եւ մարդկութեան դէպի յաւիտեանականութիւն է տանում: Ով չի հաւատում յաւիտեանականութեան, նա մեռած է արդէն, մեռած է ոչ միայն մարմնով, այլ այն հոգեւոր եւ երանակէտ կեանքի համար, որ բարոյական կատարելութեան ձգտում է կոչւում. անսահման տարածութեան հորիզոնների վերայ երկնքի եւ երկրի մերձեցումը, սիրոյ համբոյրը փոխադարձաբար:

Մեր հին ձեռագիրների մէջ անյայտ մի հեղինակի բանաստեղծութիւն ունինք՝ նոյնիսկ ժողովրդական բանահիւստութեան անցած, գուցէեւ ժողովրդականից՝ գրաւորին: Մենք հրատարակել ենք այն մօտաւորապէս 45 տարի առաջ էջմիածնի «Արարատ» ամսագրի մէջ՝ առանց կրկին անդրադառնալու առիթն ունենալու, ուստի եւ մանրամասնութիւնները թռել են յիշողութիւնից, եւ միայն ընդհանուր բովանդակութիւնը մնացել: Երկնքի եւ երկրի վերջն է այն:

Երկինքը պարծենում է՝ մի առ մի թռելով իւր առաւելութիւններն ու գեղեցկութիւնները. այնտեղ են արեգակը, լուսինը, անհամար աստղերը, առաքեալների եւ սուրբերի դասերը, հրեշ-

տակները. այնտեղ է, ի վերջոյ, Աստուծոյ աթոռը: Երկիրն էլ պատշաճ պատասխաններով իւր գեղեցկութիւններն է յիշում. իւր ծոցից են բուսնում երփներանգ եւ անուշահոտ ծաղիկները, դալարագեղ, ակնապարար մարգագետինները, պտղատու ծառերն ու խորհրդաւոր անտառները, իւրն են լեռներն ու ձորերը, զովարար աղբիւրներն ու կարկաչուն վտակները, գետակներն ու գետերը, որոնք իրենց շուրջը կենդանութիւն են սփռում, ծովերն ու ովկիանոսները... Առաքեալներն ու սուրբերն էլ երկրի ծնունդ են եւ միայն իրենց գործով եւ սրբութեամբ երկինք են բարձրացել եւ հրեշտակներին խառնուել: Աստուծոյ աթոռը, ճշմարիտ է, երկնքում է, բայց պատուանդանը՝ երկրի վերայ Հաստատուած: Վերջապէս, եթէ Աստուած երկնքումն է, Նորա Որդին երկիր իջաւ, մարդկանց մէջ ապրեց, որպէսզի նրանց երկնքի ճանապարհը ցոյց տայ:

Վէճը վերջանում է Հաշտութեամբ՝ փոխադարձաբար իրար առաւելութիւններն ու գեղեցկութիւնները ընդունելով: Երկինքը խոնարհում է դէպի երկիրը, եւ երկիրը բարձրանում է դէպի երկինք իւր լեռների սպիտակափառ գագաթներով, գրկում են իրար եւ սիրոյ Համբոյրը տալիս (Հորիզոնի գծերով):

Ահա՛ պատկերաւոր կերպով կեանքի էութիւնն ու իմաստը, կատարելութեան, հոգու եւ հոգեւորի անմահութեան ուղին անհատների, ազգերի եւ մարդկութեան Համար՝ երկիրը դէպի երկինք բարձրացնել եւ իրար կապել: Հաւատով լցուած անձնաւորութիւններն են, որ աստուածամերձ են դառնում, ներշնչուած իրենց այդպիսի կոչման եւ առաքելութեան մէջ: Դրանք մեծ կրօնների Հիմնադիրներն են, մարգարէներն ու առաքեալները, տիեզերապարփակ բանաստեղծներն ու արուեստագէտները, մեծ քարոզիչները, որ, ոտքերը գետնի վերայ, բայց Հաւատով եւ սիրով լցուած, սաւառնել են երկնային ոլորտներում՝ իրենց յետեւից տանելով բազմութիւնները: Դրանք մեծ գիտնականներն են, որոնք անսահման աշխատութեամբ թափանցել են անցեալ դարերի խորքը՝ այնտեղից մարդկութեան փորձառութիւնից լոյս եւ ջերմութիւն բերելու նոր սերունդների Համար: Այդպէս են մեծ փիլիսոփաներն ու բնագէտները, որոնք, խորասուզուելով տիեզերական առեղծուածների եւ բնութեան երեւոյթների վերլուծութեան մէջ, մերձեցել են անսահման ամբիոնի եւ ժամանակի թաւալման խորհուրդներին, սքանչացել նրանց գեղեցկութեամբ եւ իմաստուն կարգաւորութեամբ եւ, վերանայով, ծունկ չոքել Աստուծոյ փառքի եւ մեծութեան առաջ՝ երկրորդ Սուրբ Գիրք տալով, որ բնութեան մեծ գիրքն է՝ Հանրամարդկային նշանակութեամբ: Ահա՛ Հաւատոյ այլեւ-

այլ երեւոյթները մարդկանց Հոգիների մէջ, Հաւատոյ անարիւն մեծ պատերազմը պատմութեան մէջ:

Գ

Այսօր Թարգմանչաց՝ Հայ լեզուի, գրականութեան, արուեստի եւ մշակոյթի մեծ վաստակաւորների յիշատակն ենք կատարում, որոնք նման դեր են կատարել Հայ ժողովրդի նկատմամբ. մեր մեծ երախտաւորների եւ լուսաւորիչների յիշատակը: Անցել են Հազարաւոր տարիներ, բայց նոքա չեն մեռնում, կենդանի են եւ կենդանի պիտի մնան, որովհետեւ ապրել են Հաւատով, գործել անմահութեան եւ անմահացնելու գաղափարով:

Ինչո՞ւ էր ս. Մեսրոպը երկրէ երկիր ընկել, ինչո՞ւ էր այս եւ այն դռները ձեռնում. որպէսզի իւր եւ իւր ազգի Համար անմահութեան դուռը բացուի: Ինչո՞ւ էր ս. Սահակը տանջւում, տքնում, գիշերուայ լոյսը ցերեկի հետ խառնում՝ Սուրբ Գիրքը Թարգմանելով. որովհետեւ Հաւատում էր անմահութեան գաղափարին իւր եւ իւր ազգի Համար: Ինչո՞ւ բարեսէր Վռամշապուհը, իւր գանձի դռները բացած, օգնութեան էր Հասնում Հայ գրի գիւտի յաջողութեան, դպրոցների բացման. որովհետեւ Հաւատում էր անմահական գանձի գոյութեան եւ լուսոյ թագաւորութեան մշտնջենաւորութեան՝ աւելի զօրաւոր՝ ազգի պահպանութեան եւ ապագայի Համար, քան արդէն ճեղքուած իւր թագաւորութիւնը: Թարգմանչաց հոյը դեգերում էր օտար երկիրները, լուսաւորութեան կեդրոնները, որպէսզի Հայրենի երկրում էլ լուսոյ ջահեր եւ ջերմութեան հնոցներ վառել կարողանան, որոնք անմար են եւ մշտնջենական՝ անմար պահելով նոյնը ժողովրդի ե՛ւ Հոգու մէջ:

Այս նոյն Հաւատով են գործել, աշխատել, աղօթել նարեկացիներն ու շնորհալիները, որոտնեցիներն ու տաթեւացիները եւ նոյն գաղափարի Համար բազմաթիւ գործողները, որոնց դէմքերը նկարուած են Հայ պատմութեան երկնակամարի վերայ, լուսաւոր աստղերի վերայ:

Բայց անմահ են ոչ միայն մեծ հոգիները, այլեւ իւրաքանչիւր հոգի, որ Հաւատում է իւր կոչմանը՝ Համեստ շրջանակի մէջ անգամ: Կենդանարար աղբիւրներն ու կարկաչուն վտակները, գետակներն ու գետերը, որոնք Հոսում են իրենց հովիտներով եւ առատութիւն եւ կենդանութիւն պարգեւում իրենց ամբիոնի, կաթիլներից են բաղկացած: Ապա ուրեմն, ամէնքն իրենց տեղն ունին ըստ չափու եւ կարողութեան: Ժողովուրդն է կենդանի ծառի արմատն ու բունը, որ ծաղիկներ եւ պտուղ է տալիս:

ՅԻՍՈՒՍԻ ԼՈՒՍԱԻՈՐ ԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

«Եւ չիք այլով իւր փրկութիւն, զի եւ ոչ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ, որով արժան իցէ կեալ մեզ» [Գործ. Դ 12]:

Հաւատա՛, Հայ ժողովուրդ, Հաւատա՛ քո անցեալին, քո պատմութեան, քո Հայրերի Աստծուն, նրանց անմահ եւ կենդանի հոգւն, եւ դու չես մեռնի: Տե՛ս, կոյրերը բժշկուած են Հաւատով, անդամալոյժները քայլում, մեռելներն իսկ յարութիւն առնում: Հաւատա՛, թէ պիտի ապրիս, եւ այդ Հաւատով գործիր, աշխատի՛ր, տքնի՛ր, յուսա՛... եւ դու չես մեռնի: Լեզուի, կրօնի, գրականութեան, արուեստի, մշակոյթի պահպանութիւնն ու պաշտամունքը գիտակցական, կենդանութեան աղբիւրն է եւ հիւանդութեան՝ մահ պատճառող հիւանդութեան դեղն ու դարմանը:

«Մի՛ երկնչիր, բայց միայն Հաւատա՛»:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

«Հայաստանեայց Եկեղեցի», րոկտեմբեր, 1942

Ա

Ներկայ ժամանակը լի է Հակասութիւններով Յիսուսի մասին եղած կարծիքների նկատմամբ: Ոչ միայն Նորա արժէքը ստորացնողներ կան՝ որպէս քիչ նորութիւն բերող, ինչպէս հրեաներն են, այլեւ՝ պատմական գոյութիւնը ժխտող, ինչպէս հին եւ նոր Հակակրօնականները եւ անաստուածեանները:

Ճշմարիտ է, որ մենք պատմական տեղեկութիւններ, ժամանակակից աղբիւրներ Նորա կեանքի եւ գործունէութեան մասին չունինք ներկայ Հասկացողութեամբ: Ժամանակով Նորան մօտ օտար պատմիչների՝ Հրեայ Յովսեփոսի եւ լատին Սուետոնի եւ Տակիտոսի երկերի մէջ եղած Համառօտ տեղեկութիւնները ներմուծում են ընդունուած գիտնականներից ոմանց կողմից, թէպէտ դեռեւս վիճելի են վերջին երկուսի մասին պնդումները: Բայց մենք պէտք չունինք օտար աղբիւրների դիմել՝ Նորա պատմական գոյութիւնը Հաստատելու Համար: Գործի եւ անձի, երեւոյթի եւ պատճառի տրամաբանական հետեւողութիւնը բաւական է մեզ՝ անհիմն Համարելու ամենայն մի ժխտում Նորա գոյութեան մասին: Չկար քրիստոնէութիւն եւ յանկարծ երեւան է գալիս պատմութեան մէջ. կայ պտուղը, պէտք է լինի եւ ծառը՝ անհերքելի ապացոյցը Նորա պատմական գոյութեան:

Ճշմարիտ է նաեւ, որ մեր Աւետարանները պատմական աղբիւրներ չեն ներկայ Հասկացողութեամբ. նոքա գրուած են վարդապետելու եւ դէպի Յիսուսի գործն ու անձը Հաւատ ներշնչելու նպատակով: Եղել են գիտնականներ, որոնք ժխտել են նրանց պատմական արժէքը: Սակայն ոչ մի գրական երկ չէ ենթարկուել այնպիսի մանրազնին քննութեան, այն էլ՝ մի քանի սերունդի գիտնականների կողմից, ինչպէս Աւետարանները: Եւ արդիւնքը եղել է այն, որ Հաստատուած է, թէ նոքա, ներկայ Հասկացողութեամբ պատմական չլինելով Հանդերձ, զուրկ չեն պատմական արժէքից իրենց էութեամբ, թողում ասել, որ Պողոսի վկայութիւններն ունինք՝ Հնագոյնները ոչ ուշ, քան



Բ

Բայց Աւետարանների մէջ էլ Նորա երեսնամեայ կեանքի շրջանին մասին գրեթէ տեղեկութիւն չունինք, այլ՝ փրկչական գործունէութեան կարճ ժամանակի մասին. մի հանգամանք, որ առիթ է տուել Հնագոյն ժամանակներում բազմատեսակ «Մանկութեան աւետարաններ» ստեղծել առասպելական բովանդակութեամբ, իսկ նորատարաններ՝ Նորա կրթութիւնը եգիպտոսի կամ վարդապետութիւնը արեւելեան կրօնների հետ կապելով: Սակայն այդ կարճատեւ փրկչական գործունէութիւնը՝ ընդամէնը երեք տարի եւ երեք ամիս, որ արտացոլում է Աւետարանների մէջ, այնքան հարուստ է, բովանդակալից, որ լիովին բաւական է՝ թափանցելու Նորա լուսաւորութեան եւ վարդապետութեան մէջ եւ ջրելու սնամէջ ամէն տեսակ ենթադրութիւններ:

Նորա վարդապետութիւնն ու կրօնական հայեացքները նման չեն ո՛չ պղատոնական փիլիսոփայութեան, որ այդ ժամանակ իշխող էր Աղեքսանդրիայում, մանաւանդ՝ նոր-պղատոնականութիւնը, ուրեմն եւ՝ եգիպտոսի հետ կապուելու ոչ մի հիմք. ո՛չ բուդդայականութեան, որի նմանութիւնները պատահական են, արտաքին. եւ ո՛չ բուն հրէութեան ժամանակակից դպրոցներին կամ քաղաքական կուսակցութիւնների հասկացողութիւններին:

Խնդրի պարզաբանութեան համար բաւական է ամենաթեթեւ համեմատութիւն կատարել Յիսուսի եւ Պողոսի անձերի եւ վարդապետելու եղանակների մէջ. Պողոսը փարիսեցի էր եւ ժամանակի նշանաւոր Գամաղիէլի աշակերտ, հետեւող պղատոնականութեան այլաբանական մեկնութեան, գիտէր յունարէն եւ գրում էր նոյն լեզուով, իսկ Յիսուսի մէջ դրանց հետքը չենք տեսնում: Նորա վարդապետութիւնը գրեթէ ուսած փիլիսոփայութիւն չէ, այլ՝ կենդանի անձից բղիթած կենդանարար աղբիւր: Իսրայէլի կրօնի լաւագոյն կողմերն իսկ՝ Տասնաբանեայ պատգամները Լերան քարոյի մէջ, համեմատութեան եզրեր են միայն՝ Իւր բարձրագոյն մտքերը հասկանալի դարձնելու՝ չժխտելով նրանց արժէքը: Բուդդայականութեան սիրոյ գաղափարի նմանութիւնն էլ արտաքին է, տարբեր իր մերձեցումներով. մի տեղ՝ յուստեսական, կեանքի ժխտման հետ կապուած, իսկ միւրը՝ անվերապահ անձուրիութեան, վստահութեան եւ հաւատոյ

Գ

Ինչպէ՞ս պէտք է հասկանալ ապա Յիսուսի անձնաւորութիւնը եւ վարդապետութեան առեղծուածը: Եթէ քիմիկոսի աչքով եւ մեթոդով կը մօտենանք խնդրին եւ նորա լուծման, իզուր կը լինի մեր աշխատանքը: Պատմական մեծ անձնաւորութիւններն ու նորանց գործը չեն ենթարկում բաղկացուցիչ մասերի վերլուծութեան, ինչպէս նիւթը, օդն ու ջուրը: Որքան եւ խորանանք գիտութեան բերած միջոցներով եւ քննութեան եղանակներով իրերի եւ երեւոյթների էութեան մէջ եւ աշխատենք գտնել նրանց ծագման գաղտնիքները, աւելի կը պարզուի, որ մեր գիտութիւնը սահմանաւոր է, եւ մեր չգիտցածն՝ աւելի մեծ: Այս առաւել ճշմարիտ է հոգեկան մեծ հանճարների ներքին կեանքի եւ ստեղծագործութեան համար: Զայնի եւ լսողական բանախօսական, եւ արտաքին օրէնքներով հասկանալի չէ մեզ համար երբէք, թէ ինչպէս է ստեղծուել Բեթհոլեմի հոգու մէջ նորա իններորդ սիմֆոնիան: Այդ խորհուրդ է, գաղտնիք, երկնային շնորհք, որ չի ենթարկուած մեր զգայարանքների եւ բանականութեան վերլուծական կարողութեան իւր ամբողջութեամբ:

Այսպէս «խորհուրդ» է եւ «սքանչելիք» բարձրագոյն մտքով եւ Յիսուսի անձնաւորութիւնը պատմութեան մէջ, որքան եւ, պատմական հողի վերայ կանգնած, թափանցել աշխատենք Նորա անձի, վարդապետութեան եւ կեանքի մէջ: Այդ խորհուրդն ու սքանչելիքը Նորա կրօնն է, յարաբերութիւնը Իւր Հայր Աստուծոյ հետ. հոգեկան ամենաբարձր ապրում՝ բոլոր տեսակի հանճարների, արուեստագէտների ապրումների համեմատութեամբ, ուստի եւ Նորա բերածը՝ ամենամեծ բարիքը մարդկութեան համար:

Քրիստոնէական կրօնը ամենամեծ բարիքը համարելով պատմութեան մէջ՝ բայց նա ամէն ինչ չէ. սխալ չհասկանանք: Նա իւր որոշ կեանքի, գիտութեան, տիխնիկայի, տիեզերքի հետ կապուած բոլոր հարցերի պատասխանը քրիստոնէական կրօնի կամ Աւետարանի մէջ որոնել եւ այնտեղից լուծուծն սպասել՝ կը լինի սխալ, միակողմանի, մինչեւ իսկ ծիծաղելի: Նա քաղաքական, տնտեսական, բնագիտական եւ նման խնդիրներով չէ զբաղուած, նորա գործունէութեան նպատակը աւելի բարձր է՝ մարդը իւր ներքին աշխարհով, հոգեկան շարժումների, ձգտումների եւ յառաջագիմութեան մէջ՝ կեանքին եւ պատմութեան

բովանդակութիւն եւ իմաստ բերող: Նա աղբիւրն է՝ որոնելու եւ գտնելու յաւիտենականը անցաւոր ժամանակի մէջ:

Այսպէս էր Յիսուսի բերած կրօնը՝ Իւր կեանքի օրինակով եւ վարդապետութեամբ: Նա ապրում էր Իւր Աստուծոյ հետ եւ Իւր Աստուծոյ համար՝ հնազանդ Նորա կամքին եւ ամէն ինչ ենթակայ այս գաղափարին: Եւ այդ Աստուածը Նորա երկնաւոր Հայրն է, Որի սիրոյ, գթութեան եւ ողորմութեան խնամքի տակ ապրում են բոլոր սրբայրք, գթութեան եւ ողորմութեան խնամքի տակ ապրում են բոլոր արարածները, նոյնիսկ դաշտերի ծաղիկներն ու երկնքի թռչունները: Բայց ամենից թանկը մարդն է, մարդկային հոգին՝ այն թանկագին մարգարիտը, որի համեմատութեամբ երկրորդական է ամենայն ինչ: Հօր անսահման սիրոյ եւ գթութեան առարկան է այն, որ լուսաբանում է բազմաթիւ առականերով եւ յատկապէս՝ Անառակ որդու պատմութեամբ: Իրաւական կարգաւորութեան փոխարէն անձնուիրութեան, սիրոյ եւ եղբայրութեան օրէնքն է քարոզում եւ մարմնաւորում Իւր օրինակով: Սիրոյ գաղափարը՝ առ Աստուած հաւատոյ եւ անվերապահ վստահութեան հետ, երկինքը եւ երկիրը իրար կապող զօրութիւնն է մարդկային հոգու մէջ՝ կրօնն ու բարոյականութիւնը սերտ զօդելով, որ բարձրագոյն արտայայտութիւնն է պատմութեան մէջ:

Դ

Ինչպէս կապոյտ եւ ջինջ երկինքը զարդարուած է բազմաթիւ եւ պայծառ աստղերով, մարդկութեան հոգու զարգացման պատմութիւնն էլ զարդարուած է մեծ մտածողների, հանճարների, արուեստագէտների դէմքերով՝ իւրաքաչիւրը տաղանդով, իրեն յատուկ կողմերով գեղեցիկ եւ հմայիչ: Նրանց մէջ էլ մեծ ու փոքր աստիճանաւորութիւն կայ՝ առաքելի խօսքի համաձայն. «Աստղ քան զաստղ առաւել է փառօք»: Սակայն կայ բացառիկ մեծը, անհամեմատելին՝ «յերեւիլ արեգական կորնչին աստեղք», որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անձնաւորութիւնն է, Նորա բերած փրկութեան աւետիքը, ճանապարհը ճշմարտութեան:

Մենք յարգում ենք յիշատակը, երախտագէտ ենք ազգի եւ մարդկութեան մեծ բարերարների հանդէպ, բայց պաշտում ենք, պաշտում ենք հոգով միայն Յիսուս Քրիստոսին, Որի մէջ Բանի եւ Աստուծոյ մարմնաւորումն ենք տեսնում, հոգիների իսկական Առաջնորդը: Նա էր, որ բաց արաւ մեր աչքերը՝ տեսնելու մարդկային հոգու անսահման արժէքը, թափանցելու մեր խորքը, որ կոչուած է Աստուծոյ արքայութեան վայր լինելու, տաճար եւ բնակարան երկնա-

ւոր Հօր՝ առանց ազգի, սեռի եւ գոյնի խտրութեան:

Ինչպէ՛ս մեծ ես Դու, ի՛մ Տէր, ինչպէ՛ս Հարուստ Հոգւով, որ աղքատ էիր եւ տեղ չունէիր՝ Քո սուրբ գլուխը հանգչեցնելու, բայց մարդկութեան անգնահատելի գանձ պարգեւեցիր Հազարաւոր տարիների համար:

Օրհնեա՛լ լինի Քո ծնունդը եւ Քո անունը յաւիտեանս յաւիտենից:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
«Կոչնակ», 7 յունուար, 1939 Նիւ Եորք



ԿԵԱՆՔԻ ԲԱՆԱԼԻՆ

«Հաւատք սիրով աքողեալք» [Գաղատ. Ե 6]:

Ա

Մարդկային կեանքը Հոսանուտ է եւ անցաւոր: Մեր աչքի առաջ ծնւում է երեխան, կատարելութեան հասակը թեւակոխում եւ ապա անհետ խորասուզւում մահուան ծովի անյատակ խորութեան մէջ: Այս է կեանքի արտաքին տպաւորութիւնը: Եւ այսպէս է ոչ միայն անհատի, այլեւ ազգերի համար: Ո՞ւր են հին աշխարհի թագաւորներն ու աշխարհակալները, որոնց ձիու սմբակների տակ կանաչ արտերն ու մարգագետինները փշալից անապատ էին դառնում: Ո՞ւր է գեղեցիկ Յունաստանը՝ արուեստի եւ բանաստեղծութեան չքնաղ հայրենիքը, ո՞ւր աշխարհի տէր Հուոմը՝ իւր տիեզերակալ կայսրերով եւ զօրապետներով, անմահ ճոխութեամբ եւ հարստութեամբ: Անցել են: Անցել են Աթէնքի գեղեցիկ կոյսերը, որոնք Աթենասի եւ Աստղիկի գաղափարն են տուել յոյն արուեստին: Անցել են Հուոմի պերճ եւ ազնուաշուք պատրիկները՝ կեանքի վայելքները ճաշակող եպիկուրեան հանճարով եւ ճոխութեամբ: Մենք կարող ենք աւելի հեռուները սաւառնել. նոր պեղումների եւ ուսումնասիրութիւնների շնորհիւ ընդարձակուել է մեր հայեացքը դէպի պատմութեան խորին անցեալը, անհունութեան եւ անորոշութեան սահմաններից տեսանելի են դարձել արդէն հին եգիպտացիների, ասորեստացիների, հետիտների, բաբելացիների եւ պարսիկների կեանքն իրենց արուեստի, քաղաքակրթութեան եւ գիտութեան բարձր զարգացմամբ, աշխարհակալական ձգտումներով եւ նուաճումներով: Անցել են սրանք՝ Եգիպտոսի փարաւոններն ու Ասորեստանի հզօր արքաները իրենց շքեղ եւ զարմանալի պալատներով ու տաճարներով: Ի՞նչ է մարդկային կեանքը յաւիտենականութեան մէջ՝ քամուց պոկուած աշնանային մի տերեւ կամ արեւի ճառագայթների առաջ չքացող մի կաթիլ ցօղ: Անցաւոր են փառքը, հարստութիւնը, արտաքին զօրութիւնը, վայելքը եւ ամենայն ինչ ահաւոր ժամանակի տեւողութեան մէջ:

Եւ այս անցաւորութեան եւ դաժան մահուան գաղափարը կը լինէր յաղթական, տիեզերքի վերայ իշխող, մարդկութիւնը իւր կեանքի վերջ կը դնէր յուսահատութեամբ, եթէ նորա սրտի խորքում հաստատուած չլինէր մի ուրիշ հակոտնեայ զգացում՝ անյազ ծարաւ դէպի վսեմը, դէպի գաղափարական աշխարհը, յաւիտենական անծա-

նօթը, որից կենդանութեան աղբիւրն է բղխում՝ հաւատ առ Աստուած, բարին, ճշմարիտը եւ գեղեցիկը: Այս հաւատն ու զգացումն է, որի շուրջն է պտտում տիեզերական եւ անհատական պատմութիւնը իւր շուրջն է պտտում տիեզերական եւ անհատական պատմութիւնը: Լաւագոյն տեսչերով եւ իղձերով, հոգեւոր ազնիւ պտուղներով: Հաննք այդ երակը, եւ ահա կեանքն ու պատմութիւնը կը դառնան աննպատակ եւ անհասկանալի, ճիւղաղական մի զօրութիւն, որ կոչուած է միայն՝ իւր ծնունդներին անողոք կերպով տանջելու եւ ոչնչացնելու:

Բ

Մարդկային հոգուն յատուկ է թափանցել կեանքի խորհուրդների մէջ: Իսկ կեանքը բանականութեան համար անապատի աւազների մէջ թաղուած մի լուռ սփինքս է: Պէտք է գտնել այդ գաղտնիքը: Մեր միտքը թռիչքներ է գործում՝ ըմբռնելու գոյութեան սկիզբն ու նպատակը, տիեզերքը իւր արտաքուստ անողոք, ոչինչ չխոստացող, մեքենական օրէնքներով, որի մի մասնիկն ենք կազմում եւ մենք: Դժուար է որոնման այդ ուղին, բայց յատուկ՝ բոլոր մտածող, զգացող էակներին: Ի՞նչ է կեանքը: Ինչո՞ւ ենք ծնուել: Աւելի բանաւոր չէ՞ ինքնասպանութիւնը: Ի՞նչ է բարին եւ չարը, մեղքն ու արդարութիւնը, ճշմարտութիւնը: Ինչո՞ւ պէտք է խեղդենք մեր մէջ սեական եւ անձնական վայելքի, շահասիրութեան շարժառիթները. աւելի բնական չէ՞, որ հզօրը իւր գազանական բնազդներով ոչնչացնէ իրենից թոյլերին. ինչո՞ւ մեր ազնիւ եսը, խիղճը բողբոջում է դորա դէմ: Ահա մտքեր ու հարցեր, որ զարթնում են մտածող մարդու հոգու խորքերից եւ իրենց պատասխանն են կամենում լսել:

Կենդանարար այն լոյսն ու ջերմութիւնը, որ փարատում է մեր հոգու վերայ նստած մէզն ու մառախուղը, այն բանալին, որ լուծում է կեանքի առեղծուածը, նպատակ եւ բովանդակութիւն տալիս նորան, հաւատն է: Առանց հաւատի գիտութիւնն անկարող է մեր հոգու ձգտումներին եւ տեսչերին բանականութիւն տալ, լուծել կեանքի նպատակը: Նա միայն առարկայական քննութեան հետ գործ ունի, նա ընդարձակում է մեր ծանօթութիւնները, միջոցներ տալիս՝ բնութեան շատ երեւոյթների վերայ իշխելու կամ մեր օգտին գործադրելու: Նա լուսաբանում է մեր կենդանական կեանքը, պարզում որոշ չափով նորա կապը հոգեկան կարողութիւնների եւ երեւոյթների հետ՝ առանց մազի չափ անգամ պակասեցնելու կեանքի խորհրդաւորութեան գաղտնիքը, մահուան եւ անցաւորութեան անողոք գաղափարի յուսահատական իրողութիւնը: Ի՞նչ է կեանքը՝ քամուց պոկուած մի տերեւ, արեւի ճառագայթներից չքացող մի կաթիլ ցօղ:

ՎՃՏԻ ԵՒ ՏԱՌԱՊԱՆՔԻ
ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ
ԱՆՀԱՏՆԵՐԻ ԵՒ ԱԶԳԵՐԻ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ

գիտենք, որ կեանքի արտաքին տպաւորութիւնը անցաւորութիւնն է եւ մահը, եւ մենք ճշդութեամբ ենք մեքենական անողոք օրէնքների տակ, սակայն մեր հոգու մէջ Աստուծոյ ճառագայթած հաւատն ու սէրը այդ անցաւորութիւնը յաւիտենականութեան են փոխարկում, մահուան տագնապը՝ երջանկութեան եւ սքանչացման: Մեր գլխին այլեւս ճակատագրական դամոկլիան սուրը չի կախուած, այլ՝ երկնաւոր Հօր գթութեան եւ սիրոյ հովանին: Կեանքի փոթորիկների եւ ալեկոծութեան մէջ մեր նաւահանգիստն ունինք՝ տառապանքների համար մխիթարութեան մի աղբիւր:

Մեզ շրջապատող մթութեան եւ խաւարի մէջ Փրկչի անձնաւորութիւնն էլ նոյն ճշմարտութիւնն է քարոզում՝ հաւատոյ եւ սիրոյ լապտերը ձեռքին: Դէպի վեր՝ դէպի մեր աւագ եղբայրը եւ մեր Աստուծոյ Որդին: Վտանգաւոր է ճանապարհը՝ անդունդների եւ ծերպերի վերայով, բայց՝ դէպի վեր, որովհետեւ մեր Տէրն էլ այդ ճանապարհով է անցել, իսկ այդ ճանապարհը կեանքի եւ փրկութեան ճանապարհն է մահուան զօրութեան ճիրաններից: Նորա կեանքի բանալին եւս հաւատն ու սէրն էր դէպի Աստուած, որ օրհնութիւն դարձաւ մարդկութեան համար: Ի՞նչ կեանք կարող է փոխարինել Նորան: Ա՛խ, եթէ մեր սրտերի մէջ եւս գէթ մի նշոյլ կաթէր այն հաւատոյ եւ սիրոյ ճառագայթներից, որ մեր Տիրոջ ուղին լուսաւորեցին:

«Արարատ», մայիս-յունիս, 1908

Ա

Կեանքը միայն ուրախութիւն չէ, վայելք, յաջողութիւն, այլեւ՝ վիշտ, տառապանք, ճախորդութիւն եւ դժուարութիւն: Մեր կեանքի ճանապարհին միշտ վարդեր չեն փռուած, այլեւ՝ փշեր, մացառներ, քարեր, որ յաճախ արիւնոտում են ոտքերն ու ձեռքերը: Կեանքի մակերեսային ըմբռնումն է՝ այն համարել միայն վայելք, բախտաւորութիւն ու յաջողութիւն:

Կեանքը, իբրեւ երեւոյթ, բարդ է, բազմակողմանի իւր դրական եւ բացասական կամ բացասական համարուած կողմերով: Մեզ շնորհուած խելքով, փորձառութեամբ, իհարկէ, որոշ չափով կարող ենք կարգաւորել այն, որոշ չափով խուսափել բացասական եւ դժուարութիւնների հետ կապուած վիճակներից, բայց որոշ չափը փոքրագոյն մասն է մեր կեանքի, իսկ մեծագոյնը պատահմունքի, շրջապատի, անակընկալ երեւոյթների եւ պայմանների հետ է կապուած: Գիտենք անցեալը, տեսնում ենք ներկան, իսկ ապագան թաղուած է անյայտութեան խաւարի մէջ:

Որքան եւ մեզ համար պարզ են ընդհանուր առմամբ կեանքի դրական եւ բացասական կողմերը, բայց յաճախ սխալուած ենք նաեւ կողմից: Արդեօք ո՞վ է բախտաւորը՝ հարո՞ւստը, որ հնարաւորութիւն ունի կեանքի արտաքին դիւրութիւնները վայելելու, հնարաւորութիւն եւ միջոց ունի իւր քմահաճոյքներն իսկ կամ անարդար ցանկութիւնները կատարելու եւ իրագործելու, թէ՞ արտաքուստ մի աղքատ, որ հազիւ իւր օրական պարէնն է հայթայթում: Չատ անգամ մի բախտաւոր, հարուստ երեւցածը թշուառ գիտենք: Շատ անգամ մի բախտաւոր, հարուստ երեւցածը թշուառականի մէկն է, որի հոգու մէջ ով գիտէ ինչպիսի գիշակերներ են նստած եւ յօշոտում են նորա ներքին էութիւնը: Ի՞նչ են հարստութիւնն ու գանձը, եթէ մեր մարմինը քայքայուել է յարստեւ ախտերով, սպառուել մեր ապրելու կարողութիւնը՝ գալարուելով դժոխային ցաւերի մէջ՝ երբեմն նոյնիսկ հետեւանք մեր գանձի եւ հարստութեան, որ հնարաւորութիւն է տուել սանձարձակ դառնալու կեանքի այլեայլ ոլորտներում: Համեմատեցէ՛ք այդպիսի մէկը մի աղքատի հետ՝ հոգևով եւ մարմնով առողջ, զուարթ, իւր վիճակից գոհ անձի հետ: Ո՞րն է

նրանցից բախտաւորը: Ապա ուրեմն, մեր սովորական Հասկացողութիւնները կեանքի դրական եւ բացասական կողմերի մասին յաճախ անստոյգ են, անորոշ, արտաքին երեւոյթներից դատելով:

Կեանքի մաս են Հաւասարապէս նորա դրական եւ բացասական Համարուած երեւոյթները. նոքա բարիք են եւ չարիք՝ Համեմատ մեր վերաբերմունքին եւ օգտագործման: Իհարկէ, վշտի, տառապանքի, սովի, հիւանդութեան եւ այլնի ենթարկուիլ՝ ծանր եւ դժուար կացութիւն է, շատ անգամ՝ կործանման պատճառ, բայց ոչ միշտ: Յաճախ նա պատճառն է, առիթը բարձրագոյն ապրումների, առիթը վերածնութեան եւ մի նոր կեանքի, աւելի բարձր կեանքի սկզբնաւորութեան անհատների, ինչպէս եւ ազգերի կեանքի մէջ: Այս տեսակէտով էլ կամենում ենք վերլուծութեան ենթարկել անհատական եւ ազգային կեանքի նման երեւոյթները, որպէսզի սովորենք եւ Հասկանանք նրանց վերայ նայել ոչ միայն բացասական, այլեւ՝ դրական կողմից: Տառապանքներն ու աղէտները շատ անգամ կեանքի իսկական դպրոցներ են, դաստիարակութեան, Հասուն եւ դրական փորձառութեան եւ տոկունութեան Հասնելու միջոցներ: Մենք բազմաթիւ փաստեր եւ օրինակներ կարող ենք բերել՝ այդ ճշմարտութիւնը Հաստատելու եւ մեր ընթերցողներին պարզելու Համար թէ՛ անհատների եւ թէ՛ ազգերի կեանքից:

Բ

Հիւանդութիւնը մեր կեանքի բացասական երեւոյթներից մէկն է. անհատը տանջուած է հիւանդութիւնից, Ֆիզիքապէս թուլանում, յաճախ էլ մահ է պատճառուում նորան: Բայց ամէն հիւանդութիւն էլ «ի մահ». նա էլ ունի իւր դրական կողմերը, նա միայն չարիք է: Մարդկային բնութեան յատուկ է երկու տարբեր կացութիւն: Առողջ մարդկանցից շատերը ընդունակ չեն կամ չեն կարող Հասկանալ հիւանդի վիճակը. ով քաղցած է եղել կեանքի մէջ, չի կարող զգալ, թէ ինչպիսի՛ քաղցր զգացում է յագեցման ըստէն, եւ տանջանք՝ նորա պարբերական կամ յարատեւ գոյութիւնը: Ով աղքատ է եղել, կարիքի մէջ, նա չի կարող լիովին ըմբռնել աղքատի կամ աղքատ դասակարգի վիճակը: Ով գաղափար չունի մարդկային թշուառութեան մասին՝ նիւթական թէ բարոյական, դժուար թէ նորա Հոգու մէջ շարժուի խորը կարեկցութեան, օգնութեան եւ եղբորը սիրելու բարձր զգացումը. «թշուառին թշուառն է կարեկից», - ասել է բանաստեղծը: Մեր կամ ուրիշների փորձառութիւնն ու կեանքը նպաստում են մեզ՝ աւելի իրական Հասկացողութիւն եւ գաղափար կազմելու երեւոյթների

մասին: Հիւանդութիւնը յաճախ ոչ միայն չարիք է, այլ՝ Հոգու զօրացման, բարձր ապրումների պատճառ:

Մտողները նկատած կը լինեն, որ երբեմն ստահակ, կոպիտ եւ վատ Հակումներ ցոյց տուող երեխաներ հիւանդութեան դէպքում նկատելի փոփոխութիւն եւ քնքշութիւն են ցոյց տալիս. Համբուրում են մօրը, շոյում Հարազատներին՝ խոստանալով այլեւս չարութիւն չանել, խելօք եւ Հնազանդ լինել, չնեղացնել մերձաւորներին:

Բայց ոչ միայն երեխաները, այլեւ Հասուն մարդիկ չարատանջ հիւանդութիւնների ժամանակ այդպիսի փոփոխութիւն են կրում. նրանց զգացմունքներն աւելի նրբանում են, մաքրում եւ յաճախ նաեւ վերստին ծննդեան առիթ դառնում: Պօղոս առաքեալը՝ մէկը պատմութեան մեծ մարդկանցից եւ Քրիստոսի աշակերտներից, Հօր ե՛ւ իւր կամքով, ե՛ւ գաղափարների մէջ, գրում է իւր մասին. «Զի զօրութիւն իմ ի տկարութեան կատարի»: Ռուս մեծ գրողը Գոգոլ իւր կեանքի վերջին օրերի նամակների մէջ խոստովանում է իւր այդպիսի վիպասանն ու փիլիսոփան՝ Լեւ Տոլստոյը, իւր Հոգեկան այդպիսի վիպասանն ու փիլիսոփան՝ Լեւ Տոլստոյը, իւր Հոգեկան այդպիսի ապրումների մասին: Նա մահունից տարիներ առաջ մահամերձ հիւանդացաւ, բայց առողջանալուց յետոյ յատուկ գրքոյով նկարագրեց իւր Հոգեկան վիճակն ու ապրումները, թէ՛ մարմնական ուժերի թուլանալով՝ զօրանում էր Հոգին, եւ մարմնի զօրանալու Հետ՝ նուազում այդ զգացումը: Այդ հիւանդութեան ժամանակ էր, որ նորա Հոգին գտուած, կատարելապէս իւր Աստուծոյ Հետ էր եւ կրօնական բարձր ապրումներից մէկն ունեցաւ:

Վշտի զգացումներից մէկն է Հարազատի կորուստը: Ծանր է թանկագին անձի մահը, սակայն այս խորին վշտի մէջ իսկ կայ մի վսեմութիւն: Գալարուած է մեր սիրտը նորա Համար, կը կամենայինք մեր կեանքը նորան տալ, եթէ բանար աչքերը: Առանձնութեան մէջ վերանում է մեր Հոգին դէպի երկնային եթերները՝ որոնելու նորա երանաւէտ կայանը. խորասուզուած ենք թանկագին յիշողութիւնների մէջ, Հոգեպէս ապրում նորա ներկայութիւնը՝ սրբազան կարօտով լցուած դէպի նորա անձը: Խորին վիշտը մաքրում է մարդկային Հոգին, կտրում կապերը այս անցաւոր աշխարհից. նուրբ եւ սրբազան լըջութեան եւ տիրութեան շղարչ է նստում որդեկորոյս մօր դէմքին, ակնածութեան ու յարգանքի զգացումով լցնում մեր սիրտը դէպի նա: Որպիսի՛ Հոգեկան մեծութիւն է՝ ապրել սեպհական վշտի Հետ՝ առանց Հաղորդակից անելու նոյնիսկ ուրիշին, առանձնական իւր

արշաւանքների եւ Հարուածների տակ: Ճղակոտոր ենք եղել յաճախ, բայց ոչ՝ արմատախիլ եւ, որ կարեւորն է, այդպիսի արտաքոյ կարգի ղեկարութիւնների մէջ մնացել ենք յուսալից, ստեղծագործող, տոկուն, գեղարուեստական կենդանի զգացմունքով եւ շինարար ժողովուրդ: Անցել ենք «ընդ հուր եւ ընդ ջուր», բայց մնացել ենք անկէզ եւ ազատուել ահեղ յորձանքներից: Ամէն ժողովրդի չի վիճակուած այդպիսի յատկութիւն, որ մեծ առաւելութիւն է նկարագրի:

Ապրինք հաւատով՝ աչքներս ուղղած դէպի լուսաւոր հորիզոնները:

ՔԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
«Հայաստանեայց Եկեղեցի», 7 ապրիլ, 1942

Ա

Ո՛չ Եկեղեցու ծագումը եւ ո՛չ նորա իսկական նպատակը անմիջական կապ ունին գիտութեան հետ: Քրիստոս փիլիսոփայ չէր եւ ոչ՝ որեւէ գիտնական դպրոցի հիմնադիր: Նա եկել էր՝ մարդկութեան Փրկիչը լինելու զուտ կրօնական-բարոյական տեսակէտով: Քրիստոնէութեան գործունէութեան հիմնաքարը Յիսուսի գործն ու անձնաւորութիւնն է եւ հաւատացեալների դէպի Նա ունեցած հաւատը: Եկեղեցու հաստատութեան մեծ շէնքը այս հաւատի վերայ է կանգնած իւր ծագման օրերից մինչեւ այժմ:

Քրիստոնէութիւնը կրօն էր, իսկ կրօնը ո՛չ գիտութիւն է եւ ո՛չ արուեստ. բայց բնական էր, որ հետզհետէ քրիստոնէական գիտութիւնն ու արուեստը ծագէին: Քրիստոնէութիւնը հաստատուել եւ կեանք է ստացել պատմութեան մէջ, շփուել յունա-հռոմէական քաղաքակրթութեան հետ, իւրացրել կամ լուսարանել է հին քաղաքակրթութեան այլեւայլ տարրերը, իւր համար նոր աշխարհայեցողութիւն կամ փիլիսոփայութիւն ստեղծել. այս զարգացման բնական հետեւանքն էր քրիստոնէական գիտութեան ծագումը: Քրիստոնէութեան մէջ միշտ էականը կրօնական հաւատն է եղել՝ միացած անարատ բարոյականութեան հետ, բայց գիտութիւնն ու արուեստն էլ՝ միշտ յարգելի դաշնակիցներ համարուել նորա զարգացման լաւագոյն շրջաններում:

Քրիստոնէութիւն եւ գիտութիւն տարբեր են միմեանցից, բայց նոքա հակադրութիւններ չեն: Աւետարանի ազատ ոգին ամենեւին դէմ չէ գիտութեան. ընդհակառակը՝ Աւետարանի քարոզած բարոյական կատարելութեան համար նպաստաւոր միջոցներ են գիտութիւնն ու արուեստը: Իսկական գիտութիւնը հետամուտ է միմիայն ճշմարտութեան, իսկ ճշմարտութիւնը ազատութիւն [Յովհ. Ը 32] եւ զօրութիւն է տալիս մարդուն: Ծշմարտութիւնն ըմբռնելու ճանապարհ ունինք՝ կրօն եւ գիտութիւն. երկուսն էլ՝ մարդկային սահմանաւոր հոգու համար միեւնոյն Աստուծոյ տնօրինութիւններն ու վերջնական նպատակները հասկանալու միջոցներ: Ոչ մի գիտութիւն, որ արդարութեամբ հետամուտ է ճշմարտութեանը, վնասակար չէ կարող լինել կրօնի համար. նոյնիսկ բնական գիտութիւնները, որ, ըստ երեւոյթին, կապ չունին հոգեկան գիտութիւնների հետ, Աստուծոյ իմաստութեան եւ ամենակարողութեան յայտարարներ են: Բնական



գիտութիւններից յառաջ ընկած նիւթապաշտական աշխարհայեցողութիւնը, որ թշնամական դիրք էր բռնել դէպի քրիստոնէութիւնը, մի մոլորութիւն էր, որ վաղուց ջախջախուած է գիտութեան անաչառ դատաստանի առաջ:

Բ

Արդարեւ, Եկեղեցու պատմութիւնը մեր առաջ պարզում է քրիստոնէական կրօնի, գիտութեան եւ արուեստի բարեկամական յարաբերութիւնը: Հէնց առաքելական շրջանից նկատուում է այդ իրողութիւնը. աստուածային շնորհաց ընդհանուր ազդեցութիւնն ընդունելով հանդերձ՝ առաքելները տարբեր են միմեանցից բնաւորութեամբ եւ գիտութեան չափով: Պօղոս առաքելալի մեծ գործունէութիւնն ու քրիստոնէութեան տարբեր հասկացողութիւնը, նորա անհատականութիւնից զատ, կախումն ունէր եւ նորա կրթութիւնից: Պօղոս իւր ժամանակի հրէութեան ամենամեծ գիտնականի՝ Գամաղիէլի աշակերտն էր: Այնուհետեւ պատմութեան ընթացքը գիտութեան եւ Եկեղեցու սերտ դաշնակցութիւնն է հաստատում: Փառաւոր է այն շրջանը, երբ քրիստոնէութեան հոգու, բարոյականութեան հետ շաղկապուած է գիտութիւնը: Եկեղեցու համարեայ բոլոր մեծ պաշտօնեաները իրենց անձի մէջ կրօնականի հետ միացրել են եւ գիտութեան տարրերը: Ամէն անգամ, երբ Եկեղեցու վարիչները մոռացել են երկու գործօնների սերտ կապակցութիւնը, այդ եղել է ի վնաս քրիստոնէութեան ընդհանուր շահերի:

Քաղաքակրթական յառաջադիմութեան հոգին քրիստոնէութեան էական յատկութիւններից մէկն է: Քրիստոնէութիւնն է բազմաթիւ ազգերի հոգեւոր քաղաքակրթութեան սկիզբը դրել. մենք կը խնդրենք յիշել Հայոց, ռուսաց, սլաւոնական միւս ազգերի, գերմանացիների եւ անգլիացիների դպրութեան եւ քաղաքակրթութեան ծագումը: Քրիստոնէութեան զարգացումը առաքելական շրջանից յետոյ ընթացակից է յունահռոմէական փիլիսոփայութեան եւ քաղաքակրթութեան իւրացման: Պղատոնի, Արիստոտէլի, ստոյիկեանների, նոր-պլատոնականների փիլիսոփայութիւնը ահագին դեր է խաղացել քրիստոնէութեան դաւաբանութեան եւ աշխարհայեցողութեան կազմութեան ընթացքում: Հին ժամանակի լուսաւորեալ քրիստոնեանների համար յունահռոմէական փիլիսոփայութեան եւ գրականութեան ուսումնասիրութիւնը քրիստոնէական գիտութիւն ստեղծելու աղբիւրն էր: Զատագովների մեծագոյն մասը յունական կրթութիւն ստացած մարդիկ են. Յուստինոս վկան փիլիսոփայ էր, Տերտուղիանոս՝ իրաւաբան,

Որոգինէս՝ իւր ժամանակի ամենամեծ գիտնականը: Եկեղեցու նշանաւորագոյն Հայրերը՝ ս. Աթանաս, ս. Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Աստուածաբան, Յովհան Ոսկեբերան, Կիւրեղ Աղեքսանդրացի, Օգոստինոս, Եկեղեցու զարդերն են եւ նորա գիտնական ներկայացուցիչները: Չորրորդ եւ հինգերորդ դարերը քրիստոնէական Եկեղեցու ոսկեայ դարն էին ամէն կողմից. այս շրջանումն էին ծաղկում եւ վերոյիշեալ մեծ Հայրերը, Աղեքսանդրիայի, Անտիոքի, Եղեսիայի մեծ դպրոցները, Նրուսաղէմի, Կեսարիայի մեծ մատենադարանները: Հայոց Եկեղեցու պատմութիւնն էլ նոյն իրողութիւնն է հաստատում. թարգմանիչների գործունէութեան հետ են կապուած Հայի ամենաքաղցր յիշողութիւնները:

Գ

Գիտութեան զարգացման երեւոյթը Եկեղեցու ծոցում մատնանիշ անելուց յետոյ սահմանենք եւ նորա շրջանը: Եկեղեցին կրօնական-հոգեւոր հաստատութիւն է, որ կոչուած է Աւետարանի սկզբունքներն իրականացնել կեանքի մէջ. դորանով արդէն սահման է գծուում այն գիտութիւնների համար, որոնք Եկեղեցու նպատակների հետ աւելի կապ ունին: Ամէն գիտութիւն օգտակար է, բայց ամէն գիտութիւն անհրաժեշտ չէ Եկեղեցու համար: Այսպէս կոչուած հոգեկան (Geistes Wissenshaft) գիտութիւններն են, որոնք ծագել են Եկեղեցու ծոցում եւ նորա գոյութեան համար օգտակար ծառայութիւններ մատուցել: Այդ գիտութիւնների մէջ առաջին տեղը աստուածաբանութիւնն է բռնում իւր ճիւղերով: Աստուածաբանութիւնը ծագել է Եկեղեցու զարգացման ընթացքում անհրաժեշտաբար: Մենք արդէն ակնարկեցինք նորա ծագման պայմանները, այժմ մի քանի խօսքով որոշենք նորա էութիւնն ու նպատակը: Աստուածաբանութիւնը վերացական «միտաֆիզիկա» չէ, ինչպէս հուշակում են մեր «լուսաւորեալները»՝ առանց ամենաթեթեւ գաղափար ունենալու նորա մասին: Ամէն մարդ քաջութիւն չունի չիմացած եւ չհասկացած բաների մասին: Աստուայդ միայն արտօնութիւն է որոշ մարդկանց համար: Աստուածաբանութիւնը իւր էութեամբ պատմական գիտութիւն է, որովհետեւ նորա ուսումնասիրութեան նիւթը պատմական տուեալներ են, այսինքն՝ քրիստոնէական կրօնը իւր էութեամբ, ծագմամբ, զարգացմամբ եւ ներկայ վիճակով: Աստուածաբանական գիտութիւնը այնպիսի պատմական պրոցէսների եւ իրողութիւնների լուսաբանութեամբ եւ նկարագրութեամբ է զբաղուած, որ Եկեղեցու կեանքն են կազմում: Այսպիսի գիտութեան մենք «պատմական» անունն ենք տալիս. թող մեր հակառակորդները «մետաֆիզիկա» անուանեն:

Իսկ թէ պատմական գիտութիւնը որքան գործնական նշանակութիւն ունի, պարզ պէտք է լինի իւրաքանչիւր բանիմաց ընթերցողի համար: Պատմութեանն ենք պարտական, ինչ որ ունինք մենք: Պատմութեան ծնունդն ենք մեր հոգեւոր բարիքներով, քաղաքակրթութեամբ: Առանց պատմութեան չենք կարող ըմբռնել եւ մեր կրօնի էությունը, որ մարդկութեան ամենաբարձր հոգեւոր բարիքն է: Պատմութիւնը մարդկային հոգու գիտակցութիւնն է ընդհանրապէս, իսկ կրօնը՝ նորա ամենախորին խորհուրդը: Ի՞նչ կը լինի մարդկութիւնը առանց այդ գիտակցութեան: Քրիստոնէական կրօնի եւ եկեղեցու մասին մեր գիտակցութիւնը սրող պատմական գիտութիւնը աստուածաբանութիւնն է: Մենք սիրել եւ յարգել կարող ենք միայն այն անձը, որի մարմնական եւ հոգեկան յատկութիւններին ծանօթ ենք. այդպէս էլ քրիստոնէական կրօնն ու եկեղեցին ճշմարտապէս սիրել կարող ենք այն ժամանակ, երբ իրապէս ծանօթութիւն ունենք նորա էութեան եւ պատմութեան մասին: Իհարկէ, ուրիշ բան է հասկանալ կրօնի ճշմարտութիւնը, եւ ուրիշ բան՝ կրել նորա զօրութիւնը սրտի մէջ: Կրօնը որպէս լոյս կարող է փայլել մեր աչքում՝ առանց կրակ դառնալու մեր սրտում, բայց անուրանալի է, որ կրօնական ճշմարտութիւնները կեանք դարձնելու գլխաւոր միջոցներից մէկը գիտութիւնն է: Կրթութեամբ կարելի է մի ժողովուրդ կրօնական դարձնել, իսկ կրթութեան բովանդակութիւնը, նիւթը գիտութիւնն է տալիս:

Դ

Վերջին տասնեակ տարիներում մի զարմանալի երեւոյթ է նկատուում մեր ժողովրդի մէջ. նախնի հայոց նոր սերունդը կարծես սկսել է երես դարձնել այն եկեղեցուց, որի համար նորա հայրերը պատրաստ էին ամէն ինչ զոհել: Այս տխուր երեւոյթը բազմաթիւ պատճառների հետեւանք է, բայց դոցանից մէկն էլ, մեր կարծիքով, այն է, որ ներկայ սերունդը շատ թոյլ հասկացողութիւն ունի մեր եկեղեցու պատմութեան ու կատարած քաղաքակրթական մեծ դերի մասին: Եկեղեցուց հեռացողների, նորա վերայ անտարբերութեամբ նայողների մի ստուար մաս այնպիսի մարդիկ են, որոնք գիտակցութիւն չունին Եկեղեցու էութեան, նպատակի եւ կոչման մասին: Շատ դժուար կը լինէր, ընդհակառակն, ցոյց տալ այնպիսի անձինք, որ կատարելապէս ծանօթ լինէին մեր եկեղեցու պատմութեան, ըմբռնած լինէին նորա ներկայ թշուառութեան պատճառները եւ քար ձգէին նորա վերայ: Ո՛չ գիտակցութիւնը ցաւ եւ կարեկցութիւն կը շարժէ եւ ոչ՝ սառնութիւն կամ անտարբերութիւն: Հասկանալի է, որ

մեր խօսքը վերաբերում է այսպէս կոչուած կրթուած դասակարգին: Բայց դէպի եկեղեցին նկատուած անտարբերութիւնը միայն այս դասով չի սահմանափակուում. կրթուած հասարակութեան մէջ երեւան եկած ճիշտ կամ սխալ գաղափարները զանազան միջոցներով տարածուում են եւ հասարակ ժողովրդի մէջ: Գիւղերումն էլ շատ անգամ նոյն թեթեւամիտ դատողութիւններն ենք լսում, նոյն անպատկառ վերաբերմունքը նկատուում դէպի Հայ եկեղեցին եւ եկեղեցականութիւնը, ինչպէս յատուկ է մեր լրագրական հերոսներից շատերին: «Ինչ ցանես, այն էլ կը հնձես»:

Սակայն այս ակնարկներով մեր արատները ջնջել չենք կամենում. մեր եկեղեցականութիւնը բարոյական, դրական զօրութիւն լինէր, նորա անդաստանի մէջ ցանուած որոմները ապառաժների վերայ կ'ընկնէին: Մեր պարտագանցութիւնները, մեր անհաւատարմութիւնն ու խաւար հասկացողութիւնը դէպի եկեղեցու սպասաւորի կոչումը նոյնպէս կորստաբեր հետեւանքներ են ծնում, ինչպէս եկեղեցականութեան երդուեալ թշնամիների գործունէութիւնը: «Լաւ էր, եթէ ներէիք փոքր մի եւ իմում անզգամութեանս»: Եկեղեցու ներկայ վիճակը եւ մեր սէրը դէպի ընդհանրութեան հոգեւոր Մայրը ստիպում են փոքր-ինչ «անզգամ» լինել: Թող ներուրի մեզ այս համարձակութիւնը: Մի անգամ ընդմիջտ պէտք է պարզուի մեզ համար, որ ամէն մի անձ կամ հաստատութիւն վաղ թէ ուշ պէտք է ընկնի, կորցնէ իւր բարոյական հեղինակութիւնը, եթէ նա իւր կոչման բարձրութեան վերայ չէ կանգնուած: Թուլացել է մեր եկեղեցականութեան բարոյական հեղինակութիւնը, որովհետեւ իւր կոչման բարձրութեան վերայ չէ կանգնած: Տասնեակ տարիներից ի վեր արժարժուում է քահանայական հարցը, ու մենք դեռ մի քանի քայլ առաջ չենք գնացել. այս խնդրում մեղաւոր է ոչ միայն ժողովուրդը, այլեւ մենք՝ հոգեւորականներս: Իսկ ամէն մեղք իւր պատիժն է ստանում, եթէ զղջումն ու ապաշխարութիւնն ուշանում են... Ինչպէս մարմինը սնունդ է պահանջում, այնպէս եւ՝ հոգին: Հայ ժողովրդի մարմինը սնունդ է պահանջում, այնպէս եւ՝ հոգին: Հայ ժողովրդի հոգեւոր ստնտուն մեր եկեղեցու սպասաւորութիւնն է, բայց որը, տարաբախտաբար, հետզհետէ զրկւում է կաթից: Մեր եկեղեցականութիւնը բարոյական հեղինակութիւն պահպանել չէ կարող, մինչեւ որ մտաւորապէս եւ բարոյապէս ժողովրդից բարձր չլինի: Կոյրը կոյրին առաջնորդ լինել չէ կարող, իսկ արտաքին շինովի միջոցներով երբէք չենք կարող երկար ժամանակ դիրք պահպանել:

Այս նկատողութիւններից ինքնին հետեւում է, որ մեր Եկեղեցու վերակենդանութեան էական պայմաններից մէկն էլ գիտութիւնն է, յատկապէս՝ աստուածաբանական գիտութիւնը: Կրկնում ենք, որ Եկեղեցու կեանքը անմիջապէս գիտութիւնից չէ ծագում. նորա աղբիւրը Յիսուսի անձն ու Աւետարանն է, բայց գիտութիւնը, նկարագրելով եւ լուսաբանելով Եկեղեցու կեանքը, քննադատութեան ենթարկելով նորա անցեալը, ցոյց է տալիս թիւրն ու սխալը, ճշմարտն ու յաւիտենականը եւ նոր սկզբունքներ հանում ներկայի եւ ապագայի համար: Եկեղեցու կեանքի եւ պատմութեան մէջ եւս որոմն ու ցորենը խառն են. գիտութիւնն է, որ մաքրում, գտում է պիտանին անպիտանից: Աստուածաբանական գիտութիւնը Եկեղեցու ինքնաքննադատութիւնն է, որից նորա ինքնագիտակցութիւնն է բղխում, իսկ ինքնագիտակցութիւնը հետեւողական յառաջադիմութեան ամենակարեւոր պայմանն է:

Յառաջադիմութիւն... քարոզում են մեզ Աւետարանը, պատմութիւնը եւ Աստուծոյ տեսանելի աշխարհը: Բայց բարոյական յառաջադիմութեան ամենախոշոր հաստատութիւնը Եկեղեցին է. նա պէտք է, ուրեմն, ոչ միայն «տուն աղօթից», այլեւ գիտութեան, իմաստութեան լինի՝ որպէս գիտակցական հաւատոյ, սիրոյ եւ յուսոյ հաստատութիւն: Սակայն մեր ասածներից չպէտք է կորակացնել, թէ Հայաստանեայց Եկեղեցու փրկութիւնը միմիայն գիտակցութեան մէջ ենք տեսնում. առանց կրօնական վերածնութեան իզուր կ'անցնեն մեր ջանքերը: Ամենից առաջ պէտք է հոգով եւ սրտով քրիստոնեայ դասանք: Բայց ներքին վերածնութեան գլխաւոր օժանդակներից մէկը եկեղեցական գիտութիւնն է, որի վերայ հրաւիրում ենք մեր բանիմաց հասարակութեան ուշադրութիւնը:

Եկեղեցու գոյութիւնը պահպանելու, նորա բարոյական ազդեցութիւնը ժողովրդի մէջ զօրացնելու էական գործ կատարողները վարչական հաստատութիւններն են՝ առաջնորդութիւններն ու յաջորդութիւնները, քարոզչութիւնն ու քահանայութիւնը: Բայց հէնց այդ պաշտօնէութիւնների յարգը բարձրացնելու համար է, որ մենք անհրաժեշտ ենք համարում գիտութիւնը: Եկեղեցական հոգեւոր զէնքը գիտութիւնն է. ի՞նչ է գիտութիւնը պատերազմի դաշտում առանց զէնքի: Ով պաշտպանում է տգիտութիւնը, նա սիրտ չունի ճշմարտութեան համար, որովհետեւ բարոյական գիտութիւնը հետամուտ է միմիայն ճշմարտութեան: Բոլոր ճանապարհները դէպի Հոռոմ են տանում, բայց երկու ճանապարհ կայ միայն՝ ճշմարտութեան հասնելու համար. կրօնի

եւ գիտութեան ցոյց տուած ճանապարհները: Իսկ Տիրոջ խօսքի համաձայն՝ մարդկութեան ամենամեծ բարիքը՝ ներքին բարոյական ազատութիւնը, ճշմարտութիւնից է բղխում. «Եւ ճշմարտութիւնն ազատեցէ զձեզ»:

Ներկայ եկեղեցականներս շատ բանով երախտապարտ ենք մեր նախորդներին: Նոքա, մինչեւ իսկ ներկայ մտքով գիտութիւն չունենալով հանդերձ, իրենց հաւատարմութեամբ, աւանդապահութեամբ նախանձախնդրութեամբ պահպանել են նախնեաց թողած ամենամեծ ժառանգութիւնը, բայց այսօր անհրաժեշտութիւն է դարձել, որ նախախնայ յատկութիւնների վերայ աւելանայ եւ գիտութեան ոգին: Աւանդութիւնը երկար ժամանակ պահպանում է սրբազան ժառանգութիւնները, բայց առանց գիտութիւնը կենդանացնող միջոցների նա աղօտանում է եւ կորցնում իւր զօրութիւնը: Ոչ մի ժամանակ այնպիսի անհրաժեշտութիւն չի զգացուած հինն ուսումնասիրելու, անցեալ ճշմարտ սկզբունքները նոր շինութեան հիմք դարձնելու համար, ինչպէս այժմ: «Ծառն արմատով է ծառ, տունն հիմամբ է տուն»: Հայաստանեայց Եկեղեցու գոյութեան արմատը նորա անցեալն է, որից նոր ոստեր պիտի աճին՝ պտղաբեր լինելու համար: Բայց այս ամէնը պարզուել եւ մարդկանց սրտում հաստատուել կարող է գիտութեան միջնորդութեամբ: Նա՛ միայն կարող է փոշիների տակից նոր ճշմարտութիւններ հանել, նա՛ միայն կարող է բալասաններ գտնել՝ վիրաւոր կողմերը բուժելու համար: Առանց գիտութեան հոգեւոր կեանքի մէջ անշարժութիւն, կղզիացում յառաջ կգայ, որ դէպի մեռելութիւնն է տանում: Շատ խոշոր դժուարութիւններ կան այս նպատակն իրագործելու համար, բայց հաւատացած ենք, որ մեր հոգեւոր վարչութեան եւ ժողովրդի հետեւողական ձգտումն ու ջանքերը կը խորտակեն բոլոր դժուարութիւնները:

ԳԱՐԵԳԻՆ Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ
«Արարատ», օգոստոս եւ սեպտեմբեր, 1900

նա՝ այդ հոգին, մի դժոխք կարող է դառնալ իւր նախանձով, ատելութեամբ, չարութեամբ, եսականութեամբ, շահամոլութեամբ եւ այլ բացասական կրքերով:

Դալարագեղ բուրաստան դարձրէք այդ հոգին՝ զարդարուած սիրուն, ակնապարար, հոտաւէտ ծաղիկներով, նմանեցէ՛ք իմաստուն վաճառականի՝ Տիրոջ խօսքի համեմատ, որ վաճառում է ամէն ինչ եւ թանկագին մարգարիտը գնում: Այդ թանկագին մարգարիտը ձեր ներքին աշխարհն է՝ ձեր հոգին: Ամենայն ինչ անցաւոր է, երկրորդական: Գործադրեցէ՛ք ձեր մեծ ու փոքր ունակութիւնները, ձեր գիտութիւնը, ձեր արուեստը, ձեր գրիչը, ձեր լեզուն, ձեր ստացուածքը, որպէսզի ձեր հոգին դառնայ անգին մարգարիտ՝ պայծառ, լուսաւոր եւ աստուածանման: Ամենափոքր բարիքն էլ, մինչեւ ծարաւին մի բաժակ ջուր մատուցանելը, անտես չի մնալ Աստուծոյ աչքից: Ըստ չափու եւ ըստ կարողութեան բերէ՛ք ձեր աջակցութիւնը հանրութեան բարոյական շէնքի կառուցման մէջ. նախ՝ ձեզնից սկսած, ապա՝ ընտանիքից մինչեւ եկեղեցու, ազգութեան եւ հայրենիքի ոլորտները: Այս է Աստուծոյ արքայութեան տիրապետութեան ուղեգիծը երկրիս վերայ:

Մարդկային հոգու եւ անձի արժէքաւորումը հիմքն է այս բոլորի: Անձնաւորութիւնը սուրբ է, մի՛ մօտեցէք նորան՝ երկաթի ձեռնոցներ հագած: Մեծ վիշտ է պատճառում մեզ՝ տեսնելով մեր ժողովրդի մէջ երկպառակութեան, իրար սեւացնելու, իրար հակառակելու հոգին՝ մինչեւ բացարձակ թշնամութիւն: Այդ ո՛չ քրիստոնէական է եւ ո՛չ ազգասիրական, այլ՝ միակողմանի մոլորութիւն եւ նոյնիսկ հիւանդութիւն եւ սխալ հասկացուած հայրենասիրութիւն: Ամենայն մոլեռանդութիւն եւ չափազանցութիւն վնասակար է, որից պէտք է խուսափել:

Գնահատել մարդկային, ուրիշի անձը, պատիւը՝ քրիստոնէական պարտաւորութիւն է եւ բարեկրթութեան պտուղ: Դէպի լոյս եւ կեանք ընթացէ՛ք՝ Տիրոջ շաւիղով, Աւետարանից եկած ճառագայթներով առաջնորդուած:

Շնորհք Տեառն եղիցին ընդ ձեզ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՄԱՐԴՈՒ ԿՈՉՈՒՄԸ ԱԾԵԱՐՀԻՍ ՎԵՐԱՅ (ըստ անտարանակաւ քարոզութեան)

«Տո՛ւր զհամար տնտեսութեան քո» [Ղուկ. ԺԶ 2]:

Ա

Մեծ պահքի երրորդ կիւրակին Տնտեսի կիւրակի է կոչուած ավետարանական այն ընթերցուածի անունով, որ կարդացուած է պատարագի ժամանակ, այդ օրը: Աւետարանական ընթերցուածն, իսկապէս, երկու մեծ հատուածից է բաղկացած՝ տարբեր բովանդակութեամբ, բայց ըստ էութեան՝ իրար լրացնող եւ լուսաբանող: Առաջին հատուածը Տնտեսի առակն է, որի անունով կոչուած է կիւրակին, եւ երկրորդը՝ Մեծատան եւ Աղքատ Ղազարոսի առակը. երկուսն էլ՝ առանց բացատրութեան, անհասկանալի, մինչեւ իսկ կարծես հակառակ տրամաբանութեան:

Տնտեսի առակի բովանդակութիւնը հետեւեալն է. մի մեծատուն իւր կալուածները կառավարիչ կամ տնտես ունէր. երկար ժամանակ անցնելուց յետոյ կամենում է նորա ձեռքից առնել պաշտօնը, կանչում է եւ ասում. «Տո՛ւր զհամար տնտեսութեան քո», այսինքն՝ տո՛ւր հաշիւդ:

Տնտեսը կամ կալուածները կառավարիչը մտածում է. «Ի՞նչ պիտի լինի իմ վիճակը. աշխատել չեմ կարող, մուրալ կ'ամաչեմ»: Ի վերջոյ, իւր ապագան ապահովելու համար հետեւեալ որոշումն է տալիս. տիրոջ պարտապաններին մէկ-մէկ կանչելով՝ գեղջուած է նրանց տարտքերի մի մասը այն հաշուով, թէ պաշտօնից զրկուելուց յետոյ իւր բարերարեալների կողմից կը հոգացուին իւր ապրուստի միջոցը, ները: Իսկապէս, ըստ երեւոյթին մի տեսակ գողութիւն էր այդ միջոցը, բայց տէրը գովում է տնտեսի անիրաւութիւնը, «զի իմաստութեամբ բայց տէրը գովում է տնտեսի անիրաւութիւնը, որ ուղղամտութիւնն է, տարանական ընդհանուր քարոզութեան, որ ուղղամտութիւնն է, հաւատարմութիւնը, ճշմարտութիւնը: Հաւանօրէն, այստեղ բնագրի խմբագրութեան մէջ մի շփոթութիւն կայ, ինչպէս կարծում են մեկնախմբաներից ոմանք, բայց առակին հետեւող նախադասութիւնները՝ բաններից ոմանք, բայց առակին հետեւող նախադասութիւնները՝ «Արարէ՛ք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան, զի յորժամ պակասիցէ այն, ընկալցին զձեզ ի յարկս յաւիտեանականս», կամ՝ «Ոչ կարէք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի», որոշ չափով պարզում

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ԼՈՒՍԱԽՈՐՉԻ ԱՆՈՒԱՆ ՏՕՆԸ (տաճարի ուխտի օրը)

«Ի վերայ աջոյն ս. Լուսաորչիցն հաստատեալ կայ ամենայն ազգն հայոց»:

Առաքել Դաւրիժեցի

Ա

Հայաստանեայց Եկեղեցին երէկ տօնեց Գրիգոր Լուսաւորչի Խոր Վիրապ մտնելու յիշատակը, որ միեւնոյն ժամանակ մեր Տաճարի Հաստատութեան տարեդարձն է եւ Ուխտի օրը: Լուսաւորչի գործը եւ նորա կատարած դերը մեր պատմութեան Համար պիտի լինին մեր այսօրուայ խորհրդածութեան նիւթը:

Առաքել Դաւրիժեցին վերեւ մէջբերուած բնաբանի խօսքերի մէջ ամփոփել է ժամանակի Հասկացողութիւնը Հայաստանեայց Եկեղեցու եւ նորա նշանակութեան մասին. Լուսաւորչի աջը Հայոց Հայրապետութեան նշանակն է, Հայոց Հայրապետութիւնը Հայաստանեայց Եկեղեցու տեսանելի եւ շօշափելի կազմակերպութիւնն է, նուիրապետութիւնը, պաշտօնէութիւնը Հաւատացեալ մանկանց հետ: Ով ծանօթ է Հայաստանեայց Եկեղեցու ծագման, զարգացման եւ կատարած դերին պատմութեան ընթացքում, նա լիովին կարող է ըմբռնել այդ խօսքերի իմաստը: Լուսաւորչի Հաստատած Եկեղեցու միջոցով է, որ պահուած են Հայ լեզուն, գիրը, գրականութիւնն ու արուեստը, մշակոյթն ու գիտութիւնը անցեալի մասին, որ ասել է նոյն ինքը Հայ ժողովուրդը դարերի ընթացքում: Լուսաւորչի ձեռքով է կերտուած այս Եկեղեցին, որ եղել է փրկութեան տապանը մեր ժողովրդի, որ պահել է նորան դարերի բերած ջրհեղեղների ժամանակ՝ մաքառելով ե՛լ մահաբեր անգիտութեան, ե՛լ խաւարի դէմ: Այս փրկարար եւ լուսատու Հաստատութեան կազմակերպողն է, ճարտարապետը մի մեծ անձնաւորութիւն, որին որակել է Հայ ժողովուրդը Լուսաւորչի բառով: Նախկին լուսաւորչիներ ենք անուանում Թաղէոս եւ Բարդուղիմէոս առաքեալներին միայն Գրիգորին յատկացուած «Լուսաւորչի» բնորոշման անդրադարձմամբ: Լուսաւորչի տիրողսը յատուկ է միայն սուրբ Գրիգորին, եւ այդ այն անթառամելի պսակն է, որ հիւսել է Հայ ժողովուրդը նորա գլխի շուրջը:

Բ

Ի՞նչ է արել նա:

Մեր ծանօթութիւնը քիչ է իւր բազմարդիւն կեանքի գործունէութեան մասին, ինչպէս քիչ է մեր Տիրոջ եւ Փրկչի կեանքի եւ գործունէութեան մասին: Հայ պատմիչներից մի քանիսը տեղեկութիւններ են հաղորդում, բայց՝ շատ խճողուած աւանդութիւններով, սակայն «ծառն ի պտղոյ իւրմէ ճանաչի», եւ Լուսաւորչի անձն ու գործը՝ նորա Հաստատած եւ կազմակերպած Եկեղեցուց: Ծշմարիտ է, մինչեւ Լուսաւորչի Հայաստանում քարոզուած է քրիստոնէութիւնը, ըստ աւանդութեան, Թաղէոս եւ Բարդուղիմէոս առաքեալների ձեռքով, ունինք նաեւ Հաստատուն տեղեկութիւն Լուսաւորչից առաջ Հայ եպիսկոպոսութիւնների գոյութեան մասին Հայաստանում, բայց Հայաստանեայց Եկեղեցու Հաստատութեան եւ կազմակերպութեան գործը կատարուած է Լուսաւորչի ձեռքով: Դիւրին չէր ամբողջ արքունիքը, նախարարական տները ժողովրդի հոծ բազմութեան հետ դարձի բերել, եկեղեցիներ եւ տաճարներ շինել, դպրոցներ Հաստատել, եպիսկոպոսութիւններ եւ պաշտօնէութիւն, կառավարական ամբողջ կարգաւորութիւն ստեղծել մի ընդարձակ երկրի եւ ժողովրդի մէջ: Երկար տարիների եւ անխոնջ աշխատանքի արդիւնք էր այդ, աստուածաշնորհ եւ հանճարեղ առաքելական գործ, որի պատմութիւնը մանրամասնութիւններով ծածկուած է մեր տեսութիւնից գրաւոր եւ ժամանակակից աղբիւրների պատճառով: Պատմութեան մանրամասնութիւնները չկան, բայց կայ գործը՝ Հայաստանեայց Առաքելական կազմակերպեալ Եկեղեցին իւր նուիրապետութեամբ, պաշտօնէութեամբ եւ կարգաւորութեամբ:

Նորա անձի եւ մեծութեան բնորոշող մի գիծն է եւ կենդանի նահատակ եւ խոստովանող լինելու իրողութիւնը: Լուսաւորչի չարչարանքների մեզ Հասած աւանդութիւնը յայտարարն է նորա հաւատի տոկունութեան, անդրդուելի անձնուիրութեան եւ Հաստատակամութեան դէպի իւր գործը: Այսպիսի յատկութիւններով է, որ նա երկար տարիների աշխատութեամբ Հասել է իւր վերջնական յաղթանակին: Հին յոյները կամ հռովմայեցիները մրցութիւնների եւ պատերազմների մէջ յաղթական հերոսների գլուխները զարդարում էին պսակներով: Գեղեցիկ է, անշուշտ, ծաղիկներից եւ մրտենիների կանաչ տերեւներից հիւսած պսակը, բայց այդ գեղեցկութիւնը ժամանակաւոր է, իսկ Հայ ժողովուրդը խոստովանողական եւ առաքելական պայքարի մէջ յաղթական Գրիգորին պսակել է յաւիտենական եւ անթառամելի պսակով, որ ԼՈՒՍԱԽՈՐՉ անունն է:

Քրիստոնէութիւնը Հայ ժողովրդի աչքում լոյս է, ուստի եւ նորա մատակարարը՝ Լուսաւորիչ: Այդ լոյսը մարդկային չէ եւ ոչ՝ նիւթական, այլ՝ երկնային: Լուսաւորչի կանթեղի՝ հրաշալի, ժողովրդական սքանչելի բանաստեղծութեամբ յօրինուած աւանդութիւնը այդ Հայեացքի եւ հաւատի յայտարարն է. Արագածի գագաթին երկնքից կախուած է այդ կանթեղը, որի մէջ իւրի փոխարէն Լուսաւորչի արցունքն է՝ միշտ բարեխօս Աստուծոյ առաջ, որ անմար մնայ խաւար կեանքը լուսաւորող այդ կանթեղը: Ո՞ր գիրքը կարող էր Գրիգոր Պարթեւի գործը աւելի լաւ գնահատել, քան ժողովրդական այս աննման գնահատութիւնը: Այդ համապատասխան է եւ մեր գրական աւանդական գնահատութեան. էջմիածին է կոչուում այն տաճարը, որ մայրն է Հայաստանեայց բոլոր եկեղեցիներին, եւ նա կառուցուած է, ըստ Լուսաւորչի անուան հետ կապուած տեսլեան, Տիրոջ ցուցմամբ, որ, շրջապատուած երկնային զուարթունքով՝ իջել է երկնքից եւ ոսկի ուռամբ ցոյց տուել այն վայրը, որտեղ պիտի կառուցուէր լուսաւոր տաճարը: Ահա՛ Հայ ժողովրդի եւ տեսիլքի բանաստեղծ հեղինակի հաւատն ու Հայեացքը Հայաստանեայց եկեղեցու ծագման եւ գնահատութեան մասին:

Գ

Ժողովրդական եւ գրական այս երկու Հայեացքներն էլ ըստ էութեան նոյն են, այսինքն՝ թէ Հայաստանեայց եկեղեցին երկնային պարգեւ է Հայ ժողովրդին, եւ թէ նա լոյս է կամ լուսոյ գաղափարի մարմնաւորում: Պատմական իրողութիւններն էլ հաստատութիւնն են այս Հայեացքի ճշմարտութեան: Այդ լուսոյ ջահակիրներն են ս. Լուսաւորիչ, ս. Ներսէս, Սահակ Պարթեւ, Մեսրոպ իրենց թարգմանիչ աշակերտներով: Ի՞նչ կը լինէր մեր վիճակը Պարսից հզօր պետութեան նուաճողական ծրագիրների դէմ Սասանեանների օրով, երբ նրանց յաջողուեցաւ նախ երկուսի բաժնել Հայ Արշակունեաց թագաւորութիւնը եւ ապա իսպառ վերջաւորել 428 թուին: Ի՞նչ կը լինէր մեր վիճակը գրերի գիւտի, Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան, Հայ ինքնուրոյն եւ թարգմանական ծաղկեալ դպրութեան, հինգերորդ դարի Վարդանների եւ Վահանների փոխարէն, եթէ չլինէր Հայաստանեայց կազմակերպուած եկեղեցին իւր արժանաւոր առաջնորդներով եւ պաշտօնեաներով: Կը լինէր «ժողովուրդ, որ գնայր ընդ խաւար», բայց առանց «մեծ լոյս» տեսնելու եւ, թափառելով «ի ստուերս մահու», իւր ձուլման եւ կորստեան վերջակէտը կ'ապրէր:

Մինչդեռ, եկեղեցու առաջնորդութեամբ ապրելով իւր լեզուի եւ դպրութեան ոսկեդարը, Զ-է դարերում նաեւ իւր ճարտարապետութեան եւ շինարարութեան ոսկեդարը կերտեց, որ Հայ հանճարի եւ

ստեղծագործութեան փառքն է՝ գնահատուած ներկայ ժամանակի մեծ արուեստագէտների կողմից: Գաղափար տալու համար յիշենք այդ ժամանակի կաթողիկոսների անունները, որոնք իրար յետեւից ճարտարապետական կոթողներ են թողել՝ կարծես կամենալով գերազանցել միմեանց: Վեցերորդ դարի կէսերից սկսած՝ Մովսէս Եղիվարդեցուն է վերագրուում իւր հայրենի գիւղի բազիլիկ մեծ տաճարը: Նորա հակաթոռ Յոհան Կարնեցին շինել է Դուինի Մայր եկեղեցին, որի աւերակները այժմ բացուած են պեղումներով: Կոմիտաս՝ «Անճինք նուիրեալք» սքանչելի շարականի հեղինակը, կերտել է Հռիփսիմէի նուիրեալք» սքանչելի տաճարը Վաղարշապատում: Եզր կաթողիկոսը՝ աննման գողտրիկ տաճարը Վաղարշապատում: Եզր կաթողիկոսը՝ տարապարտուց Հայոց եկեղեցու դաւանութեան հակառակորդ եւ քաղկեդոնական համարուած, շինել է Գայանէի տաճարը Վաղարշապատում եւ Բագրեւանդի հոյակապ Ս. Յովհաննէսը: Ներսէս Գ Շինողի գործն է մեր ճարտարապետութեան գլուխգործոցներից մէկը՝ Զուարթնոց տաճարը: Նորա յաջորդը՝ Անաստաս, շինել է Ակոռիի եկեղեցին: Այս եւ նոյն ընթացքն ունին շինարարութեան մէջ եւ նախարարական տները՝ Մամիկոնեանք եւ Կամսարականք եւ ուրիշներ:

Ահա ինչ է Հայաստանեայց եկեղեցու՝ Լուսաւորչի ձեռքով հիմնած հաստատութեան արժէքը: Քաղաքականապէս անկման դատապարտուած եւ գոյութեամբ վտանգի ենթարկուած ժողովուրդը վերածննց հոգով, կազդուրեց նորա բարոյական ուժերը՝ ուրոյն ստեղծագործական կեանքով ապրելու եւ իրեն վիճակուած պատստեղծագործական կեանքով մէջ դիմանալ կարողանալու հարաւից եւ մական ծանր պայմանների մէջ դիմանալ կարողանալու հարաւից եւ արեւելքից եկած արաբական եւ սելջուկեան հեղեղներին: Սասարեւելքից հզօր պետութիւնն ու զրադաշտականութիւնը ոչնչացան, ընդունած հարուածների տակ, բայց Հայ ժողովուրդը դիմացաւ, Բագրատունեաց եւ Ռուբինեանց փառաւոր շրջաններն ապրեց՝ տալով Նարեկացիներ եւ Շնորհալիներ եւ ամբողջ հոյլը միջնադարեան բանաստեղծների, արուեստագէտների եւ վարդապետների, ինչպէս եւ Աշոտներ, Գագիկներ, Լեւոններ եւ Հեթումներ՝ քաղաքական կեանքում:

Հայաստանեայց եկեղեցու եւ նորա հովանու տակ ստեղծուած հոգեւոր դրամապոլիսն էր, որ մեր գոյութիւնը ապահովեց պարսից եւ օսմանցոց կործանարար արշաւանքների ժամանակ եւ մեզ հասցրեց այս օրերին՝ Հայ ժողովրդի քաղաքական եւ մտաւոր վերածնութեան մի նոր շրջան ապրելու՝ սպասելով աւելի փառաւոր ծաղկման:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱԿՈՐԻՉ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻ*

Ա

Մեր պատմական ավանդույթները հաստատում են, որ Հայաստաննայց Եկեղեցւոյ սկիզբը դրուում է Քրիստոսի անմիջական աշակերտների ձեռքով առաջին դարում: Թէպէտ երեք դար շարունակ քրիստոնէութիւնը գոյութիւն ունէր Հայաստանում, թէպէտ երբեմն թափուում էր մարտիրոսների արիւնը՝ քրիստոնէութեան անդաստանը ոռոգելու համար, բայց դեռևս հեթանոսութիւնը զօրեղ էր եւ իւր գօրութեամբ ճնշում էր քրիստոնէութիւնը:

Ճշմարիտ է, այդ երեք դարերում քրիստոնէութիւնը Հայաստանում գոյութիւն ունէր, ասում ենք, բայց Եկեղեցին որոշ կազմակերպութիւն չուներ եւ չէր էլ կարող ունենալ, քանի որ դեռևս մութ խորշերում եւ քարանձաւներում էր պաշտուում քրիստոնէից Աստուածը:

Հայաստաննայց Եկեղեցին իւր այդ անունը կրելու իրաւունք ստացաւ չորրորդ դարու սկզբում՝ ս. Լուսաւորչի գործունէութիւնից յետոյ: Լուսաւորիչ, մի նոր վարդապետութեան քարոզիչ, մի նոր հիմնարկութեան վերահաստատող լինելով, պէտք է եւ որոշ գաղափար ունենար այդ հիմնարկութեան վերայ, եւ նորա համար պարզ պէտք է լինէր նոր հաստատութեան նպատակը: Մեր այս շարադրութեամբ կամենում ենք պարզել այդ խնդիրը: Անշուշտ, Լուսաւորչի աչքում այդ հաստատութիւնը շատ բարձր եւ վսեմ նշանակութիւն պէտք է ունենար, քանի որ նորա քարոզած ճշմարտութիւնների համար այնքան տանջանքներ կրեց, եւ միայն բազմաթիւ տարիներ անցնելուց յետոյ նորա հաւատարմութիւնը զարմանալի յաղթութեամբ պսակուեցաւ:

Լուսաւորչի անձնաւորութեան եւ հայեացքների հետ լաւ ծանօթանալու համար ոչ միայն աչքի առաջ պէտք է ունենալ նորա անունով մնացած գրաւոր յիշատակարանները, այլեւ՝ այն բոլոր պատմական եւ ավանդական ցուցումները, որ հասել են մեզ նորա ժամանակակից կամ յետագայ հայ եւ օտար պատմիչների միջնորդութեամբ: Ինչ աղբիւրների էլ դիմելու լինենք, Լուսաւորիչ երեւում

է մեզ մի բարձր արժանաւորութեան տէր անձնաւորութիւն՝ իրաւամբ արժանի կրելու «Հայաստաննայց Լուսաւորիչ» անունը: Մեծ անձնաւորութիւնները միայն կարող են մեծ գործեր կատարել եւ մեծ գաղափարներ պարզել, եւ Լուսաւորիչ դոցանից մէկն է: Ս. Գրիգորի անձնաւորութիւնը կարելի է որոշել՝ աչքի առաջ ունենալով **Գրիգոր Մեծ Խոստովանողին, Գրիգոր Առաքեալին եւ Գրիգոր Լուսաւորչին:** Երեք բառ, որոնք իրենց մէջ բովանդակում են մի մեծ մարդու կեանքն ու գործունէութիւնը եւ մի Եկեղեցւոյ ուղղութիւն. Եկեղեցւոյ ուղղութիւն ասացինք, որովհետեւ Լուսաւորչի անձնաւորութեան հետ կապուած են Հայաստաննայց Եկեղեցւոյ կազմակերպութիւնն ու նպատակը:

Հայաստաննայց Եկեղեցին իրաւամբ նորան **Մեծ Խոստովանող** անուանեց եւ միմիայն նորան, որովհետեւ մեր ս. հայրերից ոչ մէկը նորա բարձրութեան հասնել չկարողացաւ: Նորա հաւատարմութիւնը դէպի իւր կրօնը, նորա հաւատը դէպի քրիստոնէական ճշմարտութիւնները եւ, վերջապէս, հաստատամտութիւնն ու առաքելական գործունէութիւնը այնքան բարձր են, որ ամենքի համար անհասանելի օրինակ կարող են լինել: Մեծ նահատակը իւր ճշմարիտ համբերութեամբ, կենդանի մարտիրոսը իւր ճշմարիտ խոստովանութեամբ մենակ յաղթող հանդիսացաւ մեծ պատերազմի մէջ: Երկու կուսակցութեան առաջնորդներ մրցում էին. մէկը՝ գործ դնելով իւր բոլոր արքայական իշխանութիւնը, միւսը՝ հաստատամտութիւնն ու համբերութիւնը, մէկը՝ թիկունք ունենալով մի ամբողջ երկրի ժողովուրդ, մի տէրութիւն, միւսը՝ մենակ, բայց ճշմարտութեան վերայ յենուած: Եւ վերջինս յաղթող հանդիսացաւ. թագաւոր տիրոջ շրթներէնքները համբուրեցին արդար ծառայի ձեռքը: Եթէ Հայաստաննայց Եկեղեցին նորան **Մեծ Խոստովանող** անուանեց, նշանակում է՝ լաւ հասկացաւ Լուսաւորչի նշանակութիւնը: Մեր Եկեղեցին իրաւունք ունէր այդ անունը նորան տալու, քանի որ «Գրիգորիոս Հայր հաւատոյ եւ վայելուչ պսակ Հայաստաննայց սուրբ Եկեղեցւոյ» էր, «անուշահոտ վարդ» էր, որ եւ «անուշահոտ բուրմամբն ելից Հայաստաննայց աշխարհս», ինչպէս ասում է Երզնկացին: Լուսաւորիչ օտարների աչքում եւս նոյքան մեծ է, որքան եւ հայոց: Ոսկերբան եւս նորան անուանում է «մեծ խոստովանող», «մարտիրոսաց պարծանք», «երկնային զօրոց քաղաքակից», «մարմնաւոր հրեշտակ յերկրի» եւ այլն:

Ս. Գրիգոր իւր յաղթութեան պսակը պէտք է ստանար, իւր համբերութեան պտուղը պիտի քաղէր: Քրիստոնեայ լինելու համար

* Այս մեր առաջին գրաւոր աշխատութիւնն է՝ աւելի աւանդական, քան քննական տեսութեամբ:

տասնհինգ տարի տանջուեցաւ, այժմ նոյն քրիստոնէութեան առաքեալ պիտի դառնար: Առաքելոյն Թադէոսի պարթեւական զաւակը, կենդանի նշխարաց նորին օրհնութեան շառաւիղը, վիճակեալ աշխարհի նորա ընտրեալ հոգաբարձուն պէտք է կատարէր այն ամէնը, ինչ որ տնօրինել էր նորա մասին վերին տեսչութիւնը: Հայաստանեայց Եկեղեցւոյ առաքեալը պէտք է սկսէր իւր առաքելական գործունէութիւնը: Հայաստանեայց Եկեղեցին նորան առաքեալ է համարում՝ ոչ թէ միայն հիմնուելով այն աւանդութեան վերայ, որ քիչ առաջ ակնարկեցիք Երզնկացու խօսքերով, այլեւ մի կողմից՝ աչքի առաջ ունենալով նորա ճշմարիտ առաքելական գործունէութիւնը եւ միւս կողմից՝ առաքելական կոչում ստանալը վերին տեսչութիւնից: Չէ՞ որ Լուսաւորիչ եւս նոյնպիսի ընտրեալ առաքեալ է, ինչպէս եւ Քրիստոսի միւս անմիջական առաքեալները: Թէպէտ Լուսաւորիչ չտեսաւ Նորան այս երկրում, չլսեց Նորա քարոզութիւնները, Նորա խաչելութեան եւ յարութեան ակնատես չեղաւ, բայց տեսաւ Նորան բոլոր աստուածային զօրութեամբ, տեսաւ Նորան՝ շրջապատուած երկնային անթիւ զօրքերով, տեսաւ Նորան՝ ոսկի ուռը ձեռքին երկնքից երկիր իջնելիս: Պօղոս առաքեալն էլ Քրիստոսի անմիջական աշակերտներից չէր, բայց մի՞թէ դրանով նորա արժանաւորութիւնը պակասում է մեր աչքում. Հայաստանի Պօղոս առաքեալը մեր Լուսաւորիչը եղաւ եւ նման է նորան ոչ միայն ընտրութեամբ, այլեւ՝ քարոզած գաղափարներով: Ընտրութեամբ նման է, որովհետեւ սա եւս, ինչպէս եւ Պօղոս, «զօծումն քահանայապետութեան ոչ ի մարդկանէ եւ ոչ ի ձեռն մարդոյ, այլ ի վերին տեսչութենէն եւ ի Հոգւոյն յայտնութենէ կոչեցեալ ընկալաւ»: Թէպէտ այս խօսքերը Ոսկեբերանին են, բայց հիմնուած՝ պատմական ճշմարիտ փաստերի վերայ: Չէ՞ որ Լուսաւորիչ անարժան էր համարում իրեն քահանայապետական բարձր կոչման եւ հրաժարւում էր. այն անձնաւորութիւնը, որ «քահանայից գաղափար» էր, «հովուապետաց նկարագիր», «հայրապետաց գեղեցկութիւն», «հաստատեալ սիւն Եկեղեցւոյ», «ուսուցիչ ուղղափառութեան», «մոլորելոց առաջնորդ», «առաքելոց լրումն», հրաժարւում էր մինչեւ այն ժամանակ, երբ վերջապէս հրեշտակից լսեց աստուածային կամբը. «Մի՛ իշխեսցես ինչ պնդել յամառել վասն այն, զի ի Քրիստոսէ է այդ քեզ հրամայեալ»: Ոսկեբերան, իւր ներքողի մէջ խօսելով Լուսաւորչի առաքելական ընտրութեան մասին, Աստուծոյ խօսքերով ասում է նորան. «Առաքեալքն իմ երկոտասան ի վերայ ինքեանց բաժանեցին վիճակաւ զընդհանուր աշխարհս, իսկ դու միայն ընդ համասփիւռս վիճակաւ քարոզեսցես զԱւետարանն

իմ»: Ուրեմն, Լուսաւորիչ Ոսկեբերանի նման մարդու աչքում առաքեալների չափ եւ մինչեւ անգամ աւելի նշանակութիւն ունի. ահա՛ Լուսաւորչի մեծութեան մի մեծ ապացոյց:

Լուսաւորիչ այն անձնաւորութիւնն էր, որ իւր տասնհինգամեայ սոսկալի չարչարանքներով եւ վաթսուներկեց օրուայ առաքելական քարոզութեամբ հեթանոս Հայաստանի համար երկինք բաց արեց, բաց արեց ողորմութեան դռները, մի ճանապարհ ցոյց տուեց՝ դէպի բարձրն ու վսեմը վերանալու: Հայաստանեայց Լուսաւորիչը իրաւամբ արժանացաւ այդ մեծ անուան: «Լուսաւորիչ» անունը Հայաստանեայց Եկեղեցւոյ վերանորոգչի յատուկ անունն է: Եթէ ասում ենք «նախկին լուսաւորիչք», այդ միայն իսկական Լուսաւորչից զանազանելու համար է. հայ ազգի Լուսաւորիչը ս. Գրիգորն է: Ո՞վ այնպիսի նշանակութիւն, հեղինակութիւն ստացաւ, որքան Լուսաւորիչ, եւ ո՞վ այնպիսի վսեմ եւ անթառամելի պսակ ստացաւ հայ ազգից, ինչպէս Լուսաւորիչ: Լուսաւորիչ Հայաստանեայց՝ ահա՛ այն անապական եւ անթառամելի պսակը, որով հայ ազգը զարդարել է իւր նախահայրապետի սրբազան ճակատը: Լուսաւորիչ Հայաստանեայց՝ ահա՛ մի յաւիտենական դրոշմ, որ հայ ազգի սրտում անջնջելի պէտք է մնայ յաւիտեան: Լուսաւորիչ այնքան մեծ հեղինակութիւն է ստացել հայ ժողովրդի աչքում, որ իրեն «Լուսաւորչայ ազգ» է անուանում: Ի՞նչ է նորա այսպիսի մեծ հեղինակութեան պատճառը. ահա՛ մի հարց, որ պէտք է պարզէ մեր Եկեղեցւոյ ամենահիմնական սկզբունքներից մէկը:

Բ

Ինչպէս վերեւ յիշեցինք, Լուսաւորիչ, մի մեծ հաստատութեան հիմնադիր լինելով, պէտք է մի որոշ եւ վսեմ գաղափար ունենար այն հաստատութեան մասին, որի տուած ճշմարտութիւնների համար նա պատրաստ էր ամէն բանից զրկուել, ինչպէս եւ ցոյց տուեց: Լուսաւորիչ իւր դաւանած ճշմարտութիւնների համար տասնուհինգ տարի տանջուելուց յետոյ՝ բոլորովին զարմանալի կերպով երեւան է գալիս կենդանի նահատակը. վաթսուներկեց օր այժմ նա քարոզում է բազմաթիւ ժողովրդեան, որոնց սրտերը կակղել են նորա քարոզութիւնների շնորհիւ, ինչպէս մոմը կրակի առաջ: Եթէ հեթանոսութիւնը իւր ներկայացուցիչ թագաւորի առաջնորդութեամբ պատերազմ էր վարում քրիստոնէութեան եւ նորա խոստովանողի դէմ, վերջինս յաղթեց՝ չնայելով իւր նիւթական զօրութեան ոչնչութեանը: Զարմանալի իրողութիւն: Ինչպէ՞ս պէտք է բացատրել այդ հանգամանքը:

Փոխանակ պատմական հիմնաւոր կամ անհիմն ենթադրութիւնների մէջ ընկնելու, որ մեր նիւթից դուրս է, աւելի լաւ է Լուսաւորչի կարծիքն իմանանք, քանի որ դա Լուսաւորչի հայեացքների մի մասն է կազմում: «Եւ իմ նայեցեալ՝ տեսի բացեալ զհաստատութիւն երկնից... Եւ լոյս հոսեալ վերուստ ի վայր մինչեւ յերկիր հասանէր», - ասում է Լուսաւորիչ: Ուրեմն, նորա գաղափարով Հայաստանեայց Եկեղեցին հայ ազգի համար մի երկնային պարգեւ է. երկնային, որովհետեւ լոյսը նրկնքից է իջնում, որովհետեւ այդ Եկեղեցւոյ կաղապարը կազմւում է աստուածային զօրութեամբ՝ Աստուածորդւոյ երկիր իջնելով: Քրիստոնէութիւնը, երկնքից գալով, իւր հետ լոյս պիտի բերէր եւ «ընդ լուսոյն՝ զօրք անչափք լուսեղէնք երկթեւեանք», քրիստոնէութեան շնորհիւ մեր երկիրը երկնային էակների բնակավայր պիտի դառնար: Ինչ վսեմ, որքան բարձր եւ աստուածային գաղափար: Քրիստոնէութիւնը, իւր հետ լոյս բերելով, խաւարին թշնամի պիտի հանդիսանար եւ ուրեմն ամէն կերպ պէտք է աշխատէր ոչնչացնել նորան: Եթէ Հայաստանեայց Եկեղեցին ձգտում է իւր հօտին «յանգիտութենէ ի գիտութիւն» առաջնորդել, եթէ նորա նպատակն է խաւարայինը ոչնչացնել եւ նորա տեղ լուսաւորը դնել, ապա ուրեմն հասկանալի է, որ նա իւր նպատակին հասնելու համար զանազան միջոցներ պէտք է գործ դնէր, նա պէտք է պատրաստէր իւր հօտը՝ լոյսն ընդունելու համար:

Եւ Լուսաւորիչ իւր գործունէութեամբ մեզ ցոյց տուեց այդ միջոցներից ամենազերպասելին՝ դաստիարակութիւնը: Լուսաւորչի քարոզած դաստիարակութիւնը զուտ քրիստոնէական է. «Պիտոյ է մեզ դաստիարակութիւն Աւետարանին», - բացատրում է «Յաճախապատումի» մէջ: Ազգային տեսակէտից նայելով՝ քրիստոնէական դաստիարակութիւնն էլ շատ մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ փճացած կամ անբարոյականացած մի ազգ երբէք երկար գոյութիւն ունենալ չի կարող, այնինչ քրիստոնէութիւնը, իւր քարոզած ճշմարիտ բարոյականութիւնը տարածելով ժողովրդի մէջ, երկնային յաւիտենականութեան հասցնելուց զատ, երկրային յարատեւութեանն էլ նպաստած կը լինէր: Ինչպէս վերեւ ասացինք, Լուսաւորիչ աչքի առաջ ունէր քրիստոնէական դաստիարակութիւնը, եւ նա իւր գործունէութեամբ այդ բանը պարզեց: Լուսաւորիչ քրիստոնէական դաստիարակութեան միջնորդութեամբ պէտք է արմատախիւ անէր չարութեան սերմերը: Լուսաւորիչ քրիստոնէական դաստիարակութեան շնորհիւ պէտք է բաց անէր մեր աչքերը՝ խաւարի անդունդներից խուսափելու համար: Լուսաւորիչ այդ դաստիարակութեամբ խաւարի արբա-

նեակներին լուսաւորութեան առաջնորդներ պիտի դարձնէր, դպրոցներում պիտի պատրաստէր խաւարի դէմ մարտնչող հոգեւոր գիտնորներին: Բայց Լուսաւորչի քարոզած զուտ քրիստոնէական դաստիարակութիւնը շուտով ազգային դաստիարակութեան փոխուեցաւ, քրիստոնէական դաստիարակութիւնը ազգային դաստիարակութեան հիմք դարձաւ, եւ այդ տեսակէտից նայելով՝ Լուսաւորչին իրաւամբ հայոց ազգային դաստիարակութեան հիմնադիր պիտի համարենք:

Լուսաւորիչ առաջին անգամ Հայ Եկեղեցւոյ հետ կապեց հայ դպրոցի գաղափարը, Լուսաւորիչ առաջին անգամ Եկեղեցւոյ յառաջադիմութեան մէջ տեսաւ եւ նորա հօտի՝ Հայ ազգի յառաջադիմութիւնը: Լուսաւորչի գաղափարով՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ հիմնական սկզբունքներից մէկն է քրիստոնէական դաստիարակութիւն տալ իւր հօտին: Եւ որովհետեւ այդ քրիստոնէական դաստիարակութիւնը Լուսաւորչից համարեայ անմիջապէս յետոյ միացաւ ազգային դաստիարակութեան հետ եւ նորա հիմքը կազմեց, ապա ուրեմն կարող ենք ասել, եւ ճշմարիտ այդպէս է, թէ Հայաստանեայց Եկեղեցւոյ ամենահիմնական սկզբունքներից մէկն է ազգային դաստիարակութիւն տալ հայ ազգին: Այո՛, Հայաստանեայց Եկեղեցւոյ հովանաւորութեան տակ պիտի դաստիարակուէր հայ սերունդը, եւ դաստիարակութեան շնորհիւ լուսաւորութեան ճառագայթները հայ ընտանիքի խորքերը պիտի թափանցէին. ահա՛ ազգային Եկեղեցւոյ անխախտելի սկզբունքներից մէկը:

Եւ յիշուի, մեր պատմութիւնը ցոյց է տալիս, որ Եկեղեցին հաւատարիմ է մնացել իւր ուղղութեանը եւ մինչեւ այժմ էլ քրիստոնէականը ազգային դաստիարակութիւնից անբաժան է համարում: Ճշմարիտ է, պատմութեան թշուառ հանգամանքները արգելք են եղել մեր Եկեղեցւուն՝ ազգային դաստիարակութիւնը ժողովրդի մէջ լաւ ընդհանրացնելու, բայց գաղափարը իւր սրբութիւնը միշտ պահպանել է, մեր հայրերը հաւատացել են, թէ Հայաստանեայց Եկեղեցւոյ շնորհիւ սեւ ալմերը լուսակիզն բրդով ոչխարների պիտի փոխուէին, եւ թէ նորա հովանու տակ «ծնեալ գառինքն ամենայն լուսակիզն» պիտի լինէին:

Գ

Եթէ մենք Հայաստանեայց Եկեղեցին ազգային հիմնարկութիւն ենք համարում, եթէ մեր գոյութիւնը, մեր փրկութիւնը Եկեղեցւոյ մէջ ենք տեսնում, դորա պատճառն այն է, որ մեր Եկեղեցին էլ փոխադարձաբար, իբրեւ կենդանի մարմին, իւր յարատեւութիւնը հօտի

յարատեւութեան մէջ է տեսնում: Այսպէս ուրեմն, հայոց ազգ եւ Հայաստանեայց Եկեղեցի, ազգային դաստիարակութիւն եւ Եկեղեցւոյ դաստիարակութիւն՝ դարերի ընթացքում մի անբաժանելի միութիւն են կազմել: Այդ միութիւնը այնքան սերտ էր, որ ազգային շահերը միացան Հայաստանեայց Եկեղեցւոյ շահերի հետ եւ ընդհակառակը, Եկեղեցւոյ վտանգը հայ ազգինն էր եւ ընդհակառակը: Հայոց լեզուն Հայոց Եկեղեցւոյ մէջ կենդանի մնաց, հայոց կեանքը Հայոց Եկեղեցւոյ մէջ զարգացաւ, հայոց պատմութիւնը Հայոց Եկեղեցւոյ պատմութիւն դարձաւ: Հայոց Եկեղեցի անունը մեր ասածների համար մի մեծ փաստ կարող է լինել: Լուսաւորիչ քրիստոնէական ընդհանուր մի գաղափար յայտնեց, բայց հայոց պատմական կեանքը այդ գաղափարը բոլորովին իւրացրեց, ազգայնացրեց:

Անշուշտ, այդ իրողութիւնը ունի իւր պատմական հիմունքները, կրկնում ենք, այդ երեւոյթը ունի իւր որոշ պատճառները, որոնց շնորհիւ մեր Եկեղեցին կարծես մի բացառիկ ճանապարհ է բռնել միւսների նկատմամբ: Թէ ճշմարիտ Լուսաւորչի արտայայտած գաղափարը նորանից յետոյ բոլորովին ազգային կերպարանք ստացաւ, մեզ համար մեծ ապացոյց կարող է լինել նորա յաջորդների գործունէութիւնը: Մեծն Ներսէս այդ գաղափարի մարմնացման սկիզբն է, իսկ ս. Սահակ՝ իսկական մարմնացումը: Հինգերորդ դարու յեղափոխութեան սկիզբը Մեծն Ներսէս դրեց. նա, նկատելով հայ ազգի քայքայումը, իւր մեծ բարենորոգումներով կամեցաւ մի նոր կազմակերպութիւն տալ հայոց ազգին: Եթէ ս. Ներսէս Մեծի անուն ժառանգեց, ոչ թէ միայն մեծ եկեղեցական, այլեւ ազգային մեծ գործիչ, մեծ հայրենասէր լինելուն համար: Մեծն Ներսէսի օրով հայոց կաթողիկոսների՝ Կեսարիայում ձեռնադրութեանը վերջ տրուեցաւ՝ ապագայում վէճերի առաջն առնելու համար: Մեծն Ներսէս հայոց անկախութեան մեծ պաշտպանն էր. ո՞վ աշխատեց նախարարների եւ թագաւորի մէջ համերաշխութիւն հաստատել՝ երկիրը ներքին երկպառակութիւնից ազատելու համար. ո՞վ մերժեալ ժառանգին նստեցրեց հօր գահի վերայ: Իսկ նորա արժանաւոր որդին մի քայլ էլ հօրից առաջ անցաւ. ոսկեդարը նոյն գաղափարի արտայայտութիւնն էր: Երկու մեծ հանճարները՝ ս. Սահակ-Մեսրոպ, իրենց բոլոր աշակերտներով եւ հետեւողներով այդ գաղափարի ծնունդ էին: Մի փոքր այստեղ կանգ առնենք՝ մեր ասածը աւելի պարզելու համար: Թէ ճշմարիտ մեր Եկեղեցին ազգային հաստատութիւն է եղել, նա հաւասարապէս եւ ազգայնութեան եւ քրիստոնէութեան պաշտպան է եղել. այդ ապացուցանում է մեր ամբողջ պատմութիւնը եւ մասնաւորապէս,

աւելի որոշ, հինգերորդ դարու գործիչների կեանքը: Ս. Սահակ-Մեսրոպ իրենց բոլոր կողմնակիցներով հայ ազգի ճշմարիտ մշակներն էին, ս. Սահակեանները իրենց գործունէութեամբ ճշմարիտ Հայրենասէրներ եւ ազգային կեանքի յեղափոխիչներ հանդիսացան. նոքա տասնեակ տարիներ անձնատուր եղան լուսաւորութեան գործին: Ս. Մեսրոպ իւր մեծ գիւտով, ս. Սահակ իւր մեծ օժանդակութեամբ եւ գործունէութեամբ ամբողջ սերունդ պատրաստեցին, մի նոր կեանք տուին հային, ոսկեդար ստեղծեցին: Եւ ուրիշ կերպ անել չէին կարող, քանի որ նոքա Հայաստանեայց Եկեղեցւոյ ճշմարիտ պաշտօնեաներ էին, իսկ Հայաստանեայց Եկեղեցւոյ ճշմարիտ պաշտօնեայ լինել՝ նշանակում է եւ հայ ազգութեան ճշմարիտ անդամ եւ մշակ լինել: Անշուշտ, մենք ս. Սահակ-Մեսրոպին, Խորենացուն, Եղիշէին, Փարպեցուն եւ այլ դոցա նմաններին ազգային գործիչներ կը համարենք: Ինչո՞ւ. որովհետեւ նոքա հային լեզու տուին, պատմութիւն տուին, մի նոր կեանք, եռանդ, ոգեւորութիւն ներշնչեցին ժողովրդի մէջ: Այլեւս չենք յիշում ս. Սահակի քաղաքական գործունէութիւնը, որ մեր ասածների համար մի անհրաժեշտ փաստ կարող է լինել: Եթէ նոյնիսկ ընդունենք, թէ ս. Սահակեանների գործունէութեան նպատակը Եկեղեցւոյ ապահովութիւնն էր, էլի շատ հեշտութեամբ կարող ենք ապացուցանել մեր Եկեղեցւոյ եւ ազգի սոյն սերտ կապակցութիւնը, որի մասին խօսել ենք մենք. քանի որ Եկեղեցւոյ ապահովութեամբ ազգի գոյութիւնն է ապահովանում, եւ Եկեղեցւոյ բարձրութեամբ ազգն է բարձրանում, Եկեղեցւոյ եւ ազգի լեզու նոյնն են դառնում, իսկ լեզուն ազգութեան ամենաորոշ յատկանիշներիցն է: Եթէ պատմական փաստերի վերայ հիմնուելով ցոյց տանք, թէ Հինգերորդ դարու յեղափոխութիւնը պատմական անհրաժեշտութիւն էր հայոց համար, եւ այդ անհրաժեշտութիւնը կատարուեցաւ Եկեղեցւոյ պաշտօնեաների ձեռքով, այն ժամանակ աւելի հաստատութեամբ կարող ենք մեր ասածը պաշտպանել: Եթէ հայ ազգի համար, օրինակ, անհրաժեշտութիւն էր բեր ունենալ, եւ անհրաժեշտութիւնը լցուցանում է Եկեղեցին, ուրեմն պարզ է, թէ որքա՞ն սերտ կապակցութիւն ունին միմեանց հետ, որ մէկի կարիքը միւսինն է, որ մէկի պահանջը միւսն է կատարում:

Դ

Մի անգամ յիշեցինք, թէ ս. Սահակեանների գործունէութիւնը Լուսաւորչի գաղափարների մարմնացումն է. դորան ապացոյց է, բացի նոցա գործունէութիւնից, եւ ս. Սահակի տեսիլը, որի մէջ նորից արտայայտուած են Լուսաւորչի գաղափարները՝ միայն աւելի պարզ,

աւելի ազգային կերպարանքով: Ոչ միայն ս. Սահակ իւր գործակիցներով, այլև մեր բոլոր հայ հայրապետները, հոգեւորականութիւնը իրենց կեանքն ու գործունէութիւնը հայ ազգին են նուիրել՝ հաւատարմով միանգամայն, որ կատարում են Հայաստանեայց Եկեղեցւոյ պաշտօնէի իսկական կոչումը: Եւ այդ ուղղութեան հայրը ս. Լուսաւորիչը եղաւ: Լուսաւորութեան գործը նա կապեց Եկեղեցւոյ հետ, նա մեզ ճշմարիտ յառաջադիմութեան ճանապարհը ցոյց տուեց՝ Եկեղեցւոյ յառաջադիմութեան հետ կապելով եւ նորա հօտի յառաջադիմութիւնը: Նա մեզ մի վսեմ եւ աստուածային գաղափար յայտնեց, խրախուսեց պատերազմել չարութեան դէմ՝ յուսադրելով, թէ վերջիվերջոյ յաղթութիւնը մեր կողմը պիտի լինի, եթէ ճշմարտութեան ճանապարհը կը բռնենք: Լուսաւորչի տուած ուղղութեանը մեր Եկեղեցին հաւատարիմ է մնացել մինչև այժմ: Այդ ուղղութիւնն է պատճառ, որ մեր Եկեղեցին իւր շահերը ազգի շահերից երբէք չի բաժանել, նորա ուրախութիւններն ու վշտերը, յաջողութիւններն ու դժբախտութիւնները իւրը համարել: Այդ ուղղութիւնն է պատճառ, որ Հայաստանեայց Եկեղեցի գաղափարը այնպէս սերտ կապուած է հայ ազգութիւն գաղափարի հետ, որ Հայաստանեայց Եկեղեցւոյ կազմակերպութիւն, Հայաստանեայց Եկեղեցւոյ պայծառութիւն, հայ ազգի վերակենդանութիւն, հայ ազգի փառք է նշանակում: Մենք հաւատում ենք, որ երբէք չի գայ այն օրը, երբ մեր Եկեղեցին իւր շահերը բաժանէ հայ ազգի շահերից, երբ հայ հոգեւորականութիւնը առանձնանայ եւ բոլորովին առանձին մարմին կազմէ, որովհետեւ Հայաստանեայց Եկեղեցին հայոց Եկեղեցի է, ազգային հաստատութիւն է:

Այդ ազգային նոր հաստատութեան կեդրոնը հայու հայրենիքի կեդրոնը պիտի լինէր, նոր հաստատութեան սիրտը հայու հայրենիքի սիրտը պիտի լինէր: Արարատն էր հայու ծագման, զարգացման ասպարէզը, Արարատումն էր հայը կեանք, կազմակերպութիւն ստացել, Արարատն էր եղել հայու օրօրանն ու մայր հայրենիքը: Այժմ քրիստոնէութեան շնորհիւ մենք մի նոր ազգ պիտի դառնայինք, մի նոր կենդանութիւն պիտի ստանայինք, Արարատեան աշխարհի կեդրոնում մի փոքրիկ տարածութիւն հայի իսկական հայրենիքը պիտի դառնար, ցրուած հայերը այնտեղից պէտք է ստանային կենդանութեան ամէն մի նոր զարկ, այնտեղից, որպէս հայութեան սրտից, ամբողջ մարմինը սնունդ, արիւն պիտի ստանար: Հայի հայրենեաց այդ փոքրիկ տարածութեան վերայ պիտի իջնէր Միածին Որդին ոսկի ուռը ձեռքին՝ աստուածային Իւր բոլոր գորութեամբ հաստատելու մի

չինութիւն, որի հիմքը անապականութիւնն է, նիւթը՝ հուր, լոյս եւ ամպ:

Այդ շինութեան կատարին պիտի հաստատուէր «աթոռ աստուածակերտ, սքանչելի, հրեղէն, գորով փարեալ լոյսն համատարած»: Այո՛, Հայաստանեայց հայրապետութեան հիմքը հայրենեաց հողի վերայ է դրուած, իսկ նորա հաստատողը Միածին Որդին է: Այդ աթոռը իւր հրով պիտի այրէր, ոչնչացնէր աղտոնութիւնները, իսկ լուսով՝ խաւարը, աթոռի վերայ հաստատուած է լուսաւոր խաչը, այդ աթոռը խաչի՝ Նաչեցեալի հովանաւորութեան տակ է, խաչի զօրութեամբ շինութեան տակից յորդառատ աղբիւր է բղխում՝ մաքրելու մարդկանց կեղտերը, աղբիւր մկրտութեան, որի մէջ մկրտողները լուսոյ արբանեակներ պիտի դառնային: Եւ այս ամէնը Լուսաւորիչ մեզ տուեց: Նա մեզ ցոյց տուեց, թէ պէտք է վախենալ խաւարից եւ խաւարայիններից, պէտք է վախենալ պատերազմ դուրս գալու նոցա դէմ, որովհետեւ մենք կը յաղթենք անպատճառ, եթէ մեր զէնքը լոյսը կը լինի. չէ՞ որ խաւարը միշտ չքանում է լուսոյ ներկայութեամբ: Լուսաւորիչ յայտնեց մեզ, թէ ոչինչ վնասել չէ կարող Հայաստանեայց Եկեղեցւոյ հօտին, եթէ հաւատարիմ կը մնայ իւր Եկեղեցուն եւ նորա սուրբ ձգտումներին ճշմարիտ հետեւող կը լինի: Լուսաւորիչ գուշակեց՝ ժամանակաւոր գայլերը կ'ոչնչանան, հրեղէն հեղեղը կ'այրէ նրանց, իսկ հաւատարիմ գառները, թեւ առնելով, երկինք կը թռչեն՝ դէպի բարձրն ու վսեմը: Բայց մենք ցանկալի բարձրութեան չհասանք, որովհետեւ պատմական թշուառ հանգամանքները արգելք եղան: Այդ հանգամանքներին նայելով՝ մենք վաղուց պէտք է անհետացած լինէինք աշխարհի երեսից, այնինչ մենք դեռեւս պահպանում ենք մեր գոյութիւնը եւ յոյս ունինք, որ գալու է մի օր, երբ նորից հոգեպէս կենդանութիւն պիտի ստանանք: Անշուշտ, պարսկական, արաբական, մոնղոլական հոսանքներից չպէտք է կարողանայինք ազատուել, եթէ մեր Եկեղեցւոյ փրկարար ազդեցութեան տակ չլինէինք: Հայը կորցնում է իւր լեզուն, բայց, հաւատարիմ մնալով իւր Եկեղեցուն, չի կորցնում իւր ազդեցութիւնը, եւ մենք յուսով ենք մնում, թէ նա մի օր նորից ձեռք կը բերէ իւր կորցրածը: Հայոց Եկեղեցին ամենասերտ կապերով միանալով հայ ազգութեան հետ՝ նորա գոյութեան հետ կապուեցաւ եւ հայ ազգի գոյութիւնը, նորա յաւիտենականութեան հետ կապուեցաւ եւ հայ ազգը: Այդ է պատճառը, որ մենք այնպիսի կասկածանքով ենք նայում Հայոց Եկեղեցւոյ ծոցից դուրս եկած հայերի վերայ, մենք կասկածում ենք, որ դժբախտ հանգամանքներում գուցէ չկարողանան իրենց ազգային գոյութիւնը

պահպանել եւ կորչեն: Բայց Հայաստանեայց Եկեղեցին, մի մարմին լինելով, որոշ կազմակերպութիւն ունենալով, աւելի հաստատութեամբ կարող է կռուին դիմանալ, եւ մենք հաստատում ենք, որ անընկճելի պէտք է մնայ, ինչպէս իւր մարգարէական աչքերով նախատեսել է Հայաստանեայց Եկեղեցւոյ Լուսաւորիչը:

Ե

Հայերիս մէջ միշտ եղել է, կարծես, փայլուն ապագայի գաղափարը, մենք մի առանձին քնքշութեամբ ենք նայել այդ գաղափարի վերայ: Այդ յոյսը Հայի միսթարիչն ու սփոփիչն է եղել. եթէ նա անցեալը տխրութեան քողով ծածկուած է տեսել, եթէ ներկան անտանելի է Համարել, այդ բոլորը ոչնչացել է մեծ ապագայի յուսով: Եւ այդ յոյսը ներշնչել են մեր մէջ ս. Լուսաւորիչ, ս. Սահակ եւ այլ դոցա նման Հայերը: Եւ մենք հաւատում ենք, թէ ազգային Եկեղեցին պիտի պահպանէ եւ ազգի գոյութիւնը, հաւատում ենք, թէ Եկեղեցւոյ միջնորդութեամբ պիտի կատարուի Հայի մտաւոր վերածնութիւնը, ս. Սեղանից պիտի ծագեն Հայի կենդանացուցիչ ճառագայթները: Մենք մոլեռանդութեամբ չենք գոչում, թէ՛ «Արտաքոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ չի՛ք փրկութիւն»: Բայց արտաքոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ Հայութեան փրկութիւնը մի փոքր կասկածելի է, վտանգաւոր է: Ինչո՞ւ աւելի ապահով ճանապարհը չբռնենք, ինչո՞ւ վահան վերարկուի տակ չանենք այն ամէնը, որ անկեալին բարձրացնում է, մեռածին վերակենդանութիւն է տալիս:

Այս համառօտ տեսութեամբ մենք աշխատեցինք Հայ ազգի եւ Եկեղեցւոյ յարաբերութիւնը ցոյց տալ աւելի անցեալի նկատմամբ: Բայց, անշուշտ, նոյն, գուցէ եւ աւելի մեծ դեր կարող է խաղալ ներկայումս եւ ապագայում, եթէ նոր Հայերս էլ նոյն աչքով կը նայենք Եկեղեցւոյ վերայ, ինչպէս եւ մեր նախնիք: Անկարող ենք այժմ ներկայի նկատմամբ ցոյց տալ այն բոլոր հանգամանքները եւ միջոցները, որ Հայաստանեայց Եկեղեցին իւր պաշտօնեաների միջնորդութեամբ կամ նոցա առաջնորդութեամբ կարող է իրագործիչ Հանդիսանալ մեր փայտաբայած յոյսերին, բայց մենք չենք թերահաւատում այդ բանի մէջ: Քրիստոնէական ճշմարիտ բարոյակա-նութիւնը՝ միացած ազգային դաստիարակութեան հետ, զօրաւոր գրիչը՝ միացած քարոզչական-առաքելական սրբազան պաշտօնի հետ, կանոնաւոր կազմակերպութիւն՝ միացած պարտքի եւ իրաւունքի ճշմարիտ հասկացողութեան հետ, ճշմարիտ Հայրենասիրութիւն՝ միացած անյողողը կամքի հետ. ահա՛ յաւիտենականութեան ճանա-

պարհը:

Մեր համառօտ տեսութիւնը լրացնելու համար չպէտք է մոռանանք եւ մի կէտ, որ մեր Եկեղեցւոյ զլխաւոր յատկանիշներից մէկն է. Լուսաւորիչ Եկեղեցւոյ գաղափարը բացատրելուց յետոյ, քրիստոնէական ճշմարիտ վարդապետութիւնը աւանդելուց յետոյ զգուշացրեց իւր հօտին՝ չչեղուել ճշմարտութեան ճանապարհից, չխառնուել երբէք դաւանաբանական անօգուտ վէճերի մէջ, անօգուտ, «զի մեծութիւնք անքնինք են, անսկիզբն էութիւնն, ի վեր քան զիմանալիս յանսահմանութեանն եւ յանբաւութեանն»: Ինչո՞ւ ի իզուր ժամանակ կորցնել այնպիսի խնդիրների համար, քանի որ դրական ոչինչ չպէտք է ստանանք: «Այսպէս ընկալաք զհաւատոցն բան, եւ դուք այսպէ՛ս հաւատացէք յԱմենասուրբ Երրորդութիւնն»,- ասում է Լուսաւորիչ: Նա իւր հօտից պահանջում է քրիստոնէական կրօնի երեք սիւները՝ հաւատ, յոյս, սէր, մանաւանդ՝ հաւատ, որովհետեւ «ճշմարիտ հաւատ լոյս է աչաց մտացն»: «Ըստ աճման հաւատոց ի կատարումն առաքինութեան եկեղեցւոյ»,- բացատրում է Լուսաւորիչ: Այն էակը, որ աննման, անհամեմատ, անպատում, անսահման, անհաս եւ անբաւ է, «հաւատով տեսանի եւ իմանի: Վասն այսորիկ լուսացո՛ւք ի դատարկ եւ ի վայրապար քննութենէ եւ զհետ երթիցուք խրատուց Գրոց Սրբոց՝ Հնոց եւ Նորոցն»: Լուսաւորիչի գաղափարով՝ այդպիսի քննութիւնները, վիճաբանութիւնները մոլորութեան կարող են հասցնել. «Եւ մի՛ անկանիլ ի բազմախոյզ խնդիրս, որ վրիպեցուցանեն ի ստոյգ հաւատոց»: Լուսաւորիչ, իւր քարոզած վարդապետութիւնը ճշմարտութիւն համարելով, պատուիրում է իւր հօտին՝ չչեղուիլ իւր տուած ճշմարտութիւններից. «Եւ մի՛ խոտորիք կարգաց իմաստութեան յաջ եւ յահակ»: Եթէ մենք պարծենում ենք, թէ մեր Եկեղեցին ուղղափառ է, մոլորութիւնների մէջ չէ ընկել, եթէ մենք պարծենում ենք, թէ մեր Եկեղեցին պահպանել է առաքելական դարու գոյնն ու կերպարանքը, բոլորը այդ ուղղութեան շնորհիւն է: Մեր Եկեղեցւոյ սուրբ Հայրերը, ճշմարիտ հետեւող Հանդիսանալով իրենց նախահայրապետին, աշխատեցին որքան կարելի է խոյս տալ աւելորդ վէճերից եւ իրենց ոյժն ու ժամանակը հօտի փրկութեանն ու երջանկութեանը նուիրեցին: Հէնց Լուսաւորիչի սկսած՝ մեր բոլոր Հայրապետները աշխատել են իրենց հօտի քրիստոնէական դաստիարակիչներ դառնալ, աշխատել են ժողովրդին հայր Հանդիսանալ, պաշտպանել նորան տգիտութիւնից եւ արտաքին բռնութիւններից եւ միշտ խոյս են տուել դաւանաբանական աւելորդ վիճաբանութիւններից: Մեր հայ Հայրապետները իրենց գործունէութեամբ նուիրուել են ազգին, եւ իրենց ուղղութեամբ

բոլորն էլ կարծես լուելեայն կրկնել են Լուսաւորչի խօսքերը՝ «Իսկ մեք փառաւորեսցուք», եւ այդպիսով պահպանել են մեր Եկեղեցւոյ անարատութիւնը:

Ահա՛ Լուսաւորչի մեծութեան, Հեղինակութեան պատճառը Հայ ազգի աչքում: Կարծում ենք՝ այժմ բաւական պարզուած պէտք է լինի, թէ ով էր Լուսաւորիչ եւ ինչու Լուսաւորիչ է կոչուում: Հասկանալի է, որ Հայ ժողովուրդը իւր մեծ բարբարի, իւր Լուսաւորչի յիշատակը անջինջ պէտք է պահէր իւր սրտում, պիտի յաւերժացնէր նորա անունը: Եւ յիւրաւի, մեր ժողովուրդը գեղեցիկ աւանդութիւններով զարդարեց նորա յիշատակը. Լուսաւորիչ կանգնած է, ոսկէ աթոռի վերայ նստած՝ Քրիստոսի մօտ երկնքում, ժողովուրդը իւր երեւակայութեամբ Լուսաւորչի անունով մշտավառ կանթեղ է կախել, Հայաստանի կաթնաղբիւրները Լուսաւորչին նուիրել, Լուսաւորչի ազբիւրներին մէջ լողանալով՝ ազատուած է իւր ցաւերից: Ոչ միայն Լուսաւորչի կեանքն ու գործունէութիւնը, այլեւ նոյնիսկ մահը զարդարուած է գեղեցիկ աւանդութիւններով. հովիւները Լուսաւորչին գտնում են մեռած՝ «կանգուն ի վերայ ոտից իւրոց»: Լուսաւորչի նման մարդը միշտ կենդանի, միշտ կանգուն պէտք է մնայ, քանի որ Հայ Եկեղեցի, Հայ ազգ կայ:

ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԿԱԿԱԳ
«Արարատ», մարտ, 1890

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ (Գալստեան կիրակի)

«Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէր
գմարգարէս եւ քարկոծ առնէր գառաքեալսս
առ ճա: Քանիցս անգամ կամեցաւ ժողովել
գմանկունս քո, զոր օրհնակ ժողովէ հաւ
գձագս իւր ընդ թելովք, եւ ոչ կամեցարուք:
Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ»
[Մատթ. ԻԳ 37-38]:

«Եւ իբրեւ մերձեցաւ, տեսեալ զքաղաքս՝
եղաց ի վերայ Ռորա.» [Ղուկ. ԺԹ 41]:

Ա

Հայրենասիրութիւնը մի բնական զգացում է՝ Հաստատուած մեր սրտի խորքերում: Ինչպէս բնական է սէրը դէպի ծնողները, եւ դատապարտելի՝ այն որդու վարմունքը, որ անարգանքով է վարուում նրանց հետ, նոյնչափ բնական է սէրը եւ դէպի Հայրենիքը, եւ դատապարտելի՝ դէպի նորա շահերը ցոյց տուած ապերախտութիւնը: Մենք ոչ միայն մեր ծնողների գաւակներն ենք, այլեւ՝ մեր Հայրենիքի: Մեր կեանքի առաջին վայրկեանից կապուած ենք Հայրենիքի հետ, նորա օդն ենք շնչում, նորա ջուրը խմում, նորա բերքերով կերակրւում: Բնական է նոյնպէս եւ մարդու սէրը դէպի իւր բնիկ ժողովուրդը: Մեր երակների մէջ նոյն արիւնն է վազում. նոյն վարք ու բարքով, սովորութիւններով, նոյն անցեալով եւ ապագայի յոյսերով կապուած ենք միմեանց հետ: Ամենքիս բերանում նոյն լեզուն է յորջորջւում, եւ Հարիւրաւոր ու Հազարաւոր տարիների պատմութիւն, անցեալի յիշողութիւն, ուրախութիւն եւ վիշտ, յաջողութիւն եւ ձախորդութիւն ընդհանուր է ամենքիս համար:

Սկզբում այդ գաղափարը մի բնագոյն էր գուցէ, բայց մարդկային Հոգու զարգացման հետ այն դառնում է մի զօրեղ գիտակցութիւն: Նիւթական շահերի պաշտպանութեան հետ միանում է եւ Հոգեւոր շահերի պաշտպանութեան գաղափարը. անձնական փառքի, պատուի, ապահովութեան եւ բարօրութեան հետ զարգանում է ազգի ու Հայրենիքի փառքի, ապահովութեան եւ բարօրութեան գաղափարը: Եւ այս գիտակցութիւնից է բխում Հին ազգերի ամենաբարձր

առաքինութիւնը՝ քաղաքացիութեան եւ Հայրենասիրութեան զգացումը: Ազգութեան գաղափարը այն առանցքն էր, որի շուրջն էր պտտում Հին ազգերի պատմութեան անիւր: Յունաց եւ Հռովմայեցւոց պատմութիւնը դեռեւս առողջ եւ բարոյական շրջաններում լի է Հայրենասիրական առաքինութիւնների նկարագրութիւններով:

Բայց այդ շրջաններում իսկ զօրեղ եսական մի դրոշմ է կրում այն, որ յատուկ է Հին Հեթանոսութեան: Քաղաքակիրթ արուեստի եւ գիտութեան պտուղներով ուճացած յոյնի Համար իսկ անծանօթ է մարդասիրութեան եւ մարդկային արժանապատուութեան ընդհանուր գաղափարը. պատույ եւ յարգանքի արժանի է միայն յոյնը, իսկ միւս ազգերի ճակատին դրոշմուած է «բարբարոս» անունը, որ միեւնոյն ժամանակ արհամարհանքի եւ անարգանքի արտայայտութիւն էր: Հռովմայեցի կոչուած էր նուաճելու աշխարհը եւ միւս ազգերի ազատութեան աւերակների վերայ կանգնելու իւր փառքի եւ նիւթական ճիւղութեան նոր տաճարը: Նուաճուած ազգերի Հարստութիւնն ու երիտասարդ ուժերը որպէս գերիներ փոխադրում էին Իտալիա՝ պատրիկների Հարստութիւնն ու զեղխութեան միջոցները դիւրացնելու: Հռովմայեցի զօրապետների յաղթական ընթացքը նուաճուած ազգերի շղթայակապ թագաւորների, արքայազուհիների, յափշտակուած գանձերի եւ արուեստի արտադրութիւնների ցուցադրութիւններով՝ ինչպէ՛ս բնորոշ է այս եսական, Հպարտ զգացման եւ դէպի անզօրները տածած արհամարհանքի:

Այս զգացման եւ Հայեացքի արդիւնքն էր Հռոմի այն աննկարագրելի անբարոյականութիւնը, քստմնելի զեղխութիւնը, ամօթի եւ պատկառանքի կատարեալ բացակայութիւնը, որ նկարագրում են ժամանակի պատմիչները քրիստոնէութեան ծագման օրերին: Բայց նոյնիսկ Հրեայ ժողովուրդը, որ կրօնական եւ բարոյական գաղափարներով այնքան գերազանց էր դասական ազգերից, ազատ չէր ազգային ամբարտաւանութեան զգացումից: Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը միայն հրէութիւնն էր. բոլոր Հեթանոս ազգերը պիղծ են եւ ատելի: Միայն բարձր Հոգիներն են՝ նշանաւոր մարգարէներն ու աստուածամերձ բարեպաշտները, որ երբեմն բողոքում են այս թիւր եւ սխալ Հասկացողութեան դէմ:

Բ

Քրիստոնէութիւնը, որ աշխարհ եկաւ՝ բարոյական յեղափոխութիւն յառաջ բերելու կեանքի մէջ, բնականաբար, առանց ազդեցութեան չմնաց եւ Հայրենասիրութեան գաղափարի վերաբերութեամբ:

Նա մաքրեց Հայրենասիրութիւնը եսական եւ բարբարոսական տարրերից եւ մի բարոյական զգացմունք դարձրեց այն: Մինչդեռ Հին աշխարհի քաղաքակիրթ ազգերի Հայրենասիրութիւնն ու ազգասիրութիւնը ամբողջապէս եսական եւ շահասիրական խարխիսների վերայ էին Հաստատուած, քրիստոնէութիւնը այստեղ եւս կամենում է առաջնորդող սկզբունքը բարոյականը դարձնել: Հին ազգերի մէջ առաքինութիւն էր ոչ միայն բարեկամին սիրել, այլեւ՝ թշնամուն վնասել, ոչնչացնել: Թշնամու արիւն խմելը շատ ազգերի մէջ պատմական իրողութիւն էր: Նոյնիսկ սաղմոսների մէջ թշնամական զգացման այնպիսի խիստ արտայայտութիւններ եւ անէծքներ կան դէպի Հակառակորդները, որ քրիստոնեան եւ բարեկիրթ մարդը առանց սարսափի կարողալ չի կարող: Որպիսի՛ խորին եւ անսահման ատելութիւն կարող էր զգալ Հրեան դէպի իւր թշնամին, եւ այդ՝ ոչ միայն դէպի նորա անձը, այլեւ դէպի նորա կինը, անմեղ որդիքը, նորա ամբողջ սերունդը [Սաղմ. ՃԸ 6-16]: Բայց քրիստոնէութիւնը գթութեան, կարեկցութեան եւ սիրոյ կրօնն էր. Հայրենասիրութեան «բնական» զգացումն էլ պիտի ցօղուէր այդ կենդանարար զօրութեամբ եւ ուրիշ կերպարանք ստանար:

Նոր Կտակարանի մէջ, իսկապէս, Հայրենասիրութեան եւ ազգասիրութեան մասին խօսք չկայ: Եթէ մենք պարտաւոր ենք սիրել ոչ միայն մեր բարեկամին, այլեւ թշնամուն, եթէ մեր «ընկերն» է ոչ միայն մեր ազգակիցը. այլեւ ամենայն ոք, որ կարօտ է օգնութեան, կարեկցութեան, ել՛ի բոլոր մարդիկ եղբայրներ են՝ միեւնոյն երկնաւոր Հօր երկրաւոր որդիք, ապա ուրեմն ի՞նչ խօսք կարող է լինել սովորական մտքով, մանաւանդ՝ Հին աշխարհի Հասկացողութեամբ, ազգասիրութեան եւ Հայրենասիրութեան մասին: Ո՛չ, քրիստոնէութիւնը խորտակել է Հին աշխարհի կուռքը, եսական ամրոցները եւ անձնուիրութեան ու սիրոյ լուսեղէն կամարը կանգնել: Այս է պատճառը, որ կեանքի եւ գրականութեան մէջ Հազուադէպ չեն այնպիսի ձայներ, որոնք պնդում են, թէ քրիստոնէութիւնը Հայրենասիրութեան եւ ազգասիրութեան Հակադրութիւնն է:

Արդարեւ, բոլորովին անհիմն չէ այս դատողութիւնը, թէ եւ սխալ է Հանած եզրակացութիւնը: Քրիստոնէութիւնը Հայրենասիրութեան գաղափարը ոչնչացնել չէր կարող. նա ոչնչացնում է միայն Հին աշխարհի միակողմանի եւ սխալ Հասկացողութիւնը այդ մասին եւ նոր գնահատութիւն տալիս՝ սրբելով այն անբարոյական, եսական, շահասիրական կամ, նոր լեզուով խօսելով, նեղ, շովինիստական տարրերից: Ծձմարիտ Հայրենասէր եւ ազգասէր լինելու գաղափարը

ոչ միայն դէմ չէ քրիստոնէութեան, այլ վերջինս է, որ ազնուացնում է եւ բարձր առաքինութիւն դարձնում այն: Նա կապում է բազմակեղու եւ բազմատեսակ ազգերը միմեանց հետ՝ առանց ոչնչացնելու նրանց ինքնուրոյնութիւնն ու առանձնայատկութիւնները: Հայրենասիրութիւնը քրիստոնէական հասկացողութեամբ բարձր մարդասիրութիւն է: Հայրենասիրութիւն է մաքառել սեպհական ժողովրդի տգիտութեան, անբարոյականութեան, աղքատութեան, ինչպէս եւ հիւանդութիւնները եւ այլ բազմատեսակ նիւթական եւ բարոյական կարիքները դէմ: Հայրենասիրութիւն է փարատել նորա մտքի խաւարը, լուսաւորել մարդկային հոգու բարձր արտադրութիւններով եւ պաշտպանել նորա ժառանգութիւնները բարոյական բոլոր միջոցներով:

Անշուշտ, քրիստոնէական սիրոյ գաղափարը պարտաւորեցնում է մեզ կարեկից լինել դէպի օտարազգի թշուառը, բայց մեր սէրը կապում է նախ, բնականաբար, մեր շրջապատի եւ ազգի հետ: Քրիստոնէութիւնը ոչ մի պատճառ չունէր դատապարտելու այն թանկագին կապերը, որ մարդուն միացնում են իւր ազգի եւ Հայրենիքի հետ: Նա յատուկ չէ շեշտում այս գաղափարը, որոշ սկզբունքներ չէ տալիս զարգացնելու այն, որովհետեւ նորա բերած յեղափոխութիւնը հոգեւոր էր, ներքին, բայց հէնց այդ պատճառով Հայրենասիրութեան ու ազգասիրութեան գաղափարն էլ բարեփոխութեան պիտի ենթարկուէր՝ իբրեւ մէկը մարդկային հոգու լաւագոյն զգացմունքներէ:

Դեռեւս քրիստոնէութեան ծագման օրերին հրէամիտները մէջ զարթնել էր այն միտքը, թէ արդեօ՞ք նոր ուսումը հակաազգային եւ հակահայրենասիրական չէր. հեթանոսաց առաքեալը իւր ազգի դաւաճանը չէ՞, որ ուրանում է նրա աւանդութիւններն ու օրէնքները, սրբութիւնը: Բայց Հռովմայեցւոց թղթից երեւում է, թէ ինչպէս առաքեալը առաւելութիւն է տալիս իւր ազգին, ցաւում է իւր ժողովրդի բարոյական անկման վերայ եւ կը կամենար մինչեւ իսկ «նզով լինել ի Քրիստոսէ վասն եղբարց եւ ազգականաց ըստ մարմնոյ, որ են Դարայեացիք» [Հռոմ. Թ 3]: Նորա իղձն է միայն, որ իւր ժողովուրդը վերածնուէր այն հոգեւոր փրկութեան համար, որ բերել էր իւր Տէրը:

Աւետարանի մէջ աւելի պարզ ցուցումներ կան այս խնդրի համար. Յիսուս գործում է իւր ժողովրդի մէջ եւ եկել էր՝ Իսրայէլի կորուսեալին գտնելու. իւր աշակերտներին եւս նախ Իսրայէլի քաղաքներն է ուղարկում:

Ինչպիսի՞ թախիժ է պատում Տիրոջ սիրտը Ձիթենեաց սարի վերայից տաճարի եւ Հինաւորց սրբազան քաղաքի շքեղութիւնը դիտելիս: Քաղաքի բարձր ապարանքներն ու աշտարակները, տաճարը իւր գմբէթով եւ ոսկեզօծ գեղեցիկ դարբասներով փայլում էին ուրախ արեւի պայծառ ճառագայթների տակ, բայց մահուան դրոշմն էին կրում արդէն իրենց ճակատին. քարը քարի վերայ չպէտք է մնար այդ հոյակապ շէնքերից... Ուստի եւ լալիս է Տէրը իւր հայրենիքի կործանման նախազգացման տպաւորութեան տակ: Այն հայրենիքը եւ ժողովուրդը, որ Աստուծոյ ազդարար ձայնը չէր լսում, որ մոլեգնութեամբ կոտորում էր իւր մարգարէներին եւ առաքեալներին, խեղդում է իւր որդոց մէջ արդարութեան եւ ճշմարտութեան բողոքի ձայնը, խեղդում եւ սպանում է ինքն իրեն: Ժողովրդի մտքի եւ հոգու անբարոյականութիւնը նորա կործանման նախանշանն է: Այդ գաղափարը փայլում Մատթ. ԻԳ գլխի մէջ, ուր Տէրը քննադատում է իւր ժամանակի առաջնորդների բարոյական արժանիքը եւ նորա հետ կապում Երուսաղէմի կործանման գաղափարը: Գողգոթայի ճանապարհին իսկ, երբ կանայք լալիս են նորա վերայ, նա պատասխանում է. «Դստե՛րք Երուսաղէմի, մի՛ լայք ի վերայ իմ, այլ լացէ՛ք ի վերայ անձանց եւ ի վերայ որդւոց ձերոց»: Ծշմարիտ հայրենասէրի խորին գիտակցութիւնից եւ սրտից բղխած ողբն էր այս իւր անգիտակից եւ բարոյական անկման խորխորատի վերայ կանգնած ժողովրդի համար: Այս խօսքերն ու դէպքերը, յի կապուած են Յիսուսի անձնաւորութեան հետ, առաքելակւն եւ յետառաքելական շրջանի Հայեացքն էր եւ լաւագոյն ապացւոյցը, թէ քրիստոնէութիւնը Հայրենասիրութիւնը չի ոչնչացնում, այլ սրբում, մաքրում եւ կամենում է, որ նորա հիմքը բարոյական լինի: Քրիստոնէութեան համար Հայրենասիրութիւնը նախ բարոյական վերածնութեան գործ է:

Գ

Բայց այսպէս չէին մտածում Յիսուսի ժամանակի փարիսեցիներն ու նախանձայոյցները. նոքա ուրիշ ճանապարհ էին ընտրել՝ առաջնորդուելով մարդկային սխալ հասկացուած ինքնապատահութեամբ եւ կոյր մոլեռանդութեամբ: Հրէից մի բուռն ժողովրդի մէջ արհեստական կերպով ստեղծուել էր այնպիսի մի տրամադրութիւն, որից ամենայն հեշտութեամբ օգտուում էին ստութեան եւ կեղծիքի հերոսները: Սուտ մարգարէներն ու քրիստոսները Հանդէս են գալիս այստեղ եւ այնտեղ՝ միայն արեան նախճիրներ պատրաստելու անմեղ ժողովրդի համար: Յիսուսի ապաշխարութեան եւ հոգեւոր թազաւորութեան քարոզները արձագանք չգտան ժողովրդի մեծամասնութեան մէջ:

Առաքելաների հրեղէն լեզուները չկարողացան ջերմացնել սառույց եւ քար դարձած ժողովրդի սիրտը: Ճակատագրական մի օրհաս՝ սեւ եւ փոթորկալից ամպերով, կախուած էր այդ մի բուռն ժողովրդի գլխին, իսկ նորա կոյր առաջնորդները, մոլեռանդութեան կրքով տարուած, աչք չունէին տեսնելու այն:

Վաթսուռական թուականների վերջերից հրէական փոքրիկ ժողովրդի մէջ մի զարմանալի շարժում սկսուեցաւ, որի նպատակն էր հռոմէական հզօր արձուի թեւերը խորտակել: Բայց այդ շարժումը մի սրտաճմլիկ եւ վերին աստիճանի խրատական ողբերգութեան փոխուեցաւ: Մոլեռանդութիւնն ու կատաղութիւնը միշտ յայտարար չեն ներքին ոգեւորութեան եւ սրբազան ու վսեմ գաղափարի կենդանութեան: Աստուծոյ կենդանարար Հոգին փոթորիկների ամպրոպների մէջ չի երեւում, այլ խաղաղ գեփիւռների մէջ: Նախանձայոյզների առաջնորդութեամբ գլուխ բարձրացրած ժողովուրդը ստիպեց հռովմայեցիներին դուրս գալ քաղաքից, բայց դորա փոխարէն այստեղ սարսափի եւ արհաւիրքի մի կառավարութիւն սկսուեց: Վեսպասիան, հռոմէական լեգէոնների գլուխն անցած, մի մեծ ջարդ էր տուել արդէն ապստամբներին, քառասուն հազարի չափ հրեաներ ընկել էին առաջին մեծ ճակատամարտի մէջ, իսկ նորանից յետոյ Տիտոս պաշարել էր քաղաքը: Եւ մինչդեռ Երուսաղէմի պարիսպները հետզհետէ տապալուում էին թշնամիների առաջ, իսկ քաղաքի ներսում ժանտախտն ու սովը հազարաւորների կեանքն էին հնձում պատմութեան մէջ քիչ անգամ տեսնուած սաստկութեամբ, հարազատ մայրը իւր գաւակի միսն էր ուտում... Հրեայ կուսակցութիւններն իրենց զօրապետներով կատաղի կռիւ էին մղում միմեանց դէմ եւ հայրենի քաղաքի փողոցները ներկում հարազատ ժողովրդի արիւնով: Ի զուր չէր երգել նոյն ժողովրդի սաղմոսերգուն. «Եթէ ոչ Տէր չիւնէ գտուն, ի նանիր վաստակին շինողք նորա. եթէ ոչ Տէր պահէ զքաղաք, ընդունայն տքնին պահապանք նորա» [Սաղմ. ծիՁ]: Հրեայ ժողովրդի ինքնասպանութիւնն էր այդ իւր անբարոյականութեան պատիժը: Այն ժողովուրդը, որ Յիսուսի նման անձնաւորութիւնը իբրեւ մահապարտ խաչել կարող էր եւ հայրենիքի ակնյայտնի կործանման ժամանակ իրար խողխողել, արժանի չէր եւ անկախ եւ ազատ Հայրենիք ունենալու: Քաղաքն ու տաճարը հրոյ ճարակ դարձան, բնակիչները տասնեակ հազարներով ընկան ահեղ թշնամու զօրութեան առաջ, իսկ մնացածները մետաղներն աքսորուեցան կամ գերի տարուեցան Հռոմ: Այս պատերազմը մի միլիոն կեանք նստեց հրեաներին, որոնք երկրորդ ապստամբութիւնից յետոյ, Ադրիանոսի ժամանակ, թողին իրենց աւերակ եւ անբախտ Հայրենիքը եւ ցրուեցան աշխարհի ամէն կողմերը, ազգերի առեւտրութեան արժանացան:

Ինչ որ նկատեցիք հրէից պատմութեան մէջ, կարելի է ցոյց տալ եւ ուրիշ ազգերի կեանքում: Ի՞նչ էր Յունաստանի պատմութիւնը մակեդոնական եւ հռոմէական իշխանութեան ժամանակ: Երկպառակութեան զոհ դարձած՝ լաւագոյն քաղաքացիները ստիպուած էին թոյն խմել: Զգայական վայելքները, զեղխութիւնն ու անամօթ անբարոյականութիւնը սպանեցին արուեստի եւ քաղաքակրթութեան մայր Աթէնքի ստեղծագործող զօրութիւնը: Պերիկլէսի յետագայ քաղաքացիների մէջ մեռել էր ոչ միայն սէրը դէպի ազատութիւնը, այլեւ դէպի հզօրները ցոյց տուած շողքորթութեամբ՝ մինչեւ իսկ մարդկային արժանապատուութեան զգացմունքը: Իզուր էին աքայեան դաշնակցութեան ջանքերը երկպառակուած քաղաքների եւ ցեղերի մէջ միութիւն ստեղծելու՝ ազգային անկախութիւնն ու ազատութիւնը պահելու համար: Նախանձը, յափշտակութեան եւ աւազակութեան զգացումը աւելի զօրաւոր էին միւս ցեղերի մէջ: Աքայեան դաշնակցութիւնն էլ արիւնաքամ եղաւ անվերջ ներքին երկպառակութիւններից եւ պատերազմներից, մինչեւ հռոմէական արծիւը այստեղ էլ տարածեց իւր թեւերը՝ որպէս թէ ի պաշտպանութիւն ընդդէմ մակեդոնացիների: Ազատութեան, արուեստի, քաղաքակրթութեան հայրենիքը երկպառակութեան, աւազակների եւ վայրենի բնազդների արտայայտութեան վայր էր դարձել: Կեանքի եւ գոյքի ապահովութիւնը իսպառ վերացած էր խուժանապետների շնորհիւ: Չնայելով հռովմայեցիների դէպի յոյները ցոյց տուած զիջողութեան ու մեղմութեան՝ չկարողացան նոքա պահել իրենց ազատութեան վերջին մնացորդները, որովհետեւ անբարոյական, կուսակցութեան եւ կրքի զգացմունքներով կուրացած ազգն այլեւս անկարող էր վայելել այն: Մատնութիւնը, նենգութիւնն ու երկպառակութիւնը վերջ տուին նրանց անկախութեան վերջին մնացորդներին, եւ այնուհետեւ անվեհեր քաղութեան հայրենիք Սպարտայի որդիքը վարձկան զինուորներ դարձան, իսկ աթէնացիք, որպէս արուեստագէտներ, ուսուցիչներ, դերասաններ կամ պարողներ, զբաղեցնում էին հռովմայեցիներին՝ ենթարկուած նրանց արհամարհանքին:

Այսպէս է պատմութեան անողոք դատաստանը բարոյական օրէնքների հակառակ ընթացող ազգերի համար, եւ վա՛յ այն ժողովրդին, որ չի կամենում տեսնել եւ ճանաչել այն:

ԳԱՐԵԳԻՆ Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ
«Արարատ», յուլիս-օգոստոս, 1907

ՄԵՐ ՀՈԳԵԻՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

«Յո՛ւշ լիցի՞նք քեզ ատուրքն յախտեմնից.
ինացարո՛ւք զամսն ազգաց յազգս: Հա՛րց
ցհարսն քո, եւ պատմեցեմք քեզ ցծերս քո եւ
ասացեմք քեզ» [Բ Օրէն. ԼԲ 7]:

Ա

Զարգացման ենթակայ ամէն արարած իւր հայրենիքն ունի. բոյսը, կենդանին իւր բնիկ աշխարհն ունին, ուր աւելի ազատ աճել կարող են, քան մի ուրիշ երկրում: Հասարակածի բոյսերը բեւեռային գօտում աճել չեն կարող, ինչպէս եւ Սառուցեալ ովկիանոսի թռչուններն ու կենդանիները շնչասպառ կը լինեն Սահարայի ջերմ անապատներում: Նախախնամութեան սահմանած մի օրէնք է այս, որին ենթարկուած է եւ մարդը: Բայց մի մեծ տարբերութիւն կայ մարդու եւ միւս աճող արարածների մէջ. մարդու կեանքը կենդանականի եւ հոգեւորի մի գումար է, այսպէս էլ նորա հայրենիքի գաղափարը՝ երկու երեսից բաղկացած եւ միմեանց հետ սերտ կապուած մի ամբողջութիւն:

Հայրենիքի գաղափարը յատուկ է նոյնիսկ ամենահասարակ, կիսակիրթ ժողովրդին, բայց նորա գաղափարը սահմանափակ է եւ թանձրացեալ: Հայրենիք ասելով՝ նա հասկանում է իւր ընտանեկան օջախը, հայրենի գիւղը, հողն ու ջուրը, նախնեաց գերեզմաններն ու սրբութիւնները:

Սակայն քաղաքակրթութեան զարգացման աստիճանների համեմատ հետզհետէ ընդարձակուած եւ ազգերի մէջ տարբեր բովանդակութիւն է ստանում եւ հայրենիքի գաղափարը: Ընդհանրապէս, ազգայնութեան տարրերն են արեան, հայրենի երկրի, լեզուի, պատմութեան, սովորութիւնների եւ պետական կազմակերպութեան միութիւնները: Բայց սոցանից արտաքին երեւոյթները չեն այնքան կարեւորը, որքան հոգեւոր կեանքի եւ քաղաքակրթութեան գիտակցական միութիւնը: Այս տարրերից իւրաքանչիւրը իւր նշանակութիւնն ունի ժողովրդի բնական զարգացման համար, բայց այդ զարգացման նշանակեալը հոգեւոր քաղաքակրթութիւնն է եւ նորանից բխած գիտակցութիւնը, որ սերտ կերպով միմեանց հետ կապուած է ազդեցութեան անդամներին: Այդ գիտակցութիւնն է պարզում, թէ ազգութիւնը ինչ հոգեւոր բարիք եւ ժառանգութիւն ունի, որ թանկ է ընդհանրութեան համար: Եւ այդ ժառանգութիւնն է նորա հոգեւոր հայրենիքը, որով

նա ապրում է ոչ որպէս մի բոյս կամ կենդանի, այլ՝ բանական եւ հոգեւոր արարած:

Քաղաքակրթական կեանքով ապրող ազգերի համար սովորական իմաստով հայրենիքից զատ կայ մի ուրիշ՝ հոգեւոր, վերացական հայրենիք: Բայց հոգեւոր կեանքը, քաղաքակրթութիւնն էլ ունի իւր հայրենիքը ճիշտ այն նմանութեամբ, ինչպէս բոյսերի, կենդանիների եւ մարդկանց նիւթական հայրենիքն է: Ամէն հողի վերայ նոյն գաղափարը աճել չի կարող: Նոյնիսկ բարոյական եւ կրօնական ամենից ընդհանուր գաղափարները տարբեր բնաւորութիւն եւ ձեւակերպութիւն են ստանում զանազան երկիրների բնակիչների մէջ: Քրիստոնէութիւնը տարբեր բացատրութիւն եւ կազմակերպութիւն է ստացել այլեւայլ ազգերի մէջ, թէեւ արմատով նոյն է ամէն տեղ: Դաւանաբանական եւ ծիսական կարգերի տարբերութիւնները Եկեղեցիների մէջ, Ընդհանրական Եկեղեցու բաժանուիլը ազգային Եկեղեցիների Աստուծոյ տնօրինութեան եւ պատմական, բնական պարագաների հետեւանք էին եւ ոչ՝ այս կամ այն անձի կամայականութեան: Պատմական գիտութիւնները մեր առաջ պարզում են այլեւայլ ազգերի տարբեր քաղաքակրթութեան եւ կրօնների զարգացման ընթացքը: Ուրիշ է Արեւելքի քաղաքակրթութիւնն ընդհանուր առմամբ, եւ ուրիշ՝ Արեւմուտքինը. ուրիշ է քրիստոնեայ ազգերի ընդհանուր քաղաքակրթութիւնը, եւ ուրիշ՝ մահմեդական եւ հեթանոս ազգերինը: Նոյնիսկ այս ընդհանուր խմբերի քաղաքակրթութիւններն էլ իրենց ստորաբաժանումներով զանազանուած են միմեանցից: Ամէն ազգի հոգեւոր կեանք իւր բնորոշ կողմերն ու յատկութիւններն ունի: Ինչպէս բոյսը իւր յատուկ կլիմայական պայմաններում միայն կարող է զարգանալ եւ շարունակել իւր տեսակը, այդպէս էլ իւրաքանչիւր ազգի հոգեւոր կեանքը իւր բնորոշ յատկութիւնները պահել եւ զարգանալ կարող է իւր բնիկ հողի վերայ:

Բ

Արդ, ո՞րն է հայ ժողովրդի հոգեւոր հայրենիքը:

Այս հարցի պատասխանը այն ժամանակ կարող ենք տալ, երբ աչքի առաջ ունենանք մեր ժողովրդի անցեալը. որովհետեւ միայն այնտեղ կարելի է որոշել ժողովրդի հոգու բնորոշ գծերն ու յատկութիւնները, այնտեղ է պատկերանում ժողովրդի հոգեւոր կեանքի եւ ընդհանուր քաղաքակրթութեան մէջ ցոյց տուած զարգացումը: Պատմութիւնը ազգերի կեանքի հայելին է, իսկ հայելու մէջ անդրադառնում է ճիշտ պատկերը:

Հայ ժողովրդի գիտակցական քաղաքակրթութիւնը սկսում է քրիստոնէութեան հաստատութեամբ եւ նորա դրոշմն է կրում իւր զարգացման ամբողջ ընթացքում: Հայոց մատենագրութեան առաջին յիշատակարանը Սուրբ Գրքի թարգմանութիւնն է, որի վերայ կրթուել են բազմաթիւ սերունդներ: Հինգերորդ դարից առաջ ի՞նչ քաղաքակրթութիւն ենք ունեցել, յայտնի չէ մեզ. բայց եթէ որոշ չափով հեթանոսական քաղաքակրթութիւնը եւս ունեցած լինինք, ձուլուել է քրիստոնէականի հետ: Հայոց հոգեւոր կեանքի պատմութիւնը գրեթէ նոյնանում է մեր Եկեղեցու զարգացման պատմութեան հետ: Հայ ժողովրդի մատենագիրներն ու վարժապետները միեւնոյն ժամանակ Եկեղեցու սպասաւորներն են: Գիտութիւնն ու արուեստը Հայ ժողովրդի մէջ ծագել եւ զարգացումն են ստացել Եկեղեցու շրջանակի մէջ: Հայոց ճարտարապետութեան մասին գաղափար ենք ստանում նախնեաց թողած վանքերի եւ եկեղեցիների մնացորդներով: Հայոց քանդակագործութիւնը՝ օրնամենտներ, խաչքարեր, Ելնդաւոր (relief) պատկերներ, նկարչութեան մնացորդներ, նոյն վանքերում եւ նոցա պատերի վերայ պէտք է որոնել: Մանրանկարչութեան արուեստը ծաղկել է Հայ վանականների ձեռքով եւ պահուել է բազմաթիւ ձեռագիրների մէջ: Հայ ժողովրդի մանր արուեստների մասին՝ ձեռագործ, ոսկերչութիւն, փայտի քանդակագործութիւն եւ այլն, գաղափար ենք ստանում Հին եկեղեցիներում եւ վանքերում պահուած սրբազան անօթներով եւ զգեստներով: Եկեղեցական երգեցողութիւնը սերունդ աւանդուել եւ պահպանել է մեր ժողովրդական եղանակները: Մեր նախնեաց կրթարանները վանքերն են եղել իրենց վանականներով. այստեղ ուսում եւ դպրութիւն են ստացել ոչ միայն Եկեղեցու պաշտօնեաները, այլեւ արքայազուներ, իշխաններ եւ հասարակ ժողովրդի որդիք: Վանքերն են պահել մեր նախնեաց քաղաքակրթական մնացորդները՝ հնութիւնների եւ ձեռագիրների ժողովածուներ, որոնց ուսումնասիրութեամբ հնարաւոր է գաղափար կազմել մեր անցեալ կեանքի եւ պատմութեան մասին:

Եթէ իրաւ է մեր ասածը, թէ հոգեւոր կեանքով ապրող ազգերը սովորական, երկրաւոր հայրենիքից գատ ունին մի ուրիշ, վերացական հայրենիք՝ նոցա անցեալ քաղաքակրթութիւնն ընդարձակ մտքով, ապա ուրեմն Հայ ժողովրդի հոգեւոր հայրենիքը Հայաստանեայց Եկեղեցին է: Այս հայրենիքի վերայ կարող ենք հոգեւորապէս աճել եւ զարգանալ, ինչպէս որոշ կլիմայի եւ տեղին յատուկ բոյսն ու կենդանին իւր հայրենիքում: Մեր անցեալն ուրանալ չենք կարող, եթէ տգիտութեան եւ միակողմանի հասկացողութեան թանձր մառա-

խուղը չէ նստել մեր հոգու վերայ: Յառաջադիմութիւնը շղթաների կապակցութիւն է. նոր օղակը պէտք է կապուի Հնի Հետ, եւ այսպէս շարունակուի անընդհատ: Ով միշտ նոր է սկսում, յաւիտեան սկզբնաւորութիւն կը մնայ: Նոր եւ ժամանակի պահանջների համեմատ քաղաքակրթութիւն ստեղծելու համար պէտք է մեր նախնեաց հոգիները մեզ գործակից լինեն, Հայոց հայրապետների եւ վարդապետների հատընտիր շարքերը, հայրենիքի անձնուէր նահատակները պէտք է յարուցին առնեն մեր հոգու մէջ եւ խրախոյս հանդիսանան վերածնութեան, մի պայծառ եւ վսեմ քաղաքակրթական կեանքի նորոգման: Հայ կեանքի հետ կապուած գիտութիւնները՝ ազգային եւ եկեղեցական պատմութիւններն ու մատենագրութիւնները, հնախօսութիւնը, Հիմնուած են անցեալի ուսումնասիրութեան վերայ: Հայոց նոր արուեստ ու քաղաքակրթութիւն ծագել եւ ազգային դրոշմ ու գոյն կարող են ստանալ միայն նախնեաց արուեստի եւ քաղաքակրթութեան ուսումնասիրութեամբ: Այստեղից է ծագում ազգային այն բարձր գիտակցութիւնը, որ գոյութեան պահպանութեան եւ յառաջադիմութեան գրաւականն է: Մենք ըստ ամենայնի Հին կեանքով վերածնուել չենք կարող, բայց Հնի մէջ կան բարիքներ, որ իրենց կենդանի ներգործութիւնը պիտի ունենան եւ յաջորդ սերունդների վերայ: Իսկ այս բոլորի մէջ մեր Եկեղեցին ահագին դեր է կատարել անցեալում եւ պէտք է կատարէ ապագայում, եթէ գիտակցաբար նորա ուժերը չճլատենք:

Գ

Բայց նա մի ուրիշ կարեւոր գործ եւս ունի կատարելու:

Ինչպէս հնում, առաւել եւս այժմ Եկեղեցին չի կարող ամբողջ հոգեւոր կեանքի ամփոփումը լինել, եւ եթէ մենք նորան հոգեւոր հայրենիք ենք անուանում, ոչ այն մտքով, որ նորանից դուրս կեանք եւ քաղաքակրթութիւն չկայ: Քաղաքակրթութիւնն ընդհանրապէս աւելի ընդարձակ գաղափար է, քան կրօնական եւ եկեղեցական քաղաքակրթութիւնը: Նիւթական կեանքի հետ կապուած եւ ախարհիկ բնաւորութիւն կրող քաղաքակրթութիւնը նոյնպէս բարիք է: Մինչեւ իսկ ախարհիկ եւ նիւթական քաղաքակրթութիւնները նպաստում են որոշ չափով եւ հոգեւոր, բարձր քաղաքակրթութեան զարգացման: Նիւթական բարեկեցութիւնը, որպէս արդիւնք նիւթական քաղաքակրթութեան, անհրաժեշտ պայման է եւ հոգեւոր կեանքի զարգացման համար: Բայց նիւթական քաղաքակրթութիւնն ինքնըստինքեան նպատակ լինել չի կարող. անցաւորն ու երկրաւորը պէտք է ստորա-

դրուի եւ պատուանդան դառնայ բարոյական եւ յաւիտենական գաղափարների համար: Քաղաքակրթութեան նպատակը պէտք է լինի ճշմարտութեան, բարութեան եւ գեղեցկութեան մի նոր աշխարհ ստեղծել բնութեան մէջ: Այսպէս հասկացուած քաղաքակրթութիւնն Աստուծոյ օրհնութիւն է եւ ամենասերտ կերպով կապուած մարդկային հոգու կեդրոնական երակի՝ կրօնի հետ: Որովհետեւ բարձրագոյն կրօնի նպատակը ոչ այլ ինչ է, բայց եթէ մարդկանցից բարոյական անձնաւորութիւններ ստեղծել:

Քրիստոնէական կրօնը յատկապէս այս խնդրում բացառիկ դիրք է բռնում. նա կամենում է աղ լինել՝ կեանքի եւ քաղաքակրթութեան բոլոր երեւոյթները համեմելու համար: Առանց կրօնի եւ բարոյական կատարելութեան ձգտման ոչ միայն անտարբերութիւն է զարթնում դէպի ազնիւն ու վսեմը, դէպի առաքինին եւ մարդասիրականը, այլեւ քաղաքակրթութիւնը, գիտութիւնն ու արուեստը չարիք են դառնում, եսական, մոլեգին եւ զաղրելի նպատակների միջոց: Կեանքը դառնում է մի դժոխք, որի համար գաղափար կարող են տալ հին ազգերի՝ յունաց, հռոմայեցւոց, հրէից կրօնական անկման շրջանները: Բայց շատ հեռու չերթանք, կարդանք էմիլ Զոլայի «Պարբերութիւն» վէպը, եւ պարզ կը լինի մեզ համար, թէ ինչ չարիք է գիտութիւնը առանց բարոյական զգացման:

Եւ ահա այստեղ Եկեղեցու առջ շարժուում է գործունէութեան մի ընդարձակ եւ վսեմ ասպարէզ. նա աշխատում է, որ Աւետարանի լոյսը թափանցի կեանքի բոլոր երեւոյթների, ի թիւս որոց՝ եւ աշխարհիկ ու նիւթական քաղաքակրթութեան մէջ, ազնիւ ու բարոյական նպատակներ է դնում նրանց առաջ: Նա միշտ շեշտում է եւ աշխատում մարդկանց մէջ հաստատել այն ճշմարտութիւնը, թէ հոգին առաւել է, քան մարմինը, թէ եսականը պէտք է համակերպուի ընդհանուր շահերին, թէ աւելի բարձր բարիք կայ, քան սոսկ նիւթական բարեկեցութիւնը: Նա աշխատում է նաեւ ազնիւ քաղաքակրթութեան պտուղները մատչելի դարձնել ընդհանրութեան, որովհետեւ շատ քչերը հնարաւորութիւն ունին գիտական եւ գեղասիրական կրթութեամբ բարոյական անձնաւորութեան աստիճանին հասնել: Քրիստոնէական Եկեղեցին կրօնական դաստիարակութիւն է մատակարարում իւր հօտին, բարոյական սկզբունքները կեանքի հիմք է դարձնում, սրում է խիղճը ներքին ճշմարտութեան զգացումով, մարդկային հոգու աչքերը երկրային աղտոնութիւններից դէպի վսեմն ու երկնայինն է ուղղում, մխիթարում է սգաւոր եւ թախծալից սրտերը, յուսահատներին յոյս է ներշնչում, բարոյապէս անկեալներին ոտքի կանգնեց-

նում, մեղմում է աղքատների դառն վիճակը կարեկից օգնութեամբ:

Եկեղեցին իւր այսպիսի հովուական-դաստիարակչական գործունէութեամբ, բնականաբար, ստեղծում է որոշ քաղաքակրթութիւն: Նա հիմնում է ծխական, միջնակարգ եւ բարձրագոյն դպրոցներ՝ իւր կրօնական-բարոյական գաղափարները մատաղ սերունդի մէջ ներշնչելու եւ պաշտօնեաներ պատրաստելու համար: Նա ստեղծում է եկեղեցական գրականութիւն, գիտութիւն եւ սրբազան արուեստ իւր ճիւղերով, ճարտարապետութիւն, քանդակագործութիւն, կրօնական նկարչութիւն, երաժշտութիւն: Եկեղեցին սիրոյ գործունէութիւն է զարգացնում իւր հօտի մէջ. ունեւորների մէջ գթութեան եւ կարեկցութեան զգացմունք է զարթեցնում, չունեւորներին օգնութիւն եւ նպաստ հասցնում կարողութեան չափ. հիմնում է որբանոցներ, անկելանոցներ, հիւանդանոցներ եւ ուրիշ բազմատեսակ բարեգործական հաստատութիւններ. հոգում է իւր հեռաւոր եւ աղքատ գաղութների նիւթական եւ բարոյական վիճակի մասին եւ սերտ կապում մայր Եկեղեցու եւ հայրենիքի հետ. իւր վարչական կազմակերպութեամբ ղեկավար է հանդիսանում ազգային-եկեղեցական կեանքի կանոնաւոր զարգացման, հոգեւոր եւ անձնուէր մի գիւնուորութիւն է պատրաստում՝ ծառայելու մեր ժողովրդի կրօնական եւ քաղաքակրթական կեանքի յառաջադիմութեան. վերջապէս, նա պատուար է կանգնում օտար, հզօր հոսանքների դէմ՝ ազգային ինքնուրոյնութիւնը պահպանելու համար:

Այս բոլոր գաղափարներն ու հաստատութիւնները յատուկ են եկեղեցական կեանքին, միայն, տարաբախտաբար, այժմ մեր մէջ պատմական ճախորդ պայմանների պատճառով՝ աւելի նուազ չափով, քան ցանկալի էր: Մի՞թէ պէտք է նպաստենք կամ անտարբեր հանդիսատես լինենք, որ մեր հոգեւոր, սրբազան հայրենիքը իւր քայքայման գործողութեան մէջ յարատեւէ. սիրոյ եւ երախտագիտութեան անձնուէր զգացումով իւր չափսի՞ լցնենք նորա 1600 տարիներից ի վեր մշտավառ կանթեղի մէջ, որպէսզի աւելի պայծառ լոյս տայ եւ իւր հօտի ճշմարիտ, բարոյական վերածնութեան աղբիւրը դառնայ:

ԳԱՐԵԳԻՆ Վ. ՅՈՎԱԷՓԵԱՆ
«Արարատ», սեպտեմբեր, 1907

ՅԱՐՈՒԹԵԱՆ ԱԻԵՏԻՔԸ

«Զի՞ խնդրէք զկեանքս ընդ մեռելսս. չէ աստ, այլ յարեալ» [Ղուկ. ԻԴ 5]:

Ա

«Ո՞վ թաւալեցուցէ մեզ զվէմն ի դրանց գերեզմանին»՝ ո՞վ պէտք է զլորէ գերեզմանի առաջ ձգուած մեծ վէմը՝ ժայռը. իրար հետ այսպէս էին խօսում այն կանայք, որոնք եկել էին, իրենց հետ անուշահոտ խունկ ու իւղ վերցրած, վերջին յարգանքը մատուցանելու սքանչելի Վարդապետի երկրաւոր մնացորդներին, որ երէկ կենդանի էր, այսօր՝ անշունչ դիակ միայն եւ վաղը իսպառ պիտի անհետանար նրանց տեսութիւնից որպէս ապականութեան եւ ոչնչացման բաժին: Ապա ուրեմն, վերջին, նուիրական պարտաւորութիւնը պիտի կատարուէր բոլորանուէր սրտով, իսկ իրենք՝ տկար եւ անզօր. ո՞վ պիտի օգնէր, թաւալէր գերեզմանի դրան մեծ քարը, որպէսզի այրի մէջ մտնել կարողանային... Բայց ահա բաց է դուռը, քարը՝ զլորուած, եւ մի ձայն հնչում է իրենց ականջին. «Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռելսս. չէ աստ, այլ յարեալ»՝ ինչո՞ւ էք կենդանին մեռելներին մէջ որոնում. այստեղ չէ, յարեալ:

Ձարմանալի բան. չէ՞ որ երեք օր առաջ տեսել էին Նորան խաչն ուսին, Գողգոթայի ճանապարհին, վաստակարեկ, ծնկաչոք խաչի ծանրութեան տակ. կսկիծը սրտներին, արտասուքն աչքներին, հեկեկանքը կոկորդներում խեղդուած՝ դիտել էին անիրաւութեան թափօրը, վերջին անգամ տեսել էին անման Վարդապետի բարի աչքերը՝ իրենց ուղղուած, եւ լսել իրենց սիրտը տոչորող խօսքերը. «Դստերք երուսաղէմի, մի՛ լայք ի վերայ իմ, այլ լացէ՛ք ի վերայ որդւոց ձերոց»: Տեսել էին հեռուից Նորա մահը խաչի վերայ, թաղումը այրի մէջ, հրեաներին՝ քրքիջով եւ ծանակով Գողգոթայից իջնելիս, ազատուած Նազովրեցու ստեղծած մղձաւանջից: Յրուել են եւ աշակերտները՝ հովիւր զարկուած ոչխարների նման... Ինչպէ՛ս թէ կենդանի է նա...

Միամիտ, պարզ, բայց սուր կանայք: Զգիտէին դեռ, թէ այդ օրը պատմութեան մէջ Աստուծոյ կամքով հրաշք է կատարուում, փրկութեան նոր ուղիներ բացուում մարդկութեան առաջ՝ մահուամբ մահը սպանելու, անզօր դարձնելու: Բացում են նրանց աչքերը, նրանց հոգու աչքերը՝ տեսնելու եւ հասկանալու, թէ ճշմարտութիւնը սպանել կարելի է ստութեան եւ կեղծիքի ճանապարհով, պարզուում

է Յիսուսի բերած եւ ներշնչած գաղափարը հաւատոյ փրկարար եւ մեծ զօրութեան մասին, որի առաջ շարժուում են լեռները, զլորուում քարերը, հարթուում առապարները, կենդանանում մեռած մարմինները: Պէտք է գիտնալ մեռնել, «հանապազ մեռանել» Աստուծոյ անունով, եղբորս համար, հայրենիքիս համար, յաւիտենական արժէքների ստացման եւ պահպանութեան համար: Ահա՛ բանալին, որով բացուում են այլապէս փակ դռները կեանքի: Նախնի քրիստոնէութեան ոյժը սորա մէջն էր. հաւատում էին, որ Քրիստոս յարութիւն է առել, որ նա կենդանի է իւր անունով հաւաքուածների մէջ, նրանց հոգիների եւ սրտերի մէջ: Յարութեան գաղափարն ու հաւատը նրանց բարոյական մեծ զօրութիւնն էր՝ արտաքին տկարութեան, աղքատութեան, խեղճութեան մէջ աշխարհը նուաճող զօրութիւն: «Կենդանի եմ այսուհետեւ ոչ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս» [Գաղատ. Բ 20]:

Բ

Բայց Հրեշտակի բերած աւետիքը եւ մեզ համար է՝ քսաներորդ դարու տեսական եւ գործնական գիտութեամբ, արուեստով ունճացած մարդկութեան համար: Մեծ է գիտութեան եւ արուեստի արժէքը. նիւթական կեանքի հրաշալի դիւրութիւնների հետ նրանք ընդլայնում են մեր ծանօթութիւնները, մեր աշխարհայեացքը, մեր ըմբռնողութիւնը կեանքի, տիեզերքի երեւոյթների մասին, նրբացնում են մեր ճաշակը ներքին յոյզերի եւ գեղեցկութիւնների մեծ վայելքի համար... Բայց նրանք ամէն ինչ չեն, աւելցնենք՝ եւ ոչ ամենքին մատչելի: Դեռեւս Պօղոս առաքեալը գիտութիւնը սահմանաւոր է համարել, անկատար, բայց անկատար է եւ այժմ, որքան եւ զարգացել է, յառաջադիմել գրեթէ երկու հազար տարուայ ընթացքում:

Այժմ էլ բնութիւնը լի է գաղտնիքներով, խորհուրդներով՝ կենդանութեան ամենափոքր գոյութիւններից մինչեւ մարդկային հոգին՝ կամքը, երեւակայութեան թռիչքը, մտածողութիւնն ու գիտակցութիւնը: Ոչ միայն տիեզերքը իւր անսահման մեծութեամբ մեզ հասկանալի չէ, այլեւ նոյնիսկ իւր ամենափոքրիկ մասնիկով: Գիտութիւնը զբաղւում է միայն արտաքին երեւոյթներով, իրերով, գտնում է մեքենական օրէնքներ, որոնցով շարժուում է կեանքը, տիեզերքը, բայց նրանց խորքը թափանցել չի կարողանում, որքան եւ յառաջադիմէ, զարգանայ: Նրանց պատճառն ու նպատակը գիտութեան համար մնում են գաղտնիք, խորհուրդ: Այս խորհրդաւորութեան եւ անգիտութեան սահմանի վերայ հաւատոյ ջահն է, որ լուսաւորում է իրերի եւ երեւոյթների հասկացողութեան խորքը՝ յաւիտենական

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԱՌԱՋՆՈՐԴ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ, ՄԵՐ ՎԻՃԱԿԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՀԱԽԱՏԱՑԵԱԼՆԵՐԻՆ՝ ՇՆՈՐՀՔ, ՍԷՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ԵՒ ՈՂՋՈՑՆ ՀԱՅՐԱԿԱՆ:

Անցեալ տարի մեր շրջաբերական թղթով Մննդեան առթիւ խօսեցանք մեր ժողովրդի հետ: Այսօր էլ, շնորհաւորելով Տիրոջ Յարութեան մեծ տօնը, կը կամենայինք նորա մեծ նշանակութիւնը բացատրել ձեզ:

Մահը մեր կեանքի ամենամեծ առեղծուածն է, ըստ երեւոյթին հակադրութիւնը մեր գոյութեան, մեր ջանքերի եւ տքնութեան, մեր տենչերի եւ կատարելութեան ձգտումների: Մինչեւ իսկ այս բոլորի վերջակէտն է այն եւ, այսպիսի լուսոյ տակ, նաեւ աննպատակ կեանքի չքացումը: Ինչո՞ւ ենք աշխարհ եկել, ինչո՞ւ ենք ապրում եւ ո՞ւր ենք գնում. մահը ոչ միայն մեզ չի պատասխանում, այլեւ թանձր վարագոյր քաշում մեր հարցերի առաջ՝ թողնելով անթափանց խաւարի, քաոսի եւ անգիտութեան մէջ:

Եւ ահա, այս անլուծելի թուացող առեղծուածի հակառակ, Եկեղեցին աւետում է մեզ. «Քրիստոս յարեալ է մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբն Իւրով մեզ զկեանս պարգեւեաց»:

Կրօնի եւ քրիստոնէական հաւատի բերած բարիքն է այս՝ մեր անցաւոր կեանքի եւ վախճանից յետոյ զարթնումի եւ վերակենդանութեան մեծ գաղափարի եւ յուսոյ: Թուում է, բնութիւնն իսկ նոյն միտքն է արծարծում եւ ներշնչում. երէկ երկիրը ծածկուած էր սպիտակ սաւանով, ծառերը՝ մերկացած իրենց գեղեցկութիւնից, դաշտերն՝ իրենց թաւշեայ եւ ծաղկազարդ կանաչից, այսօր նրանք նոր կեանք են ստանում, վերազարթնում թմրութիւնից եւ նիրհից:

Զմեռուայ ձիւն ու բուքին, սառնամանիքին այսօր պայծառ եւ լուսաւոր զարունն է հետեւել, եւ ամպերի ու մառախուղի տակ թաքնուած արեգակը իւր լուսաշող եւ կենսաբեր ճառագայթներն է ուղղել մեզ:

Ճշմարիտ է, ոչ ոք չէ եկել անդիական աշխարհից եւ ոչ լուր բերել մահուանից յետոյ մեզ վիճակուած կացութեան մասին, բայց հաւատոյ կեանքով ապրողները տեսել են եւ տեսնում են այդ հրաշալիքը: Խնդիրն այս է, որ ամենայն ինչ չի ենթարկուած թանձրացեալ

իմաստութիւն եւ նպատակ տեսնելով տրեզերքի եւ մեր անձնական գոյութեան մէջ: Ամէն ինչ Աստուծոց է գալիս, նորանով են դեկավարուում եւ դէպի նա ուղղուում մեր հոգիների իղձերն ու տենչերը, մեր կատարելութեան վերելքը. մեծ գիտնականներ եւ փիլիսոփաներ, բնագէտներ եւ բանաստեղծներ, իւրաքանչիւրը իւր ճանապարհով, յանգել են այս եզրակացութեան, երբ առարկայական քննութիւնից կամեցել են անցնել պատճառի եւ նպատակի մեծ հարցերի պատասխանին, շօշափելի իրականութիւնից՝ դէպի հոգեկան բարձր ապրումի մթնոլորտը, տեսանելի կեանքից՝ դէպի նորա ներքին էութիւնը: Այստեղ է, որ մարդկային հոգու մէջ ամենամեծ հրաշքն է կատարուում. գիտութեան, արուեստի եւ կրօնի դաշնակցութիւնը՝ իւրաքանչիւրը իւր ճանապարհով, իւր միջոցներով, բայց նոյն բարձրագոյն նպատակի ծառայութեամբ, որ իսկական կեանքն է վերածնուած եւ զտուած կեանքը, մեռելութիւնից յարութիւն առած եւ առ Աստուած ուղղուած կեանքը:

Գ

Այս մտքերի գեղարուեստական լաւագոյն ամփոփումը տուել է մարդկութեան ամենամեծ բանաստեղծներից մէկը՝ Գեորգիան, իւր «Տառուտի» մէջ. նա ուսումնասիրել է բոլոր գիտութիւնները՝ պատմութիւն, փիլիսոփայութիւն, բնական գիտութիւններ, նաեւ աստուածաբանութիւն, բայց կեանքի իմաստն ու նպատակը չէ հասկացել, հասել է յուսահատութեան դուռը եւ ահա առել է թոյնի բաժակը՝ իւր անիմաստ կեանքին վերջ տալու... Բայց հնչում է հարեւան եկեղեցու զանգը եւ յարութեան փառաբանութեան երգը, եւ նա յափշտակուած ցած է դնում բաժակը եւ մի նոր կեանք սկսում՝ սայթաքումներով եւ բարձրացումներով կեանքի ճանապարհը՝ աչքերն ուղղած միշտ դէպի երկնայինն ու վսեմը:

Ո՛հ, այդ անոյշ դողանքը իմացական զանգի, որ Աստուծոյ ձայնն է, հրաւէրը մեռելութիւնից դէպի վերածնութիւն, դէպի Յարութեան կեանքը:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
«Հայաստանի կոչնակ», 1938

փորձառութեան եւ գիտական վերլուծութեան. նոյնիսկ հոգեւոր կոչուած ամենապսեմ բաները թանձրացեալ չեն, շօշափելի եւ տեսանելի չեն, այլ զգալի եւ իմանալի՝ միայն հոգեկան կարողութիւններով: Ոչ ոք կարող է վերլուծել եւ հասկանալ մարդկային գիտակցութիւնը, Հանճարը, ստեղծագործութիւնը, հոգեկան ապրումներն ու թռիչքները, «երազները», եթէ կարելի է այս բառով արտայայտել, իրենց մանրամասնութիւններով, բայց նոքա կան, նոքա իրողութիւն են մեր ներքին եւ իմացական աշխարհում: Ապա ուրեմն, չասենք՝ ինչ որ չի ենթարկուում վերլուծութեան, գիտական հասկացողութեան, ինչ որ տեսանելի չէ մեզ եւ շօշափելի, անգոյ է կամ անընդունելի: Մեր հինգ զգայարանքներից զատ ունինք անանուն, կասենք մենք՝ «հոգեկան զգայարանքներ», որոնք մեր առօրեայից էլ դուրս, մեր վսեմագոյն կեանքի աւելի նուրբ գործարաններն ու զգայարանքներն են: Անշո՛ւշտ, նոքա կտրուած չեն մեր զգայական եւ թանձրացեալ կեանքից, նոքա կտրուած չեն մեր մարմնական զգայարանքներից. բայց որքան բարձր է այդ վերացական ապրումն ու կեանքը, որքան նուրբ ու վսեմ, նոյնչափ աւելի պակաս «առարկայական» եւ վերլուծութեան ենթարկելի:

Այդպիսի կարեւորագոյն խնդիրներից մէկն է հոգու անմահութեան, յետվախճանի յարութեան գաղափարն ու հաւատը: Հազարաւոր տարիների մարդկային կեանքի պատմութիւնը մատնանշում է մեզ նորա գոյութիւնը ազգերի մէջ արտաքուստ պէս-պէս ձեւակերպութեամբ, բայց ըստ էութեան համանման հասկացողութեամբ՝ սկսած եգիպտական, հին Հեթանոսական ուրիշ ազգերի աւելի թանձրացեալ ըմբռնումներից մինչեւ քրիստոնէական վերացական հասկացողութիւնը բարեոյ եւ չարի, արդարութեան եւ մեղքի եւ նրանց գնահատութիւնը իրենց հետեւանքներով: Մարդը չի ոչնչանում իւր երկրաւոր կեանքի հետ, այլ նա ապրում է հոգւով մի այլ վերացական աշխարհում՝ համեմատ իւր վարած երկրաւոր կեանքի, բարի կամ չար յատկութեանց: Եգիպտական եւ նոյնիսկ քրիստոնէական արուեստի եւ բանաստեղծութեան պատկերաւոր ձեւակերպութիւնները անդիական աշխարհի կամ վերջին Դատաստանի մասին աւելի ազդու միջոցներ են՝ ըմբռնելի կացուցանելու համար բարեոյ եւ չարի, արդար եւ մեղաւոր կեանքի արժէքն ու հետեւանքները: Այս հասկացողութիւնն իհարկէ գիտական, առարկայական շօշափելի մեթոդներով չէ, որ պիտի հաստատուի. այդ հաւատոյ խնդիր է: Բայց առանց այդ հաւատոյ, գիտենք, որ մարդկային կեանքը ենթակայ է ապականութեան, անասնական բնագոյների տիրապետութեան՝ բարձր եւ վսեմ

նպատակներից եւ ձգտումներից զուրկ, շահամոլութեան եւ եսակալութեան: Ազգերի անկման շրջանները միշտ կրօնների եւ բարոյական հասկացողութիւնների կամ հաւատաւոր կեանքի անկման հետ են կապուած, որոնց ցայտուն ապացոյցն է Հին յունական եւ հռոմէական ազգերի անկումը: Կարելի է ասել, թէ այդ գաղափարը առանցքն է կազմում մարդկային կեանքի, նորա բոլոր ձգտումների, մեծութեան եւ ներշնչման, բարոյական եւ հոգեւոր քաղաքակրթութեան կատարելութեան ճանապարհին: Մեր երկրաւոր կեանքը մի միջոց է, դուռն է դէպի յաւիտենական արժէքների ստեղծագործութիւններն ու պահպանութիւնը, ինչպէս եւ դէպի անհատական եւ ազգային անմահութիւնը:

Յիսուսի յարութեան աւետիքը մեզ այսպիսի հաւատոյ իրողութեան հաստատութիւնն է: Հրեաները սպանել կամեցան Նորան, մինչեւ իսկ մահերից անարգագոյնն ընտրեցին իրենց ժամանակի հասկացողութեամբ՝ մտածելով, թէ դորանով ոչ միայն նիւթապէս, այլեւ բարոյապէս վերջ կուտան Նորա գոյութեան եւ գործին: Ի՞նչ անուն, հեղինակութիւն, ձգողականութիւն կարող է ունենալ աւազակների եւ ոճրագործների հետ եւ նրանց յատկացրած մահով իւր կեանքը վերջաւորած «ատելի» Նազովրեցին: Յիսուսի խաչելութեան գիշերը ով գիտէ գոհունակութեան ինչպիսի՞ զգացումով անկողին մտան քահանայապետներն ու առաջաւոր փարիսեցիները: Ազատուեցան վերջապէս յանդուգն մոլորեցուցչից, որ համարձակուում էր ամենախիստ քննադատութեան ենթարկել իրենց ընթացքը, աւանդութիւնները՝ մինչեւ իսկ պակասաւոր հրատարակելով իրենց Օրէնքը, որ Եհովայից են ստացել ընտրեալ մարգարէի ձեռքով: Նորա մահուամբ վերջապէս փարատուեցաւ այն մղձաւանջը, որ ստեղծուած էր Նորա փառաւոր մուտքով դէպի ս. Քաղաքը՝ Նորա վերջին օրերի քարոզութիւններով եւ ժողովրդի մտքի շփոթեցուցիչ յուզումներով: Ի՞նչ կը լինէր, եթէ տգէտ ամբոխը Նորան իսկական Մեսիա ընդունէր, եւ յօդս ցնդէին իրենց ապագայ յոյսերն ու ծրագիրները՝ թօթափելու հռոմէական անարգ լուծը՝ Երուսաղէմը դարձնելով հրէական տիրապետութեան կեդրոն:

Խնդճերը չէին իմանում, թէ Յիսուսի մահուամբ կեանքի հասկացողութեան մի նոր սկիզբն էր դրուում, յաւիտենական կեանքի դռները բացուում Նորա բոլոր հետեւողների եւ մարդկութեան առաջ: Եւ մինչդեռ փարիսեցիներն ու նախանձայոյզները, կոյր մոլեռանդութեան գազաթնակէտին հասած, մոլեգնօրէն իրենց ժողովրդի եւ Երուսաղէմի կործանման պատճառ դարձան անհաշիւ եւ չկշռուած ձեռնար-

կուլթիւններով եւ, մանաւանդ, ամենատազնապալին ըստ պէտքի պառակ-
ման եւ եսական պայքարի հետեւանքով, Յիսուսի յարութեան աւե-
տիքը երաշխիք եւ առհաւատչեայ դարձաւ հոգեւոր մի նոր փրկու-
թեան, հիմք քրիստոնէական կրօնի եւ Եկեղեցւոյ Հաստատութեան:
Մեռաւ Տէրը, բայց Իւր մահուամբ յաղթահարեց մահը, ոչնչացրեց
նորա կապանքները՝ բարձրացնելով մարդկային կեանքի արժէքն ու
նպատակը: Մարդն այլեւս անցաւոր չէ, մահուան գերին. խորտակուած
են նորա շղթաները: «Ո՛ւր է, մա՛հ, յաղթութիւն քո, ո՛ւր, դժո՛խք,
խայթոց քո».- ահա՛ նորա առաքեալի հոգեւոր ապրումը Քրիստոսի
յարութեան հաւատոյ ազդեցութեան տակ: Ինչպէս էլ բացատրելու
լինինք Յիսուսի յարութիւնը, եւ զանազան մտացածին բացատրութիւն
տուողներ չեն պակասել, իրողութիւն է, որ նորա յարութեան հաւատն
էր, որ կեանք տուաւ նորա մեռած կեանքին եւ վարդապետութեան:
Տէրը կենդանի է եւ ներգործում եւ առաջնորդում է Իւր հետեւողներին.
ահա՛ քրիստոնէութեան յաղթութեան գաղտնիքը ընդդէմ աշխարհի
հալածանքի, նիւթական զէնքի եւ զօրութեան, այսպէս պէտք է
հասկանալ առաքեալների եւ քրիստոնեայ նահատակների աներկիւղ
ընթացքը մահուան դէմ: Մարդկային նիւթական կեանքը թանկ է,
բայց նորանից աւելի թանկագինն է անմահ հոգին՝ ներքին մարդը,
անձը, որին ոչինչ սպանել կարող չէ, եթէ հաւատն ունի անմահու-
թեան: Այն կեանքը, որ ուղղուած չէ դէպի հանապազօրեայ, գիտակ-
ցական կամ իմացեալ մահը, մեռած է արդէն ըստ էութեան՝ հոգեւորա-
պէս անպտուղ իւր համար, անպտուղ եւ շրջապատի համար: Ով
կենդանուոյն մեռնել չգիտէ, նա ապրել կարող չէ աւելի արժէքաւոր
կեանքով: Ինչպէս ցորենահատը մեռնում է եւ ապա արգասաւոր
դառնում, մարդկային նիւթական կեանքի գոյութիւնն էլ միջոցն է
եւ դուռը յաւիտենականի եւ անանց կեանքի:

Բայց անհատների անմահութիւնը, նրանց յաղթահարումը մա-
հուան զօրութեան դէմ, հասարակութեան, ազգի անմահութիւնն է:
Ինչպէս անհատի առաքինի կեանքը, ներքին կեանքի իմացականու-
թեան եւ ազատութեան համար ոգորումը ընդդէմ անարդարութեան,
բռնութեան՝ բարոյական կատարելութեան ճանապարհն է, նոյնն է եւ
հասարակութեան ու ազգի համար: Անբարոյական, ցոփ, անսկզբունք,
ազահ, եսական, գծուծ, պարտականութիւնների մէջ անհաւատարիմ
անհատը պատկերն է եւ նոյն որակի հասարակութեան եւ ժողովրդի
համար: Երկուսն էլ դատապարտուած են անխուսափելի եւ բարոյական
մահուան այսօր կամ վաղը: Երկուսն էլ գերիններն են՝ կապուած
իրենց իսկ ձեռքով կռուած շղթաներով: Յարութեան յոյսն ու աւետիքը
միայն անհատին չէ ուղղուած, այլեւ ազգին, ազգերին եւ պետու-
թիւններին: Կայ անհատական մեղք՝ կայ եւ ազգային մեղք, երկուսն

էլ կորստաբեր իրենց ծնողների համար: Չես կարող բռնութիւն ցանել
եւ ազատութիւն հնձել. չես կարող ատելութիւն, թշնամութիւն եւ
պառակում սերմանել եւ միութիւն, սէր եւ եղբայրակցութիւն սպասել:

Բնութեան աստուածադիր օրէնքներից մէկն է՝ սեպհական վէր-
քերի բուժումը իւր իսկ ձեռքով կատարել. կենդանին լիզում է,
մաքրում իւր վէրքը եւ նպաստում իւր բժշկութեան, բոյսը աշխատում
է ծածկել ջլատուած մասը իւր բունի կամ ճիւղերի վերայ, որպէսզի
դէմն առնի չորանալու կամ մեռնելու գործողութեան: Մի՞թէ պէտք
չէ հասկանանք այս պարզ ճշմարտութիւնը: Վիրաւորուել է մեր
ազգը, մեծ չափով ջլատուել նորա արմատները, բունը, ճիւղերը, անհող
եւ անհայրենիք ենք դարձել մեր ազգի երկու երրորդ մասով... Մի՞թէ
փոխադարձ հարուածներով է, որ պիտի բժշկենք մեր վէրքերը:
Տարագիր հայութիւնը ենթարկուած է ուժացման ամենամեծ վտանգին՝
ցրուած լինելով բազմատեսակ պետութիւնների եւ ազգերի մէջ:
Ուժացման եւ անտարբերութեան հոսանքը տանում է եւ առաւել մեծ
չափով պիտի տանէ մեր ժողովրդից բեկորներ: Թումը պիտի կազմենք՝
դորա առաջն առնելու, եւ այդ թումքը մեր մայրենի, հինաւուրց
Եկեղեցին է իւր լեզուով, իւր արարողութիւններով, իւր կրօնական
եւ ազգային կեանքի ներշնչմամբ, իւր դպրոցների պահպանութեամբ
եւ բարեկարգութեամբ: Խմբուի՛նք նորա շուրջը, պայծառացնենք
նորա կեանքը, խորացնենք նորա բովանդակութիւնը՝ հաւատարիմ
մեր հայրերի թողած հարուստ եւ արժէքաւոր ժառանգութեան:

Մասնաւորելով մեր խօսքը ամերիկահայութեան մասին՝ գոհ
լինինք, որ մեզ վիճակուած է այսպիսի ազատ եւ կարգաւորեալ երկրի
հիւրընկալութիւնը վայելել. լինինք գիտակից, պարտաճանաչ եւ լաւ
քաղաքացիներ այս երկրի՝ մնալով եւ հաւատարիմ մեր կրօնական եւ
ազգային նուիրական աւանդութիւններին:

Ձատիկ է, Քրիստոսի Յարութեան աւետիքն է հնչում: Լսենք
նորա փրկարար ձայնը՝ բոլոր բարոյապէս մեռեալներին ուղղուած.
«Ղազարէ՛, ե՛կ արտաքս»:

Ծնորհք Տեառն եղիցի՛ն ընդ ձեզ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱՌԱՋՆՈՐԴ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ
«Հայաստանեայց Եկեղեցի», ապրիլ, 1941

ՆԱՀԱՏԱԿԱՑ ՏՕՆ

«Այսպես ասէ Տէր Տէր ցուկերոյ ցայ-
դոսիկ: Ահաւասիկ Ես ասեմ ի վերայ ձեր
շունչ կեանքի: Եւ տաց ի ձեզ ջիւղ եւ ամից
ի վերայ ձեր սրտը եւ տաց զոգի իմ ի ձեզ,
եւ լինիցիք կեանքացիք» [Եզեկ. ԼԷ 5-6]:

Ա

Եզեկիէլ մէկն էր բարեկացուց գերութեան ժամանակի մեծ մարգարէներէից եւ աւետարտը ժողովրդի ազատութեան: Բարելոնեան գերութիւնը 586 թուին Ք. ա. Իսրայէլի ժողովրդի քաղաքական անկման վերջաբանն էր: Բարեկացիք նուաճել էին Երուսաղէմը, գերել Սեղեկիա թագաւորին, սպանել արքայորդիներին հօր առաջ, ինչպէս եւ՝ իշխաններից շատերին, իրեն էլ կուրացրել եւ շղթայակապ Բարելոն տարել, նորա հետ՝ կենդանի մնացածների կարեւորագոյն մասը: Քանզի էին արքայական ապարանքները, Երուսաղէմի տաճարն ու պարիսպները, կողոպտել տաճարի կահն ու հարստութիւնը: Քաղաքում եւ երկրում մնացել էին միայն աղքատներ եւ ժողովրդի ստորին դասի հատուածներ՝ «սինլքորներ», ինչպէս ասուած է Երեմիայի մարգարէութեան մէջ [Երեմ. ԺԲ]: Մնացածներն էլ՝ երկպառակուած ներքին հակամարտութիւններով այս կամ այն զօրավարի առաջնորդութեամբ: Մի մասն էլ, առանց լսելու ժամանակի մեծ Երեմիա մարգարէի յորդորներին, եզիպտոս էր անցած... Ամենամեծ թշուառութիւնը, որ գալ կարող էր, եկել էր Յուդայի ժողովրդի գլխին:

* * *

Բայց աքսորի եւ գերութեան մէջ սթափուել էր ժողովուրդը, եւ հայրենաբաղձ զգացմունքը գլուխ բարձրացրել նորա հոգու մէջ: Այս ժամանակից են հայրենաշունչ եւ հայրենատենչ որոշ սաղմոսներ՝ նեղեալ, բայց հաւատարիմ սրտերից բղխած երգումներ եւ ուխտեր դէպի Երուսաղէմը, դէպի հայրենի երկիրն ու նորա սրբութիւնները: Այդպիսիների մէջ ամենից յայտնին ՃԼԶ (136-րդ) սաղմոսն է. Բարելոնի գետերի ափերին նստած՝ լալիս է Իսրայէլի ժողովուրդը եւ տենչում դէպի Սիոնը՝ ուռնիների մէջ կախած իրենց «կտակարանները»: Տեղական բնակիչները՝ «գերեզմաններ», ստիպում էին նրանց օրհնութեան խօսքեր երգել՝ գուցէ եւ մասամբ հեգնութեամբ. «Իսկ զիա՞րդ օրհնեսցուք զօրհնութիւնս Տեառն յերկիր օտար: Եթէ մոռա-

յայց զքեզ, Երուսաղէ՛մ, մոռացի զիս աջ իմ, կցեսցի լեզու իմ ի քիմս իմ, եթէ ոչ յիշեցից զքեզ, եթէ ոչ նախ նուազեցից զքեզ, Երուսաղէ՛մ՝ սկիզբն ուրախութեան իմոյ»:

Դանիէլ եւ երից մանկանց պատմութիւնը յայտնի են մեր բոլոր Հաւատացեալներին, տարին երկու անգամ, Մենդեան եւ Զատիկի ճրագալոյցներին, կարդացուած է այն պատանիների բերանով Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում: Որպիսի՞ սրտառուչ օրհներգութիւն եւ նուիրումն հայրերի Աստծուն, ուրիշ խօսքով՝ սրբուած, մաքրուած եւ բիւրեղացած բարեպաշտութիւն եւ հայրենասիրութիւն:

Բ

Այսպիսի հայրենաբաղձ հոգեբանութեան հետ է կապուած եւ Եզեկիէլի տեսիլը, որ բնաբան ընտրեցինք: Նա յուսադրութեան, վերականգնումի եւ դէպի հայրենիք դարձի աւետարներն է, քարոզիչը գերութիւնից դէպի ազատութիւն, ազամայ պանդխտութիւնից դարձ դէպի հայրենի տունը եւ վերաշինութիւն հայրենի քաղաքի տաճարի: Մարդկային հոգու ամենավսեմ ապրումներից եւ զգացումներից մէկն է այս՝ տենչ ստրկութիւնից դէպի ազատութիւն:

Մարգարէն տեսիլքի մէջ ներկայացնում է Իսրայէլի գերութեան պատկերը եւ Աստուծոյ գթութեան դատաստանը: Նա դաշտի մէջ տեսնում է ցրուած եւ ցամաքած ոսկորներ. Իսրայէլի ժողովրդի ոսկորներն են այդ: Եւ ահա, Տէրը տալիս է Իւր պատգամը. «Ո՛վ ցամաքած ոսկորներ, Ես ձեզ շունչ պիտի տամ, մարմին, մորթ բերեմ ձեզ վերայ. ձեզ պիտի իմ ոգին տամ, եւ դուք պիտի կենդանանաք, դուք պէտք է մեռելութիւնից յարութիւն առնէք»:

Եւ մենք գիտենք, որ այդ պատգամը կատարուեցաւ. Երուսաղէմը եւ տաճարը վերաշինուեցան, Իսրայէլը գերութիւնից ազատուեցաւ, գրական-ստեղծագործական եւ նոյնիսկ յետոյ քաղաքական նոր կեանք ունեցաւ: Մարգարէական գրքերի, սաղմոսների, Սիրաքի եւ իմաստասիրական բնաւորութեամբ գրքերի մի կարեւոր մասը այդ ժամանակի արդիւնք է, աւելի յետոյ՝ մակաբայցեւոց քաղերի շրջանը, որ օրինակ եւ քաջալիրութիւն հանդիսացաւ եւ մեր Վարդանանց տօնի համար:

Այստեղ մի դաս ունինք պատմութիւնից առնելու, թէ ազգերի գլխին եկած դժբախտութիւնները միշտ դէպի մահ չեն տանում. երբեմն նեղութեան մէջ է, ինչպէս անհատական, այնպէս եւ հաւաքակա-
նութեան կամ ազգի կեանքի մէջ, որ հոգին վերածնուած է, վերանում
դէպի երկնայինը եւ ծունկ չոքում Արդարութեան աթոռի առաջ: Եւ

Աստուած ընդունում է սրտի այսպիսի զգացումը որպէս անուշահոտ կնդրուկ, երբ խնկուած է այն սրտի բուրվառի մէջ:

Գ

Նախընթաց պատերազմը ստեղծեց նման դրուժին մեզ համար, ինչ որ բարեկացւոց արշաւանքը՝ Իսրայէլի: Քարուքանդ եղաւ մեր հայրենիքի մի կարեւոր մասը, մեր ժողովրդի մի երրորդը զոհ եղաւ սրի, բռնութեան, հալածանքի եւ սովի: Մեր ժողովուրդն էլ տեղահան եղաւ եւ գինուորների սուլիների եւ ոստիկանների մտրակների հարուածների տակ, կողոպտուած եւ անկարագրելի բարբարոսութիւնների ենթարկուած, քշուեցաւ դէպի անապատները: Սորա հետեւանքով տարափոխիկ հիւանդութիւնները ճարակեցին թշուառ, աւնօգնական ժողովրդի մէջ եւ տարան հարիւր հազարաւոր անմեղ զոհեր:

Մեր ժողովրդի առաջաւորները՝ եպիսկոպոսներն ու վարդապետները, մտաւորականներն ու մատենագիրները, խողովուրդեցան անյայտ վայրերում, որոնց դիակները մնացին անթաղ, «ցամաքեցան» եւ փոշիացան անապատների եւ դաշտերի մէջ: Աւերակների վերածուեցան մեր եկեղեցիներն ու վանքերը, ճարտարապետական կոթողները, բարեշէն քաղաքներն ու զիւղերը՝ անբնակ, մշակութային գանձերը կողոպտուեցան կամ ոչնչացան: Արմատախիլ եղան ժողովրդական բանահիւսութեան, երգերի եւ աւանդութիւնների, ժողովրդական արուեստի հիմունքները, որոնք աղբիւրներն են ամենայն ժողովրդի յառաջադիմութեան եւ ազգային ստեղծագործութեան, լեզուի կենդանի պահպանութեան եւ հարստութեան: Սովից, սրից, հիւանդութիւններից ազատուած մնացորդը Հայաստանի, Փոքր Ասիոյ եւ Կիլիկիոյ Հայութեան ցրուեցաւ աշխարհի ամէն կողմերը:

Ո՞րը թուեմ, ինչպէ՞ս շօշափելի կացուցանեմ մեր անսահման կորուստները մի քանի տողերի մէջ, պատմութեան այս ճակատագրական, անողոք եւ անգութ հարուածների տակ կատարուած ահաւոր ողբերգութիւնը...

Դ

Բայց, ինչպէս ասացինք, երբեմն նեղութիւններից եւ հալածանքներից յետոյ վերածնում է ինչպէս անհատի, այնպէս եւ ազգի հոգին: Ազգերի կեանքից բազմաթիւ օրինակներ կարող ենք բերել: Նոյնիսկ Իսրայէլի պատմութիւնը ունի դորա համար ուրիշ ցայտուն ապացոյցներ. եգիպտական ստրկութիւնից ծնուեց Մովսէս մեծ եւ հայրենա-

սէր մարգարէն, որ իւր ժողովրդին կրօնական կազմակերպութեան եւ Աւետեաց երկիրը տանելու առաջնորդը եղաւ: Անտիոքոսների հալածանքից յառաջ եկաւ մակարայեցւոց շարժումը եւ քաղաքական ազատութեան ձգտումը:

Մեր ցիրուցան եղած ժողովուրդը, բարեբախտաբար, սիրալիք ասանջականութիւն ունեցաւ այլեւայլ ազգերի մէջ: Այստեղ յատուկ յիշատակութիւն ունենք կատարելու Լիբանանի եւ Սիւրիոյ մասին, ուր պատսպարուած է մեր ժողովրդի մի կարեւոր հատուածը քաղաքացիական եւ կրօնական բոլոր ազատութիւններով: Այստեղ է հաստատուած եւ Կիլիկիոյ Հայրապետական Աթոռը, որ իւր ժողովրդի հետ սկսել է կենդանանալ եւ կազդուրուիլ նիւթապէս եւ կուլտուրապէս: Այսպէս եւ ուրիշ երկիրների մէջ Սփիւռքի աչքաբաց Հայութիւնը եւ յառաջադիմութեան ընդունակ ժողովուրդը որոշ տեղ է սկսել բռնել իւր բնական երկիրների մէջ: Սկսել է յառաջադիմել Հոգեւոր զարթնումի, արուեստների եւ գրականութեան մէջ, հայրենաբաղձ զգացմունքը բարձրացրել է իւր գլուխը, ինչպէս երբեմն Իսրայէլի ժողովրդի մէջ: Այդ զգացմունքն է, որ այսօր խմբել է մեզ մեր այս սրբազան կամարների տակ՝ տխուր, բայց նուիրմամբ եւ գիտակցութեամբ կատարելու բիւրաւոր նահատակների յիշատակը, որոնք ընկան աքսորի եւ գերութեան ճանապարհին, որոնց նշխարները անթաղ մնացին եւ փոշիացան անապատի աւազների մէջ: Այդ զգացմունքն ու գիտակցութիւնը պէտք է վառ մնան մեր սրտերի մէջ եւ արդիւնաւոր դառնան մեր նիւթական եւ Հոգեւոր հայրենիքի վերակենդանութեան եւ յառաջադիմութեան վերելքի համար: Դորանով է, որ մենք իրապէս յարգած եւ գնահատած կը լինենք նրանց յիշատակը եւ պահած մեր գոյութեան դէմքը Հայրենիքից դուրս՝ հեռաւոր ափերի վերայ:

Ե

Բայց մենք մխիթարութեան ուրիշ հիմունքներ եւս ունենք. այդ մեր վերածնունդը Հայաստանն է Խորհրդային սահմանների մէջ: Մեծ էր հարուածը անցեալ համաշխարհային պատերազմի հետեւանքով, անսահման մեծ՝ մեր կորուստները, բայց Աստուած բոլորովին չզրկեց: Ունենք մեր փոքրիկ, բայց թանկագին Հանրապետութիւնը՝ իբրեւ մէկը Խորհրդային Միութիւնը կազմող հանրապետութիւններից: Ընդամէնը 25 տարուան կարճատեւ ժամանակը բաւական եղաւ, որ հին աւերակների տակից մի նոր երկիր եւ ժողովուրդ յարուժուէն առնէ: Գունաւոր ակնոցով չնայենք իրողութիւնների վերայ եւ միայն

պակասութիւններ չորոնենք այնտեղ. ամենամեծ եւ հին պետութիւնների մէջ էլ կարելի է պակասաւոր բաներ գտնել, եթէ փնտրենք: Լինենք խոհեմ եւ իմաստուն իրականութեան հանդէպ եւ կը տեսնենք, թէ ինչ աստուածային պարգեւ է խորհրդային Հայաստանը մեզ համար՝ մեր ազգային, քաղաքական եւ քաղաքակրթական տեսակէտներով:

Մեր լեզուն պետական լեզուն է մեր սահմանների մէջ՝ դպրոցում, դատարանում, փողոցի եւ խանութների մէջ եւ ամէնուրեք: Օտար տարրերն իսկ՝ եզիզի, ասորի, յոյն, ռուս, Հայաստանի փոքրամասնութիւնների քաղաքացիներ, ունենալով իրենց քաղաքացիական ազատութիւնները եւ դպրոցները, սովորում են եւ հայերէն՝ իբրեւ պետական լեզու: Հայագիտութիւնը՝ մեր պատմութեան, լեզուի, հնագիտութեան, արուեստի եւ գրականութեան ուսումնասիրութիւնը, յառաջացել է զգալի չափով. ունենք այնպիսի գիտնականներ, ինչպէս Աճառեանն է, հանգուցեալ Աբեղեանը, Մանանդեանը, Մալխասեանը, Ղափանցեանը, Տէրտէրեանը եւ մի շարք նոր հայագէտներ, որոնց հրատարակած գործերը պատիւ կարող են բերել մեզնից թուով աւելի մեծ եւ պետական աւելի երկար կեանքով ապրած ազգերին: Հայ արուեստի բոլոր ճիւղերի՝ նկարչութեան, ճարտարապետութեան, արձանագործութեան եւ երաժշտութեան մէջ այնպիսի ներկայացուցիչներ ունենք, որպիսիք են Սարեանն ու Կոջոյեանը, հանգուցեալ Թամանեանն ու Թորամանեանը, Հալաբեանն ու Բունիաթեանը, Արա Սարգսեանն ու Ուրարտուն, հանգուցեալ Սպենդիարեանը, Ստեփանեանն ու Խաչատրեանը երաժշտութեան մէջ. վերջինն արդէն սկսել է համաշխարհային հռչակ ստանալ խորհրդային Միութիւնից էլ դուրս: Ապա բանաստեղծների եւ գրականութեան ներկայացուցիչների հոյլը՝ Աւետիք Իսահակեան, Դեմիրճեան, հանգուցեալ Չարենց, Զ. Նայիրի, Յովհաննէս Երրագ, Ստեփան Զօրեան եւ այլն:

Երեւանի մեր թանգարանը իւր բաժանմունքներով աւելի հարուստ է, քան մեր տեսածները բալկանեան պետութիւնների մէջ. մեր Համալսարանը՝ իւր ճիւղերով եւ բազմաթիւ մասնագէտներով գիտութեան այլեւայլ ճիւղերի մէջ: Ունենք մեր Գիտութեանց ճեմարանը իւր կարող եւ հմուտ նախագահով, որպիսին Յովսէփ Օրբելին է, բազմաթիւ արհեստագէտներով. մեր դպրոցները՝ տարածուած յետին գիւղերումն իսկ. մեր զինուորականութիւնը՝ իւր զօրավարներով եւ հերոսներով, որոնք բարձրացնում են Հայ ժողովրդի անունը ոչ միայն խորհրդային Միութեան ազգերի, այլեւ օտար մեծ պետութիւնների աչքում: Սրանք ակնարկներ են միայն՝ ցոյց տալու, որ մեր ազգը

վերածնութեան մի նոր շրջան է ապրում մեծ հարուածներից յետոյ, եւ նոյնիսկ ահաւոր պատերազմը, որին մասնակցում է եւ մեր երկիրը, յետ չէ կասեցրել իւր յառաջադիմական քայլերից նիւթական եւ մշակութային ստեղծագործութեան բոլոր մարգերում: Մեր սրտերը պիտի բաբախեն ոչ միայն մեր գաղութային, այլեւ հեռաւոր հայրենիքի յառաջադիմութեան հարցերով. ա՛յս է այսօրուան տօնի խորհուրդը եւ արժէքը մեր համար:

Աչքներս դէպի հեռուն եւ լուսաւոր ապագան՝ յուսով, հաւատով եւ սիրով լցուած:

Շնորհք Տեառն եղիցի՛ն ընդ ձեզ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
«Հասկ», յունիս-յուլիս, 1945



ՆՄԱՆԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ
ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ
ՄԷՋ

(ընտանեկան շրջանում)

Կենդանիներին եւ մարդկանց յատուկ է նմանելու կարողութիւնը: Առաջինների մէջ այդ կարողութիւնը բնազդ է, ինչպէս եւ երեխաների մէջ յատկապէս վաղ մանկութեան օրերին, բայց հետզհետէ հոգեկան զարգացման հետ դառնում է այն գիտակցական՝ չկորցնելով բնական այդ հակումն ու զգացումը եւ հասուն շրջանում:

Հարկ չկայ երկար ճառել եւ օրինակներ բերել, թէ ինչպէս կենդանիներն ու թռչունները իրենց մատղաշ ձագերին անձնական օրինակներով սովորեցնում են ուտել, կտցահարել, թռչել, մոլուկներ որսալ: Կենդանական այդ «մանկավարժութեան» հիմքն է ձագուկի նմանելու կարողութիւնը իւր մօրը՝ սկզբում դժուարութեամբ, բայց հետզհետէ ընտելանալով եւ իւրացնելով նորա ցուցումները՝ անձնական օրինակով տուած: Հաւր իւր փոքրիկ ձագուկներին սովորեցնում է, թէ ինչպէս տանտիկնոջ պատրաստած փափուկ եւ փխրուն փոխինդը ալիւրի եւ հակիթի դեղնուցի հետ խառնած, ապա՝ փոքրիկ հատիկները եւ հոսկ յետոյ՝ գարեհատները պէտք է քաղեն կտցով եւ կուլ տան, թէ ինչպէս իրենց առաջ դրած ջրամանից զովացնեն իրենց ծարաւը եւ, աւելի մեծանալով, բոյսերի հատիկներ, մոլուկներ որոնեն եւ կերակրուեն: Բնականաբար, հոգսի մեծագոյն մասը վիճակուած է մօրը. արուն աւելի օգնականի դեր է կատարում թռչունների նկատմամբ:

Նոյնը նկատում ենք նաեւ մանկան եւ ծնողների յարաբերութեան մէջ, մանաւանդ մանկան եւ մօր մէջ՝ նոյնիսկ ծնելուց առաջ, որին կրել է իւր արգանդի մէջ, ցաւի եւ վտանգի ենթարկուել ծնելու ժամանակ, իսկ ծնուելուց յետոյ երեխան բացառապէս մօր խնամքին է ենթարկուած սննդեան եւ այլ խնդիրներում: Այս է պատճառը, որ մայրը աւելի նշանակութիւն ունի մանկան համար առաջին տարիները: Հօր ազդեցութիւնը մանկան վերայ աւելի յետոյ է սկսում եւ հետզհետէ հեղինակութիւն դառնում նորա համար:

Ինչպէս կենդանիների եւ թռչունների ձագերը նմանելու եւ սովորելու օրինակ ունին իրենց ծնողները, այնպէս եւ մանուկները: Այդպիսի ունակութիւն բնական է, սկզբում բնազդական, որ երեխայի

մէջ ծագում եւ զարգանում է նոյնիսկ առանց սովորեցնելու: Երեխան՝ մանչը կամ աղջիկը, տեսնում ենք՝ շատ մատղաշ հասակումն իսկ իւր շարժուածներով, ծիծաղելու, աչքով-ունքով խօսելու կերպերով յաճախ նմանում է հօրը կամ մօրը՝ առանց նրանց կողմից սովորեցնելու որեւէ փորձի: Այդ հետեւանք է նորա նմանելու կարողութեան, որ կատարում է երկու կերպ՝ ինքնաբերաբար, բնազդով կամ մեծերի աշխատութեամբ եւ սովորեցնելով: Ուսանելու եւ ուսուցանելու հոգեբանական հիմքը այս ունակութեան՝ մանկան հոգու այս յատկութեան վերայ է հիմնուած: Բայց մենք կը տեսնենք, թէ ոչ միայն մանկանց համար, այլեւ կատարելահասակ մարդկանց համար նմանելու կարողութիւնը բարոյական կատարելութեան կարեւորագոյն միջոցներից մէկն է:

* * *

Առհասարակ, մանկան հոգու յատկութիւնները ճանաչելու եւ զարգացնելու երկու ճանապարհ ունինք: Մասամբ ժառանգական են այդ յատկութիւնները, բայց աւելի մեծ չափով՝ ստացական: Ժառանգականութեան ամենացայտուն ապացոյցները տեսնում ենք մանկան արտաքին նմանութեան մէջ (դէմքի, աչքերի եւ այլն)՝ ծնողներից մէկնումէկի, նաեւ մերձաւոր ազգականների հօր եւ մօր կողմից: Շատ անգամ մարմնական մի արտաքին նշան (խայ), որ ունի հայրը կամ մայրը, մեծ հայրերից կամ մայրերից որեւէ մէկը, երեւում է եւ մանկան վերայ: Բայց ոչ միայն արտաքին նմանութիւններն ու նշաններն են կրկնում յետագայ սերունդի վերայ, այլեւ հոգեկան կարողութիւնները: Արուեստագէտի որդին, թոռը կամ թոռնորդին նոյնպէս, առաւել կամ նուազ չափով, արուեստագիտական հակումներ եւ ունակութիւններ են ցոյց տալիս: Բանաստեղծի որդին կամ թոռը, յետագայ սերունդներից մէկը անպատճառ բանաստեղծ չէ իհարկէ, բայց արուեստի որեւէ ճիւղի մէջ նկատում է այդ ժառանգութիւնը: Այդ օրէնքը յոռի կամ լաւ կողմերով կարեւոր դեր է կատարում սերունդների նկարագրի հոգեկան ունակութիւնների նկատմամբ, ուստի եւ դաստիարակը կամ ծնողը ամենամեծ ուղղորութիւն պիտի դարձնի այս հանգամանքի վերայ: Բոլոր երեխաների հետ միատեսակ վարուել կարելի չէ, այլ՝ խառնուածքին եւ ընտանեկան պայմանների համեմատ: Մէկին խիստ յանդիմանութիւնն անգամ չէ ազդում, իսկ միւսին աչքի կամ ձեռքի մի բացասական շարժում, ակնարկ բաւական է: Նոյնիսկ կան երեխաներ, որոնց այդ էլ պէտք չէ. նոքա իրենք իրենց հասկանում են իրենց սխալը: Այսպիսի դէպքում լուրթիւնը ամենից իմաստուն վարուելակերպն է:

Հոգու զարգացման երկրորդ ճանապարհը ստացականութեամբ իւրացման ճանապարհն է, որ աւելի մեծ դեր է կատարում մեր կեանքի մէջ: Մենք մեր ժամանակի եւ մեր շրջանի զաւակն ենք, այսինքն՝ իւրացնում ենք այն մտքերն ու գաղափարները, այն ապրելակերպը, որ յատուկ են մեր շրջապատին: Մեր էութեան ամենամեծ մասը ստացական է՝ ձեւակերպուած շրջապատի ազդեցութեամբ եւ նմանութեամբ: Իհարկէ, մարդը լուսանկարչական մեքենայ չէ բոլորովին. նա ունի իւր միտքը, երեւակայութիւնը, ստեղծագործական ունակութիւնները եւ հոգու թռիչքները, բայց, ինչ էլ լինի, օդի մէջ կախուած անհատ, հասարակութիւն կամ ազգ չկայ, այլ՝ շատ մեծ չափով պայամանաւորուած շրջապատով, կրթութեամբ, անցեալի, ներկայի իրողութիւններով եւ նոյնիսկ ապագայի հետ կապուած եւ ծրագրուած ձգտումներով: Կրթութիւն, դպրոց, ուսում ու գիտութիւն, կեանքի փորձառութիւն՝ բոլորը այս իւրացման եւ նմանութեան օրէնքի հետ է կապուած: Մանկան կեանքի սկզբնական շրջանում գիտակցութիւնն ու դատողութիւնը չէ նորան ուղղութիւն տուողը, այլ՝ կենդանի օրինակը, որին հետեւում է նմանելով, առանց իրեն հաշիւ տալու:

* * *

Մանուկները երբ աշխարհ են գալիս, միայն մսի գունդ չեն, այլ՝ հոգեկան եւ իմացական զարգացման սաղմերի բոլոր տուեալներով օժտուած էակներ: Ինչպէս տեսանք, այդ տուեալները ժառանգական են, բայց առաւելագոյն չափով ենթակայ ստացած տպաւորութեան եւ շրջապատի ազդեցութեան, որով հետզհետէ կերտւում է մանկան անձն ու նկարագիրը: Վաղուան մարդկութեան, ազգի եւ հասարակութեան վիճակն ու բախտը նրանց այսօրուայ կեանքով է պայմանաւորուած՝ մարմնական եւ հոգեկան տեսակէտներով: Կամենո՞ւմ ենք, որ մեր զաւակները իբրեւ երիտասարդ եւ առհասարակ կեանքի մէջ լինին առողջ, ուժեղ, յաջողակ, մարմնական եւ հոգեկան կատարելութիւններով, մեր աղջիկները փթթին վարդի պէս, կանացի քնքշութեան եւ զգաստութեան հետ՝ մաքուր հրապոյրներով... այդ մասին պէտք է մտածեն ծնողները նրանց ծննդեան եւ կեանքի առաջին տարիներից: Փշից խաղող չի քաղուել, եւ ոչ տատասկից՝ թուզ: Ինչպէս ծառը, այնպէս եւ պտուղը՝ որակի տեսակէտով: Բայց թզենին ու խաղողի որթն էլ կուտան ազազուն եւ խեղճ պտուղներ, եթէ ժամանակին չմշակուին նրանք՝ տակը փորելով, աւելորդ ճիւղերն ու մատները կտրելով, ամառուայ սօթ օրերին ոռոգելով: Մանուկների հոգեկան եւ մարմնական առողջութիւնը, մտաւոր եւ բարոյական դաստիարակութեան յաջողութիւնը մեծագոյն չափով կապուած են

ծնողներից՝ ժառանգութեան կամ ստացականութեան, նմանութեան տեսակէտներով: Ախտաժէտ մարմնով, մտքով եւ հոգեով ընկած ծնողներից իզուր է մարմնական եւ հոգեկան բարձր յատկութիւններով սերունդ սպասել: Ծնողները պէտք է խնային իրենց երիտասարդութեան ուժերը՝ հեռու չափազանցութիւններից, շուայտութիւնից, արեցցութիւնից, եթէ կամենում են իրենց զաւակները ազատ լինեն այդպիսի պակասութիւններից: Կամենո՞ւմ ենք մեր որդին լինի պարտաճանաչ, ազնիւ եւ համակրելի շրջապատի համար, մենք ինքներս պիտի լինինք այդպիսին. կամենո՞ւմ ենք մեր դուստրը լինի համեստ, օրինակելի ամուսին եւ մայր ապագայի համար, սիրոյ եւ անձնուիրութեան աղբիւր իւր շրջապատի համար, մենք ինքներս պիտի լինինք այդպիսին, որպէսզի բարին եւ ազնիւր սերմանուի մեր մանուկների հոգու մէջ, նմանողութեան եւ հետեւողութեան աստուածատուր կարողութեամբ փոքր հասակից մեր զաւակները հետեւել սովորեն իրենց ծնողներին:

Կեանքիս մէջ պատահել եմ մի ընտանիքի. հայրը Ֆրանսացի բժիշկ էր, մայրը՝ ռուս եւ բարձր ընտանիքի զաւակ, կրթուած: Նոքա մի զաւակ ունէին, աւա՛ղ, մարմնով եւ հոգեկան կարողութիւններով պակասաւոր: Այդ դժբախտ ծնողները իրենց կեանքի էութիւնը կեդրոնացրել էին իրենց հիւանդ եւ խելապակաս որդու վերայ, իրենց ամբողջ կեանքը, ուշադրութիւնը նորան նուիրել: Ինչպէս բարեպաշտի մոմը վառուում է սուրբի պատկերի առաջ, նրանց ամբողջ հոգեկան աշխարհը մոմի նման վառուում էր, հալւում այդ հիւանդ որդու առաջ: Արդեօ՞ք մեղաւոր էին զգում իրենց կամ իրենց պապերին, չգիտեմ, բայց այս երեւոյթը մի ցայտուն օրինակ էր ծնողական պարտականութեան խորը գիտակցութեան:

Ապա հոգեկան առողջութիւնն ու զարգացո՞ւմը: Մեր ժողովուրդը մի գեղեցիկ խօսք ունի, որ հիմնուած է կեանքի երկարատեւ փորձառութեան վերայ. «Կաթի հետ մտածը մահուան հետ դուրս կը գայ»: Ուրիշ խօսքով՝ մանկան հոգեկան ստացումներն ու տպաւորութիւնները հիմքն են ապագայ մարդու կատարելութեան կամ պակասութեան: Սովորաբար ծնողները, մեծագոյն մասով, գաղափար չունին այս մասին, եւ անգիտութիւնը մեծ սխալների մէջ է ձգում նրանց: Մանկան դաստիարակութիւնը սկսւում է ծննդեան առաջին օրերից. այդ մասին արդէն ակնարկ արինք մօր եւ զաւակի յարաբերութեան մասին խօսելիս: Անխօս, ըստ երեւոյթի բացարձակապէս անգիտակից մանկան վերայ սկսում է ազդել շրջապատը ծննդեան առաջին օրերից, յատկապէս կարեւորագոյն դեր է կատարում մայրը: Նա պէտք է գիտենայ՝ ինչպէս ֆիզիքապէս եւ հոգեպէս սնուցանել իւր զաւակին,

ուրեմն եւ նախապէս պէտք է պատրաստուի այդ ուղղութեամբ՝ կարգալով կամ խրատներ լսելով աւելի փորձառուներից: Մանկան հոգին կազմակերպուել է սկսում կաթի հետ. պէտք է զգուշանայ ուտելիքների եւ ըմպելիքների մէջ, որ կաթի միջոցով ազդել են սկսում երեխայի վերայ: Բայց նաեւ խօսքի, վարմունքի, ոչ ցանկալի արտայայտութիւնների մէջ. ինչպէս հայելու մէջ արտացոլում է պատկերը, այդպէս էլ մանկան հոգու վերայ՝ շրջապատից եկած տպաւորութիւնները, շարժումները, նիստ ու կացը, մինչեւ իսկ հոգեկան տրամադրութիւնները: Մի՛ կարծէք, թէ մի քանի ամսական երեխայի աչքերը, որ դիտում են ձեզ, ականջները, որ լսում են, ոչինչ չեն հաղորդում նորա հոգուն: Մնողների ֆիզիքական եւ հոգեկան յատկութիւնների փոփոխութիւնները անդրադառնում են նորա վերայ: Ապա մարմնական եւ հոգեկան զարգացման հետ այդ տպաւորութիւնները շատ աւելի զգալի են դառնում: Մնողների շարժուձեւերի, ծիծաղի եւ այլնի ընդօրինակման մասին խօսք եղաւ վերեւ: Նրանց բերանից չէ՞ք լսել կամ վարմունքներից տեսել այնպիսի բաներ, որ նորա հասկացողութիւնից վեր են: Նա արտաքին նմանողութեան կամ լսածը իւրացնելու ունակութեան հետեւանքով իւրացրել է այդ բաները՝ առանց հասկանալու վատութիւնը կամ լաւութիւնը: Երբեմն հայհոյում է այնպիսի խօսքերով, որոնց իմաստը չէ հասկանում: Ահա՛ շրջապատի ազդեցութեան կամ նմանողութեամբ մանկան հետեւելու ապացոյցը: Ապա ուրեմն, մանկան ներկայութեամբ զգո՞յ՞ որեւէ արտառոց խօսքից, վարմունքից կամ գործից: Իրենց զաւակների ներկայութեամբ ամուսինները պիտի լինին աւելի զուսպ իրենց խօսքի, գործի, վարմունքի մէջ:

* * *

Իզուր չէ, որ ինչպէս ուրիշ կրօնների, բայց առաւելապէս քրիստոնէութեան մէջ մայրական կոչումը այնքան բարձր է գնահատուած, պաշտաման եւ ստեղծագործութեան ներշնչման առարկայ եւ աղբիւր է հանդիսացել: Ընտանեկան յարկը փոքրիկ Եկեղեցի է, եւ ծնողները, յատկապէս մայրը, այդ Եկեղեցու պաշտօնեան: Ամուսինների սիրոյ, փոխադարձ անձնուիրութեան միջոցով մէջ ծնուած եւ սնուած մանուկը անկարելի է, որ չազդուի բարոյապէս կազդուրիչ այդ օդի ազդեցութեամբ: Նա ինքը դառնում է այնուհետեւ երկու ամուսինների սիրոյ միացման ազդակը եւ ուրախութեան աղբիւրը: Նորա անմեղ լացն ու արտասուքները, որ այնպէս առատ թափւում են աչքերից, ձեզ ուրախութիւն են պատճառում. ապա նորա ժպիտը, փափրիկ ձեռքերով խաղը մօր կրծքին՝ երբեմն տրորելով մօր քիթն ու

մուտքը, մազերի սանրուածքը: Ապա ինչպէ՛ս է վրա պրծում մօր ստինքի վերայ՝ իրեն սահմանուած բաժինը ստանալու: Ինչքա՛ն ուրախութիւն է պատճառում նորա զրկից դիրկ անցնելու գործողութիւնը: Ապա նորա առաջին քայլե՞րը, լեզուի թոթովանքե՞րը, նրա տրամաբանելու առաջին փորձե՞րը... ո՞ր մէկը յիշեմ: Պապիկներն ու մամիկներն էլ բաժին ունին այդ ուրախութիւններից մեծ չափով: Թոռնիկն արդէն 4-5 տարեկան է դարձել. հետաքրքրութեան եւ անմեղութեան խառնուրդից ինչպիսի՞ զաւեշտ է դուրս գալիս երբեմն: Պապիկ էք ձեր անկողնում, եւ ահա ձեր զարթնած թոռնիկը ձեր մահճակալն է մագլցում, խաղ սկսում ձեր բեղերի եւ մօրուքի հետ, եթէ ունիք, հեծնում ձեր վերայ եւ իբրեւ ձի քշում... Դիտեցէ՛ք նորա ընդունակութիւնները. ով գիտէ ի՞նչ ապագայ է սպասում նորան՝ բանաստե՞ղծ, արուեստագէ՞տ, հասարակական գործի՞չ...

Բայց ոչ միայն այսքան: Նորա ներկայութիւնը ծնողների վերայ նոյնիսկ բարոյացուցիչ ազդեցութիւն է ունենում. ծնողներն իրենց աւելի զսպուած են պահում խօսքերի, շարժումների, իրենց փոխադարձ յարաբերութեան մէջ, աւելին՝ մինչեւ իսկ գծտուած ծնողների հաշտութեան միջնորդ է դառնում զաւակը: Ինձ պատմել են մի դէպք. ծնողները բաժանուում են իրարուց, թւում է, թէ այլեւս միասին ապրել չեն կարող. նրանց միակ 5-6 տարեկան զաւակը օրէնքի որոշմամբ մնում է հօր մօտ. մայրը դուրս է գալիս տնից: Երեխան զգում է մօր բացակայութիւնը, զգում է ծնողների գծտուութիւնը եւ անմխիթար տանջւում է. նա մօրն է պահանջում եւ սպառնում, որ առանց իւր մօր այս տանը մնալ չի կարող, կը կորչի, մօրը փնտրելու կ'երթայ: Երեխայի այս դիրքը, սրտաճմրիկ տեսարանները մօր բացակայութեան հետեւանքով այնքան խորն են ազդում հօր վերայ, որ նա պարտաւոր է զգում իրեն զիջող դիրք բռնել դէպի կինը, խնդրել, որ զաւակի սիրոյն իրար զիջեն եւ դարձեալ միասին ապրեն:

Ի՞նչ է հետեւում այս բոլորից. որ մանկան դաստիարակութեան իսկական դպրոցը ընտանիքն է, առաջին եւ կարեւորագոյն ուսուցիչները՝ ծնողները, որոնց ուսուցումից աւելի նշանակալից է օրինակը՝ նմանողութեան իղէալ ներկայանալու իրենց երեխաների համար:

Նմանողութեան օրէնքի ենթարկւում են եւ մեծերը, հասակաւորները, հասարակութիւններն ու ազգերը, բայց այդ մասին՝ մի այլ անգամ:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
«Հայաստանեայց Եկեղեցի», յուլիս, 1942

ՔՐԻՍՏՈՆԷԻ ԳԵՐԱԿԱՅ ԳԱՂԱՓԱՐԸ

«Չիք այլով ինք փրկութիւն, զի եւ ոչ անուց
այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ,
որով արժան իցէ կեալ մեզ» [Գործ. Դ 12]:

Իւրաքանչիւր անհատ, հասարակութիւն կամ ազգ իւր գերակայ գաղափարն ունի (ideal): Գերակայ գաղափարն այն լուսաւոր նպատակն է, որին ձգտել է կամենում անհատը, հասարակութիւնը կամ ազգը: Գերակայ գաղափարը կարող է երբեմն սխալ լինել, բայց եւ այնպէս լաւ է սխալ գերակայ ունենալ, քան առանց գերակայի լինել: Առանց գերակայի կեանքը մեռելութիւն, անիմաստ դատարկութիւն կը լինէր: Իրականութիւնն ու գերակայ գաղափարները իրարից շատ հեռու են իհարկէ, բայց մարդկութեան սուրբ ձգտումն ու նպատակն է եղել այդ անդունդի վերայ մի հաստատուն կամուրջ ձգել: Մեր կեանքն անխորհուրդ կը լինէր, մի անլոյս լապտեր կը դառնար առանց այդ ձգտման:

Գերակայ գաղափարները զանազան են. արուեստի մէջ, օրինակ, գեղեցկութիւնն է, գիտութեան մէջ՝ ճշմարտութիւնը, բայց ամենաբարձր գերական, որ մարդկային ձգտման էութիւնն է կազմում, դա բարոյական գերական է: Որովհետեւ ինչ տեսակ գերակայ էլ վերցնելու լինենք, առանց առնչութեան չէ բարոյական գերակայ գաղափարի հետ: Գեղեցկութիւնը կամ ճշմարտութիւնը կեանքի միայն մի մասն են կազմում, այնինչ բարոյական իդէալը՝ նորա ամբողջութեան էութիւնը: Եթէ գիտնականի իդէալը ճշմարտութիւնն է, նորա անձնաւորութեան ամբողջութիւնը գնահատելու համար չենք մոռանում նորա բարոյական թերութիւններն ու արժանիքները: Բարոյական գերական կեդրոն է, միւսները օժանդակ դեր են կատարում բարոյականի կատարելութեան վերաբերութեամբ:

Մենք՝ քրիստոնեաներս, պարծենում ենք, որ քրիստոնէութիւնն է տուել աշխարհին փրկութիւն բերող գերական, եւ պատմութիւնը վկայում է, որ մենք իրաւունք ունինք: Հեթանոս աշխարհի տուած գերականները անզօր էին ընդհանուր մարդկութեան մէջ կենդանութեան ոգին ներշնչելու: Յունական քաղաքակրթութեան ամենափայլուն ժամանակն իսկ, երբ ազատութեան եւ ազնիւ կրթութեան գաղափարների միութիւնը յոյնի գերական էր, ազատ չէ մութ ստուերներէ: Հպարտ ինքնագիտակցութիւնը իշխում է տեղական ստրուկ ժողովրդի վերայ եւ շրջապատող ազգերի ճակատին «բարբարոս»

անունն է դրոշմում: Իսկ յունական փիլիսոփայութեան առաջ բերած գերականները մաքուրկային իրական կեանքի եւ սրտի հետ ոչ մի կապ չունեցող, տեգոյն, անկենդան պատկերներ են եւ ոչ պատմական անձնաւորութիւններ: Յունական փիլիսոփայութեան գերականները կարելի է մարմարեայ գեղեցիկ արձանների նմանեցնել, որոնք սակայն, իրենց բոլոր գեղեցկութեամբ հանդերձ, կեանք չունին: Ստոյիկեան բարոյականութեան, օրինակ, պակասում էր այն կենդանի ոյժը՝ կրօնը, որ սառն արձանին ոգի պիտի ներշնչէր: Սոկրատի, Պլատոնի եւ Արիստոտէլի փիլիսոփայութիւնների մէջ շատ ազնիւ գծեր կան, բայց այդ փիլիսոփայութիւնը միայն անհատ ընտրեալների սեպհակաւորութիւն էր: Հետեւանքն այն էր, որ հին մարդկութիւնը զրկուած էր կենսաբեր գերակայ գաղափարից: Բայց եւ այնպէս, իզուր չէին հին քաղաքակրթութեան ջանքերը. լուսոյ շատ ազնիւ ճառագայթներ պիտի երեւան գային այն կենսատու արեգակի մէջ, որ մեռնող մարդկութեան վերակենդանութեան շունչ տուեց: Կարելի է ասել՝ ամբողջ հին աշխարհը երկունքի մէջ էր, եւ նորա ծնունդը քրիստոնէութիւնն է: Բայց երկունքի այդ փպտուղը փոքր-ինչ ուրիշ բան էր, քան նորա մայրը: Մինչեւ այդ ժամանակ մարդկութեան ձգտումն էր բարձրանալ, Աստուածութեան հասնել, բայց մինչեւ «ի դժոխս» էր իջել: Պէտք է զար «լրումն ժամանակին», երբ Աստուածայինը մարդանար եւ ստորացած մարդկութիւնը դէպի Աստուած բարձրացնէր: Յանձին Յիսուս Քրիստոսի մարդանում է Աստուածայինը: Այս իրողութեան մէջ է կեդրոնացած այն զօրութիւնը, որ քրիստոնէութեան բարոյական յաղթութեան գրաւականն էր: Խաւարի մէջ խարխափող մարդկութեան համար լուսոյ մի Աստղ էր ծագել՝ կենդանի, իրական, բարոյական գերակայ, ամենքի համար տեսանելի, ամենքի համար շօշափելի: Քրիստոնէութիւնը յունական փիլիսոփայութեան նման վերացական, կեանքի հետ առնչութիւն չունեցող տեսութիւններ չէր տալիս կամ քաղաքական եւ ծիսական պայմաններով խճողուած աստուածապետութիւն, այլ՝ մաքուր կրօնական կեանք: Կրօնը կեանք է եւ ոչ տեսութիւն: Այդ կեանքը Աստուծոյ արքայութեան գաղափարն է, նորա զարգացումն ու կատարելութիւնը՝ Աստուծոյ արքայութեան կատարելութիւնը: Այդ արքայութեան մէջ Աստուծոյ կամքն է իշխում, եւ այդ կամքի բովանդակութիւնն է սէրը: Աստուծոյ արքայութիւնը անարատ, անբիծ սիրոյ թագաւորութիւնն է:

Հին աշխարհը մի աշխարհ էր առանց ճշմարիտ սիրոյ, ուստի եւ ապականուեցաւ, մեռաւ: Քրիստոնէութիւնը ճշմարիտ սիրոյ կրօնն էր, եւ թէ նա աշխարհին փրկութիւն բերեց, այդ սիրոյ կեանքն էր:

Քրիստոս ինքը աստուածային պատուիրանների կեդրոնն ու էութիւնը սիրոյ պատուիրանն է համարում: Սէր առ Աստուած եւ սէր առ ընկերը նոր վարդապետութեան հիմնաքարերն են: Քրիստոսի վերջին խօսքը սիրոյ պատուիրանն է, եւ նորա աշակերտ լինելու նշանը սէրն է. «Յայսմ գիտասցեն ամենեքեան, եթէ իմ աշակերտ էք, եթէ սիրիցէք զմիմեանս» [Յովհ. ԺԳ 35]: Նոյն ոգին ենք տեսնում եւ Առաքելական թղթերի մէջ: Ծշմարիտ աստուածասիրութիւնն ու եղբայրասիրութիւնը կցորդուած, անբաժան գաղափարներ են: Ուստի եւ Պօղոս առաքեալը քրիստոնէական կեանքի էութիւնը սիրոյ մէջ է տեսնում եւ բարոյական գերակայի պատկերը իւր սիրոյ ներբողի մէջ նկարագրում. «Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ եւ զհրեշտակաց եւ սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ զպղինձ, որ հնչէ, կամ իբրեւ զձնձղայս, որ ղօղանջն: Եւ եթէ ունիցիմ զմարգարէութիւն եւ գիտիցեմ զխորհուրդս ամենայն եւ զամենայն գիտութիւն եւ եթէ ունիցիմ զամենայն հաւատս մինչեւ զլիբինս փոփոխելոյ եւ սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ: Եւ եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց եւ մատնիցեմ զմարմինս իմ յայրումն եւ սէր ոչ ունիցիմ, ոչինչ օգտիմ: Սէր երկայնամիտ է, քաղցրանայ. սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւածէ, ոչ հպարտանայ, ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւր, ոչ գրգռի, ոչ խորհի զչար, ոչ խնդայ ընդ անիրաւութիւն... ամենայնի տեւէ, ամենայնի հաւատայ, ամենեւին յուսայ, ամենայնի համբերէ» [Ա. Կորնթ. ԺԳ 1-7]:

Որքա՞ն վսեմ եւ սրտառու է պատկեր: Քրիստոնէական սիրոյ օրհներգն էր սա: Բայց Պօղոս առաքեալը իւր գլխից չէ հնարում այս պատկերը. երկնաւոր Վարդապետի աշակերտներին հայածող Սաւղոսն այս տողերը գրել էր կարող: Քրիստոսի անձնաւորութեամբ գերուած, նորա սուրբ սիրով վառուած առաքեալի սրտից կարող էր բղխել այս «սիրոյ երգ երգոցը»: Սա տեսութիւնն է. անձնաւորեալ Սիրոյ պատկերն է, որ կենդանանում է նորա հոգու առաջ. «Նմանողք ի՞նձ եղերուք, որպէս եւ ես՝ Քրիստոսի» [Ա. Կորնթ. ԺԱ 1]:

Այո՛, քրիստոնէութեան արեգակը Յիսուսի անձնաւորութիւնն է, Որից կեանքի ճառագայթներ էին հոսել առաքեալների սրտերի եւ այնտեղից՝ ամբողջ մարդկութեան մէջ: Կրօնական անձնաւորութեան կատարելատիպն էր Նա՝ մի կատարելութիւն, որ մարդկային մտքի համար անըմբռնելի երկու ծայրայեղութեան ներդաշնակ միութիւն էր կազմում՝ անհասանելի բարձրութիւն եւ խոնարհութիւն, մեծութիւն եւ ծառայական պատրաստակամութիւն: Ազգերի պատմութիւնը քրքրենք, տակնուվրայ անենք, չկայ սիրոյ այնպիսի կատարելատիպ,

ինչպէս Կեանքի Առաջնորդն էր: Ի՞նչ էր նորա ամբողջ կեանքի ընթացքը, եթէ ոչ անհուն սիրոյ մի շղթայ: Ի՞նչ կարիք, նեղութիւն կար, եւ Նա չէր բժշկում. ո՞ր աղքատի համար Նա սիրտ չունէր. ո՞ր սգաւորին չէր մխիթարում. ո՞ւր մեղքի, ապականութեան զոհեր կային, եւ Նա իւր ձեռքը չէր մեկնում նրանց՝ բարձրացնելու: Թշնամի կա՞ր, որին Նա չէր սիրում: Նա մաքուր էր եւ անարատ, քան լոյսը: «Աստուած սէր է», եւ Նա սիրոյ մարմնացումն էր: Նա սէր էր իւր վարդապետութեան մէջ, Նա սէր էր իւր գործունէութեան մէջ, Նա սէր էր իւր չարչարանքի մէջ, Նա սէր էր եւ խաչի վերայ:

Կենսատու սէրը քառաթեւ խաչի վերայից է հոսում դէպի մարդկանց սրտերը: Այնտեղ դարձնենք մեր աչքը, այնտեղից սպասենք փրկութիւնը. որովհետեւ «չիք այլով իւրիք փրկութիւն. զի եւ ոչ անուն այլ գոյ ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ, որով արժանիցէ կեալ մեզ»:

ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԿԱՒԱԳ
«Արարատ», մայիս, 1897



«Բայց միայն Աստուծո՛յ հնազանդ լեր,
աճճ հիւ, գի ի Նմանէ է իճճ փրկութիւն»
[Սաղմ. 4Ա]:

Կրօնը ազգերի գոյութեան խարիսխն է: Նա է մեր երկրաւոր կեանքին բովանդակութիւն տուող գորութիւնը: Ուր կրօն չկայ, այնտեղ եւ ճշմարիտ կեանք չկայ: Որովհետեւ նա է այն սրբազան աւագանը, որտեղից կեանքի աղբիւրներն են հոսում. նա է ցոյց տալիս այն բարձրագոյն նպատակը, առանց որին մեր կեանքը կենդանականից ոչինչով չէր որոշուի: Առանց նորա մեր կեանքը անվերջ մոլութիւնների մի շղթայ կը լինէր միայն:

Կրօնի հայրենիքը մեր հոգեւոր աշխարհի կեդրոնն է, մեր ներքին աշխարհի սրբութիւն սրբոցը: Այնտեղ է սկզբնաւորում եւ զարգանում այն յարաբերութիւնը, որ մենք ունինք դէպի Աստուած եւ դէպի մեր ընկերը: Դա Աստուածութեան բնակարանն է մարդու հոգու մէջ, որ Նորա շունչը սրբում, մաքրում է կրօնական անձնաւորութեան ներքին աշխարհը եւ այնտեղից բղխող արտաքին գործողութիւնները: Նա զարկ է տալիս, որ մեր երկրաւոր կեանքն էլ սրբազան եւ նւիրական գաղափարների իրականութիւն լինի: Այսպիսով, կրօնական անձնաւորութեան մէջ մարմնանում են եւ բարոյական կատարելութեան պահանջները: Արդարեւ, իրական կեանքն էլ ցոյց է տալիս, որ կրօնական անձնաւորութեան բարոյականութիւնը աւելի վստահելի է եւ հաստատուն: Յատկապէս քրիստոնէութեան մէջ կրօնն ու բարոյականութիւնը ամենասերտ միութիւն են կազմում: Մինչեւ իսկ կրօնի հակաակորդներից շատերն ընդունում են, որ ազգերն առանց կրօնի բարոյական լինել չեն կարող, թէեւ բացասում են միւսնոյնը անհատների համար: Պատմութիւնը ցոյց է տալիս, որ բարոյական կեանքը ծաղկել է կրօնական հողի վերայ: Կրօնի անկման հետ սկսւում է եւ ազգերի բարոյական անկման շրջանը: Իբրեւ փաստ բաւական է յիշել Հռոմէական կայսրութեան եւ Ֆրանսական յեղափոխութեան ժամանակները: Սորանով մենք չենք ժխտում քրիստոնեայի մեղանշականութիւնը. բայց ուրիշ է գայթակղութիւնը, եւ ուրիշ՝ գիտակցական յանցանքը, իսկ վատթարագոյնն է, երբ գիտակցական կատարում մեղքը այլեւս վնաս չէ համարում: Նոյնիսկ Եկեղեցու պատմութեան մէջ մեծ ստուերներ կան, ինչպէս սիմոնականութիւնը կամ հաւատաքննութեան հետ կապուած չարիքները, բայց դորա համար քրիստո-

նէական կրօնը մեղադրելն առնուազն մեծ սխալ է: Կատարեալ կրօնական անձնաւորութեան համար բարոյական պատուէրներն ու օրէնքները այլեւս կարեւոր չեն. նորա կեանքն ամբողջապէս բարոյականութիւն է: Երբ աստուածային եւ մարդկային կամքերի մէջ ներդաշնակութիւն է տիրում, այնտեղ այլեւս օրէնքը ոյժ չունի, որովհետեւ կրօնական մարդու ներսից արդէն ինքնստիչեան բղխում են ամենակատարեալ բարոյական օրէնքի պահանջները: Կրօնական անձնաւորութեան հնազանդութիւնն առ Աստուած անձնուիրութեան է առաջնորդում նորան եւ ընկերոջ համար: Այս ճշմարտութեան համար մենք կենդանի օրինակ ունինք մեր Փրկչի անձնաւորութիւնը: Նորա խաչելութեան ճանապարհը Գեթսեմանի պարտիզից է սկսւում: Նորա կրօնականութիւնն ու բարոյականութիւնը, պարտքի զգացումն ու մարդասիրութիւնը ներդաշնակ միութիւն էին կազմում. Նորա ամբողջ կեանքը Աստուծոյ կամքի կատարումն էր, բայց միեւնոյն ժամանակ սէր՝ դէպի մարդիկ: Քրիստոս ինքն էլ բարոյականութեան եւ կրօնի մէջ խտրութիւն չէ դնում. քրիստոնէութեան երկու մեծ պատուիրանները՝ սէր առ Աստուած եւ առ ընկերն, Նորա անձի, գործունէութեան եւ վարդապետութեան մէջ անխզելի միութիւն են կազմում:

Բայց այսպէս է ոչ միայն անհատի, այլեւ ամբողջ ազգութեան համար: Անհատի փրկութեան ճանապարհը ազգերի փրկութեան ճանապարհն է: Պատմութիւնը վկայում է, թէ մարդկութիւնն ինչ գեղեցիկ եւ ազնիւ բան արտադրել է, կրօնից է բղխել կամ նորա հետ է կապուած: Մարդկային հոգու ամենահին յիշատակարանները կրօնական յիշատակարաններն են:

Կրօնն է մարդկային քաղաքակրթութեան մայրը, նորանից ծագումն առել եւ զարգացել է քաղաքակրթութիւնը իւր բոլոր ճիւղերով: Հնդկաստանում, Ասորեստանում եւ Եգիպտոսում քաղաքակրթութիւնն ամենասերտ առնչութեամբ կապուած էր կրօնի հետ: Եգիպտացւոց քրմերը միեւնոյն ժամանակ նոցա գիտնականներն էին: Բաբելոնացւոց կրօնի հետ էր կապուած աստղագիտութիւնը: Քրմերն էին նոյնպէս եւ ազգերի մատենագիրներն ու պատմաբանները: Արուեստի ամենահին եւ գեղեցիկ յիշատակարանները բացառապէս կրօնական են: Հելլենական աստուածների տաճարները ճարտարապետութեան ամենագեղեցիկ արդիւնքներն են եղել: Արձանագործութիւնը նոյն ընթացքով է զարգացել. աստուածների ու աստուածունհիների արձաններն էին այդ արուեստի ամենագեղեցիկ արտադրութիւնները: Հրէական մատենագրութիւնն ամբողջապէս կրօնական է:

Ա

Առանց կրօնական կեանքի իղուր է մեր Եկեղեցու Հոգեւոր վերածնութեան մասին մտածել: Ժողովրդի բարոյական եւ Հոգեւոր շարժման, գիտութեան եւ քաղաքակրթութեան առողջ զարգացման առաջին պայմանը կրօնական վերակենդանութիւնն է. այս միտքը շատ անգամ շօշափել ենք «Արարատի» էջերում: Ներկայիս կամենում ենք առանձին խորհրդածութեան նիւթ դարձնել, թէ ինչ է նշանակում կրօնական անձնաւորութիւն լինել, որով եւ յոյս ունինք, թէ մեր ընթերցողների Համար կը պարզուի այն խնդիրը, թէ որքան իրաւունք ունինք այդ միտքը իբրեւ ճշմարտութիւն քարոզելու:

Մի քանի խօսքով պարզենք նախ, թէ ինչ է կրօնը, որպէսզի աւելի դիւրութեամբ կարողանանք պատասխանել, թէ ինչ է նշանակում կրօնական անձնաւորութիւն լինել: Մարդու եւ Աստուծոյ յարաբերութիւնն է կրօնը. նա ծագում է այն Հաւատից, թէ կայ մէկը, որ տիեզերքի եւ մեր ներքին աշխարհի Տէրն ու Կառավարիչն է: Աստուծու որոնել ու գտնել, Աստուծով յուսալ, սիրել, ապրել եւ մեռնել՝ կրօնի էութիւնը, նպատակն ու բովանդակութիւնն է կազմում: Աստուծոյ եւ մարդկային Հոգու յարաբերութիւնը կատարւում է աղօթքով՝ լինի ամուռնչ, թէ խօսքով, որ կրօնի մէջ ամենից էականն է: Ով աղօթել չի կարող ճշմարտութեամբ, նա չէ կարող կրօնական լինել բառի ազնիւ իմաստով. որովհետեւ անբիծ, անարատ սրտով աղօթել՝ նշանակում է մեր ներքին Հոգեկան աշխարհը իւր բոլոր գաղտնիք-րութիւնն անել, այսինքն՝ Աստուծու նուէր բերել մեր սիրտը, մեր Հոգին, ոչնչացնել մեր սն ու էութիւնը՝ Աստուծոյ կամքը կատարելու, Աստուծոյ Համար ապրելու նպատակով: Այսպիսի զոհաբերութիւնը միմիայն խորին սիրուց կարող է բղխել, ուստի եւ Հասկանալի պէտք է լինի, թէ ինչու Տէրը կրօնի մէջ ամենից մեծ պատուէրը դէպի Աստուած ունեցած սէրն է Համարում:

Այսպէս դատելով՝ ինքնին Հասկանալի է, որ մեր Հասկացողութեամբ աղօթքի բոլորները մարդու կեանքի մէջ ամենից նուիրական ժամերն են, եւ ուրեմն Հայհոյութիւն է այն կարծիքը, թէ աղօթելը ժամանակի կորուստ է: Աղօթել եւ յոյսն Աստուծոյ վերայ դնել՝ չէ նշանակում ծուլանալ, փախչել լուրջ եւ մինչեւ իսկ ծանր աշխատանքից, ընդհակառակը՝ ճշմարիտ կրօնական անձը իւր ժամանակի

Բայց ինչ որ ասացինք Հեթանոսական քաղաքակրթութեան Համար, նոյնը աւելի Հաստատութեամբ կարող ենք ասել եւ քրիստոնէութեան Համար: Կ'անհետանար Հին քաղաքակրթութիւնը, եթէ քրիստոնէութիւնը չիւրացնէր եւ յետագայ սերունդներին չյանձնէր նորան: Քրիստոնէական առաքելութեան Հետ սկսւում է եւ եւրոպական ազգերի քաղաքակրթութիւնը, քրիստոնէութեան մուտքի Հետ սկսւում է շատ ազգերի գիրն ու գրականութիւնը: Շատ հեռու կը տանէր մեզ, եթէ մենք մանրամասնութեան վերայ կանգ առնէինք. կարճ այսքանս կ'ասենք, որ արդէ քաղաքակրթութիւնը զարգացել է ամբողջապէս՝ քրիստոնէական Հողի վերայ նոր տարրեր աւելացնելով կամ Հինը մշակելով եւ նոր՝ ազգերին տալով: Միջին դարու գիտութեան բոլոր մշակները բացառապէս եկեղեցականներ են: Եկեղեցական ճարտարապետութիւնը յաւիտենական փառքի կոթող է այդ արուեստի պատմութեան Համար: Նկարչութեան ոսկեդարը ծաղկել է Եկեղեցու մէջ, այնտեղ է զարգացել նաեւ երաժշտութիւնը իւր ճիւղերով:

Սորանով, իհարկէ, մենք չենք ուզում ասել, որ արդէ քաղաքակրթութիւնն ամբողջապէս քրիստոնէական է, եւ ոչ էլ ուզում ենք ասել, որ նա բացառապէս կրօնական պէտք է լինի: Ժամանակի ընթացքում զարգանում է քաղաքակրթութիւնը եւ անկախ դիրք ստանում: Դա բնական է եւ անհրաժեշտ, որովհետեւ որքան եւ նոքա արմատով միացած լինեն, տարբեր պահանջների են ծառայում: Բայց որքան Հարկաւոր է այդ անկախութիւնը, այնքան եւ անհրաժեշտ է այն ներդաշնակութիւնը, որով քաղաքակրթութեան Համար մի վսեմ եւ յաւիտենական նպատակ է որոշւում: Երբ խախտւում է քաղաքակրթութեան եւ կրօնի մէջ եղած ներդաշնակութիւնը, չորանում են կեանքի ամենահոտաւէտ ծաղիկները: Կրօնի թշնամի քաղաքակրթութիւնը մարդկութեան կեանք տալ չէ կարող, այլ Հետզհետէ Հէնց նորա բարոյական անկման օրօրանը կը դառնայ: Կրօնի անկումը ժողովրդի անկման ամենահաստատուն նշանն է: Այս է ապացուցանում մեզ քաղաքակրթութեան երկու մեծ ներկայացուցիչ ազգերի՝ յուճաջ եւ Հռովմայեցւոց պատմութիւնը:

Կրօնի Հիմքը մարդու Հնազանդութիւնն է Աստուծոյ կամքի առաջ, եւ այդ Հնազանդութիւնից միայն պէտք է փրկութիւն սպասել:

«Բայց միայն Աստուծոյ Հնազանդ լեր, անձն իմ, զի ի Նմանէ է ինձ փրկութիւն»:

ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԿԱՒԱԳ
«Արարատ», յուճիս, 1897

վերայ նայում է որպէս Աստուծոյ պարգեւի վերայ, որ պէտք է յօգուտ ընկերի գործադրուի, եւ որի համար մի օր հաշիւ պիտի պահանջուի իրենից: Մոյլը, աշխատանքից խուսափողը գործնականապէս նոյնպէս քրիստոնէութեան հակառակորդ է, ինչպէս անբարոյականը: Քրիստոնէութեան մէջ ծուլութիւնը մահացու մեղքերից մէկն է, իսկ կոչումն ու աշխատանքը՝ նուիրական, որ հաստատում է առաքեալի խօսքով. «Որ ոչ կամիցի գործել, եւ կերիցէ՛ մի» [Բ Թեսաղ. Գ 10]: Աղօթքի բոսորները կրօնական անձի համար թարմութեան, վերստին զօրանալու եւ կեանքի հոգեւոր պատերազմը սկսելու բոսորներ են:

Բ

Աղօթող եւ կրօնական անձի զօրութեան աղբիւրը նորա հաւատն է դէպի Աստուած, Որի գոյութեան ապացոյցների մասին խօսք լինել է կարող այստեղ: Մենք կամենում ենք կրօնի էութիւնն ու կրօնական լինելու երեւոյթը բացատրել, իսկ կրօնական մարդու համար ապացոյցներ, փիլիսոփայական-գիտնական տեսութիւններ կարեւոր չեն՝ Աստուծոյ գոյութիւնը հաստատելու համար: Նա զգում է արդէն, որ Աստուած իւր հոգու մէջ բնակութիւն է հաստատել, որ Բարձրալի աջը առաջնորդում է նորան կեանքի բոլոր գործողութիւնների ժամանակ: Նա կասկած չունի Աստուծոյ գոյութեան մասին, ուստի եւ անկարօտ է ապացոյցների դիմել՝ ճշմարտութեան մէջ համոզուելու համար: Կրօնի հիմքը մարդու դէպի Աստուած ունեցած կենդանի հաւատն է, բայց մի հաւատ, որ ցնորք, երեւակայութիւն է, այլ՝ նոյնպէս իրական, նոյնպէս շօշափելի, ինչպէս տեսանելի իրերը: Միայն հաւատի տեսողութեան եւ շօշափման պայմաններն ուրիշ են, քան իրական առարկաներինը: Կրօնական անձնաւորութիւնների վսեմ պատկերները, կրօնի բերած բարիքը, կեանքի բարեփոխութեան համար նորա պահանջը իրական ապացոյցներ են, թէ որոշ տեսակէտով կրօնը նոյնպէս բնական է եւ իրական, որքան եւ տիեզերքի մէջ նկատուած ֆիզիքական օրէնքը: Կրօնական անձնաւորութեան կեանքի աղբիւրը Աստուած է, այնտեղից է նա զօրութիւն եւ լոյս ստանում՝ կեանքի մէջ քաջութեամբ պատերազմելու. «Տէր լոյս իմ եւ կեանք իմ, ես յումմէ՞՞ երկեայց. Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞՞ դողացայց» [Սաղմ. ԻԶ 1]: Աւելի կտրուկ նոյն իմաստն արտայայտում է Պօղոս. «Եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ» [Հռոմ. Ը 32]: Կրօնական անձնաւորութիւնն այսպէս, իւր յոյսը Աստուծոյ վերայ դրած, քաջաբար ընթանում է կեանքի ամէն պայմանների մէջ: Իսկ յոյսը զօրութիւն է, յաջողութեան, ապագայի յառաջադիմութեան խարխիւր: Ով յոյս չունի իւր ապագայի համար, նա արդէն կորստեան

անդունդի վերայ է կանգնած: Քրիստոնեան անընդհատ առաջ է գնում, որովհետեւ իւր յոյսը դրած է անսպառ զօրութեան Աղբիւրի, այսինքն՝ Աստուծոյ վերայ: Այսպիսի զօրութիւն ձեռք բերելու միակ միջոցը Աստուծոյ նուիրուելն է, սեպհական կեանքի ոչնչացումը Աստուծոյ համար:

Մարդկային սովորական դատողութեամբ շատ տարօրինակ է այս երեւոյթը: Թոյլ, կամքից զուրկ ենք համարում այն անձնաւորութեան, որ ենթարկուում է ուրիշի կամքին: Բայց կրօնական անձը, որքան աւելի ենթարկուի Աստուծոյ կամքին, որքան աւելի ոչնչացնի իւր եւը՝ Աստուծոյ համար ապրելու նպատակով, նոյքան հօր է, նոյնքան մեծ կամքի եւ բարոյական զօրութեան տէր: Պօղոս առաքեալը կամքի զօրութեան մարմնացումն էր՝ անյողողո՞ղ ամէն դժուարութեան մէջ, աներկիւղ մահուան դէմ, կրակոտ, գործունեայ, մի խօսքով՝ Հերոսական մի անձնաւորութիւն, որ երեսուն տարի իւր կեանքը Աւետարանի քարոզութեան, իւր նման մարդկանց հոգեւոր փրկութեանը նուիրեց: Եւ այդպիսի մարդը «Կենդանի եմ այսուհետեւ ոչ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս» [Գաղատ. Բ 20] խօսքերն էր ասում իւր մասին:

Գ

Վերոյիշեալ նկատողութիւններից պէտք է պարզ լինի, որ կրօնական անձնաւորութիւն դառնալը դժուար, երկարատեւ կրթութեան, սկզբունքների հետեւողական գործադրութեան հետ կապուած մի երեւոյթ է: Կրօնական անձը իւր կեանքի վերայ մեծ լրջութեամբ է նայում: Աստուծոյ կողմից այս աշխարհում կարգուած մի տնտես է, որ իւր կոչման եւ պատրաստութեան համաձայն պիտի Հետամուտ լինի՝ շահեցնելու Աստուծոց ստացած քանքարը: Ամէն մարդու գործ է կրօնական, Աստուծոյ հոգեւոր գիտելու լինել այս գայթակղութիւններով լի աշխարհում, բայց ամէն մարդու բարձրագոյն ձգտումը պիտի լինի կրօնական լինել, եթէ կեանքին վսեմ բովանդակութիւն տալ է կամենում: Շատ քիչ են ճշմարիտ կրօնական անձնաւորութիւնները, ընտրեալներ միայն արժանի են այդ անուան, բայց այնքան մեծ է կրօնի ոյժը, որ եթէ մի քանի առաքեալներ ունի նա եւ փոքրինչ հաստատուած է ժողովրդի սրտում, հրաշքեր է կատարում: Մենք կը խնդրէինք լուրջ ուշադրութիւն դարձնել պատմական այն երեւոյթի վերայ, թէ ինչն է պատճառ, որ կրօնի հիմնադիրներին պաշտում, իսկ ամենատաղանդաւոր արուեստագէտներին, բանաստղծներին, գիտնականներին յարգում ենք միայն: Որովհետեւ կրօնը աւելի մեծ զօրու-

թիւն է, քան արուեստը, գիտութիւնը, բանաստեղծութիւնը: Կրօնը նորոգում է մեր ներքինը, սրբում է մեր հոգին, իսկ բանաստեղծութիւնն ու գիտութիւնը՝ միայն նպաստում: Ամենամեծ բանաստեղծներն իսկ իրենց մարդասիրական գաղափարներով միայն կրօնի պահանջներին լաւագոյն արձագանքներն են:

Յիրաւի, ի՞նչ է պահանջում մեզանից քրիստոնէութիւնը, եթէ ոչ մտքի եւ սրտի սրբութիւն, բարոյական կեանք, կարեկցութիւն դէպի թշուառը, սէր դէպի մեզ նման մարդը: Քրիստոնէական կրօնը պահանջում է մեզանից, որ մենք անառակ չլինենք, այլ՝ արդար վաստակով ապրողներ, որ մենք ազնիւ եւ սիրոյ գաղափարներով առաջնորդուինք մեր բոլոր գործողութիւնների ժամանակ: Քրիստոնէութիւնը պահանջում է, որ եթէ վաճառական ենք, հինգ կոպեկի համար մեր հոգին չծախենք, եթէ՝ արհեստաւոր, մեզ յանձնած գործը բարեխղճութեամբ կատարենք, եթէ՝ լրագրում գրող, մեր գրիչը չվաճառենք՝ ուրիշներին զրպարտելու, ժողովրդին ստութիւններով մոլորեցնելու եւ մեր եսական շահերի համար, այլ գործադրենք արդարութեան, բարոյական կրթութեան համար: Քրիստոնէութիւնը պահանջում է, որ յարգենք ուրիշի անձնաւորութիւնը, ուրիշի հետ այնպէս վարուինք, ինչպէս կը կամենայինք, որ ուրիշները մեզ հետ վարուին: «Մտան ի պտղոյ իւրմէ՛ ճանաչի»: Քրիստոնէութեան այս պահանջներից եւ նորան հետեւող անձանց կենդանի օրինակներից էլ պէտք է եզրակացնենք, որ կրօնը շատ ազնիւ եւ կարեւոր բան է մարդկութեան բարոյական յառաջադիմութեան համար: Ուրեմն, չարաչար սխալում են այն մարդիկ, որոնք կրօնը անպէտք, հնացած են համարում:

Դ

Ազգերի պատմութեան մէջ կարեւորն ու յաւիտենականը նոցա հոգեւոր, քաղաքակրթական կեանքն է, իսկ այն քաղաքակրթութիւնը, որ կրօնական-բարոյական հիմունքների վերայ չէ ընթանում, հիւանդոտ է եւ վնասակար: Անբարոյական սկզբունքներով ընթացող քաղաքակրթութիւնը ոչ միայն օգտակար լինել չէ կարող այլեւ իբրեւ որդ կրծում է ժողովրդի գոյութեան արմատը: Անբարոյական սկզբունքներով առաջնորդուող քաղաքակրթութեան հետեւանքը մահն է: Պատմութիւնը ցոյց է տալիս, թէ ազգերի կեանքի համար ոչ մի բան այնպէս վտանգաւոր չէ, ինչպէս անհաւատութիւնն ու անբարոյականութիւնը: Սովն ու սուրը, հալածանքը միայն ժամանակաւոր վտանգներ են, այնինչ բարոյական անկումը ժողովրդի մա-

հուան նախանշանն է: Անհաւատութիւն եւ անբարոյականութիւն մենք իրաւամբ կապում ենք միմեանց հետ, որովհետեւ ամենասերտ կերպով շողկապուած են նոքա միմեանց հետ: Բարոյական սկզբունքները առանց կրօնի գուցէ անհատների համար կեանքի եւ գործողութեան առաջնորդ լինին, բայց ամբողջ ժողովուրդը անկարելի է առաջնորդել բարոյական սկզբունքներով առանց կենդանի կրօնի: Յունաց եւ հռովմայեցոց պատմութիւնը կրօնի անկման շրջաններում երբեմն բարոյական անձնաւորութիւնների պատկերներ է տալիս, որոնք իրենց փիլիսոփայական սկզբունքների համեմատ էլ կեանք էին վարում, բայց ժողովրդի մեծամասնութիւնը անարգելք դէպի անբարոյականութեան անդունդն էր գլորում: Կրօնն է բարոյականութեան աղբիւրը գոնէ քրիստոնէութեան մէջ: Ուրեմն, քրիստոնեայ, ուրիշ խօսքով՝ կրօնական պիտի դառնանք՝ մեր անհատական, ընտանեկան եւ ամբողջ ժողովրդական կեանքը բարոյական եւ ազնիւ դարձնելու համար: Ապա թէ ոչ, ի՞նչ արժէք ունի Եկեղեցու այն սպասաւորը, որ իւր կարողութեան չափ հետամուտ չէ առաքելական պաշտօն կատարելու: Ի՞նչ արժէք ունի պետական այն պաշտօնեան, որ արդարութեան կշիռը ձեռքին բռնած չունի: Ի՞նչ արժէք ունի այն արուեստը, որ միայն զգայական, աղտեղի խորհուրդներ ծնեցնելու միջոց է: Ի՞նչ արժէք ունի այն լրագրութիւնը, որ ժողովրդի բարոյական կրթութեան գործին ծառայելու տեղ անարգ միջոցներով մոլորեցնում է իւր ընթերցողներին, սովորեցնում է նրանց ստել, անուանարկել՝ կուսակցական նպատակներին հասնելու կամ անձնական հաշիւներ մաքրելու համար: Ի՞նչ արժէք ունի այն աշխատանքը, որը նիւթապէս կամ բարոյապէս մեր եւ մեզ շրջապատողների օգնութեան եւ կրթութեան միջոց չպիտի լինի, այլ՝ զեղխութեան, անառակութեան եւ ուրիշների կեղեքման միջոց: Կամենո՞ւմ ենք մեր կեանքին վսեմ բովանդակութիւն տալ, պէտք է ձգտենք վերածնուել կրօնապէս, որպէսզի մեր գործն ու շարժումն էլ, որպէս հոգու պտուղ, բարեփոխուին դէպի ազնիւն ու բարին:

Ե

Սակայն ո՞րն է կրօնապէս վերածնուելու եւ բարոյական դառնալու գաղտնիքը: Նախկին պրակների մէջ արդէն ակնարկեցինք մի քանի անգամ. Աստուծոյ կատարեալ հնազանդութեան ճանապարհն է այդ, ինչպէս գործնականապէս ցոյց է տալիս մեր կրօնական կատարելատիպ Յիսուս Քրիստոսի պատկերը: Կարելի՞ է լոյսը նկարագրել, նկարել գրչով կամ վրձինով: Բայց Նորա անձնաւորութիւնը

աւելի անարատ էր, քան լոյսը: Նորա կեանքը աշխատանքի եւ անհուն զոհաբերութեան մի շղթայ է, սուրբ եւ անարատ սիրոյ մարմնացում, որի կատարեալ պատկերը Նորա վերջին օրերի պատմութիւնն է մեզ տալիս: Ինչո՞վ բացատրել այս իրողութիւնը, որ միեւնոյն ժամանակ մի սքանչելի խորհուրդ էր մարդկային պատմութեան մէջ, մի իմաստուն եւ անհասանելի կանխագիտութեան գործ պատմութեան Ղեկավարի կողմից, որ Աստուած է: Այս խորհուրդն ըմբռնելու ցուցումներ է տալիս մեզ Տիրոջ կեանքի վերջին օրերի նկարագրութիւնը՝ Գեթսեմանի պարտիզի տեսարանը, որ միեւնոյն ժամանակ ամենամեծ զոհաբերութեան, խաչի պատմութեան նախաբանն է: Մեր Փրկիչը՝ կրօնական անձնաւորութեան կատարելատիպը, այստեղ կենդանի կերպով կանգնած է մեր առաջ եւ բարոյական կատարելութեան, զոհաբերութեան ճանապարհ է ցոյց տալիս: «Հա՛յր, եթէ կամիս, անցո՛ղ զբաժակս զայս յինէն, բայց ոչ իմ կամք, այլ Քոյդ լիցին»: Հակիրճ, բայց սրտառուչ աղօթք, որ Աստուծոյ կամքի հպատակութեան մի սրբազան ուխտ էր: Յիսուսի կեանքի, գործունէութեան ամբողջ էութիւնը կարելի է այդ աղօթքի մէջ ամփոփել: Նա եկել էր՝ Իւր Հօր կամքը կատարելու եւ դորանով հաստատելու, թէ կատարելութեան իսկական, արքայական պողոտան Աստուծոյ հնազանդութեան ճանապարհն է:

Թիւրիմացութեան տեղիք չտալու համար հարկ ենք համարում մեր յօդուածը կնքելուց առաջ մի երկու խօսք էլ աւելացնել: Սրբութեան այն պահանջը, որ կրօնը դնում է մեր առաջ, որ Քրիստոս կենդանի կերպով, Իւր անձի օրինակով քարոզում է մեզ, մարդկային տկար հոգու համար բարձր է եւ մինչեւ իսկ անհասանելի: Մարդկային բնութիւնը թոյլ է եւ մեղանչական, իսկ Քրիստոսի պատկերը սրբութեան եւ անհուն սիրոյ մարմնացումն էր: Մենք երբէք Նորան հասնել չենք կարող, սրբապղծութիւն է մինչեւ իսկ մի ըստ է մտածել այդ մասին: Բայց չպէտք է մոռանանք, որ նոյն Փրկիչի ձայնը՝ «Եկա՛յք առ Իս», կոչում է մեզ՝ վաստակեալներին եւ ծանրաբեռնեալներին: Լուրջ է եւ ծանր քրիստոնեայի կեանքը, պատերազմների մի շղթայ ներքին եւ արտաքին աշխարհի դէմ, բայց մեծ է նոյնպէս նորա յոյսը, թէ երկնային զօրութեամբ մեղքի կապանքները վերջի-վերջոյ կը փշուրին նորա առաջ: Կրօնական մարդու հոգեբանութիւնը Հասկանալու համար մեր ընթերցողներին առաջարկում ենք ուշադրութեամբ կարդալ Հռովմայեցւոց է 13 Համարից մինչեւ գլխի վերջը: Ծշմարիտ կրօնական մարդը Պօղոսի նման զգում է մեղքի մեծ զօրութիւնը, մարդկային կամքի թուլութիւնը մեղքի առաջ, բայց զգում է նոյնպէս, որ միայն Բարձրեալի աջը նորան փրկել կարող է հօր մեղքի

որոգայթներից:

«Այր մի տառապեալ եմ ես, ո՞վ կարէ ապրեցուցանել զիս ի մարմնոյ աստի մահու, այլ՝ շնորհքն Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ» խօսքերը կրօնական անձի հոգու վիճակն են պարզում:

ԳԱՐԵԳԻՆ Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ



ԱՌՕՐԵԱՅ ՀԱՑԻ ԽՆԴԻՐԸ

«Ջրաց մեր համապագորդ տո՛ր մեզ այսօր»:

Տէրունական աղօթքը՝ «Հայր մերը», իւր էական իմաստով գրեթէ բովանդակում է աւետարանական ամբողջ քարոզութիւնը: Խնդրուածքի կամ աղօթքի ձեւով պարզուած է մարդու եւ Աստուծոյ յարաբերութեան խնդիրը, որ կրօնի էութիւնն է՝ այնտեղից բղխած ընկերական պարտքի հետ: Չորրորդ հայցուածքն է եւ միակը, որ կապ ունի մեր նիւթական կեանքի առօրեայ հացի հետ. առաջին երեքը եւ յետագաները զուտ կրօնական են, Հոգեւոր, մեր ներքին աշխարհի հետ կապուած, որ խնդրում ենք Աստուծոյ սրբութեան, կամքի եւ թագաւորութեան աշխարհը լինի այն, Հայրական սիրոյ եւ որդիական Հնազանդութեան իրացումը մեր մէջ:

Կեանքի երկու կարեւորագոյն խնդիրներ դրուած են այստեղ իրար հանդէպ: Առանց հացի ապրել կարող չենք, նա մեր երկրաւոր կեանքի կարեւորագոյն միջոցն է: Հացի խնդիրը արտաքուստ ամենից շօշափելի, ամենին հասկանալի միտքն է. քաղաքակրթութիւն, գիտութիւն, արուեստ, գաղափար աւելի պակաս հասկանալի են, թուում է, աւելի պակաս անհրաժեշտ, քան հացի խնդիրը: Այդ ասել կարող ենք ոչ միայն հասարակ, անուսում մարդու համար, այլեւ բարձր գիտութեամբ, տեխնիկայով օժտուած մտքի եւ արուեստի ոլորտներում շնչող մարդկանց համար:

Բայց քիչ է ասել, թէ հացի խնդիրը ամենից հասկանալին է. շատերի համար եւ շատերի հասկացողութեամբ նա կեանքի առանցքն է, անհատի, կազմակերպութիւնների, պետութեան էութեան, գործունէութեան առանցքը: Պէտք է զինուիլ գիտութեան, տեխնիկայի, մեքենական արտադրութեան բոլոր տուեալներով, որպէսզի հողից կրկնակի, եռակի աւելի արդիւնք ստացուի՝ աւելի քիչ աշխատանք եւ ժամանակ կորցնելով: Պէտք է արհեստաւորի ձեռքից առնել գործը եւ յանձնել մեքենային, որպէսզի արտադրութիւնը լինի մէկի փոխարէն հազար, եւ այսպէս արդիւնաբերութեան բոլոր ճիւղերի մէջ մարդկային ուժի փոխարէն պիտի գործադրուի էլեկտրական ոյժը, մարդկային ձեռքի կամ անասունների փոխարէն՝ բարձրագոյն կատարելութեան հասած մեքենան: Որովհետեւ նիւթն է շարժիչ ոյժը, ուստի եւ մեր ուշադրութեան կեդրոնը արտադրութեան եւ նորա հետ կապուած ձեռնարկութիւնների մէջ պիտի լինի: Ոչ միայն հաց պիտի ունենանք,

այլեւ հարստութիւն, որի հետ է կապուած, ասում են, եւ քաղաքակրթութիւն, գիտութեան եւ արուեստի, յառաջադիմութեան ընթացքը: Բայց միայն արտադրութիւնն էլ բաւական չէ. պէտք է շուկայ, վաճառելու հնարաւորութիւն, որպէսզի ոսկին գումարուի երկրի մէջ, աւելի եւ աւելի ընդարձակուին հարստութիւն բերող ձեռնարկութիւնները: Պէտք է ունենալ գաղութներ, նրանց հում նիւթերը, հանքային եւ այլ բազմատեսակ հարստութիւնները՝ օգտագործել կարողանալու սեպհական ազգի եւ պետութեան ճոխութեան, նիւթականի բարգաւաճման համար: Եթէ օտար ազգերն ո՛ւ երկիրները հեշտութեամբ չեն ենթարկուիլ մեր կամքին, մեր ձգտումներին, զէնքի զօրութեամբ նրանց կատարել կը տանք մեր ցանկութիւնը: Այստեղից են ծագում ազգերի ընդհարումները, մրցութիւններն ու պատերազմները, արիւնահեղութիւնները: Կեանքը կուի է. ո՞յժ ունիս, զէնք ունիս, նիւթական հարստութիւն ունի՞ս, պէտք է գործադրել աւելին ստանալու...

* * *

Անպայման որոշ սահման ճշմարիտ է այս մտածողութիւնը. ուր չկայ մի կտոր հաց, ուր աղքատութեան երեսից մարմինը մերկ է, մարդիկ՝ կեղտոտ, խոնաւ եւ մութ նկուղներում փակուած, վատառողջ պայմաններում իրար վերայ թափուած, անմտութիւն է այնտեղ բարձր քաղաքակրթութեան, Հոգեւոր կեանքի, արուեստի, գիտութեան ունեւածացման մասին ճառել: Հաւաքեցէ՛ք մարդկանց բարձրագոյն, ցուրտ, օղազուրկ նկուղների մէջ եւ նուազեցէ՛ք նրանց Բեթհեմի իններորդ սիմֆոնիան, ցուցադրեցէ՛ք նրանց դասական հանճարեղ նկարիչների մեծագոյն գործերը, տուէ՛ք Շեքսպիրի «Համլետը», Գեթթէի «Ճառուտը», նշանաւորագոյն բանաստեղծների ժողովածուները՝ նոյնիսկ ամենալաւ թղթի վերայ տպուած, ոսկեզօծ կազմերով, եւ առաջարկեցէ՛ք նրանց զբաղուել մարդկային հոգին յուզող խորը խնդիրներով... Գոհ եղէ՛ք, եթէ ոսկեկազմ գրքերը ձեր ճակատին չխփեն: Քաղաքակրթութիւնը, Հոգեւոր կեանքի եւ ստեղծագործութեան թռիչքը անպայման կապուած են որոշ չափով նիւթական պայմանների հետ: Ով մի կտոր հաց չունի, քաղցած է, մերկութիւնից ցրտահար, Հոգեւոր բարձր ստեղծագործութիւնների եւ վայելքների մասին չի մտածում եւ ոչ էլ կը հասկանայ նրանց արժէքը փորը քաղցած ժամանակ:

Բայց ճշմարիտ է նաև, որ մարդկութեան երջանկութիւնը միայն հացից, հարստութիւնից կախուած չէ: Քի՞չ են հարուստ եւ դժբախտ մարդիկ: Կան եւ հարստութեան թշուառ զոհեր: Որչա՛փ բացասական երեւոյթներ կան կեանքի մէջ հարուստ լինելու հետեւանքով: Հարստութիւնը յաճախ հնարաւորութիւն է ստեղծում մարդկանց սայթաքման մինչեւ ոճրագործութիւն. եւ այդ՝ ոչ միայն անհատական կեանքի մէջ, այլեւ մեծ միութիւնների, կազմակերպութիւնների, նոյնիսկ պետութիւնների մէջ: Պատմութիւնը մեզ անհամար փաստեր է տալիս, որ սոհամեր եւ պետութիւններ, ընկնելով ագահութեան, ընչաքաղցութեան մէջ, որ տանում է դէպի հարստահարութիւն, անխղճութիւն, դրանց հետեւանքով կործանւում են բարոյապէս: Սողոմ-գոմորները, նինուէներն ու բաբելոնները միշտ դէպի կորուստ են գնում, երբ յղփացած տարւում են միայն նիւթական կեանքի, արտաքին վայելքի, գեղխութեան եւ շուայտութեան հոսանքներով: Հին Հռոմը աշխարհի հարստութեան կեդրոնն էր, բայց եւ գեղխութեան, անբարոյականութեան, մտքի եւ կեանքի ալլասերման կեդրոնը՝ հաստատուած ազգերի ստրկացման եւ շահագործման իրականութեան վերայ: Հռովմայացի պատրիկը, ազնուականն ու քաղաքացին այլեւս աշխատանքը ստրկին վայել գործ էր համարում, եւ ինքը ստեղծուած՝ նրանց ձեռքով վաստակած հարստութիւնը վայելելու: Ապա ուրեմն, հարստութիւնն ինքնըստինքեան բաւական չէ՝ մարդը, մարդկութիւնը երջանիկ եւ բախտաւոր դարձնելու: Որակն ու նպատակն է, որ ծայրայեղութիւնների մէջ պահպանում է չափն ու կշիռը, կեանքի դիւրութիւնների հետ՝ բարոյական զգացումը:

Յիսուսի աւետարանական քարոզութեան մէջ քաղաքա-տնտեսագիտական խնդիրներ չկան արծարծուած, որովհետեւ նա չէր եկել՝ նոր ուղիներ քարոզելու գիտութեան, արդիւնաբերութեան, տեխնիկայի կամ մեքենագիտութեան մասին: Նորա ժամանակ այդպիսի խնդիրներ էլ չկային, եւ պէտք չկար: Բայց եթէ այժմ գար, իւր յայտնութիւնից երկու հազար տարի յետոյ, Նորա Աւետարանը ըստ էութեան շատ տարբեր չէր լինի մեր հին Աւետարանից բարոյական եւ հոգեւոր բովանդակութեամբ: Որովհետեւ Նորա փրկչական կոչումը, դորա հետ եւ կրօնի էութիւնը, տնտեսա-քաղաքական հարցերի լուծումը չէր, այլ՝ մարդկային հոգու փրկութիւնը, վերածնութիւնը, կեանքի եւ բարոյական կատարելութեան ուղին եւ նպատակը: «Զի՞նչ օգուտ է մարդոյ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի եւ զանձն իւր տուծեսցէ»՝ ի՞նչ օգուտ է մարդուն, եթէ աշխարհի տէրը լինի եւ իւր անձը

կորցնէ: Նա եկել էր՝ մարդկանց ուսուցանելու, ցոյց տալու կարեւորագոյն գանձի՝ անգին մարգարտի արժէքը եւ այն գտնելու ճանապարհը: Մարդկային անձնաւորութիւնն է այդ թանկագին գանձը՝ հոգին, մեր ներքին իմացական աշխարհը, մեր էութիւնը: Առանց դորան ի՞նչ է մեր «մարմնական» կեանքը, մեր հարստութիւնն ու ինչքը. դատարկ կարաս կամ աւելի ճիշտ՝ ծակ կարաս: Մեր մարմինը անօթ է, բայց պէտք է նա լինի ազնիւ եւ անուշահոտ հեղուկով լի: Հացի խնդիրը սուրբ է, աղօթքի մաս կազմող մաքրութեամբ, բայց ոչ ուրիշների արեան գնով: «Չամենայն, զոր ինչ միանգամ կամիջիք, թէ արասցեն ձեզ մարդիկ, եւ դո՛ւք արարէք նոցա»՝ ինչ որ կամենում էք, որ մարդիկ ձեզ անեն, արէք եւ դո՛ւք նրանց. ահա՛ անհատի, հասարակութիւնների եւ ազգերի յարաբերութեան ոսկի կանոնը: Ապրի՛ր, թո՛ղ ուրիշներն էլ ապրին: Չե՞ս կամենում, որ սոված մնաս դու, կինդ, զաւակներդ, մի՛ ստեղծիր ուրիշի համար այդպիսի վիճակ: Չե՞ս կամենում կեղտի մէջ կորչել աղքատութեան երեսից, ցնցոտիներով տեսնել կնոջդ, երեխաներիդ, մի՛ աշխատիր այդպիսի դրութիւն ստեղծել ուրիշների համար: Ո՛հ, ինչպէս կորստաբեր է լինում երբեմն հաց ձեռք բերելու սխալ ճանապարհը. հազարաւոր կեանքերի կորուստ, նիւթական, մշակութային, բարձր ստեղծագործութիւնների եւ արժէքների ոչնչացում, ինչպէս հացի անուկով մոլուած կեղեքումներն են կամ պատերազմները: Յիշում ենք Բողլերի մի փոքրիկ պատմուածքը. երկու երեխաներ նստած էին իրար կողքի. նոցանից մէկը կարկանդակի մի կտոր ունէր ձեռքին, միւսը կամենում է յափշտակել նորա ձեռքից, եւ ահա կարկանդակը անցնում է ձեռքից ձեռք, բայց շարունակ փշրուելով եւ գետին թափելով: Երբ կռիւր վերջացաւ, փոշիացած եւ գետին էր թափած կարկանդակը, որի համար սկսուած էր կռիւր:

Ամենօրեայ հացի իրաւունքը սուրբ է կրօնական իմաստով. ինչպէս Աստուծոյ անուան սրբութեան, Աստուծոյ արքայութեան եւ կամքի հաստատութեան համար ենք աղօթում մեր մէջ, մեզ համար, նոյնպէս եւ՝ մեր անհրաժեշտ կարիքների համար, որ հանապազօրեայ հաց է կոչուած այստեղ: Բայց նա կեանքի բովանդակութիւն եւ նպատակ չէ ինքնըստինքեան, այլ միջոց՝ աւելի բարձրագոյն նպատակի, բարձրագոյն բարիքի հասնելու: «Չենք ապրում ուտելու համար»: Հացը պէտք է, անհրաժեշտ է, բայց «ոչ միայն հացիւ կեցցէ մարդ»: Տնտեսի առակն էլ Աւետարանի մէջ [Ղուկ. ԺԶ] ցոյց

«Տէ՛ր, զի բացցին աչք մեր» [Մատթ. Ի 33]:

Ա

Հաւատացեա՛լ ժողովուրդ:

Մեր Տէրը Երիբովից Երուսաղէմ էր գնում՝ Իւր վերջին քարոզութիւններն ու փրկչական տնօրինութիւնները կատարելու: Ծանապարհին երկու կոյրեր էին նստած՝ անցորդներից ողորմութիւն խնդրելու: Լսելով, թէ նոր Մարգարէն՝ նազովրեցի Յիսուսը, Իւր աշակերտների եւ ժողովրդի բազմութեան հետ անցնում է Երուսաղէմ գնալու՝ բարձր ձայնով աղաղակեցին. «Ողորմեաց մեզ, Յիսուս, Որդի՛ Դաւթի»: Ժողովուրդը սաստում էր նրանց, որ լռեն՝ մտածելով, թէ անյարմար էր, որ այդպիսի երթի ժամանակ Յիսուս կանգ առնէր եւ նրանց ողորմութիւն տար: Բայց նրանք առաւել եւս աղաղակում եւ կրկնում էին իրենց խնդիրքը: Յիսուսի ուշադրութիւնից չվրիպեցին նրանց աղաղակներն ու գուցէեւ շարժումները: Յիսուս կանգ առաւ, կանչեց Իւր մօտ եւ հարցրեց. «Ի՞նչ էք կամենում»: Նոքա պատասխանեցին. «Տէ՛ր, զի բացցին աչք մեր»՝ Տէ՛ր, թող բացուին մեր աչքերը:

Հասկանալի է կոյրերի փութկոտութիւնը՝ անպատճառ լսելի լինել կամ արժանանալ Տիրոջ ուշադրութեան: Խեղճ մարդիկը ի ծնէ կոյր էին, զրկուած լոյսից եւ նորա հետ կապուած գեղեցկութիւններից եւ վայելքից: Լսել էին, որ Յիսուս բժշկութիւններ եւ հրաշքներ է կատարում, իրենց էլ կարող էր բժշկել եւ իրենց անբախտութեան վերջակէտ դնել: Նոքա չէին սխալուել. Յիսուս կարեկցութեամբ մօտեցաւ նրանց եւ բժշկեց: Նոքա սկսան տեսնել եւ գնացին Նորա յետեւից:

Սիրելի՛ք, Աստուած գեղեցիկ է ստեղծել երկինքն ու երկիրը, Համայն տիեզերքն ու բնութիւնը. դաշտերի դալարագեղ կանաչութիւնը՝ երփներանգ ծաղիկներով զարդարուած, սառնորակ եւ վճիտ աղբիւրները՝ իրենց ջրերից կազմուած կարկաչուն վտակներով, լեռնային գետակները՝ իրենց աշխոյժ եւ երբեմն յախուռն յարձակմամբ ընթացքն արգիլող ժայռերի դէմ, Հովիտների եւ դաշտերի միջով հեղասահ գետերը՝ իրենց շուրջը կեանք ու կենդանութիւն տարածող այգիներով, պարտէզներով եւ մշակուած դաշտերով, Հովից ծփացող եւ ալեծածան, կանաչագեղ կամ ոսկեճաճանչ արտերը, բարձրաբերձ

է տալիս, որ նիւթական Հարստութիւնը միջոց է միայն՝ աւելի բարձր բարիքի հասնելու համար: Այսպէս էլ պէտք է լինի ոչ միայն անհատների, այլեւ Հաստատութիւնների եւ պետութիւնների համար: Ամէնքս ժամանակաւոր տնտեսներ ենք մեր երկրաւոր կեանքի ընթացքում՝ Հարստութեամբ, գրչով, խօսքով, ամէն տեսակ ունակութիւններով եւ գործերով անցաւորից, նիւթականից յաւիտենականի ու հոգեւորի համար աշխատելու՝ լինի այն անհատական, թէ ազգային եւ Համամարդկային արժէքների տեսակէտով: «Արարէ՛ք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան». մամոնան անհրաժեշտ անիրաւութիւն է, որից բարեկամութիւն եւ բարիք պիտի ստեղծուի:

Խնդրի՛ր քո հացը եւ Հաւատով ու սրբութեամբ մշակի՛ր նորան ձեռք բերելու ուղիները: Թերահաւատ, չգիտե՞ս, թէ երկնաւոր Հայր ունիս դու երկնքում. Իւր որդուն մի՞թէ՛ նա ձկան տեղ օձ, հացի տեղ քար կը տայ:

Ապա ուրեմն, «խնդրեցէ՛ք նախ զարքայութիւնն Աստուծոյ, եւ այդ ամենայն յաւելցի ձեզ»:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
«Հայաստանեայց Եկեղեցի», Առյւծբեր, 1939



լեռներն ու ձորերը՝ սաղարթախիտ անտառներով ծածկուած, հոյլը բազմերանգ թռչունների, հարստութիւնը կենդանական աշխարհի... ո՞ր մէկը յիշեմ: Պակա՞ս գեղեցիկ է խորհրդաւոր երկինքը՝ իւր ջինջ եւ մաքուր կապուտակութեամբ, բիւրաւոր աստղերով, հեզասահ լուսնի ընթացքով: Գեղեցիկ է ախարհը, բայց ի՞նչ են նորա բոլոր գեղեցկութիւնները կոյր մարդու համար:

Բ

Մեծ գրկանք է, անշուշտ, կոյր լինել՝ գրկուած նիւթական լոյսից, բայց որչա՞փ եւս առաւել գրկանք է հոգեւոր կուրուութիւնը, գրկանքը լոյսից: Գեղեցիկ է արտաքին աշխարհը, բայց ոչ պակաս գեղեցիկ՝ մեր ներքին աշխարհը, որ պէտք է լուսաւորուի իմացական արեգակից եկած ճառագայթներով՝ իւր գեղեցկութիւնները երեւան բերելու համար: Այսօր կամենում ենք խօսել այդ «իմանալի» լոյսի մասին, որ փարատում է հոգու վերայ իջած մէգն ու խաւարը, երեւան հանում նորա աննման գեղեցկութիւնները:

Մարդկային հոգու բոլոր պէսպիսութիւնները, իբրեւ արդիւնք նորա մտքի, զգացմունքի, կամքի, երեւակայութեան, մի խօսքով՝ շինարարական եւ ստեղծագործական կեանքի գումարն ու արդիւնքը, կարելի է երեք բառի մէջ ամփոփել՝ գիտութիւն, արուեստ եւ կրօն: Սրանք իմացական լոյսի տարբեր երեւոյթներն ու ձեւակերպութիւններն են: Մեր նպատակը չէ գիտութեան եւ արուեստի բերած մեծ-մեծ բարիքների մասին ճառել. նրանց յիշատակութիւնն այստեղ միայն մտքերի փոխանցման եւ պարզաբանութեան մի կամուրջ է՝ մեր իսկական ասելիքի շրջանն անցնելու:

Անշուշտ, գիտութիւնը մեծ ոյժ է: Նա ընդարձակում է մարդկային ծանօթութիւնները, ընդլայնում է եւ խորացնում նորա գիտութիւնը, լուսաբանում է բնութեան երեւոյթները, թափանցում նորա գաղտնիքների մէջ եւ, տիրապետելով նորա գաղտնիքներին, օգտագործում նորա ամենաստեղծ ուժերը մարդկային կեանքի դիւրութիւնների եւ բարօրութեան համար: Շոգեկառքը, շոգեմալը, օդանաւը, էլեկտրականութիւնը, հեռագիրը, հեռախօսը գիտութեան ստեղծագործութիւններն են: Փա՛ռք, պատի՛ւ գիտութեան վաստակաւորներին. նրանք մարդկութեան բարեբարներն են եւ արժանի մեր խորին երախտագիտութեան:

Նոյնը կարող ենք ասել արուեստների եւ արուեստագէտների համար, ճարտարապետութեան, արձանագործութեան, նկարչութեան եւ երաժշտութեան մասին: Արուեստագէտ ճարտարապետը կարո-

ղանում է նիւթին կեանք տալ. քարը, կիրը, փայտը եւ այլ նիւթեր գործադրում է՝ հրաշալի տաճար կանգնելու, որ իւր համաչափութեամբ, գծերի եւ ձեւերի ներդաշնակութեամբ եւ ազնուութեամբ, դէպի վեր սլացող սիւներով, կամարներով, դէպի երկինք ուղղուած գմբէթով հիացմունքի եւ յափշտակութեան տրամադրութիւն է ստեղծում՝ հոգիդ էլ վերացնելով դէպի աստուածային բարձունքները:

Նկարիչը, արձանագործը, երաժիշտը՝ ամէն մէկը իւր կերպն ունի՝ իրեն տրամադրելի նիւթը, գործիքը որպէս մարդկային հոգին բարձրացնող միջոց դարձնելու, եթէ երկնքից նրան տաղանդ եւ հանճար է շնորհուած: Միքէլ Անջելոն մարմարիտնի կտորից կարողացել է ստեղծել Մեդիչիների դամբարանի «Գիշերը» կնոջ Ֆիգուրով, Միքստինեան մատուռի որմնանկարչութեան մէջ ողբացող Երեմիան: Թաֆայէլը կնոջ արտաքին գեղեցկութիւնը ոգիացրել է եւ դարձրել սուրբ, աստուածային գեղեցկութիւն: Երաժիշտները բնութեան երեւոյթները, ծփանքը ջրի, գեփիւռը հովի, մարդկային հոգու ելեւէջները, վիշտն ու տառապանքը, ուրախութիւնը կարողացել են մարմնաւորել երգի կամ գործիքաւոր երաժշտութեան մեծ ստեղծագործութիւնների մէջ: Չենք խօսում բանաստեղծութեան մասին, որ ամենից տարածուածն է, հասկանալի համեմատաբար, բայց եւ թովիչը մարդկային հոգու: Այո՛, արուեստն էլ իւր հրաշալիքներն ունի՝ հիացման արժանի:

Գ

Բայց ո՞չ գիտութիւնը եւ ո՞չ նոյնիսկ արուեստը բաւարարել կարող են եւ լցնել մի բաց մարդկային հոգու մէջ, որ նորա տենչն է, ծարաւը դէպի կեանքի յաւիտենական խորհուրդը, դէպի յաւիտենական անծանօթը, անտեսանելին, ելակէտը կեանքի: Մտածող, զգացող, որոնող հոգին հարց է տալիս. «Ինչո՞ւ եմ ապրում, ո՞ւր եմ գնում ես, ի՞նչ է իմ կեանքի էութիւնն ու նպատակը», հարցեր, որոնք յուզում, փոթորկում են հոգին, բայց որոնց պատասխանը ո՞չ գիտութիւնը ունի եւ ո՞չ արուեստը: Որովհետեւ գոյութեան իմաստն ու նպատակը միայն գիտութեամբ եւ արուեստով չեն լուսաբանուում. կայ ներքին արժէքների եւ իրողութիւնների մի ամբողջ աշխարհ, որ դուրս է նրանց շրջագծից, թէեւ շօշափում են իրար շատ գծերով: Գիտութեան պիտի կցուի կրօնական-բարոյական աշխարհների եւ ապրումների իրականութիւնը, որ առարկայական չէ եւ ոչ շօշափելի, բայց նոքա գոյութիւն ունին մեր ներքին աշխարհում՝ ամենակարեւոր չափով որակեալ կեանքի ձեւակերպութեան եւ յաւիտենական յարատեւութեան ձգտումի բաւարարութիւն ստանալու համար:

Մենք զգում ենք մեր ներքին աշխարհում մի հակոտնեայ զգացում, ձգտում. մի կողմից կամենում ենք ապրել, վայելել կեանքը, եսական եւ անձնական, շահագիտական հակումների բաւարարութիւն տալ, մեր հաճոյքներին եւ ցանկութիւններին՝ անարգելք ընթացք, բայց դորա դէմ գլուխ է բարձրացնում եսականից աւելի բարձր, աւելի վսեմ մի զգացում՝ մեր պայմանական անձից դուրս Անպայմանի կենդանի գոյութիւնը մեր հոգու մէջ, որին ենթարկուելու, Հնազանդելու զգացումն ու ապրումը ոչ միայն չի ստորացնում մեր եսը, այլեւ սրբում է, բարձրացնում, ազնուացնում նորան: Մենք զգում ենք մեր ներսը մի արդար դատաւոր, որ ամենայն անչառութեամբ իւր խօսքն է ասում մեր արարքների եւ ընթացքի մասին. թէ ի՞նչ է բարին, եւ թէ ի՞նչ՝ չարը, ո՞րն է եսականը, անձնականը, ո՞րը՝ նուիրումը, զոհողութիւնը, գութը, եղբայրասիրութիւնը, այսինքն՝ բարոյական խնդիրները իրենց խորքում:

Անշուշտ, միտքը եւս իւր որոշ թելադրութիւնները կարող է անել այս խնդրում այսպէս կոչուած փիլիսոփայական բարոյագիտութեամբ, արուեստն էլ կարող է որոշ տրամադրութիւն ստեղծել, բայց նրանք մեր սիրտը Աստուծոյ բնակարան դարձնել չեն կարող: Այդ կրօնի սահմանն է, հաւատոյ շրջանն է, հոգեկան այն վիճակը, որ, ըստ առաքեալի, սահմանել կարող ենք «հաւատք սիրով յաջողեալք», որ մարդկային կեանքը դարձնում է բարոյապէս գեղեցիկ, լուսաւոր, երջանիկ, օգտակար եւ հաճելի իւր եւ իւր մերձաւորի, շրջապատի համար: Այս զգացումը ենթակայական է իւր ծագմամբ եւ ապրումներով, բայց դառնում է առարկայական, տեսանելի եւ շօշափելի իւր արդիւնքներով, որ կրօնական կեանքն է պատմութեան մէջ իւր քաղաքակրթական-գեղարուեստական եւ բարոյական-դաստիարակչական ընթացքով: Կրօնի հետաքրքրութեան առարկան մարդկային հոգին է, կենդանի անձը, նորա ներքին էութիւնը՝ աւելի թանկ, քան արտաքին ամբողջ աշխարհը. «Զի՞նչ օգուտ է մարդոյ, եթէ զաշխարհս ամենայն շահեսցի եւ զանձն իւր տուծեսցէ» [Մատթ. ԺԶ 26]: Բարձրացնել այդ հոգին, ազնուացնել, մաքրել բիւրեղի նման՝ կրօնի եւ նորա Եկեղեցու ձգտումն է եւ բարձրագոյն նպատակը: Յոյս ներշնչել յուսահատին, խաղաղութիւն՝ հոգով տառապողին, մխիթարութիւն՝ սգաւորին: Բայց կայ դեռ աւելի բարձրագոյնը եւ հրաշալին. այդ կորուսեալ հոգու փրկութեան գաղափարն է: Անառակ որդին իսկ մերժուած չէ ներման եւ գթութեան շնորհքից, եթէ նա զգացել է եւ թողել իւր սխալը: Կորուսեալ հոգու փրկութեան համար երկնքի հրեշտակներն իսկ ուրախութիւն են զգում: Ներողամտութեան եւ

սիրոյ որպիսի՝ խորն ըմբռնում...

Ո՞ր գիտութիւնը կարող է քրիստոնէութեան հալածող Սաւղոսին Պօղոս առաքեալ դարձնել, Հռոմի շուայտ կեանքով ապրող Օգոստինոսին՝ Եկեղեցու ամենամեծ հայրերից մէկը, Վիկտոր Հիւգոյի «Թշուառներ» հերոս չարագործ Ժան Վալտանին՝ մեծ մարդասէր եւ բարեգործ: Կարդացե՛լ էք Լեւ Տոլստոյի «Յարութիւն» վէպը, որի հերոս կոմս Նելիտովը անմեղ Կատիային հրապուրելուց եւ նորա կորստեան պատճառը դառնալուց յետոյ հետեւում է տաժանակիր աշխատանքի դատապարտուած զոհին մինչեւ Սիբիր՝ նորա կեանքը փրկելու եւ իւր խիղճը մաքրելու համար: Կարդացե՛լ էք Լեւիտոսի ամենամեծ գրող Սենկեւիչի «Quo vadis, Domine» («Յո՞ երթաս, Տէ՛ր») սքանչելի վէպը՝ քրիստոնէութեան արշալոյսին հեթանոս Հռոմի զեղխութեան եւ ապականութեան եւ քրիստոնեաների մաքուր եւ սիրով լի կեանքի հակադրութեան գեղարուեստական նկարագրութիւնը:

Ահա մի քանի խօսքով կրօնի ներգործութեան շրջանն ու արժէքը մարդկութեան համար: Հոգին թանկ է, պէտք է փարատել նորա վերայ իջած մէզն ու խաւարը «իմանալի լուսով», որ երկնքից է գալիս, «զի ամենայն տուրք եւ բարիք ի վերուստ են իջեալք առ ի Քէն, որ ես Հայր լուսոյ»: Մենք հաւատում ենք, թէ այդ լոյսն ուղարկուած է երկնքից յանձին Յիսուս Քրիստոսի: Այդպէս էլ ձեւակերպուած է քրիստոնէական նկարչութեան եւ արձանագործութեան մէջ. կանգնած է Նա կամ աթոռի վերայ նստած՝ բաց Աւետարանը ձեռքին, որի վերայ գրուած է. «ԵՍ ԵՄ ԼՈՅՍ ԱՇԽԱՐՀԻ»:

Թող բացուի՛ն մեր աչքերը, տեսնենք այդ լոյսը եւ գնանք նորա յետեւից, ինչպէս Երիքովի կոյրերն իրենց աչքերը բացուելուց յետոյ գնացին:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

«Հասկ», մայիս, 1946

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

«Թագաւոր երկնատը, միշտ անշա'րժ պահեա զԱթոռ Հայկազնեայց»:

Ա

Հայ Եկեղեցիին քրիստոնէական Եկեղեցիների մէջ իւր ուրոյն տեղն ունի անցեալով, կազմակերպչական եւ դաւանաբանական առանձնայատկութիւններով: Հայաստանեայց Եկեղեցի կամ Հայոց Եկեղեցի անունն իսկ արտայայտած է նորա էութիւնը: Կայ Կաթողիկ Եկեղեցի, կայ Որթոտոքս Եկեղեցի, կան Բողոքական կամ Աւետարանական Եկեղեցիներ, բայց նրանք ազգային Եկեղեցիներ չեն այնպիսի հասկացողութեամբ եւ տարողութեամբ, որպիսին Հայաստանեայց Եկեղեցին է: Սա ազգային Եկեղեցի է գերազանցապէս՝ իւր հօտն ամբողջութեամբ հայերից կազմուած, իւր լեզուով, գրականութեամբ, արուեստով, ժամերգութեամբ եւ հոգեւոր կեանքով, բնականաբար նաեւ՝ անցեալով եւ պատմութեամբ շողկապուած Հայ ժողովրդի հետ:

Կաթողիկ Եկեղեցին մերի համեմատութեամբ շատ մեծ է, ընդարձակ իւր ներգործութեան եւ ծաւալման սահմաններով մեզինից մեծ եւ հզօր ազգերի մէջ՝ իտալացիների, սպանացիների, Ֆրանսացիների, իռլանդացիների, լեհերի մէջ, մասամբ նաեւ՝ գերմանացիների եւ ամերիկեան ազգերի մէջ: Փոքր չափով նաեւ միաբարակեան քարոզչութեան հետեւանքով հատուածներ ունի արեւելեան Եկեղեցիներից պոկուած. այդպիսիների մէջ յիշատակելի է յատկապէս Հայ կաթողիկոսութիւնը իւր մասնաւոր կազմակերպութեամբ՝ ենթարկուած պապական բարձր իշխանութեան: Կաթողիկ Եկեղեցու պաշտօնական լեզուն լատիներէնն է վերեւ յիշած բոլոր ազգերի համար, միայն արեւելեան Հին քրիստոնեաներից կազմուած հատուածների համար (ուսիտաներ) թոյլատրուած է իրենց նախկին Եկեղեցու լեզուով եւս պաշտամունք կատարել, ինչպէս Հայ կաթողիկեանն են:

Որթոտոքս Եկեղեցու մաս են, բացի յոյներից, որոնց անունով եւ երբեմն կոչուում է Եկեղեցու ամբողջութիւնը, ուստաց մեծ ազգը, ուսմինացիք, բուրբուրները, սերբերը, որոնք հէնց սկզբից կարողացել են իրենց մայրենի լեզուն դարձնել եւ եկեղեցական պաշտաման լեզու: Որթոտոքս Եկեղեցին էլ հաւատացեալների թուով եւ ներգործութեան ընդարձակութեամբ անսահման մեծ է Հայաստանեայց Եկեղեցուց:

Աւետարանական կամ Բողոքական գլխաւոր եւ համեմատաբար

աւելի Հին Եկեղեցիների հետ, ինչպէս Լուստերական, Երիցական եւ Անգլիքան Եկեղեցիներ են, կան եւ բազմաթիւ յարանուանութիւններ՝ մկրտչականներ, մեթոդիստներ, աղվենդիստներ եւ այլն, որոնք տասնեակ միլիոններով հետեւողներ ունին: Սրանց մէջ յատուկ տեղ է բռնում Անգլիքան Եպիսկոպոսական Եկեղեցին, որ կաթողիկոսեան եւ բողոքականութեան միջին տեղն ունի եւ պահել է որոշ աւանդութիւններ Հին Եկեղեցուց, նաեւ համեմատաբար ազգային է գոնէ բուն Անգլիայում, բայց որոնցից եւ ոչ մէկը ազգային բնաւորութիւն չունի բառի իրական հասկացողութեամբ, եւ նրանք հետամուտ չեն իրենց հաւատացեալների ազգային առանձնայատկութիւնները պահպանելու մտահոգութեամբ: Նրանք չեն ամփոփուում նաեւ ազգային սահմանների մէջ, ինչպէս վիճակուել է այդ Հայաստանեայց Եկեղեցուն, որովհետեւ Եկեղեցու կողքին ունին հզօր եւ կազմակերպուած պետութիւններ:

Բ

Այս Եկեղեցիների, յատկապէս Հին Եկեղեցիների՝ Կաթողիկ եւ Որթոտոքս, ծագման եւ կազմակերպութեան պայմաններն էլ տարբեր են եղել, ուստի եւ՝ տարբեր ձեւ ու կերպարանք ստացել: Այդ Եկեղեցիները ծագել են եւ կազմակերպուել Հռոմէական պետութեան մէջ՝ հռոմէական պետական բաժանումների եւ նրանց յարաբերութեան իրողութիւնից մեծազոյն չափով ազդուելով: Եպիսկոպոսութիւններ, արքեպիսկոպոսութիւններ կամ մետրոպոլիտիւններ, պատրիարքութիւններ կազմակերպուել են յատկապէս Դիոկղետիանոս կայսեր պետական բաժանումների եւ նահանգների օրինակով եւ նոյնիսկ տարածականութեամբ նոյնացել երբեմն նահանգական կազմակերպութիւններին: Կեսարիայի, Անտիոքի, Երուսաղէմի, Աղեքսանդրիայի արքեպիսկոպոսութիւններն ու պատրիարքութիւնները, յետագայում նաեւ Կ. Պոլսի՝ որպէս արեւելեան կայսրութեան մայրաքաղաքը, մանաւանդ արեւմտեանի անկումից յետոյ իրենց կեդրոններով եւ ստորաբաժանումներով արդիւնք են քաղաքական կազմակերպութեան:

Պապական իշխանութիւնը իւր միջնադարեան հզօրութեամբ ծագել եւ զարգանալ կարող էր միայն Հռոմում, որ պետութեան իսկական մայրաքաղաքն էր, բայց նաեւ լատինական քաղաքակրթութեան ենթարկուած ազգերի մայրաքաղաքը՝ անվիճելի հեղինակութիւն դարձած հետզհետէ կայսրութեան անկումից յետոյ յառաջ եկած շփոթութեան մէջ: Կայսրութեան դիրքն ու հեղինակութիւնը պատմական բերմունքների ընթացքով եւ պապերի հետեւողական

ձգտումներով եւ ջանքերով անցնում է Հոռոմէական Պապական Աթոռին:

Գ

Հայաստանը ազգովին քրիստոնէութիւն ընդունելու օրերին առանձին պետութիւն էր, ճշմարիտ է՝ դաշնակից Հոռոմէական պետութեան, բայց ուրոյն կազմակերպութեամբ, լեզուով, օրէնքներով կամ աւանդութիւններով: Նա կազմուած էր բազմաթիւ նախարարութիւններից (աստրապներ), որոնք թագաւորի գերիշխանութեան տակ մի միութիւն էին կազմում: Նոյն բնաւորութեամբ կամ հետեւողութեամբ կազմակերպւում է եւ Հայաստանեայց Եկեղեցին: Մեր եկեղեցական ժողովների մէջ եպիսկոպոսութիւնները յիշուում են նախարարութիւնների անունով՝ եպիսկոպոս տանն Սիւնեաց, եպիսկոպոս տանն Արծրունեաց, եպիսկոպոս տանն Մամիկոնեանց եւ այլն: Ինչպէս թագաւորութեան գլուխը արքան է, Հայոց Հայրապետութեան գլուխն էլ կաթողիկոսն է՝ եպիսկոպոսներին իրար բերող իշխանաւորը, միութեան կապը:

* * *

Յայտնի է, որ մեր նախարարական տները իրենց իշխանական բարձրն ունէին եւ աստիճանաւորութիւնները եւ, ըստ այնմ, իրենց զօրքերի քանակը պետական բանակի մէջ: Մամիկոնեանց տունն, օրինակ, հինգերորդ բարձն ունէր, ինչպէս եւ միւս նախարարութիւններն էլ իրենց յատուկ պատուոյ տեղը՝ արքայական խնջոյքների եւ հանդէսների մէջ: Այս աստիճանաւորութիւնն ու կարգաւորութիւնը նուիրականացած էր Սասանեանների ժամանակ, նաեւ՝ Արշակունեաց անկումից յետոյ:

Մատենագրական նախնական տեղեկութիւններ կան մեր հին մատենագիրների մէջ, բայց լիակատար տեղեկութիւն այն մասին հաղորդած պիտի լինի Ղեւոնդ Երէց պատմագիրը Ը դարում՝ տարաբախտաբար, այդ մասով կորած: Բայց նրանից օգտուել է Սամուէլ Կամըջաձորեցին ժԲ դարում՝ նոյնպէս կորած, իսկ սորանից՝ Մխիթար Այրիվանեցի ժԳ դարի երկրորդ կիսում եւ սորանից էլ՝ Օրբէլեան պատմիչ նոյն դարի վերջերին: Մխիթար Այրիվանեցին իւր Ստեփանոս Սիւնեցու Վկայաբանութեան մէջ յիշատակում է եւ Հայ եպիսկոպոսութիւնների դասաւորութեան կարգը, Հայրապետի կամ Կաթողիկոսի աջ եւ ձախ կողմին տասն եւ ութական աթոռները*:

* Տե՛ս մեր՝ «Մխիթար Այրիվանեցի», Երուսաղէմ:

ԱՀա՛ մեզ պատմական ցուցումներ՝ Հասկանալու Հայաստանեայց Եկեղեցու վարչական ձեւակերպութեան կամ նուիրապետութեան ծագումն ու կազմութիւնը՝ բոլորովին ուրոյն ազգային եւ քաղաքական կեանքի տուեալների հիման վերայ եւ տարբեր Հոռոմէական պետութեան մէջ յառաջ եկած զարգացման ընթացքից: Իհարկէ, իշխանական տների անկումից եւ կարգերի խանգարումից յետոյ խանգարւում են եւ նուիրապետական դասաւորութիւններն ու կարգերը: Հայրապետական աթոռի աստանդական վիճակով եւ Կիլիկիայում Հաստատուելուց յետոյ նոր կարգեր են Հաստատուում մեծն Հայաստանի արքեպիսկոպոսների եւ Հայրապետական աթոռի փոխարարբութիւններով, որ բղխում էր դարձեալ մեր պատմական կեանքի տուեալներից եւ պարագաներից:

Դ

Հայաստանեայց Եկեղեցին որոշ առանձնայատկութիւններ ունի նաեւ դաւանաբանական եւ ծիսական տեսակէտներով՝ որպէս հետեւանք նորա պատմական կեանքի: Մինչեւ 451 թուի Քաղկեդոնի ժողովը քրիստոնէական Եկեղեցիների մէջ դաւանաբանական խտրութիւն չկար: Արեւելքի մէջ երկու մեծ դպրոցներ կային. դորանցից մէկը Աղեքսանդրիայի դպրոցն էր, որ Գ դարի սկզբից մեծ հեղինակութիւն էր սկսել վայելել՝ առաջնորդ ունենալով Կղեմէս Աղեքսանդրացու եւ մանաւանդ Որոգինէսի նման մեծ գիտնականը, որ հեղինակութիւն էր ոչ միայն քրիստոնեաների, այլեւ՝ Հեթանոսների աչքում: Բաւական է յիշել, որ նորան լսելու էին գալիս եւ Հեթանոս փիլիսոփաներ, նոյնիսկ կայսերական տան անդամներ, ինչպէս Իւլիա Մամէա կայսրուհին էր: Դ դարի սկզբից մինչեւ Ե դարի վերջերը Աղեքսանդրիայի դպրոցն ու եպիսկոպոսները կատարելապէս իշխող են եւ ուղղութիւն տուող քրիստոնէական մտայնութեան եւ դաւանական խնդիրների վերլուծութեան: Նիկիոյ ժողովի մէջ յաղթանակեց Աթանաս Մեծ՝ դեռեւս սարկաւազ լինելով՝ նոյն դպրոցի ներկայացուցիչը եւ յետագայում Աղեքսանդրիայի մեծ եպիսկոպոսը, Եփեսոսի ժողովի մէջ՝ Կիւրեղ Աղեքսանդրացին, որոնց գրուածները թարգմանուեցան Հայերէն, եւ նրանց դաւանաբանական բանաձեւերը որդեգրուեցան Հայերի կողմից:

Երկրորդ դպրոցը Անտիոքիան էր, նորա հետ կապուած՝ նաեւ Մծբինի եւ Եղեւսիայի դպրոցները ասորա-հելլենիստական տարրերի ազգաբանակչութեան մէջ: Այս դպրոցները նոյնպէս տուել են նշանաւոր անձնաւորութիւններ, որոնց մէջ յիշատակելի է Յոհան Ոսկեբերան,

որ յետոյ Կ. Պոլսի պատրիարք եղաւ, եփրեմ Ասորի եւ այլն. սրանց գրուածքները նոյնպէս թարգմանուեցան Հայերէն եւ որդեգրուեցան որպէս աղբիւր ուղղափառ քրիստոնէութեան: Բայց Անտիոքի դպրոցի աշակերտ էր եւ Նեստոր, որ շեշտում էր Քրիստոսի մէջ մարդկային եւ աստուածային բնաւորութիւնների տարբերութիւնը եւ Մարիամին անուանում ոչ «աստուածածին»: Եփեսոսի ժողովի մէջ, 431 թուին, դատապարտուեցաւ Նեստոր, եւ յաղթանակեց Կիւրեղ Աղեքսանդրացին իւր «մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» բանաձեւով, որ եւ Հայաստանեայց Եկեղեցու՝ Քրիստոսի մարդեղութեան դաւանաբանական Հասկացողութեան Հիմնաքարը դարձաւ: Կիւրեղ Աղեքսանդրացու Պարապմանց եւ Գանձուց գիրքը մեր Հայերի դաւանաբանական ուղղութեան եւ ինքնապաշտպանութեան ամրոց էր այնուհետեւ դարերի ընթացքում՝ ընդդէմ Բիւզանդական եւ Հռոմէական Եկեղեցիների յարձակման:

Եփեսոսի ժողովի յաղթանակը Աղեքսանդրիայի դպրոցի յաղթանակն էր: Ամբողջ արեւելեան քրիստոնէութիւնը, բացարձակ մեծամասնութեամբ, Հետեւող էր Եփեսոսի դաւանութեան, երբ բիւզանդական կայսերական եւ պապական իշխանութիւնների փոխադարձ Հասկացողութեամբ եւ դաշնակցութեամբ գումարուեցաւ Քաղկեդոնի ժողովը 451 թուին՝ ընդունելով Լեւոնի՝ արեւելեան Հասկացողութեան Հակառակ դաւանական գրութիւնը, որ ընդունում էր երկու բնութիւնների՝ մարդկային եւ աստուածային, առանձնայատկութիւնները իրենց տարբեր ներգործութիւններով՝ մեր Հայերի կողմից նեստորականութեան նմանեցրած յաճախ: Կայսերական քաղաքականութեան նշանաբանը դարձաւ այնուհետեւ լատիններից իւրացրած քաղկեդոնական դաւանութիւնը՝ Հայածանքի ենթարկելով այն Եկեղեցիները, որոնք Հաստատ եւ Հաւատարիմ մնացին նախնի աւանդութեան՝ յատկապէս կամենալով խորտակել Աղեքսանդրիայի գորութիւնը եւ հեղինակութիւնը, որի առաջ սկսել էր նսեմանալ կայսերականը: Պապականութեան Համար նոյնպէս քաղաքական կարեւոր Հանգամանք էր Աղեքսանդրիայի անկումը իւր բարձրութիւնից, որ մեծ խոչընդոտ էր իւր սեպհական հեղինականութեան եւ ձգտումներին:

Ե

Մենք խուսափում ենք դաւանաբանական-փիլիսոփայական նրբութիւնների եւ տարբերութիւնների մէջ մտնել՝ անհասկանալի չդառնալու Համար մեր ընթերցողներից շատերին, բայց եթէ յիշատակում ենք այս խնդիրները, պատճառն այն է, որ մեր Եկեղեցու բռնած

տարբեր դիրքը նորա ուրոյն եւ անկախ կեանքի յատկանիշներից մէկը դարձաւ: Հայաստանեայց Եկեղեցին Հաւատարիմ է միմիայն նախնական, երեք Տիեզերական ժողովներին՝ մերժելով Քաղկեդոնի եւ յետագայ ժողովների որոշումները: Ընդունէինք քաղկեդոնականութիւնը, Հայաստանեայց Եկեղեցին ոչ միայն իւր անկախութիւնը կը կորցնէր, այլեւ՝ Հայութեան մի ստուար մասը ձուլուած եւ միացած բիւզանդականութեան, ինչպէս այդ կատարուեցաւ յունական բաժնի քաղկեդոնական Հայութեան նկատմամբ:

Հայաստանեայց Եկեղեցու առանձնայատկութիւնների մէջ պէտք է յիշել եւ այն սովորութիւնները, որ յատուկ էին արեւելեան քրիստոնէութեան մինչեւ Ե դարը, որպիսին է Մնունդը եւ Մկրտութիւնը միասին կատարելու սովորութիւնը. մինչդեռ Որթոտոքս Եկեղեցին հետեւել է հռոմէական աւանդութեան՝ Մնունդը դեկտեմբեր 25-ին առանձին կատարելով եւ Մկրտութիւնը յունուար 6-ին՝ մեզ Հետ: Բողոքական եւ Աւետարանական Եկեղեցիներն էլ հետեւում են Հռոմի աւանդութեան, որ ծնունդ են Կաթոլիկ Եկեղեցու ծոցում:

Այս բոլորի վերայ աւելանում է մեր լեզուի, գրականութեան, արուեստի եւ մշակոյթի նոյնութիւնը Եկեղեցու հետ, որին յատուկ յօդուած կը նուիրենք:

Ահա ինչու Հայաստանեայց Եկեղեցին թանկ է մեզ Համար: Նա մերն է՝ մեր ազգային Եկեղեցին եւ մեր ազգային ամենամեծ ստեղծագործութիւնը, ամենամեծ ժառանգութիւնը մեր նախնեաց թողած: Նորա պահպանութիւնը, կարգաւորութիւնը, յառաջադիմութիւնը Սփիւռքի Հայութեան պահպանութեան երաշխիքն են:

«Թագաւո՛ր երկնաւոր, միշտ անշա՛րժ պահեա զԱթոռ Հայկազնեայց»:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
«Հայաստանեայց Եկեղեցի», դեկտեմբեր, 1939

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿՈՉՈՒՄԸ*

(պատմական լուսոյ մէջ)

Ա

Քրիստոնէութիւնն է, որովհետեւ կրօններէն ոչ մէկը բարոյական կատարելութեան այնպիսի գաղափար չէ տուել, ինչպէս քրիստոնէութիւնը: Այդ կատարելութեան թանձրացեալ պատկերը Յիսուսի անձնաւորութիւնն է, իսկ մշտական կենդանարար աղբիւրը՝ Նորա Աւետարանը: Մարդկութեան առաջ դրուած հոգեւոր այս անգնահատելի գանձը իւր իսկութեամբ եւ մաքրութեամբ ըմբռնելու համար թողնենք քրիստոսաբանական վէճերն ու դաւանաբանական ձեւակերպութիւնները, որ ոչ մասնագէտների համար ըստ ամենայնի հասկանալի չեն, եւ մեր հոգու մէջ պատկերացնենք միայն Աւետարանի Յիսուսը եւ Նորա յարաբերութիւնն առ Աստուած: Եւ ահա մեր առաջ կանգնած կը տեսնենք մարդկանցից Սուրբն ու Մաքուրը, որ երբեւիցէ ապրել է այս մեղաւոր երկրագնդի վերայ: Ի՞նչ է Նորա մեծութեան, գերբնականութեան խորհուրդը բնականութեան մէջ, եթէ կարելի է այսպէս արտայայտել. միմիայն Նորա կրօնական զգացմունքը, որով Նորա շունչն ու հոգին, կամքն ու գործը, Նորա ամբողջ էութիւնը ստորադրուած էր Աստուծոյ կամքին, այսինքն՝ բացարձակ արդարութեան, սիրոյ եւ ճշմարտութեան չափին: Կրօնն ու բարոյականութիւնը, մարդասիրութիւնն ու կարեկցութիւնը անքակտելի միութիւն են կազմում Նորա անձնաւորութեան եւ քարոզած Աւետարանի մէջ. սէր առ Աստուած եւ առ ընկերը՝ ահա քրիստոնէական կրօնի էութիւնը:

Քրիստոնէութեան մարմնացումն ու ներկայացուցիչը պատմութեան մէջ Եկեղեցին է: Քրիստոս ինքը կազմակերպուած Եկեղեցի չէ հիմնել, բայց բնական էր նորա այդպիսի զարգացումը: Եկեղեցին իւր նուիրապետական եւ համայնական կազմակերպութեամբ, իւր կրթական եւ բարեգործական հաստատութիւններով, քարոզով եւ աստուածապաշտութեամբ... միայն մի բարձրագոյն նպատակի արդիւնք է՝ սրբազան մի մարդկութիւն դաստիարակել՝ արժանի Յիսուսի անուան, արժանի Նրա եղբայրակցութեան եւ Աստուծոյ որդեգրութեան: Նա աւետարանական ճշմարտութիւնների մատակարարն է հօտի համար եւ ձգտում է այդ սկզբունքները կեանքի հիմնաքար դարձնել:

* Գրուած է Տ. Մատթէոս Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան ժամանակ:

Ինչպէս քրիստոնէական Հիմնադրի առաջին խօսքը ապաշխարութեան կամ ներքին վերածնութեան քարոզն էր, հոգեւոր փրկութեան եւ յաւիտենական կեանքի աւետիսը, այդպէս եղել է եւ գաղափարական Եկեղեցւոյ համար եւ պիտի լինի, եթէ իւր նպատակից չէ շեղուած: Նա կամենում է ճշմարտութեան անչէլ լապտեր դարձնել մարդկային հոգին, որպէսզի արժանի լինի վայելելու ամենաբարձր բարիքը՝ ազատութիւնը: «Ուր Հոգի Տեսան է, անդ ազատութիւն է», իսկ Տիրոջ Հոգին ճշմարտութեան հոգին է:

Ինչպէս Քրիստոսի անձնաւորութեան մէջ կրօնն ու բարոյականութիւնը, մարդասիրութիւնն ու կարեկցութիւնը անքակտելի միութիւն են կազմում, այդպէս եւ՝ քրիստոնէական կրօնի մէջ: Եւ այս իրողութիւնը բոլորում է մարդկային հոգւոյ խորին գիտակցութիւնից: Կրօնից կտրուած բարոյականութիւնը մի տեսութիւն է միայն մեր մտքի համար, կեանքի ծառից կտրուած մի ճիւղ, որ ի վերջոյ չորանալու է դատապարտուած: Ո՛չ նիւթապաշտութիւնը, ո՛չ նրանից աւելի նուրբ նատուրալիզմը, ո՛չ մոնիզմը, ո՛չ օգտաւէտութեան վարդապետութիւնը կամ բանականութեան վերայ հիմնուած էթիկան կարող են բարոյական սկզբունքները մեր հոգեւոր կեանքի անմիջական, կենդանի տարր դարձնել. նոքա գործ չունին մեր հոգւոյ զգացմունքների հետ, որոնք բարոյական շարժման հիմքն են կազմում: Բարոյականութիւնը պէտք է լինի ինքնաբերաբար, ինչպէս վճիռ աղբիւրը: Պէտք է մարդկային հոգու մէջ այն վիճակը ստեղծել, որ բարոյական գործն ու միտքը ինքնաբերաբար երեւան գան: Այդ վիճակն է, կրօնական արտայայտութեամբ, հաւատ առ Աստուած, սէր դէպի ընկերը եւ յոյս բարւոյ, գեղեցկի եւ ճշմարտի թագաւորութեան, որոնք մեծ կամ փոքր չափով գոյութիւն ունին մեր սրտի խորքում:

Մարդկային հոգւոյ արժանաւորութիւնն ու բարոյական մաքրութիւնը Եկեղեցւոյ գոյութեան նպատակ է. բարոյական մաքրութիւն՝ ոչ սովորական հասկացողութեամբ, այլ՝ ամբողջ ներքին մարդու, մտքի, զգացման, կամքի: Եթէ վերարտադրենք մեր յիշողութեան մէջ հեթանոսական զգայական, եսական եւ անբարոյական կեանքը քրիստոնէութեան ծագման օրերին եւ այդ աղտեղութեան ծովի մէջ՝ հաւատացեալների առաքինութեան, սիրոյ եւ եղբայրութեան մշտադալար կղզին, այն ժամանակ պարզ կը լինի, թէ ինչ է քրիստոնէութիւնը, Եկեղեցին եւ նորա կոչումը: Նա կեանքի աղն է, որ կամենում է քաղաքակրթութիւնն ազատել ապականութիւնից, կամենում է մեղմել եւ ոչնչացնել մարդկային եսականութիւնը, որ անհատական եւ հասարակական բնաւորութիւն կրող չարութեան, անիրա-

ուղեկան աղբիւրն է: Այդ հեթանոսութիւնը կայ եւ այժմ քրիստոնեայ ազգերի եւ պետութիւնների մէջ եւ պէտք է լինի ապագայում, քանի որ մարդկային հոգու մէջ բարին ու չարը, լաւ եւ վատ հակումները հաւասարապէս տեղ ունին: Եւ ահա այստեղից բղխում է **Եկեղեցւոյ կրօնական-բարոյական դաստիարակութեան սրբազան կոչումը՝** ոչ միայն թուլացնել կամ ոչնչացնել մեր վատ հակումները, որոնք մեղքի կամ չարութեան արմատն են, այլեւ զօրացնել կրօնական այն զգացմունքը, որ մարդուն դէպի Աստուծոյ որդեգրութեան է մղում՝ բարոյական եւ մարդասիրական կեանքի մկրտութեան աւագանը: Մարդկային հոգին թանկ է՝ ըստ աւետարանական քարոզութեան, եւ Եկեղեցին, իբրեւ իմաստուն վաճառական, ծախում է իւր բոլոր ինչքը՝ այդ թանկագին մարգարիտը ձեռք բերելու համար: Նա գործադրում է դաստիարակչական բոլոր միջոցները՝ կենդանի խօսքն ու աւետարանական քարոզը, հովուական եւ սիրոյ գործունէութիւնը, աստուածապաշտութիւնը, համայնական կազմակերպութիւնը, գիրն ու գրականութիւնը, արուեստն ու գիտութիւնը, դպրոցն ու բարեգործական հաստատութիւնը, որպէսզի իբրեւ բարի, անձնուէր մշակ ոչ միայն լրիւ պահէ իւր Տիրոջ հօտը, այլեւ որոնէ եւ գտնէ նաեւ կորուսեալ ոչխարին:

Այս մտքով է նա մաքառել եւ պիտի մաքառէ անհատական եւ սոցիալական անբարոյականութեան դէմ՝ վաշխառութեան, արքե-ցողութեան, անառակութեան, բռնութեան եւ աղքատութեան դէմ: Քրիստոնէութիւնը տնտեսական վարդապետութիւն չէ եւ ոչ՝ քաղաքական սիստեմ. այդ նորա կորուստը կը լինէր, եթէ կապուած լինէր յեղյեղուկ ժամանակի երեւոյթների հետ: Բայց հաւատացեալին անհատապէս եւ ամբողջութեանը, իբրեւ Եկեղեցի, մղել է այնտեղ, ուր տնտեսական վիճակը նիւթական եւ բարոյական թշուառութիւն է ստեղծել մերձաւորի համար: Եկեղեցւոյ համար նիւթական հարստութիւնն ու բարեկեցութիւնը վերջնական նպատակ չէ, նորա համար աւելի բարձր բարիք կայ, քան հացը. հոգեւոր-քաղաքակրթական բարիքը. «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլեւ՝ բանին Աստուծոյ»: Բայց նա աչքից փախցնել չէր կարող, որ աղքատութիւնը, իրաւագուրկ վիճակը փորձութիւններ են դնում մարդու առաջ, որ յաճախ դէպի կորուստ են տանում: Այսպիսով, մենք մօտենում ենք Եկեղեցւոյ երկրորդ մեծ կոչման, որ պատմութեան մէջ սիրոյ գործունէութիւնն անունն է ստացել՝ սերտ կապուած առաջինի հետ, եւ կարելի է ասել՝ նորա հետեւանքը:

Մենք տեսանք, որ Քրիստոսի անձնաւորութեան, ինչպէս եւ քրիստոնէութեան մէջ սէրը դէպի մերձաւորը անբաժան էր բուն կրօնականից: Կրօնի էութիւնը սէրն էր առ Աստուած եւ առ ընկերը: Աւետարանի մէջ բազմաթիւ ասացուածքներ, մտքեր եւ առակներ կարող ենք գտնել՝ նոյն գաղափարը հաստատող: Քրիստոնեան պէտք է անսահման գթութեան կատարելութեան դիմէ. «Եղբոր՝ք գթածք, որպէս եւ երկնաւոր Հայրն ձեր գթած է»: Պէտք է անկարեկից չանցնէ օգնութեան կարօտի մօտով, քաղցածին պիտի կերակրէ, մերկին հագցնէ, բանտարկեալին մխիթարէ... եւ այդ բոլորը՝ կրօնական սրբազան պարտաւորութեան զգացմունքով, որպէս թէ Տիրոջն անէր: Քրիստոնէական կրօնի շունչն ու հոգին գթութեան եւ եղբայրութեան այս սէրն է՝ առ Աստուած ունեցած որդիական վստահութեան եւ անձնուիրութեան հետ: Եւ Եկեղեցին սիրոյ այս առաքելութիւնը կատարեց պատմութեան մէջ չտեսնուած եւ չլսուած անօրինակ եռանդով՝ հէնց իւր ծագման առաջին օրերից, յետագայ սերունդների համար նմանողութեան գեղեցիկ օրինակ տալով: Նա հանդէս է գալիս որպէս հաւասարների, եղբայրների մի միութիւն՝ շողկապուած գաղափարի եւ սիրոյ կապակցութեամբ: Եթէ Եկեղեցին կրօնական եւ բարոյական ճշմարտութիւնների քարոզութեամբ իւր հաւատացեալների հայեացքը դէպի երկնայինն ու վսեմն է ուղղում, **գթութեան եւ սիրոյ գաղափարներով նա կապում էր շրջապատի եւ աշխարհի հետ:** Քրիստոնէական կրօնի սոցիալական կողմն էր այս, որ այնքան բարեբար արդիւնք ունեցաւ պատմութեան ընթացքում:

Եկեղեցւոյ համար գործունէութեան հնոցը, ուր անհատը դարձնում էր՝ ապրելու ընդհանուրի համար, ինչպէս եւ ամէնքը՝ մէկի համար, համայնական կազմակերպութիւնն էր: Կրօնական ոչ մի սիստեմ, սոցիալական կամ պետական ոչ մի կազմակերպութիւն այնպիսի համայնականութիւն չի արտադրել, որպիսին Եկեղեցին՝ իւր գոյութեան առաջին դարերում: Այստեղ սէրը արտայայտուած էր իւր իսկական մաքրութեամբ՝ ոչ միայն իբրեւ անձից անձի ներգործութիւն, այլեւ՝ համայնական ձեւով: Համայնական կեանքի կեդրոնն է կազմում աստուածապաշտութիւնն ու կենդանի քարոզը, որով հաւատացեալների ժողովը «դաստիարակութեան եւ ազնութեան վարժոց» էր դառնում նորա անդամների համար: Սիրոյ ճաշը իւր շուրջն էր խմբում բոլոր հաւատացեալներին անխտիր: Աղքատներն ու աշխատանքի անընդունակները, որբերն ու այրիները համայնքի հովանաւորութիւնն էին վայելում եպիսկոպոսների եւ նոցա սարկաւագների ձեռքով:

Ամբողջ համայնքը մի ընտանիք է կազմում, որի հոգեւոր հայրը եպիսկոպոսն էր՝ բառի իսկական նշանակութեամբ, իսկ միւսներն էլ՝ քոյրեր եւ եղբայրներ: Աղքատների եւ կարօտեալների խնամատարութեան գործը իւր ընտիր կազմակերպութեամբ եւ բարոյական տեսակէտներով յառաջ է եկել քրիստոնէական Եկեղեցւոյ մէջ: Այստեղ միայն առաջին անգամ կարեկցութեան եւ գթութեան գործը դառնում է համայնական կեանքի մասը: Յատուկ պաշտօնեաներ նուիրուած են գթութեան գործին, նրանք ոչ միայն նիւթական օգնութիւն են հասցնում, այլեւ՝ բարոյական դաստիարակութիւն ներշնչում: Նոքա այցելում են հիւանդներին, բանտարկեալներին, գթութեան արժանի այրիներին: Եպիսկոպոսի յատուկ հսկողութեան տակ խնամուած են որբերը, կրթւում եւ մի արհեստ սովորում՝ ժամանակին իրենց հացը վաստակելու համար. աղջիկ որբերը չափահաս դառնալուց յետոյ եպիսկոպոսի հոգացողութեամբ ամուսնանում են քրիստոնեայ երիտասարդների հետ: Հեռաւոր համայնքներն իսկ օգնում են իրար. կարթագինէի Կիւրիանոս եպիսկոպոսը 100000 սիստերցիուս է ուղարկում Նուբիայի եպիսկոպոսներին՝ գերեալներին փրկելու համար: Հռոմի Դիոնեսիոս եպիսկոպոսը նոյն նպատակով մխիթարութեան թուղթ եւ դրամ է ուղարկում Կեսարիայի Եկեղեցուն:

Համայնական գթութեան այս զարմանալի շրջանին հետեւում է քրիստոնէական բարեգործական եւ կրթական հաստատութիւնների ծաղկման շրջանը՝ Գ դարից սկսած: Քրիստոնէութեան պետական կրօն դառնալուց յետոյ, երբ տասնեակ հազարներով աճում էր եպիսկոպոսների հօտի թիւը, անկարելի էր այլեւս անհատական այնպիսի խնամք տանել, ինչպէս հնարաւոր էր փոքրիկ համայնքների մէջ: Հաստատութիւնների երեւան գալուց շատ նպաստում է եւ վանքերի սկզբնաւորութիւնն այդ դարում, ուր կեդրոնանում են հաստատութիւնները: Փոխանակ անհատապէս խնամելու ընդարձակ եպիսկոպոսութեան մէջ ցրուած աղքատներին, կարօտեալներին, հիւանդներին, որ անկարելի էր, հանդէս են գալիս հաստատութիւններ, այնտեղ են խմբում նրանց՝ աւելի հեշտ կերպով օգնելու համար: Դորանով, իհարկէ, անհատական եւ համայնական խնամատարութիւնը չի վերջանում, բայց քրիստոնէական գթութեան գործը կեդրոնանում է հաստատութիւնների մէջ: Ստեղծուած է որոշ պաշտօնէութիւն եպիսկոպոսի անմիջական հսկողութեան տակ՝ հաստատութիւնները կառավարելու համար: Հիւանդանոցների համար յատուկ հիւանդապահներ են պատրաստուած: Աղքատների խնամատարութեան գործը դարձեալ եպիսկոպոսների եւ նրանց սարկաւազների ձեռքին էր:

Հազարաւոր եւ տասնեակ հազարաւոր տառապեալներ, այրիներ, որբեր, հիւանդներ, անդամալոյծներ, խեղանդամ եւ աշխատանքի անընդունակ մարդիկ վայելում են Եկեղեցւոյ շնորհքը: Դ եւ Ե դարերը Հռոմէական պետութեան քայքայման շրջանն էր. անընդհատ պատերազմները, բարբարոսների արշաւանքները ժողովրդին վերին ծայր աղքատութեան էին հասցրել: Գերիների թիւը հազարներով էր աճում: Այսպիսի պայմանների մէջ Եկեղեցին իւր եպիսկոպոսներով, իւր պաշտօնէութեամբ եւ հաստատութիւններով գործազուտ եւ խնամածու մայր է հանդիսանում՝ աղքատութիւնն ու նորա հետեւանքները մեղմելու, գերիներին փրկելու եւ սգաւոր ու վշտաբեկ սրտերն ամոքելու:

Քրիստոնէական հաստատութիւնների պսակը ասպնջանոցն էր. պանդոխտները, աղքատները, հիւանդները, որբերն ու այրիները եւ ամէն տեսակի տառապեալներ այնտեղ ոչ միայն օթեւան, այլեւ սէր ու խնամք էին վայելում: Ասպնջանոցից են ծագում հետզհետէ եւ միւս հաստատութիւնները՝ հիւրանոցները, հիւանդանոցները, այրիանոցները, որբանոցները, ծերունիների եւ ծննդկանների ապաստանարանները: Որոշ վանքերում խնամք էին վայելում եւ հոգեւոր կրթութիւն ստանում կոյրերը, որոնք հոգեւոր երգեր եւ սաղմոսներ էին սովորում եւ երգում հաւատացեալների եւ ուխտաւորների առաջ: Հոգեկան հիւանդները եւս ունէին իրենց ապաստանարանները: Նոյնիսկ ընկած կամ անց համար հաստատութիւններ կային, ուր նոքա ապաշխարում էին, եւ քրիստոնէական սէրը նրանց փրկութեան համար եւս հոգում էր: Հասարակութիւնից քշուած բորոտներն իրենց ուրկանոցներն ունէին:

Եկեղեցին, այսպիսով, իւր նիւթական եւ բարոյական ամբողջ կարողութիւնը նուիրել էր սիրոյ գործունէութեան. կտակներից, մասնաւոր նուիրաբերութիւններից, կալուածների եկամուտներից ստացուած արդիւնքը գործադրուած էր այս եւ սորա նման նպատակների համար: Եկեղեցին իւր պաշտօնէութեամբ բաց ճակատով կարող էր ասել հօտին. «Եւ զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք»: Եկեղեցւոյ ականաւոր հայրերը յատկապէս օրինակ էին հանդիսանում սիրոյ գործունէութեան եւ նուիրաբերութեան մէջ: Բարսեղ Կեսարացին իւր ամբողջ կարողութիւնը աղքատներին նուիրեց եւ հաստատեց Կեսարիայի մօտ իւր նշանաւոր ասպնջանոցը. Եփրեմ Ասորին մի հիւանդանոց հիմնեց Երեսիայում 300 մահճակալներով. Հայաստանում Ներսէս Մեծ բարեգործական եւ կրթական հաստատութիւնների ցան-

ցով պատեց մեր երկիրը. Ոսկեբերան երկու ասպնջանոց հիմնեց Պոլսում եւ 7700 աղքատ էր խնամում: Հոռմի եւ ուրիշ եպիսկոպոսների խաղացած գերը բարբարոսների արշաւանքների ժամանակ յօգուտ ժողովրդի, նրանց ցոյց տուած օգնութիւնը գերեալներին յայտնի է ամենքին: Եկեղեցին իւր եպիսկոպոսներով պաշտպան է հանդիսացել թոյլերին բռնաւորների եւ կայսրների դէմ, ահագին բարերար ազդեցութիւն է ունեցել պետական օրէնստուութեան վերայ, խաղաղութեան միջնորդ է հանդիսացել՝ արիւնհեղութեան առաջն առնելու:

Գ

Եկեղեցւոյ երրորդ կոչումը կրթական եւ քաղաքակրթական գործունէութիւնն է: Այս կոչումն էլ սերտ կապուած է նախկին կոչումների հետ: Քրիստոնէական ճշմարտութիւնները հօտի մէջ հաստատելու համար ի սկզբանէ անտի գործադրուած են քաղաքակրթական երկու կարեւոր գործօնները՝ գիրն ու կենդանի խօսքը: Առաքելները Աւետարանը բերանացի քարոզելուց յետոյ հեռաւոր քաղաքներից թղթեր էին գրում՝ համայնքների մէջ սպրդած տարածայնութիւնները փարատելու կամ թիւրիմացութիւնները պարզելու համար: Աւետարաններ են գրուած Յիսուսի գործի եւ վարդապետութեան նկարագրութեամբ: Յետառաքելական շրջանի եւ եկեղեցական հայրերը, շատագուցները ահագին մատենագրութիւն են ստեղծում եկեղեցական եւ աւետարանական կեանքի հետ կապուած խնդիրների վերաբերութեամբ: Եկեղեցւոյ հօտի համար ամենամեծ դպրոցը, ինչպէս տեսանք, համայնքն էր. բայց առաքելական շրջանից արդէն յատուկ պաշտօնեաներ կային, որոնք համայնքին ուսուցանում էին քրիստոնէական կրօնը եւ վարդապետներ են կոչուում: Իսկ երկրորդ դարու վերջերին հանդէս են գալիս նորավարժից կրթարանները կամ դպրոցները:

Քաղաքակրթական միջոցների գործադրութիւնն ու զարգացումը եկեղեցւոյ մէջ իրերի ընթացքի հետ կապուած բնական երեւոյթ էր: Քրիստոնէութիւնն ինքը գրի եւ բարձր քաղաքակրթական կրօնն էր եւ կոչում էր ստացել՝ թագաւորելու ժամանակի քաղաքակիրթ ազգերի սրտի մէջ: Ուրեմն, պիտի կարողանար պարզել իւր ճշմարտութիւնները նաեւ փիլիսոփայական կրթութիւն ստացած հասարակութեան պատշաճ լեզուով: Այստեղից են յառաջ գալիս եկեղեցական-գիտնական նշանաւոր դպրոցները Աղեքսանդրիայում, Անտիոքում, Եգեսիայում եւ այլ կեդրոններում: Եկեղեցւոյ գիտնական ներկայացուցիչները իւրացնում են յունական գիտութիւնն ու փիլիսոփայութեան մեթոդները՝

քրիստոնէական աստուածաբանութիւն եւ աշխարհայեացք ստեղծելու համար: Նոյնիսկ Հեթանոս երիտասարդներ ու փիլիսոփաներ լսում էին Որոգինէսի դասախօսութիւններն Աղեքսանդրիայում: Երկրորդ դարի վերջերից սկսած՝ գիտութիւնը դաշնակից էր քրիստոնէութեան յանձին եկեղեցական նշանաւոր հայրերի: Գիտութեան պահանջի հետ յառաջ է գալիս եւ եկեղեցական մատենագրարանը: Առաջին քրիստոնէական մատենագրարանը, ըստ Եւսեբիոսի եկեղեցական պատմութեան, Երուսաղէմինն էր՝ Աղեքսանդր եպիսկոպոսի ձեռքով հիմնուած Գ դարու առաջին քառորդում: Երկրորդ եւ աւելի նշանաւորը Կեսարիայինն էր, որից օգտուելով՝ Եւսեբիոսը գրեց իւր նշանաւոր Եկեղեցւոյ Պատմութիւնը: Բոլոր յայտնի եպիսկոպոսութիւններն էլ հետեւում են այս օրինակին: Հոռմի դիւանի սկզբնաւորութիւնը չորրորդ դարն է համարուում:

Եկեղեցին, իւրացնելով յունական փիլիսոփայութիւնն ու գիտութիւնը, միւս կողմից ինքը բարբարոս ազգերի համար նոր քաղաքակրթութիւն, գիր ու գրականութիւն է ստեղծում: Սլաւոնական ազգերի, գերմանացիների, անգլիացիների գրականութեան սկզբնաւորութիւնը կապուած է քրիստոնէութեան հետ: Սլաւոնական ազգերի, ինչպէս եւ հայոց, վրաց գրերի գիւտը կատարուել է Եկեղեցւոյ պաշտօնեաների ձեռքով: Գերմանական գրականութեան ամենահին յիշատակարանը Սուրբ Գրքի թարգմանութիւնն է, նոյնն է եւ հայոց համար: Եկեղեցին է, որ պատմութեան ասպարէզի վերայ նոր դուրս եկած ազգերի մէջ, քրիստոնէութեան տարածման հետ, հաստատում է յունական քաղաքակրթութեան եւ արուեստի մնացորդները, թարգմանում է Պղատոնի, Արիստոտէլի եւ նոր-պղատոնական այլեւայլ փիլիսոփաների երկերը եւ աւանդում յետագայ սերունդներին: Այս քաղաքակրթական գործունէութեան մէջ շատ մեծ դեր են կատարում վանքերը՝ դառնալով ժամանակի գիտութեան, արուեստի եւ կրթութեան օրօրանները: Եկեղեցւոյ դաստիարակչական եւ քաղաքակրթական ներգործութեան շնորհիւ հետզհետէ մեղմանում են բարբարոս ազգերի բարքերը, եւ եւրոպական ներկայ քաղաքակրթութեան հիմքը դրւում: Եկեղեցին իւր վանքերով, յատկապէս արեւմուտքում, առաջնորդ է եղել նաեւ աշխատասիրութեան, նիւթական կուլտուրայի եւ երկրագործութեան:

Քրիստոնէական Եկեղեցւոյ բարերար ազդեցութիւնը ոչ պակաս երեւում է արուեստի զարգացման մէջ: Ընդհանրապէս, կրօնը հոգեւոր կեանքի, քաղաքակրթութեան եւ արուեստի կենսատու երակն է: Հին

քաղաքակիրթ ազգերի՝ բարեկացիների եւ եգիպտացիների, յատկապէս յունաց արուեստի պատմութիւնը շատ անհերքելի եւ պարզ ապացոյցներ է տալիս այս մասին: Յունական արուեստի՝ ճարտարապետութեան եւ արձանագործութեան ամենահրաշալի արտադրութիւնները կրօնական են՝ տաճարներ, աստուածների եւ աստուածուհիների արձաններ: Նոյնպիսի սերտ կապ նկատուում է բանաստեղծութեան, բեմական արուեստի եւ կրօնի մէջ: Բայց շատ հեռու չերթանք. մարդկութեան ամենամեծ հանճարներից մէկը՝ Գեոթէն, հաստատում է, թէ «մարդիկ միայն այնքան ժամանակ ստեղծագործող են բանաստեղծութեան եւ արուեստի մէջ, որքան նրանք կրօնական են. հակառակ դէպքում նմանող են կամ հնի կրկնող»:

Կրօններից ազնուագոյնն ու բարձրագոյնը բացառութիւն չպէտք է կազմէր. եւ յիրաւի, արուեստի, ինչպէս եւ քաղաքակրթութեան պատմութեան մէջ քրիստոնէական տարրը ամենախոշոր տեղն է բռնում: Եւրոպական ներկայ քաղաքակրթութեան մասին կարելի է որպէս քրիստոնէական քաղաքակրթութեան մասին խօսել: Եւ այդ հասկանալի է. ներքին եւ հոգեւոր կեանքում քրիստոնէական կրօնի կատարած էական դերը պէտք է արտափայլէր եւ թանձրանար արուեստի եւ քաղաքակրթութեան մէջ: Սկզբում քրիստոնէական արուեստը, ինչպէս ցոյց են տալիս կատակոմբաների յիշատակարանները, կրում է հեթանոսական արուեստի հետքեր. նոյնը կարելի է ասել ճարտարապետութեան եւ մանրանկարչական արուեստի մասին: Բայց քրիստոնէութեան յաղթութեամբ նորա արուեստն էլ իւր բոլոր ճիւղերով ինքնուրոյն բնաւորութիւն է ստանում: Արուեստի թագուհին՝ ճարտարապետութիւնը, հրաշալիքներ է ստեղծել այլեւայլ ոճերով: Յուստինիանոսի Այս-Սոֆիան եւ Վենետիկի Ս. Մարկոսը, Կեոլնի Դոմը եւ Վիեննայի Ս. Ստեփանոսը, Փարիզի Նոտր Դամը, Հռոմի Պօղոս-Պետրոսը, Պետերբուրգի Իսակիւսկի սաբորը, Զուարթնոցը, Երեւոյքի տաճարը Հայոց մէջ, Անիի Մայր Եկեղեցին եւ այլ քրիստոնեայ ազգերի բազմաթիւ տաճարներ, որոնց անուանների յիշատակութիւնը միայն երեսներ կարող էր բռնել, յաւիտենական կոթողներ են քրիստոնէական Եկեղեցւոյ բարձր ստեղծագործութեան: Նոյնը կարող ենք ասել նկարչութեան, երաժշտութեան եւ բանաստեղծութեան մասին: Չլիշելով Հին պատկերագրութիւնը, մոզայիկները Ռավենայում եւ ուրիշ տեղերում, ինչպէս մանրանկարչական արուեստի արդիւնքները՝ Վերածնութեան շրջանի դասական նկարչութիւնը եւ արձանագործութիւնը ըստ մեծի մասին կրօնական բովանդակութիւն ունին եւ օրինակելի կը մնան շատ երկար դարերի համար: Յիշենք միայն մի

քանի վարպետներ, ինչպէս՝ Յորա Անժելիկո, Լէոնարդո դա Վինչի, Միքէլ Անջելո, Ռաֆայէլ, Ռուբենս, Դիւրեր... որոնց անունները անընչելի կերպով կապուած են քրիստոնէական արուեստի պատմութեան հետ: Մարդկային ներքին աշխարհի արտայայտութիւնը հոգւոյ հայելու՝ աչքերի մէջ, մաղոնանների բարոյական գեղեցկութիւնն ու մաքրութիւնը քրիստոնէութեան կենդանի ներգործութեան արդիւնքն էր արուեստի վերայ: Ներկայ երաժշտութիւնն էլ իւր ծագումով եկեղեցական է. նշանաւոր վարպետներից յիշենք Հենդելին իւր «Մեսիասով», Բախին իւր «Մատթէոս Պատիոնով» եւ «Մտտեաներով», Մոցարտին իւր «Ռէգուէմով», Նոյնիսկ Վագներին իւր «Պարսիֆալով»: Իսկ բանաստեղծներից, չլիշելով բուն քրիստոնէականները, ամենամեծ հանճարները իրենց սրտի խորքում կրօնական են՝ ոչ դաւանաբանական-եկեղեցական նշանակութեամբ, այլ՝ ըստ էութեան, որովհետեւ բոլոր բարձր ստեղծագործութիւններն իսկապէս մեծ կամ փոքր չափով կրօնական են: Յիշենք միայն Դանտէն իւր «Աստուածային կատակերգութեամբ», Լեսսինգը իւր «Նաթան իմաստունով», Շիլլերը իւր բովանդակ բարոյական իդէալներով, Գեոթէն իւր «Ճառաստով» եւ ընդհանրապէս տիեզերքի եւ հոգւոյ կապակցութեան մասին ունեցած հայեացքներով:

Դ

Այս թուուցիկ ականարկների մէջ արտայայտուած փաստերով տեսանք, որ Եկեղեցին մարդկային զարգացման ամենախոշոր գործօններից մէկն է, եթէ չասենք՝ ամենամեծը: Ընդհանուր Եկեղեցւոյ հետ նոյն գաղափարները ժառանգութիւն է ստացել եւ Հայոց Եկեղեցին: Մտքերի կրկնութիւն կը լինէր, եթէ վերարտադրէինք եւ մեր Եկեղեցւոյ կատարած դերը յառաջադիմութեան համար էական նշանակութիւն ունեցող այն երեք խնդիրներում՝ կրօնական-բարոյական դաստիարակութեան, սիրոյ կամ սոցիալական գործունէութեան եւ կրթական-քաղաքակրթական զարգացման մէջ: Հայոց Եկեղեցին պատմական բերմունքով աւելի կենդանի դեր է կատարել եւ անձնուիրութիւն ցոյց տուել դէպի իւր հօտը: Սորա վերայ պիտի աւելցնենք եւ նորա ազգային բնաւորութիւնն ու նշանակութիւնը՝ իբրեւ ընդհանուր հայութեան գլխաւոր կապ եւ հոգեւոր գիտակցութեան մայր: Գործել հայոց ազգային դարաւոր Եկեղեցւոյ այս պատմական առաքելութեան դէմ՝ նշանակում է սեպհական ձեռքերով քանդել իւր տունը: Եկեղեցւոյ այս սրբազան եւ նուիրական կոչումը պարզեցինք պատմական լուսով, թէեւ թուուցիկ՝ այսպիսի յօդուածի մէջ, որովհետեւ ի՞նչը

կարող է աւելի ազդու եւ անաչառ խօսել, քան կրքերից ազատ պատմական փաստն ու իրողութիւնը: Ոչ մի բան չի կարող այնպիսի ուսուցիչ Հանդիսանալ, ինչպէս պատմութիւնը, որ մարդկային կեանքի փորձառութիւնն է: Իսկ ընդհանուր եւ մասնաւորապէս Հայոց Եկեղեցւոյ ամբողջ պատմութիւնը աղաղակում է, թէ բարոյական եւ քաղաքակրթական մի վսեմ առաքելութիւն ունի կատարելու մեր Եկեղեցին եւ այսուհետեւ: Ամենայն յառաջադիմութիւն անցեալի հետ կապուած մի օղակ է. այս ճշմարտութիւնը երբէք չպէտք է մոռանանք:

Հայոց վերածնութեան խարիսխը քրիստոնէական աւետարանական վերակենդանութիւնն է, մեր դարաւոր եւ սրբազան ժառանգութեան բարեփոխութիւնն ու բարեկարգութիւնը, որովհետեւ առանց բարոյական վերածնութեան ամենայն մի շարժում հաստատուած է աւազի վերայ: Որքան կեղտ, անմաքրութիւն կար մեր նոր շարժումների մէջ, որ բարոյական զգացմունքի պակասութեան արդիւնք էր: Մինչեւ չսովորենք ապրել մեր Հայրերի լաւագոյն զգացումներով, չսքանչանանք մեր նախնաց ազնիւ ստեղծագործութիւններով, չհասկանանք կանգուն եւ աւերակ յիշատակարանների անմոռնչ, բայց կենդանի լեզուն, բարոյապէս քաղաքակիրթ մի նոր ազգ դառնալ անկարող ենք: Բարոյական կենդանութեան արմատը մարդկային հոգին է, իսկ այս նախադրեալը տանում է մեզ դէպի բարենորոգուած ազգային Եկեղեցւոյ գաղափարը:

Ծածկել չենք կարող՝ մեր Եկեղեցին կարօտ է բարեզարդութեան եւ բարեկարգութեան, նորա պաշտօնէութիւնը ընդհանուր առմամբ տգէտ է եւ անհամապատասխան իւր բարձր կոչման, հօտը խարխափում է բարոյական խաւարի եւ տգիտութեան մէջ կամ հակակրօնական ուղղութեամբ ընթանում, բայց այդ պակասութիւնները պէտք է խորին անձնուիրութեան զգացմունք յառաջ բերեն մեր մէջ՝ բուժելու նրա վէրքերը, եւ ոչ՝ թշնամական զգացմունք: Մեր ձգտումը պիտի լինի նոր շունչ եւ ոգի տալ այս թանկագին ժառանգութեան, ընտիր պաշտօնէութիւն պատրաստել, հօտի մէջ սէր եւ գիտակցութիւն զարթեցնել դէպի իւր հոգեւոր կեանքի եւ քաղաքակրթութեան մայրը, որպէսզի սա էլ, վերանորոգուած եւ զօրացած, աւելի արդիւնաւոր լինի այն սրբազան կոչմամբ, որ ստացել է իւր երկարատեւ պատմական կեանքով եւ Աւետարանի ներքին ազդեցութեամբ:

Այսպիսի իղձերով եւ ցանկութիւններով բարի գալուստ ենք մաղթում Հայ ժողովրդի հոգեւոր եւ աշխարհիկ ներկայացուցիչներին

եւ ցանկանում, որ Մայր Տաճարի սրբազան կամարների տակ մոռանան ամենայն մի անձնական եւ կուսակցական հաշիւ եւ առաջնորդուին միմիայն այս տառապեալ եւ բազմաչարչար Եկեղեցւոյ իսկական շահերով՝ ընտրելով նորա համար արժանաւոր պետ եւ հովիւ, որ առաջնորդէ մեզ դէպի լոյս եւ ցանկալի վերածնութիւն:

ԳԱՐԵԳԻՆ Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ
«Արարատ», փոկտեմբեր, 1908

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՄԷՋ

«Որ ոչ կամիցի գործել, եւ կերիցէ՛ մի» [Բ
Թեսաղ. Գ 10]:

Ա

Աւետարաններում աշխատութեան գաղափարը շատ յաճախ յեղյեղուած է Տիրոջ քարոզների եւ առակների մէջ: Բայց որովհետեւ այս գաղափարին վերաբերեալ առակներն ու խօսքերը ուղղակի կերպով մեր խնդրին չեն վերաբերում, այլ կարօտ են բացատրութիւնների, այդ պատճառով ներկայ խորհրդածութեան հետ չենք կապում: Տիրոջ կենդանի օրինակը բաւական ենք համարում՝ այդ մասին որոշ գաղափար ստանալու համար: Աւետարաններից յաճախ տեղեկութիւն ենք ստանում Տիրոջ եռանդուն գործունէութեան մասին. յիշենք միայն Մարկոսի երկու վկայութիւնը: Մարկ. Գ 20-22-ից տեղեկանում ենք, որ Տէրը իւր գործունէութեան մէջ մինչեւ իսկ հաց ուտելու ժամանակ չէր գտնում: Իւրայինները (ազգականները), Նորա եռանդը, դէպի իւր գործը ցոյց տուած անձնուիրութիւնը տեսնելով, կարծում էին, «թէ մոլեգնեալ իցէ»: Մարկ. Զ 31-32-ում պատմուած է, թէ Տէրը իւր աշակերտներով առանձնանում է անապատը, «զի էին բազումք, որ երթային եւ գային եւ հաց անգամ չժամանէին ուտել»: Այսպէս էր Յիսուս իւր փրկչական գործունէութեան մէջ:

Բայց աւելի պարզ աշխատանքի գաղափարը շեշտուած է Պողոսի թղթերի մէջ, թէպէտեւ միշտ պատահական կերպով՝ որեւէ խնդիր պարզելիս: Ընդհանրապէս, պէտք է ի նկատի ունենանք, որ Առաքելական բոլոր թղթերը պատահական պատճառներով գրուած նամակներ են: Առաքելներից ոչ ոք մտադիր չէ եղել համակարգութեամբ իւր վարդապետութիւնը գրի առնել: Այդպէս էլ աշխատանքի գաղափարի մասին լրիւ գրութիւններ չունինք, այլ հատ ու կտոր՝ ցրուած այս կամ այն թղթի մէջ: Համեմատաբար ամենից ընդարձակ աշխատանքի մասին առաքելալը խօսում է Բ Թեսաղ. Գ 6-15-ում: Այս հատուածի մէջ է եւ այն խօսքը, որ մեր ներկայ խորհրդածութեան համար քննարան ենք ընտրել. «Որ ոչ կամիցի գործել, եւ կերիցէ՛ մի»: Ըստ երեւոյթի, մի խիստ, անողոք խօսք, որ աւելի պատշաճ է քարասիրտներին, քան գթութեան եւ սիրոյ կրօնի առաքելալին: Սակայն այս խօսքի եւ ընդհանրապէս ամբողջ հատուածի իմաստը կը պարզուի այն ժամա-

նակ, երբ մի քանի խօսքով կշռենք այն հանգամանքները, որոնք առիթ են տուել առաքելին՝ այդ թուղթը գրելու:

Յայտնի է Առաքելական թղթերից, թէ նախկին քրիստոնեաները Տիրոջ երկրորդ Գալուստը շատ մօտ էին համարում, շատերը յոյս ունէին մինչեւ իսկ անձամբ տեսնել Նորան: Թեսաղոնիկէում յատկապէս չափազանցութեան էր հասել այս գաղափարը, եւ ոմանք մոլորութեան մէջ էին ընկել՝ քարոզելով, «թէ եկեալ հասեալ իցէ օր Տեսան»: Մինչեւ իսկ Պողոսի անունով մի կեղծ թուղթ էր երեւան հանուած, որ նոյն միտքն էր հաստատում: Այս գաղափարի ազդեցութեան տակ համայնքի մի քանի անդամներից կազմուել էր ստահակների մի խումբ, որ գործ չէր կատարում եւ դատարկաշրջիկ կեանք էր վարում: Առաքելալը, լաւ հասկանալով, որ դատարկաշրջիկ կեանքը մայր է ամենայն չարութեան եւ անբարոյականութեան, մանաւանդ՝ Թեսաղոնիկէի նման վաճառաչաւ եւ ծովափնեայ մի մեծ քաղաքում, առաջին թղթով փորձել էր վտանգի առաջն առնել: Բայց ոչ միայն ի զուր էր անցել առաքելի ջանքը, այլեւ մոլորութիւնն ու ստահակութիւնը աւելի եւս աճել էր. այդ պատճառով նա ստիպուած էր գրել իւր երկրորդ թուղթը՝ աւելի խիստ եւ պարզ յայտնելով իւր մտքերը: Առաքելի հոգու վիճակը պէտք է ի նկատի ունենանք՝ նորա խօսքերը լաւ հասկանալու համար:

Բ

Արդ, ի՞նչ մտքեր կարող ենք հանել վերեւ յիշուած հատուածից եւ, ընդհանրապէս, Պողոսի աշխատութեան մասին գրած խօսքերից:

Առաջին՝ որ աշխատանքը առաքելի քարոզութեան նիւթ է եղել նոյնիսկ Թեսաղոնիկեցիների մոլորութեան մէջ ընկնելուց առաջ, երբ քրիստոնէութիւնը նոր հաստատում էր նոցա մէջ: Նոյն միտքը արտայայտուած ենք տեսնում նաեւ Ա Թեսաղ. Դ 11-ում. «Աղաչեմ... հանդարտել եւ գործել զիւրաքանչիւր եւ գործել ձեռօք ձերովք, որպէս եւ պատուիրեցաք ձեզ»: Առանձին ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ առաքելալը Տիրոջ անունով է պատուիրում խորշիկ ստահակութիւնից. դորանով կամենում է ասել, որ աշխատանքի գաղափարը Աւետարանի քարոզութեան մի մասն է, եւ ինքն իւր կողմից չէ աւելացնում:

Երկրորդ՝ որ առաքելալն ինքն անձամբ աշխատութեան օրինակ է եղել նորահաստատ հաւատացեալների համար: Յիրաւի, Նոր Կտակարանի մէջ բազմաթիւ վկայութիւններ ունինք, որ առաքելալը վրանագործութեամբ վաստակում էր իւր հացը [Գործ. ԺԸ 3, Ի 34-

35, Ա Կորնթ. Դ 12, Ա Թեսաղ. Բ 9) Համայնքների վերայ չծանրանալու համար, թէեւ, իրբեւ առաքեալ, իրաւունք ունէր Համայնքի Հաշուով կերակրուելու, ինչպէս միւս առաքեալները [Ա Կորնթ. Թ 5-6]:

Երրորդ՝ որ քրիստոնեան պարտաւոր է իւր եւ իւրայինների հացը վաստակել: Ով խուսափում է աշխատանքից եւ իւրայինների մասին հոգալուց, այնպիսին նոյն է, թէ ուրանում է իւր հաւատը եւ մինչեւ իսկ վատթար է, քան անհաւատը [Ա Տիմոթ. Ե 8]:

Չորրորդ՝ քրիստոնեան չպէտք է ձանձրանայ իւր աշխատանքից բաժին հանել բարեգործութեան համար: Այս միտքը աւելի պարզ արտայայտուած է Եփես. Դ 28-ի մէջ. «Որ գողանայրն, մի՛ եւս գողասցի, այլ մանաւանդ վաստակեսցէ գործել ձեռք իւրովք զբարիս, զի բաւական իցէ տալ, ում պիտոյ իցէ»: Այստեղ արդէն աշխատանքի բարձրագոյն նպատակն է շեշտուած. աշխատանքը պէտք է, մեր ընտանեաց կարիքները լրացնելուց զատ, միջոց լինի բարիք գործելու: Այս վերջին գաղափարը յիշեցնում է մեզ Տիրոջ նշանաւոր առակներից մէկը՝ Անիրաւ տնտեսի առակը, որ իւր մի քանի դժուարութիւնների համար շատ մեկնաբանների տարակուսանքների մէջ է ձգել: Բայց որի միտքը ճշմարիտ աւետարանական է եւ արեւի լոյսի պէս պայծառ: Տիրոջ քարոզութեան համեմատ՝ մարդիկ Աստուծոյ տնտեսներ են այս աշխարհում իրենց կոչմամբ, իրենց հարստութեամբ: Երկրաւոր կեանքն ու բարիքը անցաւոր են, պէտք է խորագէտ լինենք՝ անցաւորից յաւիտենական բարիք եւ կեանք ստեղծելու:

Վերոյիշեալ կէտերից պարզ երեւում է, որ քրիստոնէութիւնը աշխատութեան վերայ երկու տեսակէտով է նայում. առաջին՝ որպէս արդար հաց վաստակելու միջոց. երկրորդ՝ որպէս բարոյական կրթութեան եւ բարոյական կատարելութեան միջոց:

Գ

«Քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո» [Մնունդ. Բ 15], սովորեցնում էր դեռեւս Հին Կտակարանը: Դորանով արդէն աշխատանքը մարդու համար որպէս աստուածային պատուէր էր նշանակուած: Ըստ երեւոյթին, այդ պատուէրը պատիժ էր մարդկութեան համար, բայց՝ ըստ երեւոյթին միայն, որովհետեւ աշխատութեան պարտաւորական պատուերը մարդկութեան ամենամեծ բարիքն էր, որ Աստուած նշանակել էր նորա համար: Աշխատութիւնը գոյութեան արմատն է. ապրել կարող է այն անհատը, այն հաստատութիւնը եւ ժողովուրդը, որոնք յարատեւ եւ հետեւողաբար աշխատել զիտեն: Քրիստոնէութեան համար առանց խտրութեան ամենայն արդար

աշխատանք սուրբ է. բարոյական տեսակէտով հաւասարապէս նուիրական է կոչկակարի, երկրագործի, ուսուցչի եւ գիտնականի կոչումը, եթէ ամէն մէկը իւր կոչման մէջ արդարութեան սկզբունքներով է առաջնորդուած: «Իւրաքանչիւր յոր կոչումն կոչեցաւ, եղբա՛րք, ի նմին կացցէ առաջի Աստուծոյ». առաքեալի այս խօսքերը ցոյց են տալիս, որ քրիստոնէութիւնը ինչպէս ազգութեան եւ անհատի վերայ, այնպէս էլ աշխատութեան զանազան տեսակների վերայ հաւասար աչքով է նայում, միայն բոլորի համար էլ պէտք է կարող լինինք Աստուծոյ դատաստանի առաջ պարզերես հաշիւ տալ: Քրիստոնէութիւնը մեր անձնական հակումների առաջ արգելք չէ դնում մեր ցանկացած կոչումն ընտրել. եթէ մէկը կամենայ կոչկակար լինել եւ ոչ երկրագործ, միւսը կամենայ ուսուցիչ լինել եւ ոչ դերձակ, այդ միեւնոյն է, բայց որեւէ աշխատանք կոչում ընտրելուց յետոյ սրբութեամբ պէտք է ընթանանք ընտրած կոչման մէջ: Աշխատանքն անարգել՝ նշանակում է բարոյապէս տհաս լինել: Աշխատանքը ոչ միայն մեզ հաց է տալիս, այլեւ՝ առողջութիւն, հոգու զուարթութիւն: Աշխատանքը մի մեծ զօրութիւն է, բայց ինքնըստինքեան յաւիտենական բարիք չէ, եւ նոյնիսկ ամենայն աշխատանք համակրելի եւ բարոյական չէ: Պարզեք մեր միտքը:

Մենք տեսանք, որ քրիստոնէութեան մէջ աշխատութիւնը առաքելական քարոզութեան մի մասն էր կազմում եւ պարտաւորեցուցիչ՝ յանուն Յիսուսի Քրիստոսի, բայց ամէն աշխատանքի համար նոյնն ասել չենք կարող: Աշխատանքը սրբազան բնաւորութիւն է ստանում, երբ բարոյական շարժառիթներով է կատարւում եւ յաւիտենական բարիք ձեռք բերելու միջոց դառնում: «Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ», - ասել է Տէրը եւ դորանով աշխատութեան ճշմարիտ արժէքը գնահատել: Աշխատանքը կեանքի բարձրագոյն ազբիւրը չէ եւ ինքնըստինքեան մարդկութեան նպատակ լինել չէ կարող: Աւելին կ'ասենք. քաղաքակրթութիւն, գիտութիւն, արուեստ աշխատանքի պտուղներ են, բայց նոյնիսկ այդ քաղցր պտուղները անօգուտ են եւ մարդկային հոգու համար վերջնական նպատակ լինելուց՝ շատ հեռու, եթէ դէպի բարձրագոյն՝ յաւիտենականութեան գաղափարը չեն ուղղուած: Ընթերցողներին յիշեցնում ենք Տառուտի հոգու վիճակը՝ մեր միտքը կարճ եւ կտրուկ կերպով հասկանալի անելու համար. աշխատանքով կարելի է ամենամեծ գիտնականը դառնալ եւ ամենահարուստ մարդը, բայց միեւնոյն ժամանակ՝ ամենից դժբախտը մնալով: Առանց բարոյական սկզբունքների աշխատանքը ոչ միայն կեանքի բարձրագոյն բարիք չէ, այլեւ վնասակար է: Անբարոյականութիւնը

միմիայն սեռական թերութիւնը չէ, այլեւ՝ այն «աշխատանքը», որ կործանում է ընտանեկան, հասարակային, հոգեւոր, բարոյական կեանքը:

Դրական մի գորութիւն կայ միայն, որ աշխատանքը նուիրագործում է, կեանքին բովանդակութիւն տալիս. այդ սէրն է՝ սէր դէպի Աստուած, որ եւ նոյն է՝ դէպի ընկերը: Այն աշխատանքը, որ սիրոյ շարժառիթներով չէ ընթանում, քրիստոնեայի համար բարիք, նուիրական լինել չէ կարող, որովհետեւ սիրոյ շարժառիթներից գուրկ աշխատանքը դէպի ագահութիւն եւ արծաթսիրութիւն է տանում, որ ամենայն չարեաց արմատն է [Ա Տիմոթ. 2 10]: Սիրոյ շարժառիթներից գուրկ աշխատութեան վերջնական նպատակը նիւթն է միայն, այնինչ մարդու հոգեւոր կոչումն է իշխել նիւթի եւ մարմնաւորի վերայ: Այն անձնաւորութիւնը, որ աշխատանքի վերջնական նպատակը միայն արծաթն է համարում, վաստակելու ժամանակ էլ միջոցների մէջ խտրութիւն չի դնում: Արծաթսիրութեան հնագոյն պտուղը վաշխն է, որի դէմ մաքառելու համար եկեղեցական հայրերը մեծ ջանք պիտի գործ դնէին: Եկեղեցու նշանաւորագոյն հայրերը՝ Եփրեմ Ասորի, Գրիգոր Աստուածաբան, Ոսկեբերան եւ Յոհան Մանդակունի, ճառեր ունին վաշխառութեան դէմ: Դարերով քրիստոնէական եկեղեցու մէջ քարոզի նիւթ է եղել վաշխի չարաչար գործածութիւնը: Ընդարձակ իմաստով՝ վաշխառութիւնը միայն մեծ տոկոսներով ուրիշին պատու տալը չէ: վաշխառու կարելի է լինել կեանքի ամէն պայմաններում, երբ եսականը, նիւթականը բարձր համարենք արդարութեան տեսակէտից: Եսական արգելուած չէ, մեր պարտաւորութեանն է խորագէտ լինել՝ հոգալով ծերութեան, մեր որդոց դաստիարակութեան եւ ապագայի մասին, բայց չմոռանալով երբէք արդարութեան կշիռը: Աշխատանքը պէտք է բարիք լինի աշխատողի եւ շրջապատող հասարակութեան համար: Մենք առանձնապէս շեշտեցինք արծաթսիրութեան մի երեւոյթը՝ վաշխառութիւնը, որովհետեւ այժմ էլ մեր ժողովրդական կեանքի, յատկապէս գիւղական կեանքի չարիքներից մէկն է: Ցաւօք սրտի պէտք է արձանագրենք, որ նոյնիսկ մեր քահանաներից շատերը մասնակից են այդ մեղքին: Վաշխառութեան մէջ մեծ դեր է խաղում յատկապէս ցորենը: Սակայն չհեռանանք բուն խնդրից, թէեւ այս հարցն էլ կարեւոր է եւ արժանի առանձին խորհրդածութեան:

Դ

Այսպէս ուրեմն, աշխատանքը ինքնըստինքեան բարիք չէ, նա կարող է մինչեւ իսկ մեծամեծ չարեաց, կեղեքման եւ թշուառութեան

պատճառ լինել, եթէ սիրոյ եւ բարոյականութեան հիմունքների վերայ չէ հաստատուած: Աշխատանքը նուիրական է, երբ Աւետարանի (Տեսեսի առակը) եւ Առաքելական թղթերի բարոյական տեսակէտներով է կատարուում: Այդպիսի աշխատանքը մարդկութեան համար Աստուծոյ օրհնութիւն է եւ բարոյական կրթութեան միջոց: Աշխատանքով մինչեւ իսկ սահմանափակում է մարդու ամենամեծ թշնամու՝ մեղքի գորութիւնը. պարպա եւ դատարկաշրջիկ մարդը աւելի հակուած է ամէն տեսակ անբարոյական եւ մեղաւոր փորձանքների մէջ ընկնելու, քան ջանասէր եւ աշխատութեան վարժ անձը: Մարմինը ճնշելու եւ հոգեւորը զօրացնելու արդար եւ արգասալից միջոցը աշխատանքն է:

Այս խօսքը վերաբերում է ոչ միայն եկեղեցու սպասաւորներին, այլեւ՝ բոլոր քրիստոնեայ, աշխարհիկ մարդկանց: Կար ժամանակ, որ այդ նպատակին հասնելու միակ միջոցը ճշնողական խիստ կեանքն էր համարուում. մարդիկ, կեանքի մէջ իրենց որոնած սրբութիւնը չգտնելով, հեռանում էին անապատը՝ այնտեղ իրենց հոգու խաղաղութիւնը պահպանելու: Բացատրութեան կարօտ չենք համարում, որ ներկայի համար այդ հայեացքը միակողմանի է: Ճշնողական (ոչ անապատական) գաղափարի մէջ այն ճշմարտութիւնը կայ, որ դորանով կրթում ենք մեր կամքը, առանց որին անընդունակ կը լինենք բարոյական սկզբունքների աշակերտ լինելու: Շոպենհաուէրը մեծ փիլիսոփան քրիստոնէութեան արժէքը այդ տեսակէտով է միայն գնահատում: Բայց չափազանց ճշնողականութիւնը նոյնպէս մոլորութիւն է, ինչպէս ամէն մի չափազանցութիւն ընդհանրապէս: Մենք պէտք է հասարակութեան մէջ եւ հասարակութեան համար ապրենք, որպէսզի ամենամեծ պատուէրը՝ սիրոյ պատուէրն իրագործել կարողանանք: Կամքի կրթութեան, հոգեւորը զօրացնելու եւ մարմնաւորը ճնշելու լաւագոյն եւ արդար ճանապարհն աշխատութիւնն է:

Բարոյական եւ սիրոյ շարժառիթներով կատարուած աշխատանքը Աստուծոյ օրհնութեան ամենամեծ աղբիւրն է: Այնտեղից են բղխում քաղաքակրթութիւն, գիտութիւն, արուեստ, գործնական արհեստներ, ճանապարհների հաղորդակցութիւն, վաճառականութիւն, բարեգործական եւ ուսումնական հաստատութիւնները: Մի խօսքով՝ մարդկային յառաջադիմութեան, բարոյական կատարելութեան խթանն ու միջոցը աշխատանքն է, բայց՝ քրիստոնէական մտքով աշխատանքը: Մեր ընտանիքի հացը վաստակելու լինենք, թէ միլիոնների հետ խաղանք, միշտ նոյն սկզբունքն է, որ աշխատանքը բարոյական բարիք է դարձնում: Եթէ մեր վաճառաշահ քաղաքների գործարանական եւ բանուորական կեանքը աչքի առաջ ունենայինք, գուցէ աւելի թանձ-

րացեալ եւ կենդանի կերպով կարողանայինք քրիստոնէական աշխատանքի գաղափարը պարզել. բայց մեր նպատակն է միայն քրիստոնէական սկզբունքը շօշափել՝ առանց կեանքի մանրամասնութիւնների մէջ մտնելու:

Ե

Շատերի համար գուցէ զարմանալի լինի, որ բարոյական աշխատանքը մենք քրիստոնէութեան անուան հետ ենք կապում: Մի՞թէ քրիստոնէութիւնից առաջ աշխատանք չկար:

Աշխատանքը հին է այնքան, որքան հին է մարդկութիւնը. բայց դրականապէս կարող ենք ասել, որ աշխատանքը սրբուել եւ բարոյական գաղափար է դարձել միմիայն քրիստոնէութեան մէջ: Այս խօսքի ճշմարտութիւնը հասկանալի կը լինի այն անձնաւորութիւնների համար, որոնց յայտնի է Յուճաստանի եւ Հռոմի անկման պատմութիւնը եւ այն ժամանակուայ այս երկու քաղաքակիրթ հեթանոս ազգերի հայեացքը աշխատանքի մասին: Տեղի սղութեան պատճառով մենք միայն մի քանի խօսքով կարող ենք նկարագրել այդ (ով կամենում է փոքր-ինչ աւելի ընդարձակ գաղափար ստանալ այս մասին, յանձնարարում ենք կարդալ Մոմզէնի «Հռոմի պատմութիւնը»): Աթէնքում եւ Հռոմում ժողովուրդը նպաստ էր ստանում պետութիւնից, յատկապէս Հռոմի քաղաքացիք բաժին էին ստանում պատերազմական աւարներից, ցորեն էին ստանում պետական շտեմարաններից, ձրի զուարճութիւն, խնջոյքներ, նոյնիսկ դրամական նուէրներ՝ զօրապետների յաղթական վերադարձի կամ կայսերական հանդէսների ժամանակ: Այսպիսով, ազատ քաղաքացիք հետզհետէ սովորեցին ձրիակերութեան եւ խուսափում էին աշխատանքից: Հռոմէական սենատորների կամ ազնուականների կլիենտները թափառում էին փողոցներում կամ հետեւում իրենց տիրոջն ատրիում գնալիս: Բայց ամենամեծ չարիքը այս տեսակէտից ստրկութեան գոյութիւնն էր. աշխատանքը վայել էր ստրկին եւ ոչ՝ ազատ, մանաւանդ ազնուական եւ հարուստ քաղաքացուն: Պողաւէտ Իտալիան, Հիւսիսային Աֆրիկայի շատ մասերը քրիստոնէութեան ծագման ժամանակ ծածկուած էին գեղեցիկ եւ ընդարձակ պարտէզներով, երէններով լի անտառներով, զարդարուած արհեստական մեծ լճերով, ծաղկանոցներով, ապարանքներով... շատ քչերի զուարճութեան ծառայելու համար: Բնականաբար, սենատորների ընդարձակ կալուածներում, ամարանոցի պարտէզներում աշխատում էին ստրուկները, այն էլ՝ ոչ այնքան Հողն արդիւնաւորելու, որքան իրենց տիրոջ շռայլութիւնների

եւ զուարճութիւնների համար: Վաճառականութիւնը, արհեստները, նոյնիսկ երկրագործութեան մնացորդները ստրուկների ձեռքն էին: Աշխատանքն անվայել էր ազատ քաղաքացուն, ազնուատու մարդկանց, որոնք պէտք է խնջոյքներով, փիլիսոփայութեամբ, քաղաքական պաշտօններով զբաղուէին: Ազատ արհեստաւոր քաղաքացին հարուստ ստրկատիրոջ հետ մաքառել չէր կարող, եւ այդպիսի արհեստաւորն էլ նոյնչափ միայն յարգ ունէր, որքան ստրուկը: Այսպիսի հասարակութեան մէջ աշխատանքը բարոյական գաղափար լինել չէր կարող: Դրամի, հարստութեան սէրը դրանով, իհարկէ, ամենեւին չէր սահմանափակոււմ, ընդհակառակը՝ ազահուրիւնը, առանց միջոցների խտրութեան հարստանալու տենչը յատուկ է այն անձնաւորութեան եւ այն հասարակութեան, որ չի սիրում իւր երեսի քրտինքով հաց վաստակել: Արդարեւ, ոչ մի տեղ վաշխառութիւնը այնպիսի չարիք չէ գործել, ինչպէս հին Հռոմում: Մայրաքաղաքի օրինակին էին հետեւում ըստ ամենայնի պետութեան բոլոր մեծ քաղաքները՝ Ադեքսանդրիա, Անտիոք եւ այլն: Ահա այսպիսի հասարակութեան մէջ հնչում է քրիստոնէութեան բարոյական քարոզը աշխատանքի մասին: Ինչպիսի՞ նորութիւն եւ ինչպիսի՞ կենդանարար զօրութիւն էր այս քարոզը՝ ցոյց է տալիս մեզ պատմութիւնը:

Զ

Քրիստոնէական եկեղեցու պատմութեան մէջ կարմիր թելի նման անցնում է աշխատանքի բարոյական այս քարոզը: Առաքեալի խօսքերի համաձայն՝ աշխատութիւն եւ բարեգործութիւն զուգընթաց են եկեղեցու պատմութեան մէջ: Հռոմէական պետութեան մէջ ազատ, բարոյական աշխատանք չկար, ուստի եւ բարեգործութիւն չկար՝ Աւետարանի մտքով: Մենք առիթ ենք ունեցել «Եկեղեցի եւ աղքատների խնամատարութիւն» վերնագրով յօդուածների մէջ նկարագրել հեթանոսական «բարեգործութեան»՝ բարոյականութիւնից զուրկ կողմերը: Քրիստոնէական բարեգործութիւնն ու աշխատութիւնը սկսուել է նոր կրօնի ծագման հետ, բայց իւր զարգացման բարձրագոյն աստիճանին հասել է վանականութեան մէջ, այնտեղ էլ հիմնուել ճշմարիտ աշխատասիրութեան դպրոցը, ուր աշխատել սովորեցին քրիստոնէութեան բարերար ազգեցուցեան ենթարկուած ազգերը: Իմ խօսքը ճգնաւորութեան, անապատականութեան մասին չէ, որ չափազանց ծայրայեղ բնաւորութիւն էր ստացել պատմական Հանգամանքների պատճառով: Վանականութեան կանոնների մէջ շատ կարեւոր տեղ է բռնում աշխատանքի գաղափարը. իսկ նախկին վանականութեան մէջ ինչ որ կանոն էր, այն էլ իրագործուում էր կեանքի մէջ: Բարսեղ

«Եկալք շինեսցո՛ւք սուրբ զխորանն
Լուսոյ»:

(շարական)

Կեսարացու եւ նորան Հետեւող անձանց Հանճարը լաւ ըմբռնել էր բարոյական այն վտանգը, որ առանց դրական եւ կանոնաւոր աշխատանքի ծագել կարող էր միայնակեացներից կազմուած միաբանութեան մէջ: Պարապուծութիւնը վանականին դէպի բարոյական անդունդ կարող է առաջնորդել, ուստի եւ այնպիսի կազմակերպութիւն էին տուել վանականութեան, որ դէպի կեանք եւ փրկութիւն տանէր: Վանականը ոչ միայն իւր հացը պիտի վաստակէր, այլեւ թշուառներին, կոյրերին, որբերին, աշխատելու անընդունակ եղբայրներին օգնելու միջոց ունենար: Աշխատանքը սկսուած էր աղօթքով եւ սաղմոսերգութիւններով, իւրաքանչիւրն աշխատում էր, ինչի ընդունակ էր, կամ ինչպէս վանահայրն էր կարգադրում, նոքա զբաղւում էին արհեստներով, երկրագործութեամբ, պարտիզպանութեամբ, գրական վաստակներով, արուեստներով, քարոզութեամբ, հիւանդների եւ աղքատների խնամատարութեամբ, որբերի կրթութեամբ եւ այլն: Բարսեղ Կեսարացու կանոններն անցնում են եւ Հայաստան: Հայոց վանքերում եւս ծաղկում է քաղաքակրթութիւնն ու բարեգործութիւնը, ինչպէս ուրիշ երկրներում: Մուսլ գաղափարներից ազատ չէ ո՛չ ասորա-յուսական եւ ո՛չ մեր վանականութիւնը, բայց այնքան մեծ, այնքան զնահատելի է նորա արդիւնքը, որ մենք աստուածային օրհնութիւն ենք համարում այդ երեւոյթը պատմութեան մէջ:

Ինչ որ ասացինք արեւելեան ազգերի վանականութեան մասին, նոյնը աւելի մեծ չափով կարող ենք ասել արեւմտեանի մասին: Այստեղ վանականութիւնը աշխատասիրութեան ճշմարիտ դպրոց է դառնում արեւմտեան կիսակիրթ ազգերի համար: Ծահիճներ չորացնելու, ճանապարհներ եւ կամուրջներ շինելու, բանուոր երկրագործութեան, արհեստների եւ արուեստների, գիտութեան առաջին ուսուցիչները գալլերի եւ գերմանական ցեղերի համար վանականներն են եղել:

Թող Հայ ժողովրդի բոլոր դասի սրտում անջինջ դրոշմուկն առաքեալի խօսքերը.

«Որ ոչ կամիցի գործել, եւ կերիցէ՛ մի»:

«Մի՛ ձանձրանայք զբարիս գործել»:

ԳԱՐԵԳԻՆ Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ
«Արարատ», ԺԲ, 1900

Մեր բախտի անիւը այսօր մի տարօրինակ շրջան է կատարում: Մեզ թւում է, թէ մի կործանիչ ոյժ իւր զօրութեան ազդեցութիւնն է տարածում մեր բովանդակ կեանքի ամէն մի շրջանի վերայ, եւ թէ մենք արիւնով ներկուած վերջալոյսի ականատես մի սերունդ ենք, որ արեւի վերջին ճառագայթների հետ պէտք է մայր մտնեն եւ մեր յուսոյ վերջին նշոյլները:

Բայց ահա մեր ականջին հնչում են սրբազան երգչի խօսքերը՝ «էջ Միածինն ի Հօրէ, եւ Լոյս փառաց ընդ Նմա», եւ մեր միտքը սլանում է դէպի այն երջանիկ ժամանակը, որի համար երգուած են այս նուիրական տողերը: Մեր հոգու առաջ կենդանանում է Հայի հոգեւոր վերածնութեան սկիզբը՝ Լուսաւորչի հսկայ անձնաւորութիւնը իւր կենսաբեր գործունէութեամբ եւ հետեւանքներով: Նա անձեռագործ մի արձան կանգնեց՝ աւելի տեւական եւ աւելի խօսուն, քան պղինձն ու երկաթը, բայց եւ այդ անձեռագործ արձանի յայտարար հիմնեց այն անշուք շէնքը, որը, սակայն, Հայի վերածնութեան աւագանն է եղել դարէ ի դար: Դարեր են եկել, դարեր անցել, բայց նա հաստատուն խարիսխ է մնացել մեր գոյութեան համար: Նա, իբրեւ կենդանի վկայ, ականատես է եղել իւր որդւոց գլխին հասած անլուր աղէտներին եւ, իբրեւ զթառատ մայր, մխիթարութեան եւ սփոփանքի աղբիւրներ է հոսեցրել նոցա սրտի մէջ: Շատ անգթութիւններ եւ աւերումներ է տեսել նա, բայց ամէն անգամ էլ վերակենդանութեան յոյս ներշնչել յուսահատ սրտերի մէջ: Այսօր եւս, երբ մեր մտքի առաջ պտտող պատկերները հազարաւոր Հայերի յօշոտուած դիակներն են, երբ մերկ, սովալլուկ որբերն ու այրիները, կանայք եւ տղամարդիկ, հեռու իրենց սրբազան երկրից, օտարի, աւելի լաւ ասած՝ մահուան դռներն են բաղխում, եւ երբ Հայրենիքի եւ Եկեղեցու փլատակների փոշին ամէն կողմից վեր է բարձրանում, սրբազան երգչի խօսքերը յիշեցնում են մեզ, որ դեռեւս ամէն ինչ կորած չէ, թէ դեռեւս կանգուն է Հայութեան Լուսոյ խորան, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Քաղցր եւ նուիրական անուն...

Ե՞րբ է եղել Հայի օրը այնպէս սեւ, ինչպէս այժմ. ե՞րբ է եղել նորա ապագան աւելի մուսլ եւ յուսահատ, քան այժմ: Բայց այսօր

եւս Մայր Տաճարի սրբազան կամարների տակ հնչում է Լուսաւորչի քարոզը. «Եկայք շինեսցո՛ւք սուրբ զԽորանն Լուսոյ»: Ինչպէ՛ս խորհրդաւոր է հնչում այդ կոչը, երբ հոգեւոր եւ բարոյական աւերակները մէկմէկու տեղի են տալիս:

Սրբազան երգիչը, հիմնուելով Լուսաւորչի տեսիլքի վերայ, այս հաստատութիւնը «Լուսոյ Խորան» է անուանում: Դորանով որոշուած է եւ նորա կոչումը: Նա հիմնուած էր՝ հոգեւոր դաստիարակութեան մայր լինելու, նորանից պիտի բղխէին Աւետարանի լուսոյ ճառագայթները՝ հայութեան սրտի խորքերը լուսաւորելու: Անցեալից գիտենք մենք, որ նա հաւատարիմ է մնացել այդ կոչման: Եկեղեցին հայութեան հոգեւոր քաղաքակրթութեան լուսաւորութեան փարոսն է եղել միշտ: Հայի հոգեւոր եւ մտաւոր շարժման արգիւնքները, համարեայ առանց բացառութեան, Լուսոյ Խորանի աղբիւրներից են բղխել: Գիր, մատենագրութիւն, սրբազան արուեստ եւ հոգեւոր կեանք՝ այս բոլորը մեր Եկեղեցու շնորհն է, որ մենք վայելելու բախտ ունինք: Նա մեր հոգեւոր վերածնութեան օրօրանն է եղել, երբ խաւարն ու մահը մեզ կլանել են սպառնացել:

Այսօր եւս, երբ Լուսաւորչի հոգին մեր Եկեղեցու աւերակների վերայից վերաշինութեան հրաւէր է կարգում, մենք ուրիշ ճանապարհ չունինք ընտրելու, բայց եթէ՛ կրօնական, հոգեւոր վերածնութեան ճանապարհը: Ազգերի վերակենդանութեան ճշմարիտ ճանապարհը կրօնական վերակենդանութեան ճանապարհն է: Փրկչի խօսքը՝ «Եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւնն Աստուծոյ», կարելի է եւ ազգերին ուղղել: Կրօնն է ճշմարիտ կեանքի աղբիւրը*, ուրեմն եւ կրօնական վերածնութիւնը՝ մի նոր եւ ճշմարիտ կեանքի սկիզբ: Մեր ներկայ կեանքը լի է վէրքերով: Մեր կեանքը լի է հիւանդ երեւոյթներով, որոնք իրենց կողմից ամենաձանր հետեւանքներ են յառաջ բերում: Հոգեւոր են այդ վէրքերը, հոգեւոր զէնքերով էլ պէտք է դռքա ապաքինուին:

Մենք մի մեծ մարտ ունինք խաւարի կործանիչ ոյժի դէմ, ուստի եւ մեզ զէնք է պէտք՝ ոչ մետաղից, այլ՝ Աստուծոյ Հոգւով կուած: Նա աւելի սուր է եւ կտրուկ, քան երկաթն ու պողպատը: Ժամանակը ծանր է եւ լուրջ, իսկ մենք թեթեւ ենք եւ անհեռատես. ժամանակը հիմնաւորութիւն է պահանջում եւ գործ, իսկ մենք օդային ամրոցներ ենք կառուցանում եւ բաւեր արտասանում: Մեր անկեղծ համոզմամբ՝ ճշմարիտ վերակենդանութեան աղբիւրը կրօնական վերածնութեան

մէջ պէտք է որոնել: Մեր Եկեղեցին պէտք է աւելի բարոյական ոյժ, կենսատու զօրութիւն ունենայ, եթէ մենք յուսալից մի նոր կեանք սկսել ենք կամենում:

Արդ, Մայր Աթոռն է այն կեդրոնը, որտեղից հայութեան համար հոգեւոր, կրօնական կեանքի մի նոր հոսանք պիտի սկսուի. «Ի Սիոնէ ելցեն Օրէնք»: Այստեղ է հաստատուած Լուսաւորչի՝ Հայաստանեայց վերածնութեան հօր սուրբ գաւազանը, որ նորա հօտին միշտ ի փրկութիւն է հովուել: Այստեղ եւս պէտք է նորա հոգին, որ հայի վերածնութեան սկզբնաւորութեան առիթն է եղել, միշտ կենդանի եւ միշտ գործունեայ մնայ: Նոյն հոգին եւ այսօր սրբազան երգչի բերանով Մայր Աթոռի միաբանութեանն է ուղղում իւր հրաւէրը. «Եկայք շինեսցո՛ւք սուրբ զԽորանն Լուսոյ»:

«Արարատ», յունիս, 1897

* Տե՛ս Լք. եր. 179, «Կրօնի կենսատու զօրութիւնը»:



ՓՐԿՈՒԹԵԱՆ ՆԱԻԸ ԵՒ ՆԱԻԱՊԵՏԸ

«Նաւապետ քարի, առ Քեզ ապաւիտիմք,
տո՛ր ինձ ձեռն, որպէս երբեմն Պետրոսից
վերայ այնացն»:

(շարական)

Ա

Հաւատացեալ ժողովուրդ, Աւետարանի մէջ մի հրաշալի պատմութիւն կայ [Մատթ. ԺԴ 22-23] Հաւատացեալի աչքում խորապէս յուզիչ եւ իմաստալից, իսկ անհաւատի կամ մակերես մտածողի համար՝ մի անարժէք առասպել:

Յիսուս հինգ նկանակով եւ երկու ձկնով հինգ հազարին կերակրելուց յետոյ պատուիրում է աշակերտներին նաւ նստել եւ միւս ափն անցնել, մինչեւ ինքը ժողովրդին կ'արձակէ: Ապա բարձրանում է Նա լեռան գլուխը՝ առանձնութեան մէջ աղօթելու: Աշակերտները ափից բաւական հեռու գիշերուայ շորս ժամին, մեր ներկայ հասկացողութեամբ՝ մօտաւորապէս տասը ժամին, տեսնում են, որ մէկը ջրի վերայով դէպի իրենց է գալիս: Զարհուրում են՝ «առ աչօք», դիւական մի բան համարելով, ուստի եւ աղաղակում են երկիւղից: Յիսուս պատասխանում է. «Քաջալերացարո՛ւք, ես եմ, մի՛ երկնչիք»: Պետրոսը, լսելով ձայնը, խնդրում է. եթէ Դու ես, թո՛յլ տուր ջրի վերայով դէպի Քեզ գալ: Եւ մինչդեռ առաջ էր գնում, տեսնելով փոթորիկի սաստկութիւնը՝ զարհուրում է եւ սկսում ընկղմուիլ՝ աղաղակելով. «Տէ՛ր, փրկի՛ր ինձ»: Յիսուս բռնում է նորա ձեռքից, յանդիմանում նորա երկմտութիւնն ու թերահաւատութիւնը: Նաւի մէջ մտնելուց յետոյ դադարում է փոթորիկը, եւ դուրս են գալիս նաւահանգիստը՝ Գեննեսարէթ:

* * *

Ինչքան հրաշալի է եւ իմաստալից այս պատկերաւոր պատմութիւնը: Կարելի է ասել՝ այստեղ մարմնաւորուած է մարդկային մեղաւոր կեանքը ծովի եւ ալեկոծութեան պատկերով, որի մէջ խորասուզուելուց միայն աստուածային ձեռքի օգնութեամբ կարելի է ազատուիլ: Կրօնական ապրումներն ու գաղափարներն էլ իրենց արտայայտութեան լեզուն ունին, կերպերն ու ձեւերը, ինչպէս հոգեկան կեանքի այլ երեւոյթները: Այլ է ճարտարապետի եւ այլ՝ նկարչի,

Բ

այլ է արձանագործի եւ այլ՝ երաժշտի նիւթն ու միջոցները՝ իւր ներքին յոյզերն ու ապրումները, մտքի թռիչքներն ու գաղափարները արտայայտելու եւ ձեւակերպելու: Այսպէս էլ կրօնին յատուկ է հրաշալի պատկերներով եւ պատմումներով ճշմարտութիւնները մատչելի դարձնել հոգիներին:

Հին Կտակարանի մէջ ջրհեղեղի պատմութիւնը մէկն է այդպիսի հրաշապատմումներից, որով այն միտքն է արտայայտուած, թէ հոգևով եւ կեանքով ապականուած, մեղքի ծովի մէջ թաւալող մարդկութիւնը դատապարտուած է կորստեան: Այս մի մեծ ճշմարտութիւն է՝ մարդկային կեանքի փորձառութեան եւ պատմութեան վերայ հաստատուած: Ամենամեծ, հզօր ազգերն իսկ կործանուում են, երբ բարոյական անկումն է սկսում տիրապետել նրանց կեանքի մէջ, երբ զեղխութիւնն ու շուայտութիւնը, մտքի եւ հոգու անառակութիւնը, ագահութիւնն ու անարդարութիւնն են դառնում կեանքի նշանակն ու զեկավարող սկզբունքը: Հաստարմատ եւ հաստարուն, դէպի երկինք բարձրացող կաղնին ինքն իրեն, դիւրութեամբ է տապալուում, երբ փթում են արմատները, եւ որդերը բուն շինում այնտեղ:

Բայց նոյն ջրհեղեղի պատմութիւնը ցոյց է տալիս, թէ համատարած ծովից ազատուելու համար փրկութեան տապանն էլ կայ: Սուրբ Գրքի պատկերազրուութեան մէջ ջրհեղեղի պատմութիւնը նիւթ է դարձել նկարչութեան: Այսպիսի մի վսեմ եւ գաղափարական նիւթ էլ էր կարող վրիպել նկարիչների ու շաղկապիչներից: Պատկերի կեդրոնն է մի նաւ, բազմատեսակ թռչունները ճախրում են երկնքում նաւի գլխին եւ հետզհետէ ներս են մտնում: Իսկ կենդանիները զոյգ-զոյգ կամըջակի վերայով սկսել են դէպի նաւը բարձրանալ: Նոյի որդիքն ու հարսները, բեռները շալակած կամ ուսներին, դէպի նաւն են գնում: Ամենից վերջը Նոյն է իւր կնոջ հետ՝ ձեռքը դէպի փրկութեան տապանը մեկնած, որ նկարուած է եկեղեցու ձեւով, որովհետեւ այդպէս են հասկացել եւ մեկնել եկեղեցու հայրերը: Հաւատացեալ մարդկութեան փրկութեան տապանը եկեղեցին է՝ իւր վարդապետութեամբ, իւր խորհուրդներով եւ գործնական կեանքով:

Գ

Նոյն իմաստն ունի վերեւ մէջբերուած աւետարանական պատմութիւնը, բայց՝ աւելի պարզ, հասկանալի, պատկերաւոր եւ անհատական անձի հետ կապուած: «Աշխարհս էր ի ծով նման», երգել է

ԺԳ դարի բանաստեղծ ինչպես և ուրիշները. ծովի ալիքները կամենում են նրան ներս քաշել և կլանել: «Աշխարհ» ասելով կեանքն է հասկանում, կեանքը՝ իւր բացասական և մեղաւոր կողմերով, որ ծովի նման ներս է քաշում մարդուն: Ճանապարհորդն էլ էք ծովով, տեսն՝ էք լեռնանման ալիքները ինչպէս հետեւում են մէկը միւսին՝ անդունդներ բանալով անջրպետի մէջ: Ի՞նչ կը լինէր մարդու վիճակը այդպիսի ասեղ ալիքների մէջ առանց ամրակուռ շոգենաւի, որ ընթանում է անվտանգ դէպի իւր նպատակը: Բայց ոչ միայն այդպիսի փոթորկի ժամանակ, այլ նոյնիսկ խաղաղ և միայն զեփուկից ծփացող, բայց անյատակ խորութեամբ ջրերի վերայ նորան միայն մահն է սպասում առանց փրկութեան նաւի: Լողանալու մէջ ձեռք բերած վարժութիւնն ու ճարպկութիւնն էլ միայն կարճ ժամանակ կարող են մեզ օգտակար լինել: Մենք պէտք ունենք օգնութեան, պէտք ունենք նաւի և նաւապետի, եթէ ծովի ալիքներից անվտանգ դէպի անքոյթ նաւահանգիստ հասնել ենք կամենում: Անձնական ուժերով ծովի ալիքները կտրել չենք կարող:

Այսպէս է հաւատացեալի, ներքին փրկութեան տենչով ապրող անձի հոգեբանութիւնը՝ «մեղքի» գիտակցութիւնը իւր հոգու մէջ և անկարողութիւնը ինքն իւր ուժերով ազատուելու նորա շղթաներից: Պօղոս առաքեալի նման մարդը՝ զօրեղ իւր կամքով, հզօր իւր մտքով, անսպառ իւր եռանդով, խոր սիրով դէպի իւր գործը, առաքելութիւնը, երբ խորասուզում է իւր ներքին աշխարհը, վերլուծութեան ենթարկում այնտեղ կատարուող հակասական, իրար մերժող ելեւէջները, բարւոյ և չարի հակամարտութիւնը [Հռոմ. է 13-25], զգում է իւր խեղճութիւնը և սրտի խորքից բացականչում է. «Այր մի տառապեալ եմ ես, ո՞վ կարէ ապրեցուցանել զիս ի մարմնոյ աստի մահու»:

Պէտք է իմանալ, որ այստեղ առաքեալը «մարմին» ասելով մեր արտաքին մարմինը չի հասկանում, այլ՝ մեր հոգու բացասական յատկութիւնների գումարը, բարձրագոյն ձգտումների, «այոն՝ այո և ոչն՝ ոչ»-ով ապրելու հակադրութիւնները: Այսպիսի վերլուծութեան ենթարկելուց յետոյ իւր ներքին աշխարհը՝ այդ հզօր, հերոսական բարձրութեան վերայ կանգնած մարդը իրեն զգում է տկար և թոյլ, և որին միայն «չնորհքն Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի» կարող է յաղթական դարձնել հոգեկան այս մարտի և ալեկոծութեան մէջ և դէպի փրկութիւնն առաջնորդել: Այս մի հակոտնեայ երեւոյթ է սովորական հասկացողութեան, հակադրութիւն այն մարդկանց համար, որոնք միայն մտքի թելադրութիւններով են երեւոյթները դատում և հասկանում: Նոքա ըմբռնել չեն կարող, թէ «խորհուրդ

մարմնոյ մահ է, և խորհուրդ հոգւոյ՝ կեանք և խաղաղութիւն» [Հռոմ. Ը 6]:

Եթէ հետեւենք մեր հայրերի կեանքին և պատմութեան, այնտեղ ևս կը գտնենք այդպիսի խորը մեղքի գիտակցութեամբ ապրող անձեր, որոնք մեր ժողովրդի հոգեւոր կեանքի բարձունքներն են կազմում: Մեղքի գիտակցութեան ապրումն է, որ մարդուն դէպի սրբութեան և բարոյական կատարելութեան զագաթներն է տանում: Այդպիսի գիտակցութեան և հոգեկան ապրումների արդիւնքներն են մեր Շնորհալին իւր «Հաւատով խոստովանիմքով», Գրիգոր Նարեկացին իւր «Նարեկով»: Այսպէս է և Ապաշխարութեան շարականների հեղինակը, որ ս. Մեսրոպն է համարում. սրտառուչ պարզութեամբ և խորը յուզումով իւր սրտի տագնապն է յայտնում և օգնութիւն խնդրում՝ ներշնչուած հէնց վերեւ մէջբերուած աւետարանական պատմութեամբ.

«Տով մեղաց իմոց զիս ալեկոծէ. որ ես նաւապետ բարի, շնորհեա՛ ինձ նաւահանգիստ»:

«Նաւապետ բարեգուլ, առ Քեզ ապաւինիմ, տո՛ւր ինձ ձեռն, որպէս երբեմն Պետրոսին ի վերայ ալեացն, որ ծփմս ալեկոծեալ յանցանօք մեղաց»:

Նոյն նիւթը և նման ապրումը ստեղծագործութեան աղբիւր է դարձել և եւրոպական բարձր նկարչութեան համար:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
«Հասկ», յունիս, 1946



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐՆ ՈՒ ԱՐԺԷՔԸ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԷՋ

«Միշտ ամշա՛րժ պահեա զԱթոռ Հայկազնեայց»:

Ա

Առաջադրուած նպատակի պարզաբանութեան լաւագոյն ուղին է իրական փաստերի վերլուծութիւնն ու համադրութիւնը: Ինչպէս ամէն երեւոյթ՝ մեծ կամ փոքր, հասկանալի է միայն իւր լինելութեան, այսինքն՝ ծագման, զարգացման, ներգործութեան ընթացքի լուսաբանութեան մէջ, այնպէս էլ՝ պատմական մեծ երեւոյթներն ու կազմակերպութիւնները: Անհատի նման նրանք էլ ունեն իրենց կենսագրութիւնը, որ միայն ժամանակի եւ տարածութեան սահմանների, չրջապատող պայմանների եւ տուեալների լուսոյ տակ հասկանալի եւ ըմբռնելի կը դառնայ:

Հայաստանեայց Եկեղեցու դերն ու արժէքը բացատրելու կամ հասկանալի կացուցանելու համար պէտք է նորա ծագման կամ լինելութեան ընթացքը, պարագաները վերլուծութեան ենթարկենք, որպէսզի նորա էութիւնն ու առանձնայատկութիւններն էլ հասկանալի դառնան: Քրիստոնէութեան հաստատութեան աւանդութիւնները Հայաստանում կապուած են առաքելական շրջանի հետ: Թաղէոս եւ Բարդուղիմէոս առաքելները առաջին քարոզիչներն են համարուում, եւ դորա հետ էլ՝ Հայ նահատակների վկայաբանութիւններ կապուած: Բայց պատմական առաջին տեղեկութիւնն ունենք 251 թուականից Հայ եպիսկոպոսութեան գոյութեան մասին Հայաստանում. հայոց Մենհրուժան եպիսկոպոսը թղթակցութեան մէջ է եղել Աղեքսանդրիոյ Դիոնեսիոս եպիսկոպոսի հետ, եւ այդ թղթակցութիւնը կարգացել եւ հաղորդել է Եւսեբիոս Կեսարացին իւր պատմութեան մէջ: Բայց, հաւանորէն, եղել են եւ ուրիշ եպիսկոպոսներ. առանց քրիստոնէութեան նախնական քարոզութեան եւ տարածման հասկանալի չէին լինի Լուսաւորչի յաջողութիւնը եւ քրիստոնէութիւնը ազգային եւ պետական կրօն դարձնելու հանգամանքը:

Քրիստոնէութիւնը, որպէս հոգեւոր շարժման պատճառ, նոր եւ լուսաւոր վարդապետութիւն, պէտք է իւր հոգեւոր ներգործութիւնն ունենար: Դ դարն ամբողջապէս Հայ ժողովրդի երկունքի դարն է:

Ասորի եւ յոյն լեզուներով տեղական դպրոցների բացումը իւր նշանակութիւնը պիտի ունենար՝ զուտ կրօնականի հետ եւ մտաւոր տեսակէտով: Մեր պատմիչները քիչ տեղեկութիւն են տալիս այդ մասին. մենք տեսնում ենք Լուսաւորչի որդւոց եւ թոռանց գործունէութիւնն ու պայքարը քրիստոնէութեան հաստատութեան համար այդ ուղղութեամբ, բայց դորան զուգընթաց է մի մեծ շարժում, որ նկատոււմ ենք այլ ուղղութեամբ: Ոչ միայն դրսից քրիստոնէութեան քարոզիչներ են գալիս ասորական եւ հելլենիստական կրթութեամբ, այլ Հայ երիտասարդներ են ուղարկոււմ ժամանակի լուսաւորութեան կեդրոնները, ուր ծաղկում էր ժամանակի գիտութիւնը: Այդ կեդրոններն էին Եդեսիան, Մծբինը, Անտիոքը՝ արեւելքում, Աղեքսանդրիան, Աթէնքը եւ յետագայում Բիզանդիոնը՝ արեւմուտքում: Մենք այդ մասին տեղեկութիւններ ունենք օտարազգի մատենագիրների մօտ: Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Աստուածաբան եւ ուրիշները տեղեկութիւններ են տալիս իրենց Հայ ուսանող ընկերների մասին, որ հոյլ են եւ ոչ հազուագիւտ երեւոյթ, Հայ ուսանողները շատ անգամ վէճի են բռնոււմ յոյների հետ, եւ յետինն իրենք չեն: Նրանցից մինչեւ իսկ ոմանք առաջաւոր դիրք են ստանոււմ ժամանակի գիտութեան եւ հռետորութեան մէջ. հէնց Բարսեղ Կեսարացին եւ Գրիգոր Աստուածաբան աշակերտն են Պրոյերեսիոս Հայ փիլիսոփայի եւ հռետորի, որ դասախօսոււմ էր Աթէնքում եւ Հռոմում, ուր նորա արձանը կանգնեցրին. «Թագաւորին հռետորաց՝ թագուհին թագաւորաց Հռոմ»:

Առանց այս նախընթաց նախապատրաստական շրջանին հասկանալի չեն Ե դարի մեծ եւ հոգեւոր վերածնութիւնը, տառերի գիւտը, Աստուածաշնչի թարգմանութիւնը, ազգային գրականութեան եւ պատմագրութեան ծագումը, Վարդանանց եւ Վահանանց պատերազմը, Ղեւոնդեանց քահանայութիւնը եւ այնպիսի սքանչելի, յղկուած դասական լեզու, ինչպէս մեր Ե-Ձ դարերի Հայերէնն է: Դորա հետ էր կապուած եւ Հայ եկեղեցական մեծ արուեստը, ճարտարապետութիւնը, որ քրիստոնէութեան հաստատութեան հետ նոր թափ եւ զարգացում է ստանոււմ եւ բարձրագոյն գագաթնակէտին հասնոււմ Զ-է դարերում:

Բ

Հայ Եկեղեցու լինելութեան էութիւնը եւ առանձնայատկութիւնները հասկանալու համար անհրաժեշտ է ի նկատի ունենալ ժամանակի քաղաքական, ինչպէս եւ երկրի աշխարհագրական-պատմական հանգամանքները: Երրորդ դարի երկրորդ քառորդին Պարսկաստանում քաղաքական կրօնական մի մեծ շարժում է սկսոււմ,

ազգային իշխանութիւնները Սասանեանների գլխաւորութեամբ գլուխ են բարձրացնում եւ գահընկէց անում Պարթեւական հարստութիւնը, նոքա փորձում են մինչեւ իսկ Հայաստանի Արշակունեաց հարստութիւնը ոչնչացնել: Դորա հետ Պարսից մէջ յառաջ է գալիս վերածնութեան մի մեծ շարժում՝ նորոգել Աքեմենեան հարստութեան հզօրութիւնը եւ ծաւալումը Պարսկաստանի հետ Առաջաւոր Ասիայում եւ վերակենդանացնել զրադաշտականութեան ներգործութիւնը, որ թուլացել էր հելլենականութեան ազդեցութեամբ: Այս ձգտումից է յառաջ գալիս քաղաքական այն մրցակցութիւնը, որ նկատելի է Սասանեանց գոյութեան ամբողջ շրջանում. նախ՝ ընդդէմ Հռոմի եւ ապա՝ բիւզանդականութեան: Այս մրցակցութեան զոհն էր Հայաստանը: Գ դարում արդէն նկատելի էր հայ պետութեան զօրութեան հետզհետէ նուազումը եւ մօտալուտ անկումը երկու մրցակիցների հարուածների տակ: Պարսից քաղաքական եւ կրօնական վերածնութեան ընթացակից էին ժամանակով քրիստոնէութեան ընդունելութեան եւ Եկեղեցու կազմակերպութեան ջանքերը Հայաստանում, ինչպէս եւ՝ դորա հետ կապուած մշակոյթային մեծ շարժումը: Հայ Եկեղեցու եւ ազգի դեկավարները դարբնում են մի հաստատութիւն, որ պէտք է ամբողջ դառնար՝ անառիկ ամբողջ Հայութեան: Հայութիւն եւ քրիստոնէութիւն, քրիստոնէութիւն եւ Հայութիւն թափանցում են փոխադարձաբար իրար մէջ որպէս մի ամբողջութիւն, միութիւն: Եթէ Դ եւ Ե դարերը ինքնապաշտպանութեան շրջանն էր գլխաւորապէս պարսից դէմ, Զ դարը ինքնապաշտպանութեան դարն է ընդդէմ բիւզանդականութեան: Բարգէն եւ Ներսէս Բ կաթողիկոսների գլխաւորութեամբ գումարուած ժողովները այդ դաւանաբանութեան հաստատութիւնն էին եւ Եկեղեցու անկախութեան եւ ազգայնութեան պաշտպանութիւնը ընդդէմ քաղկեդոնականութեան: Բիւզանդացիք նոյնպէս ձգտում էին Հայ Եկեղեցին եւ ազգը բոլորովին իրենց ենթարկել, ինչպէս պարսիկները: Յետագայ պատմութիւնը ապացոյցը բերաւ, թէ բիւզանդական բաժնի հայոց քաղկեդոնականութիւնը ընդունելը կամուրջ հանդիսացաւ եւ նրանց ձուլման բիւզանդականութեան կամ յունաց մէջ: Ո՞ւր են հայ Հռոմէները կամ Ուխտանէսի յիշած ծաթերը, որ քաղկեդոնականութիւն ընդունած հայեր էին: Մորիկ կայսեր քաղաքականութիւնն էր ջլատել Հայաստանեայց Եկեղեցու կաթողիկոսութիւնը՝ ստեղծելով հակաթոռութիւն ընդդէմ Մովսէս Եղիվարդեցի օրինաւոր կաթողիկոսի: Նոյն քաղաքականութեան հետեւանքն էր վրաց բաժանումը հայերից: Հերակլեան կայսերական տան երկու մեծ ներկայացուցիչները մի կամքի վարդապետութեան ընդունելութեամբ կամեցան միութիւն ստեղծել բոլոր Եկեղեցիների մէջ, բայց ժամանակաւոր եղաւ այդ:

տութեան ընդունելութեամբ կամեցան միութիւն ստեղծել բոլոր Եկեղեցիների մէջ, բայց ժամանակաւոր եղաւ այդ:

Պարսից բաժնի Հայաստանը տարբեր պայմանների տակ էր Զ դարում եւ է դարի առաջին քառորդին, քան բիւզանդականը: Պարսիկները փորձեցին քրիստոնէութիւնը ջնջել Դ եւ Ե դարերում, բայց տեսան դորա դժուարութիւնները, ուստի եւ ստիպուած էին հանդուրժել՝ աշխատելով հայերին հեռու պահել բիւզանդական ազդեցութիւնից: Այս հանգամանքը դարձաւ զիժ ազգային գոյութեան պահպանութեան, միեւնոյն ժամանակ՝ հոգեւոր կեանքի եւ մշակոյթի անկախութեան: Այս պայմանների տակ ստեղծուեցաւ, զարգացաւ եւ ամրացաւ հայ ազգային Եկեղեցին, որ ամուր պատուարը հանդիսացաւ նորա պահպանութեան՝ արաբական հզօր տիրապետութեան եւ հալածանքի ժամանակ:

Գ

Մի այլ հանգամանք եւս ի նկատի պիտի ունենայ՝ Հայաստանեայց Եկեղեցու ինքնուրոյն, առանձնաբար կողմերը հասկանալու համար: Հռոմէական պետութեան մէջ Եկեղեցին կազմակերպուած է այլ ուղղութեամբ, քան Հայաստանում: Դիոկղետիանոսի պետական կազմակերպութեան խնդիրը շատ մեծ նշանակութիւն է ունեցել եւ Եկեղեցու կազմակերպութեան մէջ: Արեւելքում՝ ինչպէս Անտիոքը, Եգիպտոսում՝ ինչպէս Աղեքսանդրիան, ապագայում Բիւզանդիոնը՝ իբրեւ մայրաքաղաքը արեւելեան մասի, եւ Հռոմը՝ իբրեւ կեդրոնը եւրոպական նահանգների, դառնում են կեդրոնը մեծ եպիսկոպոսութիւնների կամ պատրիարքութիւնների համար:

Այլ էր Հայաստանի խնդիրը. թէեւ դաշնակից Հռոմէական պետութեան, ապա՝ թէեւ կոռախնձոր Սասանեանների եւ Հռոմէական կայսրութեան մէջ, բայց առանձին պետութիւն էր իւր ուրոյն կազմակերպութեամբ, կառավարութեան եւ փոխարարբերութեան ուրոյն ձեւերով: Այստեղ Եկեղեցու կազմակերպութիւնը ընթանում է համաձայն Հայաստանի պետական կազմակերպութեան: Ինչպէս թագաւորը գլուխն է պետութեան, որի բաղկացուցիչ մասերն են նախարարութիւնները՝ մի-մի փոքրիկ պետութիւն պետութեան մէջ, այդպէս էլ կաթողիկոսը՝ Լուսաւորչի տան ներկայացուցիչներով, գլուխն է Եկեղեցու, իսկ եպիսկոպոսութիւնները՝ համեմատ նախարարական տների: Ուստի եւ մեր եպիսկոպոսութիւնները համեմատ նախարարութիւնների կոչուած են եպիսկոպոս տանն Սիւնեաց, եպիսկոպոս տանն Մամիկոնեանց, տանն Արծրունեաց, Ամատունեաց եւ այլն: Ե դարում

կաթողիկոսի յաջորդութիւնը, կապուելով ընտրութեան հետ եւ ոչ՝ ժառանգական, մի կարեւոր հանգամանք էր, որ կաթողիկոսութիւնը դառնայ ընդհանրական, համայն ազգային՝ Եկեղեցու միութեամբ էլ զարգանալով ազգային միութեան գաղափարը: Ընտրուած կաթողիկոսը այլեւս այս եւ այն նախարարական տան եպիսկոպոսը չէ, այլ՝ գերագոյն գլուխը եւ միութեան նշանակը բոլոր եպիսկոպոսութիւնների կամ Եկեղեցու: Քաղաքական միութեան պակասութեան հետեւանքով առաւել եւս զօրանում է նորա համազգային բնոյթը: Նա միջնորդն է իրար հակամարտ նախարարական տների կամ սրանց եւ արքայական տան մէջ յետագայում:

Ահա ինչ պայմանների մէջ ստեղծուել է Հայաստանեայց ազգային Եկեղեցին, որ հետեւանք էր պատմական-աշխարհագրական եւ քաղաքական պայմանների: Այդ երեւոյթը կամայականութեան արդիւնք չէր, այլ՝ պայմանների, եւ եթէ կրօնական բառով կամենանք ձեւակերպել, կ'ասենք՝ Աստուծոյ կամքն էր այդ, եթէ հաւատում ենք, թէ նախախնամութիւնն է ազգերի կեանքի եւ պատմութեան ղեկավարը:

Միտքս ուրիշ օրինակներով կարող եմ բացատրել. մահմեդականութիւնը ծագել է Արաբիայում եւ տարածուել Միջագետքում եւ Սիւրիայում՝ իբրեւ արաբական ժողովրդի հոգեբանութեան արդիւնք: Բայց Հինց նորա ծագման առաջին դարում սկսում է գունաւորուել, տարբեր ձեւակերպութիւն ստանալ, տարբեր ըմբռնումներով, քան դասական մահմեդականութիւնն էր, սիւննի արաբական ըմբռնումը՝ ձուլող եւ միացնող: Պարսկաստանը արաբների նուաճմամբ բոլորովին չկորցրեց իւր ազգային ուրոյն գծերը, ուստի եւ յառաջ եկաւ պարսկական շիաների հոսանքը միեւնոյն մահմեդականութեան մէջ:

Քրիստոնէութիւնը մի է՝ մի Տէր Յիսուս Քրիստոս, մի Աւետարան, բայց տեսէք՝ ունենք տարբեր Եկեղեցիներ՝ Որթոտքս Եկեղեցին, Կաթոլիկ Եկեղեցին, Բողոքական Եկեղեցիներ: Որթոտքս Եկեղեցին կարող էր ձեւակերպուել բիւզանդական ծիսական-արարողական ձեւ ու կերպարանք ստացած աւանդութիւններով: Կաթոլիկ Եկեղեցին կարող էր զարգանալ Հռոմէական կայսրութեան աւանդութիւններով՝ Իտալիայի բնութեան նման շքեղ, ակնապարար, կլիմայի համեմատ արտաքին գեղարուեստականութեամբ. եւ բողոքականութիւնը Հիւսիսային, սառը կլիմայական պայմաններում՝ աւելի տրամաբանական-փիլիսոփայական գունաւորութեամբ: Ահա մեզ նոր ցուցումներ հայ ազգային Եկեղեցու ծագման եւ լինելութեան հասկացողութիւնների համար:

Դ

Այժմ տեսնենք՝ ի՞նչ դեր է կատարել Հայաստանեայց Եկեղեցին եւ ի՞նչ նշանակութիւն ունի ընդհանուր Եկեղեցիների շարքում: Այդ դերը երկուս է՝ մշակութային եւ քաղաքական՝ երկուսն էլ երկերկու երեսով կամ տեսակէտով, այսինքն՝ ազգային եւ ընդհանուր: Մենք տեսանք, թէ Հայաստանեայց Եկեղեցու լինելութեան կամ քրիստոնէութեան հաստատութեան հետ որպիսի հոգեւոր շարժում էր սկսուած: Այդ շարժման հետեւանքն էին հայ գրի գիւտը, Աստուածաշնչի թարգմանութիւնը, հայերէն աստուածապաշտութեան ծագումն ու զարգացումը, եկեղեցական մեծ հայրերի եւ մատենագիրների թարգմանութիւնը, հայկական երաժշտութիւնն ու արուեստը: Իսկ այդ եկեղեցական հայրերի գրուածքները ժամանակի քրիստոնէական մտածողութեան եւ հոգեւոր կեանքի հասկացողութեան բարձունքն էին: Թարգմանում են նաեւ փիլիսոփայական, պատմական նշանակութիւն ունեցող գրքեր: Իսկ այդ թարգմանութիւնները ոչ միայն ազգային, այլեւ ընդհանուր քրիստոնէական գրականութեան արժէք են բերում: Իրէնչոսի գրուածքները (Բ դարու վերջերի Հեղինակ) թարգմանուելով՝ պահուած են աշխատութիւններ, որոնց բնագիրը մինչեւ այժմ գտնուած չէ, ինչպէս՝ «Յոյցք առաքելականը», որի գիւտի պատիւը մեր վաղամեռ եւ գիտնական ընկերոջ եւ միաբանակցի՝ Կարապետ եպիսկոպոսին է պատկանում: Որոգինչէսի եւ Հիպոլիտի գրուածքներից մնացած են ճառեր եւ հատուածներ, որոնց բնագիրները նոյնպէս կորած են: Եւսեբիոս Կեսարացու ոչ միայն եկեղեցական Պատմութեան Հին թարգմանութիւնն ունենք, այլեւ նորա Քրոնիկոնը՝ ժամանակագրութիւնը, որ սկզբում գիտութեան մատչելի դարձաւ հայ թարգմանութեամբ: Կիրեղ Աղեքսանդրացու, Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու թարգմանութիւնների մէջ եւս կան գրուածքներ, որոնց բնագիրները չկան, ինչպէս Եգեկիլի մեկնութիւններն են: Տրմոթէոս Կուզի Հակաճառութիւնը պահուած է եւ գիտութեան մատչելի դարձաւ դարձեալ Կարապետ եպիսկոպոսի ձեռքով, որ միաբանակ եւ երկարակ դաւանութիւնների վիճաբանութեան համար մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ քաղկեդոնականների կողմից մեծ մասով ոչնչացուած են հակառակորդների գրուածքները: Ե դարում ստեղծուած էր դասական գրաբար հայերէնը՝ գեղեցկութեան, կանոնաւորութեան եւ բարձր մտքեր արտայայտելու ունակ առաւելութիւններով, ինչպէս մեր Եզնիկ Կողբացին, որի գրուածքներից գաղափար ենք կազմում ժամանակակից մագղեղականութեան եւ Մարկիոնի աղանդի մասին՝ կրօնների եւ քրիստոնէական աղանդների պատմութեան համար յոյժ կարեւոր: Ապա

մեր պատմական գրականութիւնը, Հարուստ Ե-ժէ դարերը, առանց որոնց գիտութիւնը պակասաւոր կը լինի Սասանեանների, արաբների, բիւզանդացւոց, սելջուկների, մոնղոլ-թաթարական ցեղերի, միջնադարեան պարսից եւ օսմանցւոց պատմութեան նկատմամբ:

Քրիստոնէական բանաստեղծութեան եւ աստուածապաշտութեան գրականութեան գոհարներ ունենք մեր շարականների կամ Նարեկացու, Շնորհալու գրուածքների մէջ, որ պատիւ կարող են բերել շատ աւելի մեծ ազգերին, քան մենք ենք: Մայրագոմեցին եւ Օձնեցին տալիս են մեզ պատկերամարտութեան եւ պաւլիկեան աղանդների մասին տեղեկութիւններ: Հայ ճարտարապետական արուեստը քրիստոնէական արուեստի ծագման եւ զարգացման պատմութեան համար սկսել է կարեւորագոյն նշանակութիւն ստանալ եւ քրիստոնէական բիւզանդական, ռոմանական, գոթական ճարտարապետութիւնների կողքին շատ պատուաւոր տեղ բռնել եւ մեծ նպաստ բերել ընդհանուր քրիստոնէական արուեստի հասկացողութեան համար: Երախտագէտ ենք Strzygowski-ին, որ Հայ արուեստի եւ յատկապէս ճարտարապետութեան մեծ արժէքը կարողացաւ պարզել եւրոպական-քաղաքակիրթ ազգերի աչքում:

Հայ ձեռագրական արուեստը՝ մօտ 20000 հատոր ձեռագիրներով, հրաշալի եւ հարուստ մանրանկարչութեամբ, ճարտարապետութեան հետ, ոչ միայն ազգային մեծ արժէք է, այլեւ՝ Առաջաւոր Ասիայի քաղաքակիրթ ազգերի, նաեւ որոշ չափով եւրոպական ազգերի՝ նման արուեստների փոխազդեցութեան եւ հասկացողութեան մի կարեւոր նպաստ:

Մեր եկեղեցական երաժշտութիւնը, միջնադարեան բանաստեղծութիւնը սկսել են յատուկ ուշադրութեան արժանանալ եւրոպացի գիտնականների եւ բանաստեղծների կողմից, ինչպէս ռուս մեծ բանաստեղծ Բրիւսովի ուսումնասիրութիւնն է «Պոեզիա Արմենիի» վերնագրով կամ Ա. Չորանեանի Ֆրանսերէն թարգմանութիւններով:

Ե

Բայց Հայ եկեղեցու ամենամեծ արժանիքը, որ պէտք է բարձրագոյն գնահատութեան արժանանայ, այդ մեր **ինքնապաշտպանութեան, դորա հետ էլ կապուած՝ ընդհանուր քրիստոնէութեան պաշտպանութեան խնդիրն է:** Քրիստոնէութեան հաստատութեան առաջին օրերից Հայ քրիստոնէութեան վիճակուել է պատերազմ մղել իւր պաշտպանութեան համար: Դեռեւս նոր հաստատուած եւ քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակուած՝ Հայերը պիտի պաշտպա-

նէին քրիստոնէութիւնը հռոմէական կեսար Մաքսիմինուս Դայայի հալածանքների դէմ. առաջին ազգը, որ քրիստոնէութիւնը պետական կրօն դարձրեց, եւ առաջին ազգը, որ պատերազմ մղեց նորա պաշտպանութեան համար: Հայ պատմագիրներից չէ, որ իմանում ենք այս տեղեկութիւնը. Պարսից Շապուհ Բ-ի հալածանքը Դ դարում, Յազկերտ Բ-ի հալածանքը Ե դարում՝ Վարդանանց եւ Վահանանց պատերազմով:

Ապա՝ Հայ քրիստոնէութեան դերը արաբական ոչնչացնող, կործանող հալածանքների դէմ. արաբները պատմութեան մէջ հանդէս են գալիս՝ հրով եւ սրով իրենց կրօնը տարածելու: Ոչնչացնում են մեծ Պարսկաստանի մագղեղանց կրօնը եւ մահմեդականութիւնը հաստատում: Բայց ոչ պակաս յաջող էր քրիստոնէութեան տուած Հարուածների մէջ: Ո՞ւր է պարսկական քրիստոնէութիւնը, Արաբիայի քրիստոնէութիւնը, որի եպիսկոպոսները մինչեւ մահմեդականութեան երեւալը մասնակցում էին եկեղեցական ժողովներին, օրինակ՝ Փառանի եպիսկոպոսութիւնը: Ո՞ւր է Հիւսիսային Աֆրիկէի, Կարթեղոնի եպիսկոպոսութիւնը, որ Գ դարում տուել է այնպիսի հոյակապ անձնաւորութիւններ եւ մատենագիրներ, ինչպէս Կրպրիանոս եւ Տերտուլիան մեծ մատենագիրը: Ինչպիսի՞ խեղճութեան են հասել ասորական եւ կողպտական եկեղեցիները, որոնք Դ-Ե դարում քրիստոնէական եկեղեցու փառքն էին կազմում, յատկապէս՝ Աղեքսանդրիայի եկեղեցին, որ առաջնորդ դեր էր կատարում քրիստոնէութեան մէջ: Բոլորովին անհետացել են շամ ամենախեղճ վիճակի հասել: Հայ քրիստոնէութիւնը դիմայել է արաբական հուրին եւ սուրին դարերի ընթացքում՝ անթիւ, անհամար զոհեր տալով, եւ, որ կարեւորն է, իւր **ինքնապաշտպանութեամբ պաշտպանել եւ իրենից արեւմուտք եղած բիւզանդական քրիստոնէութիւնը:** Երեք եւ աւելի դարեր Հայութիւնն է եղել այն թուճը, որ բռնել է արաբական ամէն ինչ կլանող հոսանքի առաջ: Բայց ոչ միայն Հայաստանում, այլեւ Բիւզանդական պետութեան մէջ Հայ տարրը ահագին դեր է կատարել պետութեան, որով եւ՝ քրիստոնէութեան պաշտպանութեան գործում: Հայկական բանակը (Արմենիակոն Թեմա) արաբական սահմանների մօտ բանակն էր, դորա եւ միւս բանակների զօրապետները յաճախ Հայ իշխաններ էին Ը դարում, որոնք իրենց բանակի մէջ Հայկական գնդեր եւս ունէին, ինչպէս Մանուէլ Մամիկոնեան՝ իւր ժամանակի մեծագոյն զօրավարը, եւ ուրիշները: Չենք յիշում քաղաքական եւ լուսաւորութեան ասպարիզում Հայոց կատարած դերը: Ապա սելջուկնե՞րը, մոնղոլ-թաթարնե՞րը, թեմուրլէնկնե՞րը, սեւ եւ սպիտակ խոյերի, պարսից եւ օսմանց-

«Եղերո՞ք կատարեալք, որպէս եւ երկմտոր
Հայոց ձեր կատարեալ է» (Մատթ. Ե 48):

Ա

Հաւատացեալ ժողովուրդ:

Լսեցիք այսօրուայ պատարագին կարդացուած աւետարանական
հատուածը՝ Լեւրան քարոզի Հրաշալի պատգամները: Լեւրան քարոզ
են կոչուում Մատթէոսի Աւետարանի Ե, 2, եւ է գլուխները, որ Յիսուսի
քարոզների եւ պատգամների կամ պատուիրանների մի ժողովածու է,
բայց այդ անունն է կրում, որովհետեւ, ըստ աւետարանական աւան-
դութեան, խօսած է նա մի լեւրան վերայ՝ շուրջն ունենալով Իւր
աշակերտներին եւ ունկնդիր ժողովրդեան: Լեւրան քարոզը միանգա-
մից չի խօսուած, նոյնիսկ մի ամբողջութիւն չէ կազմում ըստ բովան-
դակութեան. նա մի քանի հատուածներ ունի, որոնցից իւրաքանչիւրը
իւր համար որոշ ամբողջութիւն է: Լեւրան քարոզը գրի չի առնուած
նաեւ Յիսուսի խօսելու ժամանակ, այլ՝ յետոյ, երբ առաքելական
չըջանում գրի են առնուել աւետարանական քարոզութեան որոշ մասեր
եւ օգտագործուել են քրիստոնէական նորակազմ համայնքների մէջ
իբրեւ ուղեցոյց նոր վարդապետութեան՝ Աւետարանների գրութիւնից
առաջ:

Լեւրան քարոզը աւետարանական քարոզութեան ամենազեղեցիկ
մասերից մէկն է ոչ միայն իւր ամբողջութեամբ կամ հատուածներով,
այլ նորա իւրաքանչիւր մի խօսքը թանկագին գանձ է մարդկութեան
համար: Իբրեւ բնաբան մեր այսօրուայ խորհրդածութեան՝ ընտրեցինք
մի պատգամը միայն. «Կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը
կատարեալ է»:

Կատարելութեան ձգտումը մարդկային հոգու ամենավսեմ եւ
ազնիւ յատկութիւններից մէկն է, յառաջադիմութեան հիմնաքարը
թէ՛ անհատների եւ թէ՛ ազգութիւնների համար: Այն անհատը, որ
ձգտում չունի հետզհետէ կատարելագործուելու, նա դատապարտուած
է անշարժութեան կամ մահուան: Կեանքը շարժում է իւր արտաքին
բոլոր երեւոյթներով, բայց նա շարժում է, ձգտում է դէպի յառաջա-
դիմութիւնն ու կատարելութիւնը եւ իւր ներքին էութեամբ: Յառաջա-

* Սօսուած ն. Նախիջեւանի Ս. Լուսաւորչի եկեղեցում:

ւոց երկար դարերի հալածանքնե՞րը, անթիւ, անհամար նահատակու-
թիւննե՞րը իրենց քրիստոնէական հաւատի մէջ: Եթէ մենք գրելու
լինենք այդ դարերի պատմութիւնը՝ անվերջ շղթաներ տանջալից
մարտիրոսութիւնների, գերեվարութեանց յատկապէս սելջուկների,
թաթարների եւ թուրքմէնական ցեղերի կողմից, մի ահաւոր էջ կը
կազմէ մարդկային կեանքի պատմութեան, որ գուցէ ոչ մի ազգի չէ
վիճակուել ունենալ: Մեր ձեռագիրների մէջ յիշատակարանները տալիս
են դարէ ի դար այդ ողբերգութեան կենդանի պատկերը՝ ժամա-
նակակից եւ ակնատես գրիչների կողմից գրուած: Ահա այսպիսի
գնով մենք Եկեղեցի ենք պահել՝ պաշտպանելով եւ ընդհանուր
քրիստոնէութիւնը:

Կաթոլիկ եւ Բողոքական Եկեղեցիները մեծ են, հարուստ, միլիոն-
ներ են ծախսում միսիոնարութեան համար, աւա՛ղ, նաեւ «եկամուտ-
ներ» (պրոգնիւտ) գտնելու համար, իսկ Հայաստանեայց Եկեղեցին
պահպանել է քրիստոնէութիւնը իւր զաւակների արիւնով եւ նահա-
տակութեամբ՝ աւելի թանկ վճարելով հոգիների փրկութեան համար:

Ով Հայոց Եկեղեցու աղքատութեան եւ խեղճութեան մասին է
խօսում՝ առանց այս պայմաններն ի նկատի ունենալու, ամենամեծ
անարդարութիւնն է կատարում պատմութեան, հաւատում եմ, նաեւ
Աստուծոյ արդար դատաստանի առաջ:

Մենք ուրախ ենք եւ հպարտ, որ ազգային Եկեղեցի ունենք՝
հայ ժողովրդի ամենամեծ ստեղծագործութիւնը՝ դարերի պատմական
եւ քաղաքական պայմանների մէջ ձեւ ու կերպարանք ստացած, սնած,
գործած եւ նահատակուած՝ իւր ժողովրդի հոգեւոր դէմքն ու Աւետա-
րանից ստացած ժառանգութիւնը պահպանելու համար:

Թող միշտ վա՛ռ մնայ այդ գիտակցութիւնն ու զգացումը նորա
մէջ, միշտ իւր ժողովրդի հետ, վշտակից՝ նոյն վշտի՛րին, ուրախակից՝
ուրախութիւններին:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
«Հայաստանեայց Եկեղեցի», Բոկոսեմբեր, 1943

դիմութեան եւ կատարելութեան գաղափարը առանցքն է անհատական կեանքի եւ ազգերի պատմութեան: Այդ պատճառով էլ ազգերի հոգեւոր կեանքի ղեկավարները միշտ աշխատել են կատարելութեան գաղափարներ տալ, որոնց պիտի ձգտէին անհատներն ու հասարակութեան անդամները: Այսպէս, կրօնի հիմնադիրները, մեծ մտածողները իրենց հետեւողների եւ կեանքի առաջ դրել են բարձրագոյն գաղափարներ եւ նպատակներ՝ մասամբ դիւրացնելով եւ ցուցումներ տալով այդ մտքով:

Բ

Կեանքի նպատակը ամենամեծ առեղծուածն է, որ դրուած է մեր առաջ: Իմանալ կատարուելիք գործի նպատակը, իմանալ նորան հասնելու ուղեգիծը՝ յաջողութեան կէսն է: Ամէնքը ընդունակ չեն գիտակցելու այդ բանը: Ամէնքը Պողոս առաքեալ չեն, որ ասել կարողանան. «Ես այնպէս ընթանամ՝ ոչ որպէս յաներեւոյթս, այնպէս մրցիմ՝ որպէս ոչ թէ զհոգմս ինչ կոծելով»: Եւ այսինքն՝ անորոշութեան եւ խաւարի մէջ չեմ խարխափում, գիտեմ իմ գնալիք ուղին եւ գիտեմ, թէ ուր եմ գնում: Բայց նա էլ այդ խօսքն ասել կարող էր, որովհետեւ գիտէր, թէ Ում հետեւողութեամբ եւ շաւղով պիտի ընթանար. «Նմանող ինձ եղիբուք, որպէս եւ ես՝ Քրիստոսի»: Եթէ ճարտարապետը գծել է շէնքի յատակագիծն ու նախագիծը, որմնադրի համար դժուար չէ կանգնել շէնքը: Արդ, մեր կեանքի ճարտարապետը քրիստոնեաներիս համար Յիսուս Քրիստոսն է, որ գծել է հաւատացեալի կատարելութեան ուղին իւր անձի օրինակով եւ վարդապետութեամբ, որ դէպի երկնաւոր Հայրն է տանում:

Հին աշխարհին էլ անծանօթ չեն եղել կատարելութեան ձգտումներն ու ճանապարհները: Ոչ միայն կրօնների հիմնադիրները, այլեւ մեծ մտածողները աշխատել են պարզել այդ խնդիրը: Եւ մենք պիտի աւելցնենք, որ ի զուր չէ անցել նրանց աշխատանքը: Մենք ընդունում ենք պատմութեան բարեշրջման (էվոլյուսիոնի) գաղափարը, բայց ոչ թէ մենք, այլ մեր առաքեալն իսկ. «Իբրեւ եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին իւր»,- ասում է նա գաղատացիներին գրած թղթի մէջ: Հեթանոսական աշխարհը՝ իւր մեծ մտածողներով, ինչպէս հրէութիւնը՝ իւր անցեալով եւ մարգարէութեամբ, մի տեսակ պատրաստական շրջան էր քրիստոնէութեան ծագման համար:

Գ

Հոգու անմահութեան գաղափարը, թէեւ նիւթական հասկացո-

ղութեամբ, եգիպտական հեթանոսութեան եւ նորա հետ սերտ կապուած կրօնական արուեստի եւ քաղաքակրթութեան առանցքն է: Յունական փիլիսոփայութեան մեծ ներկայացուցիչները՝ Սոկրատէս, սորա աշակերտ Պլատոնը եւ վերջինի աշակերտ Արիստոտէլը, իւրաքանչիւրը իւր ձեւով, բարոյական եւ կրօնական գաղափարների հասկացողութեան մի տեսակ նախաստիճաններ են յետագայի՝ աւելի նուրբ քրիստոնէութեան ըմբռնման: Սոկրատէսի «Ծանի՛ր զքեզ» խօսքը որքա՛ն մօտ է իւր էութեամբ Տիրոջ «Արքայութիւնն ի ներքս ի ձեզ է» արտայայտութեան: Պլատոնն ու Արիստոտէլը բոլորովին իրարից տարբեր, բայց երկուսն էլ իրենց երանութեան կամ երջանկութեան գաղափարներն ունեն: Պլատոնը իւր երջանկութիւնը աստուածների օրինակի մէջ էր տեսնում, Արիստոտէլը՝ գիտութեան. մէկի համար իսկական «էն» կամ «գոն» գաղափարն էր, միւսի համար տիեզերքի ըմբռնումը՝ իբրեւ որոշ օրէնքների վերայ հաստատուած երեւոյթ:

Մեզ համար հետաքրքրական է Պլատոնի էթիկան, ուր մարդու կեանքի նպատակը որոշուած է խորտակել չարի զօրութիւնը՝ խուսափելով մոլութիւններից, եւ նմանել Աստուածութեան՝ առաքինութեամբ: Մահուան վերայ նայում է նա որպէս «կատարեալ ազատութեան մի կամուրջի» վերայ: Նորա փիլիսոփայութեան մէջ նկատելի է երկրաւորի անցաւորութեան եւ հոգու փրկութեան պահանջի գաղափարը: Ահա պատճառը, որ Եկեղեցու հին ջատագովները (apologet) եւ նշանաւոր հայրերը փյնքան կարեւոր նշանակութիւն են տուել Պլատոնի փիլիսոփայութեան:

Արիստոտէլի փիլիսոփայութիւնը այլ տեսակէտով մեզ համար արժէք է ստանում. նախ՝ նորա տրամաբանութեան կամ մտածողութեան օրէնքների մասին գրած աշխատանքը եւ ապա՝ նորա տեսական փիլիսոփայութիւնը իրերի էութեան եւ գերբնականութեան մասին, որքան մարդկային միտքը կարող է քննել: Նա ֆիզիքական մարմիններից դուրս ընդունում է մի անշարժ եւ աննիւթ էութիւն, որ բոլոր գոյութիւնների հիմքն է, այսինքն՝ Աստուծոյ գոյութիւնը՝ «ամէն ինչ շարժող, բայց ինքն անշարժ», ոչ անձնաւորեալ, ինչպէս քրիստոնէականը: Որքան եւ կրօնական չէ նորա այս փիլիսոփայութիւնը, բայց յետագայ դարերում քրիստոնէական աստուածաբանական գիտութեան աղբիւրներից մէկն է դարձել նորա փիլիսոփայութիւնը՝ Աստուծոյ գոյութիւնը հաստատելու համար: Բայց թէ՛ Պլատոնը եւ թէ՛ Արիստոտէլը, երկուսն էլ տեսական, մտքի հետ կապուած, մասնաւոր վերջինը, ուստի եւ անմատչելի են ժողովրդին եւ անբաւարար՝ նորա բարոյական դաստիարակութեան ծառայելու:

Մենք չենք խօսում յունական փիլիսոփայական դպրոցների մասին, որոնցից յատկապէս ստոյիկեանները քրիստոնէութեան շատ մօտ գծեր ունին: Նրանց գերական կամ իդէալը իմաստունն է կամ փիլիսոփան, որ վեր է ամբոխից եւ արհամարհանքով է նայում ժողովրդի կամ հասարակ մահկանացուների վերայ. բոլորովին տարբեր քրիստոնէութեան եղբայրութեան եւ գթութեան գաղափարներից:

Այդ է պատճառը, որ երբ յոյն-հռոմէական աշխարհում կրօնական անկման շրջանը սկսուեցաւ, փիլիսոփաներն ու նրանց դպրոցները անկարող եղան պահելու ժողովրդին անբարոյ, գեղիս, անգութ, շուայտ եւ ասական մտայնութեան մէջ ընկնելուց, որպիսին քրիստոնէութեան ծագման օրերին «քաղաքակիրթ» մարդկութիւնն էր, յատկապէս՝ նորա «առաջաւոր» դասը:

Դ

Հրէական կրօնը իւր միաստուածութեան գաղափարներով եւ տասնաբանեայ պատգամներով ամենից մօտն էր քրիստոնէութեան եւ անմիջապէս կապուած նորա հետ: Բայց քրիստոնէական կրօնը ոչ միայն լրումն էր հրէութեան, այլեւ նորութիւն՝ Աստուածութեան, սիրոյ կամ ընկերային գաղափարների ըմբռնման: Տասնաբանեայ պատգամների մէջ Աստուած երեւան է գալիս իբրեւ նախանձոտ, վրէժնոյր պատուիրանազանցներին մինչեւ «յերիս եւ ի չորս ազգս»: Նա հրեաների Աստուածն է եւ միայն մեծ մարգարէների մէջ՝ երբեմն տիեզերական մտքով հասկացուած: Իսկ ընկերային յարաբերութեան եւ սիրոյ պատգամները Քրիստոսի բերած սրբազրութեամբ (Մատթ. Ե 21-44) յեղաշրջումն են բոլորովին հրէական հասկացողութեան:

Աւետարանի Աստուածը երկնաւոր Հայրն է, որ «զարեգակն իւր ծագէ ի վերայ չարեաց եւ բարեաց եւ ածէ անձրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց»: Մարդիկ նորա որդիքն են, ուրեմն եւ՝ եղբայրներ միմեանց եւ պէտք է նմանին իրենց երկնաւոր Հօրը. «Արդ, եղբոր՝ քու կատարեալք, որպէս եւ Հայրն՝ ձեր երկնաւոր կատարեալ է»: Ձգտումը այսպիսի կատարելութեան տիեզերական է՝ պարփակելով ազգայինն ու անհատականը, որովհետեւ նորա շարժառիթն ու հիմքը սէրն է, եղբայրութիւնն է, լայնախոհութիւնն է եւ փոխադարձ հանդուրժողութիւնը. «Ձամենայն, զոր միանգամ կամիցիք, թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս եւ դո՛ւք արարէք նոցա», որ գործնական եւ հասկանալի ցուցումն է եղբայրութեան եւ կատարելութեան հասկացողութեան:

Այսպիսով, Տիրոջ քարոզած կատարելութիւնը տարբեր է բանա-

կանութեան կամ փիլիսոփայական մտքով առաջարկուած կատարելութեան իդէալներից, տարբեր են միանգամայն եւ նորա քարոզած կատարելութեան ուղիները եւ վախճանական նպատակը: Այնտեղ բանականութիւնն էր աղբիւրը, որտեղից ցուցում եւ լոյս էր սպասուում կատարելութեան ուղիների համար. այստեղ՝ հաւատը, կատարեալ վստահութիւնը եւ սէրը առ Աստուած, որից բխում էր սէրը դէպի ընկերը, դէպի նման մարդը: Այնտեղ փիլիսոփան էր կատարեալը, որ քչերին էր վիճակուած լինել, ուրեմն եւ բանականութեամբ ձեռք բերուած փիլիսոփայութեան մէջ պիտի որոնել կատարելութիւնը՝ սառը, հպարտ, ասական, բարձրից նայելով տգէտ եւ արհամարհելի ամբոխի վերայ, ինչպէս ստոյիկեաններն էին. իսկ այստեղ՝ համակ սէր, գութ, անձնուիրութիւն դէպի մարդը եւ դէպի ժողովուրդը. «Սիրեսցես զընկեր քո, իբրեւ զանձն քո» (Մատթ. ԻԲ 39), Սամարացու առակը (Ղուկ. Ժ 33-37), «Գթամ ի ժողովուրդդ» (Մատթ. ԺԵ 32): Սովորական հասկացողութեամբ մէկը՝ «բնական», բանականութեան թելադրութեամբ գծուած ուղին, միւսը՝ «գերբնական» հաւատով եւ սիրով լցուած:

Կը կամենայինք երկու խօսքով բացատրել մեր միտքը չակերտի մէջ առնուած այդ երկու բառերի մասին: Տիեզերքի մէջ բնականի եւ գերբնականի բաժանում չկայ. այդպիսի բաժանում մարդկային միտքն է կատարում, երկուսն էլ հաւասարապէս երեւոյթներ են միայն. մէկը՝ ենթակայ վերլուծութեան եւ մեքենական օրէնքների, իսկ միւսը՝ ոչ: Նիւթական առարկաները կարող ենք քիմիական վերլուծութեան ենթարկել իրենց բաղկացուցիչ մասերի, ինչպէս՝ օղը, շուրը եւ այլն: Արտաքին երեւոյթներ, անձրեւ, կարկուտ, նոյնիսկ երկնային մարմինների շարժումները ենթակայ են մեքենական օրէնքների եւ հասկացողութեան: Բայց նոյն տեսակ վերլուծութեան եւ մեքենականութեան ենթարկել չենք կարող մարդկային գիտակցութիւնը, երեւակայութիւնը, հանճարն ու ստեղծագործութիւնը իւր ամենատեսակ մարգերի մէջ, ուրիշ խօսքով՝ հոգեկան, ներքին կեանքը իւր բովանդակ ծաւալով: Բայց նրանք կան, իրողութիւններ են եւ իսկական, արժէքաւոր իրողութիւններ եւ նոյնպէս «բնական», ինչպէս արտաքին իրերն ու երեւոյթները, միայն՝ տարբեր չափանիշների ենթակայ, մեր բանականութեան վերլուծութեան սահմաններից դուրս: Այստեղ առաքեալի հետ ասել կարող ենք. «Փոքր ի շատէ գիտեմք», այսինքն՝ մեր գիտութիւնը չափաւոր է, սահմանափակ: Հոգեկան աշխարհի մէջ կան մինչեւ իսկ ապրումներ եւ ըմբռնումներ, որոնք մեր հինգ զգայարաններով հասկանալի չեն, ներհայեցողական, հոգեւտեսական

մի կարողութիւն՝ եւրոպական բառով intuitiv կոչուած: Ապա ուրեմն, վաղվաղիտ չպէտք է լինել՝ ժխտողական դիրք բռնելու, ինչ որ վերլուծութեան, բնական կամ մեքենական օրէնքի չի ենթարկուում:

Ե

Վերլուծութեան եւ «բանականութեան» օրէնքներին չենթարկող ամենամեծ երեւոյթներից մէկն էլ հաւատոյ խնդիրն է, կրօնական ապրումը հոգեկան ներքին աշխարհում, հաւատը Աստուծոյ գոյութեան եւ «երկնաւոր Հայր» լինելու իրողութեան: Աստուծոյ գոյութիւնը, իհարկէ, ապացուցանել չենք կարող բանականութեան եւ բնական օրէնքների փաստարկութեամբ, բայց այդպիսի հաւատը իրողութիւն է մարդկային հոգու զարգացման պատմութեան մէջ, ուր հաւատն է եղել աշխարհը շարժող ամենամեծ զօրութիւններից մէկը: Մտածեցէ՛ք, թէ ինչպիսի մեծ դեր են կատարել կրօնների Հիմնադիրները, աստուածամերձ անձնաւորութիւններն ու մարգարէները իրենց ժողովրդի կեանքի մէջ:

Այն, ինչ որ միայն բանականութեամբ եւ մեքենական օրէնքներով առաջնորդուող եւ աշխարհայեացք ունեցող մարդկանց համար անընդունելի է եւ շատերի համար գառանցանք, հաւատաւորի համար կեանք է, զօրութիւն եւ փրկութիւն:

Մեր Տէրը արտաքոյ կարգի նշանակութիւն է տալիս մարդկային հոգու այդ կարողութեան, որի համար բազմաթիւ ցուցումներ կան Աւետարանի մէջ: Կատարելութեան պատգամի հետ կապուած հատուածների մէջ «հաւատ» բառը չի յիշուած, բայց ամբողջը Հիմնուած է առ Աստուած վստահութեան եւ հաւատոյ վերայ: Ինքն էլ ոչ միայն վարդապետական պատգամ է տալիս, այլ իւր անձի օրինակով, վստահութեամբ, հաւատով եւ կատարեալ նուիրմամբ երկնաւոր Հօրը՝ հասկանալի դարձնում այն: Նորա գործը, կեանքը ընթանում է Հայր Աստուծոյ կամքով եւ օրինակ է մեր կատարելութեան ձգտման: Առաքեալն էլ շեշտում է այդ հանգամանքը. «Նմանողք ի՛նձ եղբրուք, որպէս եւ ես՝ Բրիստոսի»:

Ապա ուրեմն, Տիրոջ հետեւելով, Նորա շաւղով ընթանալով, կատարելութեան ուղին եւ նախատիպը գտած կը լինենք: Դէպի վեր, դէպի կատարեալը: Աստուած օգնէ մեզ մեր տկարութեան մէջ:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
«Հասկ», փետրուար, 1946

Ա

Հայ ժողովրդի տարեգրութեան մէջ արտաքոյ կարգի երեւոյթ էր 1946 թուի ներգաղթը դէպի Հայաստան: Վեցերորդ դարից սկսած՝ հայ ժողովուրդը շարունակ հատուածներ է տուել դէպի Հայրենիքից դուրս եղած մերձաւոր եւ հեռաւոր երկիրները՝ բռնի եւ կամաւոր պատճառներով: Բիւզանդական կայսրները Հայ նախարարները իրենց զօրքերով փոխադրել են Թրակիա եւ աւելի հեռու՝ յաճախ արեւմտեան սահմանների պաշտպանութեան կամ նուաճումներ կատարելու համար, իսկ պարսիկները արեւելքում հայ զօրքերով դիմադրել են իրենց թշնամիներին կամ արշաւանքներ կազմել նրանց դէմ:

Արաբական շրջանում շատ նախարարներ, ապստամբելով տիրող բռնութեան դէմ, հալածուած արաբներից, ստիպուած են եղել ապաստան գտնել Բիւզանդական պետութեան սահմանամերձ գաւառներում: Բիւզանդացիք էլ կարողացել են լաւագոյն կերպով օգտագործել այդ հանգամանքը յօգուտ իրենց: Ութերորդ եւ իններորդ դարերում հայ ազնուականութեան եւ ժողովրդի կարեւոր հատուածներ ունենք Կ. Պոլսում, որոնք նշանաւոր դեր են կատարում մայրաքաղաքում եւ պետութեան մէջ զինուորական եւ քաղաքակրթական տեսակէտներով, յատկապէս՝ Մամիկոնեան տոհմի ներկայացուցիչները: Բիւզանդական պետութեան պաշտպանութեան մէջ՝ ընդդէմ արաբների յառաջնութեան եւ կարգաւորեալ արշաւանքների, հայկական տարրը իւր հայ զօրապետներով շատ կարեւոր մաս ունէր. ոչ միայն պետութեան Հինգ բանակներից մէկը հայկական էր, այլեւ միւս բանակներից ոմանց մէջ էլ կային ստուար թուով հայեր, բանակներից ոմանց ղեկավարութիւնն էլ հայ զօրապետների յանձնուած էր:

Սելջուկեանների արշաւանքների եւ Բագրատունեաց անկման հետեւանքներով հայերը աւելի մեծ թուրքով անցել են փոքրասիական կեդրոնները, Սենեքերիմ Արծրունին՝ Սեբաստիա, եւ իշխանական ուրիշ տներ՝ դէպի Կիլիկիայի բարձունքները: Կիլիկիայում եւ սահմանամերձ գաւառներում հայ իշխանութիւնների երեսան գալը ԺԱ դարից սկսած ապացոյցն է, թէ ինչպիսի հոծ բազմութիւն կար այդ շրջաններում, որ կարողանային հետզհետէ ինքնուրոյն հայ իշխանութիւններ կազմել:

Թաթար-թուրքմենական շրջանում գերիների մեծ բազմութիւններ էին ուղարկուում դէպի միջինասիական երկիրները, որ հետզհետէ

խառնուճում էին իշխող տարրի հետ կամ անասունների նման վաճառ-
ուճում քաղաքների շուկաներում: Գրիգոր Խլաթեցին նկարագրում է
գերիների տեղափոխությունը դէպի արեւելք եւ դորա հետ կապուած
աղէտները ուսմիկ եւ ազնուական դասի համար հաւասարապէս:
Փամանակակից ձեռագրական յիշատակարանները լիքն են հայ ժո-
ղովրդի գլխին եկած դժբախտութիւնների նկարագրութեամբ: Մեզ
բաժին ընկած այս մեծ ողբերգութիւնների պատմութիւնը դեռ լիովին
չէ համադրուած մեր մէջ:

Բ

Հազար ինն հարիւր քառասուն եւ վեց թուականը բոլորովին
անսպասելի եւ նոր երեւոյթ բերեց մեր պատմութեան համար. պետա-
կան կեանքով հազիւ ապրել սկսած մեր ժողովուրդը այնքան կազ-
դուրուած է զգում իրեն հարուածներից, որ հրաւէր է կարգում իւր
զաւակներին՝ իւր ծոցը դառնալու դարերի պարտադրուած հողմացրիւ
հոսանքին հակառակ, դարձ դէպի մայր երկիր:

Մեր աչքի առաջ կատարուեցաւ Լիբանանի եւ Սիւրիոյ հայու-
թեան պատասխանը այդ մայրական կոչին՝ բարձր ոգեւորութեամբ,
մինչեւ իսկ՝ ժողովրդական խաւերի կողմից երբեմն չափազանցութեան
հասցրած, ի վնաս գործի կատարեալ կանոնաւորութեան. նոյնը եւ՝
ուրիշ գաղութներում: Ժողովրդի մէջ պոռթկած հայրենասիրական
զգացմունքը երբեմն հեղեղի նման դուրս է գալիս իւր հունից, եւ
դժուար է իրնում բուն սահմանների մէջ պահել. հոգեբանօրէն պէտք
է հասկնալ՝ առանց ամենադոյզն չափով նուազեցնելու կատարուած
իրողութեան մեծ տարողութիւնը: Անաչառ աչքի համար Հայաստանի
կառավարութեան այս ձեռնարկութիւնը հերոսական մի գործ է
հանդէպ Հայրենիքի. ինչպիսի՛ ահաւոր աշխատանքի եւ զոհողութեան
հետ է կապուած մօտաւորապէս 50 հազար հոգի փոխադրել, բնակա-
րան, ապրուստի միջոց եւ համապատասխան գործ հայթայթել նրանց
համար մի փոքրիկ երկրի մէջ: Եւ այս դեռ առաջին տարուան ծրագիրն
է, պիտի շարունակուի եւս մի երկու տարի, մինչեւ լրանայ նախա-
տեսուած ծրագրի կատարումը՝ պարագաների ներած սահմանների
մէջ: Պատերազմի չափ ուժերի լարումն է պահանջուած այսպիսի գործի
կատարումը, եւ նորա յաջող վերջաւորութիւնը պակաս է: Քան
պատերազմի մէջ տարած ամենամեծ յաղթութիւնը: Գոհունակութեան
եւ սիրոյ ամենախորին զգացմունքով է, որ դիտում ենք այս երեւոյթը:
Ուրախ ենք մանաւանդ, որ Սիւրիոյ եւ Լիբանանի մեր հօտին վի-
ճակուեցաւ բախտը 2000-ի չափ հայորդիներ ուղարկել դէպի մայր

երկիր՝ հայթայթելով առաջին երկու կարաւանների ճանապարհա-
ծախսը, որ հանգանակուեց Կաթողիկոսարանի ղեկավարութեամբ:

Գ

Այս տարուայ համար դադարել է ներգաղթի խնդիրը, բայց այս
դադարը հանգստութիւն չէ ո՛չ Խորհրդային Հայաստանի կառավա-
րութեան եւ ո՛չ Սփիւռքի հայութեան համար, այլ նախապատրաս-
տութիւն՝ երկրորդ տարուայ ծրագիրը աւելի կանոնաւոր եւ շրջա-
հայեաց կատարելու: Կառավարութիւնը կը կատարէ իւր անելիքը,
բայց մենք էլ մեր բաժինն ունենք: Բարեգործականը իւր վերան է
առել մի միլիոն դոլարի հայթայթումը իբրեւ Սփիւռքի հայութեան
եղբայրական «լուծայ»՝ կատարուելիք ճանապարհածախսի հաշուին:
Այդ օժանդակութիւնը «լուծայ» անուանեցինք՝ համեմատելով այն
տասնեակ միլիոնների ծախսերի հետ, որ կատարուել են եւ պիտի
կատարուին մինչեւ գործի վախճանը: Բոլորուի՛նք Բարեգործականի
շուրջը այս խնդրում եւ աշխատենք առաւելութեամբ իրականացնել
ծրագրուած նպատակը:

Արդէն Բարեգործականը այս տարուայ ընթացքում մեծ գործ է
կատարած. աւելի քան կէս միլիոն դոլար տրամադրել է կառավա-
րութեան՝ չսպասելով հանգանակութեան ելքին: Ահա ինչ է յայտնում
նա իւր հոկտեմբեր 14-ի զեկոյցի մէջ. «Հ. Բ. Ը. Միութեան Կեդրոնա-
կան Վարչութիւնը, որ առանց հանգանակութեան արդիւնքին սպա-
սելու, սկիզբը արդէն 215000 դոլարի առաջին վարկ մը տրամադրած
էր՝ շոգենաւերու վարձքը եւ առհասարակ չքաւոր ներգաղթողներու
ճանապարհածախսը ապահովելու համար, երկու անգամէն 300000
դոլար եւս փոխարինեց Մոսկուայի Պետական դրամատունը Հայաս-
տանի կառավարութեան ընթացիկ հաշուոյն՝ շոգենաւային կարգադրու-
թիւնները արագացնելու համար»:

Մենք չենք բերում այդ զեկոյցի մէջ յիշուած միւս գործերը:
Բարեգործականը դարձել է մեր կեանքի մեծ եւ կարեւորագոյն
հաստատութիւններից մէկը: Օգնենք ամենայն բարեմտութեամբ, որ
իւր առաքելութիւնը կատարել կարողանայ նաեւ հանդէպ ազգահա-
ւաքման գործին:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
«Հասկ», Առիւմբեր, 1946

ՄԵՐ ԻՂՁԵՐԸ ՀԱՅ ԳՐԻ ՈՒ ՄԱՄՈՒԼԻ ՄԱՍԻՆ*

Մենք մեծ բանաստեղծ չենք, գրական-գիտական մեծ Հեղինակութիւն, որ մեր «պատգամը» տանք Հայ գիրն ու արուեստը այս երկրին մէջ ամէն գնով ապրեցնել կամեցողներին: Բայց սիրում ենք մեր գիրն ու գրականութիւնը, մեր արուեստն ու մշակոյթը եւ, որպէս այդպիսին, մեր Համեստ կարողութեան սահմանների մէջ աշխատել ենք եւ պիտի աշխատինք, քանի շունչ կայ մեր բերանում: Ուստի եւ կը կամենայինք մեր սրտի իղձերն ու ցանկութիւնները յայտնել Հայ գրի եւ դպրութեան մասին:

Առիթ ենք ունեցել ուրիշ անգամ եւս արտայայտելու այդ մասին «Օրհնեցէ՛ք զԱստուած Հարցն մերոց» վերնագրով յօդուածի մէջ: Այնտեղ, արժարժեղով ազգապահպանութեան Հարցը մեր գաղութներին մէջ, փորձել էինք Համառօտակի պարզել, թէ գիրն ու գրականութիւնը ինչ նշանակութիւն ունին ազգի կեանքն ու գոյութիւնը յաւերժացնելու Համար պատմութեան մէջ: Ամենայն ազգ կենդանի է, յառաջադէմ, որքան կենդանի է նորա գիտակցութիւնը իւր Հոգեւոր-բարոյական, գեղարուեստական-մշակութային ժառանգութիւններին մասին: Մարդկային Հոգին է իրական կեանք եւ յաւիտենական բարիքներ բերելու մէջ այդ աղբիւրը ինչպէս անհատի, նոյնպէս եւ Հանրութեան Համար: Մենք ոչ միայն մեր ծնողների եւ ապրած ժամանակի զաւակն ենք, այլեւ՝ անցեալի եւ մեր նախնեաց: Հոգեկան գիտութիւնները, ինչպէս պատմութիւնն է իւր բոլոր ճիւղերով եւ բնական գիտութիւնները իւր ճանապարհով, պարզում են ժառանգականութեան տիեզերական օրէնքը մարմնաւորի եւ Հոգեկանի նկատմամբ. կեանքը երեւոյթների կապակցեալ մի շղթայ է, որ դէպի յաւիտենականութիւնն է ուղղուած, խզումը այդպիսի օղակաւորման՝ մահ եւ կորուստ: Անցեալի գիտակցութիւն եւ գնահատութիւն ներկայ եւ գալիք սերունդի կողմից՝ ազգի անմահութեան երաշխիքն է: Այսպիսի գիտակցութիւնն է այն Հողն ու ջուրը, լոյսն ու ջերմութիւնը, որով աճիլ, զարգանալ եւ պտղաբեր դառնալ կարող է ազգի կենդանութեան ծառը:

* Այս յօդուածը ուղղուած էր Ամերիկայում հրատարակուող «Նոր գիրի» խմբագիր Բեռնամին Նուրիկեանին, որ խնդրել էր մեր պատգամը տայ «հայ գիրն ու արուեստը այս երկրին մէջ ամէն գնով ապրեցնել կամեցողներին»: Փոքրիկ փոփոխութիւններ կատարելով՝ հարկատր համարեցինք մոյժ խօսքն ուղղել եւ մեր թեմերի հայ մամուլին եւ գրի բոլոր աշխատատեղերին:

Այս գիտակցութեան պահպանութեան եւ խորացման մէջ մեծ է մեր պարտականութիւնը իբրեւ ազգի առաջնորդներ, մտաւորականներ, գրողներ, արուեստագէտներ, ուսուցիչներ եւ այլն: Իհարկէ, ազգի ամբողջութիւնն էլ իւր բաժինն ունի, բայց «որում շատ տուաւ, շատ պահանջեցի»: Մեր կոչումը մեծ է եւ նուիրական, ուստի եւ իբրեւ սրբութիւն պիտի լինի մեր խօսքը մեր կեանքի բոլոր մարզերում:

Բայց յատուկ շեշտել կը կամենայինք գրի եւ դպրութեան մարդկանց մասին, եւ խօսքն այստեղ նրանց է ուղղուած: Թատրոնը, բեմական խօսքը, երգն ու խաղը, երաժշտութիւնը տպաւորիչ են, Հզօր, բայց՝ ներկաների Համար միայն. նոյնիսկ նկարչութիւնն ու ճարտարապետութիւնը, որ արուեստների մէջ կարեւոր տեղ են բռնում եւ Հոգեւոր կեանքի բարձունքները մատնանշում, սահմանափակ են ըստ իրենց ազդեցութեան եւ շատ քչերին մատչելի կամ հասկանալի՝ նուրբ երաժշտութեան Հետ: Մինչդեռ գրով ու գրքով խօսքը աւելի մնայուն է եւ Հանրութեան մատչելի: Աշխարհի երեսին, պետական եւ եկեղեցական կազմակերպուած մեքենայի Հետ, կեանքի մեծ շարժիչը գիրն է իւր ընդարձակ հասկացողութեամբ՝ գիրն ու մամուլը: Գրով ու գրքով յայտնուած միտքն ու գաղափարը ոչ միայն աւելի յարատեւ է, այլեւ ծաւալուած՝ ըստ ժամանակի եւ տարածութեան:

Ի՞նչ կը լինէր մարդկութեան վիճակը առանց գրի եւ գրականութեան. դարերի ապրումներն ու իրողութիւնները, ծանօթութիւններն ու գիտութիւնները յօդս կը ցնդէին՝ առանց ապագայ սերունդների սեպհականութիւն դառնալու: Մեր գրիչներից մէկը իւր գրած ձեռագրի (manuscript) արժէքը բացատրելու Համար իւր յիշատակարանի մէջ այն միտքն է արտայայտում, թէ ամենայն Հարստութիւն, դրամ, ստացուածք անցաւոր են, եւ գիրն է միայն մնայուն եւ օգտակար, ինչ ձեռք էլ ընկնելու լինի նա: Ուրեմն, գրի եւ գրքի Համար կատարուած աշխատանքը, կորցրած ժամանակն ու նիւթական զոհողութիւնը ամենազնահատելի են եւ յաւիտենականը եւ բարիք ընդ-Հանրութեան Համար: Ըստ այսմ էլ՝ մամուլի աշխատանքը եւ այն մարդկանց գործն առհասարակ, «որոնք Հայ գիրն ու արուեստը կ'ապրեցնեն այս երկրին մէջ ամէն գնով», արժանի է բարձր գնահատութեան: Ուստի եւ մեր Հայրական յորդորն է, աշխատեցէ՛ք յարատեւ կամքով եւ նուիրմամբ Հայ գրի կենդանի պահպանութեան եւ բարձրացման Համար: Թող սո՛ւրբ մնան ձեր եւ ձեր աշխատակիցների գրիչները, ձեր մելանը՝ մաքուր, եւ ձեր թուղթը՝ միայն ճշմարտութիւն ընդունող: Ահա մեր իղձն ու յորդորը, որ ուղղել կը կամենայինք Հայ գրի եւ մամուլի բոլոր աշխատատեղերին:

Որչափ գնահատելի է գրչի դրական աշխատանքների գործը, նոյնչափ պարսաւելի, երբ ի չարն է գործադրում եւ ընդդէմ ճշմարտութեան այդ սուրբ գործիքը՝ անձնական կրքերի գոհացում տալու կամ, նոյնիսկ, կուսակցական սխալ հասկացում շահերի պաշտպանութեան անունով: Նա միայն բարւոյ, գեղեցկի եւ ճշմարտութեան գործիք է եւ ոչ՝ չարութեան եւ բարոյական տգեղութեան:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
«Նոր գիր», թիւ 1, 1944
«Հասկ», յունուար-փետրուար, 1947



ՄԵՐ ԽՕՍՔԸ ՕԾՄԱՆ ԱՌԹԻԻ

«Տէր Բովոնեցի գիս, եւ իճձ իճշ ո՛չ պակասեցի» (Սաղմ. ԻԲ 2):

Դաւիթ մարգարէի անունով է հասած մեզ այս խօսքը՝ իւր նեղութեան, հալածանքի, կեանքի ամենադժուարին պայմանների մէջ առ Աստուած ուղղուած: Սաղմոսերգուի այս խօսքն է, որ այսօր, մեր նոր կոչման եւ պաշտօնի նուիրագործման այս սրբազան ընկերակցութեան եւ պաշտօնի նուիրագործման այս սրբազան ընկերակցութեան մէջ չենք եւ ոչ հալածանքի՝ մարգարէի նման արտաքին դժուարութիւնների կամ աղքատութեան եւ այլ ծանրութեան տակ ճնշուած, վայելում ենք մեր ժողովրդի սէրն ու յարգանքը Մեր արժանաւորութիւններից աւելի չափով: Սիւրբոյ եւ Լիբանանի ազնիւ եւ լայնախոհ հանրապետութեանց մէջ վայելում ենք քաղաքացիական եւ կրօնական ամենայն ազատութիւն. շնորհիւ դաշնակից ազգերի խորհրդային Միութեան, Ամերիկայի, Անգլիայի եւ Ֆրանսիայի քաջարի բանակների յաջողութեան մեր հին եւ նոր հայրենիքները, այսինքն՝ Հայաստանն ու Սիւրբան եւ Լիբանանը, ազատ են պատերազմական արհաւիրքների եւ աւերումների անմիջական ասպարէզ լինելուց, բայց եւ այնպէս, հոգուս մէջ բարձրանում է հոգսի եւ պարտականութեան ծանր զգացումը:

Պիտի կարողանա՞նք օգտակար լինել մեր Եկեղեցուն, մեր ժողովրդին, որ յոյսերով լի յառել էր իւր աչքերը մեր գալստեան: Պիտի կարողանա՞նք արժանաւոր յաջողը լինել մեր Եկեղեցու երանաշնորհ հայրապետներին, որոնք հոգիների փրկութեան ղեկավար, քրիստոնէական սիրոյ իրականացման, աստուածահաճոյ հաստատութիւնների հիմնադիրներ, հոգեւոր եւ ազգային կեանքի վերածնութեան, հոգեւոր տաճարների կառուցման ճարտարապետներ հանդիսացան, հոգիների առ Աստուած սլացման եւ Նորա Սեղանի վերայ անուշահոտ կնդրիկի նման բուրուելու վարպետներ եւ ուսուցիչներ:

Սուրբ Գրիգորների, Ներսէսների, Սահակ Պարթեւների, Մեսրոպների, Նարեկացիների եւ Շնորհալիների հոգիները երկնքից պիտի դիտեն մեր ամէն քայլը, խօսքը՝ ու գործը, ծառայութիւնը Եկեղեցուն եւ հօտին: Պիտի կարողանա՞նք նրանց գծած շաւղով ընթանալ: Ահա՛, սիրելի՛ք, ինչ հոգս է պատում Մեր սիրտը այս սրբազան վայրկեանին: Ուստի եւ մարգարէի նման Մեր աչքերը դէպի երկինք ենք բարձ-

րացնում. «Տէր հովուսցէ զիս, եւ ինձ ինչ ո՛չ պակասացի»: Մեր աղօթքն է, խնդրում ենք հաւատացեալ ժողովրդին էլ աղօթակից լինել Մեզ, որ Տէրը օգնական լինի Մեզ, նորա խնամքի տակ՝ Մեր ընթացքն ու գործը:

Իսկ «եթէ Աստուած մեր կողմը լինի»՝ առաքելի խօսքի համեմատ, որ որդեգրեցին նաեւ մեր հայրերը ամենամեծ նեղութեան եւ փորձութեան օրերին, երբ պէտք է իրենց հաւատն ու խղճի ազատութիւնը, հայրենիքն ու գոյութիւնը պաշտպանէին Սասանեան ահեղ պետութեան դէմ, Վարդանանց պատերազմին գնալուց առաջ, ի՞նչ դժուարութիւն կարող է կասեցնել «ի սիրոյն Քրիստոսի», այսինքն՝ մեր պարտականութիւնների կատարման ճանապարհին: Քրիստոսի սէրը, սիրելի՛ք, սէրն է դէպի հաւատացեալ ժողովուրդը, դէպի եկեղեցին, դէպի հայրենիքը, դէպի նախնեաց թողած ժառանգութիւնները, դէպի հայ հոգու եւ հանճարի յարատեւ կենդանութեան եւ ստեղծագործութեան պաշտամունքը՝ վառ պահելու այն սրբազան հուրը, որից լոյս եւ ջերմութիւն է տարածւում հոգիների մէջ: Աղօթենք, որ Աստուած Մեզ հետ լինի եւ ձեզ հետ, որ մեր բոլոր ուժերը միացնէ՝ բովանդակալից դարձնելու Մեր պաշտօնը եւ հայրապետական շրջանը իւր բարի հովուապետութեան տակ, եւ երբ մի օր կամենայ իւր մօտ կանչել եւ Մեր տնտեսութեան հաշիւը պահանջել, ասել կարողանանք. «Ձոր ինչ պարտ էր առնել, արարաք» [Ղուկ. Ժ 10]:

Շնորհք Տեառն եղիցին ընդ ձեզ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
«Հասկ», մարտ-մայիս, 1945



ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԵՒ ՆՈՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ա

Կատարուեց, ինչ որ հայութեան իղձն էր տարիներից ի վեր, եւ կատարուեց լաւագոյն կերպով: Հայ Ազգային-եկեղեցական ժողովն էր այդ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի փառաւոր եւ միաձայն ընտրութեամբ:

Բացառիկ երեւոյթ էր մեր պատմութեան մէջ՝ տեսնել համայն հայութեան ներկայացուցչութիւնը հոգեւոր եւ աշխարհիկ դասերի Մայր Աթոռի կամարների տակ՝ սկսած Բուէնոս-Այրոսից, Հիւսիսային Ամերիկայից, Եւրոպայի բոլոր գաղութներից, Եգիպտոսից, Պաղեստինից, Լիբանանից, Սիւրիայից, Պարսկա-Հնդկաստանից, նստած կողք-կողքի Նորհրդային Հայաստանի եւ Միութեան հեռաւոր թեմերի պատգամաւորների հետ: Տասնեակ հազար մղոններով իրարից հեռու ընկած տարածութիւնները, ծովերն ու ովկիանոսները, ներկայ ժամանակի հետ կապուած ճանապարհորդական մեծածախս դժուարութիւնները չէին կարողացել արգելք լինել ներքին մղման եւ բուռն ցանկութեան՝ համախմբուել հինաւուրց տաճարի սրբազան կամարների տակ եւ կատարել իրենց պարտականութիւնը դէպի եկեղեցին: Այս ակընյայտնի, ամենքի համար տեսանելի եւ հասկանալի արտաքին ապացոյցն էր, թէ հայ ժողովրդի համար որքան մօտ է Հայաստանեայց եկեղեցին իւր Մայր Աթոռով եւ Ամենայն Հայոց Հայրապետութեամբ, որ իբրեւ մագնիսական ոյժ իրար էր բերել այդպիսի հոծ թուով ներկայացուցչութիւն աշխարհի ամէն անկիւններից, ուր հայութիւն կայ խմբուած:

Բայց պատգամաւորներին մայրենի երկիրն էր բերել ոչ միայն եկեղեցասիրութեան զգացմունքը, այլեւ հայրենասիրութեան: Հայ հաւատացեալ ժողովրդի պատմական առանձնայատկութիւնն է այդ՝ եկեղեցասիրութիւնն ու հայրենասիրութիւնը սերտ կապուած երեւան բերել կեանքի կարեւորագոյն դէպքերի ժամանակ՝ ս. Սահակ-Մեսրոպների եւ Վարդանանց ու Ղեւոնդեանց օրերից սկսած:

Բ

Ուշադրութեան արժանի եւ բացառիկ երեւոյթ էր ժողովականների մէջ երեւան եկած ներդաշնակ եւ փոխադարձ հասկացո-

դուժեան գալու տրամադրութեան հոգին: Մենք չենք տեսել այդպիսի մի մեծ ժողով՝ համակուած սիրոյ եւ համերաշխութեան այնպիսի հոգով, ինչպէս այստեղ: Հարաւային Ամերիկայից մինչեւ Ռուսաստանի խորքերի պատգամաւորները՝ տարբեր երկիրների եւ պետութիւնների, տարբեր լեզուներով, սովորութիւններով եւ օրէնքներով ղեկավարուող ազգերի միջից եկած, շատ եւ շատ խնդիրների մէջ էլ, բնականաբար, տարբեր հայեացքներով եւ ըմբռնումներով, զգում էին այստեղ մի մեծ, իրար հետ կապուած ամբողջութեան մասերի ներկայացուցիչներ եւ անդամներ: Այդ միութեան ներքին, մղիչ ոյժը ե՛լ եկեղեցասիրական էր, ե՛լ հայրենասիրական:

Հայաստանեաց Եկեղեցին պատմական այլ պայմանների մէջ է ծագել, կազմակերպուել եւ ընթացք ստացել, քան նորանից շատ եւ շատ հզօր եւ մեծ Եկեղեցիները: Բայց ոչ մէկը չի կապուած այնպէս իւր ժողովրդի կեանքի եւ պատմութեան հետ, ինչպէս Հայաստանեայց Եկեղեցին, կրկնում ենք, որպէս հետեւանք իւր պատմական ուրոյն պայմանների: Նա Հայոց ազգային Եկեղեցին է, հայ հոգու ամենամեծ ստեղծագործութիւնը՝ ամուր շողախով միացած ինքնապաշտպանութեան, լեզուի, գրականութեան, արուեստի եւ մշակոյթի բազմաթիւ մարզերի մէջ: Դարերի խորքից եկած սրբազան աւանդն է այդ՝ մեզ հասած: Այդ աւանդի բնազդն էր եւ գիտակցութիւնը, որ կապում էր մեզ ամենքիս իբրեւ ամբողջութիւն: Ահա՛ մեր ժողովի էական եւ բնորոշ գծերից մէկը:

Միութեան այս կապը եւ գիտակցութիւնը երեւան եկաւ եւ շնչտուեցաւ եւ մի այլ կողմից՝ թէ մի է, անբաժանելի Հայաստանեայց Եկեղեցին, որքան եւ վարչական տեսակէտով տարբերութիւններ լինին իւր մասերի մէջ: Երուսաղէմի Պատրիարքութիւնը իւր ներքին կառավարութեան մէջ այլ ձեւ ու կերպարանք ունի, Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը այլ էր իւր սահմանադրական կազմակերպութեամբ, իսկ աւելի առաջ՝ իւր աթոռակալների դիրքով Օսմանեան պետութեան մէջ, Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը այլ՝ իւր անկախ եւ եկեղեցական պետի աւանդութիւններով, բայց ընդհանուր միութեան գաղափարը միշտ պահպանուած, որ այս անգամ առանձնապէս շնչտուեցաւ: Ներկայ էին նախ եւ առաջ Երուսաղէմի պատրիարքն անձամբ ու Կ. Պոլսոյ պատրիարքական տեղապահը իրենց պատգամաւորներով եւ ոչ թէ ներկայացուցիչներով, ինչպէս սովորական էր: Իսկ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ոչ միայն առաջին անգամն էր մասնակցում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան, այլեւ Կաթողիկոսն անձամբ ներկայ էր ժողովին իւր եպիսկոպոսներով եւ աշխարհիկ պատ-

գամաւորներով: Ընտրողական նիստը եւ օժման արարողութիւնները կատարուեցան նորա նախագահութեամբ, նիստերի ժամանակ՝ զոյգ կաթողիկոսներն իրար կողքի, համակամ եւ միասիրտ՝ իբրեւ հոգեւոր հարազատներ. ժողովի գնալիս եւ գալիս՝ միշտ ընթացակից իրար պատրիարքի հետ, իսկ օժման գնալու եւ վեհարան յետ գալու թափօրների ժամանակ՝ մինչեւ իսկ նոյն ամպհովանու տակ, նորընտիր Հայրապետի ցանկութեան համեմատ, աջ եւ ձախ ժողովրդին օրհնելով, որ սրտառուչ տեսարանի տպաւորութեան տակ յափշտակութեան էր հասած իւր ոգեւորութեան մէջ: Այս միութեան եւ եղբայրակցութեան հանգամանքը շնչտուեցաւ նաեւ նորահաստատ սահմանադրութեան մէջ, որի մի յօդուածն է. «Հայաստանեայց Եկեղեցու միասնականութիւնը գլխաւորուած է Ամենայն Հայոց Կաթողիկոսով՝ պատշաճ յարաբերութիւն պահելով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հետ»: Որոշուեցաւ նոյնպէս Հայաստանեայց բոլոր եկեղեցիների մէջ անխտիր պատարագի ժամանակ յիշել Ամենայն Հայոց Կաթողիկոսի անուան հետ Կիլիկիոյ Կաթողիկոսի, Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ Պատրիարքների անունները: Յայտնի է մեր ժողովրդին, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը չէր յիշատակուում Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերում, եւ Ամենայն Հայոց Հայրապետութեան ենթակայ թեմերում՝ Կիլիկիոյ Կաթողիկոսի անունը: Սորանով էլ ժողովը կամեցաւ շնչտուած լինի Հայաստանեայց Եկեղեցւոյ միութիւնը:

Կարեւորագոյն երեւոյթ էր նաեւ Մայր Աթոռի նիւթական ապահովութեան հոգացողութեան խնդիրը: Յայտնի է, որ Հայաստանում հաստատուած նոր իրաւակարգով բոլոր եկեղեցիները, ինչպէս եւ անհատները իրաւունք չունէին հասութեաբեր կալուածներ կամ շահաբեր զբամազուխներ ունենալու: Նոր իրաւակարգով հաւատացեալներն իրենք պիտի հոգան Եկեղեցիների նիւթական կարիքները: Բնականաբար, նոյն օրէնքներին եւ կացութեան է ենթարկուած եւ Մայր Աթոռը, որ մինչեւ այժմ կառավարուել է մոմավաճառութեան եւ կամաւոր նուէրների հասոյթներով: Բայց այժմ, երբ խորհրդային իշխանութեան բարեհաճ վերաբերմունքով իրաւունք է տրուում վերաբանալ հոգեւոր ճեմարանը, ունենալ տպարան, եկեղեցական պաշտաման եւ կեանքի հետ կապուած գրքեր եւ հրատարակութիւններ կատարել, երբ վերակազմուում է նոր միաբանութիւն, եւ յարութիւն է առնում եկեղեցական մի նոր կեանք նոր իրաւակարգի սահմանների մէջ, ընդարձակուում է եւ կարեւորագոյն խնդիր դառնում նիւթական ապահովութեան հարցը: Ժողովը երեւան հանեց նախ, թէ բաւական գումարներ են նշանակուած թեմերի կողմից իբրեւ միանուագ նուէր-

ներ կամ «դարբասներ»՝ ժողովի հետ կապուած ծախսերը հոգալու եւ մասամբ նւթական կացութեան օգնելու: Ծնմարանի բացման առթիւ թեմերի եւ անհատ պատգամաւորների կողմից խոստումներ եղան հոգալու քառասուն սաների թոշակը՝ իւրաքանչիւրի համար տարեկան 500 դոլար: Կիլիկիոյ Կաթողիկոսը յայտնեց, որ եգիպտարնակ պ. Կ. Սարեանը իրեն յանձնել է 50 եգիպտական ոսկի՝ փոխանցելու Մայր Աթոռի իրրեւ տարեկան թոշակ իւր անունով մի սանի, որ պէտք է մշտական դառնայ, ինչպէս եւ՝ դպրեմանքում ունի մի սան: Մայր Աթոռի համար իրրեւ մշտական հասոյթ որոշուեցաւ էջմիածնական թեմերի եկեղեցիների ընդհանուր եկամուտներից 5 տոկոսը յատկացնել Մայր Աթոռի պահպանութեան, չհաշուած կամաւոր նուէրները: Այս պարտաւորութեան չի ենթարկուում Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ իրրեւ Անթիլիասում նոր հաստատուած եւ տարբեր պայմանների ենթակայ, ինքն էլ կարօտ օգնութեան: Տաճարի նորոգութեան հոգացողութիւնը յանձնուեցաւ զոյգ Կաթողիկոսներին՝ իրենց գիտցած միջոցներով ձեռք բերելու հարկաւոր գումարը, յայտնի դառնալով ժողովին, թէ նախկին նուիրակի ձեռքով հաւաքուած պատրաստ գումարն է 37000 դոլար: Սակայն, ժողովը չվերջացած, արտասահմանից հեռագրական լուր ստացուեցաւ, թէ մի մեծահարուստ ազգային կամեցում է իմանալ, թէ որքան ծախս կը պահանջէ տաճարի նորոգութիւնը եւ վանքի պահպանութիւնը: Այսպիսով, համազգային այդ մեծ խնդիրն էլ պիտի հոգացուի, եւ ապահովուի հազարաւոր տարիների պատմական եւ սրբազան յուշարձանի կեանքը:

Գ

Արդէն յիշեցինք, թէ այս ժողովը եկեղեցական խնդիրներից զուրս եւս ունեցաւ իւր մեծ նշանակութիւնը: Աշխարհի ամէն կողմերից եկած պատգամաւորները իրենց աչքերով տեսան հայրենի երկրի պետական, տնտեսական, մտաւոր եւ գեղարուեստական կեանքի մեծ յառաջադիմութիւնը կարճ ժամանակի մէջ: Տեսան Երեւանում սկսուած սքանչելի շինարարութիւնը՝ եւրոպական մտքով, լայն եւ ծառագարդ պողոտաներով, ընդարձակ հրապարակներով, պարտէզներով եւ ծաղկանոցներով: Օպերայի եւ Կառավարական տան շէնքերով պարծենալ կարող ենք մեզնից թուով շատ աւելի մեծ եւ պետականութեամբ հին ազգերի առաջ. անմահ Թամանեանի գործերը՝ գեղեցիկ, հոյակապ, հայ ճարտարապետական ոճով ու զարդարանքով: Տեսան գեղարուեստական, պատմական, ազգագրական, հայ գրողների, երկրաբանական թանգարանները, հնութեանց պահպանութեան կոմիտէն, պետական կեդրոնական գրադարանը իւր երկու միլիոնի չափ տպած գրքերով,

Մատենադարանը (ձեռագրատունը) տաս հազար ձեռագիրներով եւ երեք հազարի չափ ֆրագմենտներով, հայ ժողովրդի ամենամեծ գանձը՝ կարգաւորուած եւ մշակուած ցուցակներով, որ մեծ օգնութիւն է գիտութեամբ զբաղողների համար, պահպանութիւնն էլ՝ խնամքով եւ աշխատող պաշտօնեաներով: Ծրագրուած է մեծ եւ փառաւոր շէնքեր շինել թանգարանի եւ Մատենադարանի համար եւ... կարո՞ղ էք մտածել, զարդարուած ս. Սահակի եւ ս. Մեսրոպի, նարեկացու եւ այլոց արձաններով, որոնց նախագծերը ցոյց դրուած տեսանք մատենադարանի պատերին: Քսան-քսանհինգ տարի առաջ, Խորհրդային յեղափոխութեան սկզբնական շրջաններում, շատ հայրենասէրներ մտահոգութեան մէջ էին, թէ ինչ պիտի լինի մեր վիճակը ազգային տեսակէտով, մեր անցեալը իւր ստեղծագործութիւններով եւ մնացորդ հնութիւններով: Այսօր ազգային զգացումն ու անցեալի գնահատութիւնը իւր կարեւոր դերն է կատարում մեր նոր ստեղծագործութեան մէջ՝ ենթակայ բարձր խնամքի եւ գուրգուրանքի: Եկեղեցին էլ սկսում է յարութիւն առնել նոր պայմանների սահմանների մէջ: Ամենայն յեղափոխութիւն իւր սկզբնական շրջանում բուռն է եւ յարձակողական, հասկանալի է այդ: Բայց շարունակենք մեր բացատրութիւնը:

Ունինք գիտութեան եւ արուեստի բարձր հաստատութիւնները, Գիտութեանց ճեմարանը իւր բաժանմունքներով, Համալսարանը իւր ֆակուլտետներով, կլինիկաներով, հիւանդանոցներով՝ մի ամբողջ համալսարանական թաղամաս: Ունինք մեր երաժշտական, նկարչական եւ այլ մասնագիտական՝ դպրոցները, Պետհրատը... Եւ այս բոլորը տեսան մեր պատգամաւորները, շփումն ունեցան պետական գործիչների, մտաւորականների, բանաստեղծների, վիպասանների, երաժշտագէտների, երգիչների եւ դերասանների մեծ խմբերի հետ. տեսան, թէ մի նոր ստեղծագործական կեանք է սկսուած մեր ժողովրդի մէջ՝ ընդունակ բարձր թոխչների եւ յառաջադիմութեան: Լսեցին եւ ակնատես եղան հայ լեզուով երգուած օպերաներ, ազգային կամ օտար ստեղծագործութիւններ, տեսան բեմական արուեստի լաւագոյն դերասաններով ներկայացումներ: Ոմանք ներկայ եղան եւ երաժշտական դպրոցների աշակերտների քննական նուագահանդէսին, հիացմունքով ունկնդրեցին մեծերի եւ փոքրերի անհատական եւ խմբական նուագներին եւ երգերին՝ շատերի մէջ նկատելով ակնյայտնի տաղանդի ապացոյցներ: Ձէ՛, Երեւանը փոխարկուել է եւ փոխարկուում է գեղարուեստական եւ երաժշտական քաղաքի՝ համեմատ մեր ժողովրդի գեղարուեստական կենդանի զգացման եւ ունակութեան, որ ժառանգել

ենք մեր հայրերից: Ինչքան փոփոխութիւններ մեզ համար, որ տաս տարի էր, ինչ հեռացել էինք հայրենիքից:

Պատգամաւորներից շատերը այցելեցին եւ նորաշէն աւանները երեւանի շուրջը. Արաբկիրը քաղաքանման, Սեբաստիան, Մալաթիան, Նուբարաշէնը, Բիւթանիան... նախկին անապատների մէջ, այժմ կանաչազարդ եւ ծաղկեալ աւաններ՝ դպրոցական, մշակութային եւ արդիւնաբերական այլեւայլ հաստատութիւններով եւ շէնքերով: Այդ եւ ուրիշ անապատ վայրերի վերածումը պտղաբեր դաշտերի եւ այգիների հետեւանք էր ջրանցքների բացման եւ ոռոգման գործի կանոնաւորման, որ Խորհրդային Հայաստանի կառավարութեան կարեւորագոյն աշխատանքներից մէկն է: Երեւանի եւ Վաղարշապատի մէջ եղած տարածութեան բաւական ընդարձակ մասը ճանապարհի երկու կողմից էլ անապատ էր, որ այժմ պտղաբեր այգիներ են եւ պարտէզներ: Այցելեցին նաեւ հին, պատմական եւ նուիրական վայրեր՝ Հինաւուրց Օշականը ս. Մեսրոպի գերեզմանով, Աշտարակը, Հանավանքը իւր աւերակների մնացորդներով՝ երբեմնի լուսաւորութեան կեդրոններից մէկը, Սեւանը համանուն գեղեցիկ ծովակով, Տրդատայ թախտը յունահռոմէական ոճի ամրոցով եւ մեհենական տաճարով, Ազատ գետի անդնդախոր եւ հիասքանչ ձորակներով բազալտի ահաւոր ժայռերը կախուած ձորի վերայ, Գեղարդայ վանքը իւր վիճափոր տաճարներով, Մխիթար Այրիվանեցու քարայրը, ուր, կարծում ենք, առանձնութեան մէջ նա գրել է իւր վիթխարի Ճառընտիրը եւ միւս աշխատութիւնները, Գեղարդաձորը՝ բնութեան ամենագեղեցիկ տեսարաններն առաջին:

Այս համառօտ նկարագրութեամբ պարզ պիտի լինի ժողովի պատմական արժէքը, եւ հասկանալի՝ այն մեծ ոգեւորութիւնը, որով պատգամաւորները վերադարձից յետոյ սկսել են դասախօսութիւններով եւ յօդուածաշարքերով հաղորդակից անել ժողովրդին իրենց տպաւորութիւնները՝ աւելի սերտ կապելով հայրենիքի հետ: Լինենք հաւատարիմ քաղաքացիներ այն բոլոր երկիրների, ուր սիրալիւր ասպնջականութիւն ենք գտել՝ չմոռանալով մեր պատմական հայրենիքը, դէպի ուր ուղղուած պիտի լինին մեր հոգու աչքերը:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
«Հասկ», օգոստոս-հոկտեմբեր, 1945

Ա

Սփիւռքի հայութեան գլխաւոր հոգան է հայ գիտակցական կեանքի պահպանութիւնը, առանց որին վտանգուած է եւ նորա նիւթական կեանքը իբրեւ ազգ: Հայութեան երկու երրորդն ապրում է այժմ Հայաստանից դուրս. դորա մէջն է եւ սովետական երկիրների, մանաւանդ Ռուսաստանի խորքերը ցրուած հայութիւնը: Բայց մեր խօսքը նրանց մասին չէ, այլ՝ խորհրդային երկիրներից դուրս հայութեան, որ ցրուած է տարբեր քաղաքակրթութեան, լեզուների եւ կրօնների պատկանող ազգերի մէջ: Հեշտ չէ այսպիսի պայմանների մէջ պահել եւ զօրացնել բոլորին ի մի բերող եւ միացնող մի զօրութիւն, որ ազգային գիտակցութեան գաղափարն է: Այդ կողմից դժուարագոյն պայմանների մէջ է մեր ներկայ հայութիւնը:

Ազգային գիտակցութեան եւ ընդհանուր հայրենիքի գաղափարը միանգամից չի ծագում եւ զարգանում, այլ՝ հետզհետէ, ժամանակի ընթացքում: Հանրային կազմակերպութիւնների հիմքը ընտանիքն է, ընտանիքների միութիւնից է ծագում տոհմը կամ ցեղը, որ իւր ցեղապետի իշխանութեան տակ միանում է՝ պաշտպանելու իւր կեանքը, սեպհականութիւնը, հողը: Ինքնապաշտպանութեան բնազդը շատ կարեւոր դեր է կատարում այս միութեան ծագման եւ զարգացման մէջ: Միեւնոյն ժառանգումն ունեցող տոհմերի կամ ցեղերի բազմացման եւ հողի կամ բնակավայրի ընդարձակման հետ յառաջ են գալիս ազգութեան, ընդհանուր հայրենիքի եւ պետութեան գաղափարները: Մարմնական եւ նիւթական պաշտպանութեան հետ զօրանում է հոգեկան միատեսակ ժառանգութիւնների ու նրանց պաշտպանութեան հարցը, ինչպէս լեզուն է, ժողովրդական բանահիւսութիւնը, կրօնն ու նորա կազմակերպութիւնները, գրականութիւնը, արուեստն ու մշակոյթը: Ահա այն տարրերն ու օղակները, որոնց միութեամբ եւ կապակցութեամբ յառաջ է գալիս եւ զարգանում ազգային ամբողջութեան գաղափարը:

Սփիւռքի հայութեան ազգային գիտակցութեան, դորա հետ էլ նորա պահպանութեան խնդիրը պայմանաւորուած է վերեւ յիշած ժառանգութիւնների պահպանութեամբ: Բնականաբար, Սփիւռքում հայրենի հողի ժառանգութեան եւ պետական կազմակերպութեան խնդիր չունինք, բայց հոգեւոր կապն ու սէրը նրանց հետ կարեւորագոյն ազդակ է եւ միջոց՝ վառ պահելու մեր զգացումը դէպի ազգի

ամբողջութիւնը: Նիւթական հայրենիքից զատ կայ Հոգեւոր, իմացական հայրենիքի գաղափարը, որ ամենազօրաւոր միջոցն է, կապը ազգային միութեան պահպանութեան, որը, սակայն, հայրենիքից դուրս եւ օտար ժողովուրդների մէջ ապրող հատուածների համար ենթակայ է թուլացման:

Բ

Ինչպէս բարդ են ազգայնութեան բաղկացուցիչ տարրերը, նոյնպէս էլ բարդ են եւ բազմակողմանի նորա պահպանութեան միջոցները: Մենք ունինք այլեւայլ տեսակ կազմակերպութիւններ, ամենից առաջ՝ Բարեգործականի մեծ միութիւնը, ունինք կուսակցական եւ հայրենակցական միութիւններ, մամուլ, որոնք մեծ օժանդակ են ազգապահպանութեան նուիրական մտքին, մանաւանդ, եթէ զգաստ լինին եւ չափաւոր իրենց պայքարների ժամանակ: Բայց այդ միջոցների մէջ երկուսը կարեւորագոյններն են՝ դպրոցն ու Եկեղեցին. երկուսն էլ իրարու օժանդակող եւ իրար լրացնող հաստատութիւններ, «կենդանարար Հոգու» պահպանութեան, զօրացման եւ մշակման աղբիւրներ: Սովորական խօսք է, թէ դպրոցը Եկեղեցու գաւիթն է, որի միջով անցնում ենք դէպի Եկեղեցին: Դպրոցի մէջ մեր մատաղ սերունդը իւրացնում է մայրենի լեզուի եւ պատմութեան տարրական գիտելիքները, եւ դորանով հեշտանում է Եկեղեցու կատարելիք դաստիարակչական մեծ գործը: Եկեղեցին ինքն էլ մի բարձր դպրոց է հասակաւորների համար, բայց եւ ոչ պակաս՝ մատաղ սերունդի բարոյական դաստիարակութեան: Այնտեղ հաւաքուած են նոյն ազգի որդիները՝ նոյն լեզուով աղօթելու իրենց հայրերի Աստուծոն, նոյն լեզուով Հոգեւոր երգեր եւ արարողութիւններ լսելու եւ տեսնելու, քարոզներ լսելու, հաղորդակից լինելու համայնական կեանքին: Նա մեր միութեան, իրար հետ Հոգեւորապէս կապելու հաստատութիւնն է՝ տեղականից զատ ընդհանրական իմաստով: Մատակարարն է նա աւետարանական վարդապետութեանց ու ճշմարտութիւնների, մեր հայրերի Հոգեւոր ապրած բարեպաշտութեան եւ նորանից բղխած բարեգործութեան, շինարարութեան, արուեստի եւ ստեղծագործութեան:

Մեր պատմութեան ընթացքը այդ մտքի յայտարարն է, մարմնաւորումը: Չլինէր Լուսաւորչի եւ նորա որդիների եւ թոռների աշխատանքը, չէինք ունենայ Ե դարի վերածնութիւնը, կազմակերպուած եւ հաստատուն հիմքերի վերայ դրուած ազգային Եկեղեցին: Չունենայինք ս. Սահակի եւ ս. Մեսրոպի նման գիտակից, սրտացաւ, իրենց

ժողովրդի պահպանութեան եւ փրկութեան Հոգիով տարուած անձինք, չէինք ունենալ հայ գիր, Սուրբ Գիրք, Թարգմանական եւ ինքնուրոյն ոսկեղէն լեզուով գրուած դպրութիւն: Չունենայինք նոր սերունդ պատրաստող ուսուցիչներ կամ վարդապետներ, չէինք ունենալ Թարգմանչաց հոյլը՝ Կորիւն սքանչելի, Ղազար Փարպեցի, Եգնիկ եւ Եղիշէ՝ դասական, Հոգելից մատենագիրներ, Յովսէփ եւ Ղեւոնդ Երէցներ, Վարդան եւ Վահան Մամիկոնեաններ:

Նոյնն ասել կարող ենք մեր պատմութեան ամբողջ ընթացքի համար: Յիշեցէ՛ք երկար շարքը մեր հայրապետների, մատենագիրների, որոնք կուրծք տուին պարսիկ, արաբ, բիւզանդացի, սելջուկ եւ այլ հրոսակների հալածանքներին եւ պահպանեցին Լուսաւորչի եւ նորա սերունդի, ինչպէս՝ եւ յետագայ մեր սուրբ հայրերի վառած եւ պահած հայ լուսոյ Հոգեւոր կանթեղը սպառնացող փոթորիկների եւ ամպրոպների դէմ: Յիշեցէ՛ք մեր վարդապետարանների եւ դպրոցների դերը մեզ վիճակուած դժուարին պայմանների մէջ, Հոգեւոր եւ ստեղծագործական ազգային դէմքի պահպանութեան մէջ:

Գ

«Մարդ է, որ գործէ գերկիր» կարճ եւ բովանդակալից խօսք է՝ կեանքի եւ փորձառութեան վերայ հաստատուած, որ մենք ամէն օր ստուգել կարող ենք: Ամենայաւ երկիրն ու Հողը կարող է դառնալ խոպան եւ անպէտք, եթէ նա չմշակուի, խնամքի եւ հոգածութեան առարկայ չլինի. եւ ընդհակառակը՝ քարքարոտ տարածութիւններ եւ առապարներ կը փոխարկուին պտղաբեր դաշտերի, եթէ մաքրուին քարերից եւ աւելորդ բոյսերից, հերկուին, պարարտացուին եւ ոռոգուին կանոնաւորապէս: Ծահիճներից իսկ կարելի է ընտիր հանդեր պատրաստել, ինչպէս այժմ փորձ է լինում մեր հայրենիքում: Նոյնն է Հոգեւոր եւ մտաւոր անդաստանների համար. կ'աղօտանայ մեր գիտակցութիւնը, կը ցամքի մեր սէրը դէպի հայրենիքը՝ նիւթական եւ Հոգեւոր, դէպի ներկան եւ անցեալը, կը խաւարի մեր ազգային մտքի եւ Հոգու լոյսը, եթէ հայրենի կանթեղին մէջ գիտութեան իւղը չլեցնենք յարատեւ եւ կարգաւորեալ աշխատութեամբ: Ի՞նչ արժէք կ'ունենան անցեալի թանկագին ժառանգութիւնները, մայրենի լեզու, գրականութիւն, բովանդակալից պատմութիւն, եթէ մենք նրանցից օգտուելու միջոցը չունենանք, եթէ նրանք «անձանօթ աշխարհ» դառնան մեզ համար: Ի՞նչ սպասել կարող ենք մեր դարաւոր «լուսոյ խորան», ազգային եւ առաքելական Եկեղեցուց, եթէ առաջնորդներ, Հովիւներ, քարոզիչներ չունենանք, ուսուցիչներ եւ վարժուհիներ՝

մեր դպրոցների համար: Այստեղ եւս արդարանում է ճշմարիտ խօսքը. «Մարդ է, որ գործ է գերկիր»:

Սփիւռքի, ինչպէս եւ Ամերիկայի հայութեան հին սերունդը որոշ չափով բերել է իւր հետ լաւ կամ վատ պատրաստուած քահանաներ, ուսուցիչներ, գրողներ, փորձառութիւն ունեցող հասարակական գործիչներ, բերել է իւր հետ ստուար թիւ հայերէն գրել-կարդալ գիտցողներ: Բայց ի՞նչ պիտի լինի մեր վիճակը մի քսանքսանեւհինգ տարի յետոյ, երբ պակասում է դրանց թիւը, եւ չունենք աղբիւր՝ աճող պահանջին լրումն տալու: Քննադատում ենք մեր քահանաներին, վաղը նրանց նմանները, նոյնիսկ աւելի պակասաւորներն էլ չպիտի ունենանք. քննադատում ենք մեր ուսուցիչները եւ վարժուհիները, վաղը այդպիսիներն էլ չպիտի ունենանք. քննադատում ենք մեր դպրոցները, վաղը նրանք պիտի փակուին ինքնուտինքեան՝ դասատուներ չունենալու պատճառով: Պէ՞տք է ցամաքի մեր գրականութիւնը, դադարին մեր թերթերը, որովհետեւ ոչ միայն հայերէն գրողներ պիտի պակասին, այլեւ հայերէն ընթերցողներ, որ զգալի է հէնց այժմ նոր սերունդի մէջ: Պարտաւոր ենք մտածել այս մասին, փոխանակ անմտութեան հասած երկպառակութեամբ կամ անփութութեամբ կորստեան ծովի մէջ խեղդուելու՝ անտարբեր դէպի ապագան, մեր ժողովրդի գոյութեան աւազ խնդիրը:

Դ

Ուրեմն, ի՞նչ պիտի անենք:

Հեշտ չէ այս հարցին միանգամից պատասխանել: Մենք արդէն ակնարկեցինք, թէ ինչպէս բարդ են ազգութեան գաղափարի բաղկացուցիչ տարրերը, այնպէս էլ բարդ են նրանց պահպանութեան եւ զարգացման ուղիներն ու միջոցները: Բայց նրանց մէջ կայ կարեւորներից կարեւորագոյնը, որ դպրոցն ու Եկեղեցին է: Առանց դպրոցի եւ առանց կենդանի, կարող եւ չունչ տուող Եկեղեցու ոչ միայն երկրորդական կը դառնան մեր միւս հաստատութիւններն ու կազմակերպութիւնները, այլեւ նրանք էլ կը մեռնին եւ կը չորանան, ինչպէս անսնունդ մնացած կենդանիներն ու բոյսերը: Մեզ պէտք են ազգային գիտակցութեան բովից անցած գործիչներ, կենդանի մարդիկ եկեղեցական եւ դպրոցական ասպարիզում, որպէսզի կարելի լինի պահպանել այն ժառանգութիւնները, որ սնունդ են բերում ազգային յարատեւ գոյութեան: Լեզուի եւ Եկեղեցու, ազգային գիտակցութեան զօրացման խնդիրը հրատապ է, ստիպողական, ապա թէ ոչ ուշ կը լինի յետագայում: Այդ խնդիրը պէտք է մեր մտահոգութեան կեդրոնը կազմէ

այժմեանից՝ կարգաւորեալ եւ նախամտածուած ծրագրով դիմելու նպատակին:

Մասնաւորելով մեր խօսքը մեր վիճակի մասին՝ պիտի շեշտենք, որ անհրաժեշտ է ստեղծել մի «օջախ», մի դպրոց, որտեղից լոյս եւ ջերմութիւն սփռուի մեր հատուածների մէջ: Մենք պէտք է ունենանք հայագիտական-աստուածաբանական մի ճեմարան (կողեճ), որտեղ պատանիները կատարելապէս ծանօթանան մեր դասական եւ նոր լեզուին, իւրացնեն ազգային եւ եկեղեցական պատմութեան եւ գրականութեան գանձերը անհրաժեշտ ընդհանուր գիտելիքների հետ: Այդպիսի մի դպրոցից միայն լցնել կարող ենք անհետացող քահանաների, ուսուցիչների եւ գրողների շարքերը:

Նոր պայմանների մէջ ենք ապրում, նոր պայմանների եւ պահանջների համեմատ էլ պէտք է կազմակերպուին մեր գաղութները եկեղեցական եւ հոգեւոր կեանքի շրջաններում, եթէ չենք կամենում խեղդամահ լինել: Հեռու՛ մեզանից յուսահատութեան տրամադրութիւններն ու խօսքերը, որ իրապէս ոչ թէ լուրջ մտածողութեան արդիւնք են, այլ անփութութեան, ծուլութեան եւ զոհողութիւնից խուսափելու հետեւանքներ: Անշուշտ, հեշտ չէ ստեղծուած դժուարագոյն պայմանների մէջ Եկեղեցի եւ ազգ պահել Սփիւռքի մէջ եւ նրանց գոյութիւնն ապահովել, բայց ջերմեռանդ եւ հաւատով, կարգաւորեալ եւ տոկուն աշխատութեան առաջ սառցակոյտերն էլ կը հալուին:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
«Հայաստանեայց Եկեղեցի», մայիս, 1941
Նիւ Եորք

ՄՇԱԿՆԵՐ ԵՆ ՊԷՏՔ ՄԵՋ

«Հուճճք բազումք են, եւ մշակք՝ սակաւք»
[Մատթ. Թ 37]:

Ա

Տիրոջ խօսքերից մէկն է այս՝ պարզ եւ հասկանալի, կապուած երկրագործական կեանքի հետ: Գիւղացին հերկել է երկիրը, մաքրել հողը, ցանել սերմը, ջրել, հսկել է, որ մատղաշ եւ կանաչ արտը անասունների կերակուր չգառնայ: Ահա հասել է ժամանակը, հասկերը հատիկներով լցուել, ոսկի յոյսերի իրականացման վերջին բախտաւոր վայրկեանը մօտեցել՝ իւր աշխատանքի պտուղը քաղելու: Բայց հնձուոր չկայ կամ չկայ հարկաւոր չափով: Հինգ-տասն օր եւս եթէ չհնձուի եւ չհաւաքուի այն, բարկ արեւի տակ պիտի չորանան ծղոտտները, եւ թեթեւ հողմից անգամ կոտորուի եւ գետին թափին հատիկներով լցուած հասկերը. պիտի ոչնչանայ ամբողջ տարուայ աշխատանքը, չքանայ նորա ամբողջ ակնկալութիւնը: Հնձուոր է պէտք, մշակ է պէտք. այս է ըոպէի հրամայական պահանջը:

Երկրագործական կեանքից առնուած այս պարզ եւ հասկանալի պատկերով Յիսուս կամեցել է Աւետարանի եւ Հոգեւոր կեանքի, մենք կ'աւելցնենք՝ ազգային-եկեղեցական կեանքի պահանջները, կարիքը հասկացնել փոխաբերական իմաստով: Հողի եւ անդաստանի նման է եւ մարդկային հոգին. պիտի հերկել, սերմանել, մաքրել աւելորդ բոյսերից, որպէսզի չխեղդուի արտը վնասակար բոյսերից եւ, զարգանալով, ատոքանայ եւ պտղաբեր դառնայ: Ամենափափուկ հողն անգամ, եթէ չմշակուի, հարկաւոր սերմը չձգուի այնտեղ եւ խնամուի, կը դառնայ խոպան, վայրենի բոյսերով ծածկուած անպէտք տարածութիւն: Բայց աշխատութեան առաջ նոյնիսկ քարքարոտ առապարները պտղաբեր դաշտերի կը փոխարկուին, եւ ճահիճները՝ օգտակար հանդերի: Խնդիրն այն է, որ մենք ունենանք հարկաւոր մշակները՝ հերկելու, սերմանելու աստիճանից սկսած մինչեւ հունձքը, կախելը եւ ոսկի հատիկները շտեմարան փոխադրելը: Եւ այս նոյնն է անհատի, թէ ժողովրդական հատուածի կամ ամբողջութեան համար:

Ինչպէս հողը բազմատեսակ բոյսեր աճեցնելու յատկութիւնն ունի՝ հացահատիկներից, բամբակից ու թանկագին բոյսերից սկսած մինչեւ խաղողի այգիները եւ պտղատու պարտէզները, այդպէս էլ մարդկային հոգին հարուստ է եւ ճոխ՝ ունակութիւններով, եթէ

մշակենք եւ օգտագործենք այն բարձրագոյն նպատակների համար: Այնտեղ ստեղծուած, ուճանում եւ բիւրեղանում է մայրենի լեզուն՝ ամենաթանկագին գանձը մի ժողովրդի համար, որով մարմինն եւ առնում նորա յոյզերը, սրտի եւ մտքի ելեւէջները, իղձերն ու տենչերը բանաստեղծութեան եւ գրականութեան այլեւայլ ճիւղերի մէջ: Այնտեղ է զարթում, աճում, բարձրանում ու խորանում մարդկային միտքը, գիտակցութիւնը, բարոյական կամքը, որով երկնաւոր ու անցաւոր կենդանին (որ մարդ է կոչուում)՝ գետնի եւ նիւթի հետ կապուած, սաւառնել կարող է աստղազարդ երկնքի ոլորտներում՝ աստուածամերձ դառնալով: Այնտեղ է ծագում եւ զարգանում անշունչ քարին, մետաղին, կտաւին կեանք տալու եւ հզօր ու յուզող լեզուով խօսեցնելու կարողութիւնը, որ արուեստ է կոչուում իւր բոլոր ճիւղերով: Անսահման են մարդկային հոգու անդաստանները եւ բազմատեսակ, եթէ մշակուած են նրանք, մաքրուած բացասական եւ հեղձուցիչ որոմներից, որոնցից մէկն էլ անգիտութիւնն է, մտքի խաւարը:

Բ

Բազմատեսակ են անհատական, հասարակութեան եւ ազգային հոգու մշակման միջոցներն ու հաստատութիւնները, որ այստեղ մի առ մի թուել չենք կարող, բայց մեր գաղութահայ կեանքի համար ամենակարեւորը, կրկնում ենք, դպրոցն ու Եկեղեցին է, Եկեղեցին եւ դպրոցը: Սրանց բարգաւաճման եւ կենդանացման հետ կը բաւարարուին մասամբ եւ միւս միջոցները, որ պայմաններն են որեւէ հասարակութեան եւ ազգի յարատեւ պահպանութեան: Բայց ցաւն այս է, որ մեր գաղութահայութիւնը, ներկայ դէպքում՝ ամերիկահայութիւնը, անհրաժեշտ մշակներ չունի այս երկու կարեւորագոյն հաստատութիւնների համար կամ, գոնէ, չունի հարկաւոր չափով: Դպրոցը կը դառնայ խեղճ, ողորմելի, անկարող՝ արդիւնք տալու սպասուած չափով, եթէ կարող ուսուցիչներ եւ վարժուհիներ չունենանք: Եկեղեցու կեանքը կ'աղքատանայ՝ անկարող իւր բարձր կոչման եւ նպատակին ծառայելու՝ Հոգեւոր փրկութեան եւ ազգային գաղափարի կենդանի պահպանութեան տեսակէտներով, եթէ հարկաւոր չափով պատրաստուած քահանաներ եւ պաշտօնեաներ չունենանք: Մենք այս խնդիրը շօշափել ենք այլ առթիւ, բայց այստեղ էլ չենք քաշուած երկրորդել աւելի եւ աւելի, մինչեւ որ ընդհանրանայ այն, հայ հասարակութեան սեպհականութիւն դառնայ: Եթէ մենք կամենում ենք, որ մեր լեզուն չմեռնի, որ մեր նոր սերունդը որոշ չափով հաղորդակից մնայ մեր ազգային եւ եկեղեցական անցեալ եւ ներկայ կեանքի հետ, պէտք է երկու հաստատութիւնների կամ հոգեւոր

անդաստանների համար մշակներ պատրաստենք:

Տարաբախտաբար, հասարակութեան նոյնիսկ մտաւորականների մէջ չեն պակասում յոռետեսներ եւ կասկածողներ մեր գաղութահայութեան կեանքի յարատեւութեան մասին: Մենք ոչ միայն օգտակար չենք համարում, այլեւ բացարձակ վնասակար ենք համարում այդպիսի մտքերի արծարծումը մանաւանդ լրագրութեան մէջ, որ շատերի համար միակ աղբիւրն է հասարակական կեանքով հետաքրքրուելու: Չենք ասում, թէ աչքներս փակենք դժուարութիւնների առաջ, բայց չպէտք է նպաստենք ժողովրդի հաւատը կորցնելու իւր ապագայի նկատմամբ: Պնդողներ կան, թէ անկարելի է Ամերիկայում կամ Եւրոպայում նոր սերունդից մարդիկ պատրաստել, որ ազգային եւ եկեղեցական ծառայութեան նուիրուին: Շատերը անկարելի են համարում հայ լեզուի պահպանութիւնը Ամերիկայում կամ Եւրոպայում: Անկարելի են համարում հայ նոր սերունդը հետաքրքրել ազգային կամ եկեղեցական կեանքով: Պէտք է մեռնի գաղութահայութիւնը ազգային տեսակէտով, ուրեմն եւ իզուր է ձեռնարկութիւններ անել եւ աշխատել նորա յարատեւութեան անունով: Այդ միեւնոյն է ասել՝ մահկանացու են բոլոր անհատները, ի վերջոյ նոյնիսկ՝ ազգերը, ուրեմն պէտք չէ շարունակել մեր գոյութիւնը. երբ հիւանդ ենք, պէտք չէ բժշկի դիմել, միջոցներ գործադրել՝ մեր առողջութիւնը վերականգնելու:

Այդ բոլորը համարում ենք չափազանցութիւն եւ կեանքի դժբախտութիւնների դէմ մաքառելու եւ եռանդի պակասութիւն: Մենք հայերէն լաւ խօսել եւ գրել իմացող ծնողներ գիտենք, նոյնիսկ մտաւորականներ, որոնք անփոյթ են եղել իրենց երեխաներին մայրենի լեզուով գրել-կարդալ սովորեցնել եւ իրենց այդ անփութութիւնն ու ծուլութիւնը պարտկելու առարկութիւններ ունին՝ ուրիշներին էլ մոլորեցնելով: Իզուր չէ ասուած, թէ կեանքը պատերազմ է. ոչ այն պատերազմը, որ հօրը կամենում է ոտքի տակ տրորել իրենից թոյլին, այլ, առաքելի խօսքի համեմատ, կեանքը պատերազմ է բարւոյ յաղթութեան համար: Այն գօրքն ու գօրավարը, որ յոյս չունին, թէ պէտք է կարողանան թշնամուն դիմադրել եւ փրկել հայրենիքը, ժողովուրդը, նոքա պարտուած են արդէն՝ լինի այն նիւթական, թէ բարոյական տեսակէտով: Կրկնում ենք՝ չպէտք է աչքներս փակենք դժուարութիւնների առաջ, բայց այդ դժուարութիւնները՝ իրական, թէ ենթադրական, վերջակէտ չեն, այլ սկիզբ աշխատանքի, հետամտութեան՝ եթէ ոչ բոլորովին վերացնելու, գոնէ մեղմացնելու խոչընդոտները, որոչ չափով հասնելու նպատակին: Չեռքներս ծալած չպէտք է սպասենք, մինչեւ անփութութեան եւ անտարբերութեան հոգին

կատարելապէս իշխէ հասարակութեան մէջ, որ իսկական մահուան կարապետը կը լինի:

Գ

Հեռու մեզանից յոռետեսութեան եւ մանաւանդ յուսահատութեան մտքերը մեր գաղութների պահպանութեան նկատմամբ: Պահպանենք ըստ հնարաւորութեան մեր թանկագին ժառանգութիւնները, մեր լեզուն, մեր հոգեւոր կապը անցեալի հետ, պահպանենք եւ զօրացնենք մեր սէրը դէպի Եկեղեցին, գուրգուրանքով նայինք մեր դպրոցների վերայ՝ նրանց համար պատրաստելով բանիմաց քահանաներ եւ ուսուցիչներ, որոնք մեր հոգեւոր անդաստանների մշակը կը հանդիսանան:

Հայ ընտանիքներ, հայ ծնողներ, ներշնչեցէ՛ք ձեր պատանի գաւակներին, թէ սրբազան գործ է ժողովրդական եւ եկեղեցական ծառայութեան նուիրուել: Հայ հասարակութիւն, ստեղծեցէ՛ք այն մթնոլորտը, որ մաքուր է եւ կենդանարար մեր ազգային, եկեղեցական եւ մշակութային կեանքի զարգացման եւ արդիւնաւորման համար: Չմամսինք անպտուղ ծառին, որ պէտք է կտրուի եւ այրելու նիւթ դառնայ: Մի՛ ասէք, թէ այդ հնարաւոր չէ Ամերիկայում կամ Սփիւռքի այլ երկիրներում: Ինչպէ՞ս են ստրուկ ազգերն ազատուած եւ հայրենիք ստեղծում: Ինչպէ՞ս են նոր գաղափարներն ու շարժումները արմատանում եւ հաստատուած լայն խաւերի մէջ: Տուէ՛ք մեզ նիւթական միջոցներ, պատանի ուսանողներ, որպէսզի կարողանանք նրանց մէջ հայրենի շունչ փչել, ազգային գիտակցութիւն ստեղծել եւ հոգեւոր գինուորներ պատրաստել մայրենի եկեղեցու, դպրոցի եւ հայ մշակոյթի պահպանութեան համար: Մի՛ ասէք՝ դպրոցի բացումը տեսնենք, յետոյ օգնենք: Ինչպէ՞ս պիտի բանանք դպրոցը, երբ նախապատրաստուած չլինինք դրամով եւ ուսանողների հարկաւոր թուով:

«Արդ, աղաչեցէ՛ք զՏէր Հնձոցն, զի հանցէ մշակս ի հունձս իւր»:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
«Հայաստանեայց Եկեղեցի», փետրուար, 1942
Նիւ Եորք

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՀԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

(կարդացուած հայ եկեղեցականների համագումարի մէջ)

I

Ա

Մարդկային կեանքի յառաջադիմութիւնն ու զարգացումը հիմնուած է փորձառութեան վերայ: Այդ փորձառութեան բաղկացուցիչ տարրերը ստացուած են անցեալի կեանքից, որի կապակցեալ եւ յարակցեալ ուսումնասիրութիւնը պատմութիւն է կոչուած: Ինչպէս յարակցեալ լուսաւորում է մեր միտքը, ընդարձակում մեր ծանօթութիւնները մեզ շրջապատող բնութեան կեանքի երեւոյթների մասին, պատմութիւնը այդպիսի մի դպրոց է կեանքի ծագման եւ լինելութեան գաղտնիքների մէջ թափանցելու: Իզուր չէ ասուած, թէ պատմութիւնը լաւագոյն ուսուցիչն է մարդկութեան. այնտեղից է, որ մենք ոչ միայն լոյս ենք ստանում՝ մեր ներկան հասկանալու եւ կարգաւորելու, այլեւ թելադրութիւններ՝ ապագայի հեռանկարների մասին: Այսօրուայ մեզ զբաղեցնող հարցի պարզաբանութեան համար եւս մեր հայեացքը պէտք է ուղղենք դէպի անցեալը, քրիստոնէական եկեղեցու հին ու նոր անցեալը՝ այնտեղից լոյս ստանալու մեր ներկայ համայնական կեանքը աւելի կենդանի եւ ներգործական դարձնելու համար:

Եկեղեցական կազմակերպութիւնների մէջ ամենից փոքրը համայնական (թեմական) հաստատութիւնն է, բայց փոքր չէ նորա նշանակութիւնը եկեղեցական ընդհանուր կեանքի համար: Կարելի է ասել՝ համայնական լաւ կազմակերպութիւնը, կենդանի եւ գործօն կեանքը հիմքն է ընդհանուր եկեղեցույ հաստատութեան, յարաճուն յաջողութեան եւ զարգացման: Գետը կազմուած է աղբիւրներից, առուակներից, գետակներից, որոնց միութեամբ է յառաջ գալիս ջրի մեծ հոսանքը, որ ոռոգում եւ կեանք է տալիս իւր ափերին եւ դաշտերին, որոնց միջով անցնում է: Այսպէս եւ համայնքների միութիւնից կազմուած են եպիսկոպոսութիւնները, մեծ ու փոքր վիճակները, որոնց միութիւնից եւ՝ ընդհանուր եկեղեցին կամ Հայրապետութիւնը: Եթէ կամենում ենք, որ Հայաստանայց եկեղեցին, պետութիւնը: Եթէ կամենում ենք, որ Հայաստանայց եկեղեցին, ներկայ դէպքում՝ մեր վիճակը, որ նորա մի կարեւոր մասն է, այդպիսի կենդանարար դեր կատարէ մեր հոգեւոր կեանքի եւ ազգապահպանութեան խնդրի մէջ, մեր ուշադրութեան եւ հոգացողութեան առար-

կան պիտի լինի նորա համայնքների կազմակերպութիւնը, նրանց կապակցութիւնը միմեանց եւ յատկապէս Առաջնորդարանի հետ:

Բ

Քրիստոնէական եկեղեցու ծագման եւ զարգացման հիմնաքարը, կարելի է ասել, համայնական կազմակերպութիւնն էր՝ սկսած առաքելական շրջանից: Համայնական կազմակերպութիւնը հասարակական կեանքի հետ կապուած մի երեւոյթ էր. քանի փոքր էր քրիստոնեաների թիւը, յատուկ կազմակերպութեան եւ կանոնների կարիք չկար: Ինչպէս ընտանեկան կեանքի մէջ աւագ անդամի խօսքն ու կարգադրութիւնը օրէնք է տան միւս անդամների համար, այդպէս էլ առաքելները իրենց փոքր համայնքների ղեկավարներն էին սկզբնական շրջանում: Բայց երբ բազմանում է քրիստոնեաների թիւը Երուսաղէմ եւ ուրիշ կեդրոններում, անհրաժեշտ է դառնում համայնական կազմակերպութիւնը: Այդ մասին մենք ցուցումներ ունինք Առաքելական թղթերի եւ Գործք առաքելոցի մէջ [Բ 42-47, Դ 32-37]: Արդ, ի՞նչ պատկեր ունի քրիստոնէական առաջին համայնքը Երուսաղէմում՝ նկարագրուած մի քանի խօսքով:

«Ամենայն հաւատացեալքն էին միասին եւ ունէին զամենայն ինչ հասարակաց: Եւ զստացուածս եւ զինչս վաճառէին եւ բաշխէին զայն ամենեցուն, ում զիարդ պիտոյ ինչ լինէր»: Տաճարն էին գնում աղօթելու «եւ առտնին ղեկանէին զհացն եւ առնուին կերակուր ուրախութեամբ եւ միամտութեամբ սրտի»:

«Եւ բազմո թիւն հաւատացելոցն էր սիրտ եւ անձն մի, եւ ոչ ոք ի նոցանէ ասէր զընչից իւրոց, թէ իւր իցէ, այլ էր նոցա ամենայն ինչ հասարակաց... Եւ ոչ ոք կարօտիւր ի նոսա, զի որք միանգամ տեսարք էին գիւղից կամ ապարանից, վաճառէին եւ բերէին զգինս վաճառելոցն: Դնէին առ ոտս առաքելոցն եւ բաշխէին իւրաքանչիւր, որպէս ումեք պիտոյ լինէր»: Եւ օրինակ է բերուած Յովսէփ Բառնաբասի դէպքը:

Իհարկէ, սա գաղափարական պատկերն է՝ առաջին սերունդի մէջ եւ առաջին թարմ ոգեւորութեան ազդեցութեան տակ: Բայց նոյնիսկ այդ շրջանում պակասութիւններից ազատ չեն համայնական կազմակերպութիւնները, ինչպէս Անանիայի եւ Սափիրայի պատմութիւնն է ցոյց տալիս, կամ ինչպէս Պողոսի առ Կորնթացիս Ա թղթից է նկատուում: Սակայն, ըստ էութեան, այդ գաղափարական մի բարձր կազմակերպութիւն է՝ ընկերվարական-համայնական կեանքի մի բարձր երեւոյթ ոչ օրէնքի եւ ստիպողականութեան հետեւանքով,

այլ կամաւոր սիրոյ եւ զոհաբերութեան:

Ի՞նչն է այս Համառօտ նկարագրութեան մէջ ուշադրութեան արժանին. նախ՝ կենդանի աստուածապաշտութիւնը եւ կենդանի խօսքի քարոզութիւնը, որ զուտ առաքելական պաշտօնն էր, աղբիւր բարձր ներշնչման եւ ոգեւորութեան, յետագայում՝ եպիսկոպոսների ղեկավարութեամբ, աւելի յետոյ՝ երէցների եւ սարկաւազների մասնակցութեամբ. ապա՝ այսպէս կոչուած սիրոյ ճաշերը՝ սկզբում միացած Հաղորդութեան հետ՝ իբրեւ եղբայրական միութեան եւ սերտ կապակցութեան գլխաւոր միջոցներից մէկը: Հասարակաց կամ սիրոյ այս ճաշերի կազմակերպութեան հետեւանքն էր սարկաւազութեան պաշտօնը, որ սեղանի սպասարկութեան եւ Համայնական տնտեսական կեանքի կարգաւորութեան պաշտօնն էր: Ապագայում տեսնում ենք, թէ սարկաւազները առաջնակարգ դեր են կատարում՝ իբրեւ անմիջական Հոգեւոր գինուորները եպիսկոպոսի գործունէութեան եւ Համայնական խնամատարութեան մէջ, աղքատների, հիւանդների, նիւթական եւ բարոյական ամէն տեսակ կարօտեալների օգնութեան մէջ:

Գ

Համայնական այս կեանքն ու կազմակերպութիւնը իւր զօրութիւնը պահպանում է մինչեւ քրիստոնէութեան կատարեալ տիրապետութիւնը իբրեւ պետական կրօն, եւ մենք բազմաթիւ յիշատակութիւններ ունինք յետառաքելական եւ ջատագովական (apologetische) շրջանների գրականութեան մէջ: Բայց այս արտաքին կազմակերպութեան հետ էականը Համայնքի մէջ իշխող Հոգին էր՝ սիրոյ, եղբայրութեան եւ փոխադարձ օգնութեան Հոգին՝ իբրեւ Հոգեւոր կեանքի եւ դաստիարակութեան մի դպրոց: Մի բարձրագոյն նպատակ կամ գաղափար բոլորին կապում է միմեանց հետ, եւ ամենքի ձգտումն է (եպիսկոպոսի, երէցների, սարկաւազների, քոյրերի, որ նոյնպէս գոյութիւն ունէին Համայնական պաշտօնէութեան մէջ) ամբողջ Համայնքի Հոգիների մէջ կենդանացնել Յիսուսի պատկերը եւ կեանքն իրականացնել աւետարանական վարդապետութեան եւ առաքելական քարոզչութեան Համեմատ: Մարդկային Հոգին թանկ է ամենքի համար, եւ այստեղից է բխում նորան փոխադարձ գնահատութիւնը, սէրն ու յարգանքը: Ով իւր Հոգին է գնահատում, չի կարող անգոսնել ուրիշի Հոգին: Մեր խօսքը, իհարկէ, ինքնասէրների, Հպարտութեան Հոգեւոր տարուածների մասին չէ:

Գ դարում Կարբեղոնի նշանաւոր երէցը եւ իւր ժամանակի նշանաւոր գրողներից եւ մտածողներից մէկը՝ Տերտուլիան, մի աննման

ներբող է նուիրում Համայնական կեանքին եւ նորա տարողութեան՝ քրիստոնէական կեանքը Համեմատելով Հեթանոսականի հետ: Համայնական կեանքը նա «դաստիարակութեան եւ ազնութեան վարժոց» է անուանում. Հեթանոսների նման չեն հաւաքուած՝ զուարճանալու մինչեւ բարոյական անկում, այլ՝ ամէն անգամ մի նոր շինիչ բան տանելու այնտեղից: «Ամէն ինչ հասարակաց է մեզանում, բացի կանանցից»:

Սիրոյ ճաշը իւր շուրջն է հաւաքում բոլոր հաւատացեալներին. աղքատներն ու աշխատանքի անընդունակները, որբերն ու այրիները վայելում են Համայնքի Հովանաւորութիւնը եպիսկոպոսի եւ սարկաւազների միջնորդութեամբ: Համայնքը ներկայանում է ինչպէս մի ընտանիք, որի հայրը եպիսկոպոսն է (այժմ՝ քահանաներն ու հովիւները իրենց թեմերում), իսկ անդամները՝ եղբայրներ եւ քոյրեր: Գթութեան եւ կարեկցութեան, բարոյական ազդեցութեան գործը Համայնական կեանքի տարերքն է: Յատուկ պաշտօնեաներ, սարկաւազներ այցելում են հիւանդներին, բանտարկեալներին, մխիթարութեան կարօտներին՝ նիւթականի հետ եւ բարոյապէս ներգործելով: Եւսեբիոս Կեսարացին պատմում է Հռոմի Համայնքի մասին, թէ քաղաքը եօթը թաղի էր բաժանուած, եւ եօթ սարկաւազներ խնամում, այցելում եւ մխիթարում էին ժողովրդին. 1500 Հոգի վայելում էին այդ խնամքը Գ դարի կէսերին: Համայնքի որբերը եպիսկոպոսի Հսկողութեան տակ կրթւում են, որեւէ արհեստ սովորում, աղջիկ որբերը չափահաս դառնալուց յետոյ ամուսնանում են քրիստոնեայ քրիտասարդների հետ եպիսկոպոսի հոգացողութեամբ:

Ոչ միայն Համայնքի անդամների մէջ այդպիսի սերտ կապ կայ, այլեւ հեռաւոր երկիրների Համայնքների հետ: Կարթագինէի Կիպրիանոս եպիսկոպոսը 100000 սիստերց է ուղարկում Նուբիայի եպիսկոպոսներին գերիների ազատութեան համար: Հռոմի Դիոնիսիոս եպիսկոպոսը մխիթարութեան թուղթ է գրում եւ դրամ ուղարկում նոյն նպատակով Կեսարիայի Եկեղեցուն: «Ազատութիւն եղբարց մերոց գերելոց», - մինչեւ այժմ էլ երգում է Եկեղեցին: Գերիների ազատութիւնը մարդասիրական ամենամեծ գործն էր, երբ անընդհատ պատերազմների հետեւանքով Հազարների էր հասնում նրանց թիւը: Ազատել նրանց եւ իրենց ընտանիքների գիրկն ուղարկել, ազատել ստրկական կեանքից՝ գթութեան որպիսի՝ աննման գործ էր: Երրորդ դարու կէսերին Աղեքսանդրիայում, որ այդ ժամանակուայ քաղաքակրթութեան կեդրոններից մէկն էր, ժանտախտը սարսափելի աւերակսեց գործել: Հազարաւորներ մեռնում էին անգութ Համաճարակի

Հետեւանքով, փողոցները լցւում անթաղ դիակներով, որոնց զարչահոտութիւնն ու վարակման վտանգը քաղաքացիներին, յատկապէս դիրք եւ Հարստութիւն ունեցող հեթանոսներին փախուստի պատճառ էր դարձել: Քրիստոնեայ Համայնքը որոշում է կամաւորապէս գթութեան եւ օգնութեան գործին դիմել, փողոցները մաքրել՝ դիակները թաղելով, հիւանդներին փրկել անգութ հիւանդութեան ճիրաններից: Իհարկէ, շատերը զոհ գնացին եղբայրական եւ սիրոյ օգնութեան այս գործին, բայց մեռան նոքա Հանգիստ խղճով, իրենց եղբայրական պարտքի կատարման մէջ:

Ընդհանուր Քրիստոնէական Եկեղեցւոյ եւ Հայաստանեայց մէջ անհատական եւ Համայնական բարոյական հերոսութիւնների անմասն դրուագներ ունինք, որ այստեղ բերել չենք կարող տեղի սղութեան պատճառով: Կենդանի հոգին, նուիրումը աղբիւրն էր զոհաբերուող կեանքի՝ եղբոր եւ Հասարակաց օգտին:



Քրիստոնէութեան պետական կրօն դառնալուց յետոյ, Համայնական կեանքը կենդանի մնալով իւր վերեւ յիշած յատկութիւններով, զարգանում է բարեսիրական Հաստատութիւնների երեւոյթը: Եպիսկոպոսութիւնների մէջ այժմ Հարիւր Հազարներ են մտնում: Բնականաբար, Հնարաւոր չէր անհատական այցելութիւններով բոլորին օգնութեան Հասնել, ուստի եւ վանականութեան Հետ վանքերում երեւան են գալիս ասպնջանոցները, հիւանդանոցները, որբանոցները, դպրոցները եւ այլն: Հոգեկան հիւանդներն իսկ, կոյրերը, անդամալոյծները իրենց ապաստարաններն ունին եւ ենթարկւում են մարզուած հիւանդապահների, սպասաւորների եւ պաշտօնեաների խնամքին եւ հսկողութեան:

Եկեղեցին իւր պաշտօնէութեամբ խնամածու մայրն էր՝ Համայնքի նեղութիւնները մեղմելու, մխիթարելու եւ դաստիարակելու տեսակէտով: Մասնաւոր կտակներով եւ նուիրատուութիւններով եկած գումարները գործադրւում էին այսպիսի բարձր նպատակների Համար: Եպիսկոպոսներից շատերը իրենց ստացած ժառանգութիւնն իսկ գործադրում էին բարեսիրական գործերի Համար. Բարսեղ Կեսարացին Դ դարում իւր ամբողջ կարողութիւնը նուիրեց աղքատներին եւ հիմնեց Կեսարիայի մեծ ասպնջանոցը. Եփրեմ Ասորին Եղեսիայում մի հիւանդանոց հիմնեց 300 մահճակալներով, Ոսկեբերանը Կ. Պոլսում երկու ասպնջանոց հիմնեց եւ խնամում էր 7700 աղքատի: Հոռմի եպիսկոպոսները Հազարաւոր կեանքեր փրկեցին Հոնաց արչաւանքների

ժամանակ: Ներսէս Մեծ Հայոց Հայրապետը որբանոցների, դպրոցների եւ բարեսիրական Հաստատութիւնների ցանցով պատեց մեր երկիրը: Ս. Սահակի անուկով մնացած կանոնների մէջ «ագապ»-ներից եւ յետագայ ժողովներում եւս սահմանում են որոշ եկամուտներ նման նպատակներով:

Բայց այդ բաւական չէր: Ի սկզբանէ անտի քրիստոնէութիւնը կապուած էր գրի, գրականութեան եւ արուեստի Հետ, այսինքն՝ հոգեւոր կեանքի զարգացման, բարձրացման եւ խորացման միջոցների Հետ: Առաքեալները ոչ միայն քարոզում են բերանացի, այլեւ ընդարձակ թղթակցութիւններով բացատրում իրենց վարդապետութիւնը, լուսաբանում եւ ուղղում Համայնքների մէջ ծագած թիւրիմացութիւնները, ուղղութիւն տալիս նրանց կրօնական եւ Համայնական կեանքին: Գրւում են Աւետարաններ, որոնց նպատակը պարզ վարդապետականի Հետ նաեւ Յիսուսի անձնաւորութիւնը նկարելն էր Հաւատացեալների հոգիների առաջ: Համայնքների մէջ յատուկ պաշտօնեաներ կային քարոզութեան Համար, որ կոչւում են վարդապետներ:

Երկրորդ դարի վերջերից յառաջ են գալիս նորավարժից դպրոցները, որոնք յետոյ գիտնական դպրոցների են փոխարկւում: Յայտնի են Աղեքսանդրիայի, Անտիոքի, Եղեսիայի մեծ դպրոցները Գ դարի վերջերից մինչեւ Ե դարի վերջերը: Պէտք էր իւրացնել ժամանակի գիտութիւնն ու քաղաքակրթութիւնը, եթէ քրիստոնէութիւնը կամենում էր մրցել հեթանոսութեան Հետ: Եթէ կամենում էր մատչելի դառնալ եւ կրթուած բարձր Հասարակութեան, պէտք է կարողանար յունական փիլիսոփայութիւնը իւրացնել եւ նորա մեթոդներով աւանդէր իւր ճշմարտութիւններն ու աշխարհայեացքը: Անհրաժեշտութիւն էր քրիստոնէութեան դաշնակցութիւնը գիտութեան եւ փիլիսոփայութեան Հետ, ինչպէս տեսնում ենք այդ վերոյիշեալ դարերում: Որոգիներսին լսում են ոչ միայն քրիստոնեաները, այլեւ հեթանոս փիլիսոփաներ, նոյնիսկ Իւլիա Մամէա կայսրուհին: Դ եւ Ե դարերի մեծ Հայրերը եկեղեցական, միեւնոյն ժամանակ գիտութեան, Հոռոտրութեան ներկայացուցիչներն են: Կղէմէս Աղեքսանդրացի եւ Որոգիներս, Աթանաս Մեծ եւ Կիրիլոս ներկայացուցիչն են Աղեքսանդրիայի, Եղեսիայի դպրոցները՝ Եփրեմ Ասորի, Անտիոքիները՝ Յովհան Ոսկեբերան եւ ուրիշները: Ստեղծւում են մատենադարաններ Երուսաղէմում, Կեսարիայում, որոնցից օգտւում է Եւսեբիոս Կեսարացին եւ քրիստոնէութեան առաջին պատմութիւնը գրում:

Բայց ոչ միայն գիտութիւնը, այլեւ արուեստը օժանդակ էր Եկեղեցւոյ բարձրացման. սկզբում քրիստոնէական արուեստը՝ կա-

պուլած յունա-հռոմէականի հետ, բայց յետոյ հետզհետէ ուրոյն կերպարանք ստացած: Մեր Ե դարի հայրերի գործունէութիւնը, մեր եկեղեցական հնագոյն ճարտարապետութիւնը Հայ եկեղեցու հաստատութեան եւ զարգացման երեք դարերում ('7-է) Հայ կաթողիկոսների եւ իշխանների հովանաւորութեամբ՝ մեզ համար աւելի ցայտուն եւ մատչելի փաստերն են վերոյիշեալ մտքերի:

Ահա՛ գաղտնիքը, թէ ինչու եկեղեցու եւ եկեղեցականների ազդեցութիւնը այնքան մեծ էր այս դարերում: Մենք չենք ուզում խորասուզուել միջին դարերի պատմութեան մէջ եւ այնտեղից եւս օրինակներ բերել: Բայց կը կամենայինք նոր ժամանակների եւ եկեղեցիների համայնական եւ կազմակերպչական կեանքի մասին եւս մի քանի խօսք ասել, որպէսզի այնտեղից էլ կարելի լինի լոյս ստանալ մեր Սփիւռքի հայութեան եւ մասնաւորապէս ամերիկահայութեան համայնական կեանքի կանոնաւորման համար:

Բայց այս մասին՝ հետեւեալ յօդուածում:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
«Հայաստանեայց Եկեղեցի», սեպտեմբեր, 1940

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ ԾՐՋԱՆՈՒՄ

II

Ա

Անցեալ յօդուածի մէջ աշխատեցինք պարզել քրիստոնէական համայնքների կազմակերպութիւնը հին եկեղեցիների մէջ, յատկապէս արեւելքում: Այժմ՝ մի քանի խօսք նոր ժամանակի եւրոպական եկեղեցական համայնքների մասին: Մեր այս տեսութիւնը հիմնուած է, գրքերից աւելի, գործնական կեանքի ուսումնասիրութեան վերայ՝ մեր ուսանողութեան ժամանակի մի ամբողջ ամառուայ արձակուրդը նուիրելով այդ գործին: Կարող ենք ասել, թէ տեսականօրէն կամ գրքերից օգտուելով, տարիների աշխատանքով չէինք կարող այնքան բան սովորել, որքան այդ երկուս ու կէս ամսուայ գործնական ուսումնասիրութեամբ:

Ժամանակը մեզ չի ներում կանգ առնել մանրամասնութիւնների վերայ. կարող ենք ասել, որ համայնական կազմակերպութիւնները մասամբ յիշեցնում են նախկին դարերինը, բայց առաւել ներկայ համայնական կեանքի եւ ժամանակի դժուարութիւնները լուծում են կամ աշխատում են լուծել ներքին առաքելութեան (die Innere Mission) մաս կազմող հաստատութիւններով: Այս գործը շատ մեծ ծաւալ է ստացել եւրոպական երկիրներում, գրեթէ բոլոր ազգերի մէջ: Ոչ միայն գուտ համայնական գործերը, համայնական աղքատների, նիւթապէս եւ բարոյապէս կարօտեալների խնդիրները, այլեւ սոցիալական ամենատեսակ չարիքները ուշադրութեան առարկայ են: Որքան եւ պետութիւնն ինքը մասամբ հոգում է բազմատեսակ բարեսիրական հաստատութիւնների համար, եկեղեցին էլ, մանաւանդ Կաթողիկ եկեղեցին, ունի իւր հիւանդանոցները, որբանոցները, աղքատութեան մեղմացման գործը, բնակարանի հետ կապուած չարիքը մեծ քաղաքներում, անբարոյականութեան դէմ մաքառումը, հիւանդապահների եւ եղբայրական օգնութեան պաշտօնեաների կրթութիւնը: Ներքին առաքելութեան մէջ է ամփոփուած համայնական կեանքի շատ կարիքների լրացումը: Համայնական հովուութեան եւ ներքին առաքելութեան վարչութեան մէջ հաստատուած է ամենասերտ գործակցութիւն, յաճախ համայնքի հովիւը այնտեղից ստանում է այդ եւ կին խնամատարներ, որոնք հովուի թելադրութեամբ այցելում են այս կամ այն ընտանիքին,

այրիներին, նիւթական եւ բարոյական օգնութեան կարիք ունեցողներին: «Շղայրները» Հետ առիթ ենք ունեցել այդպիսի այցելութիւններ կատարել, վերստուգել Հասած օգնութեան նպատակայարմար գործադրութիւնը, ընտանեկան շատ դժբախտութիւնների խափանումը՝ արբեցող ամուսնուն ի կարգ հրաւիրելով, աղքատ երեխաների ուսման, նիւթական եւ դրամական ծախսերը հոգալով: Ներքին առաքելութեան Հաստատութեան կեդրոնը ոչ միայն խնամատարութեան, այլև դաստիարակչական դպրոց է յատկապէս երիտասարդական միութիւնների Համար: Նոքա ունին իրենց մարզարանները, պարահանդէսները, երաժշտական կոնցերտները, մատենադարանները ընդարձակ կամ երաժշտական կոնցերտները, մատենադարանները ընդարձակ կամ փոքր չափերով՝ նայելով Հաստատութեան մեծութեան: Գերմանիայի վեստֆալիոյ նահանգի Բիլեֆելդ քաղաքի շրջակայքում մեր այնտեղ եղած ժամանակ, 1894-95 թթ., պատուր Ֆոն Բոդելշվիլինգի ընդհանուր ղեկավարութեան տակ 135 Հաստատութիւն կար մօտ երկու միլիոն մարքի տարեկան բիւջէով եւ 7000-ի չափ ամենատեսակ խնամարկեալներով: Հէնց Ամերիկայում անցէ՛ք քաղաքից քաղաք եւ կը տեսնէք եկեղեցական հովանաւորութիւն ունեցող ամէն տեսակ Հաստատութիւններ, մինչեւ իսկ դպրոցներ՝ յատուկ միջնակարգ եւ բարձր, կրօնական-եկեղեցական գունաւորութեամբ: Իսկ բուն Համայնական կեանքի մէջ օրինակելի կարգապահութեան հոգին՝ Հնազանդ իրենց հովիւներին, եւ սրանք՝ իրենց եպիսկոպոսին, Կաթոլիկ Եկեղեցու մէջ հեղինակութիւնն ու կարգապահութիւնը, կարգաւորութիւնը (system) ամենամեծ դեր են կատարում իրենց յաջողութեան մէջ, որ մեզանում ամենաթոյլ կողմն է: Սորա Հետ միացած է նաեւ հոգեւորականների դիտական պատրաստութիւնը Բողոքական եւ Կաթոլիկ Եկեղեցիների մէջ Հաւասարապէս:

Մեր երիտասարդ վարդապետներին եւ քահանաներին կ'առաջարկենք ծանօթանալ կաթոլիկ եւ բողոքական Համայնական կամ ներքին առաքելութեան կազմակերպութիւնների Հետ՝ մեր յետագայ Համագումարի մէջ իրենց ուսումնասիրութեան արդիւնքը հաղորդելու եւ օգտուելու Համար: Գուցէ դորանով կարողանանք հոգեւորութեան եւ հովուական աստուածաբանութեան գործնական դասընթացը, ուսմունք ստեղծել մեր մէջ:

Բ

Այս Համառօտ տեսութեան նպատակն էր պարզել, թէ Սփիւռքում, ներկայ դէպքում՝ մեր ամերիկահայութեան նորաստեղծ Համայնքների մէջ, անհրաժեշտ է հեղինակութեան ճանաչում, կարգա-

պահութեան եւ կարգաւորութեան (system) հոգի հասկացողութիւն՝ ղեկավարութեան աստիճանաւորութիւնների Համեմատ, որ պէտք է լինի նախ մեր հովիւների կողմից եւ նրանց ջանքերով, նաեւ՝ հոգաբարձութիւնների եւ ժողովրդի կողմից:

Մենք ունինք որոշ տուեալներ՝ մեր Համայնական կեանքը զարգացնելու Համար. մեր ձգտումն ու աշխատանքը պիտի լինի միայն այդ տուեալները աւելի կարգաւորել՝ կեանք ու բովանդակութիւն ներարկելով նրանց մէջ: Մեր ժամապաշտութիւնը պէտք է լինի վսեմ, տպաւորիչ, քարոզը՝ մշակուած եւ բովանդակալից, երգչական խմբերը՝ կազմակերպուած եւ աւելի լաւ մարզուած: Պատարագի եւ արեւազալի ժամերգութիւնից զատ պէտք է կարողութիւն ունենանք օգտագործելու մեր նախնեաց թողած երաժշտական գանձերը, գեղեցիկ շարականներն ու մեղեդիները մեծ տօների ժամերգութեամբ: Պէտք է սովորեցնենք ժողովրդին՝ պատկառանքի զգացմունքով եւ երկիւղածութեամբ պահել իրեն եւ Հետեւել ժամերգութեան:

Իբրեւ վերջին խօսք պիտի աւելացնենք. այժմ իհարկէ Հնարաւոր է մեզ առաքելական շրջանի բարեպաշտութիւնը լիովին վերականգնել: Ամէն դար իւր բարեպաշտական արտայայտութիւնն ունի, բայց կրօնական զգացմունքը՝ մարդկային հոգու լաւագոյն յատկութիւններից մէկը, իւր բարերար Հետեւանքը կ'ունենայ ամէն ժամանակի Համար, եթէ կարող լինինք վառ պահել կամ կենդանացնել այն մեր ժողովրդի մէջ: Դորա Համար մեր խօսքն ու քարոզը, գործելակերպը պէտք է աշխատենք նոր ժամանակի Համեմատ դարձնել, նոր լեզուով խօսել, յաւիտենական արժէք ունեցող ճշմարտութիւններն էլ նոր հանդերձանքով մատուցանել. աւետարանական խօսքի Համեմատ՝ Հին գիրին նոր տիկին մէջ: Աշխատեցէ՛ք կարդալ, նախապատրաստուել միշտ՝ քարոզելուց առաջ:

Եկեղեցում խօսած քարոզներից զատ պիտի կազմակերպենք ժողովրդական լսարաններ, որի առաջին փորձերը կատարեցինք Նիւ Եորքում: Պէտք է կրօնական, բարոյական, եկեղեցական, ազգային նիւթերից զատ նաեւ պատմական, դրական, բնագիտական, բժշկական եւ այլ ծանօթութիւններ տալ ժողովրդին:

Հիմնուած է արդէն «Հայաստանեայց Եկեղեցին»: Պէտք է զարկ տալ նորա տարածման. եկեղեցականները աւելի կենդանի մասնակցութիւն պիտի բերէն այս գործի մէջ, որպէսզի նա դառնայ իրօք եկեղեցական-ժողովրդական թերթ: Տարաբախտաբար, մեր հովիւները, չնչին բացառութեամբ, գրեթէ անտարբեր են նորա տարածման եւ

բովանդակութեան ճոխացման մէջ: Նոյնը կարող ենք ասել եւ հոգաբարձութիւնների նկատմամբ: Թերթը պիտի կարողանայ իւր գոյութիւնը շարունակել բաժանորդագրութեամբ եկած գումարներով, մինչդեռ այժմ առանց Եկեղեցիների օժանդակութեան դեռեւս ապրել կարող է: Դեռ պիտի կարողանանք կրօնական-եկեղեցական գրքեր եւ քարոզներ եւս հրատարակել:

Ձեզ յայտնի է մեր Առաջնորդարանի նիւթական վիճակը: Պարտուց վերացման մասին քոթաններ են պատրաստուած Եկեղեցիներից եւ համայնքների մեծութեան համեմատ, բայց Հոգաբարձութիւններից եւ մեր Հովիւներից հարկաւոր աջակցութիւնը չենք տեսնում:

Հիմնել ենք Առաջնորդարանին օժանդակող ընկերութիւնը, որ եթէ դարձնենք համաժողովրդական գործ, իրական օժանդակութիւն կը լինի նիւթապէս եւ բարոյապէս, որից եւ կախուած է մեր դպրոցական եւ այլ ձեռնարկութիւնների յաջողութիւնը:

Սովորական է դարձել դպրոցը Եկեղեցու նախագաւիթ անուանել, եւ ճշմարիտ է այդպիսի անունը: Բայց որքա՞ն խնամքի են կարօտ մեր դպրոցները՝ իսկական նախագաւիթը դառնալու համար: Այնտեղ պիտի մեր մատաղ սերունդը սովորէ իւր մայրենի լեզուն, որ ամենապիտի մեր մատաղ սերունդը հնի եւ աւելի հեռաւոր անցեալի կարեւոր շարժական է նոր սերունդը հնի եւ աւելի հեռաւոր անցեալի հետ կապելու, ազգային գիտակցութիւնը բարձրացնելու: Բայց հետ կապելու, ազգային գիտակցութիւնը բարձրացնելու: Բայց հետ հետոյ պակասում է ուսուցիչների, ուսուցչուհիների թիւը, թողում ասել, որ եղածներից մի մասն էլ անբաւարար է իւր պատրաստութեամբ: Մենք հնարաւորութիւնը չունինք կարեւոր ղեկավարութեան, որովհետեւ դրամական պատճառներով յատուկ պաշտօնեաներ չունինք այդ նպատակով:

Ունինք եկեղեցասէր եւ դպրոցասէր տիկիները միութիւններ, որոնց կարեւորագոյն նշանակութիւն պիտի տալ եւ աւելի ժիր գործունեութեան վարժեցնել, որովհետեւ նրանք, իրօք, Եկեղեցու պայծառութեան, դպրոցական կարիքների հոգացման մէջ մեծ ծառայութիւն են մատուցանում եւ պիտի առաւել եւս մատուցանեն: Համայնական հանդէսների եւ ճաշկերոյթների ժամանակ նրանց կատարած դերը շատ գնահատելի է:

Գ

Պիտի մտածենք զօրացնել երիտասարդաց միութիւնները: Ասել, թէ պէտք է եկեղեցասէր եւ ազգասէր լինիք, ձեր մայրենի լեզուն սովորէ՞, բաւական է: Նրանց միութիւնը պիտի դառնայ իրենց համար գրաւիչ, պիտի մի բան սպասեն իրենց միութիւնից, որ նորա

շուրջը հաւաքուին: Լեզուի, գրականութեան, պատմութեան յատուկ դասընթացքներ, երգեցողութիւն, մարմնամարզութիւն, դաշտահանդէսներ խելացի հսկողութեան տակ՝ կարող են օգտակար լինել: Դաշտահանդէսներն արդէն ընդունուած են մերոնց մէջ եւ մեծերի համար, բայց պէտք է ազնուացնել: Կարող է այնտեղ, բաց երկնքի տակ, կրօնական պաշտամունք կատարուել, բայց ոչ պատարագ, երիտասարդների զուարճութեան խաղեր սարքել երբեմն եւ մեծերի մասնակցութեամբ: Արեցողութեան ոչ մի երեւոյթ պէտք է նկատուի այնտեղ, բայց կեղծ մաքրակրօնութիւն (puritanism) նոյնպէս պէտք է: Մեծերը նոյնպէս պիտի ուրախանան, երգեն, զուարճանան՝ բայց երբեք չմոռանալով, որ փոքրեր կան իրենց շուրջը:

Երիտասարդներից յետոյ աւելի փոքրահասակներին ազգի եւ Եկեղեցու հետ կապելու հաստատութիւնը կիրակնօրեայ դպրոցն է, որ պէտք է որդեգրենք եւ փայփայանք առարկայ դարձնենք, ինչպէս ամերիկեան եւ եւրոպական Եկեղեցիների կողմից ընդունուած է: Կրօնական գիտելիքների նկատմամբ եւրոպական եւ ամերիկեան ազգերի մէջ կարեւոր դեր են կատարում նրանք: Պիտի աշխատենք հարկաւոր ձեռնարկներն ու դասագրքերը ընձեռել հետզհետէ:

Անշուշտ, համայնական կեանքի եւ Եկեղեցու պայծառութեան մէջ առաջնակարգ նշանակութիւն ունին Հոգաբարձութիւնները Հովիւների գլխաւորութեամբ: Հոգաբարձութիւնները աւելի ունկնդիր պիտի լինին Առաջնորդարանին, որովհետեւ նրանք են ժողովրդի եւ Առաջնորդարանի իսկական միջնորդները, նրանց միջոցով է, որ համայնական կեանքի ղեկավարութիւնը Առաջնորդարանի կողմից պէտք է արդիւնաւոր դառնայ:

Սակայն բոլոր տեսութիւններից եւ կանոններից աւելի մենք մարդկանց կարիք ունինք. պահանջի համեմատ նոր քահանաներ, նոր ուսուցիչներ լեզուի, գրականութեան եւ մշակոյթի կենդանացման եւ պահպանման համար: Եթէ կամենում ենք ամերիկահայութիւնը պահպանել՝ պահպանելով լեզուն, Եկեղեցին, անցեալի հետ կապը, մեր աւանդութիւնները, գիտակցութիւնը ազգաշինութեան նուիրական գործի, պէտք է բարձրագոյն մի դպրոց ստեղծենք այդ կարիքների հոգացման համար:

Այս մասին պիտի դիմենք Երեսփոխանական ժողովին. դուք էլ աջակից պիտի լինիք գտնել բարերարներ, որոնք իրենց օժանդակութիւնը պիտի բերէն այս կարեւորագոյն գործի իրականացման համար:

Առաջին անգամն է գումարուում մեր վիճակի մէջ եկեղեցականների համագումարը. ցանկանք, որ նա մտքերի պատրաստութեան եւ իրականացման օժանդակ մի հաստատութիւն դառնայ մեր եկեղեցու կենդանութեան, կարգապահութեան եւ կարգաւորութեան նուիրական գործի մէջ: Եթէ եկեղեցականներս օգնենք իրար, օգնենք Առաջնորդարանին մեր հայրերի, եկեղեցական հայրերի հոգևով, հաւատում ենք, որ զգալի արդիւնքներ կուտան մեր աշխատանքները*:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

«Հայաստանեայց Եկեղեցի», սեպտեմբեր-հոկտեմբեր, 1940

ՄՇԱԿՈՅԹԻ ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

Ա

«Հասկի» յուլիս-օգոստոս միացեալ համարի մէջ հրատարակուեցաւ Մեր կոնդակը, որի մէջ պարզուած էր հոկտեմբերը մշակոյթի պանծացման ամիս դարձնելու կարգադրութիւնը: Այստեղ կ'ուզենք մի քիչ աւելի հանգամանօրէն կանգ առնել խնդրի վերայ, քան այդ հնարաւոր էր կոնդակի մէջ:

Մշակոյթի ծագումը կապուած է մարդկային հոգու իմացականութեան ծագման եւ զարգացման հետ՝ քաոսից եւ խաւարից հետզհետէ դէպի պայծառութիւն եւ յոյս, նեղ սահմաններից դէպի ընդարձակ հորիզոններ: Նորա առաջին իմացական ստեղծագործութիւններն են լեզուն եւ կրօնը եւ դրանց հետ կապուած բանահիւսութիւնն ու կրօնական պատկերացումները, առասպելներն ու հերոսապատումները:

Մարդիկ իրենց բնակելի ծառերի ճիւղերից շինած հիւղերի հետ սկսել են շինել իրենց դամբարանները՝ կրօնական ամենահին գաղափարներից մէկի՝ հոգու անմահութեան հետ կապուած: Նիւթական կեանքի վերջաւորութեան հետ չի հաշտուում մարդը: Այստեղից է ծագում նորա շինարարութիւնն ու ճարտարապետութիւնը, որ հասնում է մինչեւ բուրգերի ահաւոր ստեղծագործութիւնը, որ ոչ այլ ինչ են, բայց եթէ փարաւոնների դամբարաններ: Նախապատմական շրջանի արուեստի եւ մշակոյթի ուսումնասիրութիւնն էլ կապուած է հողաբլուրների եւ այլ տեսակի դամբարանների մէջ գտնուած իրերի եւ անօթների ուսումնասիրութեան հետ: Քարի, բրոնզի, եւ երկաթի գործածութեան դարերից մշակոյթը հետզհետէ զարգանում եւ բարձրանում է մինչեւ արուեստների ծաղկման եւ ընդարձակ քաղաքակրթութեան աստիճանները: Մարդկային արուեստի առաջին ստեղծագործութիւնները, որ գտնուել են այդ դամբարանների մէջ, օրինակ՝ կանացի Փիգուրներ, ապագայի հրաշալի աստուածուհիների նախամայրերն են, որ կերտել է յետոյ յոյն արուեստը:

Գիտնականներից ոմանք սահմանի բաժանում են դնում մշակոյթի եւ քաղաքակրթութեան մէջ: Կրօն, արուեստ, գրականութիւն, գիտութիւն իրենց ճիւղերով մշակոյթի սահմանի մէջ են դնում (Kultur), իսկ գործնական կեանքի հարկաւորութեան բաւարարում, յարմարութիւնների ստեղծագործում, տեխնիկայի զարգացում իւր ընդարձակութեամբ՝ քաղաքակրթութեան (civilisation). մինչեւ իսկ ոմանք կարծում

* Այստեղ խնդիրներ կան շօշափուած, որոնք ամերիկեան հայոց կեանքի հետ են կապուած, բայց հարկ չհամարեցինք փոփոխութեան ենթարկել, որովհետեւ ըստ էութեան նոյն գրեթէ նոյն են եւ Ափիոնքի ուրիշ կողմերի հայութեան համար:

են՝ երկրորդի զարգացումը առաջինի անկման նշանն է: Բայց ուրիշ-
ների հետ ուղիղ չենք համարում այդ. կեանքը ամբողջութիւն է, և
այդ ամբողջութեան հետ է կապուած եւ զարգացման ընթացքը:
Ստեղծագործական նոյն ոյժն է ներգործում երկուսի մէջ եւս: Միայն,
տարաբախտաբար, զարգացման այդ քայլերը ուղիղ գծով չեն ընթա-
նում պատմութեան մէջ, այլ՝ զիկ զակ: Քարացած պիտի համարել
հոգեկան ունակութիւնները, երբ անկումից այլեւս բարձրանալ չի
կարողանում:

Սակայն մեր տեսութիւնից չպէտք է վրիպէ այն հանգամանքը,
որ պատմութեան համար էականը մշակութային մեծ ստեղծագոր-
ծութիւնն է, որ մնայունն է եւ դաստիարակչականը մարդկային հոգու
բարձրացման եւ կատարելութեան համար: Զարգացման օրէնքն է այդ
բնութեան եւ մարդկային հոգու մէջ՝ միշտ անկատարից դէպի կատա-
րեալը, նիւթականից դէպի վերացականն ու հոգեւորը: Քաղաքականն
ու տնտեսականը ուղղուած են պաշտպանելու եւ զօրացնելու ժողովրդի
մէջ մշակութային բարձր ստեղծագործութիւնը: Նրանք ամենասերտ
կերպով կապուած են իրար հետ, բայց քաղաքական այն զօրութիւնը,
որ ժողովրդի ստեղծագործական ուժերը չի խրախուսում, պաշտպան
եւ զօրավիգ հանդիսանում նրանց, վրիպում է իւր բարձր կոչումից.
տնտեսական ամենայն մի բարօրութիւն, կեանքի դիւրութիւն եւ
յարմարութիւն, եթէ չեն նպաստում մտաւոր, գեղարուեստական,
բարոյական, հոգեւոր կեանքի ուճացման, վնասակար են դառնում
եւ բարոյական անկման պատճառ:

Մեր միտքը աւելի լաւ պարզելու համար անցեալ դարի անգլիա-
ցի մեծ մատենագիր եւ մտածող Կարլ Լէյլի խօսքը պիտի յիշենք:
Յայտնի է, թէ անգլիական ազգի համար ինչ արժէք ունի Հնդկաս-
տանը՝ նորա մեծութեան, հարստութեան եւ զօրութեան մեծ աղբիւրը:
Բայց եթէ ստիպուած լինէինք ընտրութիւն անել Շեքսպիրի եւ
Հնդկաստանի մէջ, կ'ասէինք, - յայտնում է նա. - Հնդկաստանը, որքան
եւ կարեւոր, ժամանակաւոր է մեզ համար, բայց առանց Շեքսպիրի
մենք ապրել կարող չենք: Շեքսպիրը մերն է եւ մերն է յաւիտեան.
նա անմահ կը մնայ մեզ հետ, անգլիական այն թագաւորն է նա,
որին ոչ մի պառլամենտ գահընկէց անել կարող չէ:

Բ

Այս խօսքերի մէջ ամփոփուած է մեր պարզելիք միտքը: Ամենա-
թանկագինը մի ազգի համար նորա ստեղծագործ հանճարն է իւր
արդիւնքներով՝ լեզուն, կրօնը, արուեստը, գրականութիւնը, գիտու-

թիւնը, քաղաքակրթութիւնը, որոնց գումարը ամփոփում ենք մշակոյթ
բառի մէջ: Զօրացնել այդ ստեղծագործող հոգին, կենդանի պահել
նորա բարոյական ուժերը, պաշտպանել եւ գուրգուրանքով խնամել
անցեալի ժառանգութիւնները, որպէսզի նորա հետ օղակուի եւ ներկան,
եւ նոյնիսկ գծագրուի ապագայի հեռանկարը՝ իմացական ազգի
յատկանիչն է եւ կարգաւորեալ գործունէութիւնը:

Պատմութեան մէջ էականը այն չէ, թէ մի ազգ որչափ հզօր է
եղել, նուաճումներ կատարել, շատ անգամ իրենից թոյլ ազգերին
ոտքի տակ տրորել, այլ թէ ինչ հոգեւոր ժառանգութիւն է թողել իւր
ազգին եւ մարդկութեան: Համեմատեցէ՛ք երկու աշխարհակալ դէմքեր
պատմութեան մէջ՝ Քսերքսէս եւ Աղեքսանդր Մեծը: Գրեթէ հաւասար
չափով նրանցից մէկը մինչեւ Յունաստան գնաց, եւ միւսը՝ Յունաս-
տանից մինչեւ Պարսկաստանի արեւելեան սահմանները: Մէկի աշ-
խարհակալութիւնը միայն աւեր եւ կործանում բերեց իւր անցած
երկիրների համար, իսկ միւսինը՝ հելլենիստական քաղաքակրթութեան
տարածումը մինչեւ Հնդկաստանի սահմանները: Պատմութիւնից
յայտնի է, թէ Պտղոմեանց, Սելեւկեանց եւ Պերգամոնի տէրութիւնները
ինչպիսի նոր կեանք բերին քաղաքակրթութեան պատմութեան մէջ
իրենց ստեղծած արուեստով, տաճարներով եւ մատենադարաններով:
Աղեքսանդրիայի մատենադարանը, որ հիմնուեցաւ Պտղոմէոս Ստեբի
ժամանակ (280 Ք. ա.), գիտութեան հնոց դարձաւ իւր ժամանակի
համար տիեզերական մտքով. այնտեղ գիտնականներն ամէն դիւրու-
թիւն, բնակարան եւ նիւթական ապահովութիւն էին վայելում՝ գիտու-
թեամբ եւ փրկիստփայլութեամբ զբաղուելու համար: Պերգամոնի
փոքրիկ թագաւորութիւնը մրցակիցն էր Պտղոմեաններին՝ արուեստի,
գիտութեան եւ իրենց մատենադարանի ճոխութեան մէջ: Մագաղաթի
ազնուացման արուեստը մարդկութիւնը նրանց է պարտական, իսկ
դրա հետեւանք էր գիտութեան, արուեստի եւ քաղաքակրթութեան
աւելի արագ եւ դիւրին տարածումը, քան առաջ էր: Անտոնիոս, երբ
Պերգամոնի մատենադարանը Կղէոպատրային ընծայեց, 200000 կտոր
գիրք կամ փաթոյթ (rolle) կար այնտեղ:

Ազգերի կեանքի մէջ ամենից նշանակալիցը, ուրեմն եւ մնայունը
նրանց ստեղծագործութիւնն է, մշակոյթը: Այդ կողմից յատկապէս
խրատական է եւ ուսանելի հին ազգերի պատմութիւնը: Նրանք մինչեւ
իսկ կարող են մարմնով կամ նիւթական, արտաքին կեանքով մեռնիլ,
բայց ապրիլ մշակութային կեանքով եւ անմահ մնալ մարդկութեան
յիշողութեան մէջ: Այդպէս է, օրինակ, եգիպտական ազգը. նա չկայ
այլեւս, բայց նորա կրօնի, ճարտարապետութեան, կերպարուեստի կամ

նկարչութեան եւ այլ մշակութային ստեղծագործութիւնը միշտ անմահ պիտի մնայ պատմութեան մէջ: Նոյնը կարող ենք ասել ասորեստանցիների եւ բաբելոնացիների մասին. գիտնականների կատարած պեղումները, աղիւսէ մատենադարանների գիւտով եւ բեւեռագրերների ընթերցանութեամբ, նրանց արուեստի մնացորդների ուսումնասիրութեամբ այդ մեռած ազգը նորից յարուսթիւն առաւ եւ իւր առաջնակարգ տեղը բռնեց ազգերի պատմութեան մէջ: Մարդկութիւնը որչա՛փ երախտապարտ է այդ երկու ազգերին իրենց նշանագրերի եւ բեւեռագրերի գիւտով եւ ընդարձակ գրականութեամբ, պատմութեան, կրօնի եւ մշակոյթի մասին թողած յիշատակներով:

Վերցնենք դասական յոյնը. նա եւս չկայ, բայց նորա «Իլիականը», նորա բեմական արուեստը իւր մեծ թատերագիրներով, նորա արձանագործութիւնը Ֆիդիասի եւ Պրաքսիտէլէսի գործերով, նորա ճարտարապետութիւնը՝ աստուածներին նուիրուած, նկարչութիւնը, որ մնացել է միայն անօթների վերայ, բայց ինչքան բազմազան եւ հարուստ, նորա փիլիսոփայական միտքը յանձին Սոկրատէսի, Պլատոնի եւ Արիստոտէլի եւ յետագայ դպրոցների, ամենափայլուն տեղը պիտի պահէ մարդկութեան քաղաքակրթութեան պատմութեան մէջ: Երկարելու պէտքը չկայ այս մասին. արեւի լոյսի պէս պայծառ է այս միտքը, ով փոքր-ինչ ծանօթ է Հին պատմութեան: Ազգերը ապրում են առաւելապէս եւ յաւիտենականութեան էջերի մէջ տեղ բռնում իրենց ստեղծագործութեամբ եւ մշակոյթով:

Գ

Մասնաւորելով խօսքը մեր ազգի մասին՝ պէտք է ասենք, որ մեր դերը աւելի փոքր է եղել յիշուած ազգերի՝ եգիպտացիների, ասորեստանցիների, յոյների, նաեւ մեր հարեւան պարսիկների համեմատութեամբ, բայց աննշան չէ մեր թուի եւ մեզ վիճակուած ապաբախտ պայմանների մէջ: Տարաբախտաբար, մեր Հին պատմութիւնը դեռ բոլորովին լուսաբանուած չէ, սակայն Արտաշատեան հարստութեան երեք դէմքերը՝ Արտաշէս, Տիգրան Մեծ եւ Արտաւազդ, թէպէտ սքողուած յոյն եւ լատին մատենագիրների կողմնակալ նկարագրութեամբ, ապացոյց են, թէ հելլենիստական քաղաքակրթութեան տարածման եւ իւրացման մէջ աննշան դեր չեն կատարել նրանք Հայաստանում եւ Մերձաւոր Արեւելքի մէջ: Արտաւազդ արքայորդին բանաստեղծ էր, նորա եւ յոյն բանաստեղծների գրուածքները ներկայացնում էին Հայ արքունիքում:

Առանց հետեւանքի չէ անցել եւ հռոմէական յարաբերութիւնը

Հայոց Հետ. Գառնիի տաճարից զատ, որ յունա-հռոմէական ոճով շինուած մեհեան է, գերեզմանական կոթողների ստուար թիւը* եւ բազիլիկ եկեղեցիների Ե-Ձ դարերի ճարտարապետութիւնը շատ աւելի ընդարձակ, քան յայտնի է մինչեւ այժմ, որոշ ապացոյցներ ունին հելլենիստական յարաբերութեան: Գերեզմանական այդ կոթողների նորանոր գիւտերն ու նրանց ուսումնասիրութիւնը մեզ պիտի պարզեն Հայ հեթանոսութեան եւ քրիստոնէական Հայեացքների օղակաւորումը Հայաստանում եւ մի նոր արուեստի ստեղծագործումը:

Վիեննայի Համալսարանի Համաշխարհային հռչակ ստացած ուսուցչապետ Ստիգոլսկիի եւ մեր հանգուցեալ Թ. Թորամանեանի, Բալտրուշայիտիսի, բիւզանդական արուեստի մասնագէտ Դիլի եւ այլոց աշխատանքները իրենց կարեւոր դերն են կատարել՝ Հայ ճարտարապետութեան եւ արուեստի Համար պատուաւոր տեղ նուաճելու քրիստոնէական մեծ արուեստների շարքում:

Մինչեւ վերջին տասնեակ տարիները Հայ արուեստի եւ ճարտարապետութեան մասին գրեթէ խօսք չկար գիտնական շրջաններում, բայց այժմ արդէն մերձաւորարեւելեան եւ բիւզանդական արուեստների, նաեւ արեւմտեան որոշ երեւոյթների մասին կարող չեն խօսիլ առանց Հայ արուեստի յիշատակութեան կամ համեմատութեան: Հայ արուեստի ազդեցութեան հետքերը Փոքր Ասիայից, Բիւզանդիոնից, բալկանեան երկիրներից եւ Հարաւային Ռուսաստանից շատ աւելի հեռու են անցել:

Վերեւ յիշուած գիտնականներից ամենից աւելի երախտապարտ ենք Ստիգոլսկիին ոչ միայն իւր՝ Հայ ճարտարապետութեան նուիրուած երկու մեծահատոր աշխատութեամբ**, այլեւ ուրիշ գործերի մէջ կատարած շատ համեմատութիւններով Հայ արուեստի նկատմամբ: Գնահատութեամբ պիտի յիշենք նաեւ հանգուցեալ Թորամանեանին, որ իւր չափագրութիւններով եւ լուսանկարչական Հաւաքածոներով մեծ նպաստ բերաւ ոչ միայն Ստիգոլսկուն, այլեւ ուրիշներին***: Վերջերս հրատարակուեցաւ նաեւ նորա աշխատութիւնների մեծ ժողովածուն, բացի Տիկորին նուիրած առանձին հատորը:

Առաջաւոր Ասիայի ազգերի արուեստների Հետ հիացմունքով պիտի յիշուին մեր գողտրիկ Հոփսիմէն, Հոյակապ Զուարթնոցը,

* Տե՛ս մեր աշխատութիւնը՝ «Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան», պրակ Գ, Նիւ Եորք, 1944:

** "Die Baukunst der Armenier und Europa", 1918

*** Մեր վերեւ յիշուած աշխատութեան լուսանկարների մի կարեւոր մասը ստացել ենք հանգուցեալ Թորամանեանից:

Անիի Մայր եկեղեցին, Աղթամարի Ս. Խաչը, Հաղբատն ու Սանահինը իրենց պէսպիսութիւններով եւ ճարտարապետական ձեւերի եւ քանդակագործութեան հարստութեամբ: Երբէք չպէտք է մոռցուի, որ Այա-Սոֆիայի գմբէթը մեր Տրդատ ճարտարապետն է նորոգել՝ Անիի Մայր եկեղեցիի մեծ արուեստագէտը:

Ոչ պակաս արժէքաւոր է մեր ձեռագրական մանրանկարչութիւնը: Տարաբախտաբար, շատ հին ձեռագիրներ մեր ձեռքը չեն հասել. նրանք ոչնչացել են այլեւայլ պատճառներով: Թուականով ամբողջական մեր ամենահին ձեռագիրը Լազարեան ճեմարանի 887 թուի Աւետարանն է, բայց ժ դարից ունենք բաւական թուով Աւետարաններ, նաեւ քիչ թուով այլ բովանդակութեամբ ձեռագիրներ: Սակայն ժ-ժԱ դարերի Աւետարաններից շատերի մէջ պահուած են մանրանկարչութեան հին աւանդներ՝ մինչեւ Զ դարի ճարտարապետական զարդարանքների աղբրով:

Հայ մանրանկարչութիւնը կարելի է երկու մեծ շրջանի բաժանել արեւելեան Հայաստանի եւ կիլիկեան: Առաջին մէջ պահուած են աւելի հին արուեստի հետ կապուած աւանդներ թէ՛ պատկերազրու-թեան եւ թէ՛ զարդարանքի մէջ. իսկ կիլիկեանը, պահելով հանդերձ արեւելեան աւանդներ, իւրացրել է որոշ կողմեր բիւզանդական եւ մուսուլմանական, ինչպէս եւ եւրոպական (խաչակրաց) արուեստներից, բայց՝ վերամշակութեան ենթարկելով: Հայ մանրանկարչութեան բարձրագոյն զարգացումը պիտի համարել ժԲ դարի երկրորդ կէսերից մինչեւ ժԴ-ի կէսերը: Երկու շրջանից էլ ունենք շատ կարեւոր, արքայական եւ կաթողիկոսական ձեռագիրներ թէ՛ Երեւանի պետական (նախկին էջմիածնի) եւ թէ՛ Երուսաղէմի մատենադարաններում, նաեւ վենետիկի Մխիթարեանների, քիչ չափով էլ՝ եւրոպական եւ ամերիկեան մատենադարաններում: Յիշել կարող ենք Գագիկ Կարսեցու, Կոստանդին Բարձրբերդցու, Հեթում Ա-ի (հատուկտորներով միայն), Լեւոն Գ-ի եւ Կեռան թագուհու, Հեթում Բ-ի եւ ուրիշ արեւելեան եւ կիլիկեան իշխանների եւ իշխանուհիների սեպհականութիւնն եղած ճոխ նկարազարդութեամբ ձեռագիրներ՝ երբեմն եւ ստացող թագաւորների եւ թագուհիների պատկերներով, որ ազգագրական, պատմական մեծ արժէք ունին:

Արեւելեան Հայաստանում եւ Կիլիկիայում ֆողկել են գրչութեան եւ մանրանկարչութեան արուեստի շատ դպրոցներ. յիշուում են Կամարականների դպրոցը երեսուն գրիչ միաբաններով, ժ դարում Տաթեւի դպրոցը, ժԱ-ժԳ դարերը՝ Հաղբատի դպրոցը, ժԳ-ժԴ-ի կէսերը՝ Գլաձորի մեծ դպրոցը եւ ուրիշ վանքերում դպրոցներ. իսկ

Կիլիկիայում՝ Դրազարկի արքայական, Հոռովկայի Հայրապետական եւ Սկեւոյի դպրոցը Լամբրոնացիների հովանաւորութեան տակ, ուր գործել են «անհաս» գրիչներ եւ «աստուածապարգեւ արհեստիւ» նկարիչներ:

Հայ մանրանկարչական արուեստի ուսումնասիրութիւնը սկսուած է նախ եւրոպացիների կողմից՝ Ստեփանովսկի, Մակլեր, բայց եւ՝ Հայերի, ինչպէս օրիորդ Սիրարփի Տէր-Ներսէսեանը կամ Հանգուցեալ Սազգեանը, իսկ ատաղձ են մատակարարել Չոբանեան եւ ուրիշ շատեր: Յուսալ կարող ենք, թէ Հայ մանրանկարչական արուեստի նիւթերի եւ ուսումնասիրութիւնների կարգաւորեալ աշխատութեամբ հնարաւոր կլինի նոյնչափ հետաքրքրութիւն զարթեցնել եւ զնահատելի դարձնել, որչափ Հայ ճարտարապետութիւնը: Մենք պարծենալ կարող ենք ամենաքաղաքակիրթ ազգերի կողքին մեր 20000 տուփ կամ հատոր ձեռագիրներով, ուր պահուած է Հայ մտքի եւ ամբողջ անցեալի արտադրութիւնը, մեր ազգային հարստութիւնը:

Հայ ինքնուրոյն եւ թարգմանական մատենագրութիւնը նոյնչափ կարեւորագոյն արժէք է Մերձաւոր Արեւելքի ազգերի քաղաքակրթութեան պատմութեան ուսումնասիրութեան համար. նախ՝ Հայ պատմագրական գրականութիւնը, որ աղբիւր է նաեւ այն ազգերի պատմութեան, որոնց հետ շփուել է Հայ ժողովուրդը՝ սասանեան պարսիկները, սիրիացիք, արաբները, բիւզանդացիք, սելջուկները, խաչակիրները: Առանց Հայ պատմագրութեան օգտագործման միշտ պակաս կը մնայ այդ ազգերի գործերի եւ արչաւանքների պատմութիւնը:

Հայ տառերի գիւտի հետ Աստուածաշնչի թարգմանութիւնը մեր երանելի Հայերի՝ սուրբ Սահակի եւ սուրբ Մեսրոպի եւ նրանց աշակերտների հետ, Մերձաւոր Արեւելքի ազգերի համար եւս նշանակալից պատմական երեւոյթ էր: Նրանց եւ յաջորդող սերունդների ձեռքով թարգմանուել են գրեթէ բոլոր նշանաւոր Հայերի գործերը: Աստուածաշնչի թարգմանութիւնը միայն մի գլուխգործոց էր՝ դասական, յստակ գրաբարով, Հայ լեզուի հարստութեան ամենամեծ գանձարանը, Եզնիկի սքանչելի «Եղծ աղանդոցի» եւ քաղցրախօսիկ Եղիշէի հետ: Ապա Իրենէոսից, Որոգինէսից, Հիպոլիտից թարգմանութիւններ ունինք՝ ամբողջապէս կամ հատուածներով մեզ հասած, որոնց բնագրերից ոմանք՝ կորած եւ միայն Հայ թարգմանութեամբ մնացած: Չորսից հինգերորդ դարերի բոլոր նշանաւորագոյն Հայերի գրեթէ ամբողջական թարգմանութիւններն ունինք՝ Աթնասի, Եփրեմ Ասորու, Զգոնի, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստուածաբանի եւ Գրիգոր

Նիւսացու, Ոսկեբերանի, Եպիփան Սալամինացու, Կիւրեղ Աղեբ-
սանդրացու, Տիմոթէոս Կուզի, որոնց գրուածքներից ոմանց բնագիրը
նոյնպէս կորած է: Հարկաւոր է յիշել, թէ Բարսեղ Կեսարացիին եւ
Գրիգոր Աստուածաբան ուրիշ Հայ ուսանողների հետ Պրոյերեսիոս
Հայ Հոռտորի եւ փիլիսոփայի աշակերտներն են, որ նշանաւոր Հանդի-
սացաւ Աթէնքում եւ Հռոմում իբրեւ առաջնակարգ գիտնական եւ
պերճախօս: Այսպիսով, Հնարաւորութիւն է ստեղծուել լայն չափերով
օգտուելու այդ Հայրերի Հանճարեղ հոգու ճոխ ժառանգութիւններին:

Յիշատակելի է, վերջապէս, մեր հոգեւոր աշխարհիկ բանաս-
տեղծութիւնը մեր շարականների հեղինակների հետ՝ Գրիգոր Նարե-
կացիին, Ներսէս ԾնորՀայիին եւ ուրիշները: Գրիգոր Նարեկացիին, Ներսէս
ԾնորՀայիին առաջնակարգ կարող են համարուել միջնադարեան մեծ
ազգերի նման հեղինակների հետ: Գրիգոր Նարեկացիին բացառիկ
երեւոյթներից մէկն է ազգերի նման գրականութեան մէջ՝ մեղքի
ամենախորը գիտակցութեամբ, ներքին ամենասուրբ յուզումներով
եւ հոգու բոլորանուէր պարումներով, որ իբրեւ անուշահոտ կնդրուկ
իւր սրտի ոսկի բուրվառի մէջ ուղղում է առ «Տեսնողն գաղտնեաց»:
Ուստի եւ ոչ մի գիրք չէ ունեցել այն ներգործութիւնն ու նշանակու-
թիւնը, որ ունեցել է «Նարեկը» նախնեաց կրօնական զգացման վառ
եւ կենդանի պահպանութեան եւ սերունդէ սերունդ փոխանցման եւ
յարատեւութեան մէջ: Իսկ Ներսէս ԾնորՀայիին ոչ միայն Հայ ժամա-
պաշտութեան զարդն է, այլեւ իւր «Հաւատով խոստովանիմքով»
յաւերժական մի լուսաւոր փարոս է կանգնել Հաւատաւոր հոգու
առաջ՝ իբրեւ ուղեցոյց անյիշաչար, լայնախոհ եւ բարեպաշտ քրիս-
տոնեայի համար: Այդպիսի գնահատութեամբ է, որ նա թարգմանուած
է այլեւայլ լեզուներով:

Բայց մեր միջնադարեան բանաստեղծներն էլ զուրկ չեն անգին
գոհարներից: Ճրիկի, Նաչատուր Կեչառեցու, Կոստանդին Երզնկացու,
Թլկուրանցու, Նաղաշի, Գ. Աղթամարցու, մանաւանդ Չոբանեանցի
կողմից Քուչակի անունով հրատարակած սիրոյ եւ խրատական
նոտանաւորների ժողովածուի մէջ կան քառեակներ, որոնք մրցել կարող
են արեւելեան եւ եւրոպական նման լաւագոյն ստեղծագործութիւն-
ների հետ: Մենք համոզուած չենք, թէ նրանք Քուչակինն են, շատ
տողեր եւ քառեակներ երեւում են արդէն Քուչակից շատ առաջ
այլոց գրողների ստեղծագործութիւնների մէջ: Ժամանակով աւելի
նոր, բայց բանաստեղծական արժէքով էլ արժէքաւոր է Սայաթ-Նովան՝
աշուղական բանաստեղծութեան իշխանը, եթէ նրանց կարգին չհա-
շուենք Ճրիկին:

Ռուս բանաստեղծներ Բրիւսով, Մաքսիմ Գորկի, Վեսելովսկի եւ
ուրիշներ շատ բարձր են գնահատել Հայ հին եւ նոր բանաստեղ-
ծութիւնը, ուստի բազմաթիւ կտորներով թարգմանել եւ առանձին
ժողովածուներով հրատարակել:

Մենք չենք խօսում ժողովրդական բանահիւսութեան, ժողովրդա-
կան եւ եկեղեցական երգերի եւ մեղեդիների ճոխութեան եւ խորապէս
յուզական արժէքների մասին, որ եթէ հաւաքուին լիովին եւ ներդաշ-
նակուին, մի նոր, գեղարուեստական մեծ շէնք կ'ստանանք երաժշտա-
կան արուեստի համար:

Հայ քաղաքակրթութեան եւ պատմական դերի լուսաբանութեան
մէջ օտարների աչքում կարեւոր մաս ունին եւրոպական գիտնական-
ներից, վերեւ յիշուածներից գատ, Հիւբշման, Մեյիէ, Գելցեր եւ
ուրիշները, իսկ ռուս գիտնականներից՝ Մառ իւր աշակերտներով:
Գելցերի հետ հանգուցեալ Ադոնցիին ենք պարտական Հայերի առաջ-
նակարգ դերի լուսաբանութիւնը պետական, պատերազմական եւ
քաղաքակրթական մարզերի մէջ Բիւզանդական կայսրութեան սահ-
մաններում:

Այս թուղցիկ ակնարկների նպատակն էր մեր ընթերցողներին
պարզել ոչ միայն մշակոյթի արժէքը, այլեւ նորա ընդարձակ հորի-
զոնները մեր մէջ: Ապարախտ է եղել մեր վիճակը քաղաքական
տեսակէտով, բայց ամաչելու պատճառ չունինք հոգեւոր եւ մշակու-
թային կեանքի մարզերում:

Գնահատե՛նք մեր ստեղծագործական անցեալը, հաստատե՛նք
նորա արժէքի գիտակցութիւնը Հայ ժողովրդի հոգու մէջ:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
«Հասկ», սեպտեմբեր-հոկտեմբեր, 1946

ՊԱՏԱՍԽԱՆ ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ Կ. Պ. ԱՏԱՆԱԼԵԱՆԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՆ

Հաճութեամբ տեղ կուտանք լետագայ գրութեան, զոր Ամենայն Հայոց Վեհ. եւ Սրբազանագոյն Հայրապետին յանձնարարութեամբ Մայր Աթոռոյ միաբան Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. ուղղած է Ամերիկայի բողոքական հայոց հովիւներէն Վեր. Կ. Պ. Ատանալեանի՝ ի պատասխան այս վերջինին կողմէ՝ Ն. Ս. Օծութեան մատուցած քանի մը հարցումներու, զորս ընթերցողներ կը գտնեն այս գրութեան առաջին մասին մէջ: Ամիսներ առաջ նոյն այդ հարցարանը դրկուած էր նաեւ խմբագրութեանս, որ, խորհելով, թէ այդ հարցումներով շօշափուած բուն հարցին վերաբերմամբ իր կարծիքը ընդհանուր առմամբ քանիցս յայտնած էր «Սիոնի» մէջ, աւելորդ նկատեց առանձնակի գրութեամբ, այսինքն՝ նամակով եւս արտայայտուիլ: Ուրախ եմք որ Տ. Գարեգին Սրբազան հարցը նկատի կ'առնէ վերէն եւ ընդհանուր տեսակէտներէ դիտելով զայն եւ ոչ թէ հարց-պատասխանի այն մանր-ուսումնային ձեւին տակ, որով ներկայացուցած է զայն Վեր. Ատանալեան՝ կոտորակեալ մանրամասնութեան մը մէջ ցիրուցանելով խնդիր մը, որ իր թէ՛ ծագումին եւ թէ՛ զարգացումին մէջ միատարր եւ ընդհանուր բնոյթ մը ունի իսկապէս:

Խմբ. «Սիոնի»

Մեծարգոյ եղբայր:

Ս. Հայրապետը՝ Տ. Խորէն Կաթողիկոս Ամենայն Հայոց, ստացել է Ձեր առաջին եւ երկրորդ գրութիւնները, բայց ուշացել է պատասխանը ինչ-ինչ նկատառումներով եւ մանաւանդ երկարատեւ հիւանդութեան պատճառով: Այժմ յանձնարարել է ինձ պատասխանել Ձեզ՝ իւր տուած ընդհանուր ցուցումների համեմատ:

Ի նկատի ունենալով, որ Ձեր յարուցած խնդիրը հանրային նշանակութիւն ունի՝ մենք պատասխանում ենք Ձեզ հանրային եղանակով, այսինքն՝ տպագրական խօսքի միջոցով, մանաւանդ որ Ձեր բացատրական խօսքերից էլ երեւում է, որ Ձեր նպատակն է այսպիսի դիմումներով «լայնախոհ եւ անկողմնակալ ոգիով, իբրեւ միեւնոյն ազգին ու մի ընդհանրական Եկեղեցիին զաւակները, ընդհանուր եզրակացութեան հասնել»:

Ձեր հարցումներն են.

1. Հարիւր տարի առաջ Հայ աւետարանական շարժումի եւ ետքը անջատ Եկեղեցի ըլլալու պատճառներն ի՞նչ էին:
2. Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիի կազմութիւնը

եւ ցարդ շարունակելը՝ օգտակար եղած, թէ՞ վնասակար. ինչո՞ւ:

3. Հայ Աւետարանական Եկեղեցին իւր գոյութեան նպատակը արդարացուցած է եւ ցարդ բարեփոխումներ ունեցած է, թէ՞ ինչ:

4. Առաքելական Մայր Եկեղեցին եւ Աւետարանականը հարիւր տարիէ ի վեր ոեւէ չափով իրարու մօտեցած են:

Հասարակաց խնդիրներու շուրջ իրարու հետ կանոնաւոր եւ տեւական գործակցութիւն ինչո՞ւ չեն ունեցած:

5. Մայր Եկեղեցիին հետ միանալ ե՞րբ եւ ինչպէ՞ս կարելի կրնայ ըլլալ:

Ներեցէ՛ք, որ Ձեր հարցումների թելադրած շաւղով չպիտի ընթանանք մեր պատասխանի մէջ, այլ՝ էական սկզբունքների բացատրութեան, որ Ձեզ համար էլ կարեւորն է:

Ա

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, բնականաբար, ուրախ լինել չի կարող եւ ոչ խրախուսել, որ քրիստոնէական Եկեղեցիներից որեւէ մէկի կողմից պրոպագանդ մղուի Հայ Եկեղեցու զաւակների մէջ՝ եկամուտներ ձեռք բերելու նպատակով: Այդպիսի մերձեցումն ու հասկացողութիւնը օգտակար չէ ո՛չ Հայոց Եկեղեցու եւ ո՛չ ընդհանուր քրիստոնէական տեսակէտով. դորա հետեւանքն են եղել պառակում, բուռն վէճեր, ատելութիւններ եւ նոյնիսկ փոխադարձ վնասարարութիւններ միեւնոյն եղբայրների մէջ, ինչպէս եւ՝ քրիստոնէական հեղինակութեան եւ հմայքի անկում մեզ շրջապատող ոչ քրիստոնէայ ազգերի աչքում: Կաթողիկ Եկեղեցին դարերի ընթացքում կատարել է այդպիսի փորձեր եւ յաջողել է նորան մասնաւոր համայնքներ կազմել եւ բեկորներ պոկել Հայ ժողովրդից, բայց դորա հետ էլ՝ մեծամեծ խռովութիւնների եւ անախորժութիւնների, փոխադարձ հալածանքների եւ ատելութիւնների պատճառ դարձել նոյնազգի եղբայրների մէջ շատ երկար ժամանակներ. կրօնական պառակման հետեւանքն է եղել փոխադարձ սառնութիւն, իրարամերձ վերաբերմունք՝ ի վնաս մեր փոքրիկ ազգութեան սերտ միութեան: Բայց աւելին եւս. Հին Նախիջևանի շրջանի միարարութեան յարած համայնքները մասամբ լուծեցան մահմեդականութեան մէջ. Լեհաստանի ծաղկեալ գաղութը կորցրեց իւր ազգային բնոյթը եւ գրեթէ ամբողջապէս լուծուեցաւ շրջապատի մէջ. Հայաստանում եւ այլուր եղած շատ կաթողիկ համայնքներ իրենց «Ֆրանկ» են անուանում եւ ոչ հայ, որքան եւ կրօնականի իմաստ ունենար այդ բառը: Իմ խօսքս

հասարակ ժողովրդի համար է եւ ոչ՝ կրթուած կաթողիկոսներ, թէպէտ այդպիսիների մէջ էլ երբեմն նկատելի է սառն վերաբերմունք դէպի ազգային, ոչ կաթողիկ, ամբողջութիւնը:

Ընդհանուր գծերով կարելի է նոյնն ասել եւ բողոքական քարոզչութեան հետեւանքի մասին, թէպէտ ոչ այնպիսի սուր գծերով. բողոքականութիւնը հայոց մէջ ինքնաբերաբար յառաջ եկած շարժում է, այլ՝ դրսից ներմուծուած. այստեղ եւս փոխադարձ ծաղր, արհամարհանք, խժծանք չեն նպաստել քրիստոնէութեան կենդանութեան եւ խորը հասկացողութեան գաղափարին, թէեւ՝ ազգային զգացման ջլատման աւելի թոյլ արտայայտութեամբ:

Իւրատեսակ միսիոնարութիւն էր ցարական կառավարութեան ժամանակ Ռուսական Եկեղեցու կատարած նոր փորձը. «կրօնական շարժում» էր սկսուած մեր սակաւահոգ գիւղերի մէջ՝ լաւ հողամասեր ստանալու կամ անձնական վէճեր ու թշնամութիւններ յաջող լուծելու նպատակով՝ պաշտպանութիւն գտնելով ներշնչուած պետական պաշտօնեաներից, երբ Հայ Եկեղեցու սպասաւորները քարոզի սպառնալիքի տակ Հնարաւորութիւն չունէին իրենց պարտաւորութիւնը կատարելու՝ մոլորուածներին դարձի բերելու նկատմամբ: Հայ Եկեղեցին, բնական է, որ միայն բացասաբար կարող է վերաբերուիլ այսպիսի քարոզչութեան եւ եկամուտներ ձեռք բերելու գործունէութեան դէմ՝ դարերի փորձառութեան վերայ հիմնուած:

Բ

Ազգային եւ տարբեր Եկեղեցիների ծագումն ու ձեւակերպութիւններն իրենց առանձնայատկութիւններով անհատական կամայականութեան հետեւանքներ չեն, այլ՝ պատմական եւ տեղական որոշ պայմանների հետեւանք: Աստուծոյ կամքն է եղել, որ նոյն քրիստոնէութիւնը տարբեր ազգերի եւ պայմանների մէջ, իւր էական բնոյթը պահելով, ուրոյն կերպարանք ստանայ: Պատահական չէ, որ բողոքականութիւնը տարածուած է Եւրոպայի հիւսիսում, իսկ կաթողիկոսութիւնը իշխող է մնացել Հարաւում. որ պարսկական մահմեդականութիւնը զանազանուած է սիւննի կոչուած մահմեդականութիւնից: Ազգային կենցաղի, մշակոյթի, հոգեբանութեան եւ պատմական այլ պայմանների հետեւանք են դրանք, որ պիտի ի նկատի առնուին: Հայաստանեայց Եկեղեցին այդպիսիների մէջ բնորոշ Եկեղեցիներից մէկն է, որ ծագել է, զարգացել ժողովրդական ուրոյն կենցաղի, պատմական յատուկ տուեալների, ազգային մշակոյթի մէջ եւ իւր բարերար պտուղներն է սուել՝ ստեղծելով քրիստոնէական կեանք,

արուեստ եւ գրականութիւն, յատուկ ժամապաշտութիւն եւ արարողութիւն, նուիրապետական-վարչական կազմակերպութիւն՝ Համապատասխան իւր ճաշակի եւ հասկացողութեան: Նա իւր մէջ պահել է աւանդութիւններ եւ ծէսեր, որ քրիստոնէական նախկին երեք դարերից են գալիս, ինչպէս Մննդեան եւ Զատիկի ճրագալոյցներն են, Մկրտութեան եւ Յայտնութեան միասին կատարուած յունուարի 6-ին, բայց առաւելապէս՝ ժողովրդական ընտրական ոգին իւր բոլոր պաշտօնեաների համար, որ չէ մնացել հնագոյն եկեղեցականներից ոչ մէկի մէջ, եւ աշխարհիկ հաւատացեալների ներկայացուցիչների մասնակցութիւնը Եկեղեցու կառավարութեան գործում: Ամենադժուարին պայմանների եւ հալածանքների մէջ, մահմեդականութեան ուժեղ հարուածների եւ ճնշման տակ դարերի ընթացքում պահել է նա իւր գոյութիւնը, կարելի է ասել՝ անցել է «ընդ հուր եւ ընդ ջուր» եւ հասել մեր օրերին: Թող խաղաղութեան լայն եւ հարթ պողոտաներով ընթացող քոյր Եկեղեցիները քննադատի ակնոցներով չմօտենան այս բազմաշարժար եւ նահատակ Եկեղեցուն. տանջանքի բովի մէջ է նա մեզ դաստիարակել, պահել եւ հաւատ ներշնչել, թէ նորա համար էլ խաղաղ զարգացման եւ բարգաւաճման մի օր պիտի ծագի: Աւելի լաւ է լուրջ մտածեն մեր արեւմտեան քրիստոնեայ եղբայրները, թէ ուր են Սիրիայի, Պաղեստինի, Աղեքսանդրիայի եւ Հիւսիսային Աֆրիկայի մեծ Եկեղեցիները, որոնց չնչին մնացորդներն են հասել մեզ կամ իսպառ անհետացել, ինչպէս կիպրիանոսների եւ տերտուզիանների Եկեղեցիներն են:

Գ

Ի՞նչ է, վերջապէս, զուտ կրօնական տեսակէտով կաթողիկ պրոպագանդի կամ բողոքական քարոզչութեան նպատակը: Ասել, թէ կաթողիկոսութիւնը մեր նորադարձների մէջ աւելի խորը հասկացողութիւն պիտի ներշնչէ քրիստոնէութեան նկատմամբ, եւ Պապի գերիշխանութեան ընդունելութեամբ է, որ հոգեւոր կատարեալ փրկութիւն պիտի բաշխուի՝ հիմնաւոր չէ. եւ ոչ էլ բողոքականութիւնը մի քանի ծիսակատարութիւնների վերացմամբ իրական մերձեցում բերէ դէպի աւետարանական գաղափարների ճիշտ ըմբռնումն ու կեանքը: Եկեղեցու կոչումն ու նպատակն է ներքին, հոգեւոր վերածնութիւնը, «նոր արարած» դառնալու իրողութիւնը, հոգու խորքում ճշմարտապէս ապրուած բարեպաշտութիւնը: Արդ, արտաքուստ իրարից բաժանուած եւ տարբեր ձեւակերպութիւն ստացած Եկեղեցիների հաւատացեալների մէջ չեն պակասում այդպիսի երեւոյթներ: Նոցանից իւրաքանչիւրը նոյն նպատակին հասնելու առանձնայատուկ կողմերն ունի քրիստո-

նէական աւետարանական նոյն Հոգի վերայ: Այն Եկեղեցին, որ զղջման, դարձի այնպիսի մաքուր եւ խոր արտայայտութիւններ ունի, ինչպէս մեր պաշխարութեան Հոգեւոր երգերն ու շարականներն են, գթութեան այնպիսի ներկայացուցիչ՝ ինչպէս Ներսէս Մեծն է, աղօթաւոր՝ ինչպէս Նարեկացին, եւ քրիստոնէական լուսոյ, յուսոյ եւ սիրոյ երգիչ՝ ինչպէս ԾնորՀալիւն, այնպիսի տաճարներ է կանգնել, ինչպէս Զուարթնոցն է, Անիի Մայր Եկեղեցին, իրաւունք ունի ուրիշ գնահատութիւն եւ մերձեցում սպասելու իւր քոյր Եկեղեցիներէց: Նա գուրկ չի կարող լինել իւր զաւակների մէջ քրիստոնէական առաքինութեան, հաւատոյ նոր ոգի ներշնչելու կարողութիւնից. միայն՝ փոքր-ինչ լաւագոյն պայմաններ հոգեւոր կեանքի ուժեղացման համար եւ պաշտօնէութեան պատրաստութիւն՝ գիտութեան բարձունքների իւրացմամբ, որովհետեւ Եկեղեցու պաշտօնեայի կամ քահանայի մտաւոր եւ հոգեւոր կարողութիւնը, անձնաւորութիւնը, հոգիներից հոգի կենդանի կապ ստեղծելու ունակութիւնը ամենակարեւոր հանգամանքներից մէկն է մտադրեալ նպատակին հասնելու, միայն թէ պաշտօնէութիւն պատրաստելու այդ շարժումն էլ երեւան պիտի գայ Եկեղեցու ամբողջութեան մէջ հետզհետէ, ի ներքուստ, ինչպէս աղբիւրի ջուրը՝ ակունքից:

Դ

Քրիստոնէական օգնութիւնը, նիւթական եւ բարոյական աղքատութիւնն ու խեղճութիւնը մեղմելու, մխիթարելու գործը եղել է եւ պիտի մնայ միշտ Աւետարանի բերած մարդասիրութեան ամենամեծ երեւոյթներից մէկը: Բայց այդ անապական, կենդանարար ջուրը չպէտք է պղտորուի հատուածներ շահելու նպատակով կաթոլիկութեան կողմից՝ Պապի գերիշխանութեան եւ յարակից մտքերը հրամցնելով, իսկ բողոքականութեան կողմից՝ «Հոգիներ փրկելու» նորութիւնը, ինչպէս, տարաբախտաբար, շատ անգամ է կատարուած այդ միսինարներից ոմանց կողմից: Հին Եկեղեցիները, երբ օգնում էին միմեանց կամ գերիներ էին փրկում թշնամիների ձեռքից, ուրիշ նպատակ չունէին, քան եղբայրական եւ սիրոյ զգացման թելադրութիւնը. Կիպրիանոս օգնութեան էր հասնում Նուբիայի եպիսկոպոսներին, կամ Դիոնիսիոս Հռոմայեցին Կեսարիայի Եկեղեցուն՝ առանց գերիշխանութեան կամ եկամուտներ ունենալու նպատակների: Խորապէս վիրաւորական է այդպիսի օգնութիւնը սպասողների կամ ստացողների համար, խորապէս վիրաւորական եւ հակաքրիստոնէական պիտի համարուի այդ նուիրատուների համար. ուրիշին վիճակուած անբախտութիւնը չպէտք է շահագործուի եղբայրական օգնութեան անունով:

Եթէ Տէրը դատաւոր լինէր այդ ձեւի օգնութեան եւ քարոզչութեան՝ որ կողմից էլ նա գալու լինի, հաւատում եմ, թէ դատապարտութեան կ'ենթարկէր՝ իբրեւ ոչ համապատասխան իւր բերած եղբայրական սիրոյ եւ միութեան: Միսինարութիւնը քրիստոնէայ ազգերի մէջ պէտք է արմատապէս բարեփոխուի, եւ քոյր Եկեղեցիները պէտք է սովորեն փոխադարձ յարգանքով վերաբերուի միմեանց՝ թանկ գնահատելով իրար կապող ընդհանուր կողմերը:

Ե

Սակայն անարդար լինել չենք կարող. միսինարութեան եւ քարոզչութեան նոյնիսկ այսպիսի յոռի մերձեցումների հետ կապուած են եղել դրական հետեւանքներ եւս, կաթոլիկ միարարների բերած միջնադարեան գիտութիւնն ու սխոլաստիկական նորութիւն էր Հայ Եկեղեցու վարդապետների համար: Եսայի Նչեցի, Յոհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի իրենց յառաջ բերած դպրոցական-գրական արդիւնքներով շատ բան են ուսել եւ իւրացրել իրենց հակառակորդներից, ստեղծուած է միարարական թարգմանական եւ մասամբ ինքնուրոյն մի ամբողջ գրականութիւն: Չեմ յիշում Մխիթարեանների ընդարձակ գործունէութիւնը, որ իւր ծագմամբ ուրիշ նպատակների եւ շարժառիթների հետ էր կապուած:

Այսպէս էլ բողոքական քարոզչութեան հետեւանքով ստեղծուել է դպրոցական հաստատութիւնների մի ամբողջ ցանց, եւ այդ ոչ միայն հատուածեալների մէջ՝ հազարաւոր երիտասարդներ կրթելով Տաճկաստանի այլեւայլ հայաշատ կեդրոններում, ինչպէս եւ՝ որբերի խնամատարութեան, բժշկական օգնութեան, աղքատութեան մեղմացման եւ առհասարակ ինքնուրոյն աշխատանքով ապրուստ ձեռք բերելու ձգտումը զօրացնելու մէջ: Մենք շատ բարձր ենք գնահատում ամբերիկեան ժողովրդի օգնութիւնը այս վերջին ահաւոր պատերազմի ժամանակ, որին մասնակից էին եւ շատ միսինարական կազմակերպութիւններ՝ թէեւ ընդհանուրը այլ Հոգի վերայ յառաջ եկած, հազարաւոր, տասնեակ հազարաւոր երեխաների, կանանց եւ հարուածեալների նիւթական եւ բարոյական կեանքն ազատելով, ինչպէս եւ՝ Լեպսիուսի ձեռքով հաստատուած որբանոցները: Անհետեւանք չէ մնացել եւ այս շփումներից յառաջ եկած կրօնական խնդիրների կենդանութիւնն ու հասկացողութիւնը: Բայց, կրկնում ենք, դրական այս արդիւնքները պայմանաւորուած չեն Հայոց Եկեղեցու մէջ անջատողական շարժում յառաջ բերելու ձախ մտքով, որ, տարաբախտաբար, որոշ դեր է կատարում եւ այժմ Սիւրիայում մեր հայրենազուրկ եւ

գաղթական հայրենակիցների մէջ կաթոլիկ հաստատութիւնների, նաև բողոքականների կողմից: Մեծ Եկեղեցիները աւելի մեծ եւ կարեւոր խնդիրներ ունին իրենց առաջ դրուած՝ իրենց ծոցում յառաջ եկած հակակրօնական շարժումների դէմ պաշտպանուել, որ հետզհետէ ընդարձակ ծաւալ են ստանում, կրօնի արդի հասկացողութեան եւ նորա սկզբունքների իրացման նոր ուղիներ գտնել կեանքի մէջ՝ հին եւ ընտիր գինին նորագոյն տիկերի մէջ բովանդակելով: Իսկ Եկեղեցիների փոխադարձ յարաբերութիւնն ու օգնութիւնը անհրաժեշտութիւն է, բայց այդ պէտք է լինի միայն եղբայրական սիրոյ շարժառիթներով եւ ոչ այլ նպատակով:

Զ

Մեր հայեացքը ընդհանուր գծերով պարզելով հանդերձ՝ անտես անել չենք կարող կատարուած իրողութիւնը. ունինք բաւական թուով կաթոլիկ եւ բողոքական համայնքներ իրենց անջատ եւ ուրոյն կազմակերպութիւններով: Բողոքական համայնքների նկատմամբ ասել կարող ենք, որ նրանց յարաբերութիւններն այժմ աւելի մեղմացած են, եւ անջատական զգացմունքը՝ թուլացած: Հայ կաթոլիկներն էլ մեր եղբայրներն են՝ լեզուով, անցեալի ստեղծագործութիւններով եւ ազգային շատ աւանդութիւններով կապուած ամբողջութեան հետ, մանաւանդ՝ Մխիթարեանների գրական-գիտական գործունէութեամբ: Երկուսի վերայ էլ մենք նայում ենք իբրեւ մեր ծոցից հեռացած հարազատների վերայ: Ուրախութեան անխառն զգացումով ողջունել կարող ենք մերձաւորութեան, գործակցութեան իւրաքանչիւր մի քայլ: Եթէ մեզ վիճակուած է իբրեւ քրիստոնեայ ժողովուրդ ապրել եւ իբրեւ ուրոյն ամբողջութիւն մեր լուսման ձգել ընդհանուր մարդկութեան յառաջադիմութեան գանձանակը, ապա այդ պիտի կատարուի Հայաստանեայց Եկեղեցու պահպանութեամբ եւ նորա վերակենդանութեան պայմաններով, իսկ միւս հատուածների օժանդակութեամբ միայն՝ իբրեւ փոքրամասնութիւններ. այդ Եկեղեցին է, որ պէտք է ոտքի կանգնեցնել՝ իւր բարեբար, բարոյական եւ քաղաքակրթական կենդանացուցիչ դերը շարունակելու համար: Ահա՛ մեր սրտաբաց պատասխանը Ձեր դիմումներին:

Ի վերջոյ, թոյլ տուէք շնորհակալ լինել Ձեր յարգալիր շնորհաւորութիւնների եւ բարեմաղթութիւնների համար ս. Հայրապետի ընտրութեան եւ յԱթոռ բարձրանալու առթիւ, որ շատ է տարբեր Սուրբ Գրքի տառերն անգիր արած մի Ամիրխանեանցի վերաբերմունքից, որ հանգուցեալ Գէորգ Դ-ին վէճի էր հրաւիրում՝ բողոքական

ըմբռնումների ճշմարտութիւնը ապացուցանելու համար:

Ուրախութեամբ ընդունուեցաւ Նիւ Ինկլէնտի Հայ Աւետարանական Եկեղեցիների որոշման լուրը՝ «ս. Հաղորդութեան ատեն գործածել Առաքելական մայր Եկեղեցիի սուրբ պատարագի արարողութիւնները»: Ցանկալի էր աւելի մանրամասնութիւններ իմանալ այդ մասին:

Եղբայրական սիրով եւ ողջունի՛

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

«Էջմիածին», 1933

«Սիոն», 1934



ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄԸ ԻՒՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆՆԵՐ*

Միրելի՛ք, օրուան նիւթը շատ կարեւոր է: Այժմէական նիւթ մըն է, վասնզի ուղղակի կապ ունի մեր առօրեայ կեանքի հետ:

Դուք բոլորդ լաւ պէտք է հասկնաք, որ մեր անցեալի գոյութիւնը ուղղակի կախում ունէր Հայ Եկեղեցւոյ գոյութենէն:

Երբ անոր հովանիէն հեռացած ենք, ընդմիջտ կորսուած ենք. ինչ որ պատմութիւնը ցոյց կուտայ մեզի: Ով որ այս իրողութիւնը չի հասկնար, այնպիսին Հայոց պատմութեան լիովին հասկացողութիւնը չունի:

Սխալ պէտք է հասկնալ. մենք նպատակ չունինք յուզելու կրօնական վէճեր եւ կամ գրգռելու այս կամ այն հատուածը եւ կրկնելու անցեալի տխուր երեւոյթները: Անոնք հաւասարապէս դատապարտելի են:

Կը յարգենք ու կը սիրենք մեր աւետարանական եւ կաթողիկէ Հայ եղբայրները, բայց կը մնանք Հայաստանեայց Եկեղեցւոյ հարազատ զաւակներ: Կրնանք անոնց հետ բարեսիրական, ազգային նպատակներու շուրջ գործակցութիւն ստեղծել: Բայց այդ չի նշանակեր, որ մենք պէտք է մեր Եկեղեցւոյ ըմբռնումներէն հրաժարինք: Քրիստոնէական ոգին շատ լայն, վեհ եւ բարձր ոգի է: Ուրեմն, կարելի է այդ ոգիով համագործակցութիւն ստեղծել համայնքներու միջեւ: Բայց երբ մեր վստահութիւնը չարաչար կը գործածուի, եւ իրենց Եկեղեցիի հաշտոյն միսիոնարութեան դիմեն եւ հետամուտ ըլլան մերիներէն «եկամուտներ» որսալ, մենք անոնց պէտք եղածը կ'ազդարարենք:

Մեզի համար անընդունելի երեւոյթ է, որ Եկեղեցի մը ուրիշ Եկեղեցիի մէջ միսիոնարութիւն կատարէ. անիկա ուղղակի դէմ է

* Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կազմակերպած ժողովրդային լսարանի վեցերորդ դասախօսութեան ընթացքին (8 մարտ, 1946) տ. Տաճատ վրդ. Ուրֆայեան խօսեցաւ « Հայաստանեայց Եկեղեցւոյ դերը գաղութներու պահպանութեան մէջ » ճիւղին շուրջ: Դասախօսութեանէն ետք Գարեգին Ա Կաթողիկոս արտի խօսք մը ուղղեց հանդիսականներուն, գոր գոյի առած էր Բաբգէն վարդապետ: Գարեգին Կաթողիկոս հետեւեալ ծանօթագրութիւնը կուտայ անոր տպագրութեան առիթով. « Հասկանալի է, որ տ. Բաբգէն վարդապետի սղագրած այս խօսքը բառացի չէ, բայց պահուած է ստղերի շարայարութիւնն ու բովանդակութիւնը ընդհանուր առմամբ: Հարկատր համարեցինք դնել մեր քարոզների եւ բանախօսութիւնների շարքում, որպէսզի ընթերցողներից առաւել եւս պարզ լինի մեր մտայնութիւնը լարուցուած խնդրի մասին »:

քրիստոնէական ոգիին եւ ըմբռնումին: Հետեւաբար, կը բողոքենք Եկեղեցիի մը ա՛յլ Եկեղեցւոյ մէջ միսիոնարութիւն կատարելու գաղափարին դէմ:

Դժբախտաբար, այդ բանը կատարուած է անցեալի մէջ: Պէտք է դադրի Հայ ժողովուրդի եւ Հայ Եկեղեցիի մէջ օտար Եկեղեցիներու միսիոնարական գործը: Մեր հոգիի ամբողջ ուժգնութեամբ կը բողոքենք Հայ ժողովուրդի եւ Հայոց Եկեղեցւոյ զաւակներուն մէջ կատարուող օտար միսիոնարական գործունէութիւններու դէմ (ծափեր): Պէտք է վերջ գտնէ այդ երեւոյթը՝ միտքեր պղտորելը, երբայրական վէճ եւ ատելութիւններ ստեղծելը...

Օգնութիւնը պէտք է կատարուի եղբայրական սիրոյ համաձայն եւ ոչ՝ « դարձի բերելու » բողոքական կամ կաթողիկէ միտքով: Հին Եկեղեցւոյ մէջ փոխադարձ օգնութիւնը այս հիմքերու վրայ կատարուած է, որմէ բազմաթիւ փաստեր ունինք:

Եթէ լսեմ, որ իմ վարդապետներէս մէկը կամ միւսը գացեր է ուրիշ Եկեղեցւոյ կամ համայնքի մէջ կամ նիւթական օգնութիւնը ծառայեցուցած է եւ աշխատած է որսալու կամ մարդ դարձի բերելու նպատակով, ես խիստ կերպով կը յանդիմանեմ այնպիսին՝ պարսաւելով այսպիսի հակաքրիստոնէական ձեռնարկ: Քա՛ւ լիցի քաջալերել քոյր Եկեղեցիներու եւ համայնքներու մէջ կատարել այդպիսի գործ. այդ կը նշանակէ ամենամեծ անհասկացողութիւն քրիստոնէական ոգիի հանդէպ:

Դժբախտաբար, այդպիսի դէպքեր շատ պատահած են անցեալի մէջ: Իհարկէ, պակասած չեն նաեւ եղբայրական օգնութիւններ եւ իսկական բարերարութիւններ, զորս մեծապէս կը գնահատենք: Նախանցեալ պատերազմի ժամանակ ամերիկացիներու հասցուցած օգնութիւնը հազարաւոր կեանքեր փրկեց, ինչպէս նաեւ ուրիշներ բարեգործութիւններ կատարեցին, որոնց հանդէպ երախտապարտ ենք:

Կ'ուզենք մեր միտքը աւելի պարզել, որ սխալ չհասկնաք, եւ սխալ չհասկնուիք: Անցեալէն մեզի հասած իրողութիւն է, որ ունինք Կաթողիկէ եւ Բողոքական Եկեղեցիներուն պատկանող Հայ համայնքներ: Անցեալ վէճերուն հարկ չունինք դառնալու եւ եթէ անոր դառնալու ըլլանք, միմիայն անոր կապուած պատմական լուսաբանութեան համար կ'անդրադառնանք:

Անոնք մեր եղբայրներն են լեզուով, արեամբ, անցեալ պատմութեամբ եւ ապագայ տեսիլքներու իրականացման մեծագոյն յոյսերով: Մենք կը յարգենք խղճի եւ գաղափարների ազատութիւնը. փոխա-

դարձ յարգանքն է շիտակ ճամբան: Կ'ուզենք յարգել, բայց նաեւ՝ յարգուիլ:

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին ոչ միայն քրիստոնէական է իւր բերած հոգեւոր փրկութեան գաղափարներով, իւր լուսաւորչական գործունէութեամբ, իւր նիւթին համեմատութեամբ առաւելագոյն նահատակութիւններով, այլեւ մեր ազգային Եկեղեցին է՝ պահպան հրեշտակը մեր ազգային գոյութեան, ապարախտ անցեալի հոլովման մէջ:

Եթէ այստեղ այնթապցիներ եւ կեսարացիներ կը գտնուին, անոնք կրնան հասկնալ, որ ինչպիսի՛ մեծ դեր կատարած է Հայաստանեայց Եկեղեցին իրենց կեանքին մէջ: Այդ քաղաքներու մեր հայրենակիցները ո՛չ մէկ ձեւով կրցած են պահել հայ լեզուն, բայց կրնամ ըսել, որ անոնք մեզի չափ եւ ոչ պակաս հայ՝ մնացած են, որովհետեւ հաւատարիմ մնացած են ազգային Եկեղեցին:

Գացէ՛ք Մայր Աթոռ՝ Ս. Էջմիածին, գացէ՛ք մանաւանդ Երուսաղէմ եւ դուք պիտի տեսնէք, որ ամենաթանկագին զգեստներ ու անօթներ մեր կեսարացի հայրենակիցները նուիրած են այս Աթոռներուն: Ասով ըսել կ'ուզենք, որ Եկեղեցին՝ Հայաստանեայց Եկեղեցին, նախախնամական մեծ դեր մը կատարած է Հայ ազգի պահպանման գործին մէջ: Տեսէ՛ք ուրեմն, սիրելիներ՝ կորսնցուցեր ենք մեր լեզուն մեր ընտիր գաղութներուն մէջ, կորսնցուցեր ենք մեր պետականութիւնը եւ, նոյնիսկ մեր հայրենիքէն հեռու գտնուելով, հայ ենք մնացեր Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ փրկարար դերին շնորհիւ (երկար ծափահարութիւններ):

Պէտք է լաւ հասկնաք. մեր Հայաստանեայց Եկեղեցին է, որ մեր լեզուն ու գրականութիւնը պարզեւած է մեզի: Ան է տուած հայուն հայերէն Սուրբ Գիրքը: Անոր կը պարտինք մեր դարաւոր եւ փառաւոր մշակոյթը:

Ո՛չ բողոքականութիւնը եւ ո՛չ ալ հռոմէականութիւնը դաստիարակած են մեր ժողովուրդը տասնօթը դարեր. այդ բանը ըրած է Հայաստանեայց Եկեղեցին, եւ մեր պատմութեան բոլոր մեծ մարդիկը մինք կը պարտինք Հայաստանեայց Եկեղեցւոյ շունչին, որ զանոնք հասցուցեր է: Մենք պէտք է հպարտ ըլլանք անոր զաւակները ըլլալնու համար (բուռն ծափեր): Հայ բողոքականներն ու կաթողիկոսները մեր ազգակիցներն են, մեր եղբայրներն են, բայց Հայաստանեայց Եկեղեցիի զաւակներու սիրտերը պէտք է բաբախեն մեր մայր, պատմական եւ դարաւոր Եկեղեցիի համար, որ հայուն ամենամեծ ստեղծա-

գործութիւնն է՝ ծագումով, զարգացումով եւ յարատեւութեամբ կապուած Հայ ժողովրդի կեանքին հետ: Մենք հպարտ պէտք է զգանք ինքզինքնիս, որ այդ Եկեղեցիին զաւակներն ենք (բուռն ծափեր):

Հայաստանեայց Եկեղեցին մատակարարած է հոգեւոր փրկութիւնը լաւագոյն կերպով: Ասով ըսել չենք ուզեր, որ «արտաքոյ Հայ Եկեղեցւոյ չիք փրկութիւն», ինչպէս որ կաթողիկոսները կը հաւաստեն Հռոմէական Եկեղեցիին համար, այլ՝ թէ Հայ Եկեղեցին, ազգային տեսակէտով իւր ունեցած բոլոր առաւելութիւններուն հետ, իւր զաւակներուն կրնայ ցոյց տալ հոգեւոր փրկութեան ճամբան՝ Աւետարանի սկզբունքներուն համաձայն եւ մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի վարդապետութեան հետեւանքով:

Այսօրուան դասախօսութենէն պարզուեցաւ, թէ, Հայաստանեայց Եկեղեցիէն հեռանալով, մեր գաղութներէն մի քանիները ընդմիջտ կորսուած են թէ՛ Հայաստանեայց Եկեղեցիի եւ թէ՛ մեր ազգի համար: Այդ տխուր երեւոյթին ամենահետաքրքրական օրինակներէն է Հին Նախիջևանի հայութեան մէկ հատուածին պատմութիւնը, որը յատկապէս դոմինիկեաններու քարոզութեան եւ հռոմէական միսիոնարներու ջանքերով բաժնուեցաւ Հայաստանեայց Եկեղեցիէն եւ առանձին եպիսկոպոսութիւն կազմեց: Արդիւնքն այն եղաւ, որ երբ նեղութեան օրերը եկան պարսկական հարստահարութեանց ու հալածանքի եւ բռնութեանց հետեւանքով, անոնք թուլցան եւ անկարող եղան իրենց հայութիւնն ու հուստքը պահելու եւ, աւա՛ղ, բոլորովին կորսուեցան մեզ համար:

Հին Նախիջևանի շրջաններուն մէջ գիւղեր կան, որոնք ցայժմ դեռ իրենց հայկական դիմագիծը պահած են, հայ արտայայտութիւն ունին, մեզի հետ իրենք եւս գիտեն, որ իրենց նախնիքը Հայ եղած են, սակայն կը մնան թրքացած իսլամներ: Ահա՛ ունիթորական շարժումին հետեւանքներէն մէկը. լատին միսիոնարներու եւ հայ լատինամոլներու աշխատութեամբ նոյնիսկ բուն հայրենիքի մէջ անոնք կորսուեցան մեզ համար:

Նոյն տխուր երեւոյթին կը հանդիպինք Լեհաստանի Հայ գաղութին մէջ: Լաւ կազմակերպուած, բարգաւաճ եւ զօրաւոր գաղութ մը ոչ միայն կրօնական, այլեւ դատաստանական ազատութիւն ձեռք բերած էր, իրենց դատերը իրենք էին, որ կը վարէին, բայց ափսոս, որ չիք-Նիկոյ եպիսկոպոսի մը պատճառաւ, որ փառասիրութեամբ դաւաճանեց Հայ Եկեղեցիին, եւ մանաւանդ յիսուսեան կարգի կրօնաւորներու ձեռքով յաջողեցաւ վերջիվերջոյ այս պատուական գաղութը

Ա

«Հասկի» նախընթաց համարի մէջ տպուեցաւ Ն. Սրբութիւն Տ. Տ. Գէորգ Ամենայն Հայոց Ծնորհազարդ Կաթողիկոսի անդրանիկ կոնդակը*: Վեհապետների գահակալական ճառերը, առաջին հրովարտակները, կոնդակները ու գրութիւնները սովորաբար հանրային բնոյթ են կրում. մի տեսակ յայտարարներ իրենց լաւագոյն իղձերի եւ ծրագիրներին, բնորոշող նրանց ուղղութեանը գործելակերպի: Մի ամբողջ տարի անցաւ Ն. Սրբութեան ընտրութեան եւ օժման օրերից մինչեւ անդրանիկ կոնդակի ստացումը: Այդ յապաղումը, որքան տեխնիքական պատճառներ ունեցած լինի, կամենում ենք եւ մի բնորոշ գիծ համարել Ն. Սրբութեան գործելակերպի. մի քիչ ուշ, բայց մտածուած, հիմնաւոր, ոչ արագ, բայց կատարեալ: Ուշացաւ Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը, բայց նախապարաստուեցաւ եւ կատարուեցաւ աւելի լաւ, քան մեր ակնկալութիւններն էին:

Այդպէս էլ ուշացաւ կոնդակը, բայց եկաւ մեզ գեղարուեստական հանդերձանքով եւ հմտալից, բազմաբովանդակ ձեւակերպութեամբ՝ ճակատը զարդարուած հայ մանրանկարչական արուեստի ոճով, խորանով եւ լուսանցքի զարդարով, ինչպէս մեր նախկին Հայրապետների սովորութիւնն էր, սպազրութիւնն էլ՝ կապոյտ, երկնագոյն մելանով, մաքուր եւ ճաշկոյճով, իսկ բովանդակութիւնը՝ չափուած եւ ձեւուած, զիտակցական եւ կարգաւորեալ ծրագրով:

Բ

Մեզ անհուն ուրախութիւն է պատճառում կոնդակի ընդհանուր մտայնութիւնը, որ սիրոյ եւ միութեան գաղափարն է եւ որ արտափայլում է ամէն պարբերութեան մէջ, բայց յատկապէս՝ սրտազին յարաբերութիւնը բոլոր Աթոռների հետ եւ ջանք այդ յարաբերութիւնը դարձնել աւելի սերտ, իրար լրացնող եւ դէպի նոյն նպատակն ուղղուած, որ Հայաստանեայց Եկեղեցու միասնականութիւնն է, համերաշխութիւնը եւ բարերար ազգեցութիւնը հօտի ամբողջութեան վերայ:

Ս. Հայրապետը անցած ժողովը համարում է իրաւամբ բացառիկ երեւոյթ մեր պատմութեան մէջ՝ իւր լրիւ կազմով եւ ներկայացուցչութեամբ, բոլոր Աթոռների եւ եպիսկոպոսութիւնների հոգեւոր եւ

* «Հասկ», քիւ 6, 1946

բաժնել Հայ Եկեղեցիէն: Անոնք եւս կորան թէ՛ Հայաստանեայց Եկեղեցիի եւ թէ՛ ազգին համար: Մինչդեռ նոյն պայմաններուն մէջ աւելի փոքրաթիւ գաղութներ, ինչպէս Սուչովայի հայ գաղութը, պահելով մայրենի Եկեղեցին, թէեւ հայ լեզուն եւ հայկական շատ մը մասնայատկութիւններ կորսնցուցին, սակայն մինչեւ այսօր ալ հայ են եւ Հայաստանեայց Եկեղեցիի գաւակ:

Երրորդ անգամ կը կրկնենք եւ կը խնդրենք, որ սխալ չհասկնաք. մենք չենք ուզեր վիրաւորել հայ բողոքականներն ու կաթողիկները, ո՛չ մէկ խնդիր ունինք իրենց հետ, այլ պատմական իրողութիւնները նկատի ունինք եւ մեր հայրերու հաւատքով մեզ թողած թանկագին ժառանգութեան զիտակցութիւնը կ'ուզենք շեշտել: Ուստի մեր գաւակները կը յորդորենք սիրել իրենց Մայր Եկեղեցին: Յարգեցէ՛ք դիմացինի համոզումը եւ Եկեղեցին, բայց պէտք է շեղիք մեր Հայ Եկեղեցիէն եւ հայ դաւանութենէն: Լաւ պէտք է հասկնանք, որ Հայ Եկեղեցին է եղած մեր գոյութեան պահպանը, նա մխիթարած է մեզ, հոգևով ծնած ու դաստիարակած է մեզ, տառապած եւ նահատակուած է մեր ժողովուրդի հետ եւ քամած է վշտի ու տառապանքի բաժակը մինչեւ մրուրը:

Օրհնեալ լինիք ամէնքդ. ամէն:

«Հասկ», մարտ, 1946



աշխարհիկ պատգամաւորներով՝ շեշտելով մասնաւանդ մեծ Աթոռների գահակալների անձամբ մասնակցութիւնը:

«Յայտնեմք զուրախութիւն ՄԵՐ եւ զգոհունակութիւն հոգեւոր եղբօր Մերում Տ. ԳԱՐԵԳԻՆԻ Շնորհազարդ Կաթողիկոսի ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ, որ ընդ եկեղեցական եւ աշխարհական պատգամաւորօք իրովք նպաստաւոր եղել յոյժ միասնականութեան ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ եւ բարձր տրամադրութեան ժողովականաց եւ առ հասարակ յաջող վերջաւորութեան ժողովոյս ըստ ամենայն մասանց: Ձնոյն յայտնեմք եւ Ամենապատիւ Պատրիարքին ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Տ. ԿԻՒՐԵՂԻ եւ Տեղապահի Պատրիարքութեան Կ. ՊՈԼՍՈՅ Տ. ԳԵՈՐԳԱՅ Արքեպիսկոպոսի Արպանեանք»:

Այս խօսքերը ընդունելով որպէս առհաւատչեայ եղբայրական սրտագին յարաբերութեան՝ պատասխանում ենք, թէ պարտականութիւն ենք համարում Մեր բոլոր ուժերը, գրիչը, խօսքը, փորձառութիւնն ու պաշտօնի հեղինակութիւնը ի սպաս դնել բոլորանուէր՝ ընդհանուր Հայաստանեայց Եկեղեցու փառքի, պայծառութեան եւ բարոյական ազդեցութեան զօրացման համար:

Ընդունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի գերագահ դիրքը՝ կը կամենայինք, որ ըստ ամենայնի պահպանուէր նրանց պատշաճ յարաբերութիւնը ըստ պաշտօնի եւ կոչման, ինչպէս այդ գծուեցաւ Սահմանադրութեան մէջ: Միասնականութիւն չպէտք է շփոթել միապետութեան հետ եւ ոչ՝ ընդհակառակը: Միասնականութիւնը կամենում ենք իրականացած տեսնել գիտակցական փոխադարձ ձգտումների միութեան մէջ, իրար զօրավիգ եւ նեցուկ լինելու եւ Աթոռների սերտ գործակցութեան մէջ՝ իւրաքանչիւրը իւր պարտքի եւ իրաւունքի շրջանում: Մենք, իբրեւ Կիլիկիոյ Հայրապետական Աթոռի գահակալ, պատրաստ ենք Մեր կարելին բերել՝ յաւերժացնելու աւելի սերտ, աւելի գիտակցական եւ միեւնոյն ժամանակ աւելի շրջահայեաց յարաբերութիւն Մայր Աթոռի հետ՝ առաջնորդուելով միշտ առաքելալի խօսքով, թէ «գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ»: Կեանք բերող հոգին է Եկեղեցու համար ամենից կարեւորը, որ պիտի զօրացնենք եւ յաւերժացնենք փոխադարձ համերաշխութեամբ եւ գործակցութեամբ:

Երուսաղէմի Պատրիարքութիւնը ժողովրդական բազմութեան տեսակէտով համեմատաբար սահմանափակ էր մինչեւ նախընթաց պատերազմ՝ մինչեւ մեր զլխին եկած մեծ աղէտը, բայց իբրեւ Հինաւուրց եւ պատմական Աթոռ Ս. Երկրի մէջ ներկայացնում է նա

Հայաստանեայց Եկեղեցին միջազգային տարողութեամբ: Պատրիարքութիւնը իւր միաբանութեամբ ոչ միայն մեր սեպհականութիւնների եւ իրաւունքների պաշտպանն է եղել, այլեւ իւր բաժինն է բերել եւ պիտի բերէ մեր հայագիտական եւ եկեղեցական գրականութեան մէջ: Մեր երկու Աթոռների մերձաւորութիւնը տարածութեամբ հնարաւորութիւն է տալիս նաեւ բարոյական մերձաւորութեան՝ ի շահ եւ ի բարգաւաճումն Հայաստանեայց ընդհանուր Եկեղեցւոյ եւ Մայր Աթոռի հեղինակութեան: Պէտք է ի նկատի ունենալ, թէ ձեռքերը որքան էլ երկար լինին, ամէն տեղ հասնել չեն կարող:

Ձմոռանանք սրտի ճմլումով յիշել եւ Կ. Պոլսի Պատրիարքութիւնը՝ իւր հօտի եւ գործունէութեան սեղմուած վիճակով:

Գ

Վերջին տասնեակ տարիներում Աթոռների աւելի սերտ եւ համերաշխ գործակցութեան գաղափարը էջմիածնում զբաղեցրել է մտքերը եւ Կիլիկիոյ Աթոռի կողմից առանց պատասխանի չէ մնացել: Դորա հետեւանքն էր, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան կանոնագրութեան մէջ մտաւ եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մասնակցութիւնը: Ուրախ ենք, որ այդ մեծ բախտը Մեզ վիճակուեցաւ իրագործուած տեսնել՝ անձամբ մասնակցելով եւ նախագահելով ընտրական ժողովին: Միասնականութեան եւ միութեան այդպիսի հասկացողութեամբ էր, որ առաջարկեցինք Հայաստանեայց բոլոր Եկեղեցիներում Ամենայն Հայոց Կաթողիկոսի անուան հետ յիշել եւ միւս աթոռակալների անունները, որ ժողովի կողմից միաձայնութեամբ ընդունուեցաւ: Սպասում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտօնական յայտարարութեան՝ շփոթութիւնների եւ բազմաձեւութեան այս երեւոյթը մէջտեղից վերացնելու:

Այս մտքով էր, որ Աթոռի՝ Սսից էջմիածին փոխադրելու հինգ հարիւրամեակը տօնախմբելու առաջարկին ընդառաջ գնացինք՝ աւելացնելով, որ շեշտուի նաեւ Կիլիկիոյ եւ միւս Աթոռների կատարած դերը ազգապահպանութեան մէջ, որպէսզի այդ տօնախմբութիւնը որպէս հակադրութիւն չհասկացուի:

Այս մտքով էր, որ Մեր ազգատութեան մէջ, իբրեւ տեղահան եղած եւ իւր հարստութիւնից զրկուած հաստատութեան ներկայացուցիչ, մեր լուծման ձգեցինք Մայր Աթոռի պահպանութեան գանձանակի մէջ իբրեւ նուէրը մեր թեմերի՝ վերան աւելացնելով եկեղեցական պատգամաւորների ճանապարհածախսից մնացած գումարը, որի մասին առիթ կ'ունենանք ընդհանրութեան տեղեկացնելու:

Վերջին եւ նորագոյն ապացոյցը երկու Աթոռների Համերաշխ գործակցութեան գալիս է էջմիածնից՝ Տ. Տ. Գէորգ Կաթողիկոսի կողմից՝ առաջարկելով Մեզ ձեռներէց լինել Հինգ Հարիւրամեակի տարեդարձին նուիրուելիք Գիտական ժողովածուի կազմութեան: Չնայելով Մեր պարտաւորութիւններով ծանրաբեռնուած վիճակին՝ յանձն ենք առել սիրով, որպէսզի կրկին շեշտենք երկու Աթոռների եղբայրական գործակցութիւնը:

Աստուած օրհնէ Համերաշխութեան եւ փոխադարձ Հասկացողութեան այս Հոգին, որպէսզի մեր մեծ կործանումից յետոյ վերածնութեան եւ վերակազմութեան մղիչ ոյժ դառնայ այն Եկեղեցու եւ Հայրենիքի Համար:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
«Հասկ», յուլիս-օգոստոս, 1946

ՆԱՀԱՏԱԿԱՑ ՄԵԾԱՇՈՒՔ ՀԱՆԴԵՍԸ

(Սիմեմա Ռոքսիի մէջ)

Նահատակաց փառաշուք հանդէսները կատարուեցան այս տարի թէ՛ Սիմեմա Ռոքսիի եւ թէ՛ Անթիլիասի մէջ ժողովրդեան խոուն բազմութեան ներկայութեան, որոնցմէ շատեր դուրս մնացին տեղւոյն անբաւարարութեան պատճառով:

Հայ համալսարանական ուսանողութիւնը եւ «Անի» գրական ամսաթերթը կազմակերպեցին ապրիլ 24-ին Սիմեմա Ռոքսիի հանդէսը՝ նախագահութեամբ Ն. Վեհափառութիւն Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսին:

Տիար Ս. Փիրեանցի բացման խօսքէն ետքը եղան ապրումով եւ յուզումով օծուն արտասանութիւններ օրիորդներ Պոյաճեանցի եւ Խաչատուրեանցի կողմէ: Օրում բանախօսն էր տիար Ս. Ապտալեան, որ գեղեցկօրէն բացատրեց Նահատակաց տօնին այժմեան բերկրաւոր իմաստը: Ապա Վեհափառ Հայրապետը խօսեցաւ իր հոգեշունչ եւ թովիչ ճառերէն մէկը, որուն համառօտ ամփոփումը կուտանք ստորեւ: Հանդէսը վերջացաւ ընթերցումով երկու հեռագիրներու՝ ուղղուած Խորհրդային Միութեան եւ Միացեալ ազգերու ակաֆովութեան խորհրդի քարտուղարութեան, որոնցմով կը պահանջուէր կցումը հայկական նահանգներու՝ Խորհրդային Հայաստանի Հանրապետութեան:

Սիրելի՛ ժողովուրդ:

Մարդկային հոգու, ներքին աշխարհի ամենալաւ եւ ամենիջական գործիքը լեզուն է, խօսքը: Բայց կան ներքին այնպիսի ապրումներ եւ յուզումներ, տազնապներ եւ փոթորիկներ, վշտեր եւ տառապանքներ, որոնց արտայայտութեան համար խօսքն անզօր է: Այդ ասել կարող ենք այն ահաւոր իրողութեան եւ ողբերգութեան համար, որ վիճակուեցաւ մեզ նախընթաց պատերազմի ժամանակ, որի յիշատակը կատարում ենք այսօր: Անզօր ենք զգում արտայայտուելու եւ պատկերաւորելու այն սոսկալի աղէտը, որ մեզ բաժին ընկաւ եւ էջ վիճակուել ո՛չ մի ազգի:

Կամենում ենք օրինակով պարզել միտքը. 1914-15 թուականի աղէտաբեր օրերին Վասպուրականի, Ալաշկերտի եւ Վանայ լճի հիւսիսային գաւառների հայ ժողովուրդը ստիպուած էր տեղահան լինել եւ գաղթել դէպի էջմիածին եւ Արարատեան երկիրը: Ականատես էինք այն աղեկտուր տեսարանին, որ կատարում էր մեր շուրջը: Իբրեւ Եղբայրական օգնութեան վարչութեան անդամ՝ ի պաշտօնէ չփման մէջ էինք բոլոր շրջանների գաղթականութեան հետ՝ հարկաւոր

նիւթական եւ բժշկական օգնութիւնները կարգադրելու: Երասխի ասիւրից մինչեւ Էջմիածին, պողոտայի երկու կողմերը, վանքի ընդարձակ անտառի եւ ճեմարանի բակի եւ պարտէզի մէջ, պարիսպների տակ, փռուած էին մօտաւորապէս 150 հազար փախստականներ բաց երկնքի տակ՝ նախկին բնակավայրերի եւ հասարակութիւնների համեմատ խմբակցութիւններով:

Ճանապարհի յոգնածութիւնը, շատերը ոտքով եւ ձիւնապատ լեռներով անցած, սննդեան պակասութիւնը, համաճարակները՝ որպէս հետեւանք ստեղծուած պայմանների, իրենց աւերն էին կատարում ժողովրդի մէջ. խոլերան, դեզինտերին, ժանտատենդը իւրաքանչիւր օր խլում էին մեզանից մի քանի հարիւր հոգի, եւ մենք սայլերով հաւաքել էինք տալիս դիակները եւ լցնում փոսերի մէջ, որոնք փորում էին յատուկ այդ նպատակի համար:

Տեսնելով այս սրտաճմլիկ երեւոյթները՝ միտք յղացանք նկարիչներ հրաւիրել, որպէսզի տեսնեն իրենց աչքերով այդ ամէնը եւ գեղարուեստօրէն պատկերացնեն այն դժոխքը, որ վիճակուել էր մեր ժողովրդին՝ իբրեւ նշաւակը մարդկային պատմութեան: Եկել էր, ի միջի այլոց, եւ Մարտիրոս Սարեանը՝ Հայ նկարչական արուեստի տաղանդաւոր ներկայացուցիչներից մէկը, բայց ահաւոր տեսարանների տպաւորութեան տակ հիւանդացաւ եւ չկարողացաւ դիմանալ եւ շարունակել գործը:

Եւ ինչպէ՞ս կարելի էր դիմանալ այդ ծովածաւալ, սիրտ կեղեքող, մահուան ճիրաններում գալարուող եղբայրների տեսարանների առաջ. տեսնել հազարաւոր երեխաներին, պատանիներին, կանանց ու տղամարդկանց, պառաւներին եւ ծերերին. ոմանք՝ արդէն մեռած, ոմանք՝ տանջանքների մէջ կիսամեռ, կմախք դարձած, փռուած գետնի վրայ, լաց ու կոծի կամ օգնութեան կանչող աղաղակներով:

Տեղահան եղածների մէջ դեռ դրանք բախտաւորներն էին: Կազմակերպուած էր եղբայրական օգնութիւն, հրաւիրած էին եւ կամաւորապէս եկած բժիշկներ, սնունդ էր մատակարարուում հնարաւորութեան սահմանների մէջ՝ գոնէ հաց ու ջուր հասցնելով ճանապարհի երկու կողմերին թափածների համար: Թէպէտ խուճապահար, ճանապարհին նեղութիւնների ենթարկուած՝ ձիւնապատ լեռներից անցնելու ժամանակ, բայց ոչ՝ թուրք, չերքեզ եւ քուրդ վայրենի եւ անգութ ժանտարմների մտրակների տակ, ոչ՝ ենթակայ խուժանի յարձակման, յափշտակութեան, սպանութիւնների, աղջիկների եւ երիտասարդ կանանց առեւանգման, երիտասարդների եւ այրերի

խմբական գնդակահարութեան, ինչպէս կատարուում էր այդ տաճիկ կառավարութեան ենթակայ երկիրների մէջ:

Հարիւր հազարաւորներ տեղահան եղան կառավարութեան հրամանով՝ զրկուած տնից, տեղից, ստացուածքներից, շաքաթներով ճանապարհին իրենց մանր երեխաներով, շատերն առանց կօշիկների, հետիոտն, քաղցած, արեւի կիզիչ ճառագայթների տակ, ենթակայ ամենայն տեսակ խժժութեանց, որոնց նկարագրութիւնն իսկ փշաքաղում է մարդու մագերը... Քչուում էին Արաբիայի անապատները՝ զոհեր տալով բարբարոսների գնդակներին, հիւանդութիւնների, սովի... որոնց դիակները կեր եղան վայրի թռչուններին եւ գազաններին կամ փոշիացան անապատի աւազների մէջ: Իսկ կենդանի մնացածները՝ հիւժուած, ամենաթշուառ վիճակի եւ աղքատութեան մէջ, որ յետոյ հողմացրիւ եղան աշխարհի չորս կողմերը:

Ի՞նչ լեզու կարող է ամենադոյզն չափով պատկերաւորել պատմութեան այդ մեծ, անսահման մեծ ողբերգութիւնը՝ եղեռնը, որ կատարուեցաւ մեր գլխին: Ի՞նչ լեզուով խօսենք, որ մեր ցաւը, մեր անյատակ վիշտը, բողբոջ անարդարութեան դէմ լսելի լինին այն ականջներին, որոնցից է կախուած արդարութեան կշիռը վերականգնել: Մենք կրօնաւոր ենք եւ քաղաքականութեամբ չէ, որ այստեղ զբաղուում ենք, այլ յանուն արդարութեան, յանուն տարապարտուց նահատակուած միլիոնաւոր մեր զոհերի, նրանց փոշիացած ոսկորների մեր ձայնն ենք բարձրացնում, որ լսելի լինի, որտեղ պէտք է:

Մարդկային խիղճը չպէտք է տանէ, որ մի ամբողջ ազգ կարգաւորեալ կերպով դէպի մահ քշուի, եւ մնացորդները աշխարհի չորս կողմը հողմացրիւ լինին:

Մեր ձգտումն է խաղաղասէր եւ բարի դրացիներ լինել մեր շրջապատի համար, աշխատասէր, շինարար, եւ մեզ շնորհուած աստուածատուր տաղանդը գործադրել ստեղծագործ, հոգեւոր եւ մշակութային կեանքի զարգացման համար: Ոչ ոքի կ'ուզենք վնասել, եւ ոչ ոք կը վնասուի, եթէ, արդարութեան զգացումով մօտենալով խնդրին, մեր պատմական հայրենիքի հողերը վերադարձուին իրենց տէրերին, որ այժմ անմարդաբնակ կամ սակաւաբնակ մի երկիր է դարձած:

«Հասկ», ապրիլ, 1946

ԱՊՐԻԼԻ ՔՍԱՆՉՈՐՍԸ

(խօսուած Սիմեոս Տիմոթայի մէջ կազմուած սգահանդէսին)

Ա

Պատմութիւնը շատ արհաւիրքներ, բարբարոսութիւններ եւ արիւնհահողութիւններ է տեսել, բայց այն, որ կատարուեցաւ տաճիկ պետութեան կողմից Հայ ժողովրդի գլխին նախընթաց պատերազմի ժամանակ, վեր էր, քան մարդկային երեւակայութիւնը: Բարբարոսութեան եւ անգթութեան սոսկալի միջոցներով, պետական ոստիկանական եւ զինուորական ուժերով ծրագրեալ կարգաւորութեամբ տեղահան եղաւ ամբողջ ժողովուրդը՝ Հարիւր Հազարներ մատնելով սրի, սովի, հիւանդութիւնների եւ բարբարոս հորդանների խոշտանգման եւ յափըշտակութեան: Մտաւորական դասը՝ հոգեւորականներ, գրողներ, արուեստագէտներ, հասարակական գործիչներ, Պոլսից հանելով եւ զանազան ուղղութեամբ խմբերի բաժանելով, մահացնում են կեդրոնից տրուած կարգադրութեան համաձայն: Ժողովրդի՝ մահից ճողպարած եւ կենդանի մնացած մասերն էլ հողմացրիւ եղան աշխարհի չորս կողմը՝ Հայրենազուրկ, աղքատ եւ ծիրուած վիճակում:

Բ

Բայց մեր կորուստը միայն այն չէ, ինչ որ յիշուեցաւ: Ոչնչացան Հայ ժողովրդի անգնահատելի գանձերը. մեր խօսքը նիւթական գանձերի եւ հարստութեան մասին չէ, թէպէտ այդ մարզում էլ մեր կորուստը անսահման էր, այլ՝ հոգեւոր այն գանձերի մասին, որ ո՛չ ցեցը եւ ո՛չ ուտիճը պիտի ոչնչացնէր, բայց ոչնչացրեց մոլեգնեալ էնվերների եւ թալեաթների թուրքական կառավարութիւնը՝ վանտալների եւ ատիլանների բարբարոսութիւնից առաւել աստիճաններով: Ոչնչացել են Անկիւրիոյ, Կեսարիոյ եւ Արմաշի ձեռագրական հազարաւոր հատրներից մեծ ժողովածուները կամ անհատների սեպհականութիւն եղած հարիւրաւոր ձեռագիրներից բաղկացած ժողովածուները: Մեր գիտցածով՝ Անկիւրիոյ ձեռագիրների թիւն էր 310, բայց շատ կերեւոր գեղարուեստական արժէքներով եւ բովանդակութեամբ. Արմաշի ձեռագիրների թիւն էր 223, որոնց ցուցակներն ունինք ձեռքի տակ, եւ այսպէս՝ մեր շատ վանքերի: Տրդատ եպիսկոպոս Պալեանի անձնական ժողովածուն՝ աւելի քան 120 ձեռագիր, Վասպուրականի հազարաւոր ձեռագիրներից կարելի եղաւ փրկել միայն մօտաւորապէս 1350 հատոր: Կարելի է՝ մեր ունկնդիրներից ոմանք մտածեն, թէ ինչ

կապ ունին ձեռագիրները այսօրուայ յիշատակի հետ: Այդպէս չէ, սիրելի՛ք. ամենամեծ կապը կայ նրանց մէջ: Այդ ձեռագիրների մէջ է մարմնաւորուած Հայ մշակոյթը, Հայ միտքը, դարերի ընթացքում Հայի ստեղծագործութիւնը, Հայ հոգին, որոնց նոյնպէս նահատակութեան եւ ոչնչացման մեծ բաժին հասաւ: Ապա մեր ճարտարապետական կոթողները՝ իրենց վիճական տարեգրութիւններով կամ արձանագրութիւններով, Աղթամարը, Անիի Մայր եկեղեցին, Ապուղամբնց գողտրիկ Ս. Գրիգորը, Պահլաւունեաց Առաքելոց նրբակերտ գաւիթը եւ այսպիսի տասնեակներով յուշարձաններ: Ամէն ազգ եւ ժողովուրդ ընդունա՞կ է անշունչ քարին կեանք տալ եւ լեզու, որ խօսէ հետը, պատմէ անցեալը, յուզէ եւ բարձրացնէ հոգիդ դէպի վսեմն ու երկնայինը: Ծանր, անդարմանելի հարուածներ ստացաւ Հայ ժողովրդի շինարարական հանճարն ու հոգին:

Նոյնը կարող ենք ասել եւ ազգագրական Հայրենիքի ու գաւառների կործանման մասին: Ինչպէս բոյսը, ծառը իւր հողը ունի, որի մէջ խրուած արմատներով սնունդ եւ կեանք է ստանում, այնպէս էլ ամենայն ժողովուրդ՝ իւր հողն ու Հայրենիքը, ուր նորա ազգագրական գանձերը՝ բանահիւսութիւնը, դիւցազներգութիւնը, աւանդավէպերը, բանաստեղծութիւնը, երգն ու երաժշտութիւնը եւ արուեստները զարգանալ եւ ուճանալ կարող են: Արմատախիլ եղած ժողովուրդը կորցնում է եւ այդ գանձերը, որ հիմք են եւ աղբիւր ազգային արուեստի եւ ուրոյն ստեղծագործութեան զարգացման: Մուշի, Մոկաց, Վանի շրջանները յատկապէս հարուստ էին այդ կողմից. այդ գաւառների հետ էր կապուած Սասունցի Դաւիթը, բազմատեսակ եւ հարուստ բանահիւսութիւնը. մեր կորուստը եւ դորա հետ զգացուած ցաւը աւելի մեծ է, մանաւանդ որ լիովին նրանք չէին հաւաքուած եւ մատչելի դարձած բանասիրութեան:

Նրանց արժէքը ամենքիդ հասկանալի դարձնելու համար յիշենք Կոմիտաս Վարդապետի գործը, որ Հայ ժողովրդական երգերի հաւաքմամբ եւ ուսումնասիրութեամբ ազգային նոր երաժշտութեան հիմնադիրը դարձաւ: «Սասունցի Դաւիթ» ժողովրդական դիւցազներգութեան շուրջը ամբողջ գրականութիւն է ստեղծուել, մեր բանաստեղծների կողմից նոր մշակութեան ենթարկուել, բովանդակութեան համեմատ յատուկ նկարչութիւն ստեղծուել, օպերա եւ բալետ գրուել: Ոչնչացաւ ուրեմն եւ մեր ժողովրդի ազգագրական Հայրենիքի մի կարեւոր մասը:

Ահա այսպէս մեծ էր մեր կորուստը: Հայ ժողովրդի գլխին եկած Հարուածները շատ եւ շատ աւելի ծանր էին, քան մարդկային միտքն ու երեւակայութիւնը սահմանել կարող է: Մտածողներ եղան եւ ամենից աւելի Հարուածը ծրագրողներն ու իրագործողները, թէ Հայ ժողովրդին մահ բերին: Բայց դարերի դժուարութիւնների եւ նեղութիւնների մէջ կոփուած Հայ Հոգին անընկճելի մնաց ապրելու, եւ ազատութեան տենչը՝ անմար:

Ի՞նչ էր Վարդանանց նահատակութեան խորհուրդը. Հայրենիքի եւ խղճի ազատութեան, արդար եւ սուրբ իրաւունքի պաշտպանութիւնը: Նոյնն է եւ այսօրուայ նահատակութեան խորհուրդը, միայն դոհերի շատ աւելի մեծ չափով եւ գործադրուած միջոցները՝ անողոք, անարդար եւ բարբարոսական, քան Հին Սասանեանները կատարեցին: Արդար է մեր դատը, ամենից արդարը բոլոր անտեսուած դատերի մէջ: Պէտք է բաղխենք արդարութեան փակ դռները, մինչեւ բացուին նրանք: Մէկ միլիոն նահատակների եւ նոյնչափ հողմացրիւ եղած հայութեան անունով պէտք է բարձրացնենք մեր բողոքը, մինչեւ մեր ձայնը լսելի լինի ազգերի բախտը իրենց ձեռքին ունեցող զօրաւորներին:

Տաճկահայոց այս թշուառութեան Համեմատ բախտաւոր եղաւ ռուսական բաժնի Հայաստանը, թէեւ երկիցս ենթարկուեցաւ թուրքերի արշաւանքներին, եւ յափշտակուեցաւ նորա կարեւոր մի մասը: Բայց Աստուած խնայեց մեզ. ունինք մեր թանկագին Հայրենիքի Հիւսիսային մի քանի նահանգները Սորհրդային Հայաստանի ներկայ սահմաններով, ուր ծաղկում է նորաբողբոջ պետականութիւնը մտաւոր վերածնութեան ակնյայտի ապացոյցներով, որ մեր նոր գրականութիւնն է, գիտութիւնը, մշակոյթն ու արուեստը ընդարձակ ծաւալով, եւ այնքան կազդուրուած է զգում իրեն մեր նորաբողբոջ Հայրենիքը, որ ծրագրել էր հարիւր հազարաւոր զաւակներին իւր ծոցն ընդունել, որչափ հնարաւորութիւն ունի: Բայց անարդարութեան, կատարուած ոճիրների հատուցումը մնում է բաց. անմեղ Աբէլի արիւնը չպիտի դադարի բողոքել մինչեւ արդարութեան վերջնական յաղթանակը: Հայրենասիրական պարտք է՝ գօտեպնդուած աննկուն կամքով հաստատուն ժայռի նման, որ մեր հաւատքն է դէպի մեր դատի արդարութիւնը:

Եթէ այստեղ հաւաքուել ենք՝ մի երկու բանախօսութիւն, երգ

ու նուազ լսելու միայն, ընդունայն է այդ, ժամանակի իզուր կորուստ եւ յոգնութիւն: Այս հանգէսը պիտի թելադրէ եւ մեր գիտակցութեան մէջ խորը հաստատէ, թէ մենք բարձրագոյն մի նպատակ ունինք, որ մեր բունագրաւուած հայրենիքի ազատութիւնն է, մեր բաղձանքների լրումը: Մեր նահատակները մեռան, որպէսզի մենք ապրիլ սովորենք:

Ոչ մի ժողովուրդի թշնամի լինել չենք կամենում. տաճիկներն էլ ժողովուրդ են, բայց պէտք է հասկանան, որ մենք եւս ապրելու իրաւունք ունինք: Յաւիտեանական թշնամութիւնից ոչ ոք կարող է օգտուիլ, եւ ոչ՝ մեր երկու ազգերը: Մեզնից խլուած նահանգները գրեթէ անմարդաբնակ են եւ աւերակ դարձած: Այդ աւերակ եւ անապատ դարձած երկիրը, որ հազարաւոր տարիներ մեր Հայրենիքն էր՝ հազարաւոր յիշատակների հետ կապուած, մենք մեր ջանասիրութեամբ եւ ուշիմութեամբ այնտեղ հոգեւոր կեանքի, գիտութեան եւ արուեստի տաճարներ կը կանգնենք եւ դրախտ կը դարձնենք զայն:

Ահա ի՞նչ միտք եւ գաղափար է մեզ այստեղ հաւաքել: Այսպիսի մտապատկերի եւ իրողութեան առաջ՝ ո՛չ մի խտրականութիւն կուսակցական կամ որեւէ այլ հաշուով: Մենք մի՛ ենք, մի՛ կամքով եւ հաւատով պիտի գօտեպնդուինք դէպի մեր ազգի եւ Հայրենիքի արդար դատը եւ ապագան: Հանրութեան մեծ խնդիրների առաջ պէտք է մեղմանան եւ չքանան փոքր հաշիւները:

Ա՛խ, մեր ժողովուրդը, աւելի ճիշտ՝ նորա տարբեր մտայնութեան խաւերի ներկայացուցիչները Սփիւռքում, ե՞րբ պիտի հասկանան հոգեով տառապող իրենց Հայրապետի համերաշխութեան, փոխադարձ հասկացողութեան կոչը: Մինչեւ մենք իրար չհասկանանք, իրար ձեռք չմեկնենք լիովին՝ ազգի, Եկեղեցու եւ Հայրենիքի հետ կապուած ընդհանուր հարցերի մէջ, իրաւունք չունինք օտարներից սպասելու, որ մեզ հասկանան եւ լսեն:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
«Հասկ», մայիս, 1947

Բովանդակություն

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն	7
ԱՆՑԱԻՈՐԻ ՄԷՋ ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆԸ ԵՒ ՄԵՔԵՆԱԿԱՆԻ ՄԷՋ ԿԵՆԴԱՆԻ ՀՈԳԻՆ	12
ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ	15
ՓՐԿՉԻ ԾՆՈՒՆԴԸ	18
ԾՆՆԴԵԱՆ ԾՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՐՈՋ	24
ՔՐԻՍՏՈՍԻ ՆԵՐԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ	29
ԿԵԱՆՔԻ ԱՂԸ	33
ԳԵՂԵՑԿԻՑ ԳԵՂԵՑԿԱԳՈՑՆԸ	36
ԿԵԱՆՔԻ ԺԱՆԱՊԱՐՀԸ	40
ՂԵԻՈՆԴԵԱՆՑ ԵՒ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՑԻՇԱՏԱԿԸ	44
ԱՊԱԾԵԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՐՈՋԸ	49
ՍՐՏԻ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ	53
ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ԺԱՆԱՊԱՐՀԸ	56
ՕՐՀՆԵՑԷ՛Ք ԶԱՍՏՈՒԱԾ ՀԱՐՑՆ ՄԵՐՈՑ	66
ՊԱՐՏՔԻ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐԱ ԿԱՏԱՐՈՒՄԸ	72
«ՄԻ՛ ԵՐԿՆՉԻՐ, ԲԱՅՑ ՄԻԱՑՆ ՀԱԻԱՏԱ՛» (Թարգմանչաց սօմի առթիւ)	76
ՑԻՍՈՒՍԻ ԼՈՒՍԱԻՈՐ ԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ	81
ԿԵԱՆՔԻ ԲԱՆԱԼԻՆ	86
ՎՇՏԻ ԵՒ ՏԱՌԱՊԱՆՔԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ ԱՆՀԱՏՆԵՐԻ ԵՒ ԱԶԳԵՐԻ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ	91
ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ	97
ԴԱՐՋ ԴԷՊԻ ԼՈՒՍԱԻՈՐ ԿԵԱՆՔԸ (Անառակի կիրակի)	104
ՄԱՐԴՈՒ ԿՈՉՈՒՄԸ ԱԾԵԱՐՀԻՍ ՎԵՐԱՑ (ըստ աւետարանական քարոզչութեան)	109

ԱՂՕԹՔԻ ՍՐԲԱՐԱՐ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ	113
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ԼՈՒՍԱԻՈՐՉԻ ԱՆՈՒԱՆ ՏՕՆԸ (տաճարի ուխտի օրը)	118
ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ Ս. ԵԿԵՂԵՑԻ	122
ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԸՈՒԹԻՒՆ (Գալստեան կիրակի)	135
ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ	142
ՅԱՐՈՒԹԵԱՆ ԱԻԵՏԻՔԸ	148
ԾՐՋԱՔԵՐԱԿԱՆ ԶԱՏԿԻ ԱՌԹԻՒ	151
ՆԱՀԱՏԱԿԱՑ ՏՕՆ	156
ՆՄԱՆԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ (ընտանեկան շրջանում)	162
ՔՐԻՍՏՈՆԷՒ ԳԵՐԱԿԱՑ ԳԱՂԱՓԱՐԸ	168
ԿՐՕՆԻ ԿԵՆՍԱՏՈՒ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ	172
ԿՐՕՆԱԿԱՆ ԱՆՁՆԱԻՐՈՒԹԻՒՆ	175
ԱՌՕՐԵԱՑ ՀԱՑԻ ԽՆԴԻՐԸ	182
ԴԷՊԻ ԼՈՅՍ ԵՒ ԿԵԱՆՔ	187
ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ	192
ԵԿԵՂԵՑԻՈՑ ԿՈՉՈՒՄԸ (պատմական լուսյ մէջ)	198
ԱԾԽԱՏԱՆՔԻ ԳԱՂԱՓԱՐԸ ՔՐԻՍՏՈՆԸՈՒԹԵԱՆ ՄԷՋ	210
ԼՈՒՍԱԻՈՐՉԻ ԿՈՉԸ	219
ՓՐԿՈՒԹԵԱՆ ՆԱԻԸ ԵՒ ՆԱԻԱՊԵՏԸ	222
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐՆ ՈՒ ԱՐԺԷՔԸ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԷՋ	226
ԴԷՊԻ ՎԵՐ ԵՒ ԿԱՏԱՐԵԱԼԸ	235
ԱԶԳԱՀԱՒԱՔԻ ՄԵԾ ԳՈՐԾԸ	241

ՄԵՐ ԻՂՋԵՐԸ ՀԱՅ ԳՐԻ ՈՒ ՄԱՄՈՒԼԻ ՄԱՍԻՆ	244
ՄԵՐ ԽՕՍՔԸ ՕԾՄԱՆ ԱՌԹԻՒ	247
ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԵՒ ՆՈՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ	249
«ՄԱՐԴ Է, ՈՐ ԳՈՐԾԷ ԶԵՐԿԻՐ»	255
ՄՇԱԿՆԵՐ ԵՆ ՊԷՏՔ ՄԵՋ	260
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՀԻՆ ԾՐՋԱՆՈՒՄ (կարդացուած հայ եկեղեցականների համագումարի մէջ)	264
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ ԾՐՋԱՆՈՒՄ	271
ՄՇԱԿՈՑԹԻ ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ	277
ՊԱՏԱՍԽԱՆ ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ Կ. Պ. ԱՏԱՆԱԼԵԱՆԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՆ	286
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄԸ ԻՒՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ	294
ԷԶՄԻԱԾՆԻ ԵՒ ԿԻԼԻԿԻՈՑ ԱԹՈՒՆԵՐԸ	299
ՆԱՀԱՏԱԿԱՑ ՄԵԾԱՇՈՒՔ ՀԱՆԴԷՍԸ (Սիմեմա Ռոքսիի մէջ)	303
ԱՊՐԻԼԻ ՔՍԱՆՉՈՐՍԸ (խօսուած Սիմեմա Տիմիայի մէջ կազմուած սգահանդէսի)	306

«ԳԱՆՁԱՍԱՐ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ
«ԴԷՎԻ ԼՈՅԱ ԵՎ ԿԵԱՆՔ»

Խմբագիր՝ Մեսրոպ քահանայ Արամեան
Տեխ. խմբագիր՝ Յովհաննէս Կիզողեան
Վերստուգող սրբագրիչ՝ Շուշան Վարդանեան
Նկարիչ՝ Արմէն Բիրքչեան

Համակարգչային շարուածքը՝
«Գանձասար» հանդէսի
համակարգչային ծառայութեան:

«Գանձասար» հանդէս, Երևան, Բաղրամեան 24 Գ